



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

121

9(a)

4-62

Penguin
1901

~~0657~~

~~10/10/37~~

~~181 - 15/10/37~~

484 - 14/11/39

9(≈)
4-62
WS

201

ԴԱՍԱԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

900
2/- 585

ՄԱՍՆ II.

Մ Ի Զ Ի Ն Դ Ա Ր

Կազմեց Պ. Վ. Ի Ն Ո Գ Բ Ա Գ Ո Վ,

ՈՒՍՈՒՅՁԱՊԵՏ ՄՈՍԿՈՒՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ.

բարգիւանեց եւ Հայոց պատմութեան յաւելումով նոխացրեց

Ն. ԳՅԱՐԱՄԵԱՆ.

1008
35848

Ռուսերէն ընագիրը Լուսաւորումեան Նախարարութեան գիտնական մասնաժողովն յանձնարարեղ է իրել րասագիրք գիտնագիտնների համար:

012

(15)

ԲԱԳՈՒ.

ՏՊԱՐԱՆ ՆԱԲՐՈՐՔ

1901.

38662 - ա. ժ.

Ընդ երեսնի հինգ շաբաթ արժեքով չափ
ժամանակի մասին խորհրդակցելով

15/II 1910

Յ Ա Ն Կ

Նախաբան

Մասն առաջին. — Միջնադարեան աշխարհի կազմուիչը.

երես:

Գլ. Ա. Ազգերի զաղթականությունը	1
Գլ. Բ. Ասլարությունը 2-Ը. դարերում	16
Գլ. Գ. Խալիֆ կամ մահմեդականություն	35
Գլ. Դ. Բարբարոսների թագաւորութիւններն և Վարդինգեան միապետությունը	44

Մասն երկրորդ. — Աւատական դարաշրջան.

Գլ. Ա. Աւատականություն	70
Գլ. Բ. Ասլարություն և պապություն	98
Գլ. Գ. Խաչակրաց արշաւանքներ	121
Գլ. Դ. Միջնադարեան քաղաքակրթություն	139

Մասն երրորդ. — Հոր Աւրայ. տերութիւնների կազմ.

Գլ. Ա. Անգլիա ✓	167
Գլ. Բ. Ֆրանսիա ✓	187
Գլ. Գ. Պրուսիան թերակղզի	207
Գլ. Դ. Իտալիա. ✓	211
Գլ. Ե. Գերմանիա ✓	217
Գլ. Զ. Սկանդինավեան տերութիւններ	242
Գլ. Է. Լեհաստան և Հունգարիա	244
Գլ. Ը. Բալկանեան թերակղզի	261

Մասն չորրորդ. — Արաւմուտայ.

Գլ. Ա. Եկեղեցի.	272
Գլ. Բ. Գրականություն, արուեստ և գիտություն ✓	288
Գլ. Գ. Գիւղեր և լայնադործություններ ✓	304
Համաժամանակ անցքերի տախտակ ✓	311

Дозволено цензурою. Тифлисъ. 5 Октября 1899 г.

21938 - 60 Գ

Խորհրդակցելով և խորհրդակցելով
հասցի տեղի բաժնի համար
այս կարգի մասին խորհրդակցելով
և այս կարգի մասին խորհրդակցելով
որպես համար և այս կարգի մասին
որպես համար և այս կարգի մասին

Ն Ա Խ Ա Բ Ա Ն.

«Միջին դարերի պատմութիւնն անելու ժամանակ գլխաւոր դժուարութիւնն, որին հանդիպում ենք, այն է, որ նիւրբ չափազանց բազմազան է եւ վերաբերում է բազմաթիւ ազգերի եւ տէրութիւնների: Այն բարեկազմ հետեւողականութեան, որ Յունաստանի եւ Հռոմի զարգացումը տալիս է հին դարու պատմութեան, անկարելի է հասնել միջին դարերի պատմութեան մէջ: Անյարմար է շարունակ պատմութեան մի խնդրից միւսին անցնելը. անյարմար է խիստ կերպով որոշել այն երկրներն ու իրողութիւնների խմբերն, որոնք սերտ շաղկապուած են դրացի երկրների եւ իրողութեանց խմբերի հետ: Բայց անյարմարութիւններից խոյս տալու հնար չը կայ, այլ կարելի է միայն աշխատել, որ դրանք աւելի քիչ զգալի լինին»:

Ինձ քուռում էր, որ միջին դարերու պատմութեան առաջին կիսու, (Մասն Ա. եւ Բ.), ինչպէս նաեւ նոր ժամանակին անցնելու շրջանի նկարագրի մէջ առանձնապէս կարեւոր է պարզել աշակերտաց անցքերի ընդհանուր պատմական բնաւորութիւնն: Այս պատճառով այդ դեպքերում ես հետեւեցի ո՛չ քեզ ազգային կամ քաղաքական բաժանումներին, այլ ընդհանուր սկզբունքներին, որոնք բարձր են այդ բաժանումներից, քեպէտ եւ այսպիսի պատմութեան եղանակն ստիպում էր յաճախ մի երկրից եւ մի ազգից անցնելու միւսին, ընդհակառակն, խօսելով նոր Եւրո-

պաշի պէտական մարմինների մասին, պէտք էր յաշկապէս աջի առաջ դնել այն արմատական զանազանութիւններն, որոնք աստիճանաբար կազմուել էին պատմութեան ազդեցութեան տակ: Այս պատճառաւ ամենանշանաւոր տնտեսականներին եւ նորիւրեքի առանձին զոյիներ, թեպէտք եւ այդու ստիպուած էի շինում յաճախ վերադառնալ այն դէպքերին, որոնց մասին յիշուած էր արդէն այլ առթոյ:

Այս անբարմարտութիւնների նշանակութիւնը մի որոշ չափով քույրացնելու համար, վերջում եւս աւելացրի համաժամանակ անցքերի մի տախտակ, որ աշակերտներին կը դիտարկէ անցքերն համեմատելով հետեւողական ու համաժամանակ կարգերով: Չորս քաղաքակրթական պատմութեան ցուցումներն դժուարին էր այնպէս որոշ նշանակել, ինչպէս քաղաքական իրողութիւնները, եւ եւս դրանց տեղաւորելի միանգամից, առանձին դարերի վերջը, մնացեալ նիւթից մի գծով բաժանելով: Թէ դասագրքի եւ թէ տախտակների մէջ եւս աշխատեցի ինչքան կարելի է ինչ տարբերութիւն տալ. հարկաւ, կարելի է շատ տարբերութիւն ուսանիլ, բայց դիտել եւ նշանակել անմիջապէս մոռանալն էր:

Այս հասոյս շատ աւելի մեծ ծաւալ ունի քան թէ հին դարու պատմութիւնը, եւ այս, քունում է ինձ, բաւականաչափ արդարանում է նիւթի առատութիւնով: Առաջարկուած ձեւերովս այն ինչ ժամանակին, որ այժմ յատկացրած են միջին դարերու պատմութեան ամենդման, յարմարացնելու համար, եւ մի շարք երեսներ մանր տարբերութիւններով, ուր խօսուում է այնպիսի իրողութեանց մասին, որոնք համեմատաբար աւելի ինչ նշանակութիւն ունին եւ կարող են դժուարացնել աշակերտներին: . . .

Երրորդ հրատարակութեան մէջ քննարկելու ինչ կըրճատուած է եւ մի քանի հասոյս խոշոր տպագրութեան փոխանցումը է մանր տպագրութեան, որպէս զի դիտարկելու աշակերտների համար դասագրքի քննարկն անցնելը:»

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Միջնադարեան աշխարհի կազմուշիւր:

ԳԼՈՒԽ Ա.

ԱԶԳԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ.

Միջին դարերու պատմութիւնն սկսուում է հռովմէական հախարան կայսրութեան բաժանուելով եւ բարբարոսների հռովմէական երկրներ խուժելովը, կայսրութիւնը նրա համար բաժանուեցաւ, որ արեւմտեան երկրներում գերակշռում էր հռովմէական կրթութիւնն եւ կազմուել էր այսպէս կոչուած ռոմանական ազգաբնակութիւն, որ խօսումէր հռովմէական լեզուի բարձրանիւրը, իսկ արեւելքում իշխում էր հեղինակական կրթութիւնն եւ յունական լեզուն: Բարբարոսների խուժելը գէպի Արեւմտեան կայսրութիւն պատմութեան մէջ նոր ցեղեր ներմուծեց, որոնցից ամենազլխաւորներն էին գերմանացիք եւ սլաւներն:

Գերմանացիք երեւացին Եւրոպայում կելտերից յետոյ: Հռովմայեցոյ հետ առաջին անյաջող ընդհարումներից յետոյ (կիմբրացիք եւ աւետոնները Քրիստոսից առաջ Բ. դարում, սոււեւներն Ա. դարու կիսում), նրանք զետեղուեցան Հռենոսի ու Գանուբի միւս կողմում: այժմեան Գերմանիայում, Զուիցերիայում եւ Աւստրիայում, Սկանդինաւեան թերակղզում եւ հարաւային Ռուսիայում: Արեւմտեան երկրներում նրանք ստորադրեցին իրենց կելտական ցեղերին, ¹⁾ իսկ հիւ-

¹⁾ Օրինակ՝ այժմեան Ձեխիան գրաւել էր կելտական Բոյերի ցեղը, որի անունը պահպանուած է երկրի «Բոհեմիա» (Boio-heim) անունն մէջ:

սխառմ խառնուեցան ֆինների, արեւելքում—սլաւներ
րի հետ:

Գերմանա-
ցիք:

Գերմանացիք երբ Եւրոպա մտան, ծանօթ էին
երկրագործութեան, բայց դրանով քիչ ու ակա-
մայ էին պարապում: Նրանք սննդութեամբ էին առաւել-
լապէս կաթնով ու մսով և սնունդը ձեռք էին բե-
րում անասնապահութեամբ: Նրանց դրաւած տեղե-
րը ծածկուած էին խիտ անտառներով, այնպէս որ
անասնաբուծութիւնը դժուարին էր դրանց մէջ, և
գերմանական ցեղերը շարունակ տեղափոխուում էին,
նոր բնակավայրեր էին փնդում, միմեանց կողոպ-
տում ու նեղում: Հռովմէական սահմանը փակում էր
նրանց առաջը հինգ դար շարունակ, և նրանք ակա-
մայից սկսան անտառները կտրատել ու անցնել եւ-
կրագործութեան: Առաջին ժամանակները ցանքսի հա-
մար ընտրում էին հողերի ամենից յարմար կտորները,
մշակում էին դրանց մի կամ մի քանի տարի հետ
դհտէ, ինչքան ժամանակ դրանք առատ հունձ էին
տալիս, իսկ յետոյ թողնում էին անմշակ իբրեւ արօ-
տատեղի: Հողը սեփականութիւն չէր առանձին տան-
տէրերի, այլ ցեղը բաժանում էր զանազան ընտանիք-
ների մէջ և կամայական կերպով փոփոխում էր հողատե-
րերին:

Ազգականները կազմում էին տնտեսական դաշ-
նակցութիւն, ինչպէս յոյներն ու հռովմէացիք, եթէ
դրանցից մէկին սպանում էին, այն ժամանակ տոհ-
մակիցներն սպանողից վրէժ կամ արեանգին (վեր-
գեղ) էին առնում: Տոհմակիցների կապը սակայն գեր-
մանացոյ մէջ շատ էլ զորաւոր չէր: Շարունակ տե-
ղափոխուելով և խառնուելով այլ ցեղերի հետ, ազ-
գակիցները բաժանուում էին այլացեղ մարդոց մէջ,
այնպէս որ տոհմերը բաժան բաժան էին լինում:
Ազգաբնակութիւնը չէր կենդանանում քաղաքներում:

յոյների ու իտալացոյ նման, այլ ապրում էր ցիր ու
ցան, փոքր գիւղերի կամ շէնքերի քաժանութեամբ: Սկզբ-
բան գերմանացիք բաժանուում էին բազմաթիւ մանր
ցեղերի, որոնք անընդհատ թշնամութիւն էին անում
միմեանց: Ամէն մի ցեղ կառավարուում էր հաւաք-
նական ժողովով, իւր մասնակցում էին ընտրող քէնք
կրելու ընդունակ տղամարդիկ: Դատում էին և պա-
տերազմի մէջ առաջնորդում տնտեսական առաջնորդ-
ները ընտրուած առաջնորդներն: Առաջնորդների և ի-
րենց քաջութեամբ հռչակուած մարտիկների շուրջը
խմբուում էին պահակազիններն այն երիտասարդնե-
րից, որոնք ձգտում էին զինուորական արուեստն ու-
սանելու, փառքի և աւարի համեմուտ: Որովհետեւ պա-
հակախմբի գոյութեան զլխաւոր նպատակը պատե-
րազմն էր, ուստի և դրանց առաջնորդները շարունակ
յարձակումներ էին գործում դրացիների վրայ, իսկ
երբեմն ձեռնարկում էին հեռաւոր արշաւանքների:
Երբ ամբողջ ցեղը պատերազմ էր սկսում, ընտրուում
էր յատուկ առաջնորդ, հերցոգ, որ աւելի մեծ իշ-
խանութիւն ունէր, քան թէ օտարական առաջնորդ-
ներն: Եթէ պատերազմներն յաճախ էին վարուում,
այն ժամանակ հերցոգի իշխանութիւնը մշտական էր
դառնում—նա լինում էր քաղաւոր (կոմուր), և
նրանց յաջորդ էին ընտրում իւր ազգականներից ա-
մենից յարմարագոյնին: Ընտրուածին բարձրացնում
էին վահանների վրայ և թագաւոր էին հրատարա-
կում: Առաջնորդների ցեղերն համարուում էին երե-
ւելիք. այսպիսի ցեղի պատկանող մարդու սպանման
համար աւելի թանկ գին էին վճարում, քան թէ հա-
սարակ գերմանացու: Երեւելիները շատ չէին, նոյնպէս
սակաւաթիւ էին և ստրուկները—գերմանացիք դրանց
քիչ էին տանը պահում, յաճախ տալիս էին դրանց մի
հողի կտոր որոշ տուրքի փոխարէն մշակելու:—Ազգի

գլխաւոր մասը կազմում էր ազգասականների դասը, որոնք ամենքն էլ ազատ էին և իրենց ազատութիւնը զէնքով էին պաշտպանում:

Գերմանացի
կրօնը

Գերմանացոյ հաւատն, ինչպէս և նրանց բարբառները, ծագել են ընդհանուր արիական աղբիւրից: Նրանք երկրպագում էին բնութեան երեւոյթները կառավարող աստուածներին, իսկ դրանց երեակայութիւնն աստուածներին պատկերացնում էր իբրեւ հզօր ու անմահ մարդիկ, որոնք օժտուած են մարդկային ունակութիւններով, կրքերով ու թերութիւններով: Բնութեան բոլոր երեւոյթներից ամենից աւելի արիացոյ ուշքը գրաւել է փոքրորիկը. դա թուացել է նրանց աստուածութեան յանկարծակի արտայայտութիւն. սեւ ամպերը թուացել են չար ոգիք, որ հաւաքուել են կռուելու երկնային աստուծու դէմ: Կայծակի հարուածների մէջ այդ աներեւոյթ աստուածը տեսանելի էր դառնում. նրա յաղթութիւնն ամպերի վրայ՝ բարիք էր թափում երկրիս վրայ—օգը մաքրում էր, հողը պտղաբեր դարձնում: Հնդկացոյ Ինդրան, իրանցիների Միհրը (Միթրա), յոյների Զեւսը կամ Դիօսը, Իտալացոյ Իւպիտերն շանթընկէց կամ ամպրոպային են: Գերմանացոյ մէջ դրանց համապատասխանում է Թոռը (Դոննար), աշխատաւորների խնամարկուն, չար հսկաների յաղթողը, որոնց նա ջախջախում է քարէ ուռնով: Ինչպէս սեմական ցեղի մարդիկ, այնպէս էլ արիք երկրպագում էին սննդող երկրին, որ կեանք է տալիս բոյսերին, կենդանեաց, մարդկան և մեռելներին ընդունում է իւր ծոցը: Յոյները պաշտում էին երկիրն իբրեւ Դեմետրէ ու Հերա, Իտալացիք անուանում էին նրան Յերա և Իւնոնա, գերմանացիք պաշտում էին նրան Ներտու և Ծրայ անուամբ: Արիական իւրաքանչիւր ազգ իւր ձևով փոփոխում և լրացնում էր ընդհանուր հաւատքը, գերմանացոյ մէջ անընդ-

հատ պատերազմների ու դաղթականութեանց պատճառով առաջին տեղը գրաւեց պատերազմի աստուածը: Նրանք ի հնուց անտի ունէին մի աստուած Վոթան (Օդին) անունով, հողմի աստուածը, որ նման էր յունական Հերմեսին և հռովմէական Մերկուրիոսին, փոխանակ աստուածների բանբերը կամ վաճառականութեան խնամարկուն դառնալու, նա դարձաւ այս անհանգիստ, աւար և արկած որոնող զինուորների աստուածը: Նրան վերագրում էին մեծ իմաստութիւն և ճարտարութիւն. փոքր առ փոքր նա վեր բարձրացաւ խաղաղ հողագործների Թոռ աստուծուց, և դարձաւ բարձրագոյն աստուածը, գրաւեց այն տեղը, որ յոյների մէջ ունէր Զեւսը: Օդինի արքունի պալատը կոչւում էր Վալհալլա, այնտեղ նա խրախճանքի մէջ է հերոսների հոգիների հետ, որոնք սպանուած են պատերազմի դաշտում: Ամենայն օր մարտի է դուրս գալիս նա իւր ընկերներով. նրանք բաժանուում են երկու բանակի և խոցոտում են միմեանց ինչքան ոյժ ունին, բայց օրուան վախճանին վէրքերն առողջանում են, և դիւցազնները դառնում են Վալհալլա խրախճանի¹⁾:

Կոապաշտներն աստուածներին պատկերացնում էին հզօր, բայց ոչ ամենակարող: Այս յատկապէս նկատելի է սկանդինավական գերմանացոյ դիցաբանութեան մէջ. Օդինը, Թոռն եւ այլ փառաւոր աստուածները միշտ կռիւ են մղում չար հսկաների հետ եւ յաղթում են նրանց, բայց այս յաղթութիւնները վըճառական չեն. պիտի գայ մի օր, երբ չար էակները պիտի յաղթեն ու կործանեն աստուածներին, իսկ երկրիս պիտի լափէ ու ծախէ կրակը «Աստուածների այս խաւարումից» յետոյ պիտի թաղաւորէ մեղքից մաքուր ու բարի Բալդուրը, Օդինի ու Ծրայի որդին:

¹⁾ Անգլիացոյ ու գերմանացոյ լեզուի մէջ շարաթուան օրերի անուանց մէջ պահուած են դեռ ևս զիսաւոր աստուածների անունները: Այսպէս չորեքշաբթին անգլիերէն կոչուում է «Wednesday» (Օդինի օր). հինգշաբթին եւ ուրբաթը գերմանացիք կոչում են «Donnerstag» և «Freitag»:

Գերմանացիներից յետոյ յառաջ շարժուեցան սլաւները: Առաջին անգամ լսումենք սլաւների մասին Տակիտոսի նկարագրութեան մէջ, Քրիստոսից յետոյ առաջին դարում: Նա յիշումէ վենետիկների մասին, որոնք զետեղուած էին Բալթեան ծովից դէպի հարաւ արեւելք տարածուող անտառուաներում: Վիսյա և Նէման գետերի աւազանից նրանք տարածուեցան երեք ուղղութեամբ. ոմանք արեւելեան գերմանացոց քչեցին և գրաւեցին նրանց մաքրած երկիրը մինչև էլբա, միւսները կռուում էին ֆինն ու թուրք ցեղերի հետ այժմեան Ռուսիայում, երրորդ մասն յառաջ անցաւ դէպի հարաւ, գրաւեց Դանուբի ստորին ու միջին ընթացքն և թափանցեց Բալկանեան թերակղզին:

Սլաւները մտան Եւրոպա անյաջող հանգամանքմանքներում. այնքեղ ամենաշատ վայրերն արդէն զորաւորւած էին. այնպէս որ սլաւներն ստիպուեցան բռնակուելու մութն ու ճահճային անտառներում և անծայր հարթութիւններում, որոնց վրայ տարածուում էր ազգաբնակութիւնը: Երկար ժամանակ նրանք ամենուրեք հսկողիսլում էին քարքարոսների, ուստի և չէին ստանում այն դասերն, որ կելտերն ու գերմանացիք ստացել էին յոյն հռովմէական քաղաքակրթութիւնից: Արդէն այս իսկ պատճառով նրանք արեւելի դասերից էին զարգանում, և նրանց կենցաղն աւելի նահապետական էր, քան թէ գերմանացոյցը: Անտառոտ վայրերում նրանք պարապում էին գազաններ որսալով, մեղուաբուծութեամբ, և այլ անսառայիւն արդիւնագործութեամբ: Անասնաբուծութիւնը մեծ դեր չէր խաղում նրանց մէջ. ընդհակառակն, նրանք վաղ սկսան զբաղուիլ երկրագործութեամբ: Դաշտային աշխատանքով պարապում էին ամենքը, ոչ ոք այդ չէր արհամարհում: Ստրուկներ չէին պահում. գերիներին արձակում էին փրկանքով կամ ընդունում էին

իրենց հասարակութեան մէջ: Տոհմական կապը շատ զօրաւոր էր: Ոչ միայն բազմացած ընտանիքի անդամները միմեանց պաշտպանում էին և հօր մահուանից վերջը հպատակում մեծաւորին, որ փոխարինում էր տոհմագլխին, այդպիսի մեծ ցեղը կամ ընտանիքն առհասարակ, կազմում էր տնտեսական համայնք. դրա անդամներն աշխատում և տնտեսութիւն էին անում միասին, բաժանելով վաստակն համաձայն կարեաց և և գործին մասնակցելու չափին: Երբ գոյութիւն էր լինում ընդհանուր տնտեսութիւն վարելն, տոհմակիցների մի մասը բաժանուում էր և հիմնում միւսը շէն: Այս ձևով, տոհմական համայնքներն էին սերտ և ամուր գաղնակցութիւններ: Առանձին ցեղերի միջի կապը թոյլ և պատահական էր: Նրանք միանում և կազմում էին ազգեր, որոնց գլուխ էին կանգնում իշխանները (կնեազ), որոնք կամ ընտրուած էին լինում, կամ աւագներն էին որոշ ցեղի մէջ: Ընդհանուր գործերը վճռուում էին ժողովներում (վեչե). առաջնորդների իշխանութեան նեցուկն էր զօրագունդը (դրուժինա) այն ղեկավարների, որոնք նրանց շուրջը խմբուում էին. զօրագնդի պահպանութեան ծախքն հոգացուում էր աւարից ու այն տուրքից, որ դրւում էր պարսուած թշնամեաց վրայ: Պատերազմի ժամանակ կանանց, մանկանց, անսուններն ու կարասին հաւաքում էին ֆաղափներում (գրադ), այսինքն՝ ցանկապատով կամ թմբերով շրջափակուած ամրոցներում: Պարտութեան դիպուածում ղեկավարները փախչում էին այնտեղ, սովորաբար աշխատում էին թըշնամու վրայ ընկնել յանկարծուստ, քաշել նրան դաւանք, շրջապատել կամ ճանապարհը դէպի յետ կրտրել: Մի ցեղի անդամների յարաբերութիւնները դէպի միմեանց խախտու էին: Տոհմերը քշնամի էին միմեանց հետ: Ընդհանուր ժողովներում չէին սովորել

ենթարկուել մեծամասնութեան կարծիքին, այլ իւրաքանչիւրն իւր ասածն էր պնդում և առիթ պատահած ժամանակ բաժանուում էր միւսներէն: Այս երկպառակութիւններն և ամուր կազմակերպութեան բացակայութիւնը շատ էին վնասում սլաւներին դրացիների հետ ընդհարուելու ժամանակ: Գերմանացիք, որ շատ բան էին սովորել հռովմէացիներից, միջոց ունեցան մասամբ մղելու նրանց դէպի արևելք, մասամբ ստորադրելու իրանց արևմտեան ցեղերը: Միւս կողմից, սլաւները խիստ նեղուում էին Ասիայի թափառական թուրք և մոզլ ցեղերի արշաւանքից: Այս թշուառութիւնների պատճառը ոչ մի կերպով սլաւների զինուորական ոգու պակասութիւնը չէր: Մի արար պատմագիր նրանց մասին ասում է. «սլաւներն այնպիսի հզօր և սարսափելի ազգ են, որ աշխարհիս երեսին ոչ ոք կարող չէր նրանց դիմադրել, եթէ չը բաժանուէին բազմաթիւ ցեղերի և տոհմերի»:

Սլաւների
կրօնը

Սլաւների կրօնը նոյնպիսի նախնական բնաւորութիւն ունէր, ինչպիսին և նրանց քաղաքական կազմակերպութիւնը. մի քանի ցեղեր պաշտում էին աստուածութիւններից ոմանց, իսկ միւսներն — այլոց: Գլխաւոր աստուած համարուում էր Սուարոզը, երկնի տէր յուսոյ *shturayesht*, որ համապատասխանում էր իրանցոյ Որմզդին, արեգակն ու կրակը նրա որդիքն էին: Երկնային շանթընկէցն էր սլաւ ռուսների մէջ Պերունը. միւս ազգերի մէջ այս աստուածութիւնն որոշ կերպով աչքի չէ ընկնում: Երկիրս ու բնութիւնը մարմնացնող դիցուհուն կոչում էին Վեսնա: Մահուան և ձմրան դիցուհին էր Մորանան: Սլաւների մեծ մասի մէջ թոյլ կերպով ըմբռնուած կռապաշտութիւնը շուտով լուծուեցաւ քրիստոնէութեան հետ հանդիպելուն պէս, բայց նրա մնացորդները ցարդ ապրում են ժողովրդական հաւատալիքների մեջ. անային չար ոգիք (դո-

ւոլոյ, յուր,) որոնց մասին ժողովուրդը հաւատում է, որ մի յայտնի շէնքի մէջ են ապրում, որոշ ընտանիքի մօտ, նախնապէս մեռած նախահայրերի ոգիքն էին, տան և ընտանիքի հովանաւորները: Ջրերի հաւերժահարսները, շահապետները, մարդագայլերն — ամէնքն էլ հին աստուածների յաջորդներն են. որոնցով կռապաշտները լցրել են անտառների խորքերն ու ջրերի փրփուրներն: Կռապաշտութիւնը պինդ պահեցին միայն բալթեան սլաւները. նրանց մէջ կազմուեցաւ զօրաւոր քրիստոնէական դասակարգ, դոյութիւն ունէին հարուստ տաճարներ կուռքերով և որոշ աստուածապաշտական կարգով:

Հռովմէացոյց հետ մշտական յարաբերութիւնները մեծ ազդեցութիւն գործեցին գերմանացոյց վրայ: Հռենոսի ու Դանուբի ընթացքների երկարութեամբ կազմուեցան քանի մի փաղափնէր, որոնք տարածում էին հռովմէական քաղաքակրթութիւնն և արդիւնաւորութիւններն¹⁾:

Գերմանիոյ հարաւարևմտեան սնկիւնը, սկսած Մալնցից մինչև Ռեգենսբուրգ, գրաւել էին հռովմէացիք ու պաշտպանում էին մի ամբողջ շարք ամրոցներով (*limes*): Այս երկրը կոչուում էր *agri decumates*. զրա մէջ ապրող գերմանական ազգաբնակիւթիւնը ռոմանացրած էր. Գեղարուեստական ու ձեռագործական արտադրութիւնները, մեքենական յարմարութիւններն ու սովորութիւնները թափանցել էին երկրի խորքը. գերմանացիք հռովմէացիներից սովորեցին կատարելագործուած երկրագործութիւն, պտղատու ծառերի մշակութիւնը լաւ դէնքերի ու գործուածքների պատրաստելը. Նոյն իսկ երբ բարբարոսները սկսան կայսրութեան սահմանը կոխելով ներս մտնել, ըստ մեծի մասին ընկան հռովմէացոյց ազգեցութեան տակ. նրանք, որոնք չէին բաւականանում պատահական ար-

¹⁾ Յատկապէս նշանաւոր էին այս մասին. Վէօնը (*Colonia Agrippina*), Տրիրը (*Augusta Trivirorum*), Մալնցը (*Moguntiacum*), Ստրասբուրգը (*Argentoratum*) — Հռենոսի աւազանում, Սազսբուրգը (*Augusta Vindelicorum*), Ռեգենսբուրգը (*Reginum*) և Վեննան (*Vindobona*) — Դանուբի վրայ:

շաւանքներով ու կողոպուտներով, սովորաբար հաստատուում էին սահմանի երկարութեամբ, դառնում էին կայսրութեան դաշնակիցներ (foederati, laeti)՝ Երբեմն նրանց անդադիօսում էին խաղաղ հռովմէական ժողովրդի մէջ բնակելու համար (hospites) եւ այս ժամանակաւոր բնակիչներին սեփականում էին տանտէրերի սրդիւնքի որոշ մասը¹⁾։

8 հզերի
դաշնակցու-
թիւնները

Բացի սրանից, հռովմէացոյց հետ կռիւր ստիպից գերմանացոյց սևոս միաւորուելու, փոխանակ գաւառական առաջնորդների երևան եկան դուքսեր ու թագաւորներ. մանր ցեղերն հետ զհետէ անյայտացան ու ձուլուելով կազմեցին մեծ ազգեր ու ցեղերի դաշնակցութիւններ։ Զորքորդ գարում Հռենոսի ու Դանուբի ակունքների մօտ բնակուեցան ալլէմաններն, Նէկկարի ափերին հաստատուած էին բուրգունդներն, Հռենոսի ստորին ընթացքում բնակուած էին ֆրանկներն²⁾։ Դանուբի երկարութեամբ խիտ առ խիտ բնակում էին բաւարները, վանգալները, լանգոբարդները։ Դերմանիոյ միջավայրը գրաւած ունէին Վեղերից մինչև Հռենոս ֆրիզները, էլքայից մինչև Վեղերը սաքսերը, Թիւրինգեան լեռներից մինչև Իւտլանդ անգրլները։ Դէպի հարաւ արևելք, ստորին Դանուբի աւազանում, Դենստերի եւ Բուգի ընթացքով մինչև Դնէպր, տարածուում էին գոթական ցեղերը։ Գոթերը միմիայն իրենց զօրութեամբ չէր, որ աչքի էին ընկնում։ Նրանք յառաջագիմութիւն էին արել եւ կրթութեան մէջ։ Նրանցից մէկը, Ուլֆիլաս անունով, տարածեց քրիստոնէութիւնն իւր հայրենակցաց մէջ, դարձաւ նրանց եպիսկոպոսը (341) եւ թարգմանեց նրանց համար Սուրբ Դիւքը գոթերէն լեզուով։ Գոթերի դարձը դէպի քրիստոնէութիւն տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Արեւելեան Կայսրութեան մէջ գերակշիռ էր արիոսականութիւնը։ Այս իսկ պատճառով գոթերն եւ այլ գեր-

341

¹⁾ Սովորաբար մի երրորդ մասն։

²⁾ Ռիպուարեան ֆրանկները Նէօնի շուրջը, իսկ սաւեան-ֆրանկները Նիդերլանդիայում։

մանական ցեղերը, որ կախումն ունէին դրանցից, ընդունեցին Արիոսի աղանդը։

Հոների
արշաւանքը

Մեծն Կոստանդիանոսի ու նրա յաջորդների ջանքերով գերմանացոյց արշաւանքները կանգ առան։ Բայց գերմանացիք դեռ եւս անհանգիստ էին եւ ամեն վայրկեան պատրաստ շարժումն սկսելու. նրանց յառաջ էին մղում արևելքից նոր ժողովուրդներ, որոնք նոյնպէս բնակութեան համար լաւագոյն տեղեր էին որոնում։ Մի առ ժամանակ հաստատուած հաւասարակշռութիւնը խանգարուեցաւ հոնական քսակների յարձակման պատճառով, որոնք եկել էին Միջին Ասիայից։ Հոները Թուրանեան ցեղի ազգ են, դրանք սարսափ ու զգուանք էին ազգում ինչպէս գերմանացոյց, նոյնպէս եւ հռովմէացոյց։ «Կարճահասակ, անճոռնի, մարդ կարող են համարուիլ, միայն նրա համար, որ մարդկային լեզուով են խօսում», — այսպէս է գրում նրանց մասին գոթական տարեգիրն։ Սրանց զօրութիւնը կազմում էր բազմաթիւ հեծելազօրն. սրանց թափառական բանակները փնտռում էին աւար եւ աւերած էին գործում։ Հոների արշաւանքի մէջ մասնակցում էին բազմաթիւ այլ ցեղեր եւս — ի միջի այլոց, գերմանացիք, սլաւներ։ Հենց որ անյաջողութիւններ պատահեցան, այս ամբոխը բաժան-բաժան եղաւ, իսկ բուն հոների մնացորդները ցրուեցան այժմեան Հունգարիայում եւ հարաւային Ռուսիայում։

Հոների առաջին յարձակումն (375) տեղահան արաւ արևելեան եւ միջին Եւրոպայի բոլոր ցեղերը։ Վեստգոթները խուժեցին հռովմէական սահմանները, Օստգոթները հպատակեցին հոներին։ Թէոդոս Մեծին յաջողուեց միայն կարճ ժամանակով կարգը վերականգնել։ Նրա մահուանից յետոյ կայսրութեան գլխաւոր պաշտպան հանդիսացաւ Վալնդալ Ստեյխիսոնը, արեւմտեան կայսր Հոնորիոսի խնամակալը։ Սա մի նը-

Առաջին
գաղթական
նութիւնը
375

շանաւոր զօրավար էր, որ կարողանում էր օգուտ քաղել հռովմէական զինուորական արուեստի բոլոր կատարելագործութիւնից ընդդէմ բարբարոսների։ Երկու անգամ նա յաղթեց վեսգոթների առաջնորդ Աշարիխին. առաջին անգամ դուրս վաճեց նրան Յունաստանից, երկրորդ անգամ՝ Իտալիայից։ Բացի դրանից, նա ոչնչացրեց վանդալների, բուրգունդների եւ ուրիշ գերմանացոց արշաւախումբն, որ կողոպտում էր Գալլիան եւ Իտալիան։ Բայց Հոնորիոսի արքունիքում կասկած ունէին Ստիլիխոսի վրայ, որ իբր թէ ձգտում է կայսերական թագի եւ մեղադրումէին նրան թէ պաշտպանում է բարբարոսներին, որոնցից ժողովել էր իւր զօրքը։ Հոնորիոսի մերձաւորները 408 թուին սպանեցին Ստիլիխոսին։

Այդ ժամանակ Ալարիխը կրկին երեւեցաւ Իտալիայում եւ այս անգամ առաւ եւ աւերեց Հռովմը (410)։ Այդտեղից շարժուեցաւ դէպի հարաւային Իտալիա, բայց այնտեղ յանկարծ մեռաւ։ Գոթերը փոխեցին մի գետակի ընթացքն, թաղեցին նրան իւր գանձերով գետակի յատակումն եւ ջրի հոսանքը կրկին իւր նախկին ընթացքին դարձրին։ Ալարիխի յաջորդը խաղաղութիւն հաստատեց կայսեր հետ եւ իւր ցեղն հանեց ու տարաւ Գալլիա եւ Սպանիա։ Այնտեղ քանի մի տարի էր, որ արդէն ասպատակում էին վանդալները, բուրգունդների խմբերը։ Վեստգոթները մարբեցին նրանցից Սպանիայի մեծ մասն ու հարաւային Գալլիան։ Բուրգունդներին սակայն յաջողուեցաւ բնակուելու Ռոնա ու Սոնա գետերի հովտում, վանդալները մի առ ժամանակ մնացին հարաւային Սպանիայում, իսկ ապա անցան Ափրիկէ։ Այս ձեռով աւարտուեցաւ շուրջ 430 թուին ազգերի գաղթականութեան առաջին շրջանը։ Սա սկսուեցաւ հոնների յարձակումից գոթերի վրայ եւ վեստգոթերի Դանուբից

անցնելով։ Սրա հետեւանքն եղաւ Արեւմտեան կայսրութեան հողի վրայ երեք բարբարոս թագաւորութեանց կազմուիլը. վեստգոթներինը Սպանիայում եւ հարաւային Ֆրանսիայում, բուրգունդականինը Ֆրանսիայի հարաւարեւելքում, վանդալականինը Ափրիկէում։

Նոր զարկ տուին դէպի գաղթականութիւն նոյն հոնները. որոնք առաջին զարկն էին տուել։ ^{Երկրորդ գաղթականութիւն} Նրանք կանգ էին առել Պանոնիայում, այժմեան Հունգարիայում։ Դրանց պարագլուխներից մէկն, Ատտիլան, կոտորեց իւր ազգականներին եւ միաւորեց բոլոր ցեղն իւր իշխանութեան տակ։ Իւր հոներով եւ դրանց յարած գերմանացիներով ու սլաւներով նա սկսաւ մի շարք արշաւանքներ բոլոր դրացիների դէմ։ «Որտեղից կ'անցնի իմ ձի», ասում էր նա, «այնտեղ խոտ չի բուսնիլ»։ Նրա զօրքերը Կովկասեան լեռնաշղթան անցնելով յարձակումն էին գործում Պարսից թագաւորութեան եւ Փոքր Ասիոյ վրայ։ Նա ինքն երկու անգամ աւերեց Բաղկանեան թերակղզին եւ Կ. Պոլսից հեռացաւ, միայն ահագին փրկանք ստանալով։ Նա Գալլիա դիմեց 451 թուին մի բաղմացեղ զօրաբանակով, որ ըստ աւանդութեան բաղկացած էր 600,000 մարդուց։ Նրան կանգ առնել ստիպեցին միայն Օւլէանի պարիսպները։ Հռովմէացիք ու հռովմէական երկրներում բնակուած բարբարոսները միաբանեցին սարսափելի թըշնամու դէմ։ Ատտիլան հռովմէացի Աէտիոսի հրամանատարութեան տակ ժողովուած զօրքն աչքի առաջ ունենալով՝ յետ դարձաւ։ Կատալաունեան դաշտերում (Մառնի վրայի, Շալոնի մօտերը) տեղի ունեցաւ տիեզերական պատմութեան ամենից արեւնահեղ ճակատամարտներից մէկը. պատերազմի դաշտում հոսում էին արեան գետեր. ապա պատմում էին, որ սպանուածների հոգիքը կատաղօրէն կռուում էին ամպերի վրայ։ Հռովմէացիք ու վեստգոթները տիրեցին,

վերջապէս, այն բլուրին, որ իշխում էր պատերազմի
դաշտի վրայ և հոները յետ դարձան իրենց բանակը:
Բայց յաղթողներն իրենք այնպէս տկարացած էին, որ
չը վստահացան հալածելու թշնամեաց, և հոներն ան-
ցան գնացին իրենց աւարով դեպի Պաննոնիա: Մի տա-
րուց յետոյ Ատտիլան արշաւանքի ձեռնարկեց դէպի
Իտալիա, բայց, հռովմէացոյ բախտից, նրա զօրքի
մէջ ժանդախտ ընկաւ, նա դրաւեց Արուիլէան, բայց
չը հասաւ մինչև հռովմ: այլ յետ դարձաւ Պաննոնիա,
ուր և շուտով մեռաւ: Նրա մահուանից յետոյ, հոները
թագաւորութիւնը քայքայուեցաւ:

Ատտիլայի յարձակումները սպառեցին Արեմտե-
ան կայսրութեան վերջին ուժերն: Աէտիոսն ևս նոյն
տխուր ճակատագիրն ունեցաւ, որ ունեցել էր Ստի-
լիսոնը, նա սպանուեցաւ նախանձոտ սլաւադասականե-
րից: Արեմտեան կայսրութեան քայքայումից օգտուեց
և վանդալների քագաւոր Գեւգերիսը. նրա նաւերն
455 իշխում էին Միջերկրական ծովում: 455 թուին զօրք
հանեց Իտալիա և առաւ հռովմը: Վանդալները կո-
ղոպտում էին 12 օր. նրանք խնայում էին մարդկանց,
բայց անխնայ կերպով կործանում էին հռովմէական
փառքի և գեղարուեստի յիշատակարանները¹⁾: Արե-
մտեան կայսրութեան մնացորդներն հետզհետէ անց-
նում էին բարբարոսների իշխանութեան տակ: Իտա-
476 լիայում 476 թուին կազմուեցաւ հերոսացոց քագա-
ւորութիւնը, իսկ ապա, արեւելեան կայսեր հրաւերով,
այնտեղ անցաւ իւր ցեղի հետ միասին Օսգորների
490 քագաւոր Թեոդորիսը (490):

Գալլիայում, վեսագոթների և բուրգունդների հետ
միասին երևացին Փրանկները, և իրողվիք թագաւորն
486 թուին խլեց հռովմէացոյ վերջին ապաստանարանը
— Սուասոնը: Բրիտանիայից լեգէոններն հանուեցան

¹⁾ «Վանդալիզմ» բառը մինչև այսօր փշեցնում է այս աւարա-
ւորութիւնը:

Ե. դարու սկզբում: Այնտեղ ցամաք սկսան դուրս գալ
449 թուից սախսերի ու անգլների խմբերն, որոնք
թեթեւ մակոյկներով անցնում էին Հիւսիսային ծովը
ու դուրս էին գալիս Բրիտանիա: Տեղացի բրիտանա-
կան ազգաբնակչութիւնը յամառ դիմադրութեան էր
ցոյց տալիս, բայց ստիպուում էր աւելի ու աւելի
յետ նահանջել դէպի հիւսիս և արեւմուտք: Հինգե-
րորդ դարու վերջին հռովմէական տիրապետութիւնը
ջնջուեցաւ Արեմտեան կայսրութեան ամբողջ տարա-
ծութեան վրայ: Ահագին բաղմութեամբ գերմանացիք
սկսան հռովմէական սահմանն անցնել և դրան համա-
պատասխան մեծ բաղմութիւն սլաւներ ներս մտան
այժմեան Գերմանիա և Աւստրիա:

Սլաւների աշխարհակալութիւններն այնպիսի մեծ
հռչակ չը հանեցին, ինչպիսին հանել էին հոների և
գերմանացոց արշաւանքներն, որովհետև դրանք տեղի
ունեցան մեծ մասամբ անկիրթ երկրներում և ման-
րամասնօրէն չը պատմուեցան տարեգրողներից: Գըլ-
խաւորապէս մնացել է միայն նրանց Արեւելեան կայս-
րութեան սահմանները մտնելու յիշատակը: Այս աշ-
խարհակալութիւնների ընդհանուր եղբակացութիւնն
շատ նշանաւոր երևեցաւ: Մշառ ցեղերն յառաջ ան-
ցան այդ ժամանակ Վիսլայից դէպի Էլբայի և Դա-
նուբի միւս կողմն: Նրանց արեւմտեան խմբակցութիւնը
կազմում էին. 1) շուրջքալքեան սլաւներն (վենդերը),
որ բաժանուում էին հետեւեալ ցեղերի. օբօգրիտներ
(Ստորին Էլբայի վրայ), լիւտիչներ (Էլբի և Օդերի
միջև), սլոնիներ (ստորին Օդերի և Վիսլայի ափե-
րին), սերբեր (Էլբայի-ձախափնեայ վտակների վրայ).
2) սլոնակներ կառ լեհեր, Օդերի աջափնեայ վտակ-
ների վրայ, Վիսլայի միջին ու վերին հոսանքներում:
3) յեխեր, որ դրաւեցին բոհեմական լեռների քառա-
կուսին և Մոռաւիոն. 4) սլոնակները, Տիսսի և արեւ-

մտեան Կարպատների մօտ: Հարաւային խմբակցութեան պատկանում էին. սշոյկեցիք, արեւելեան Ալպերի վրայ և Իսաւորիայում: 2) խոռոսներն ու սերքերը Դրաւա և Սաւա գետերի վրայ և Բալկանեան թերակղզու հիւսիս-արեւմտեան անկիւնում: 5) բոլորներն, ստորին Դանուբի վրայ: Արեւելեան խմբին պատկանում էին ռոսները: Վերջնականապէս այդ տեղերը գրաւեցին սլաւներն արդէն շուրջ է. դարում:

ԴԱՌԻՆ Բ.

ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆԸ Զ.—Ը. ԴԱՐԵՐՈՒՄ:

Կայսրութեան ազդեցութիւնը:

Բարբարոսների հաստատուիլն արեւմուտքում աւելանալով, որ հռոմէական կայսրութիւնը բոլորովին կործանուել է: Նոյն իսկ արեւմտեան երկրներում բարբարոս թագաւորները, որ տիրապետել էին, ամենայն միջոց գործ էին դնում, որ իրենց իշխանութիւնը ճանաչուի այն կայսրերից, որոնք քաղաւորում էին Կոստանդնուպոլսում: Օսոգոթների թէոդորիս թագաւորն այդ մասին երկար բանակցութիւններ վարեց Կոստանդնուպոլսի արքունեաց հետ, դրամներ կոխեց կայսրների պատկերներով և արձանագրութիւնների մէջ նրանց անունն իւր անուանից առաջ դրաւ. վեստգոթների թագաւորները պարծենում էին կայսրութեան զօրավարի (magister militiae) տիտղոսով. ֆրանկների թագաւոր Խլոդվիգը շատ ուրախացաւ, երբ նրան Կոստանդնուպոլսից ուղարկեցին հիւպատոսութեան աստիճանի վկայագիր: Այս ամէնի մէջ արտայայտուում էր ոչ միայն դատարկ տիտղոսներ ու յարգանքներ փնդուելու ձգտումն, ոչ միայն նախապաշարուած երկրպագութեան կայ-

սրութեան մեծութեան առաջ, այլ բարբարոս թագաւորները, չը նայելով իրենց յաղթութիւններին, իրենց վստահ չէին զգում նուաճուած հռոմէական ազգաբնակչութեան մէջ և զնահատում էին մի չնչին բան, որ ընդունակ էր համոզելու, թէ իշխանութիւնը նրանց ձեռքն է անցել կայսրութեան միջոցով:

Բարբարոսների դրութեան անհաստատութիւնը Յուստինիանոս կատարելապէս երեւան եկաւ, երբ մի ամբողջ շարք սրկիսի կուսանչան կառավարիչներից յետոյ Կոստանդնուպոլսի թիւններէ գահի վրայ բարձրացաւ մի աչքի ընկնող մարդ—Յուստինիանոսը (527): Սա յաջորդեց իւր հօրեղբայր Յուստին կայսեր, որ հասարակ զինուորութիւնից բարձրացել էր կայսերական աստիճանին: Ստոր վիճակից վեր բարձրանալը բաղմամբ թշնամեաց ատելութիւնն ու դժգոհութիւնը զարթեցրեց: Թէ Յուստինն ու թէ Յուստինիանոսն իրենց գահ ամբառնալու ժամանակ ստիպուած եղան մաքառելու ժողովրդական վրդովմունքների դէմ, յատկապէս մայրաքաղաքի ազմկարար ու երես առաւ բնակիչների մէջ: Այս բնակիչները, հռոմի բնակիչների նման, պահանջում էին կայսրներից ձրի հաց և փառաւոր տեսարաններ և ոչ մի տեղ այնպէս չէին ցոյց տալիս իւրեանց կրքերն ու սանձարձակութիւնը, որպէս կրկիսում: Հռոմէացոց սիրելի զուարճութիւնը—սուսերամարտների (գլադիատոր) կռիւները—ընդհատուեցան, շնորհիւ եկեղեցու ջանքերին ¹⁾: Մնացել էր կառարչաւների մրցման զուարճութիւնը: Քաղաքներում կազմուեցան կուսակցութիւններ, որոնց անդամները կրում էին սիրուած կառավարների դոյններն: Ոչինչ բան այնպէս չէր հրապուրում ու չէր հիացնում ժողովրդին, ինչպէս կրկիսի խաղերը, ուստի դրանցից սկսան օգտուիլ քա-

¹⁾ Վերջին անգամ սուսերամարտների կռիւ կազմեց Ստիլիխոնը 403 թուին:

21938-60

(1008/35848)

ղաքական շրջանակներն իրենց հայեացքներն ընդունելի անելու համար: Կապոյտներն, կանաչները, կարմիրները, ճերմակներն ոչ միայն կառավարների ու արշաւների մասին էին վիճում, այլ դարձան կատարեալ քաղաքական կուսակցութիւններ: Սովորութիւն դարձաւ, ի միջի այլոց, կայսեր գլխումն անելու խնդիրներով ու յայտարարութիւններով, երբ նա կրկէս էր դալիս. յայտարարութիւններն ազդեցիկ էին, որովհետեւ այդ անում էր մի քանի տասնեակ հազար մարդկանցից բաղկացած ամբոխը: Յուստինիանոսը հովանաւորում էր կապոյտների կուսակցութեան, դրանց ոսոխները — կանաչները, իրենց կողմը ձգեցին բոլոր նրա կառավարութիւնից դժգոհներին: Մի անգամ կանաչները կայսեր գլխին կրկնում աղմկալից պահանջով, որ նա հրաժարուեց կատարել: Այն ժամանակ բացարձակ ապստամբութիւն ծագեցաւ. խռովարարները փողոցներով վազում էին և աղաղակում Նիկիա (յաղթիր): Քաղաքի մեծագոյն մասը միացաւ նրանց հետ, և նրանք կայսր հրատարակեցին նախկին կայսրերի աղղականներից մէկին: Յուստինիանոսն իւր բանն արդէն կորած էր համարում, և պալատի մօտ կանգնած էր արդէն պատրաստի նստն, որ նրան Ասիա տանէ: Նրան սիրտ տուաւ իւր Թէոդորա կինը: Սա կրկնի մի ծառայողի աղջիկն էր, որ արջերին կերակրում էր, երկար ժամանակ գուսանութիւն և բախտախնդրութիւն էր արել: Բայց սա աւելի եռանդ ու խելք ցոյց տուաւ, քան թէ իրեն շրջապատող տրդամարդիկն: Թէոդորան հրաժարուեց փախչիլ և համոզեց Յուստինիանոսին կռուելու: Նրա խորհրդով զօրքի գլուխ նշանակուեցաւ փորձուած զօրավար Բելիսարիոսը: Սա փակեց աղմկուած ամբոխին կրկնում և կոտորեց մօտաւորապէս 30,000 մարդ (532):

Գահի վրայ հաստատուելով Յուստինիանոսը մշտ-^{Պատերազմ}
քումը դրաւ կայսրութեան վերադարձնել կորցրած^{Վանդալների հետ}
արեւմտեան նահանգներն: Յուստինիանոսի առաջին ձեռնարկութիւնն ուղղուեցաւ վանդալների դէմ: Սրանք կարծես թէ վերականգնել էին պոնտիկեան տէրութեան նշանակութիւնը. Կարթագէնը կրկին դարձել էր Միջերկրական ծովի մայրաքաղաքը վանդալական նաւերն անվիճելի կերպով իշխում էին արեւմտեան ջրերի վրայ և յաջողութեամբ մաքառում էին յունական նաւատորմի դէմ արեւելքում: Բայց այս զօրութիւնն անհաստատ էր. վանդալների թիւը շատ պակասել էր Եւրոպայում գործած աւաղակային թափառումներից յետոյ, նրանք չէին ձուլուել տեղացի օրթոդոքս բնակիչների հետ, որոնցից խիստ զանազանում էին իրենց արիւսական աղանդով. արագ հարստանալը խել էր նրանցից մինչև իսկ իրենց զինուորական քաջութիւնն ու եռանդը: Բելիսարիոսը դուրս եկաւ Ափրիկէի ցամաքը 15,000 զօրքով և մի տարուան մէջ (534) աւարտեց գործը վանդալների հետ: Ափրիկէն վերադարձուեցաւ կայսրութեան:

Բանն այդպէս հեշտ չը վերջացաւ Իտալիայում: Պատերազմ
Օստգոթների թագաւոր Թէոդորիսը ջանք էր գործ^{Օստգոթների հետ}
դնում պահպանելու հռովմէական կառգերն և ինչ-քան կարելի է քիչ նեղացնել հռովմէացի բնակիչներին: Օստգոթները մօտան այս բնակիչների կարգն, իբրեւ մշտական ժառանգական զօրք (exercitus Gothorum): Նրանց գնդերը զետեղուած էին թերակղզու նշանաւոր զինուորական կէտերում, դրանց օգտին զատուած էր Իտալական հողի մի երրորդ մասը, բայց այս զատումը տեղի էր ունեցել կատարեալ կարգով, առանց բռնութեան: Հռովմէական վարչութիւնն, ելեւմտական ու դատական կողմը մնացել էին իրենց նախկին ձեւով. նշանաւորագոյն վիճելի խնդիրների համար Թէո-

գրիխը հրատարակեց մի հրովարտակ, որ կազմուած էր հռովմէական օրէնքների հիման վրայ. թագաւորի գիւանը կառավարում էր մի հռովմէացի, և այս գիւանի կարգադրութեանց մէջ միշտ ուշք էր դարձուում հռովմէական կրթութեան, դեղարուեստի արդիւնքների ու գրական վաստակների յարգելու վրայ, ցանկութիւն էր արտայայտուում, որ գոթերը սեփական են հռովմէացիներից նրանց բարեկազմութիւնը: Բայց այս ամէն կանխադրած մեծարանքը չը կարողացաւ հաշտեցնել իտալացոց գոթերի տիրապետութեան հետ: Սրանք ատում էին գոթերին ոչ միայն իբրեւ բարբարոսների, այլ նաև իբրեւ հերետիկոսների, և միշտ հայեացքներն ուղղում էին դէպի Բիզանդիոն: Արդէն իսկ Թէոդորիսի ժամանակ սկսան թիւրիմացութիւններն: Յուստին կայսրը փակեց արիոսական եկեղեցիք արևելքում—այս միջոցն իտալիայում ևս յառաջ բերաւ հզօր թշնամութիւն արիոսականների դէմ: Հռովմի եպիսկոպոսին, որ բանակցութիւնների համար կոստանդնուպոլիս էր ուղարկուած, հանդիսաւոր ընդունելութիւն արին. կայսրը, նրա պալատն ու մայրաքաղաքի բնակիչների մեծ մասը դուրս եկան նրան ընդառաջ: Բայց դրա փոխարէն Հռովմ վերագառնալուց յետոյ Թէոդորիսը նրան բանդը դրաւ և հրամայեց սպանել: Բացուեցաւ այն գաղտնի թղթակցութիւնը, որ հռովմէական ազգեցիկ ծերակուտի անդամները վարում էին կոստանդնուպոլսի կառավարութեան հետ: Թէոդորիսը համբերութիւնից դուրս եկաւ և գլխատել տուաւ հռովմէական կրթութեան մի քանի նշանաւոր ներկայացուցիչներին: Դրանցից մին, Բոէտիոս, մահուանից առաջ գրեց մի գիրք, «փիլիսոփայական մխիթարութեան մասին» (De consolatione philisophae) վերնագրով, որ իւր ոգւով ու ձեռով ստոյիկեանների երկերն է յիշեցնում:

Թէոդորիսի մահուանից յետոյ երկպառակութիւններ սկսան դահաժառանգութեան համար, և իշխանութիւնն անցնում էր ձեռքից ձեռք: Չը նայելով դրան գոթերը կայսեր զօրքին գիւյաղնական ընդգիւմութիւն ցոյց տուին: Պատերազմը մղուեցաւ քսան տարի: Քիչ էր մնացել Բելիսարիոսը տիրապետէ ամբողջ իտալիային, բայց կայսեր միջոցները սպառուեցան, չը կարողացաւ օժանդակել իւր զօրավարին, և գոթերի թագաւոր Տոսիլան կրկին գրաւեց Հռովմը: Վերջ ի վերջոյ բիւզանդացիք յաղթեցին. Բելիսարիոսի յաջորդը, Նարսէսը ոչնչացրեց գոթերի վերջին զօրաբանակն: Յետոյ դրաւուած իտալիան կազմեց Էֆգարիստս (փոխարքայութիւն) Հռաւեննա մայրաքաղաքով (555):

555

Իտալական պատերազմի վախճանի հետ միաժամ ժամանակ յաջուղուեցաւ Յուստինիանոսին մի հարուած տալու և վետագոթներին: Վետագոթների քաղաքականութիւնը Սպանիայում շատ նման էր իրենց ցեղակիցների գործողութեանց եղանակին իտալիայում: Սպանիան գերմանական տիրապետութեան տակ ևս մնաց բոյորնովիս ոռմանական երկիր, պահպանեց հռովմէական հաստատութիւններն ու կարգերը: Դատարանների առաջնորդութեան համար կազմուեցաւ հռովմէական օրէնքների համառօտութիւնը (Breviarium Alaricianum): Եւ կրկին նոյն պայմանները վնասեցին սպանիական գոթերին, որ վնասել էին իտալականներին: Նրանք լաւ չը ձուլուեցան տեղացի ոռմանական բնակիչների հետ: Սպանիական հզօր եկեղեցին բոլոր ու ժով նրանց դէմ էր դործում, իբրեւ արիոսական-ստորկացողների դէմ: Վերջապէս, գոթ առաջնորդների մէջ սկսաւ ազգամիջեան կռիւ: Այս ամէնի շնորհիւ, բուզանդացիք որոշ յաջողութիւններ ունեցան նոյն իսկ հեռաւոր Պիրենեան թերակղզում:

Նրանք գրաւեցին հարաւային նաւահանգիստներն ու Զիբրալտարի նեղուցը:

Պատերազմ
պարսիկների
հետ:

Յուստինիանոսը կարող էր կատարեալ իրաւամբ իրեն կայսր համարել ոչ միան արեւելքի, այլ նաև արեւմուտքի: Նրա թագաւորութեան ամենից փառաւոր և յաջող պատերազմներն իսկապէս վարձեցան արեւմուտքում, իսկ արեւելքում նա ստիպուած էր ոչ թէ աշխարհակալութիւն անելու, այլ վարելու դժուարին պաշտպանողական պատերազմ պարսից սլաւների ու բուլղարների ընդդէմ: Պարսկաստանում այդ ժամանակ թագաւորում էր Սասանեան Խոսրովը:

Սա յոյն-հռոմէական քաղաքակրթութեան մի թշնամի և կոպիտ բարբարոս չէր: Ընդհակառակն, ձգտում էր Պարսկաստան տեղափոխել բոլոր երկրների լաւագոյն արտադրութիւնները, հրամայեց թարգմանել Արիստոտէյն ու Բիզպայի հնդկական առակներն, ընդունեց յոյն կռապաշտներին, որոնց Յուստինիանն արգիլել էր փելիսոփայութիւն աւանդել Աթէնքում: Վերջապէս, նրա երկրներում ապաստանարան և նեցուկ զբաղւած էին կայսրութեան մէջ: Խոսրովի մայրաքաղաք Տիգրանում (Կտէղիֆոն) հաստատուեցաւ մի հզօր նւստորական պատրիարքութիւն:

Խոսրովը խիստ նեղումէր կայսրութիւնը հարաւային Կովկասում և Ասորիքում և, ի միջի այլոց, առաւ Անտիոքը: Յուստինիանոսը քանի մի անգամ ստիպուել էր դրամով աղատուելու նրա յարձակումներից, բայց այսուամենայնիւ կարող եղաւ պաշտպանել կայսրութեան արեւելեան սահմանը, որ տարածուում էր Կովկասեան լեռնաշղթայից մինչև Նիքիտ ու Արաբիոյ անապատը: Մեծ զօրավար Բելիսարիոնն այստեղ ևս անդնահատելի ծառայութիւններ մատուցեց կայսրի: Յուստինիանոսը փորձեց մինչև իսկ ազատելու պարսից միջնորդութիւնից շահաւէտ առեւտրի մէջ հընդկատանի և Զինաստանի հետ: Նրան յաջողուեցաւ

ձեռք բերել Զինաստանից մետաքսի որդն, և նրա ժամանակ սկսաւ բիւզանդական երկրներում թէ այդ որդների աճեցումն, և թէ կերպասագործութիւնը, որ սկսաւ տարածուիլ Միջերկրական ծովի բոլոր ափերում:

Սլաւները շարունակում էին անհանգիստ անել Կիւսիսային սահմանը և ժամանակ առ ժամանակ մտնում էին Թրակիէ ու Յունաստան: Նրանց յարձակումներն աւելի վտանգաւոր դարձան յատկապէս այն ժամանակից սկսած, երբ Դանուբի վրայ նրանց հետ միացաւ բուլղարների թուրք ցեղը, որ հոների յետեից Վոլգայի ափերից եկել էր Դանուբի կողմեր: Բիւզանդացիք ստիպուած էին լինում կամ հարկ տալ դրանց կամ ոչնչացնել առանձին հրոսակները, որոնք մտնում էին կայսրութեան սահմաններն և կամ ամբողջ ցեղեր տեղափոխել Յունաստան և Փոքր Ասիա: Յուստինիանոսը մեծագոյն ճիգ դրած դրաւ, դրանց արշաւանքներն եթէ ոչ խափանելու, գոնէ դժուարացնելու: Դանուբի երկարութեամբ շինուեցան 80 բերդեր, ամբողջ Բալկանեան թերակղզում վերանորոգուեցան և նոր շինուեցան ամրոքիւններ այն կետերում, ուր յարմար էր դիմագրելու:

Յուստինիանոսի գործունէութիւնը ներքին կառավարութեան վերաբերութեամբ յետ չէր մնում արտաքին յաջողութիւններից: Նրան է պատկանում հռոմէական իրաւունքի որոշումների ժողովածուն, որ մինչև այսօր հիմունք է կազմում Եւրոպայի քաղաքացիական իրաւունքի: Յուստինիանոսը ձուլեց ու միամբողջութիւն կազմեց բոլոր այն վարդապետութիւններն ու որոշումներն, որ գործ էին դնում դադարաններն ու բացադրում էին իրաւաբանները, սկսած հասարակապետութեան ժամանակներից մինչև իւր օրերը:

Պատերազմ
սլաւների
հետ:

Օրինագիրք
Corpus juris.

Հատաստանագրքեր կազմելու փորձեր եղել էին եւ առաջները, բայց Յուստինիանոսի ժողովածուն, այսպէս կոչուած Corpus Juris, շատ գերադանցեց բոլոր միւս ժողովածոներից: Դա կազմուեցաւ իրաւաբանների մի յանձնաժողովի ձեռքով, Տրիբոնիանի առաջնորդութեամբ:

Նախ կազմուեցաւ այսպէս կոչուած կոդիքսը կամ դադաստանագիրքը. դրա մէջ մտան հատուածներ կայսրների որոշումներից եւ կարգադրութիւններից, առաւելագէս, Գ. եւ Ե. դարերու: Բայց իրաւունքի բանաւոր բացադրութեան եւ գործադրութեան վերաբերմամբ աւելի մեծ նշանակութիւն ունէին ղիմնական իրաւաբանների շարադրութիւններն ու կարծիքները, որ նրանք արտայայտել էին դադաւարութեան առանձնակի դէպքերի առթիւ: Այս իրաւաբանական վաստակների քաղաքականները, որոնք վերաբերում էին ղլխաւորաբար Ա. Բ. եւ Գ. դարերուն, մտան այսպէս կոչուած դեգեսների կամ պաւլիկների—յիւնամատենանների մէջ: Վերջագէս, իրաւաբանութեան ուսումն սկսողների ղիւրութեան համար, նրա հիմնական սահմանները բացադրուեցան իւստիտուսի—վարժութիւնների մէջ: Այս ահագին աշխատանքը խիստ արագութեամբ կատարուեցաւ, ընդամենը 5 տարուան մէջ: Յուստինիանոսը չը զոհացաւ հին օրէնսդրութեան եւ իրաւաբանութեան ժողովածոյքով: Նա հրատարակեց բազմաթիւ որոշումներ իւր ժամանակի նշանաւորագոյն օրէնսդրական խնդիրների մասին: Այս նովիլները—նորօրէնքները նոյնպէս ժողովուեցան եւ աւելացուեցան Corpus Juris-ին կամ օրինագրքին:

Շէնքեր:

Ինչպէս բոլոր բիւզանդացիք, Յուստինիանոսն էլ եռանդուն մասնակցութիւն ունեցաւ իւր ժամանակի կրօնական վիճաբանութիւնների մէջ: Նրա կարծիքները միշտ ուղիղ էին. նա հակուում էր եւտիքեսի¹⁾ միաբնակութեան աղանդի կողմը: Դրա փոխարէն նա ամենայն իրենից կախուած միջոց գործ դրաւ կռապաշտութեան մնացորդներն արմատախիլ անելու. փակեց կռապաշտական գաղութները, հալածեց հին հաւատի հետևողներին: Բարեպաշտութեան, զօրութեան եւ գեղեցիկ ճաշակի յուշարածան է Սովիայի,

¹⁾ Միաբնակները պնդում էին, որ Քրիստոս անմասն էր մարդկային բնութեան, այլ միայն Աստուածային բնութիւն ունէր:

Աստուածային Ամենիմաստութեան, տաճարը, որ նա կանգնեց Կոստանդնուպոլսում: Սրա հսկայական գրմբէթը ցայսօր կախուած է Կոստանդնուպոլսոյ վրայ, բայց թանգաղին խճանկարներն աւերուած կամ ծեփուած են տաճիկների ձեռքով, որ այդ տաճարը դարձրել են մզկիթ: Տաճարի օժման օրը (537 թ.) Յուստինիանոսը գոչեց «Փա՛ռք Տեառն, որ արժանի արաւ ինձ կատարելու մի այսպիսի գործ: Ո՛վ Սողոմոն, ես յաղթեցի քեզ»:

537

Յուստինիանոսը մեռաւ 565 թուին: Ժամանակակիցները նկատում էին աւելի այն ծանրութիւններն, որ բարձում էր իրենց վրայ նրա քաղաքականութիւնը, քան թէ դրա խոշոր հետեանքները: Անընդհատ պատերազմները շատ զոհեր էին պահանջում թէ մարդկանց եւ թէ դրամի: Երբ Յուստինիանոսի յաջորդ Յուստին Բ. առաջին անգամ կրկնում երևեցաւ, ամբոխը ղիմաւորեց նրան աղաղակելով. «Ոգորմի՛ր մեզ»: Սիսպուեցան հարկերը նուազեցնել, զօրքերի քիւր պակսեցնել, ժողովել նրանց աւելի նշանաւոր ղիւրքերում, մնացածները զոհելով: Մինչդեռ նորանոր յարձակումներ էին սպառնում: Դանուբի միջին ընթացքի կողմերից դէպի Իտալիա շարժուեցաւ Լոնգոբարդների ցեղը (568): Դրանց թագաւորն Ալբոյինը ջարդեց բիւզանդական փոխարքային (Էրզարիս), դրաւեց հիւսիսային Իտալիան եւ Պաւիան դարձրեց իւր մայրաքաղաքը: Այս տիրապետութեան զուգընթաց էին մեծամեծ անգթութիւններ եւ աւերումներ: Կայսրութեան ձեռքին մնացին սակայն Վենետիկն, Հռաւեննան, Հռովմն ու Նէապոլիսը դրանց կից երկրներով: Այս նահանգներում գլխաւոր կառավարիչն էր դարձեալ էֆզարխը, որին կայսրն էր նշանակում եւ որ Հռաւեննայում էր նստում:

565

Լոնգոբարդների արշաւանքը:

568

Պապի նա-
խադասու-
թեան
(պրիմատ)
ծագումն:

Կայսերական կալուածներն այնպէս ցրել ու բա-
ժան բաժան էին շնորհիւ լոնդոնացիներին, որ իւրա-
քանչիւր կտորը գրեթէ ինքնուրոյն կառավարութիւն
ունէր. ամէն մէկի մէջ իշխում էր զօրքի հրամանա-
տարը (դուքս), որից կախումն ունէին քաղաքներում
հրամանատարութիւն անող գնդապետները (tribuni):
Այսպիսով, քաղաքացիական վարչութիւնը ստորագոր-
ուած էր զինուորականին: Միւս կողմից, դա գլխա-
ւորում էր եկեղեցական իշխանաւորների ազդեցու-
թեան տակ: Եպիսկոպոսները խառնուում էին աշխար-
հական գործերին և յատկապէս իւրացնում ստորին դա-
սակարգերի պաշտպանութիւնն, որ հռովմէական կայ-
սրութեան վերջին շրջանում յանձնարարուած էր
պաշտպաններին (դէֆէնսոր): Ոչ մի տեղ եկեղեցու
այս ազդեցութիւնը վարչութեան վրայ այնպէս հզօր
կերպով չէր արտայայտուում, ինչպէս Հռովմում:

Հռովմ քաղաքը, որ յաջողել էր կրթուած աշ-
խարհը միացնել, վերջին ժամանակներում խիստ փո-
խուել էր: Դրանից կայսրները վաղուց էին ձեռք վեր
առել, բայց այսու ամենայնիւ ամբողջ կայսրութեան
բնակիչների աչքում Հռովմը սրահել էր իւր նշանա-
կութիւնը, մնացել էր հռովմէական քաղաքականու-
թեան կենդրոն: Հռովմի եպիսկոպոսները դարձան կար-
ծես թէ ժառանգ հռովմէական կառավարութեան
փառքի, երբ կայսրները հեռացան յաւիտենական քա-
ղաքից: Նրանք համարում էին իրենց Պետրոս առա-
քելոյ յաջորդ, որին Քրիստոս ասել էր. «Ի վերայ այսր
վիմի հաստատեցից զեկեղեցի իմ և գլուխը դժոխոց
մի՛ յաղթահարեսցեն զնա:» Շատ վաղ սկսան նրանք
բացառիկ դերը պահանջել եկեղեցու մէջ, նրանք
իրենց էին սեփականում եկեղեցու վարդապետութեան
սրբութեան և նրա ուղիղ կառավարութեան վրայ
հսկելու իրաւունքը: Միւս պատրիարքները—Երուսա-

ղեմի, Անտիոքի, Ալէքսանդրիոյ, Կոստանդնուպոլսի,
Կարթագինէի եպիսկոպոսն հռովմէական պապին աւելի
մեծ նշանակութիւնը, քան թէ իրենք ունէին, չէին
ճանաչում, բայց յաճախ առաջնութեան պատիւը նրան
էին տալիս, նրան գիմելով վիճելի խնդիրների լուծ-
ման համար: Կայսրութեան բոլոր եպիսկոպոսների պէս,
պապը կախումն ունէր կայսրից. ընտրուելով կղերա-
կաններից ու ժողովրդից, նա օծուում էր և պաշտօնի էր
մտնում միայն կայսեր հաստատելուց յետոյ: Բայց
արեւմտեան կայսրութիւնն ընկաւ, Կոստանդնուպոլիսը
շատ հեռու էր գտնուում, նրա յարաբերութիւնները
Իտալիոյ հետ սկսան դժուարանալ, և պապի նշանա-
կութ. այդ պատճառով աճեց: Պապերի հեղինա-
կութիւնն աւելի ևս զօրացաւ այն պատճառով, որ
նրանք քիչ էին ընկնում հերետիկոսութիւնների ազ-
դեցութեան տակ. որոնք յաճախ ծագում և արագ
տարածուում էին արեւելքում:

Արեւելեան հեղինացած ազգերի մէջ պահպանուել էր
յոյների սերն և ընդունակութիւնը դիպի փիլիսոփայական
դաստիարակները: Կոստանդնուպոլսում, Անտիոքում, Ալէքսան-
դրիայում նուրբ զանապանութիւններ էին անում զազախարնե-
րի մէջ, գտնում էին թող կողմերն ամեն մի աստուածաբանա-
կան նախադասութեան: Հռովմում աստուածաբանական վի-
ճաբանութիւններին այնպէս էին վերաբերում, ինչպէս իրա-
ւաբանները դասերին. որոշում էին մի երկու սկզբունք և
զրանից հանում էին առանց տատանուելու բոլոր մնացածը:
Ուստի ուղղափառ վարդապետութեան որոշումը, որ արեւել-
քում կատարուեցաւ չարաչար կոիւնքերով, Հռովմում մշակուե-
ցաւ բաւական պարզ կերպով, զլուխ յոգնեցնող աշխատու-
թեան չափ աւելի քիչ վատաւորով: Թէպէտ և արեւմտեան
եպիսկոպոսները գրեթէ չէին մասնակցում տիեզերական ժո-
ղովներին, այսուամենայնիւ պապերի կարծիքներին մեծ նշա-
նակութիւն էին տալիս այդ ժողովներում:

Վերջապէս, հռովմէական քահանայապետն օգուտ
քաղեց և այն հանգամանքից, որ արեւմուտքն ենթար-

կուեցաւ բարբարոսների սոսկալի յարձակումներին: Այդ դժուարին ժամանակներում Հռովմի եպիսկոպոսներն արժանաւորութեամբ կատարեցին իրենց պարտքը. նրանք հանդէս եկան իբրեւ պաշտպաններ կոռւսի մասնաւորութեան եւ ճնշողութեան եւ կարողացան ներշնչել բարբարոսներին յարգանք դէպի իրենց բարոյական զօրութիւնը:

Լեւոն Մեծն:

451

455

Այս դարաշրջանում ամենախոշոր ներկայացուցիչը պապութեան էր Լեւոն Մեծը. սա նախապատրաստեց չորրորդ տիեզերական ժողովի (Քաղկեդոնում թուին) որոշումներն, ուր դատապարտուեցան նեստորի եւ Եւտիքեոսի հերձուածները. գրեթէ նոյն իսկ ժամանակ ստիպուեցաւ Ատտիլլայի բանակումն երեւալ, որպէս զի հոնքի յարձակումն Հռովմի վրայ խափանէ. թուին նա համոզեց մի այլ բարբարոսի, Գենդերիխին, խնայել մարդկանց քաղաքի կողոպտման ժամանակ: Լեւոն Մեծն յայտնում էր, որ ինքը գրուած է եկեղեցու գլխին, որ հովուէ Քրիստոսի հօտը, Պետրոսի, առաքեալների գլխաւորի նրման:

Մեծն Գրիգոր

604

Յուստինիանոսի յաջորդների ժամանակ կայսրութեան տկարանալն ու լոնգորարդների արշաւանքն հռովմէական եպիսկոպոսներին առիթ տուին մի մեծ քայլ անելու արեւմտեան եկեղեցու գերիշխանութեան մէջ: Այս քայլն արաւ Մեծն Գրիգոր (մեռաւ 604 թուին):

Նա ծագում էր հռովմէական երեւելի ընտանիքից եւ պետական ծառայութեան մէջ յառաջ էր գնացել եւ հասել քաղաքապետի (պրեֆիկսուս ուրբի) պաշտօնին, որի ձեռքին էր Հռովմի օստիկանութիւնն ու բարեգարգութիւնը. նրա մայրը մտաւ վանք եւ համոզեց որդուն նոյնն անելու. Իւր մեծ հարստութիւնը դործ դրաւ Հռովմում մի քանի եկեղեցիք հիմնելու: Բայց նրան չը վիճակուեցաւ ապրելու վանքում. հոգեւոր իշխանութիւնը նրան նշանակեց ներկայացուցիչ Կոստանդնու-

պոլսում, կայսեր պալատում: Այս պաշտօնի մէջ նա ցոյց տուաւ որ ինքը ճարպիկ դիւանագէտ է: Հռովմ դառնալուց յետոյ կղերը, երեւելիքն ու ժողովուրդը նրան պապ ընտրեցին:

Լանգորարդների աշխարհակալութիւնների ժամանակ ամէն օր կարելի էր սպասել, որ նրանք կը յարձակուին հռովմէական ամբողջութիւնների վրայ: Յարաբերութիւններն Իտալիոյ միւս մասերի, Ափրիկէի ու Արեւելքի հետ դժուարացան: Մինչ պէտք էր պաշար ժողովել դրօնից, բնակիչներին աժան հաց եւ լաւ ջուր մատակարարել. Գրիգորը կարող եղաւ իրեն ստորագրել թէ քաղաքական եւ թէ զինուորական իշխանութիւններն, ամէն բանի մասին ինքն էր հոգում եւ ինքն էր անում—թէ հացի մատակարարութիւնն, թէ ջրանցքի վերանորոգումն, թէ պարիսպների բարւոք վիճակի մէջ պահպանութիւնը, թէ զօրքին պաշար պատրաստելն եւ թէ նրանց զինուորական գործողութիւնների կարգաւորութիւնը, թէ հարկեր ժողովելն եւ թէ ընդարձակ եկեղեցական հողերի տնտեսութիւնն: Հռովմէական նահանգն աննկատելի կերպով դառնում էր պապական նահանգ, թէպէտ եւ ձեւական կերպով մնում էր ստորագրուած էքզարքոսութեան: Թէ էքզարքոսների եւ թէ կայսրների հետ Գրիգորն աշխատում էր ամենալաւ յարաբերութեանց մէջ լինել: Բայց նա չէր կարող յոյս դնել արեւելքից օգնութիւն ստանալու վրայ եւ ստիպուած էր իւր սեւփական միջոցներով գոհանալու:

Չը նայելով տնտեսի եւ կառավարչի անխոնջ աշխատութիւններին, այս գործնական մարդը ժամանակ էր գտնում եւ հոգեւոր վաստակների համար. Նա առիթ չ'ունեցաւ երկար զբաղուելու աստուածաբանական վիճարանութիւններով. Նա թողեց իւր մահուանից յետոյ բարոյական իրաւանք եւ շարժողութիւնը, որոնց մէջ պատմումէ տեսիլների եւ յայտնութեանց մասն, եւ յատկապէս ալն մասին, թէ ի՞նչ պիտի լինի հոգին մահուանից վերջը: Բայց կրօնական սահմաններումն էլ նա

ձգտում էր կարգի եւ գործնական բարենորոգութեանց. կազմեց խրատ քահանայից համար, ժողովածու սրբազան երգեցողութեան, կարգի դրաւ սրբերի տօներն օրացուցի օրերին համաձայն, մտցրեց եկեղեցական երգեցողութեան մի առանձին եղանակ (Cantus Gregorianus):

Վեստգոթները եւ անգլոսաքսերի զարձր:

Նա հռչակուած էր ու հեղինակութիւն ունէր Հռովմում եւ կայսրութեան սահմաններից դուրս շատ հեռաւոր երկրներում, թղթակցութիւններ ունէր շատ բարբարոս թագաւորների ու թագուհիների հետ: Նրա ազդեցութեամբ վեստգոթների քաղաքներն հրաժարուեցաւ արիւնասկանորիւնից եւ ընդունեց ուղղափառութիւն: Այս մի մեծ իրողութիւն էր Սպանիոյ համար, ուր ընդհատուեցաւ երկպառակութիւնը դոմարիոսականների եւ երկրի ուղղափառ բնակիչների միջեւ. այս մեծ իրողութիւն էր եւ պտպական դահի համար, որովհետեւ այդ ժամանակից սկսած սպանիական եկեղեցին սերտ կերպով յարեցաւ Հռովմին: Բայց Գրիգորն աւելի մեծ գործի օկիղը դրաւ. նա փարոզիկներ ուղարկեց Անգլիա: Դարձը դէպի քրիստոնէութիւն յաջող էր ընթանում, եւ մի քանի ժամանակից յետոյ քարոզութեան գլխաւորը, Աւգուստինը, դարձաւ Կենտրոնների առաջին եպիսկոպոսն: Գրիգորը խորհուրդ տուաւ իւր առաքեալին չը կործանել կռապաշտական տաճարներն, այլ դարձնել դրանց քրիստոնէական եկեղեցիների, չ'արգելել զոհերը, այլ դարձնել դրանց խրախմաններ քրիստոնէական տօներին, առհասարակ արգելք չը լինել ծէսերին, թէեւ նոյն իսկ կռապաշտական, որոնց կարելի է յարմարեցնել քրիստոնէական աստուածապաշտութեան կարգին:

Բարբարոսների հետ յարաբերութեանց մէջ, կռապաշտներին դարձնելու ժամանակ, պապը գործում էր իրրեւ ղեկավար քրիստոնէութեան արեւմտեան եւ հռովմեական կրթութեան գլխաւոր ներխաչացոյցից անկիրք ազգերի առաջ: Գրիգորը չ'ունէր Լեոն Մեծի գոտող, անգրգռելի բնաւորութիւնը.

սա մի ճկուն, մարդկանց ի որին կերպով ճանաչող անձն էր, որ կարողանում էր օգտուել մարդկանց թուլութիւններից, անխոնջ գործող եւ միեւնոյն ժամանակ վառ երեւակայութեան տէր, օրէ ցօր սպասող երկրորդ դայստեան եւ ներկայ կեանքի խորհուրդն եւ ապագայի մասին յայտնութիւններ տեսիլների մէջ վնասող:

Իսպաիան դուրս եր գալիս կայսրների ձեռքից. նրա մեծագոյն մասին տիրել էին լանդոբարդները. նոյն իսկ այն համայնքը, որոնք դեռ չէին գրաւուած, հետզհետէ անկախ էին դառնում Բիւզանդիոնից, իսկ Հռովմում ծագել էր պապի իշխանութիւնը, որ բնակիչների ուշադրութիւնը կոստանդնուպոլսից դարձնում էր դէպի իւր կողմը. Յուստինիանոսի յաջորդներն արեւելքումն էլ անյաջողութիւնների էին հանդիպում. բոլորներն, սլաւներն ու Դանուբի միջին ընթացքում երեւեցած աւարները, Թուրանեան ցեղի մի ժողովուրդ, գրեթէ ամեն տարի աւերում էին Բալկանեան թերակղզին, պարսիկներն յառաջադիմում էին Ասիայում Բանն այն տեղն հասաւ, որ Հերակլի ժամանակ (610—641) կայսրութիւնն, ըստ երեւութի, պիտի խորտակուէր Խոսրով Բ. գրաւեց Ասորիքն, առաւ Երուսաղէմն, ապա խեց Փոքր Ասիան եւ երեւեցաւ արդէն Կոստանդնուպոլսի զիմացը, որին եւրոպական կողմից մերձեցել էին աւարները. Այս մեծ վտանգի մէջ, Հերակլ կայսրը, որ երկար ժամանակ դանդաղ եւ անյաջողութեամբ էր գործում, ներշնչուեցաւ Սարգիս պատրիարքի խրատներով եւ կատարեց մի հերոսական քաջագործութիւն. Նրան յաջողուեցաւ Կոստանդնուպոլսը պաշտպանել աւարների ընդդէմ, որ պաշարման գործում անփորձ էին, իսկ ինքը կայսրը դուրս եկաւ Փոքր Ասիոյ ցամաքը եւ ստիպեց պարսիկներին խորհել իրենց սեփական երկրների պաշտպանութեան մասին: Նրանց յաղթեց մի շարք ճակատամարտների մէջ, գրաւած երկրներն յետ առնուեցան, եւ Հերակլի գորքը, որ իւր յաջողութիւնը վերագրում էր Աստուածածնի հրաշալի միջամտութեան, սուրմոսներ երգելով դարձաւ Կոստանդնուպոլսի Պարսիկները Հերակլից ստացած հարուածներից յետոյ ել չը կարողացաւ ոսփի կանգնել, որովհետեւ այս անյաջողութիւններից անմիջապէս յետոյ յարձակուեցաւ Նրանց վրայ մի նոր եւ սոսկալի թշնամի—արաբները, որոնք չորսիւ Մահմէտի քարոզութեան հէնց նոր էին միացել եւ սկսել իրենց տիրապետութիւնը տարածել զրադի երկրների վրայ: Արաբները միանգամից դուրս

610—641.

եկան թէ նոր յաղթողների եւ թէ յաղթուածների դէմ Մի քանի տարուան մէջ ամեն ինչ փոխուեցաւ արեւելքում. արաբները վճռական հարուած տուին Սասանեանց, իսկ կայսրութիւնից խնային Միջագետքը, Ասորիքն ու Եգիպտոսը:

Հերակլի մերձաւոր յաջորդների ժամանակ դործերի ընթացքը վառթարացաւ Հիւսիսում սլաւների ու բուլղարների յարձակումները. փոխուեցան հաստատուն աշխարհակալութեանց. Սերբերը գրաւեցին Իլլիրիան. ասորին Դանուբի երկու ափերի երկարութեամբ բուլղարների եւ սլաւների խառնուրդից կազմուեց բուլղարական թագաւորութիւնը, որ անընդհատ վտանգ էր սպառնում Կոստանդնուպոլսին եւ նոյն իսկ կայսրութեան գոյութեան. իսկ միւս կողմից մերձեւում էին արաբները: Սրանք տիրեցին Ափրիկէին, Արիսիպեղոսի մի քանի կղզիներին, Փոքր Ասիոյ մի քանի քաղաքներին եւ սկսան մինչեւ իսկ երեւիլ Կոստանդնուպոլսի պարսպների տակ:

Բայց յոյն ազգն եւ նրան յարած հելլենացած ցեղերը Փոքր Ասիոյ ոյժերը ժողովեցին եւ նորից դէմ դրին հիւսիսային բարբարոսներին եւ մահմէտականների արշաւանքներին: Կայսրութեան տարածութիւնը կրճատուում է, բայց դրա հետ միասին փոխուում է եւ նրա բնաւորութիւնը. լատիններէն լեզուին փոխարինում է յունականը, հոռովէական հաստատութիւններին նոր կարգերը. նոյն իսկ երկրի տարածութեան այս կրճատումը դիւրացրեց կենդանացումն եւ դիմադրութիւնը:

717
Փոքրասիական հարստութիւն

Կայսերական դահլի վրայ բարձրացաւ 717 թուին Լեոն Իսաւրացին, որ ծագում էր փոքրասիական ընտանիքից: Սա աչքի էր ընկել Կովկասի ծանր լեռնային պատերազմում, ապա հրամանատար էր եղել Փոքր Ասիայում: Սրա դահակալութեան ժամանակ Կոստանդնուպոլսի աւելի փոքր վտանգի մէջ չէր, քան թէ Հերակլի ժամանակ. մայրաքաղաքը պաշարել էին արաբական զօրքերը ցամաքից ու ծովից: Բնակիչները պաշտպանուում էին յուսահատական քաջագործութեամբ: Նոր կայսրն իւր վրայ դրուած յոյսերը կատարելագէտ արդարացրեց: Նա այրեց մահմէտականների նաւատորմի մի մասն շնորհիւ այսպէս կոչուող յունական կրակի—բռնկող պայթող նիւթերի, որ նը-

ման էին վառողի, և ձգուում էին խողովակների միջոցով թշնամու վրայ: Արաբները դեռ մի ամբողջ տարի մնային Կոստանդնուպոլսի տակ, բայց վերջ ի վերջոյ ստիպուեցան յետ քաշուիլ: Այս ժամանակից սկսած շարունակուեցաւ պատերազմը փոփոխակի յաջողութեամբ սրանց ու բիւզանդացոյ մէջ մինչև Ը. դարը. մի և միւս կողմն էլ յաղթութիւններ էին տանում, բայց կայսրութիւնը կարող եղաւ պաշտպանել Փոքր Ասիան ու Արիսիպեղոսը:

Փոքրասիական հարստութեան առաջին կայսրները շատ բան արին ստորին դասակարգերի, մանաւանդ գիւղացիների վիճակի բարոյման համար: Արդէն իսկ Դ. և Ե. դարերու կայսրները հոգացել էին շինական դասակարգի համար, հողատէրերին արգելել էին կամայական կերպով կապալառուների վրձարելիք հողային հարկերն աւելցնելը, արգելել էին հողագործ ստրուկների հետ իբրեւ իրերի հետ վարուելը: Բայց այսուամենայնիւ գիւղացիք մեծ կախման վիճակի մէջ էին խոշոր հողատէրերից: Գլխաւորն այն էր, որ նրանք իրաւունք չ'ունէին մի անգամ հաստատուած տեղից հեռանալու, այլ պիտի մնային իրենց սերնդով կապուած այդ հողի հետ: Այժմ կայսրներն թոյլ են տալիս մի կալուածից միւսն անցնելու, լուսազոյն վիճակ ու պայմաններ որոնելու: Ապա նրանք հովանաւորում էին շինական համայնքներին, այսինքն՝ շինականների դաշնակցութիւններին ընդհանուր հողատիրութեան և ընդհանուր շինական դործերի վարման—դատարանի, ոստիկանութեան, համար: Մինչև այդ ժամանակ կայսրները մանր հողատէրերին և կապալառուներին ենթադրել էին խոշոր հողատէրերին. այժմ, ընդհակառակն, աշխատում են նրանց ինքնուրոյն դարձնել, տալ նրանց ինքնավարութիւն: Այս ձեռնարկութիւնները նշանակութիւն ու-

նէին նրա համար, որ կայսրութեան մէջ մտնում էին բաղմամբիւ նոր բնակիչներ—սլաւներ։ Կայսրներն աշխատում էին նրանց վերապահել իրենց ազատութեան և համայնական կազմակերպութիւնը։ Այսպիսով սլաւների գաղթականութիւնը գէպի բխւողական երկրները նպաստեց նրա քաղաքական վերածննդեան և ներքին կազմի փոխակերպութեան։

Այս ամէնը բարենպաստակ դործեր էին, բայց մի նշանաւոր խնդրում նոր հարստութիւնը խոտորեց նախկին ճանապարհից ի կորուստ իւր և ի մեծ վնաս, ժողովրդի։ Փոքր Ասիայում վաղուց գոյութիւն ունէր այսպէս կոչուած Պողիկեանների աղանդը, որոնք բողոքում էին քահանայութեան դէմ, արհամարհում էին ծէսերը, և չէին յարգում սրբազան պատկերները։ Լեոն Իսաւրացին ընդունեց նրանց հայեացքներից մի քանիսն և սկսաւ այդ տարածել յամառութեամբ։ Նա համարում էր՝ թէ պատկերների յարգանքը հասնում է պատկերապաշտութեան, և հրամայեց եկեղեցիներից հանել ու ոչնչացնել պատկերները։ Նոյնպէս յայտնեց թէ ինքը դէմ է Աստուածածնի և սրբերի պաշտօնին, վերջապէս, զանազան միջոցներ ձեռք առաւ, վանքերի թիւը սակաւացնելու և վանականներին ամեն կերպ նեղելու համար։ Բարձրագոյն հասարակութիւնը հպարտեց կայսեր ցանկութիւններին, նոյն իսկ բարձրագոյն հոգեւորականութիւնը պատրաստ էր նրան հետեւելու, և բաղմանդամ եկեղեցական ժողովը դատապարտեց պատկերների երկրպագութիւնը։ Բայց այս ուղղութիւնը թոյրոյթի հակառակ էր ժողովրդի զգացումներին և համոզումներին, որ սովոր էր պատկերի մէջ տեսնել Աստուծոյ անմիջական մերձակութեան նշանը, Քրիստոսի, Աստուածածնի և սրբերի մշտական բարեխօսութիւնը։ Ամբողջ Բ. դարն անցաւ անպտուղ երկպառակութիւն-

ների ու հալածանքների մէջ ընդդէմ հին վարդապետութեան հետեւողների։ Եթէ թշնամիք օգուտ չը քաղեցին այս ծանր կռուից, կայսրութիւնը ջնջելու համար, դրա պատճառն արդէն իսկ ո'չ թէ կայսրութեան մէջն էր, այլ նրա վրայ յարձակուողների վիճակի մէջ։

ԳԼՈՒՆ Գ.

Ի Ս Լ Ա Մ.

Սրաբիան ի վաղուց հետէ յատուկ տեղ ունէր արեւելքի քաղաքակիրթ երկրների մէջ. անապատները պաշտպանում էին նրան աշխարհականներից, և նրա ուղղխներում բուն դրած պատերազմաւոր ցեղերը չէին նուաճուել երբեք կատարելապէս ոչ եգիպտացիներից, ոչ ասորեստանցիներից, ոչ պարսիկներից, ոչ մակեդոնացիներից, ոչ հռոմէացիներից, թէպէտ երբեմն ճանաչում էին մէկ կամ միւս մեծ պետութեան հովանաւորութիւնը։ Իսկ միւս կողմից, թերակրղզի մօտ էր նշանաւոր առեւտրական ճանապարհների ու հարուստ երկրներին, այնպէս որ յարձակումներն դրացիների և կարաւանների վրայ ձեռնառու էին և շարունակ կրկնուում էին։ Սրաբաւազակները ակամայից փոխ էին առնում բաղմամբիւ սովորութիւններ ու դադարներ այն քաղաքակիրթ ազգերից, որոնց կողպատում էին։ Սրանք ապրում էին բաժան բաժան տոհմերով ու ցեղերով, չէին կազմում պետութիւններ և շարունակ կռուի մէջ էին իրար հետ, որովհետեւ տոհմակիցները խիստ կերպով սրաներին էին առնում ամէն մի վիրաւորանք, որ հասցնում էին իրենցից մէկին։ Միեւնոյն ժամանակ նրանց մօտ հաւաքուել էին կարծես թէ բոլոր ասիական կրօնների

Սրաբիան
մինչև
Մասմէտը

փշուրները. ոմանք երկրպագում էին աստղերին, ինչպէս քաղդէացիք, միւսներն ամեն ինչ բացադրում էին չար և բարի ոգիների կռուով—Նինի ու դեւի, ինչպէս պարսիկներն, ուրիշներն հետևում էին հրէից և երկրպագում Նիովային, այլք ընդունել էին քրիստոնէութիւնը։ Սովորաբար սակայն թոյր աշու կրօնները շփոթուում էին։ Արաբացիք իրենց ծագած էին համարում Իսմայէլից, Աբրահամից ու Հագարից, երկրպագում էին Աբրահամի Աստուծուն և միևնոյն ժամանակ ամեն մի տեղում պաշտում էին յատուկ աստուածների, որոնց արձան էին կանգնում, զոհաբերութիւններ էին անում, պահանջում էին նախագուշակ նշաններ, իսկ երբեմն էլ անարգանօք էին վերաբերում նրանց, երբ նախագուշակ նշաններն անհաճելի էին դուրս գալիս ¹⁾։ Մեքքա քաղաքն այս պաշտօնների կենդրոնը դարձաւ։ Նրա սրբավայրում, Քաաբայում, ժողոված էին 300-ի չափ կուռքեր, իսկ միջավայրում ընկած էր մի սև քար, որ իբր թէ Գաբրիէլ հրեշտակապետն էր երկիր բերել. սեպել էր դա, արաբների ասելով, մեղաւորների համբոյրներից։

Մահմէտ

Սրբավայրի և այդ քարի պահապաններն էին Քորէյշիները, մի զօրաւոր ցեղ, որ բաղկացած էր 25 տոհմերից։ Այս տոհմերից մէկին էր պատկանում Մահմէտը։ Սա աղքատ ծնողաց զաւակ էր, որ վաղուց մեռել էին, գաստիարակել էր նրան իւր հօրեղբայրը։ Որովհետև նրա բոլոր հարստութիւնը բաղկացած էր 5 ուղտից և մի սևամորթ ստրկուհուց, ուստի նա հովիւ դարձաւ, իսկ ապա ծառայ մտաւ մի հարուստ և պառաւ այրի կնոջ, Հաշիմայի մօտ։ Նա սկսաւ շրջել նրա քարաւանների հետ և այսպէս լաւ վարեց զոր-

¹⁾ Մի արաբացի պատրաստութիւն էր վրէժխնդիր լինելու իւր հօր սպանման և վիճակ ձգեց կուռքի առաջ, նախագուշակ նշան ստանալու համար։ Երեք անգամ աննպաստ վիճակ դուրս եկաւ։ Այն ժամանակ զարացած արաբացին այն նետն, որով վիճակ էր ձգում, արձակեց կուռքի գլխին, դռնելով. «Անպիտան, դու այդ չէիր ասել, եթէ քո հօրդ սպանած լինէին»։

ծերը, որ դարձաւ նրա հաւատարմատարն և ամուսնացաւ նրա հետ։ Հաշիմայի հետ ամուսնանալուց յետոյ Մահմէտը դարձաւ ամենահարուստ և աղդեցիկ Քորէյշիւններից մէկն, առանձնապէս գնահատում էին նրա արդարասիրութիւնն և վարուողութիւնը։ Նա մերձեցաւ հանիֆիտներին. այսպէս էին կոչուում այն մարդիկ, որոնք հրէից աղդեցութեան տակ բողոքում էին կռապաշտութեան և բաղմաստուածութեան դէմ։ Մահմէտի մէջ քանի գնում, այնքան աւելի զօրանում էր ատելութիւնը Մեքքայի մէջ իշխող կարգերի դէմ։ Բայց մերժելով կռապաշտութիւնը, իբրև մոլորութիւն և անօրինութիւն, նա երկար ժամանակ չէր վստահանում նրա դէմ. յայտնի կերպով հանդէս դուրս գալու և միջոց չէր գտնում այդ կործանելու։ Ամեն տարի նա մի ամիս անց էր կացնում Մեքքայի մերձակայ անբնակ լեռներում, պահում էր, աղօթում և մտածում։ Այդ ժամանակ նրան թուում էր, որ ամէն կողմից, ամէն մի ժայռից և ամէն մի թփից, ձայներ են լսուում, որ կոչում են նրան Աստուծոյ առաքեալ։ Նա ի ծնէ ենթակայ էր նեարդային ուշագնացութեան և զառանցանքի ¹⁾։ Հոգեկան կռիւն և նոյն մտքերով կենդրոնացած կերպով դբադումը զօրացրեց այս հիւանդութիւնը, և Մահմէտն ինքն սկսաւ իրեն համարել մերթդիւահար, մերթ ներշնչուած ի վերուստ։ Միանգամ նրան թուեցաւ, որ իրեն ներկայացաւ մի գեղեցիկ երիտասարդ, որ իրեն տուաւ մի փաթեթ ու ասաց. «Կարդա՛»։ Նա վճռեց, որ դա Գաբրիէլ հրեշտակապետն էր, իրեն քարոզելու էր հրաւիրում։ Այս ժամանակից նա սկսաւ իրեն մարգարէ հռամարէշ, ուղարկուած, որ մարդկանց ճշմարիտ ճանապարհը ցոյց տայ։ Նա սկսաւ իւր համոզմունքները տարածել իւր մերձաւորների մէջ։ Սկզբում միայն իւր քեռորդին,

Մահմէտի քարոզութիւնը

¹⁾ Հայկաթինաթիօն-զգալարանաց խաբկանք, որի շնորհիւ մարդս տեսնում է իրեր, լսում է ձայներ, որոնք իսկապէս գոյութիւն չունին։

622

վառվառն ու շնորհալի Ալին, ճանաչեց նրան մարգարէ, առ սակաւ սակաւ Մահմէտի շուրջը կազմուեցաւ հետեւորդներին մի շրջանակ: Քորէյշիւներն զայն ըղթով էին նայում այս ուրացողի վրայ, որ հայհոյում էր իրենց սրբութիւնները: Մահմէտի վիճակն անտանելի դարձաւ: Նա կատարելապէս ճաշակեց առածի ճշմարտութիւնը, թէ մարգարէն իւր գաւառում պատիւ չ'ունի: Նա և իւր հետեւորդներն 622 թուին փախաւ Մեքքէից դէպի Մեդինէ¹⁾, ուր բնակիչներն աւելի էին պատրաստուած միաստուածութիւն ընդունելու, որովհետեւ Մեքքինէում շատ հրեայք էին ապրում: Մեքքինէի բնակիչներից շատերը դաշը կապեցին Մահմէտի հետ, ճանաչեցին նրան մարգարէ, պատրաստակամութիւն յայտնեցին նրան հետեւորդներին պաշտպանելու: Նա շինեց առաջին մզկիթը, որոշեց աղօթքի ժամերն և սահմանեց աստուածաշնորհութեան կարգ: Շուտով նա դարձաւ մի տեսակ տէր Մեքքինայի, պատերազմ սկսաւ Մեքքէի դէմ: Մի քանի ճակատամարտներից յետոյ մարգարէն մօտեցաւ Մեքքէին տասն հազարի չափ զօրքով: Քորէյշիւներն անձնատուր եղան, չը սպասելով յարձակման: Մահմէտը նրանց հետ ողորմածաբար վարուեցաւ և սպանել տուաւ միմիայն իւր չորս ամենաօխերիմ թշնամիներին: Մեքքէ մտնելը կատարեալ յաղթանակ էր — ամբողջ դիմաւորում էր նրան աղաղակելով. «Մե՞ծ է Աստուած»: Նա իւր ուղտի վրայ հեծեծ մտաւ Քաաբան, եօթն անգամ պտտեց քարի շուրջն, դիպաւ նրան իւր գաւաղանով և հրամայեց Քաաբայում գլուխը կռուքերը կործանել (630): Մեքքէի առումն արաբացոյց համար տեսանելի ապացոյց էր Մահմէտի բոլոր քարոզութեան ճշմարտութեան, որովհետեւ Աստուած նրան ոչնչութիւնից մինչեւ մեծութիւն

¹⁾ Մահմէտի փախուստն արաբացիք անուանում են «հեյրատ»։ Այս անցքիցն են հաշուում նրանք իրենց տարեթիւնը։

632

Ղորան

քարճրացրեց. իշխան կարգեց այն քաղաքում, որտեղից նա ստիպուած էր եղել փախչելու: Բոլոր արաբցեղերը միացան մարգարէի հետ, և նա գործում էր Արաբիայում իբրեւ տէր: Նա մեռաւ իւր յաղթութիւնից երկու տարի յետոյ, արդէն իսկ մտադրութիւն ունենալով արշաւելու Ասորիքի վրայ (632):

Իւր կրօնի սկզբունքներն ու պատուէրները հասարակական կազմակերպութեան վերաբերութեամբ Մահմէտն հաղորդեց «ուղղահաւատներին» յաջորդաբար, իբրեւ Աստուծոյ յայտնութիւններ: Նրա հիւանդագին յոյզերն և տեսիլներն համոզեցին իւր ընտանիքին և ուրիշներին, որ Աստուած նրան ճշմարտութիւն է յայտնում և յատուկ եղանակով ուղղում է նրա կամքը, բոլորովին աննման այն եղանակներին, որոնցով այլ մարդիկ իրենց գիտութիւններն ձեռք են բերում: Մահմէտի ամէն մի յայտնութիւնը պարտաւորիչ զօրութիւն ունէր և տառացի կերպով բերան էր սովորուում կամ դրուում: Մահմէտի մահուանից յետոյ այդ «Սուրաները» ժողովուեցան և կազմեցին մի սուրբ գիրք, որ կոչուեցաւ «Ղորան» և դարձաւ մահմէտականութեան հիմունքը:

Միայն երկու վարդապետութիւն ունի մահմետականութիւնն. Աստուած Աստուած է, Մահմէտը նրա մարգարէն: Մահմէտականութեան միաստուածութիւնը հակադրուած է ո՛չ միայն կռապաշտութեան, այլ նաեւ քրիստոնէութեան, որ երրորդութիւն է դաւանում, հաւատում է աշխարհիս փրկութեան Աստուծոյ Որդու միջոցով, և նրա ծննդեան Աստուածածնից: Մահմէտը մերժում էր այս խորհուրդներն և Աստուծուն համարում էր ոչ թէ Բարի Հայր ու Փրկիչ, որ մարդկանց մեղքերն իւր վրայ է առել և քաւել է դրանց չարչարանքներով, այլ մի անհասանելի Տէր: Նրա հաւատքը դարձաւ «իսլամ» — հնազանդութիւն:

630

Կրակից ստեղծուած են ոգիք. բարիներն ու չարերը, բայց դրանք երկուքն էլ անչափ ստոր են Աստուծոց և, մարդկանց պէս, ու ոչ աւելի, նրա արարածներն են: Որպէս զի մարդկանց ճշմարտութիւն սովորեցնէ, Աստուած ուղարկել է մարդարէք — Աբրահամին, Մովսիսին, Յիսուս Քրիստոսին: Մարդարէներից վերջինն է Մահմէտը: Բացի հաւատից, անհրաժեշտ է օրն հինգ անգամ աղօթք անել, պահել որոշ պահք, ողորմութիւն տալ, կատարել բարոյական պատուէրները, որոնք նման են մովսիսականներին: Անհաւատներին յայտարարուում է անհաշտէյի պատերազմ: Ընդհակառակն, ուղղահաւատներն, — ամէնքն եղբայրներ են, ինչ ցեղական, դասակարգային ու ստացուածքի տարբերութիւններ էլ լինին նրանց մէջ, նրանք պարտական են միմեանց, նեցուկ լինել: Անհաւատութեան և անօրինութեան դէմ կռուի մէջ պէտք է վախենալ փորձութիւններից — վերջ ի վերջոյ իսլամի յաղթանակն անհաւատութեան վրայ ապահով է, իսկ ով կը կորչի կամ կը մեռնի պատերազմում, կատարելով մարդարէի պատուէրները, նրան պարգև է սպասում միւս կեանքում, դրախտային երանութիւնը, որ լի է բոլոր այն զուարճութիւններով, որոնց արարները այս կեանքումս գնահատում են: Այսպիսով, եթէ Մահմէտն իւր հետեւողներից հնազանդութիւն և անձնազոհութիւններ էր պահանջում, միւս կողմից, նա պարզ պարտականութիւններ էր դնում նրանց վրայ և նիւթական պարգևներ էր խոստանում մերձաւոր ապագայում: Նրա վարդապետութիւնը միասնութեամբ և մեծ սկզբունքներով, որ դա կոչիս ու անգարգացած մարդկանց համար հրապուրիչ էր դառնում: Իսլամի քարոզչութիւնն ահագին ու քաղաքացիական շարժում էր սկսեցնում Արաբիոյ վրայ: Տոհմերի ու ցեղերի մէջ

երկաւուսականութիւններն ընդհատուեցան, բոլորեքեան միացան իսլամի սրբազան պետութեան մէջ, նախկին ժամանակի շատ անգութ սովորութիւնները ջնջուեցան. օրինակ՝ դադարեցին այլ ևս կենդանի թաղել աղջիկանց, որոնց դժուար էր կերակրելն ու կրթելը. սարուկների սպանումն սկսուեցաւ մեծ տուգանքներով պատժուել:

Մահմէտի յաջորդը, առաջին խալիֆը — փոխաֆթը՝ Աբու-Բէքրը: Մարդարէի մահուանից անմիջապէս յետոյ նրան յարած ցեղերն սկսան բաժանուիլ: Աբու-Բէքրի մերձաւորները խորհուրդ տուին կենդրոնացնել մահմետականների ոյժերը Մէքքին պաշտպանելու համար: Բայց խալիֆը, չը նայելով մեծ վտանգին, հաստատուն մնաց այն բանի վրայ, թէ պէտք է կատարել Մահմէտի հրամանն և զօրք ուղարկիլ Ասորիք: Նա հեռաւոր երեւեցաւ, որովհետեւ նոյն իսկ հեռաւոր արշաւանները, արազան պատերազմում էին պատճառում արարների պատերազմաւոր ու յափշտակիչ բնաւորութեան, հեռու էին պահում նրանց ներքին վէճերից, ամէն մի յաջողութիւն աւելացնում էր նրանց հաւատարմութիւնը դէպի իսլամը: Իսկ գործել ստիպուած եղան նրանք ամենաշարմար վայրկեանում, երբ պարսիկներն ու յոյները, տկարամար վայրկեանում, երբ պարսիկներն ու յոյները, տկարացրել էին միմեանց յուսահատ կռուի մէջ: Մահմէտականներն յարձակուեցան թէ կայսրութեան և թէ Սասանեանց վրայ. արաբական հեծելազօրն յայտնի էր իւր քաջութեամբ և ճարպիկութեամբ, այժմ հաստացել էր ամուր կազմակերպութեան, սովորել էր նրամանների հնազանդիլ և կարգ պահել: Նրա յաջողութիւններն այնպէս անհաւատալի արագ էին, որ բաւական էր այդ հրաշքով բացագրելը: Երկու առաջին խալիֆների կամ հրաշքով բացագրելը: Երկու առաջին խալիֆների կամ ամիրապետների ժամանակ, Աբու-Բէքրի ու Օմարի, արաբացիք տիրեցին Ասորիքին, Միջագետքին, Պարսկաս-

տանին ու Եգիպտոսին: Մահմէտականների յաջողութիւններն ու մոլեռանդ¹⁾ վստահութիւնը զօրաւոր ազդեցութիւն էին գործում: Սրա հետ միասին իսլամն իւր մէջ բովանդակում էր արեւելքի բոլոր կրօններից վերցրած տարրեր, ուստի և ասէն մէկին էլ մասամբ ծանօթ էր երևում: Սրաբները շատ դիպուածներում գործնական օգուտն աչքի առաջ ունենալով՝ բաւականաչափ էին երկրին տիրելով և ժողովրդին չէին բռնադատում իսլամն ընդունելու: Այսպէս էր, օրինակ, Եգիպտոսում, ուր միաբնակները յարեցան նրանց ուրախութեամբ, որովհետեւ կայսրութեան տիրապետութեան ժամանակ հալածանքների էին ենթարկում:

Օմայեանք:

Բայց արաբացոյց զօրութեան արագ ծաւալումն առանց խռովութեանց ու դժուարութիւնների չ'եղաւ: Խալիֆութիւնը կամ ամիրապետութիւնը ժառանգական չէր: Մահմէտն իրեն յաջորդ էր որոշել Աբու Բէքրին, իսկ սա Օմարին: Բայց երբ Օմարը մեռաւ մարդասպանի ձեռքով, պէտք էր նրան յաջորդ ընտրել, և Քորէյշիւնների գլխաւորներն երկպառակուեցան. ոմանք Մահմէտի քեռորդու Ալիի, նրա դստեր ամուսնու, կողմն էին, միւսներն Օթմանի կողմն: Վերջիններս յաղթանակը տարին, բայց Օթմանը, որ արդէն ծերութեան հասակումն էր, բաւականաչափ եռանդուն և ազդեցիկ կառավարիչ չ'երեւեցաւ: Նրա դէմ ապստամբութիւն բրգեցաւ, և նրան սպանեցին Ալիի կողմնակիցները: Այն ժամանակ ներքին պատերազմ սկսաւ Ալիի և Օթմանի ազգական Մուաւիայի, Սուրեքի հրամանատարի, միջև: Յաղթութիւնը Մուաւիան տարաւ. Ալիին մարդասպանները խոչնդոցեցին, և նրա որդին մի փոքրիկ արաբ գնդով, որ իրեն հաւատարիմ էր մնացել, նոյնպէս կորստի մատնուեցաւ:

¹⁾ Մոլեռանդութիւն—Փանասիզմ, կոչուում է կրքոտ, միակողմանի հաւատարմութիւնը մի որոշ դադափարի:

Մուաւիայի յաղթութեան չնորհիւ մայրաքաղաքը փոխուեցաւ և ամիրապետութեան բնութիւնն ևս փոխակերպուեցաւ: Մուաւիայի յաջորդները, Օմայեանք¹⁾, թողին Մէքքէն և սկսան ապրել Դամասկոսում, աւսորական հարուստ քաղաքում, որովհետեւ նրանց համար գլխաւոր նշանակութիւնն ունէր ոչ թէ Արաբիան իւր կիսաւայրենի ցեղերով եւ անբերրի հողով, այլ ընդարձակ գրաւուած երկրներն, ուր կրկին կազմուեցաւ մի մեծ ասիական քաղաքնորոշիւն պարսկականի կամ ասորեստանեանի նման: Եւ արաբացոյց աշխարհակալական շարժումը չ'ընդհատուեցաւ. Հայաստանի և Թուրքեստանի նուաճումն արաբներին հասցրեց Կովկասին, Կասպեան և Արալի ծովերին, նրանք շուտով զարգացրին առեւտուրը Պարսից ծոցում և Հնդկաստանի հետ սերտ յարաբերութիւններ հաստատեցին: Եգիպտոսից նրանց զօրքերն անցան արեւմուտք, կայսրութեան ավերիկական կալուածներն, տիրեցին դրանց և իսլամութիւն ընդունել տուին պատերազմասէր մաւրիտանական ցեղերին: Ապա մահմէտական զօրավար Թարիկը Ափրիկէից անցաւ Սպանիա և առանց դժուարութեան ջարդեց վեստգոթներին, որովհետեւ նրանք անմիաբան էին գործում և դժգոհ էին իրենց թագաւորից (711):

Ութերորդ դարու առաջին կիսուն խալիֆութիւնը աւելի մեծացաւ, քան թէ նշանաւոր պարսիկ Դարեհի տէրութիւնն էր: Առաջաւոր Ասիային և Եգիպտոսին միացան հիւսիսային Ափրիկէն ու Սպանիան: Այսպիսի մի տէրութիւն չափազանց մեծ էր, որ կարելի չ'էր նրա միութիւնը պահպանել: Հիւսիս-

¹⁾ Այն մահմէտականները, որոնք շարեցան Օմայեանց, ընդունում են ոչ միայն Դորանը, այլ նաեւ այն աւանդութիւնները, որոնք կազմուել են առաջին խալիֆների ժամանակ Դորանի մեկնութեան համար, այսպէս կոչուած Սուննան: Դրանից է ահա, որ սրանց անուանում են Սուննի: Այլի հետեւողները մերժում են Սուննան: Դրանք—շիւսիտներն են: Այժմ մահմէտական ազգերից տաճիկները սուննիք են, իսկ պարսիկները—շիա:

750

սային Պարսկաստանի փոխարքան, Աբդուլ-Աբբասը,
 750 թուին ապստամբեց Օմայեանց դէմ, առաւ Մե-
 դինան ու Մէքքէն և այնտեղ սոսկալի կոտորած ա-
 րաւ իւր թշնամեաց ¹⁾։ Մայրաքաղաքը տեղափոխուե-
 ցաւ Բաղդադ Տիգրիսի միջին ընթացքի վրայ։ Օմա-
 յեանք սակայն չ'ոչնչացուեցաւ — նրանք կարողացան
 դիմանալ Սպանիայում, ուր հիմնեցին նոր խալիֆա-
 յութիւն Կորդովա մայրաքաղաքով։ *Մայր.*

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻ ՔԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ԿԱՐՈՒՆ-
այսպէս ԳԵԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ:

Գերմանե-
րն Խա-
լիֆայում

Խալիֆա և Սպանիա գաղթած գոթերն աշխա-
 տում էին յարմարուիլ հռովմէական կարգերին, պահ-
 պանել տնտեսութիւնը, հարկերը, վարչութիւնն և
 օրէնքներն այն վիճակի մէջ, ինչպէս եղել էր կայսր-
 ների ժամանակ։ Վանդալներն ու լանգոբարդները
 սկզբան խիստ կերպով վարուեցան գրաւուած նա-
 հանգների բնակիչների հետ, բայց նրանք էլ շուտով
 ենթարկուեցան այդ բնակիչների բարձրագոյն քաղա-
 քակրթութեան ազդեցութեան։ Խալիֆայ լանգոբար-
 դեան մասում կառավարում էին, յիշաւի, գերման
 հերցոգներն ու գաւսադուները ²⁾, թագաւորներն օ-
 րէնքներ էին հրատարակում գերմանական սովորու-
 թիւնների վրայ հիմնուելով, բայց բնակիչների նշա-
 նաւոր մեծամասնութիւնը մնում էր հռովմէացի, և
 գերմանները սովորում էին խօսել խանգարուած լա-

¹⁾ Ըստ աւանդութեան, չաղթողները խրախճանութիւն էին ա-
 նում, նստած մեռնող թշնամեաց վրայ

²⁾ Քաղաւորական գործակատարներ, որոնք իրաւունք էին
 ստացել դատելու, զօրքին հրամանատար լինելու, հարկեր ժողո-
 վելու

տինական լեզուով, գիւղատնտեսութիւնը շարունակել
 այնպէս, ինչպէս անում էին այդ կալուածների նախ-
 կին հռովմէացի տէրերն։ Բարբարոսների գրաւած նա-
 հանգներից ամէնի մէջ ևս յաղթականներն այդպէս
 խիստ կերպով չէին ենթարկուում պարտուածների
 ազդեցութեան։ Ինչքան հեռանում էին հռովմից և
 Խալիֆայից, այնքան աւելի աչքի էր ընկնում նոր
 գերմանական սովորութիւնների խառնուրդը։ Աւե-
 լանում էր և բարբարոսների թիւը, և նուաճում էին
 նրանք աւելի կոպիտ բնակիչներին, որոնք աւելի քիչ
 էին ներշնչուած ռոմանական քաղաքակրթութեամբ։
 Այն, ինչ որ տեղի էր ունենում կայսրութեան հիւ-
 սիսային ծայրում, Բրիտանիայում, շատ նման չէր այն
 իրողութեանց, որ տեղի էին ունեցել Խալիֆայում
 դամ Սպանիայում։

Հռովմէացիք կղզու մեծագոյն մասը գրաւել էին Անգլո-Սաք-
 չորս դար շարունակ։ Նրանք կարող չեղան նուաճել
 ծայրագոյն հիւսիսն, ուր, այժմեան լեռնային Շոտլան-
 դիայում կելտական ցեղերն իրենց անկախութիւնը
 պահպանում էին։ Իսկ Իռլանդիա հռովմէացիք ամե-
 նեին մուտք չը գործեցին։ Բայց նոյն իսկ այն վայրե-
 րը, որոնք հռովմէական նահանգի մասն էին կազմում
 խիստ ռոմանացրած չէին։ Նրանց մէջ լեզուներ էին
 բանալու, շինուած էին պողոտաներ, վաճառաշահ
 քաղաքներ, գտնուում էին տեղ տեղ հռովմէացի հո-
 ղատէրերի կալուածները, բայց հռովմէացի բնակիչ-
 ների թիւը քիչ էր, իսկ կելտերը դեռ ևս չէին կա-
 րողացել հռովմէական լեզուն և սովորութիւններն իւ-
 րացնել։ Այս իսկ պատճառով երբ լեզուները դուրս
 հանուեցան այդ տեղերից Գալլիան և Խալիֆան պաշտ-
 պանելու համար, բնակիչների վերին, հռովմէական
 շերտը շուտով անհետացաւ, և երևան եկաւ կելին
 սկզբնական կելտ ազգաբնակչութիւնը։ Աշխարհա-

կալ գերմաններն այս կելտերին չէին համարում իրենցից կրթութեամբ, արհամարհանօք էին վերաբերուում դրանց և չէին ենթարկուում նրանց ազդեցութեան: Գերմանների տառջին գնդերը կելտերին մըղեցին դէպի հիւսիս և արեւմուտք, շատերին ջարդեցին, իսկ մնացածներին դարձրին ծառայ և հողագործ: Անգլիների և Սաքսերի գաղթականութիւնը յաղթականներին ռոմանանալու չընպատեց, այլ, ընդհակառակն պատճառ եղաւ այդ կղզու վրայ կարծես քեմի ճոր Գերմանիայի կազմուելուն:

Այս գաղթականութիւնները, որ տեղի չ'ունեցան միանգամից և ծագեցին Գերմանիոյ զանազան կողմերից, կազմեցին մանր իշխանութիւններ: Սրանցից իւրաքանչիւրը բաղկանում էր մի շարք գիւղերից, որոնք նախկին ցեղերի տեղն էին բռնում և կառավարուում էին շինական ժողովներով, որոնց մասնակցում էին չափահաս տղամարդիկ: Նշանաւորագոյն և ընդհանուր գործերը վճռուում էին իշխանութիւններ ժողովներում, ուր հաւաքուում էին խոշոր կալուածատէրերն և գիւղերի պատգամաւորները: Իշխանութիւնների միջև շարունակ պատերազմներ էին տեղի ունենում, և սկզբում նրանք միացան և կազմեցին եօթը քաղաւորութիւն:

Սկիզբն Թ.
գարուն

Իններորդ գարուն սկզբին անգլո-սաքսոն գաղութները միացրեց էկբերտը: Թագաւորութեան համար ի հարկէ անհնարին էր ընդհանուր ժողովներ գումամարուում էին: Այսուամենայնիւ թագաւորը միշտ խորհրդակցում էր նշանաւոր գործերի մասին իւր տէրութեան հարուստ, իմաստուն և երեւելի մարդկանց հետ, որոնց հրաւիրում էր խորհրդի, դա կոչուում էր Ուեսենագեմոս (ժողով իմաստնոց):

Մի հանգամանքում նոյն իսկ անգլո-սաքսերն էլ ենթարկուեցան հռովմէական ազդեցութեան, նրանց քրիստոնէական մէջ տարածուեցաւ քրիստոնէութիւնը, իսկ դրա հետ միասին երեւան եկաւ և ռոմանացած արեւմտեան եկեղեցին:

Առաջին առաքելութիւնն ուղարկուեցաւ Հոռովից դէպի Կէնտ (կղզու հարաւարեւելեան կողմը): Աւգուստինոսը դարձաւ Կէնտըրբերիի առաջին եպիսկոպոսը, իսկ դրան հետեւեցին և այլ իտալացիք ու յոյներ:

Թէ անգլո-սաքսերն ինչու էին ընդունում քրիստոնէութիւն, երեւում է Նորտուեյթլանդի իշխանների դարձի մասին պատմութիւնից: Երբ նրանց մօտ եկաւ քարոզիչ Պաուլինը և սկսաւ քարոզել Քրիստոսի մասին, ապագայ կեանքի եւ նրա վարձատրութիւնների ու պատուհասների մասին, իշխանները ժողովեցան խորհրդի թագաւորի պալատում: Մինչ նրանք խօսում էին, պատուհանից ներս թռաւ մի ծիծառն, մի առ ժամանակ սաւառնեց սենեկում և կրկին դուրս թռաւ: Ներկայ եղողներից մին ասաց. «Ահա մարդկային կեանքն եւս նման է այս ծիծեռնակին: Մարդս ծնուում է և ընկնում լուսոյ ու ջերմութեան մէջ, և ապա կրկին անհետանում է մթութեան մէջ, չը գիտենք թէ ուր եկաւ որը (քարոզիչը) լաւ է խօսում, որովհետեւ բացաղրում է, թէ ի՞նչ պիտի լինի այդ խաւարի մէջ:» Քրմապետն եւս յօգուտ քրիստոնէութեան խօսեցաւ. «Ես ամբողջ կեանքս ծառայել եմ աստուածներին, և նրանք ինձ պարգիւ չը տուին երջանկութիւն, թերեւս, Պաուլինի Աստուածը զօրաւորագոյն ու արդարագոյն լինի: Եւ ցեղի գլխաւորներն ընդունեցին քրիստոնէութիւնը: Ամենայն ժամանակ գործն այսպէս դիւրութեամբ չէր վճարուում: Յաճախ պէտք էր լինում մարտնչելու արմատացած կռապաշտութեան դէմ և տիրապետելու հողին քայլ առ քայլ: Յամենայն դէպս, է. գարուն սկզբին անգլո-սաքսերն արդէն ընդունել էին նոր հաւատն. և նրանց երկրում կազմակերպուելէր մի զօրեղ եկեղեցի, որ և մեծ ազդեցութիւն ունէր նաեւ աշխարհական գործերի վրայ: Այս եկեղեցին հիմնուած էր Հռովմից և սերտ կապ էր պահպանում նրա հետ:

Ֆրանկներ

486

Գալլիոյ հարաւը մինչև Լուառ դետը, այսպէս
կոչուած Աքուիտանիան, գրաւել էին վեստգոթները,
հարաւ-արեւելքը — բուրգունդացիք, հիւսիսակողմից
յառաջ էին դիմում ֆրանկները: Սալեան ֆրանկների
մի մասը բնակեցրած էր հռովմէական նահանգի սահ-
մաններում, ինչպէս օժանդակ զօրագունք, դեռ ևս
Աէտիոսի ժամանակ: Սրանց թագաւոր Խլոդվիգը 486 թ.
առաւ Սուասոնը, ուր գտնուում էր հռովմէական բեր-
դապահ զօրքը և շուտով դրանից յետոյ տիրեց բո-
լոր երկրին մինչեւ Լուառ գետը: Բայց սրանից նա
կանգ առնել տուաւ աղէմականների յարձակումն,
որոնք փորձում էին Հռենոսի ձախ ամն անցնելու,
ջարդեց վեստգոթներին և խեղ նրանց ձեռքից գրեթէ
ամբողջ հարաւային Գալլիան (Աֆոլիսանիան): Նրա
պատերազմական յաջողութիւններն հաստատուն և
վճռական էին, որովհետև իրեն դաշնակից էր դարձ-
րել եկեղեցին: Նրա վրայ ազդեցութիւն ձեռք բերաւ
իւր կինը, մի քրիստոնէութիւն, այն ևս օրթոդոքս: Սակայն
նա մինչև ալլեմանների արշաւանքը չէր մկրտուած:
Բայց այս վերջինների հետ ճակատամարտ տալու ժա-
մանակ, երբ ֆրանկներն սկսան թուլանալ, Խլոդվի-
գըն օգնութիւն կոչեց Քրիստոսին, իւր կնոջ Աստուծուն,
խոստանալով, եթէ յաղթէ, ուրանալ հեթանոսական
աստուածներին: Յաղթութիւնը տանելով՝ նա մկրդ-
տուեցաւ Ռէյմում: Խլոդվիգի մահուանից (511) ¹⁾
վերջը նրա չորս օրդիք քաղաւորութիւնը քաժանեցին
այնպէս, ինչպէս քաժանում են ու է կաշուած, —
ամէն մէկին առանձին հողաբաժին տրուեցաւ արդիւ-
նաբեր քաղաքների յայտնի թուով: Սկսան երկպառա-
կութիւններ ու գաւեր եղբարց մէջ: Մի քանիսը նրա-
ցից սպանուեցան, և ֆրանկների թագաւորութիւնը
կրկին միացաւ փոքր եղբոր, Կլոտարի ձեռքին: Սրա

¹⁾ Խլոդվիգի հիմնած հարստութիւնը կոչուում է Մերովինգեան,
Խլոդվիգի պապի, Մերովէի անուամբ:

գլխաւոր գործն եղաւ Բուրգունդիան ձեռք ձգելը:
Բաժանման առաջին տխուր փորձը չ'արգիլեց տէրու-
թեան երկրորդ անգամ բաժին բաժին անելն Կլոտար
Ա-ի մահուանից յետոյ: Այս անգամ ներքին կռիւ-
ներն աւելի երկարատեւ և արիւնահեղ եղան: Այս
պատերազմներում և եղեռնադորձութիւններում ար-
տայայտուեցաւ հասարակութեան վայրենացումն,
որի մէջ բարբարոսների կոպտութեան ու բռնաբարո-
ւթիւնների միացան հռովմէացոց նենգաւորութիւնն
ու անբարոյականութիւնը: Բայց չը նայելով երկպա-
ռակութիւններին, ֆրանկները մեծ գործ կատարե-
ցին: Նրանց շնորհիւ, Գալլիոյ բաժան բաժան եղած
մասերը միացան և դա սկսաւ կոչուիլ Ֆրանսիա:
Բայց սրանից, նրանք գերման ցեղերի աւելի ևս յա-
ռաժխաղացումն Հռենոսի վրայով խափանեցին և սկը-
սան նուաճել ու լուսաւորել այդ ցեղերից մերձաւո-
րագոյներին: Աւստրասիական, այսինքն՝ արեւելեան
ֆրանկներն ¹⁾, գրաւեցին Հռենոսի աջ ափը, հպատա-
կեցրին ալլեմաններին, բաւարներին և թիւրինգներին
և յաջողութեամբ յետ մղեցին սաքսերի ու սլաւների
յարձակումները:

Ֆրանկների նիստ ու կայքի, կառավարութեան ֆրանկների
եղանակի մէջ միացած էին հռովմէական և գերմա-
նական կարգերից վերցրած մասեր: Տէրութեան մէջ
գլխաւոր նշանակութիւնն ունէր թագաւորը, որ մա-
սամբ ժառանգելէր կայսեր իրաւունքներն և ունէր
մեծ զօրութիւն, իբրև զինուորական առաջնորդ: Յեղի
համագումար ժողովն արգէն իսկ այն ժամանակից,
երբ նա ցրուել էր ընդարձակ երկրի տարածութեան
վրայ, չէր կարող այլ ևս հաւաքուել, բայց տարին
մի անգամ, մարտ ամսին, թագաւորը գումարում էր

¹⁾ Դրանց հակառակ, արեւմտեան ֆրանկները կոչուում էին
նեւստրիական:

Ֆրանկներին ու հռովմէացոց, որոնք նրա զօրաբանակի մասն էին կազմում: Այդ «մարտական դաշտերը». համարուում էին ազգի համագումար ժողովներն, և դրանց մէջ հաստատուում էին կառավարութեան ձեռնարկած գլխաւոր միջոցներն ու օրէնքները: Բայց սրանից, թագաւորի շուրջը յաճախ ժողովուում էին առաջագոյն անձինք. նրանց ձայնը մեծ կշիռ ունէր և նոյն իսկ ղեկավարում էր թոյլ և նեղ հանգամանքներում գտնուող թագաւորներին: Նահանգներում իշխում էին թագաւորից կարգուած կոմսերը: Դրանք ընդարձակ իրաւունքներ ունէին, բայց գլխաւորապէս գործերը վճռուում էին նահանգական համագումարներում (mallus), ուր ժողովուում էին նահանգի ազատանիք:

Թէ գերմանները և թէ գալլո-հոռոմները միատեսակ հպատակ էին համարուում թագաւորի և ենթարկուած զինուորակոչի: Բայց գերմանացին հռովմէացոց լաւագոյն էր համարուում, ուստի և նրանից աւելի քանց էր գնահատուում. եթէ մէկն սպանէր ֆրանկի, պէտք է նրա ազգականներին վճարէր 200 սոլիդ, իսկ հռովմէացու սպանութեան համար վճարուում էր միայն 100 սոլիդ: Յատկապէս թանգ էին դնահատուում թագաւորի մերձաւորներն, նրա թիկնապահներն ու պալատականները, դրանց համար վճարուում էր սովորականից երեք անգամ աւելի (այսինքն 600 և 300 սոլիդ):

Գործերը չէին վճռուում վկաների ցուցմանց հիման վրայ, այլ մեղադրուածին միջոց էր արուում «մարտելու», այսինքն՝ երդուելու, որ ինքն արդար է, սրա հետ միասին պէտք է երդուէին եւ նրա ազգականներն կամ բարեկամները, եթէ սրանք հրաժարուում էին պաշտպանելու մեղադրուածին կամ թէ ուղիղ չէին երդուում, այն ժամանակ մեղադրուածն համարուում էր յանցապարտ: Երբ կասկածը մեղադրեալի դէմ չաւ զօրեղ էր լինում, այն ժամանակ նրան թոյլ չէին տալիս երդուելու, այլ

առաջարկում էին աստուածային Դատաստանով սրբուելու (օդալիայով), նա պէտք է, օրինակի համար, մի կտոր երկաթ հանէր եռացող ջրի միջից, եթէ այդ գործողութեան ժամանակ, նա ձեռքը չ'այրէր, համարուում էր սրբուած կամ արդարացած: Այն օրէնագրութիւնները, որ առնուած էին գերմանական սովորութիւններից, գրուած էին վատ լատիներէնով, այսպէս կոչուած «Սրգարութիւնների» մէջ, սրանցից ամենից հինն էր Սալեան Սրգարութիւնը: 7

Հռովմէական և գերմանական սովորութիւնների յիշուած հարստութեան հարստութեան մէջ: Հռովմէական հողերի գրաւման ժամանակ ազատները դասակարգը, որ գերմանական ցեղերի գլխաւոր ոյժն էր կազմում, դէպի անկումն դնաց, սակաւաւորներն հարստացան, մեծագոյն մասն աղքատացաւ: Սրա հետ միասին բարբարոսների ոյժը չէր պատում մի ընդարձակ տէրութիւն կառավարելու: Նրանք մի առ ժամանակ միանում էին պատերազմի համար, բայց ընդունակ չէին հպատակելու կանոնաւոր իշխանութեան և բարդ կազմակերպութեան. օրինակ՝ նրանք սկսան հրաժարուիլ հարկեր վճարելուց. պաշտօնեաներն այնպիսի դժուարութիւնների և վտանգների էին հանդիպում հարկերը ժողովելու, որ հարկ եղաւ թողնել այդ գործը. մինչ կառավարութեան համար անհրաժեշտ էին ծախքեր և ֆրանկ թագաւորներն ստիպուեցան այդ ծախքերն անել ի հաշիւ իրենց անձնական կարւածների. այսու, պետական ծառայութեան համար իբրեւ վարձագրութիւն նրանք վճարում էին ոչ թէ դրամ, այլ կաշուածներ եին պարգեւում: Չը նայելով՝ որ թագաւորներին բաժին էին ընկել հռովմէական կայսրութեան ահագին տարածութեամբ արքունի հողերն, այսուամենայնիւ դրանց պաշարն սկսաւ արագութեամբ սպառուել: Միևնոյն ժամանակ թուլանում էր և թագաւորների իշխանութիւնն, որոնք աղքատանում էին շնորհիւ այդ պար-

գեաքաշխութիւններէ. իսկ ինչքան թագաւորները տկարանում էին, այնքան աւելի կարգը նուազումէր տէրութեան մէջ. ուժեղներն ընկճում էին թոյլերին. մարդկանց կեանքը, պատիւն ու ստացուածքը մշտական վտանգի մէջ էր: Տէրութեան մէջ առաջնակարգ զօրութիւն սկսան ձեռք բերել պալատական վարչութեան գլխաւորները—պալատի վերահսկող¹⁾, որովհետեւ նրանք էին կառավարում արքունի կալուածներն ու հրամանատար էին թիկնապահ զնդին:

Արդէն է. դարու երկրորդ կիսուն պալատի եռանդուն վերակացուք ստուերի մէջ թողին թոյլ և ծոյլ թագաւորներին և դարձան դրեթէ նրանց խնամակալները: Շփոթութիւնը զօրացաւ առաւել ևս այն պատճառով. որ թշնամութիւն ծագեց ֆրանկ տէրութեան զանազան մասերի մէջ: Աւստրասիան, որ աւելի քիչ էր իւրացրել հռոմէական կարգերը, աւելի խիտ ֆրանկ ազգաբնակչութիւն ունէր, գերակշռութիւն ստացաւ Նեւստրիայի, Բուրգունդիայի և Աքուիտանիայի վրայ, ուր գերմանները գալլո-հոռոմների մէջ անհետացել էին:

Այսպիսով Խլոդվիգի հիմնած թագաւորութիւնը սկսաւ է. դարու սկզբումն գէպի անկումն գիմել: Մինչդեռ հենց այդ ժամանակ նրա դուքսերն իւր դուքսիների մէջ տագնապալից դարձաւ: Արեւելքից բարբարոսները սկսան կրկին իրենց ճնշումն, որոնք կանգ առած լինելով Գերմանիայում, այժմ ձգտում էին յառաջ խաղալ գէպի աւելի լաւ երկրներ: Կռապաշտ սաքսոնները վաղուց արդէն կռուի մէջ էին ֆրանկների հետ: Սաքսոնների հետ միացան արեւմտեան սլաւները, որոնք գրաւել էին Գերմանիան մինչև Էլբա գետը. ֆրանկներին հպատակ Բաւարիոյ վրայ

¹⁾ Major palatii կամ major domus, պալատի մեծաւորը, տան վերակացու:

արշաւանք էին գործում աւարները: Հարաւից սպառնում էր մահմէտականների արշաւանքը: Արաբները յաղթել էին վեստգոթներին (711), երեւացել էին Գալլիայում և Նարդել աքուիտանական դքսի զօրքը: Այս մեծ վտանգի մէջ ֆրանկները կրկին հաւաքեցին իրենց ուժերն, թշնամուն դէմ դնելու համար: Նրանց մէջ գանուեցան արժանաւոր առաջնորդներ, թէպէտ և ոչ յանձինս մերովինգեան թագաւորների:

711

Աւստրասիայում արքունիքի վերակացութեան պաշտօնը գրեթէ ժառանգական էր դարձել մի ընտանիքում: Ութերորդ դարու առաջին կիսում Աւստրասիայի կառավարիչ էր պալատական վերակացու Կարլը, որի մականունն էր Մարտէլ (Ուոն): Սա նեւստրիական ժողովների դէմ վարած պատերազմներում ցոյց տուաւ իւր մեծ զօրական լինելը: Երկու փառաւոր յաղթութիւններով նա Աւստրասիայի գերակշռութիւնն ապահովեց և միացրեց բոլոր ֆրանկներին իւր իշխանութեան տակ: Ի ցոյց միայն պահում էր նա իւր մօտ մերովինգեան տան թագաւորներին, բայց իրապէս ինքն էր կառավարում տէրութիւնը: Իւր կեանքի վերջին ժամանակները գաղափարեց մինչև իսկ թագաւորներ նշանակելուց: Կարլ Մարտէլը մի քանի արշաւանք գործեց գէպի Գերմանիա և նորից նուաճեց Բաւարիան, Շուաբիան (Ալլեմանիան) և Թիւրինգիան, որոնք ձգտում էին բաժնուիլ ֆրանկների թագաւորութիւնից: Բայց ամենից նշանաւոր յաղթանակը տարաւ նա աւարներ վրայ, որոնք Սպանիան նուաճելուց յետոյ ներս էին խուժել Գալլիա և սկսել էին գրաւել Աքուիտանիան: Պուատիէի մօտ (732) Մարտէլի ֆրանկները կատարեալ յաղթանակ տարան Արդէն-Ռահմանի թեթիւ հեծեալօրքի վրայ: Այս ճակատամարտը մեծ նշանակութիւն ունի պատմու-

732

թեան մէջ, որովհետեւ դա կանգ առնել տուաւ մահ-
մէտական աշխարհակալութիւնն արեւմուտքում:

Անընդհատ պատերազմները պահանջում էին մըշ-
տական զօրք, իսկ մշտական զօրքը պէտք էր պահել
և վարձատրել: Այս պատճառով Կարլ Մարտէլը
պէտք է հողեր ունենար և բաշխէր իւր զօրականնե-
րին, մինչդեռ արքունի հողերը սպառուում էին:
Բայց նա միջոցներ գտնելու համար խորութիւն չէր
անում: Եկեղեցին տիրում էր ահագին հողաբաժին-
ների և ունէր անսպառ գանձեր, արովհետեւ այդ կապ-
տութեան դարում հաւատացող մարդիկ իւրեանց բո-
նութիւններն ու յանցանքները քաւելու համար աւե-
լի լաւ միջոց քան թէ եկեղեցուն կալուածներ, տուն
և գանձ նուիրելն, չը գիտէին: Ամենամեծ եղեռնա-
գործները սովորաբար իրենց կեանքի վերջին օրերում
փորձում էին այդ ձևով ազատուելու միւս կեանքի
պատահաններից: Կարլ Մարտէլը սկսաւ եկեղեցու
հարստութիւնը գործ դնել տնտեսական շահանակումէր
կառավարիչ եկեղեցիների, վանքերի ու թեմերի: Հո-
գեոր պաշտօնեաներ չէր նշանակում, եկեղեցական
բարեգործութիւն ու աստուածապաշտական կարգերն
սկսան խանգարուիլ: Բայց զօրականներն օգտուում էին
եկեղեցիների արդիւնքներից, որոնցով հայթհայթուում
էին պատերազմական կարիքներն, իսկ Կարլի համար սա
ամենից գլխաւորն էր:

Բոնիֆա-
տիոս

Կարլ Մարտէլը մի այլ կողմով մեծ ծառայու-
թիւն արաւ եկեղեցուն. նա ամեն միջոցով աջակցեց
քրիստոնէութեան տարածման Գերմանիայում: Մինչև
նրա ժամանակը քրիստոնէութեան տարածման գըլ-
խաւոր առաքեալներն իռլանդական վանականներն
էին, որոնք քարոզում էին Շուաբիայում, Բաւարիա-
յում և Թիւրինգիայում: Հիմնուել էին քանի մի ե-

պիսկոպոսական վիճակներ: Իռլանդացոց անձնազոհ
գործունէութեան գլխաւոր թերութիւնն այն էր, որ
նրանք չէին ենթարկուում մի եւ հաստատուն կազ-
մակերպութեան. նրանց մէջ կապ չը կար, միմեանց
քիչ էին աջակցում, և ֆրանկների տէրութեան տկա-
րանալու ժամանակ կռապաշտութիւնը կրկին սկսել-
էր յառաջադիմել նոր մկրտած ցեղերի մէջ: Գեր-
մանիոյ դէպի քրիստոնէութեան դարձի երկրորդ շըր-
ջանը սկսաւ այն ժամանակ, երբ առաքելութիւն
ստանձնեցին անգլո-սաքսոն վանականները: Դէպի
Յիսուսանդիս ուղևորուեց հարաւային Անգլիայից Ուին-
ֆրիդը, վանական անունով Բոնիֆատիոս կոչուածը,
նախապէս առնելով պապի օրհնութիւնը Հռովմում
և խնդրելով Կարլ Մարտէլի աջակցութիւնը: Կար-
լի օժանդակութեամբ նա այնտեղ յաջողութեամբ
գործեց. ապա դիմեց դէպի յառաջ, դէպի այժմեան
Հեսսէն: Աներկիւղ քարոզիչը կարեց այն կազմին, որ
նուիրուած էր Օդինին, դրանից շինեց մի մատուռ և
այդու մեծ ազդեցութիւն գործեց կռապաշտների վը-
րայ: Նրանք այսպէս էին դատում, եթէ Օդինը չը-
պատճեց նրան այս սրբապղծութեան համար, ասել
է, թէ նա անզօր է քրիստոնէից Աստուծոյ դէմ: Բո-
նիֆատիոսը քանի մի անգամ գնաց Հռովմ, միշտ յա-
րաբերութեանց մէջ էր պապի հետ, իրեն հրատա-
րակեց նրա փոխանորդ (վիկարիոս) և դրանով զա-
նազանուում էր իռլանդական քարոզիչներից և նրան-
ցից նշանակուած եպիսկոպոսներից: Բոնիֆատիոսը 745
թուին տեղական եկեղեցական ժողով գումարեց, ու-
րին մասնակցեցին թէ գերմանական և թէ գալլիա-
կան եպիսկոպոսները: Գալլիական եկեղեցու գործե-
րը, որ Կարլ Մարտէլի բռնաբարութեանց շնորհիւ
սաստիկ խանգարուած էին, կարգի բերուեցան: Դրա
հետ միասին այն հայեացքի վրայ էր պնդում անգըր-

դուելի կերպով, որ գալլիական և դերմանական եկեղեցիք կախումն ունին հռովմէականից միայն վերաբերութեամբ գաւանութեան և վարչութեան: Կապաշտութեան անկարգութեան և աշխարհականների յափշտակութեանց դէմ բազմամեայ կռիւ մը ղեկով՝ նա եկեղեցիք եղբայրացութեան, որ եկեղեցուն անհրաժեշտ է ամենից առաջ հասնել միութեան և ամրապինդ կառավարութեան: Նրա դործունէութիւնը մեծապէս նպաստեց պապերին. եթէ Մեծին Գրիգորի ժամանակ պապութիւնը սկիզբը դրաւ իւր ազդեցութեան Անգլիայում, Հնորհիւ Բոնիֆատիոսի, նա ձեռք բերաւ այլ ևս երկու մեծ երկրներ — Գալլիան և Գերմանիան: Ծերութեան հասնելով՝ Բոնիֆատիոսը միայն մի բանի մասին էր մտածում — վերջացնել իւր կեանքը նահատակութեամբ: Նա կրկին դիմեց Ֆրիսլանդիա, ուր մի քանի տեղերում գեռ ևս բռն էին դրած կատաղի կռապաշտներ: Նրա ցանկութիւնը կատարուեցաւ. նրան սպանեցին քարով ղեկու ժամանակ:

Կարողինդ-
ների բարձ-
րանալը

Բոնիֆատիոսի դործունէութեան մէջ արտայայտուցաւ սերս դաշնակցորիւն ժրանկ պեսոսքեան եւ ֆրիստնեայ եկեղեցու միջեւ: Մերձաւորութիւնը սակայն միայն սրանով չը սահմանափակուեցաւ: Կարլ Մարտելի որդին, Պիպին Կարճահասակը, դիմեց պապին և հարցրեց. արդա՞ր է արդեօք, որ պետութեան մէջ նա չը լինի թագաւոր, որը կառավարում է: Պապը պատասխանեց, որ աւելի լաւ է, թո՛ղ նա կոչուի թագաւոր, որի ձեռքին իշխանութիւնն է դրանում: Պապի այս խօսքը մեծ կշիռ ունեցաւ, որովհետեւ ֆրանկ եկեղեցու բարեփոխութիւնը նրա անունով էր կատարուել: Յենուելով հռովմէական քահանայապետի հեղինակութեան վրայ, Պիպինը ստիպեց մերովինդեան թագաւոր Գիլգերիկ Գ-ին վանական

սքեմ հագնելու, իսկ ինքը թագ կապեց (752): Հին սովորութեամբ զինուորները նրան վահանի վրայ բարձրացրին, բայց յետոյ Բոնիֆատիոսը նրան թագաւոր օծեց: Պիպինին ընձեռած ծառայութիւնն իրաւունք էր տալիս պապերին պահանջելու նրանից համապատասխան վարձատրութիւն:

Լանցոքարդները խիստ նեղն էին ձգել Հռովմը: Նրանց թագաւորները կարգի բերին զինուորական կազմակերպութիւնը, բարձրացրին թագաւորական իշխանութեան նշանակութիւնը և սկսան ձգտել տիրելու ամբողջ Իտալիային: Պապերը չէին կարող յոյս դնել իրենց ոյժի վրայ, դիմագրելու համար, նրանք չէին կարող օգնութեան յոյս ունենալ և Բիւզանդիոսին, որը զբաղուած էր պատկերամարտութեան կռիւներով և ինքն էլ դժուարութեամբ էր դէմ դնում արաբներին. Պապերը դիմեցին ժրանկների պաշտպանորին:

Տիւր

Ստեփանոս Բ. պապը 754 թուին ուղևորուեց ֆրանկների թագաւորի մօտ օգնութիւն խնդրելու լանգոբարդների դէմ: Ֆրանկների հանդիսաւոր ժողովում երեւցաւ պապը, քուրճ հագած և գլխին մոխիր ցանած, և ծնդաչոք սկսաւ ազաչել Պիպինին պաշտպանել Հռովմը և վերջ դնել լանգոբարդների նուաճումներին: Պիպինը երկու անգամ արշաւեց Իտալիա և ոչ միայն ազատեց Հռովմը, այլ խլեց լանգոբարդներից նաեւ նրանց նուաճած Հռաւեննայի կուսակալութիւնը (Էքզարխատ): Իւր նուաճած երկրները չը պահեց ձեռքին, այլ ընծայեց պապին, որ այսպիսով աշխարհական տիրապետ դարձաւ, անկախ արեւելեան կայսրութիւնից, և իւր երկրներն ստացաւ ֆրանկ թագաւորի ձեռքից: Յոյները դժգոհ էին սրանից և դեսպաններ ուղարկեցին Պիպինին խնդրելու, որ յետ դարձնէ իրենց Էֆզարխատը: Բայց Պիպինը

Պիպինը
Իտալիայում
754

բայց ի բաց հրաժարուեցաւ: Պապի աշխարհական իշխանութեան այս ծագումը բաւականաչափ պատուաւոր չը համարուեցաւ և չափազանց պարաւաւորում էր հռովմէական քահանայապետին ֆրանկների թագաւորի վերաբերութեամբ: Այս պատճառով հռովմում յօրինուեցաւ մի աւանդութիւն, որի համաձայն իբրեւ թէ դեռ ևս Կոստանդիանոս Մեծը պապերին էր նուիրել հռովմէական նահանգն և կայսերական իրաւունքներն արեւմուտքում: Մինչև իսկ գրուեցաւ մի կեղծ հրովարտակ այս «Կոստանդիանոսի պարգևի» մասին, պապի աշխարհական իշխանութեան աւելի հնութիւն և նշանակութիւն տալու համար:

Կարլոս Մեծն
Իտալիայում:

774

Պիպինի յաջորդի, Կարլոսի, ժամանակ պատերազմը ֆրանկների ու լանգոբարդների մէջ կրկին բորբոքուեցաւ: Լանգոբարդ Դեզիդերիոսը փակուեցաւ Պաւիայում և երկար ժամանակ դէմ էր դնում, բայց 774-ին, վերջապէս, անձնատուր եղաւ: Կարլոսը չը գոհացաւ միայն որ և է նահանգ խլելով լանգոբարդներէր, այլ լանգոբարդական քաղը դրաւ իւր գլխին եւ այսու Գալլիային և Գերմանիային միացրեց Իտալիոյ մեծագոյն մասը: Այս պատճառաւ պապն այժմ աւելի մեծ կախման մէջ ընկաւ նրանից, քան թէ այն ժամանակ, երբ ֆրանկների թագաւորն Ալպեան լեռների միւս կողմն էր գտնուում և Իտալիայում երևում էր միայն արտաքոյ կարգի դէպքերում:

Պատերազմներ սաքսոնների և արարների հետ:

Իտալիայից Կարլոսն ստիպուեցաւ հիւսիս դիմել ուր սաքսոնները նորոգել էին իրենց արշաւանքները: Չը նայելով միաբանութեան և կազմակերպութեան բացակայութեան, շնորհիւ միայն աղատութեան սիրու և վայրենի քաջութեան, նրանք դարձան ֆրանկների սոսկալի թշնամիք: Կարլոսի յաղթութիւններն առ վայր մի միայն հանգստացրին երկիրը. հազիւ թէ յաղթականն հեռանում էր, իսկոյն բռնկում էր ա-

պըստամբութիւնը. սաքսոնները վռնդում էին ֆրանկ բերդապահներին, կործանում էին եկեղեցիք, սպանում էին քահանաներին: Պատերազմը դրանց հետ յատկապէս դժուարին էր այն պատճառով, որ Կարլոսի ուշքն ու զօրութիւնը շարունակ գէպի այլ կողմեր էին դառնում: Այսպէս՝ նա արշաւանք գործեց դէպի Սպանիա, որպէս զի արաբներին սանձէ և Աքրուտանիան ապահովէ: Սկզբում նա մտադիր էր Սպանիայում հաստատուել, բայց շուտով զգաց, որ ինքն անկարող է տեւական յաջողութիւնների հասնել այդ բոլորովին օտար երկրում: Նա հասաւ մինչև Սարագոսսա, բայց ապա յետ դարձաւ: Նրա վերջապահ գունդը ջարդուեցաւ քասկերից Պիրենեան լեռնաշղթայի կրճերում: Այդտեղ ընկաւ Կարլոսի լաւագոյն զօրականներից մէկը, կոմս Ռուանդը: Սրա հերոսական մահը Ռոնսուվեւան հովտում երգերի նիւթ եղաւ, որոնք երկար ժամանակ կենդանի մնացին յետագայ ասպետների բերանում:

Այն համբաւը, թէ մեծ աշխարհակալին չէ յաջողուել, վերջապէս, իւր ձեռնարկութիւններից մէկը, անսովոր ազդեցութիւն ունեցաւ նրանից ընկճուած թշնամիների վրայ: Սաքսոններն ոտքի կանգնեցին ամեն տեղ, և այս անգամ նրանք մի ընդունակ առաջնորդ ունեցան — Վիլլուկինդին: Կարլոսն ընկճեց ապստամբութիւնը, նշանաւորագոյն ընտանիքներից պատանդներ առաւ, բազմացրեց ֆրանկ բերդապահների թիւը և խիստ օրէնքներ հրատարակեց: Սրա հետ միասին գլխաւոր ուշադրութիւնը դարձրեց քրիստոնէութեան Սաքսոնիայում հաստատուելու վրան: Պարտաւճներին ստիպում էին խմբերով մկրտուելու, սրա հետ միասին նրանք պէտքէ ուրանային Վոլթին, Դոննարին և բոլոր աստուածներին: Արգելուած էր զոհելը, մանաւանդ մարդազոհը. վհուկ կամ կախարդ-

համարուած մարդկանց միան ուտելն արգելուած էր: Քահանայի կամ սարկաւազի կեանքի դէմ փորձ անելը պատժուում էր մահով: Նոյն պատիժն էր որոշուած և քրիստոնէութիւնն ուրացողներին համար: Բայց այս խստութիւններն էլ չէին օգնում: Օգտուելով Կարլոսի բացակայութիւնից, սաքսոնները կրկին ապստամբեցան, և Վիդուկինդն, որ փախել էր Լլբայի միւս կողմը, կրկին նրանց գլուխն անցաւ: Այս անգամ նրանք մինչև իսկ իրենց դէմ ուղարկուած Փրանկների զօրք ջարդեցին: Կարլոսն ստիպուեցաւ ինքը արշաւել նրանց դէմ և սոսկալի կերպով պատուհասեց նրանց. 4500 մարդ գլխատուեցան մի օրուան մէջ: Յուսահատական դիմադրութիւնը մի քիչ ժամանակ էլ չարունակուեցաւ, բայց երկու մեծ պարտութիւնից յետոյ սաքսոնները ստիպուեցան խոնարհիլ. ինքը Վիդուկինդն եկաւ յաղթանակի մօտ և մկրտուեցաւ:

(Սակայն նորանոր դժուարութիւններ եւ արշաւանքներ կային դեռ Կարլոսի առաջ: Թագաւորութեան մէջ գոյութիւն ունէին դեռ եւս մեծ, գրէթէ անկախ իշխանութիւններ, որոնց տիրապետները ձգտում էին անկախութեան եւ երկիւղով դիտում էին Կարլոսի աճող զօրութիւնը: Այսպիսի իշխան էր հարաւարեւմտեան Գերմանիայում բաւարական հերցոգը (դուքսը): Կարլոսը ժամանակ չը տուաւ նրան լուրջ պատերազմի պատրաստուելու դէմ հանդիման պատահելով թագաւորի ահագին զօրութեան, հերցոգը հպատակուեցաւ առանց ճակատամարտի: Բաւարիայ նուաճումն ստիպեց ֆրանկներին ուշադրութիւն դարձնել աւարների յարձակումների վրայ:)

Պատերազմների աւարների հետ:

Բաւարական դքսութիւնը (Գանուբի վերին հոսանքի վրայ) մի պատուար էր աւարների դէմ, որոնք նստած էին այժմեան Հունգարիայում: Այդտեղից Աւարները ասպատակութիւններ էին գործում մի կողմից առգանուբեան սլաւների վրայ և դէպի Բալկանեան թերակղզին—իսկ միւս կողմից դէպի գերմանական երկրներն: Աւարը ժողովում էին այն ամրոցներում, որոնք երեւի ապաստանարան էին ծառայում

և վտանգի դիպուածներում ¹⁾: Կարլոսի արշաւանքն այս ասպատակների դէմ նման էր քալիօրի: Զօրքը յառաջ էր խաղում սաղմոսելով. առաջէկից գնում էին քահանայք և խաչվառներ տանում: Մի քանի ամրոցներ առնուեցան, սահմանը պաշտպանուեցաւ. առհասարակ աւարների թագաւորութեան մի այնպիսի հարուած հասցրին, որից նա այլ ևս ոտքի չը կանգնեց:

Գանուբեան երկրներից հարկ եղաւ դիմելու Իտալիա, որովհետեւ Լեոն Գ. պապը չէր կարողանում սանձել հռովմէական մեծամեծներին:

Կալքրութեան վերականգնում:

(Նրա ընդդէմ կուսակցութիւն կազմուեցաւ, որի պարագլուխ էին հանգուցեալ Ագրիանոս պապի աղգականները: Լեոնի վրայ զանազան յանցանքներ էին գնում: Մի թափօրի ժամանակ թշնամիք ցրուեցին պապին շրջապատող ժողովուրդն ու վիրաւորեցին նրան: Կարլոսը չէր կարող այսպիսի անկարգութիւններ թող տալ Հռովմում. թէպէտ եւ նա ճանաչումէք-այնտեղ պապի իշխանութիւնը, բայց իրեն էր վերապահել բարձրագոյն հսկողութիւնը: Նա եկաւ Հռովմ. խաղաղութիւնը վերականգնեց եւ եպիսկոպոսների ժողով գումարեց պապի վրայ բարդուած մեղադրութիւնները քննելու համար: Ժողովն յայտարարեց, որ չէ կարող դատել պապին, որովհետեւ նա ինքն է եկեղու գատաւորը: Պապը հանդիպով երդուեցաւ Աւետարանի վրայ, որ նրան սուտ են ամբաստանում:)

Կարլոսը պաշտպանեց պապին ընդդէմ ապստամբութեան նոյն թեկ նրա սեփական երկրի մէջ և կարգը վերականգնեց եկեղեցում: Այս գործողութիւններով նա ցոյց տուաւ, որ ինքը ոչ միայն Գալլիոյ և Գերմանիոյ յաղթական թագաւորն և արեւմտեան քրիստոնէութեան պաշտպանն է ընդդէմ բարբարոսների, այլ որ իւր հաստատամտութիւնից և արդարամտութիւնից է կախուած նոյն իսկ եկեղեցու կազմակերպութիւնը: Փրկչի ծննդեան տօնին, 800 թուին, ս. պատարագի ժամանակ ս. Պետրոսի եկե-

¹⁾ Դրանք կոչուում էին «օղամանեակ» կամ «մատանի» Ring:

ղեցում, տեղի ունեցաւ մի արտաքոյ կարգի հանդէս: Երբ Կարլոսը մտաւ եկեղեցի եւ աղօթեց նահատակներին նշխարների առաջ, պապը նրա գլխին դրաւ մի փայլուն թագ, եւ ծունգ չոխեց նրա առաջեւ: Բոլոր հանդիսականները ողջունեցին թագաւորին երկիցս ազադակելով. «կեցցե՛ք եւ յաղթեսցե՛ք Կարլոս, ամենաբարեպաշտ Օգոստոս, Աստուծոց պսակուածը, մեծ կայսրն ու խաղաղաստը»:

Կայսերական տիտղոսն ընդունելով՝ Կարլոսը վերականգնեց հռովմէական Արեւմտեան կայսրութիւնը, որ կործանել էին իւր նախնիքը: Նրա իշխանութիւնն այլ եւս լոկ առաջնորդութիւն չէր գերմանական զօրախմբի, այլ շարունակութիւն հռովմէական կայսրւորների ինքնակալութեան:

Դրա հետ միասին այն խնդիրն էր ծագում, թէ ի՞նչպէս կը վերաբերուին նոր կայսեր այն ժամանակուան աշխարհի միւս պետութիւնների ներկայացուցիչները: Այդպիսի տէրութիւնների պետերն երկուսն էին. Բաղդադի խալիֆն, որ տիրում էր հիւսիսային Ասիային եւ առաջաւոր Ասիային, եւ արեւելեան կայսրը, հին կայսրութեան միակ օրինական ժառանգը: Բաղդադի խալիֆի հետ Կարլոսը ամենաշատ յարաբերութեանց մեջ եւ: Հարուն էլ Ռաշիդ ամիրապետն կամ խալիֆը արեւմուտքում աշխարհակալութիւններ անելու մասին չէր էլ մտածում: Նրա թշնամին էր այնտեղ իւր ցեղակից Աբդը-Ռահման Օմայեանը, որ խալիֆ էր հրատարակուել Կորդոբայում: Իսկ Աբդը Ռահմանի հետ Կարլոսն եւս թշնամութեան մէջ էր: Սա ընդդէմ Աբդը-Ռահմանի աջակցում էր գոթերին, որոնք զեռ պահում էին իրենց անկախութիւնն Աստուրիայում եւ Գալիցիայում, առաւ Բարցելոնան եւ կազմեց սպանիական բղէխութիւնը (մարկ), այսինքն՝ զինուորական սահմանազաւորը Պիրենեան անցքերը պաշտպանելու համար: Արեւելեան կայսրութեան հետ այսքան հեշտ չէր հաշտուելու Լասինա-Գերմանական արեւմտեան եւ յունական արեւելքի միջեւ հակադրութիւնն աւելի ու աւելի խստանում էր: Արեւելքում կատաղի կռիւ էին մղում միմեանց դէմ պատկերամարտներն ու պատկերապաշտներն. այս շփոթութիւններն արեւմուտք չէին հաս-

նում, դրա փոխարէն այնտեղ արմատացաւ հաւատոյ դաւահանքի վրայ մի նոր յաւելում, Սուրբ Հոգւոյ բղխումն ի Հօրէ եւ յՈրդոյ, որ յոյները մերժում էին, իբրեւ կամայական յաւելում հաւատամքի վրայ, որ հաստատուած էր նիկիական եւ Կ.-Պոլսի եկեղեցական ժողովներից: Իոնիէ կայսրունու զահակալութեան ժամանակ (Ը. դարու վերջին) պատկերներին երկրպագութիւն տալը վերհաստատուեցաւ Կ. Պոլսում, եւ մի փոքր մերձեցումն տեղի ունեցաւ Փրանկների եւ Բիւզանդիոյ միջեւ: Բայց Իոնիէին իւր նախարարներից մէկը, Նիկիփորը, զահալէժ արաւ եւ երկու կայսրութեան մէջ բանը հասաւ ընդհարման: Նիկիփորի անկումով Կ. Պոլսում խաղաղութիւն եղաւ. նրա յաջորդ Միքայէլ կայսրը ճանաչեց Կարլոսին արեւմտեան կայսր:

Արդէն ծերութեան հասակում Կարլոս ձեռնարկեց պատերազմ սլաւեան ցեղերի դէմ, որոնք յարձակուում էին նրա արեւելեան սահմանների վրայ: Կայսեր յաջողուեցաւ խորտակելու Էլբեան սերքերին եւ Նոյնպէս եւ աւարների մնացորդների դէմ կռիւը շարունակելու համար, նա հիմնեց մեծ զինուորական սահմանազաւառներ, այսպէս կոչուած մարկեր: Դրանցից կազմուեցաւ ապա Աւստրիոյ դքսութիւնը:

Կայսրութեան հիւսիսային սահմանը ձգուում էր Էյդեր գետի եզերքով, արեւելքում սահման էր Էլբա գետը եւ նրա վտակ Չաալը, ապա իջնումէր դէպի Դանուբ արեւմտեան բոհեմական լեռների երկարութեամբ. Դանուբի ընթացքում ձգուում էր սահմանը մինչեւ Տիսա վտակի խառնուրդը. հարաւարեւելեան սահմանը դանուբեան սերքերի դէմ կազմումէր Սաւա գետը: Ամբողջ «սերքեան սահմանը» (Limes Sorabicus) խիստ ամրացրած էր:

Այս բոլոր պատերազմներին եւ աշխարհակալութիւններին համապատասխանումէ անխոնջ գործուողութիւնը: Նէութիւնը տէրութեան ներսը՝ Կարլոսը նոյնչափ օրէնսդիր, կառավարիչ, լուսաւորիչ էր, որչափ եւ զօ-

Պատերազմ սլաւների հետ

կառավարութիւնը:

բաւար: Նախ և առաջ նա ջնջեց կայսրութեան մէջ
բոլոր իշխանութիւնները, որոնք ինքնուրոյն ծագումն
էն նշանակութիւն ունէին, — հեռացրեց դիւանները (հեր-
ցոգ), որոնք իրենց իշխան էին համարում և ոչ հը-
պատակ: Բոլոր նահանգների գլուխ կարգուեցան կոմ-
սերը (գրաֆ), որոնք անմիջապէս կայսրիցն էին նշա-
նակուում: (Կարող էր պատահել, որ կոմս նշանակուէր
հասարակ ազատագրուածներից: Սահմաններում հիմ-
նուեցան մեծ կոմսութիւններ, որոնց մէջ մեծ քա-
նակութեամբ զօրք էր պահուում) Այդ սահմանադա-
ւառները կոչուում էին մարկեր, դրանց մէջ հրամա-
նատար և կառավարիչ էին մարկգրաֆները կամ բը-
դելինները: Տեղական գործերի քննութեան համար
գումարուում էին բնակիչները, բայց դատական վը-
ճիւններ սահմանելու ժամանակ մասնակցում էին ոչ
բոլոր ազատանիք, այլ միայն մշտական աւեսակաշ-
ները, որ ընտրուում էին սուրբ հարուստ մարդկան-
ցից (սկապեններ): Այն ժամանակներում դժուարին
էր պաշտօնեաների գործողութիւնների վրայ հսկել,
ստիպել նրանց որ ընդհանուր բարիքի համար գոր-
ծեն և ոչ թէ անձնական օգտի: Այս պատճառաւ կոմ-
սերի և այլ պաշտօնէից վրայ հսկելու համար Կար-
լոսն ուղարկում էր նահանգները թագաւորական սուր-
հանգակներ իրեն հաւատարիմ, լաւ ծանօթ և մեր-
ձաւոր մարդկանցից: Բայց դրանից տարէն երկու ան-
գամ կայսեր մօտ էին ժողովուում մարդիկ կայսրու-
թեան ամէն կողմերից. աշխարհ գումարուում էին
կառաւարիչներն ու եպիսկոպոսներն, իսկ գարնա-
նը հրաւիրուում էր բոլոր ազատանիք: Այնպէս Կար-
լոսը սովորաբար քննում էր մեծամեծների հետ տա-
րուան ընթացքում ծագած դժուարութիւններն, կազ-
մում էր սահմանադրութիւններ (այսպէս կոչուած
կապիտուլիարներ), ընդունում էր զեկուցումներ:

Գարնանը նա առաջարկում էր ժողովրդին ի հաւա-
նութիւն գլխաւորագոյն սահմանադրութիւններն, ըն-
դունում էր խնդիրներն ու դանդաղանքը, հարցովորձ
էր անում իւրաքանչիւր տեղի կարիքների մասին:
Վերջապէս, Կարլոսն օգուտ էր քաղում մի այլ միջո-
ցից ևս նահանգների կառավարիչների գործողու-
թիւնները քննելու և նրանց զսպելու համար. նրանց
վրայ հսկելն յանձնում էր հոգեւորականներին, այնպէս
որ եպիսկոպոսները պէտք է հսկէին կոմսերի վրայ,
զեկուցանէին նրանց գործողութիւնների մասին եւ
կարեւոր դիպումներում խառնուէին նրանց վար-
չութեան մէջ: Կայսրը սիրով էր յանձնում եկեղեցա-
կան գործիչներին մի այդպիսի նշանաւոր դեր, որով-
հետեւ նրանք աւելի կրթուած էին զինուորականե-
րից, որոնցից նշանակուում էին կոմսերը: Սրա հետ միա-
սին նա իրեն կատարեալ կարգադրիչ էր համարում
եկեղեցական վարչութեան մէջ: Նա կարգում էր ե-
պիսկոպոսներին, վանահայրերին, որոշ քահանաներին,
եկեղեցական ժողովներ էր գումարում կամ յարուցա-
նում էր զուտ եկեղեցական խնդիրներ պետական ժո-
ղովներում, կանոններ էր հրատարակում եկեղեցական
վարչութեան և բարեկարգութեան վերաբերեալ: Պա-
պին նա համարում էր Պետրոս առաքելոյ յաջորդ և
եկեղեցու հոգեւոր գլուխ, բայց բոլոր գործնական
խնդիրներում վճռական ձայնը վերապահում էր իրեն:

(Կարլոսն ստիպուած էր աչքի առաջ ունենալու այն հան- Բարոնու-
գամանքը, որ կայսրութեան բնակիչները շատ անհաւասար վի- թիւն և հա-
ճակ ունէին: Ազոտ գերմանացիներից մի քանիսը գրաւել էին պաշտօնները
հոովմէական մեծամեծ կալուածներն ու բարձրացել էին, իսկ
մեծագոյն մասն ընկել էր զօրաւոր դրացիների ազդեցութեան
տակ եւ ստորագրեալ վիճակի մէջ էր: Այս պատճառով կայսրը
միայն առանձին կարեաց դիպումներում և գումարում
բոլոր ազատագրող (Heerbann): Սովորաբար պարտաւոր էին
զինուորակոչին գալու խոշոր կալուածատէրերը զինուորների

որոշ թուով, Կարլոսը այս կալուածատէրերին ճանաչեց բա-
րոն կամ *sauvegarde* (Սենիօր-աւազ) մանր մարդկանց վերաբե-
րութեամբ, որոնք նրա հովանաւորութեան էին դիմում: Այս
կը նշանակէր, որ այդպիսի աւագներն իրաւունք էին ստանում
պատերազմում հրահանատար լինելու իրենցից կախումն
ունեցող ազատականների վրայ, որանց եկրասիկը իրենց ուսի-
կանութեան եւ յայտնի դիպումներում դասէրու նշանը: Չը
նայելով իւր գորութեան մեծութեան Կարլոսը կարող չեղաւ
կանոնաւոր հարկեր նշանակել: Ստիպուած էր առաջուան պէս
վարչութեան պաշտօնէութիւնը պահպանել հողերի արդիւնք-
ներով: Իւրաքանչիւր կտու ստանում էր ո՛չ միայն իւր նա-
հանդի վարչութիւնը, այլ նաեւ կալուածներ, որոնց արդիւն-
քով պարտական էր սննդուել եւ ապրել ինքն ու պահել իւր
օգնականներին: Նոյնպիսի կալուածներ էին ստանում եւ բազ-
մաթիւ գորագուծները: Կայսեր մերձաւորներն ու ծառաները
վարձատրուում էին պալատական կալուածների արդիւնքից:
Այդ կալուածները (բենեֆիցիում¹⁾) կատարեալ ու ժառանգա-
կան սեփականութիւն չէին դառնում Տիւրպետների, այլ
ժառանգականութիւն կերպով նրան էին մնում որոշ ժառանգութեան
փոխարէն: Երբ տիրապետող մեծնում էր, կամ երբ նրա ծա-
ռայութիւնը վերջանում էր կամ թէ անբաւարար էր համար-
ուում, կալուածքը գրաւուում էր արքունիք:

Ենամբ
կրթութեան
մասին

Կարլոսը հասկանում էր, որ բոլոր օրէնքները,
սահմանադրութիւններն եւ հրամանները զուր կը լի-
նին, եթէ հասարակութիւնը նրանց հետ անտարբերու-
թեամբ կամ թշնամաբար վարուի: Պէտք էր բարբա-
րօսներին ներշնչել, որ իւրաքանչիւր ոք պարտական է
զոհելու իւր անձը տէրութեան համար, սահմանա-
փակել իւր ցանկութիւնները, նեղել իւր եսականու-
թիւնը, որպէս զի ուրիշների հետ միասին կարողա-
նայ նեցուկ լինել հասարակութեան: Իսկ զրա համար
ամենից աւելի հարկաւոր էր կրթութիւնը: Ամէն ինչ,
որ կարելի էր անել այն ժամանակ գիտութեան եւ
մտաւոր հետաքրքրութեան մակերեսով ըբարձրացնելու
համար, Կարլոս Մեծն արաւ: Քաղաքակրթութեան զըլ-

¹⁾ Beneficium—բառացի «բարեգործութիւն»

խաւոր կենդրոնը գտնուում էր պալատում: Կարլոսը
ժողովելէր այնտեղ իւր տէրութեան ամենագիտնա-
կան մարդկանց եւ նրանց հասարակութեան մէջ էր
անցկացնում այն ազատ ժամանակը, որ մնում էր նրան
պատերազմներից եւ վարչական հոգսերից յետոյ: Նրա
գլխաւոր գործակիցն էր Ալկուինը, մի անգլո-սաք-
սոն վանական, որ պալատում մի դպրոց բացաւ
նրան Խորֆի դպրոցին: Այստեղ աւանդուում էին
այսպէս կոչուած «եօթն ազատ արուեստները», բա-
ժանուած երկու դասընթացի: Մէկում (*trivium*) ու-
սանում էին քերականութիւն, ճարտասանութիւն¹⁾ եւ
տրամախօսութիւն²⁾: միւսում (*quadrivium*)—[Ժուա-
բանութիւն, երկրաչափութիւն, երաժշտութիւն եւ
աստեղագիտութիւն:

Բացի Ալկուինից, Կարլոսի մերձաւորներն էին Էգինհարդ,
Կայսեր կենսագրութեան հեղինակը եւ նրա ժամանակի տարե-
գրողը, Անգլիքերա, Կարլոսի պալատի դրան քահանան (կա-
պելլան), Ռաբբան Մաւր, Ֆուլդայի արքան, ապա Մայնցի
արքեպիսկոպոսը, որ առանձնապէս աշխատեց կրթութեան տա-
րածման համար Գերմանիայում, լանդգրաւորի տարեգրող Պո-
ղոս Սարկաւազը, գոթ Թէոդոֆուլը եւ այլն:

Պալատում կազմուեցաւ կրթութեան մարդկանց ճե-
ւարան, որոնք առաջարկում եւ լուծում էին դիտնա-
կան խնդիրներն իրենց ժամանակի, շարագրութիւն-
ներ էին, գրում արձակ ու ոտանաւոր լեզուով, նիւթ
առնելով Ս. Գրքից կամ հին դասական մատենագիր-
ներից, Կարլոսը կոչուում էր Գաւիթ, Ալկուինը—Ֆլակ-
քոս (Հորացիոս) եւ այլն: Կայսրը հոգում էր ոչ միայն
հոգեւոր գրքեր եւ հին հեղինակների երկերն ար-
տագրել տալու, այլ նաեւ գերմանական երգերը
ժողովելու մասին: Չը նայելով իւր խորին յարգան-

¹⁾ ճարտասանութիւն կամ հետաքրքրութիւն, գեղեցիկ խօսելու
արուեստ:

²⁾ Տրամախօսութիւն կամ Գիտելիկտիկա, դատելու եւ վիճելու
արուեստ:

քին դէպի հին քաղաքակրթութիւնն և իւր հռովմէական տիտղոսին, նա չէր մոռանում իւր գերմանական ծագումը և չէր ամաչում դրանից: Մտաւոր հետաքրքրութեան զարթոյցումն պալատում ազդեցութիւն գործեց աւելի լայն շրջանների վրայ: Դպրոցներ բացուեցան գլխաւոր մայր եկեղեցեաց եւ վանքերի մօտ: Կայսրը սահմանադրութիւններ հրատարակեց, որոնց մէջ պատուիրութեամբ էր դպրոցներ հիմնել հոգեւորականներին ուսուցանելու համար, և նրա օգնականներն օժանդակում էին իրան եռանդով այդ գործում: Առ այժմ հոգեւորականութիւնը միակ կրթութեամբ գտնւում էր հասարակութեան, աւել ևս անհրաժեշտ էր նրա կրթութեան զեկաւարութիւնը ստանձնելը:

Կարլոս
Մեծի
նշանակու-
թիւնը:
814

Կարլոսը մեռաւ 814 թ. նա իւր անխոնջ գործունէութեամբ, որ վերաբերում էր կենցաղավարութեան և վարչութեան բոլոր կողմերին, իրաւամբ արժանացաւ Մեծ մականունին: Ֆրանսիացոյ լեզուում այդ մականունը միացաւ նրա անունին հետ և կազմեց մի անուն (Charlemagne), սլաւեան ազգերի մէջ թագաւոր տիտղոսը կաղմուեցաւ նրա անունից (Կարլ-Կարոլ), այնպէս, ինչպէս որ հռովմէացիք իրենց կայսրներին Աւգոստոս և Կեսար էին անուանում: Յաղթական կայսեր վեհ տիպարը ժողովրդական բանաստեղծութեան մէջ յառաջ բերաւ մի ամբողջ վիպասանութեան շրջան, ուր երգուում էին Կարլոսի անսովոր և նրա դիւցազն զորականների (պալադին) քաջագործութիւնները: Քառասունեւեցամեայ թագաւորութեան ընթացքում նա 60 արշաւանք էր գործել արտաքին թշնամեաց դէմ և դրանցից կիսի մէջ ինքը Կարլոսը մասնակցել էր անձամբ: Նրա օրէնսդրական և վարչական կարգադրութիւնները լցնում են ընդարձակածաւալ սահմանադրութիւնների ժողովածոյք, մտաւոր կեանքում նրանից սկսուում է քաղաքակրթութեան նոր

վերածնունդ բարբարոսական արշաւանքների քաօսից յետոյ: Նրա կայսրութիւնը բաժան բաժան եղաւ գրեթէ նրա մահուանից անմիջապէս յետոյ, այնպէս, ինչպէս բաժանուեցաւ Ալէքսանդր Մակեդոնացու կայսրութիւնը, բայց ընդհանուր գաղափարներն ու հիմնարկութիւնները դեռ ևս երկար ժամանակ նրանից յետոյ ապրեցան: Նրա ժամանակ վախճան է առնում ազգերի գաղթականութիւնը, ցեղերի տեղափոխումն Եւրոպայում: Նա սահմանադիժ դրաւ արեւմտեան եւրոպական քրիստոնեայ աշխարհին, հակառակ յունական արեւելեանին և մահմետականին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աշտուակիանի դարաշրջան:

ԳԼՈՒԽ Ա.

ԱՒԱՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Կարլոս Մեծի
միապետու-
թեան քաղա-
քայուն:

Կարլոս Մեծը հսկայական փորձ արաւ ի մի հա-
ւաքելու բոլոր արեւմտեան քրիստոնէութիւնը: Բայց
արդէն նրա որդու, Լուդովիկոս Բարեպաշտի ժամանակ
այդ ահագին տէրութիւնը սկսաւ քայքայուիլ: Նա բա-
ժանեց իւր երկրներն որդոց մէջ, իսկ իրեն վերապա-
հեց վերնագոյն հսկողութիւնը: Դրանից ծագեցան երկպա-
ռակութիւններ, որ քանի մի անգամ կրկնուեցան, որով-
հետեւ կայսրը յաճախ փոփոխում էր իւր կարգադրու-
թիւններն և աշտուակեամբ էր վերաբերուում իւր
կրտսեր որդուն, Կարլոսին, որ ծնուել էր երկրորդ,
սիրելի կնոջից: Որդոց ու հօր մէջ բանն հասաւ ազ-
գամիջեան պատերազմի, որի ժամանակ հոգեւորակա-
նութիւնը բռնեց որդոց կողմը: Լուդովիկոսի զօրքը
թողեց նրան, նա ստիպուեցաւ հպատակելու և հրա-
պարակական զղջմամբ խոստովանեց իւր կառաւար-
րութեան մեղքերն ու սխալները: Եպիսկոպոսները
նրան պարեգօտ հազցրին և փակեցին վանքում. թէ-
պէտեւ նա յետոյ այնտեղից ելաւ և կրկին թագ դրաւ
գլխին, բայց որդիքը մինչև վերջը թշնամաբար վերա-
բերուեցան նրան, Լուդովիկոսի մահուանից վերջը (840)
երկպառակութիւնները վերսկսուեցան նրա որդոց մէջ:

Աւագ որդու, Լոթարի դէմ, որ կայսերական տիտղոսն
էր կրում, հանգէս դուրս եկան կրտսեր եղբայրները,
Լուդովիկոսն ու Կարլոսը: Ստրասբուրգի մօտ վերջիննե-
րիս զօրքերը միացան (842). առաջնի հետ եկել էին բաւար-
ները, սաքսերը, շուաբները, երկրորդի հետ — նեւստրիա-
կան ֆրանկներն և աքուիտանացիք: Դաշնակիցներն
երգուել էին միմեանց նեցուկ լինել բոլոր զօրութեամբ:
Լուդովիկոսը ռոմանական բարբառով երգուեց, որպէս
զի նրան հասկանային Կարլոսի արեւմտեան ֆրանկները,
իսկ Կարլոսն երգուեց գերմաներէն: Այս երգումներն
հասել են մեր ձեռքն և ծառայում են իբրեւ փաստ,
որ արդէն այդ ժամանակ ֆրանկայի եւ Դերմա-
նիայի ազգերի ու լեզուի մէջ քաժանումը տեղի եւ
ունեցել. գալլերն ու ֆրանկներն արեւմուտքում ձու-
լուել ու կազմել էին մի ազգութիւն, որ խօսում էր
ֆրանսերէն լեզուով. Հռենոսի աջ ափին գերակշռում
էր գերմանական ցեղն և այնտեղ էլ կազմուեցաւ գեր-
մանական լեզուն: Դաշնակիցներն յաղթեցին Լոթարին և
եղբարց մէջ խաղաղութեան դաշն կուուեցաւ Վէրդէո-
նում (843), որով Լոթարին մնաց Իտալիան, Պրովանսը,
Քուրգունդիան և Հռենոսի ափերի մի մասն, որ առաջ
Աւստրասիայի մասն էին կազմում, իսկ այժմ կոչուում
էր Լոթարինգիա: Այս նեղ շերտից գէպի արեւմուտք ընկ-
նում էր Կարլոս ճաղատի ֆրանսիական թագաւորութիւ-
նը, իսկ գէպի արեւելք — Լուդովիկոս գերմանացու գերման
թագաւորութիւնը: Այսպէս կատարուեցաւ Կարլոս Մեծի
տէրութեան առաջին բաժանումն, որ առաջ եկաւ ազ-
գային տարբերութիւններից: Բայց սա միայն սկիզբն
էր, որին հետեւեցին ասպագայ բաժանումները: (Ճառ...

Կարլոս Մեծն եկեղեցին դարձրեց իւր պետութեան
սիւններից մին և պապին հպատակութեան մէջ էր պահ-
պանում: Բայց արդէն Լուդովիկոս Բարեպաշտի ժամա-
նակ եկեղեցին մի ինքնուրույն զօրութիւն դարձաւ և

ներքին պատերազմի ժամանակ վճռական դեր խաղաց: Ինչքան աշխարհական յարաբերութիւնները շփոթուում էին, ինչքան տկար և անընդունակ էին լինում պետական իշխանութեան ներկայացուցիչներն, այնքան աւելի ևս աճում էր եկեղեցու մէջ գիտակցութիւնը, որ ինքը ոգւով ու կրքոտքեամբ անսահման քարժօր է այդ կոպիտ եւ սգեւ մարդկանցից եւ պէտք է ազատի դրանց հպաճակոտրիւնից: Եկեղեցական անկախութեան նախանձախնդիրները խտրութիւն չէին դրնում միջոցների մէջ իրենց նախորոշեալ նպատակին հասնելու համար: Արեւմտեան Ֆրանսիայում մերձաւորապէս 850 թուականներին կազմուեցաւ հնագոյն պապերի կեղծ նամակների և կարգադրութիւնների ժողովածուն: Այդ ժողովածուն վերագրուում էր մի ոմն Իսիդորի և այս պատճառաւ կոչուում էր կեղծ իսիդորեան նամակակազմ: Առաջին դարերի պապերը սահմանում են իբր թէ, որ եպիսկոպոսներն այլ գատարանի, բացի եկեղեցականից, չենթարկուին, իսկ վախճանական վճիռը պատկանում է հռովմէական պապին, իբրեւ Պետրոս առաքելու յաջորդին և ընդհանրական եպիսկոպոսին: Կեղծ հրովարտակներն ահագին յաջողութիւն ունեցան. սկսան դրանց վկայութեան կոչել իբրեւ վաւերական և պարտաւորիչ կանոններ: Նշանաւոր էր այն, որ հոգեւորականութիւնն անկախութեան դառնալու փորձերի մէջ պապին օգնութեան էր կանչում, իբրեւ բարձրագոյն գատաւորի և կառավարչի եկեղեցական վարչութեան մէջ:

Նիկողայոս Ա.
858.

Այս կոչը լսեց Նիկողայոս Ա. պապը (858 թ. սկըսած): Նա յայտնեց իւր իրաւունքները ղեկավարելու ոչ միայն արեւմտեան, այլ նաեւ տիեզերական եկեղեցին:

(Հռովմէական արքեպիսկոպոսն համարում էր իրեն պատրիարք եւ պապից հրաւիրուած եկեղեցական ժողովներին չէր գալիս: Նիկողայոս պապը բանադրեց նրան եւ հպատակեցրեց իրեն: Լոթար կայսեր որդի Լոթար Բ., Լոթարինգիայի թագա-

ւորը, սկզբան նշանադրուեցաւ մի կնոջ հետ, ապա ամուսնացաւ մի ուրիշի հետ, վերջապէս բաժանուեցաւ այս կնոջից եւ ամուսնացաւ իւր առաջին հարսնացուի հետ: Հոգեւորականութիւնն երկու ժողովների մէջ այդ ամուսնութիւնն օրինաւոր ճանաչեց: Նիկողայոս պապը ժողով գումարեց Հռովմում, յայտարարեց, որ լոթարինգեան եւ գերմանական եպիսկոպոսներն եկեղեցական կանոնների դէմ էին վարուել, բանադրեց իւր նուիրակին, որ ներկայ էր եղել երկրորդ ժողովում, եւ կարգաւորեց արաւ Տրերի եւ Կէօնի արքեպիսկոպոսներին, որոնք այդ ժողովի գլուխ էին կանգնել:

Պապն առանց երկար մտածելու խառնուեց և արեւելեան եկեղեցու գործերին: Կոստանդնուպոլսում պալատական կուսակցութիւնը զահավէժ արաւ Իգնատիոս պատրիարքին և նրա փոխարէն դրաւ Փոտին, մի աշխարհական պաշտօնէի, իւր ժամանակի ամենագիտնական մարդուն: Միքայէլ կայսրը ժողով գումարեց Փոտի ընտրութեան օրինականութեան խնդիրը քննելու համար: Եկեղեցական ժողովը, ուր մասնակցում էին և պապի նուիրակները, յօգուտ Փոտի վճիռ կայացրեց: Պապը Հռովմում ժողով կազմեց և Կոստանդնուպոլսում կայացրած վճիռն աննշանակ յայտարարեց այն հիման վրայ, որ ոչ մի քրիստոնեայ եպիսկոպոս աշխարհիս երեսին չէ կարող փոխուել առանց պապի համաձայնութեան: Փոտն, ի հարկէ, չըհնազանդուեց և պատասխանեց պապի ձգձուգները մերկացնելով, որ կամանումէր իրեն եկեղեցու գլուխ դարձնել, մինչդեռ եկեղեցու միակ գլուխը ինքը Քրիստոսն է: Այս մերկացումն յատուկ կշիռ ստացաւ այն պատճառով, որ դրան միացան արեւելեան եկեղեցու պետերը: Պապի գլխաւորութեան վէճը բարդուեցաւ վաղուց հետէ հաստատուած տարբերութիւններով արեւելեան և արեւմտեան եկեղեցուց աստուածաշարութեան կարգերի և հաւատարմի քովանդակութեան տարբերութեամբ, որովհետեւ արեւմտեան եկեղեցին հաւատամքին աւելաց-

րել էր «Filioque» ¹⁾ (բղիսուսն և յՈրդւոյ): Փոտի հրաւերով 867 թ. ժողով գումարուեցաւ Կ. Պոլսում, ուր Նիկիոզայոս պապն ու իր հետեւողները նգովուեցան: Պապի վիճակը խախտու էր: Նա բազմաթիւ թշնամիք ունէր արեւմուտքում, նոյն իսկ Իտալիայում. նրա վերայ զայրացած էր Լուդովիկոս Բ. կայսրը, որի համար, ըստ երեւութին, շատ դիւրին էր գերի բռնել համարձակ քահանայապետին: Բայց հասարակաց կարծիքը Նիկիոզայոս պապի կողմն էր արեւմուտքում, կայսրը չը վստահացաւ ձերբակալել նրան և եպիսկոպոսները հրապարակեցան նրա վճռին: Նոյն իսկ արեւելքումը կարծես յաղթութիւն տարաւ նա: Գոնէ, նրա ամենախիստ հակառակորդը, Փոտ պատրիարքը, մերժուեցաւ աթոռից, և Իգնատիոսը կրկին գահ բարձրացաւ: Իրաւ է, այս միայն ժամանակաւոր յաջողութւն էր, որովհետեւ Փոտն ապագայում կրկին իւր գահը նստաւ:

Նորմանները

Կարչոսի մահուանից վերջը կայսրուհիւնը մանր մասերի քաժանուեցաւ, որոնց մէջ համաձայնութիւն չը կար: Կարողինգեան տան թագաւորները փոխանակ միմեանց օգնելու, կռուում էին միմեանց հետ նահանգների համար, իսկ զրանց երկպառակութիւններից օգտուելով, արեւմտեան Եւրոպայի ամէն մի անկիւնում տեղական իշխանները, դքսերը, կոմսերը, ամէն մէկն իւր ցանկացածն անելով՝ ձգտում էին անկախ թագաւորներ դառնալու: Հաստատուն իշխանութեան և կարգի բացակայութիւնը դիւրացնում էր ամէն տեսակ յանդուգն մարդկանց յաջողութիւնը, որոնք ընդունակ էին օգտուելու ընդհանուր քայքայումից, և ահա երեք կողմից յարձակուեցան արեւմտեան Եւրոպայի վրայ լափշտակիչները. հիւսիսից սկսան ծովահէնների—նորմանների արշաւանքները, հարաւից արշաւեցին սա-

րակինոսները, արեւելքից երեւցան հոների և աւարների արժանաւոր ժառանգները—մաճառները:

Նորմանների արշաւանքներին մասնակցում էին ազնւականների զօրագնէրը, որոնց համար նեղուածք և ձանձրալի էր Դանիմարքում և Նորվեգիայում նըստելը: Պատերազմասէր երիտասարդներն և փորձուած մարտիկները, որոնք ծերացել էին կռիւներում և արկածներում, խմբուում էին վիկինգի, ծովային թագաւորի, շուրջը, և ուղեւորում էին նրա հետ միասին Եւրոպան կողոպտելու: Արշաւանքներն յատկապէս զօրացան, երբ Թ. դարու կիսին դանիական և նորվեգիական թագաւորները վաղեցին նշանաւոր մարդկանց, այսպէս կոչուած եւարդերին: Նորմանները նաւում էին թեթեւ մակուիկներով, որոնք տախտակամած չ'ունէին, իւրաքանչիւրի մէջ նստում էին մինչև 70 մարդ. եթէ այս յանդուգն ծովագնացներին յաջողում էր Բալթեան և Հիւսիսային ծովերից անցնել, նրանք մտնում էին գետերի հոսանքներն եւ գետաբերանից քարձրանում էին դէպի ակունքը. կարեւոր դիպուածներում մակուիկները քաշ էին տալիս մի գետից դէպի միւս, մերձակայքում հոսող գետը: Երբեմն ամրանում էին մի բարձրադիր վայրում, գրաւում էին բերդեր և քաղաքներ: Այս ապաստանարանն էին կրում նորմանները շրջակայքից կողոպտած ստացուածքը. եթէ նրանց դէմ չափազանց մեծ զօրք էր խմբուում, նրանք հեռանում էին և երեւում մի այլ վայրում: Կարողինգների դժուարաշարժ զօրքերը չէին կարողանում նրանց յետևից հասնել. քիչ անգամ էր յաջողուում նրանց յաղթել, բայց պարտութիւնից յետոյ էլ նրանք չէին վհատում: Երբեմն այդ զօրականներից մէկի կամ միւսի վրայ մի տեսակ կատաղութիւն էր գալիս. նա յարձակուում էր թշնամեաց վրայ առանց վահանի ու սաղաւարտի, միայնակ մի ամբողջ խմբի դէմ, ջարդում ու կոտորում էր,

¹⁾ Հաստատմբի Բ. յօդուածը կաթողիկոսները կարդում էին. Et in Spiritum Sanctum... qui ex Patre Filioque procedit. (Եւ ի Հոգին Սուրբ... որ բղիսի ի Հօրէ և յՈրդւոյ):

մինչև նրան սպանում էին: Նորմաններն այսպիսի տեն-
դային եռանդն անուանում էին *բերսերկերի* կատաղու-
թիւն: Քրիստոնեայ բնակիչներն յուսահատութեան մէջ
էին ընկնում այս յարձակումներից. բոլոր ճանապարհ-
ների վրայ դիակներ էին ընկած, ամենահարուստ վան-
քերն ու քաղաքները այրուած ու կողոպտուած էին: Հռենոսը
գրանց յարձակումներից ապահովելու համար, Լոթար Ա.
բնակեցրեց գրանց մի գունդը գետաբերա-
նում, և այս նորմանեան բնակավայրը դարձաւ Հոլլան-
դիոյ կոմսութեան սկիզբը: Ֆրանսիայում նորմաններին
արիութեամբ դիմադրելու մէջ հռչակուեց Ռոբերտ Զո-
րաւորը, օրլէանեան կոմսն ու նրա յաջորդները: Սրանք
պաշտպանեցին նախ Լուար, ապա Սենա գետը: Դրան-
ցից մէկը, Էդը, Փարիզի եպիսկոպոսի հետ միասին 887
թուին դիմացաւ Փարիզու պաշարման, որ տևեց եօթն
ամիս: Կարլոս Հաստ կայսրը, որ զօրքով եկաւ քաղաքն
ազատելու, մեծագումար դրամ տալով իբրեւ փրկանք
ազատուեցաւ: Սրշաւանքները դէպի Ֆրանսիա դադա-
րեցան միայն այն ժամանակ, երբ նորման առաջնորդ-
ներից ամենից զօրաւորին, Ռոլլոնին, մի ամբողջ նա-
հանգ տրուեցաւ — *հիւսիս-արեւմտեան քերակողին*
Ռուանն մայրաքաղաքով Սենայի վրայ (911): Այսպէս
կազմուեցաւ *Նորմանդիա դառնալը*:

877

911

Նորմաններն
Անգլիայում:

Ամենից յամառ կռիւ տեղի ունեցաւ Անգլիայում,
ուր Էլքերտի թագաւորութեան մէջ նոյնն էր կատա-
րուում, ինչ որ Կարլոս Մեծի կայսրութեան մէջ: Թա-
գաւորների իշխանութիւնը սակայն այնտեղ անքան էլ
վայր չ'ընկաւ, և ազգը նրանց մէջ գտաւ իրեն համար
արժանաւոր առաջնորդներ հիւսիսային յափշտակիչների
դէմ կռուում: Առանձնապէս մեծ էր Ալֆրէդ թագա-
ւորի պատակը: Մի ժամանակ նրա վիճակը յուսահա-
տական էր երևում. ամբողջ Անգլիան գրաւուած էր:
Ալֆրէդն ստիպուած էր անտառներում և ճահիճնե-

րում թագնուելու հաւատարիմների մի փոքրիկ խմբակով:
Բայց նա անյողգողդ եռանդ արտայայտեց: Նրան յաջո-
ղուեցաւ նախ ամբողջ կառուցանել մի ճահճային և
դժուարամերձ վայրում. այդ դարձաւ փախստականների
ժողովատեղի. այգտեղից նա անհանգիստ էր անում դա-
նիացոց, ջնջում էր նրանց մանր գնդերը: Քիչ զօրա-
նալով՝ նա յարձակուել սկսաւ իւր ապաստանարանից և
արեւմտեան կոմսութիւնները սրբեց դանիացիներից: Նա
ստիպուեցաւ դեռ ևս դիմանալու մի կատաղի կռուի
Գուտուրմ թագաւորի դէմ, որ զլուխ էր կանգնած
դանիական «զօրքին»¹⁾: Արիւնահեղ ճակատամարտնե-
րից լետոյ վճռեցին Անգլիան քաժանել տրու մասի
այն գծի ուղղությամբ, որ ձգուում էր Թայնս գետի
երկարությամբ եւ Լոնդոնի մօտից ծոռուում դէպի
հիւսիս. արեւմտեան մասը մնաց Ալֆրէդին, արեւելեանը
թողնուեցաւ Գուտուրմին (878): Ալֆրէդը չը գոհացաւ
զինուորական գործունէութեամբ և հոգ տարաւ վար-
չութեան մասին: Կարլոս Մեծի նման փորձեց իւր հը-
պատակների կրթութիւնը քաժանեցնել, հիմնում էր
դպրոցները, հրաւիրում էր իւր արքունիք գիտնական-
ներին ու գրագէտներին: Նա ինքը ջերմ երկրպագու
էր գրականութեան: Նա թարգմանեց անգլերէնի Գրի-
գոր Ա. պապի «Հովուական խրատները», Բոէտիոսի եր-
կըն «Յաղագս միսիթարութեան», Որոգիոսի «Տիեզերա-
կան պատմութիւնը» և «Անգլո-սաքսերի եկեղեցական
պատմութիւնը», որ յօրինել էր Բեդան: Շնորհիւ այս
վաստակների, անգլիերէն լեզուն այնքան մշակուեցաւ,
որ սկսաւ գործ դրուիլ մատենագրութեան և հրովար-
տակների մէջ առաւել ևս քան թէ լատիներէնը:

Ալֆրէդի մահուանից լետոյ պատերազմներն անգ-
լիացոց ու դանիացոց մէջ կրկին բորբոքուեցան: Դրանք
փոփոխակի յաջողութեամբ էին վարուում, բայց վերջ ի

¹⁾ Այսպէս էին կոչուում այն դանիացիք, որ բնակութիւն էին
հաստատել Անգլիայում:

878

1017—1035 վերջոյ դանիական թագաւոր Կանուտը տարածեց իւր տիրապետութիւնն արեւմտեան, անգլիական կոմսութեանց վրայ եւս (1017—1035): Սա այս երկարատեւ կռիւն աւարտեց այնու, որ քրիստոնէութիւնը ընդունեց, վերջ տուաւ իւր ցեղակիցների աւագակութիւններին, վերականգնեց Հին անգլո-սաքսոնեան սովորութիւններն եւ լրացրեց այդ նոր օրէնքներով:

Սինչ նորմաններն յափշտակում եւ գրաւում էին արեւմտեան եւ Հիւսիսային Եւրոպան, հարաւն անապատ էին դարձնում սարակինոսները ¹⁾: Ափրիկէում նրանք նաւաստովից սեղծեցին, որով անց ու դարձ էին անուր Միջերկրական ծովի վրայ: Նրանք տիրեցին Սիկիլիային, շնորհիւ յոյն փոխարքայի մատնութեան: Այգաեղից տարածուեցան հարաւային Իտալիա եւ յարձակումներ էին գործում նոյն իսկ Հռոմի վրայ: Պրովանսում եւ Լիգուրեան ծովեզերքում սարակինոսները կառուցին իրենց համար քերդեր, որոնցից ելնելով՝ անխնայ կերպով աւերում էին շրջակայ երկրները:

Վերջապէս, արեւելից ասպատակում էին մաճառները: Նրանք երեւցան Դանուբեան երկրներում Թ. դարու վախճանին եւ սկզբան յարձակուեցան գերմանական սահմանադաւառների վրայ այժմեան Աւստրիայում, առաջ անցան Իտալիա եւ անապատ դարձրին Պո գետի հովիտն: Բայց նրանց գործունէութեան գլխաւոր դաշտը դարձան գերմանական եւ սլաւոնական նահանգները: Նրանք սոսկալի ջարդ տուին բաւարներին, կողոպտեցին Թիւրինգիան, Բոհեմիան եւ Մոռաւիան: Ապա սկըսան իւրաքանչիւր տարի կրկնուող ասպատակութիւնները, նրանց քերդ հեծերազօրն զբօսնում էր Գերմանիայում եւ դառնում աւարով ծանրաբեռնուած Դանուբ գետի միջին հոսանքի երկրները:

¹⁾ Այսպէս էին կոչում արեւմտեան Եւրոպայում մահմետականներին: Անունս ծագում է արաբական շարկո — արեւելեան, բառից:

Ընդհանրապէս, պատմութեան մէջ քիչ են եղել այսպիսի սոսկալի ժամանակներ, ինչպէս էին Թ. դարու վախճանն ու Ժ. դարու սկիզբը. յափշտակիչներն իբրեւ մարախ յարձակուեցան Եւրոպայի վրայ ամեն կողմից, բայց դրանց աւագակութիւններն ու կոտորածները հասարակ գիպուածական գործեր չէին, այլ բացատրուում էին այն ժամանակուն՝ աշխարհի ներքին անկարգութեամբ. դա վատ էր պաշտպանում արշաւանքներից, որովհետեւ կարգ ու միութիւն չկար նրա մէջ:

Հռոմէական կայսրութեան քայքայումը միայն այժմ Աւստրալիայում իւր պտուղները տալ: Ազգերի զաղթականութիւնից յետոյ նրա բարդ վարչութիւնն սկսաւ անկման դիմել, նրա կրթութիւնը սկսաւ կոպտանալ, մարդկանց սովորութիւնը բարեկարգ հասարակութեան մէջ ապրելու, ընդհանուր պահանջներին հպատակելու — սկսաւ տկարանալ: Բարբարոսները բերին նոր ուժերի, առողջութեան, եռանդի պաշար, բայց զրա հետ միասին եւ վայրենութիւն, տգիտութիւն եւ բռնութիւն: Եւ այսուամենայնիւ առաջին ժամանակները տէրութեան եւ հասարակութեան քայքայումն այնքան էլ խստութեամբ չէր արտայայտուում, որովհետեւ երկրում մի անգամ հաստատուած հիմնարկութիւնները, բարքերը եւ գիտութիւնը չէին կարող միանգամից կամ շուտով անհետանալ: Բարբարոս տիրութիւնները շարունակուել էին սպրեղ հոռիմեակիս կեցնադավարութեան քեան քեկորներով. զրա հետ միասին նոյն իսկ իրենց, բարբարոսների մէջ, Հռոմի հետ կոխ մղելու ծագեց պետական խնդիրների հասկացողութիւն եւ մի որոշ սովորութիւն պետութեան պահանջներին հպատակելու: Կամայ թէ ակամայ նրանք թափառական գրութիւնից անցան նստակեցութեան, անասնապահութիւնից երկրագործութեան, ցեղական եւ տոհմական կենցաղավարութիւնից ընդարձակ դաշնակցութեանց եւ թագաւորութեանց: Բայց հռոմէական նահանգներին տիրելուց յետոյ, քայքայուեցան իւրաքանչիւրն իւր մասին էր մտածում, մոռանում էր, որ պէտք է միւսների հետ միասին ու միարան ապրել եւ նրանց զիջումներ անել, հպատակել կարգի ու իշխանութեան, իւր անձն ու շահերը զոհել հասարակութեան համար: Եթէ կար եւս որեւէ գիտակցութիւն մարդկանց մէջ եղած դաշնակցութեան, դա եւս տա-

բաժնուում էր միայն ընտանիքի, անձնական բարեկամների, մերձաւորագոյն զրացիների վրայ: Հասարակութեան այսպիսի տրամադրութեան մէջ չէր կարող կանգուն մնալ ընդարձակածաւալ տէրութիւնը. նրա հպատակները չէին սիրում տէրութիւնն ու չէին հպատակում նրան, պաշտօնեաները միայն իրենց անձնական շահերի մասին էին մտածում: Երբ արեւելքից սկսաւ սպառնալ գերման եւ պաւ հեթանոսների նոր գաղթականութիւն, իսկ հարաւից սկսան յարձակուիլ մահմետականները, վայրենացած հասարակութիւնը նորից մի անգամ եւս ժողովից իւր ուժերն եւ կարլոս Մեծը կարողացաւ մի առ ժամանակ միացնել եւ մի ամբողջութիւն կազմել բոլոր արեւմտեան Եւրոպայից, ուր բնակուում էին գերման եւ ռոմանական քրիստոնեայք: Բայց այս փորձը միայն մի առ ժամանակ յետ պահեց հասարակութեան քայքայումն: Կարլոսի կայսրութեան ահագին մեծութիւնն իսկ արգիլեց նրան արմատ բռնելու Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում պետական իշխանութիւնն սկսաւ տկարանալ եւ քայքայուիլ: Անգլիայում աւելի պինդ մնաց նա, բայց եւ այնտեղ, թէպէտեւ աւելի թոյլ չափով, նոյնն էր տեղի ունենում, ինչ որ եւ Եւրոպայի ցամաքի վրայ: Այս լուծումն արտայայտուեցաւ դանազան ձեւերով: Նախ՝ պետութեան ծառայութիւնը մասնաւոր անտեսութեան հետ յարակցութեան մէջ դրուեցաւ. քենեֆիցիուշի, վայելման համար չնորհուած հողաբաժնի, տէրը, պարտաւոր էր պատերազմի գուրս գալու կամ նահանգը կառավարելու, եւ այդ ծառայութեան վրայ նայումէր, իբրեւ վարձ հողաբաժնից օգտուելու համար: Այսպիսով, հողաբաժնին տիրելը դարձաւ գլխաւոր դործ, իսկ ծառայութիւնը—երկրորդական. բենեֆիցիուում ստացողները ձգտում էին այդ դարձնել իրենց ժառանգական կայուած եւ հնարաւորութեան չափ կործատել իրենց ծառայութիւնը: Թէ մէկ եւ թէ միւս ձգտման մէջ նրանք յաջողութիւն ունեցան: Բացի դրանից, մանր մարդիկ զիմում էին հարուստ եւ զօրեղ զրացիների պաշտպանութեան, որովհետեւ յոյս չ'ունէին տէրութիւնից պաշտպանութիւն գտնելու իրենց անձի, պատուի եւ ստացուածքի: Աշխարհական իշխանի, եպիսկոպոսի եւ արքայի շուրջն այսպիսով խմբուում էին անձինք, որոնք զիմում էին նրան օգնութեան երբ իրենց վիրաւորում էին, իրենք էլ զանազան ծառայութիւններ էին անում իրենց հովանաւորողին: Այսպիսի մասնաւոր անձի հովանաւորութեան զիմելը կոչուում էր կօւ-

մեկդացիօն (յանձնարարումն): Վերջապէս, թագաւորներն սկսան իրենց հպատակներից ունեց ազատել պարտաւորութիւններից: Ունեց ազատուում էին ընդհանուր զինուորակոչից, այլք ազատուում էին սովորական դատարաններից, ուրիշներն իրենք էին իրաւունք ստանում դատելու իրենցից կախումն ունեցողներին, իսկ երբեմն եւ զրացիներին, եւ հաւաքելու դրանցից դատական հարկեր: Այսպիսի իրաւունքները կոչուում էին իմնուլիսթեսներ (արտօնութիւններ) եւ տրուում էին նախ հողեւորական հաստատութիւններին, իսկ ապա եւ աշխարհական մեծամեծներին:

Իւրաքանչիւր մեծ կալուածատէր դարձաւ մի տեւ-^{Աւատական կազմ} սակ թագաւոր իւր տեղում: Իշխանութեան այսպիսի մանր մանր մասերի քաժանումն եւ դրա կայուն-ծաւերերին անցնելն ընդունուած է կոչել ժեօդոյականութիւն կամ աւաւսականութիւն: Երբ աւատականութիւնը վախճանական կերպով հաստատուեցաւ, ալ-սինքն՝ շուրջ 1000 թուականին, ամբողջ Եւրոպան ներ-^{Շուրջ 1000թ.} կայացնում էր բազմաթիւ մանր իշխանութիւնների բաժանուած մի երկիր, որոնց տէրերը կոչուում էին թագաւորներ, դքսեր, կոմսեր, բարոններ: Այդ իշխանութեանց բնակիչներն երկու մասի էին բաժանուում. մեկը, իշխող կէսը, կոչուած էր կառավարելու եւ պաշտպանելու իւր անձն եւ ուրիշներին: Դա կազմուած էր ամէն տեսակ զօրականներից, որոնց պարագլուխ էին ասպետները (Ritter, chevalier—ձիաւոր): Այս բարձրագոյն գասակարգին էր յարել եւ հոգեւորականութիւնը, որ ինքը չէր պատերազմում, բայց ունէր իւր տրամադրութեան տակ զօրականներ: Հասարակութեան միւս մասը կազմում էր գործաւոր անքոյր, որ պարսական էր կերակրելու իրեն եւ ուրիշներին: Դրանք էին վիշապները կամ շիւականներն եւ սակաւաթիւ արհեստաւորներն ու առեւտրականները: Մի կողմը թողնելով մեծամեծ նահանգները—կոմսութիւններն ու իշխանութիւններն նոյն նոյն իսկ ամեն մի քաղաքներին իւր զօրականներով եւ երկրագործնե-

որով կազմում էր առանձին մասնի պետություն: Դրա տեղը—բարոնը, գէնքով պաշտպանում էր թէ իւր և թէ իւր հպատակների շահերը: Եթէ վերաւորում էին նրան իրեն կամ նրա մարդկանց, նա պատերազմ էր սկսում վերաւորողների դէմ: Եւրոպայի ամեն անկիւններում վարում էին այդ մասնաւոր պատերազմները, որոնք ամէնը միասին աւելի վնաս էին բերում, քան թէ մեծ պետութեանց ընդհանրումները: Եկեղեցին, վերջապէս, քրիստոնէական պարտք համարեց գործին խառնուելու, բայց նա էլ ընդհանուր խաղաղացման չը կարողացաւ հասնել, այլ ընդունել տուաւ այսպէս կոչուած Աստուծային զինադադարը (Treuga Dei), որի զօրութեամբ արգելուում էր պատերազմել և կողոպտել թշնամիներին շաբաթուան երկրորդ կիսուն (հինգշաբթի օրուանից մինչև կիրակի): Քանի որ ամէն մի բարոն ինքնիշխան պետ էր, ուստի ոչ ոք չէր կարող նրան հրամայել, օրէնքի հպատակեցնել կամ հարկ տանել նրանից առանց նրա յօժար համաձայնութեան: Եթէ պէտք էր լինում օրէնք կամ հարկ որոշել, այն ժամանակ սխալում էին որոշ անհանգի բոլոր քառնակների ժողովելու եւ ձեռք բերելու նրանց համաձայնութիւնը:

Պետութեան այս չափազանց մանր մասերի բաժանուելը ծանր ու վտանգաւոր է ամէնի համար: Բարոնին ձեռնառն չէր բոլորովին առանձնացած մնալը. նա դրանով ենթարկում էր իրեն այն վտանգին, որ լանկարձ կարող էր իւր վրան լարձակուել որ և է զօրաւոր դրացի կամ նորման աւազակ և աւերել իւր գրեական, գերել իւր շինական ճորտերին, ամայացնել դաշտերը: Այս պատճառաւ իւրաքանչիւրը դրանցից դաշնակցութեան մէջ էր մտնում մի քանի ուրիշների հետ: Աւելի զօրեղը տկարին իւր աջակցութիւնն էր խոստանում, իսկ դա պարտաւորում էր իւր հովանաւորո-

ղին որոշ ծառայութիւն անելու, այսպիսով երկու անձանց մէջ ստեղծուում էր պայմանի եւ հաւաստութեան լարաբերութիւն: Ասում էին՝ թէ մէկը դարձել է միւսի մարդը ¹⁾, սրա հետ միասին աւագը կոչուում էր սենիոր կամ տանուտէր (գերիշխան-սեզրէն), իսկ կրտսերը—վասսալ ²⁾: Բոլոր հողաբաժիններն համարում էին քենեմիցիում կամ գերմանական ձևով շենն, ժեոդա ³⁾ աւատ: Տանուտէրը տալիս էր հողաբաժինը վասսալին կամ աւատառուին, իսկ նա պարտաւորում էր ֆառասուն օր տանուտէրի զօրքով ծառայելու, երբեմն էլ նրան դրամ վճարելու: Այսպիսով ամէն մի նշանաւոր բարոնի շուրջը կազմուում էր աւատառուների մի շրջան, դրանց մէջ նա միայն աւագ էր, իսկ նրանք մնում էին աւագին հաւատար (Պէր): Ընդհանուր խնդիրներն և աւատառուների մէջ վեճերը վճռելու համար աւագը գումարում էր իւր պալատը—կուրիալ: Դատերը վճռում էին այդտեղ դատական մենամարտութեամբ երկու կողմերի մէջ: Եթէ աւագը նեղում էր իւր աւատառուին, սա կարող էր հրաժարուել հպատակութիւնից կամ նոյն իսկ օգնութեան կոչել պերերին բռնութեան դէմ դնելու:

Ասպետների լարաբերութիւնները հիմնուած էին այսպէս մասնաւոր պայմանագրութեանց վրայ, և, շնորհիւ այդ պայմանների, կազմուել էին մի տեսակ տանուտէրների ասիանաւորութիւններ, որոնք հասնում էին մի կամ միւս թագաւորներին, իբրև բարձրագոյն տանուտէր ⁴⁾: Իւր ճորտերի վերաբերութեամբ, ընդհակառակն, բարոնը կասարեալ սէր եւ

¹⁾ Mann, l'homme. Նոյն իսկ երգումը կոչուում էր homagium:

²⁾ Vassus—ծառայ, հայերէն կարելի է թարգմանել հպատակ կամ ճորտ:

³⁾ Lehen ծագում է leihen բառից և կը նշանակէ իրապէս «փոխառութիւն», Feudum ծագում է fehu—անասուն, ստացուածք բառից:

⁴⁾ Օրինակ՝ ֆրանսիական թագաւորից աւատառու էր նորմանդիոյ դուքսը, սրանից տանուտէր զը Բելլէմ, իսկ վերջիցս—շատ ասպետներ:

քաղաւոր էր: Դրանցից ոմանք ծագում էին նախնի ստրուկներից, միւսները կապալառուներից, երրորդները, մանր ազատ կալուածատէրերից, որոնք ընկել էին բարոնի իշխանութեան տակ: Թէ առաջինները, թէ երկրորդներն և թէ երրորդները հաւասարուեցան միմեանց, որովհետեւ ամէնքն էլ ընկան միեւնոյն իշխանութեան ներքոյ: Ճորտերի վիճակը սակայն աւելի կախուած էր սովորութիւնից, քան թէ քառունի կաւալականութիւնից: Ամէն մի գեղի բնակիչները կազմում էին մի համայնք, որ ինքն էր վարում իւր տնտեսական ու դատական գործերը շինական համաժողովում: Բարոնին տասանորդ էին վճարում և շաբաթուան որոշ ժամանակը աշխատում էին նրա համար: Դժուարին էր այսպիսի կախման մէջ ապրելը, բայց յամենայն դէպս աւելի լաւ, քան թէ հին աշխարհում ստրուկներն էին ապրում: ձորտը քրիստոնեայ էր, ինչպէս և բարոնը, և ճանաչուում էր մարդ. նրան կարեւոր դիպուածում պաշտպան էր հանդիսանում եկեղեցին:

Բիւզանդիայի
Մակեդոնական
հարստութիւնը

Աւատականութիւնը քիչ թէ շատ ծաւալով տարածուեցաւ բոլոր արեւմտեան Եւրոպայի երկրներում: Արեւելքում երեւցան միայն քանի մի հաստատութիւններ, որ լիեցնում էին աւատականութիւնը, բայց ընդհանուր առամբ կենցաղավարութիւնը բոլորովին ուրիշ կերպ կազմուեցաւ: Բիւզանդական կայսրութիւնը աւելի թէ վերածնեց, երբ պատկերաւարտութեան կրօնի դադարեց: Փոքրասիական հարստութիւնը, որ ծագումն առաւ Լեոն Իսաւրացուց, վատնեց իւր բոլոր ուժերն այս կռուի մէջ: Դրան փոխարինեցին մակեդոնական ¹⁾ կայսրները:

Այս հարստութեան նախահօր, Վասիլ կայսեր, դեռ եւս մանկութեան ժամանակ բոլորներն իրենց դէպի Մակեդոնիա գործած արշաւանքներից մէկի ժամանակ գերի էին տարել: Մին-

¹⁾ Այս հարստութիւնը կոչուում է նաև Սլաւոնական կամ հակական, որովհետեւ Վասիլ կայսեր նախահայրերը հայ էին: Մ. Բ.

չեւ քսանեւհինգ տարեկան հասակը նա Բուլղարիայում ապրեց իբրեւ գերի եւ կատարեց ամենադժուարին աշխատանքներ: Փրկանք տալով յոյները գնեցին նրան, եւ նա Կոստանդնուպոլիս եկաւ առանց որեւէ ապրուստի միջոցի, մի աղքատ տիկ շապկով: Նա յառաջագոյնեց շնորհիւ իւր անսովոր մարտական ուժի, դարձաւ բիւզանդական մեծամեծների ախոռապան, ապա եւ կայսերական: Միքայէլ Գ. կայսեր արքունիքի ամենից աղղեցիկ մարդը, Վարդ կեսարը ¹⁾ սիրեց նրան, եւ, շնորհիւ դրա հովանաւորութեան, Վասիլն հասաւ բարձրագոյն պաշտօնների: Ի վերջոյ նա մասնակցեց Վարդ կեսարի գահաՎիժութեան եւ ինքը դարձաւ կեսար: Թուլամորթ Միքայէլը չէր կարողանում առանց ղեկավարների ապրել, բայց եւ չէր սիրում նրանց, այլ միշտ պատրաստ էր կորստեան մատնելու նրան, ով իշխանութեան գլուխ էր: Նա հրամայեց Վասիլն սպանել որսի ժամանակ, բայց այդ սպանութեան փորձն անյաջող անցաւ, եւ Վասիլն ի վրէժինդրութիւն ինքն սպանեց Միքայէլին եւ կայսր հռչակել տուաւ իրեն:

Վասիլը, մակեդոնական հարստութեան առաջին կայսրը, գործունեայ եւ ընդունակ թագաւոր էր: Նրան յաջողուեցաւ մի քանի անգամ յաղթանակել արաբների վրայ եւ խլել նրանց փոքրասիական երկրների մի մասը: Վասիլ յաջորդները նոյն ռզով գործեցին եւ նոյնպէս աչքի ընկնող յաջողութեամբ: Լեոն Գ., Ռոմանոս Լակապէնն ու Կոստանդին Է. Միքանեմիւնը դժուարին կռիւ մղեցին բուլղարաց հզօր թագաւորութեան դէմ: Նրանք ճարտարութեամբ օգտուեցան բուլղարների դէմ մահաոսներից, պաճենեգներից (պէչէնեգ) եւ ուսաններից: Բայց եթէ բուլղարների վերաբերութեամբ երկար ժամանակ ստիպուած էին պաշտպանողական դիրք պահպանել, ընդհակառակըն արաբների դեմ վարած կռիւներում կայսրութիւնը յառաջ էր ընթանում: Առանձնապէս հռչակուեցաւ նրանց դէմ Նիկիա փոքր Փոկասն, որ ջնջեց արաբական գաղութը Կրետէ կղզում, արար նաւատորմիչների գլխաւոր ապաստանարանը Միջերկրական ծովի արեւելեան մասում: Նրա ժամանակն իսկ սկսաւ Ստորիքի յետո գրաւումը Սրա յաջորդ Յովհան Զմէկիլը ²⁾ փրկեց կայսրութիւնը Սլեպտոպուլից եւ ուսաններից, Վերջա-

¹⁾ Կեսար կոչուում էր կայսեր օգնականն ու ժառանգը:

²⁾ Ազգաւ հայ, նախ սպարապետ արեւելքի եւ ապա կայսր Բիւզանդիայի Մ. Բ.

1018

Բիւզանդական վարչութիւն:

պէս, ամենափառաւոր յաղթութիւնները տարաւ Վասիլ Բ.: Սա սկսաւ մի ջնջիչ պատերազմ բոլղարների դէմ եւ մի շարք արշաւանքներով բոլղարիկ կործանեց նրանց զօրութիւնը: Մի յաղթութիւնից յետոյ նա կուրացնել տուաւ 15,000 բոլղար զերինքս Բոլղարիան 1018 թուին վախճանական կերպով հպատակեցաւ Վասիլին, որ իւր սխրագործութիւնների համար մականուանուեցաւ «բոլղարասպան»:

Մակեդոնական տան կայսրների զինուորական յաղթութիւնները չեն բացատրուում միմիայն զօրավարների հանճարով եւ թշնամիների սխալներով: Մեծ նշանակութիւն ունեցաւ հաստատուն կարգը, որ արմատ էր ձգել պետութեան մէջ: Իշխանութիւնը բաժանւեալ չէր եղել, այլ, ընդհանրապէս, կենդանացել էր կայսեր ձեռքում: Նրա անձն ու աստիճանը յարգանք էին զարթեցնում, որ հասնում էր ծառայամտութեան: Արքունիքում խիստ արարողութիւն էր տիրում, որի նպատակն էր կայսեր շրջապատել ամենամեծ հանդիսաւորութեամբ եւ ճոխութեամբ: Պալատական հանդիսաւոր ելքն, ընդունելութիւնները, ճաշերն յատուկ արարողութիւններ ունէին, որոնց մէջ մասնակցում էին աւագանին, պաշտօնեաներն ու սպասաւորները: Այս ամբողջ հանդիսաւորութիւնը շրջապատողներին ներշնչում էր այն միտքը, թէ կայսրիցն է ծագում ամէն մի իշխանութիւն եւ նշանակութիւն, որ նա—կենդանացումն է պետութեան: Եւ լիրաւի, նրանիցն էր կախուած բազմաթիւ պաշտօնէութիւնը, որ բաժանուած էր դասակարգերի եւ տնօրինումէր պետութեան բարձր վարչութիւնը: Ինքնաշարժութիւնն ու ընտրական սկզբունքը վերացուած էր. ծերակոյտը դեռ գոյութիւն ունէր, կայսեր շուրջը ժողովուում էր գլխաւոր պաշտօնեաներից բաղկացած խորհուրդը, բայց թէ ծերակոյտն եւ թէ պետական խորհուրդը միմիայն խորհրդակցական ձայն ունէին եւ մի որոշ ոյժ էին ձեռք

բերում միայն թույլ կայսրների եւ ներքին կռիւների ժամանակ:

Նահանգական կառավարութեան համար ամբողջ կայսրութիւնը բաժանուած էր 29 թեմի: Իւրաքանչիւր թեմի կառավարիչն էր *ուսրասեզը*. ինչպէս այս անունըն էլ ցոյց է տալիս, դա զօրքի հրամանատարն էր, որին հպատակեցրած էին եւ քաղաքացիական պաշտօնեայք: Զինուորական եւ քաղաքացիական վարչութեանց բաժանումը, որ հաստատել էր Ռիոկլետիանոսը, վերացուեցաւ: Թեմի ստորաբաժանումներն եւս զինուորական բնաւորութիւն ունէին: Գլխաւոր ուշագրութիւնը դարձուած էր առհասարակ զինուորական կազմակերպութեան վրայ: Զինուորներ առնուում էին զինուորական դասակարգից, որ կազմուած էր առաւելապէս *օսարագիներ*ից: Կայսրութեան ամեն կողմերում բնակեցրած էին զօթեր, սլաւներ, հայեր, իլլիրիացիք, որոնք սերնդէ սերունդ զինուորներ էին տալիս: Ծառայութեան վարձը, ինչպէս եւ արեւմուտքում, հողն էր: Ամէն մի նահանգում հողի մի որոշ մասը յատկացրած էր «զինուորների կալուածներին» (*ուսրաս/օսիկա կսերմասա*), եւ այս հողատէրերից իւրաքանչիւրը պարտաւոր էր բանակին մատակարարել որոշ թիւ մարդկանց, համաձայն հողի մեծութեան եւ արդիւնաբերութեան: Բենեֆիցիուումների նման, այս կալուածները ժառանգաբար էին անցնում, բայց այն զիպուածում, երբ տէրը չէր կարողանում ծառայութիւն անել, կալուածքը լանձնուում էր ուրիշին: Բոլոր այսպիսի հողաբաժիններն արձանագրուած էին այն մատենում, որ կար թեմի ստրատեգոսի մօտ: Բացի այս հողաբաժին ստացած զինուորական ծառայողներից, կայսրութիւնը պահում էր վարձկան զինեալ *ալեկից պաւերագլասէր ազգեր*ից: Պրանք կազմում էին թիկնապահների գունդը եւ ուղարկուում էին սահմանազուխների պահպանու-

թեան: Առանձնապէս գնահատուում էին վարձկան ֆըրանկները, նորմանները (վարէգ) և սլաւները:

Բիւզանդիայում կենդրոնական իշխանութիւնն իւր իրաւունքները չէր զիջանում ազնուականութեան, ինչպէս այդ էր արեւմտեան պետութիւններում: Արեւելքում գոյութիւն ունէին բոլոր երեք դասակարգերն ևս, որոնցից կազմուեցաւ արեւմուտքում աւատական ազնուականութիւնը, ազդեցիկ պաշտօնեաներ և զօրավարներ, որոնք իրենց պաշտօնական գիրքից օգտուում էին առանձնական ստացուածք ձեռք բերելու համար, խոշոր կալուածատէրեր, որոնք իրենց հպատակեցրել էին շրջաբնակ գիւղացիներին, եկեղեցիք ու վանքեր, որոնք ահագին հարստութիւններ էին ստանում ամենայն տեսակի և որոնց վանականների մոնթերի և ստորագրեալների թիւն հասնում էր հազարների: Բայց կայսրութիւնն անդադար կոխ էր մղում այս գօրաւոր մարդկանց հետ: Մակեդոնական կայսրները մի շարք հրովարտական եւ հրատարակում պաշտօնեաների զեղծումների դէմ, մինչև իսկ արգիւրում են նոր վանքեր հիմելն և եկեղեցիներին հող ընծայելը: Նրանք կարող եղան անդրդուելի պահել այն հիմնական օրէնքը, որ իշխանութիւնը ժողովրդի վրայ պատկանում է պետութեան, եւ ոչ մասնաւոր անձանց:

Ենթոյն այն հանգամանքի, որ պետութիւնը մնաց օրէնսդիր և գաւառոր, մակեդոնական կայսրների ժամանակ յոյն-հռոմէական իրաւունքը ստացաւ իւր զարգացումն: Արդէն իսկ փոքրասիական հարստութիւնը սկսել էր Յուստինիանոսի իրաւունքը յարմարեցնել յունական նահանգների առաջնակարգութիւններին, Հռոմէականից ևս ակաւ դառնալով իշխանական, այսինքն հեղեկական: Մակեդոնական կայսրները յարունակեցին այս գործը Օրէնքների ու սկզբունքների ահագին քանակութիւնը, որ ժողովուած էին Corpus juris-ի (Օրէնսգրքի) մէջ, վերաքննուեցաւ դատական գործաւարտութեան ամբողջական իշխանութիւնը իբրեւ ձեռնարկ ունենալու համար:

Այսպէս կազմուեցան ռարբայական օրէնսդրութիւնները (սաքսիկիկա):

Այս ձևով, յունական արեւելքի քարճրագոյն փաղաքարաբարձրը ազատեց նրան այն փաղաքական յոծումից, որիւ եւրպարկուեցաւ արեւմտեան եւրոպան: Բիւզանդիային վտանգ էր սպառնում ինչ թէ առանձնական անհատների և դասակարգերի կամայականութիւնից, այլ, ընդհակառակն պետութեան յափազանց պահանջներից, փաղաքացոյց ինքնագործունէութեան եւ եռանդեան պակասութիւնից: Մի առժամանակ այս վտանգի առջն առնուեցաւ այնու, որ արեւելեան կայսրութիւնն իւր մէջն ընդունեց նորեկների ահագին խմբեր: Յատկապէս շատ սլաւներ բնակեցրին բոլոր նահանգներում: Կոստանդին Ծիրանեծինն այս առթիւ ասում է, որ «արքող Յունաստանը սլաւեանաւաճաւ»: Տեղ տեղ գաղթականները բնակում էին մեծ համայնքներով և ապրում էին իրենց սովորութիւններով. բացի դրանից, նրանք ցրել եկան ամբողջ Բալկանեան թերակղզում, իբրեւ զինուորներ և հողագործներ. իսկ զուտ լոյն բնակիչները մղուեցան դէպի ծովեզրերը, ուր նախկին ճարտարութեամբ պարապում էին վաճառականութեամբ և ծովագնացութեամբ: Նոր ուժերի այս հոսանքն անգնահատելի ծառայութիւն արաւ Բիւզանդիային, դա տուաւ նրան կենսունակութիւն և ոգի և նոյն ժամանակ չը ջնջեց նրա հելլենական բնաւորութիւնը, որովհետեւ նորեկներն ընդունում էին յունական լեզուն և քաղաքակրթութիւնը:

Կայսրութիւնն իւր կողմից մեծ նշանակութիւն ունեցաւ այն սլաւեան ազգերի համար, որոնք ապրում էին նրա սահմաններին կից: Ինչպէս որ կռիւն ու տրուութիւնը յարաբերութիւնը Հռոմի հետ պետական կեանքի սկիզբը դրաւ գերմանացոյց մէջ, այսպէս էլ Բիւզանդացոյց հետ յարաբերութիւնը գլխաւոր պատճառը դարձաւ սլաւ-

ների մէջ ֆաղափացիութեան տարածման: Սլաւ ցեղերն երկար ժամանակ ապրեցին ցրիւ և կռապաշտութեան մէջ ընկղմուած և այս սլաւոնաբանով՝ չը նայելով իրենց պատերազմական բարքին Եւրոպայում երկրորդական դեր խաղացին: Նրանք սկսան Ը. և Թ. դարերում գուրս գալ այդ վիճակից. մի քանի ցեղերի մէջ երևան եկան տիրապետներ, որոնք մեծ իշխանութիւն ձեռք բերին ընդարձակ երկրների վրայ: Սլաւների տիրութիւններ կազմելու այս փորձերը միշտ կապուած էին քրիստոնէութեան ընդունելու հետ: Հէնց որ երևան էր գալիս հաստատուն իշխանութիւն, անմիջապէս և ցանկութիւն էր ծագում կրթութեամբ աշխարհների շրջանը մտնելու և զգացում էր կռապաշտութեան անպէտքութիւնը: Բիւզանդիոյ մասնից մօտիկ և վտանգաւոր դրացիքն էին սլաւոնացած բոլորները: Նրանց Բորիս իշխանը սակայն քրիստոնէութիւն ընդունեց բիւզանդացի քարոզիչներից (864): Աւանդութեան ասելով՝ նրա վրայ ազդեց մի յօյն, որ սլաւերի վրայ ներկայացրեց ահեղ դատաստանը, արգարների երանութիւնը դրախտում և մեղաւորների ու անհաւատների տանջանքը գոփաբուծ: Բորիսի կնքահայրն եղաւ Միքայէլ Գ. կայսրը: Բայց այս դարձը գէպի քրիստոնէութիւն բոլորներին չը հաշտեցրեց կայսրութեան հետ, և Բորիսը մի ժամանակ բանակցութեան մէջ մտաւ Նիկիոյի Ս. պապի հետ, որպէս զի նրանից ստանայ եպիսկոպոսներ, քահանաներ և ընդհատէ իւր յարաբերութիւնը Կոստանդնուպոլսի հետ: Հռովմէական եկեղեցին ազահաբար ձեռք առաւ այս պատրուակը Բալկանեան թերակղզու հոգեւոր գործերի մէջ խառնուելու համար: Բայց յարաբերութիւնները Հռովմի հետ չափազանց դժուարին երևեցան, և Բորիսը կրկին հպատակուեցաւ Կոստանդնուպոլսի պատրիարքին: Արևելեան եկեղեցին արդէն իսկ այն պատճառով աւելի մօտիկ էր բոլորների սրտին, որովհետեւ

ժամերգութիւնն եւ Ս. Գրքերը սլաւ լեզուով ներմուծեց: Բորիսի որդին, Սիմէոնը բոլոր բոլոր տիրապետներից մասնից հզօրն էր. նա տիրում էր Բալկանեան թերակղզու մեծագոյն մասին և խիստ նեղն էր ձգել Կոստանդնուպոլսը: Նա ինքն իրեն թագաւոր (կեսար) հրատարակեց, և իւր մայրաքաղաք Պրէսլաւում առանձին պատրիարք նստեցրեց, որպէս զի ոչ մի բանով կախումն չունենայ Բիւզանդիայից: Նրա արքունիքում սկսաւ մի աշխույժ գրական գործունէութիւն, որին մասնակցում էր և ինքը Սիմէոնը, որ իւր յօյն կրթութիւն ստացած լինելուն համար կոչուում էր «Կիսայօյն»: Այդ ժամանակ թարգմանում էին հին բոլորական լեզուով ոչ միայն Սուրբ Գրքերն, այլ նաև գիտնական շարագրութիւններ:

Կրթութեան այս արագ ծաղկման շրջանում Բոլղարիա մուտք գործեց մանրէքայոց արեւելեան աղանդը: Դրանց վարդապետութեամբ, որ կազմուել էր Ասորիքում, աշխարհս ստեղծելէին երկու աստուածներ, որոնք շարունակումն եւ այժմ իսկ մաքառել միմեանց հետ: Աւետարանը յայտնութիւն է բարի աստուծու, բայց Հին Կտակարանը յայտնութիւն էր չար աստուծոյ: Քրիստոնէութեան հիմնական հայեացքներից այսպէս խորին կերպով տարբերուելով, մանրէքայիք մերժում էին նոյնպէս եկեղեցական նուիրապետութիւնն և խորհրդները: Այս վարդապետութեան հետեւողները Բոլղարիայում կոչուում էին բողոմիլներ: 1)

Բոլղարական թագաւորի զինուորական գործութիւնն ու նոր կարգերի ու զիտութեան հոսանքը Բիւզանդիայից մասնայն կողմով լաւ ազդեցութիւն չը գործեց Բոլղարիոյ վրայ: Հասարակ ժողովուրդը ընկաւ այնտեղ նեղ վիճակի մէջ, որ նման էր արեւմտեան ճորտերի (վիլլան) վիճակին, բոլորը նախարարները (բոյեար) միանգամայն խոշոր կալուածատէրեր, գորավարներ ու դատաւորներ էին: Նրանք իրենք ևս ծանր զինուորական լուծ էին կրում, մասնակցելով բոլորուայ թագաւորի

1) Այս աղանդաւորները ծագում էին, աւելի ճիշդն ասելով, հայ պապիկեան աղանդաւորներից, որոնց բիւզանդացի գաղթեցրել էին Բալկանեան թերակղզի: Մ. Թ.

Բոլղարական տէրութեան անկումը:

անընդհատ արշաւանքներին ընդդէմ Բիւզանդիոյ, մա-
ճառների, պաճէնեզների և ուստոյ: Բորիսի և Սիմէոնի
հիմնած բոլղարական զօրութիւնը հաստատուն չ'եղաւ:
Մակեդոնական տան կախերները նախ նուաճեցին առ-
դանութեան Բոլղարիան և Թրակիան, իսկ յետոյ Մա-
կեդոնիան և Ալբանիան:

Վիլհելմ և Մե-
թոդիոս:

Մի այլ սլաւ պետութիւն, որ կազմուել է արեւ-
մուտքում, նոյնպիսի արագ բարգաւաճումն և արագ
անկումն ունեցաւ: Գերմանացոց ճնշումն ստիպեց նրանց
դրացի սլաւներին համախմբուել: Կարլոս Մեծը յաղթեց
Ելբեան սերբերին և սլովենցիներին: Բայց նրա արշա-
ւանքը դէպի Չեխեա (Բոհեմիա) անյաջող ելք ունեցաւ,
իսկ նրա մահուանից վերջը Լուդովիկոս Բարեպաշտի և
Լուդովիկոս Գերմանացու դէմ դիմադրութեան մի ամուր
կենդրոն կազմուեցաւ Մոռաւիայում: Մոռաւեան իշխան
Ռոստիսլաւը մի միջոցի ձեռնարկեց, որ ունեցաւ մե-
ծամեծ պատմական հետեւանքներ: Նա ուղարկեց Մի-
խայել Գ. կայսեր մօտ խնդրելու, որ մի վարդապետ
ուղարկէ, սլաւներին քրիստոնէական հաւատն ուսու-
ցանելու: Միքայելը հրաւիրեց Սլոււնից երկու եղբայր,
Կոստանդինին և Մեթոդիոսին, որ ուղևորուին Մո-
ռաւիա: Կոստանդինն ուսանում էր Կոստանդնուպոլսում
Փոտի ձեռքի տակ և յալտնի էր իւր գիտնականութեամբ.
դեռ ևս երիտասարդութեան հասակում նրան ուղար-
կել էին մահմետականների հետ հաւատոյ մասին վի-
ճաբանելու: Մեթոդիոսն ընդհակառակն, գործնական
և աշխատասէր էր, պետական ծառայութեան մէջ էր
մտել և հասել բարձր աստիճանի: Նա հրաժարուեցաւ
սակայն իւր ծառայութեան փայլուն ապագայից և Կոս-
տանդնի հետ միասին վաճառ մտաւ: Սկզբում նրանք դի-
մեցին Աստուծու խօսքը քարոզելու խաղարներին: ¹⁾ Ապա

¹⁾ Խաղարներն իններորդ դարում իշխումէին հարաւային
Ռուսիայում, Վոլգայի ստորին ընթացքի և Գոնի վրայ:

այլ ձև տուին այնու, որ յունական այբուբենը սլաւ-
ների համար փոխադրեցին եւ քարգնանեցին Սուրբ
Գրիգորի ու ժամագրերը: Սրանով նրանք սկիզբը դրին
սլաւեան դպութեան: Մոռաւիայից նրանց թարգմանու-
թիւններն անցան արևելք, Բոլղարիա և Ռուսիա:
Կոստանդնի ու Մեթոդիոսի հնարած այբուբենը կոչու-
ում էր «Կիւրղեան», նոյն անուամբ, որ Կոստանդինն
իբրև վանական ստացելէր: Այդ նշանագրերով են
գրուում ցարդ սլաւ եկեղեցական սրբազան գրքերը,
և դրանից է ծագել ուսական գիրը: Կիւրղի և Մե-
թոդիոսի գործունէութեան շնորհիւ մոռաւների և նրան-
ցից կախումն ունեցող ցեղերի դարձը դէպի քրիստո-
նէութիւն արագացաւ: Գործերի այս ընթացքից դժգոհ
էին Գերմանիոյ թէ աշխարհական և թէ հոգևոր պե-
տերը: Կիւրղի և Մեթոդիոսի դէմ մեղադրանքներ յա-
րուցին, որ իբրև թէ նրանք հերետիկոս են, գերմա-
նական եպիսկոպոսները պնդում էին, որ Ս. Գիրքը
ժողովրդին կարելի է կարդալ միմիայն երեք լեզուներից
մէկով, որոնցով գրուած էր Տիրոջ խաչի վերնագիրն—
եբրայերէն, յունարէն և լատիներէն: Քառօղիյնները
նոյն իսկ Հռոմի դիմեցին պաշտպանութեան համար:
ձանապարհորդութեան ժամանակ Կիւրղին հիւանդացաւ
և մեռաւ մի վանքում, ուր ապաստանարան էր գտել:
Մեթոդիոսը շարունակեց նրա գործը: Հագրիանոս Բ.
պապը ճանաչեց նրա իրաւունքը սլաւերէն ժամերգու-
թիւն կատարելու և հրատարակեց նրան Պանոնիայի և
Մոռաւիայի արքեպիսկոպոս: Բայց պապի այս վճիռն
իսկ չը հանգստացրեց գերմանացոց: Նրանք կարողացան
ձերբակալել Մեթոդիոսին և երկու տարուց աւելի պա-
հեցին բանդում: Բայց նա մինչև իւր մահը (885) պաշտ-
պանում էր սլաւեան եկեղեցու անկախութիւնը:

Սակայն գործերի ապագայ ընթացքը շահաւետ Մեծ Մոռա-
ւեան պե- տութիւնը

տարածեց իւր ազդեցութիւնը: Նա ստեղծեց մեծ մո-
նարեան իշխանութիւնը, որին միացրեց ոչ միայն չե-
խերին, այլ նաև Ելբեան սերբերին: Բայց նրա տէրու-
թեան գրութիւնը գերմանացոյ դէմ վարած կռուի մէջ
շատ վտանգաւոր էր: Ռոստիսլուի մահուանից յետոյ
Լուդովիկոս Գերմանացուն յաջողութեամբ փոխանորդ նըս-
տացնելու նրա տեղն իւր երկու կոմսերին: Ռոստիսլա-
ւի եղբորորդին Սվեստոպոլիը վռնդեց եկուորներին և
Մեծ Մոռաւիոյ զօրութիւնը վերականգնեց: Կարլոս
Հաստի ժամանակ Բաւարիան և գերմանական արևելե-
լեան սահմանագաւառները միշտ ենթարկուումէին
Սվեստոպոլիի անընդհատ յարձակումներին: Կայսրը նրա
դէմ գումարեց մեծ բանակ, բայց չը համարձակուեցաւ
նրա վրայ յարձակուիլ և խաղաղութեան դաշն հաստա-
տեց: Յարձակումից աւելի յաջող ելք ունեցան կողմնա-
կի ներգործութիւնները: Առաջին՝ Սվեստոպոլի ինկը
մերժեց սլաւեան ժամակարգութիւնը: Նա հնար չ'ու-
նէր մշտական յարաբերութիւններ պահպանելու Բիւ-
զանդիոնի և հարաւային սլաւ երկրների հետ և սկսաւ
հովանաւորել լատին եկեղեցուն: Մեթոդիոսի աշակերտ-
ներին ու հետևողներին հալածում էին, վաճառում էին
իբրև ստրուկներ: Գերմանացիք ապա օգտուեցան Մեծ
Մոռաւիայի դէմ մի սոսկալի գէնքից, որ յետոյ իրենց
դէմ դարձաւ, նրանք դաշնակցութիւն հաստատեցին
մաճառների հետ: Այս քուրթ օրդուների աշխատակից
խորհակեց արեւմտեան սլաւների մեծ պետութիւնը: Այս
իրողութիւնը նշանակութիւն ունեցաւ ոչ միայն իբրև
առժամանակեայ փորձութիւն: Իրաւ է, ջարդուած ու
աղքատացած չեխերն ու մոռաւները կրկին ոյժ առան.
կազմուեցաւ չեխական թագաւորութիւնը: Բայց մա-
ճառների տուած զարկն եւ այդ ազգի միջին Դա-
նուբի վրայ հասնաւ զաղորդ քաժանեցին արեւ-
մտեան սլաւներին հարաւայիններից եւ Բիւզանդիա-

յից: Յունական արևելքի հետ սկսուած յարաբերու-
թիւնը կտրուեցաւ: Արեւմտեան սլաւները միջուցան
դէպի Գերմանիա և սկսան ենթարկուիլ լատին քա-
ղաքակրթութեան և աւատական կազմին:

Մահմեդական աշխարհը Թ. — ԺԱ. դարերում իւր <sup>Մահմեդա-
կան պետու-
թիւնները</sup> բարեկարգութեամբ սկզբան նմանութիւն ունէր Արևել-
լեան կայսրութեան հետ, բայց յետոյ քայքայուեց, արև-
մտեան աւատական Եւրոպայի պէս: Առաջին ամիրապետ-
ների և Օմայեանց ժամանակ տեղի ունեցած աշխարհա-
կական շրջանին հետևումէ մահմեդական աշխարհի
պատմութեան մէջ խաղաղ ծաղկման շրջանը՝ Աբբա-
սեանց ժամանակը: Արաբիան դառնում է երկրորդական
նահանգ և ուխտագնացութեան տեղ. առաջ են ընկ-
նում հին արևելքի մեծ քաղաքակրթական աշխարհնե-
րը. — Միջագետքը, Պարսկաստանն և Եգիպտոսը: Աբբա-
սեանց մայրաքաղաքը, Բաղդադը, Տիգրիսի վրայ, իւր
հարստութեամբ և շքեղութեամբ սկսում է մրցել Կոս-
տանդնուպոլիսի հետ:

Այդտեղից վաճառականական պողոտաներ էին ձգուում
դէպի Ատլանդեան ովկիանոսն ու Սպանիա, Վենետիկ և Ճե-
նովա, Կոստանդնուպոլիս, դէպի Դնեպր և Վոլգա, դէպի
Հնդկաստան ու Չինաստան:

Ամբողջ աշխարհիս երեսին հռչակուածէին մահ-
մեդական Ասիայի գործուածքներն ու մետաղէ ձեռա-
գործները. աւելի պակաս նշանաւոր չէր և խնամքով
և ճարտարութեամբ մշակուած երկիրը, որ հիմնուած
էր ոռոգումից օգտուելու եղանակի վրայ: Բարձր նիւ-
թական ֆաբրիկարքութեան համապատասխան էր եւ
գիտութեանց ու գեղարուեստի յառաջադիմութիւնը:
Հարուն-էլ-Ռաշիդի պալատը Բաղդադում կենդրոն էր
նշանաւոր մարդկանց — գիտնականների, բանաստեղծ-
ների:

Բայց ամիրապետութեան բարեկարգութիւնն սկը-
սաւ աւերուիլ մի շարք պատճառների շնորհիւ, որոնք <sup>Ամիրապե-
տութեան
պառակ-
տումը</sup>

շատ կողմով յիշեցնում էին արեւմտեան Եւրոպայի կեն-
ցաղաւարութիւնը:

Նախ՝ մասմետական աշխարհի զանազան մասերի
մէջ միութիւնը չը պահպանուեցաւ, որովհետեւ այն
կրօնը, որը նրանց միացնում էր, աղանդների բաժա-
նուեցաւ:

Արդէն իսկ Օմայեանց թագաւորելով հերձուած գոյացաւ
սուննիների եւ շիաների մէջ, — առաջիններն Օթմանի մահուա-
նից յետոյ յաջորդող ամիրապետներին համարում էին օրինա-
կան ժառանգներ մարգարէի, երկրորդները պնդում էին, որ
ամիրապետութիւնը պէտք է անցնէր Ալիին եւ նրա սերնդին.
առաջինները հետեւում էին սուննիին, այսինքն՝ Ղորանի մեկ-
նութեան, որ հաստատուած էր աւանդութեամբ, երկրորդները,
մերժում էին աւանդութիւնն եւ ընդունում էին Ղորանը Ապա
պարսիկների ազդեցութեան տակ կազմուեցաւ սուփիսների
կամ դերվիշների աղանդը. դրանք քիչ նշանակութիւն էին
տալիս վարդապետութիւններին եւ Ղորանի որոշ պատուե-
րներին, այլ հաւատում էին աստուածային յայտնութեան եւ
աստուածային ուժի մարդկանց փոխանցուելուն, որով սրանք
դառնում են մարգարէք եւ հրաշագործներ. Մարգարէական
չնոր՝ ծագեցնելու համար դերվիշները պահեցողութեան էին
ենթարկում իրենց անձն եւ տանջում էին իրենց մարմինը, իսկ
կրքեմն իրենց նեարդային վիճակի էին հասցնում մի պարով,
միեւնոյն տեղում պոռոյտ գալով եւ այլն:

Կրօնական վէճերին խառնուեցան այն ցեղերի ու
երկրների տարբերութիւնները, որոնք մասն էին կազ-
մում մասմետական աշխարհի:

Սպանիայում կանգուն մնաց Օմայեանց հարստու-
թիւնը: Եգիպտոսում կազմուեցաւ Թաթմեանների ամի-
րապետութիւնը, վերջապէս առաւմտիկ նահանգների
ու քաղաքների եմիրները դարձան գրեթէ անկախ ի-
րապետներ, թէպէտեւ աղօթքի մէջ յիշատակում էին
Բաղդատի կամ Կահիրէի եւ կամ Կորգովայի խալիֆին
կամ ամիրապետին: Այս էմիրներն անընդհատ պատե-
րազմներ էին վարում միմեանց հետ, վայր էին գլո-

րում միմեանց, ապստամբում էին ամիրապետների եւ
նրանց փոխարքաների դէմ: Իրենք ամիրապետներն ա-
ւելի ու աւելի քնքշացնող պերճութեան էին անձնո-
տուր լինում, արշաւանքներին չէին մասնակցում եւ քիչ
էին խառնուում վարչական գործերին: Նրանք մնում-
էին ժողովրդի աչքում իբրեւ կրօնապետներ, մասմե-
տական կրօնի ներկայացուցիչներ. աշխարհական իշխա-
նութիւնը նրանց ձեռքից անցնում էր զօրագլուխնե-
րին կամ նախարարներին: Բաղդադում գլխաւոր նշա-
նակութիւն ունէին թիկնապահների հրամանատարները,
որոնք ստացան Էմիր-ալ-օմրա (էմիրների գլխաւոր
էմիր) տիտղոսը: Զինուորական ծառայութիւնը դարձաւ
մի դասակարգի գործ, որ բարձրացաւ միւս դասակար-
գերից եւ յափշտակեց իշխանութիւնն եւ պահեց իւր
ձեռքում: Վարձատրութիւն էին համարում հողերը,
որ տրուում էին ծառայութեան համար, ճիշդ այնպէս,
ինչպէս այդ արում էր արեւմտեան Եւրոպայում: Բացի
սրանից, ամիրապետներն ու էմիրները գնդեր էին կազ-
մում մասմետականութիւն ընդունած եւ ազատութիւն
ստացած քրիստոնեայ գերիներից: Այսպիսով մասմետա-
կանների մէջ երեւան էին գալիս լոյսներ, Փրանկներ,
սլաւներ: Բայց առաւմտայէս գնահատումէին
թուրք զօրքերը: Թուրք գնդերը ծառայում էին Բաղ-
դադում, Կահիրէում, սահմանագլխներում: Բացի սը-
րանից, Աֆղանստանում եւ Թուրքեստանում սկսան
տէրութիւններ կազմուիլ, որոնց սուլթաններն ազդե-
ցութիւն էին ձեռք բերում չրջակայ երկրներում: Այս-
պիսի սուլթան էր Ղազնայում, Կաբուլի մօտ, Թուրք
Մահմուդը: Սա տիրեց Աֆղանստանին ու Բելուջիստա-
նին, այնտեղից մտաւ Գանդէս գետի հովիտն եւ հիմք
դրաւ Հնդկաստանի մասմետական թագաւորութեան:
Թուրք-սելջուկների ցեղն, ընդհակառակը, զիմեց դէպի
արեւմուտք:

Փոքր Ասիայում հիմնուեցաւ ռում, այսինքն՝ հռովմէական, սուլթանութիւնը, որի մայրաքաղաքն էր Նիկիան—դէմ առ դէմ Կ. Պոլսին, Ասորիքն ու Պաղեստինը նոյնպէս գրաւեցին սելջուկները:

1071

Սելջուկ Տուղրիլ-բէգը սուլթան դարձաւ Բաղդադի խալիֆայութեան մէջ եւ սկսաւ նեղել բիւզանդական երկրներն Ասիայում: Նրա եղբորորդի Արփաւանը սոսկալի հարուած հասցրեց կայսրութեան, նա ջարդեց յոյն բանակն Հայաստանում եւ ձերբակալ արաւ քաջ կայսր Ռոմանոս Դիոգենին (1071):

Գ Լ ՈՒ Ն Բ.

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՊՈՒԹԻՒՆԸ.

Կարողին-
գիան հա-
րրստու-
թեան ընդ-
հատումը:

911

Գերմանիոյ թագաւոր ընտրուեցաւ տասներորդ դարում մատաղատի Լուդովիկոսը: Սրա ժամանակն երկպառակութիւնն ու անկարգութիւնն հասան իւրեանց գագաթնակէտին, մինչդեռ մաճառները, մեծմոռաւեան թագաւորութեան կործանումից յետոյ, անպատիժ կողոպտում էին գերմանական երկրներն եւ առանձին նահանգների զօրքերին ջարդում էին մի առ մի: Լուդովիկոս Տղան շուտով մեռաւ (911) եւ գրանով ընդհատուեցաւ Կարողինգեան գերմանական գիծը, որ սկիզբն էր առել Լուդովիկոս Գերմանացուց: Թագաւորի ընտրութիւնը կախուած էր գլխաւորաբար դքսերից կամ հերցոգներից, որոնք գլուխ էին կանգնած ամենանշանաւոր նահանգների—Ֆրանկոնիայի, Լոթրինգայի, Բաւարիայի, Շուաբիայի եւ Սաքսոնիայի, նոյնպէս եւ բարձր հոգեւորականութիւնից, որոնց մէջ աչքի էին ընկնում երեք արքեպիսկոպոսներ—Մայնցի, Կէօլնի եւ Տրերի:

Մի քանի տարի ներքին կռիւներից յետոյ թագն անցաւ Հենրիկոս Թաչնորսի, Սաքսոնիոյ դքսի, ձեռնութիւնը (919): Սա կարողացաւ սանձել ինքնակամ հերցոգ-

Սաքսոնա-
կան հարրս-
տութիւնը 919

ներին, բայց յատկապէս հռչակուեցաւ իւր յաղթութիւններով մաճառների, սլաւների ու դանիացոց վրայ: Մաճառների լանդգրուֆիւնն այնտեղ էր հասել, որ նրանք սկսել էին Գերմանիոյ միջով թափանցել եւ մշտնել Ֆրանսիա եւ Իտալիա—հասնում էին մինչեւ Փարիզ խի: Հենրիկոսն առանձնապէս ուշք դարձրեց նրանց դէմ ամրացրած քերդեր շիւնեյու եւ իւր զօրքերի սպառազինութիւնը լաւացնելու վրայ: Առանձնապէս պէտք եկաւ նրան զրաւ հազած հեծեալների գունդը: Նա սարսափելի ջարդ տուաւ այդ յափշտակիչներին, եւ մի առ ժամանակ խափանեց նրանց ասպատակութիւնները: Սլաւների կողմից գերմանական սահմանը հետզհետէ դէպի արեւելք էր տեղափոխուում: Նրանց դէմ գլխաւոր դէնքն էր, ինչպէս մի ժամանակ սաքսերի դէմ, նրանց թռնորթեամբ փրիստնեայ դարձնելը: Պատերազմը մղուում էր անխնայ անգթութեամբ: Մի ցեղ նուաճուելուց յետոյ, օրինակի համար, բոլոր հասակ առած տղամարդկանց կոտորեցին, կանանց ու մանկանց գերի վարեցին: Աւերուած սլաւեան բնակավայրերում ծագում էին գերմանական քաղաքներ եւ եպիսկոպոսութիւններ:

Աւելի եւս մեծ յաջողութիւնների հասաւ Հենրիկոսի որդի Ռիչարդը: Նա կարողացաւ քաշոր գերմանական դիստրիկտները քաժանել իւր ազգականներին. բայց այս միջոցն եւս խաղաղութիւնը չ'ապահովեց, եւ թագաւորն ստիպուեցաւ նուաճելու իւր իսկ ասպտամբ եղբորը, որդուն եւ փեսային: Նա կարողացաւ սակայն ապստամբներին ընկճել: Ռիչարդն իւր իշխանութեան համար նեցուկ էր լինում հոգեւորականութիւնը: Սա նախում էր Ռիչարդի վրայ ինչպէս իւր հովանաւորի ընդդէմ աշխարհական իշխանների բռնութեանց, եպիսկոպոսներն ու վանքերը սիրով էին ուղարկում նրան օգնութեան իւրեանց մարդկանց: Մաճառներին Ռիչարդ

955

Վարչութեան վերականգնումը

վճռական հարուած հասցրեց Լեւոն գետնի ամբերին, Առաքելը (955):

Ոթոն Ա. Հենրիկոս Թաւրոսից տարբերուում էր նրանով, որ չէր սահմանափակուում միմիայն այն գործերով, որոնք ուղղակի Գերմանիային էին վերաբերում: Իտալիայում աւատական շփոթութիւնը շատ աւելի զօրաւոր էր, քան մի ալ տեղ: Կարօլինգեան հարստութեան ընդհատումից յետոյ կայսերական տիրոջն անցնում էր մի կամ միւս փառասէր իշխանի, բայց ոչ ոք չէր կարողանում հաստատուն իշխանութիւն ստեղծել: Կարլոս Մեծի նման Ոթոնը խառնուեցաւ հռովմէական գործերին: Աշխարհական իշխանութիւնը, որ պապերն ստացել էին Պիպինից ու Կարլոս Մեծից, վտանգաւոր պարգև երևեցաւ: Պապերն ընկնում էին աւատական իշխանների բոլոր մանր ընդհատումների ու խարդաւանանքների մէջ: Նրանց ընտրութիւնն ու վարչութիւնն սկսաւ կախումն ունենալ հռովմէական մեծամեծներից, որոնք պապ էին նշանակել տալիս իրենց ազգականներին ու բարեկամներին, գահավէժ էին անում նրանց իրենց հաճոյից համաձայն, նրանց մասնակից էին անում իրենց անօրէն ու խայտառակ կեանքին: Ոթոնի Իտալիայում երևելու ժամանակ պապ էր շուայտ ու զեղի Յովհաննէս ԺԲ., որ աւելի հետաքրքրուում էր ուրախ խընձողներով, քան թէ աստուածաբանական խնդիրներով կամ եկեղեցական վարչութեամբ: Ոթոնը գումարեց եկեղեցական ժողով պապին դասելոս համար և, երբ մեղադրանքն հաստատուեցաւ, գահաւէժ առաւ Յովհաննէս ԺԲ.-ին և նրա խոխարէն նստացրեց իւր համախոհներից մէկին: Թէ Իտալիայում, և թէ Գերմանիայում այս հօր թագաւորին համարում էին արժանաւոր ժառանգ հռովմէական կեսարների և Կարլոս Մեծի, որը նոյնպէս իւր հովանաւորութեան տակն առաւ հռովմէական քահանայապետի գահն և դարձաւ

եկեղեցու աշխարհական ղեկավարն: Այս հայեացքների ազդեցութեան տակ, Որոնը 962 թուին ստանձնեց կայսր տիտղոսն և կայսերական թագը կապեց սուրբ Պետրոսի տաճարում: Նրա յետագայ քայլերն ուղղուած էին առ այն, որ տիրապէս հարաւային Իտալիային, ուր իշխում էին լոյներն ու սարակինոսները: Այս նպատակի համար պսակեց նա իւր որդուն բիւզանդական կայսերական առն իշխանուհու հետ. որով լոյս ունէր զիւրացնելու լոյն քաղաքների տիրապետութիւնը: Մահն արգիլեց նրան սկսած գործն աւարտելու (972):

962

972

Նրա որդին Ոթոն Բ. նուաճեց Նէպոլիսն և Տարէնտը, բայց սարակինոսները նրան մի վճռական հարուած տուին: Նա մեռաւ երբ պատրաստուում էր նոր արշաւանքի սարակինոսաց դէմ և թողեց իրրեւ ժառանգ Ոթոն Գ.-ին եռամեայ հասակում: Ծնորհիւ հոգեւորականութեան աջակցութեան, այդ մանուկը դարձաւ գերմանացոյ թագաւոր. նրան դաստիարակում էին և նրա փոխարէն կառավարում նրա տատ Աղէլ-հայդն ու մայրը Թէոփանոն: Նա շատ լաւ կրթութիւն ստացաւ, լաւ գիտէր յունարէն և լատինարէն ու ներշնչուած էր գասական հնութեան յիշատակներով: Չափահաս դառնալուն պէս Ոթոնը կայսր թագադրուեցաւ և վերակոչուեցաւ Իտալիկոս, Ռոմանոս, որի հետ միասին ձգնեց վերականգնել հռովմէական պալատի արարողութիւնները: Նա երբեք երազում չէր տեսնում իշխանութեան մասին, երբեք փրկութիւն եր որոնում պահի, աղօթի և անսպասակականների հետ խօսակցութեան մէջ: Երբ նա մեռաւ, թագաւորական իշխանութիւնը շատ էր տկարացել չնորհիւ նրա ընդարձակ ծրագրների և երկար ժամանակ Իտալիայում ապրելուն:

Սաքսոնական հարստութեան վերջին թագաւորի, Հենրիկոս Բ.-ի մահուանից յետոյ (1024), գերմանական իշխաններն լաջորդ ընտրեցին նրան ժրանկոնեան հերցոգ Կոնրադ Բ.-ին:

Ֆրանկո-
նեան հա-
րստութիւն:
1024:

Սրա գլխաւոր յաջողութիւնն էր Բուրգունդիոյ գրաւումը, ուր ընդհատուել էր տեղական թագաւորների հարստութիւնը: Իտալիայում Կոնրադ Բ. յենուում էր մանր ասպետութեան

վրայ ընդդէմ իշխանների եւ խոշոր հողատէրերի. արդիւնք սե-
նեօրներին (տանուտէր իշխան) խլելու աւատական հողերն ի-
րենց վաստակներից կամ նրանց ժառանգներից առանց պէրերի
դատարանի վճռին:

Մերձաւորապէս այդ ժամանակները ֆրանսիական
նորմանների մի գունդ, որ Սուրբ Երկրի ուխտագնա-
ցութիւնից էր վերադառնում, օգնեց Սալեռնոյի բնա-
կիչներին սարակինոսների յարձակումն լետ մղելու: Սը-
րանից յետոյ Նորմանդիայից գաղթողները խմբերով
ուղղուում էին այդ գեղեցիկ վայրերը բախտ որոնելու,
ուր ընդհարուում էին յունները, լանգոբարդները, սա-
րակինոսները, հռովմէացիք ու գերմանացիք:

Կլիւնիական
շաժումն:

Կոնրադ Բ-ի որդու, Հենրիկոս Գ-ի ժամանակ ա-
ռանձին աչքի ընկնող նշանակութիւն ստացան իտալա-
կան գործերը: Պապերը կրկին ընկան Հռովմին գրացի
մեծամեծ կալուածատէրերի ազդեցութեան տակ: Դրանց
ձեռքով հռովմէական քահանայապետութեան գահի
վրայ բարձրացածները յայտնի էին իրենց կատարեալ
արհամարհանքով դէպի եկեղեցական կանոնները, բա-
րոյական պահանջները, մինչև իսկ դէպի վալելչականը:
Դրանցից մէկն օրինակ՝ իւր ապօրէն գործունէութիւնը
աւարտեց նրանով, որ հռովմէական պապութիւնը վա-
ճառեց մեծ գնով մի հռովմայեցի հարստի: Մինչդեռ
արեւմտեան քրիստոնէութեան կենդրոնում—Հռովմում
այսպիսի մի անառակութեան բոյն էր կազմուել, ժողո-
վրդի մեծամասնութեան և հոգեւորականութեան լա-
ւազոյն բաժնի մէջ աւելի և աւելի հզօր էին հնչում
բողոքներն եկեղեցու անկման դէմ և արտայայտուում
էին ցանկութիւններ նրա մէջ բարքերի մաքրութիւնն
ու խտտութիւնը վերականգնելու մասին: Եկեղեցուն
էին պաշտօնեցնում Փրկչի խօսքերը. «գութ էք աղ երկ-
րի, եթէ աղն անհամիցի, ապա ի՞նչ լաղիցի»: Հոգեւո-
րականութեան քարեփոխութիւն պահանջող շարժ-
ման եռանդուն պաշտպան եւ այդ գաղափարի տա-

րածող եղան Քրանսիական Կլիւնի¹⁾ վանքի կրօնա-
ւորները: Կլիւնիականները քարոզում էին աշխարհա-
կան շահերից և կեանքի եղանակից հրաժարումն. Հեն-
րիկոս Գ. համակրում էր կլիւնիական շարժման, ինչ-
քան այդ վերաբերում էր ախմօնականութեան, ալսին-
քըն՝ եկեղեցական պաշտօնների վաճառման, և եկեղե-
ցու մէջ տիրող անկարգութեան: Հենրիկոսն երեք ան-
գամ պապ նշանակեց:

Նորմաններն ամեն օր յառաջադիմութիւն էին անում
իտալիայում: Նրանց գլուխ անցան Տանկրէդ Գոտեվիլցու որ-
դիքը. աւագը, Վիլհէլմ Երկաթի բազուկը, հռչակեց իրեն Ապու-
լիայի հերցոգ եւ սկսաւ յարձակուիլ Բենեւենտի վրայ, որ
դառնում էր Լեոն Թ. պապի հովանաւորութեան տակ: Պապը
զօրքով դէմ դուրս եկաւ նորմաններին, բայց պարտուեցաւ
և գերի բռնուեցաւ: Յաղթողները նրան ամեն յարգանաց նը-
շաններ էին ցոյց տալիս, օրինակ՝ համբուրում էին իրենց գե-
րու կօշիկը, բայց իրենց գործն արդէն կատարել էին—գրաւել
էին Բենեւենտն ու ստիպել պապին թողութիւն տալու իրենց
մեղքին, որովհետեւ յանդգնել էին դիմադրութիւն անելու քա-
հանայապետին: Այսպիսով, Լեոն Թ-ի, իբրեւ աշխարհական
իշխանի, անկախ գործելու փորձն շատ մեծ անյաջութեամբ վեր-
ջացաւ. նա ինքն եւս այս անարգանքից յետոյ երկար չպարեց,
իսկ նրա մահուանից յետոյ Հռովմի բնակիչները կրկին դիմե-
ցին կայսեր, խնդրելով որ հանգուցեալին յաջորդ ցոյց տայ:

Նոյն ժամանակ, երբ պապութիւնը ստիպուած <sup>եկեղեցեաց
բաժանումը:</sup> էր բաւական ողորմելի դեր խաղալու իտալական գոր-
ծերում, նա նորից հանդէս եկաւ իւր պահանջներով
տիեզերական եկեղեցին ղեկավարելու և ամենախիստ
կերպով զինուեցաւ արեւելեան եկեղեցու դէմ: Ծիրա-
նաւոր Հումբերտը, կլիւնիական կուսակցութեան առաջ-
նորդներից մէկը, 1054 թուին Կոստանդնուպոլսի սուրբ
Սովիալի տաճարի սեղանի վրայ դրաւ պապի մի կոն-
դակը, որով նզովքի էր մատնուում ամէն ոք, որ չէր
համաձայնում հռովմէական եկեղեցու հետ: Սրանով

¹⁾ Բուրգունդիայում, Մակոնի մերձակայքում:

վերջնականապէս հաստատուեցաւ Նիկողայոս Ա. պապի ժամանակ սկսուած եկեղեցեաց բաժանումն արեւելեանի և արեւմտեանի, կամ, ինչպէս այժմ տեսնուած, հռովմէական-կաթոլիկ և օրթոդոքս (ուղղափառ) եկեղեցիներին:

Հիշեցրանք, Հենրիկոս Գ-ին յաջորդեց նրա մատաղատի որդին Հենրիկոս Գ., իսկ նրա անչափահասութեան ժամանակ գերմանական թագի ազդեցութիւնն Իտալիայում հարկաւ տկարացաւ: Հոգեւորականութեան ազատման ու բարձրացման ձգտող կուսակցութեան ոգին դարձաւ հռովմէական աւագ սարկաւագ Հիլդէբրանդը: Սա տոսկանացի գիւղացու որդի էր, բայց հոգեւորականութեան մէջ ստոր ծագման տէր մարդն էլ կարող էր իւր ընդունակութիւններով և վաստակներով յառաջագնացել: Հիլդէբրանդը դարձաւ կապելլան, այսինքն՝ պապի դրան քահանայ: Ապա մի առժամանակ ապրեցաւ Կլիւնիում: Հռովմ վերագոյնացուց լեւոյն աչքի ընկնող դիրք գրաւեց բարեփոխութեան ձգտող կուսակցութեան մէջ, և սրան ուղարկեցին Հենրիկոս Գ. կայսեր մօտ բանակցելու Լեոն Թ. պապից լեւոյն քահանայապետական աթոռին գահակալ նշանակելու համար: Հիլդէբրանդը գլխավորութիւնների առաջ լեւոյն նահանջել և տարուբերուել չը գիտէր. նա անպայման հաւատում էր իւր գործի արդարութեան և ծառայում էր նրան իւր կրքոտ բնավորութեան բոլոր ջերմութեամբ: Կլիւնիական շարժման համախոհներից նրան մերձաւոր մէկը կէս մի կատակով և կէս մի լրջօրէն նրան կոչել էր «սուրբ Սատանայ»:

Պապական գահին հէնց առաջին թափուր մնալու առթիւ, որ պատահեցաւ Հենրիկոս Գ-ի ժամանակ, հռովմէացիք պապ ընտրեցին, առանց գերմանական կայսեր պալատի կարծիքն հարցնելու: Ապա Հիլդէբրանդը Նիկողայոս Բ. պապի ընտրութիւնը յաջողացրեց, որ հռովմէական երկրի բարձր հոգեւորականութեան ընտրելին էր, այս անգամ եւս կայսեր հաճութիւնը

չ'առնելով եւ հակառակ հռովմէական աւագանու ցանկութեան: Այս մասնաւոր յաջողութիւնները աւելայն չէին ապահովում, որ ապագայում պապութիւնը կրկին խաղալիկ չի լինի աշխարհականների—հօր կայսեր եւ հռովմին դրացի բարոնների կամ նոյն իսկ հռովմէական ամբոխի ձեռքին: Այս պատճառով Նիկողայոս Բ. Հիլդէբրանդի ազդեցութեան տակ հրովարտակ հրատարակեց, որով հաստատուեց պապի ընտրութեան կարգը, այսուհետեւ վճռական ձայնը տրուում էր կարդինալներին (ծիրանաւոր)—հռովմէական երկրի եպիսկոպոսներին, հռովմէական գլխաւոր եկեղեցեաց քահանաներին եւ մի քանի սարկաւագներին. ծիրանաւորների ժողովը յայտնում էր իւր ընտրելու մասին հռովմէական աւագանուն եւ ժողովրդին ու խնդրում նրանց համաձայնութիւնը: Այսպիսի կարգով թագաւորի իրաւունքը զրոյի էր հաւասարուում: Այս նոր եղանակը փորձուեցաւ Նիկողայոս Բ-ի մահուանից յետոյ: Հռովմէական աւագանու անդամները, զգոհ իրենց երկրորդական դիրքից, որ Հիլդէբրանդը յատկացրել էր դրանց, գլխեցին Հենրիկոս Գ-ին, որ օգտուի պապ նշանակելու իրաւունքից, որը պատկանում էր իւր հօրը: Այսուամենայնիւ Հիլդէբրանդը պապական գահին վրայ բազմեցրեց իւր թեկնածուն, Ալէքսանդր Բ. պապին: Այս գործի մէջ նրան աջակցեցին իտալական նորմանները:

Երբ Հենրիկոս Գ. ինքը գլուխ կանգնեց կառավարութեան, հասկացաւ, որ կայսրութիւնն անհաստատ հողի վրայ է, որովհետեւ թագաւորն ու կայսրը չունին մի երկիր, որ ամբողջապէս իրենից կախումն ունենայ: Եւ ահա, հէնց որ յաշխախաւ դարձաւ, նրա առաջին գործն եղաւ իրեն համար մի մշտական եւ միասնական ներքին և արտինքն իշխանութեան մէջ: Նա այդ նպատակի համար ընտրեց Սաքսոնիան և սկսաւ շինել այն տեղ իւր համար բնակավայր և կառուց մի շարք ամուր բերդեր: Այս փորձն հակառակ էր բոլոր աւանդութիւններին և սովորութիւններին և հանդիպեց բացարձակ զիմադրութեան: Սաքսոնացիք յայտարարեցին, որ իրենք չեն տանիլ ստրկութեան. աւագանին և ռամիկը միակերպ զայրացած էին Հենրիկոսի վրայ և միաբան պատերազմի դուրս եկան նրա դէմ: Թագաւորը նրանց

Հենրիկոս Գ-ի քաղաքականութիւնը.

դէմ կռուելու լենուում էր հարաւային գերմանացոց ու հոգեւորականութեան վրայ, բայց հէնց այդ ժամանակ նրա ազդեցութիւնը հոգեւորականութեան վրայ խախտեց պապը: Հիդէբրանգը, որ վաղուց արդէն ղեկավարում էր պապերին, 1073 թուին պապ ընտրուեցաւ Գրիգոր Է. անուամբ: Սա յիշեցրեց արեւմտեան եկեղեցուն, որ նրա իսկական գլուխը ոչ թագաւորն է և ոչ կայսրը, այլ պապը:

1073

Գրիգոր Է.

Գրիգոր Է. պապական գահը բարձրացաւ թէ չէ, անմիջապէս յայտարարեց եկեղեցական ժողովում այն սկզբունքները, որոնց ինքը պիտի հետեւէր եկեղեցու կառավարութեան մէջ: Նա քահանայից արգիլեց անպայման կերպով ամուսնանալ և պահանջեց, որ այսուհետեւ բոլոր հոգեւոր պաշտօնների նշանակումները կատարուին կանոնական ընտրութեան¹⁾ համաձայն և հոգեւոր իշխանութեան հաստատութեամբ, և ոչ այսպէս կոչուած *ինվեսիստուայի* ²⁾ զօրութեամբ, այսինքն՝ որ հոգեւոր պաշտօնն իբրեւ աւատ, աւանդէ աշխարհական տանուտէրը կամ սենիօրն եկեղեցական վաստակին: Թէ մէկ և թէ միւս միջոցի նպատակն էր եկեղեցին զատել աշխարհական կեանքից: Աւատականութիւնը զբաւէլ էր ամբողջ հասարակութիւնը, պաշտօնները, պետական ծառայութիւնը, գատական իշխանութիւնը, վարչական պարտականութիւնները, նոյն իսկ մարդկանց բարոյական ու կրօնական առաջնորդութեան հոգսը — այս ամէնը կապուած էր անքակտելի կերպով հոգատիրութեան հետ, հողերի ժառանգական աւանդման և զբանց աւատական յորաբերութեան հետ: Եւ ահա, այս անկարգութեան դէմ հանդէս դուրս եկաւ կլիւնիական կուսակցութիւնն և դրա պարագլուխ Գրիգոր Է. պապը:

¹⁾ Թրինակի համար՝ եպիսկոպոսին պիտի ընտրէր նրա թեմի եկեղեցականաց ժողովը:

²⁾ «Investire» բառից, որ կը նշանակէ զգեցուցանել:

Քահանայից ամուսնորսիւնը (*սեյիքս*) զրկումէր հոգեւոր անձանց ազգակցական կապերից շրջապատող աշխարհի մէջ, առանձնացնում էր նրան աշխարհից և պէտքէ, պապի կարծիքով, նրան դարձնէր եկեղեցու առաւել ևս ջերմեռանդ պաշտօնեայ: Ինվեսիստուայի դէմ կոխը խախտում էր եկեղեցական հողերի աւաստական կախումն. եպիսկոպոսը, վանահայրն ու քահանան պիտի հոգեւոր հովիւներ լինէին, և ոչ վաստակ ալս կամ այն թագաւորի և իշխանի:

Նոյն իմքն հոգեւորականութիւնը սիրով չը հրապաստակուեցաւ այս խիստ քարեփոխութեան: Մի քանի թեմերում կղերիկոսներն ոտքի էին կանգնում պապի նուիրակների ընդդէմ, վնդում էին նրանց, գահաձորում, հրաժարուում էին բաժանուել կանանցից ու ընտանիքից: Առանձնապէս թշնամաբար ընդունուեցան պապի հրամանները Գերմանիայում:

Հենրիկոս Դ. չէր կարող անմոռնչ կերպով հրաժարուիլ ինվեստիտուրայից (տուչութեան իրաւունքից) եւ գերմանական բարձր հոգեւորականութիւնը նեցուկ էր նրան, Վորմսի եկեղեցական ժողովը սահմանեց, որ, քանի պապը խլում է եպիսկոպոսների իշխանութիւնն եւ ձգտում է ստրկացնելու եկեղեցին, պէտք չէ նրան հպատակիլ: Հենրիկոս Դ. իւր կողմից հրատարակեց, որ պապը կործանում է հասարակական կարգը, որ հիմնուած է Աստուածային շնորհով սրբագործուած երկու սկզբունքի վրայ, — քաղաքական իշխանութեան եւ քահանայութեան (*regnum, sacerdotum*): Թող ուրեմն պապը, որ չլիթում է այս սկզբունքները, վայր իջնի իւր գահից եւ տեղի տայ աւելի արժանաւորին:

Բայց Գրիգոր պապին չէր կարելի ոչ վախեցնել և ոչ ճանապարհից շեղել: Ի պատասխանի այս սպառնալիքներին նա քաւնադրեց անհնազանդ եկեղեցականներին և նոյն իսկ թագաւորին: Բանադրուածները պէտք չէ մասնակցէին ժամերգութեանց, եկեղեցու խորհրդները կորցնում էին իրենց ոլորը նրանց վերաբերու-

Թեամբ, բանադրութեան մէջ մեռածները զրկուում էին երկնքի արքայութիւնից: Իսկ ինչ վերաբերում էր թագաւորին, պապը բանադրութիւնից յետոյ ազատեց նրա հպատակներին երդումից և զրկեց նրան թագաւորական պատուից: Այսպիսով պապը ոչ միայն վիճի մտաւ Կարլոս Մեծի, Ութոն Ա-ի և Հենրիկոս Գ-ի յաջորդի հետ, այլ կարգադրութիւն արաւ նոյն իսկ նրա թագի մասին:

Վանոսսա:

Պապին դաշնակից հանդիսացան նոյն այն ֆէոդալները, որոնց ազդեցութիւնից նա ձգտում էր ազատել եկեղեցիին: Ով Գերմանիայում դժգոհ էր Հենրիկոս Գ-ից, արձագանգ տուաւ պապի կոչին: Հարաւային գերմանական հերցոգներն յայտնապէս ապստամբեցան թագաւորի դէմ, սաքսոնացիք կրկին խլրտեցան, բարձր հոգեւորականութիւնը, որ նոր էր դատաւարտել Գրիգորին, շփոթուեցաւ նրա վճռականութիւնից և սարսափահար եղաւ ժողովրդի ստորին դասի մէջ առաջացած շարժմամբ, սրանք համակրում էին բարեփոխութիւններին և ապստամբութիւններ էին յարուցանում պապի թըշնամեաց դէմ: Ինքն Հենրիկոսը գլուխը կորցրեց: Զմեռը 1077 թուին յանկարծ նա ուղևորուեցաւ սակաւաւոր շքախմբով դէպի Իտալիա: Պապն այդ ժամանակ գտնուում էր Վանոսսայում, իւր հաւատարիմ կուսակից Տոսկանայի մարկկոմսուհի Մաթիլդայի զղեկում: Հենրիկոսը դիմեց Վանոսսա, բայց նրան ներս չը թողին: Նա դեսպաններ ուղարկեց Գրիգորին, որոնց յանձնեց հպատակութիւն յայտնելու, պապի պահանջներն ընդունելու հաւանութիւն տալու և բանադրանքի վերացման համար աշխատելու: Պապն *usqueque* թագաւորին երեւ *or* սպասելու իւր վճռին դիմելի պարտաւորելի առաջ, *grsno*, ապաշխարողի զգեստով եւ գրչխաբաց: Վերջապէս Գրիգորն ընդունեց թագաւորին և բանադրանքը վերցրեց:

1077

Բայց այն ստորացումն, որին ենթարկեց իւր անձը Հենրիկոսը, սպասուած պտուղները չը տուաւ: Գերմանական իշխաններն ոչ միայն զէնքերը վայր չը դրին, այլ ընտրեցին շուաբական հերցոգին թագաւոր փոխանակ Հենրիկոսի: Սա սրտապնդուեցաւ և վճռեց մաքաւելու, ինչ էլ որ լինէր: Նրան յաջողուեցաւ բազմաթիւ կուսակիցներ զրաւելու:

Բարձր հոգեւորականութեան մի մասն անցաւ նրա կողմը, որովհետեւ տուչութեան իրաւունքի (ինվեստիտուրա) վերացմամբ վախենում էր պապից կախման մէջ ընկնելու, ստորին հոգեւորականութեան մէջ թագաւորին պաշտպանում էին աւուսնացած ֆահաւայ: Բացի սրանից, նա իւր կողմը գրաւեց մանր աւալեցներին եւ մեծ ֆալաֆներին բնակիչներին, որ հարստանում էին եւ ճգնում ազատուել սենիորների ճնշումից: Պապը կրկին անցաւ թագաւորի թշնամեաց կողմը, նորից բանադրեց նրան եւ դահազուրկ հրատարակեց: Այս առթիւ Գրիգորն հրատարակեց, որ առաքեալները Գրիստոսից իրաւունք ստանալով կապելու եւ արձակելու մարդկանց խիղճը, այդու իսկ կարգուածին ինչպէս եկեղեցու, նոյնպէս եւ աշխարհի գլուխ: Եթէ առաքեալների յաջորդը կարող է տնօրինել հոգեւոր պաշտօնների բաշխումն, ուստի առաւել եւս իշխանութիւն ունի նա թագաւորութեանց ու իշխանութեանց վրայ:

Հենրիկոսը չը սպասելով Գերմանիոյ խաղաղացման, ուղևորուեցաւ Իտալիա, որպէս զի պատժէ իւր խնստագոյն թշնամուն—պապին: Նա միւսնոյն ժամանակը ճգնում էր, որ գերմանական և իտալական հոգեւորականութեան մի մասը Գրիգորի փոխարէն պապ ընտրէ Հռովմանայի արքեպիսկոպոսին, թագաւորի կուսակիցին: Հենրիկոսը Հռովմում յամառ դիմադրութեան հանդիպեցաւ, բայց տիրեց քաղաքին և կայսր պսակուեցաւ: Գրիգորին ուրիշ միջոց չը մնաց այլ ևս, քան թէ նորմանների օգնութեան դիմելու, որոնք մինչ այդ ժամանակ տիրել էին ամբողջ հարաւային Իտալիային: Նրանց հերցոգը Ռոբերտ Գիւլիսկար մեծ զօրք ժողովեց, որոնց մէջ, ի թիւս այլոց ընդունուել էին և սարակինոսներ,

և եկաւ պապին ազատելու: Կայսրը չը վստահացաւ իւր ոյժերը չափելու նրա հետ և յետ դարձաւ Գերմանիա: Գիւլսկարն առաւ Հռովմն յարձակմամբ. նրա նորմաններն ու սարակինոսները անգթօրէն կողոպտեցին քաղաքը նոյն իսկ պապի աչքի առաջ: Վերջինս այս ստորացումից յետոյ երկար չ'ապրեցաւ, մահուանից առաջ նա ասաց իւր մերձակորներին. «ամբողջ կեանքս ես սիրեցի ճշմարտութիւնն և ատեցի անիրաւութիւնը, ուստի և մեռնում եմ աքսորի մէջ.» 1085:

1085

Ուրբանոս Բ.
Հենրիկոս Դ.

Փրիգոր Ե-ի ընդհատուած գործի համար շուտով և շարունակող գտնուեցաւ, — Ուրբանոս Բ.: Սա յայտարարեց, որ հաւանութիւն է տալիս այն ամենին, որին հաւանում էր Փրիգորն և մերժում է ամեն ինչ, որ նա էր մերժում: Սրան իբրեւ պարիսպ կայսեր ընդդէմ ծառայում էին Մարիլդա մարկկոմսուհու կալուածները, որոնք պաշտպանում էին Հռովմը հիւսիսից, իսկ Իտալիայի կողմից յենուում էր սա նորմանների աջակցութեան վրայ: Հենրիկոս Դ. չը կարողացաւ ձեռք ձգել իւր գլխաւոր հակառակորդին և ստիպուեցաւ բաւականանալ այն կռուով, որ վարում էր փոխոխակի յաջողութեամբ իւր անհնազանդ գերմանական ու լոմբարդական վասսալների դէմ: Ծերութեան հասակում յոգնած զինուորիս դէմ ոսֆի կանգնեցին իւր իսկ որդիքը, նրա երկրորդ որդին Հենրիկոսն իւր կողմը գրաւեց մեծ ոյժ, և ծերունի կայսրը մի ժամանակ ստիպուեցաւ պաշտպանութիւն որոնել չեխերի մօտ: Հօր և որդու զօրքերը 1106 թուին Հռենոսի ափին միմեանց դէմ էին ճակատած, երբ մահն յանկարծ յափշտակեց Հենրիկոս Դ-ին:

1106
1106

Նոր թագաւորը մի առ ժամանակ իւր հօր շաւղով ընթացաւ: Կոմսուհի Մաթիլդան մեռել էր և իւր ահագին կալուածները կտակել հռովմէական գահին: Հենրիկոս Ե. չէր կամենում թոյլ տալ, որ պապի աշ-

խարհական կալուածներն այդքան մեծանան և շարունակում էր պնդել կայսեր տուչութեան իրաւունքի վրայ գերմանական և իտալական թագաւորութիւնների և բարձր հոգեւորականութեան վերաբերութեամբ: Բայց թէև նա գրաւել էր Հռովմն և խիստ նեղում էր Գրիգոր Ե-ի յաջորդներին, սակայն նրա սեփական զիրքի անհաստատութիւնը նոյն իսկ Գերմանիայում կրկին մեծ ծառայութիւն արաւ պապերին: Երկու կողմն էլ յոգնեցան այս կռուի մէջ, և 1122 թուին Հենրիկոս Ե-ի և Կալիստոս Բ-ի պապի միջև կռուեցաւ այսպէս կոչուած Վորմսեան կոնկորդասը, որի զօրութեամբ եկեղեցական պաշտօնեաները պիտի կարգուէին կանոնական ընտրութեամբ եւ պապերի հաստատութեամբ, իսկ ապա կայսրը, իբրեւ աշխարհական պէս, պիտի տար ձեռնադրութիւն իշխանական իրաւունքի, կալուածներ և բենեֆիցիումներ, որ կապուած էին հոգեւոր պաշտօնի հետ: Մեծ վէճիս այս լուծման մէջ շատ բան պարզ չէր: Պարզ չէր, օրինակ, թե՛ պէտք էր անել, եթէ աշխարհական պետը մերժէր եկեղեցու ընտրեալին տուչութիւնը (ինվեստիտուրան): Բայց այս ելքն անգամ մի շնորհ էր, որովհետեւ մի առժամանակ ընդհատեց վէճերն ու անկարգութիւնները, որ պառակտում էր արեւմտեան քրիստոնեայ աշխարհը:

1122

Հենրիկոս Ե-ի մահուանից յետոյ գերմանական իշխաններն ստիպուած եղան զահին ժառանգ տալու համար ընտրութիւն անել երկու հզօր հարստութեանց մէջ: Մի կողմից կանգնած էր Վելֆերի հզօր տունը, որ ունէր շատ հոգեր Իտալիայում և տիրում էր Գերմանիայում երկու գրաստութեանց — բաւարականի ու սաքսոնականին: Միւս կողմից, Հենրիկոս Դ-ի վասսալների դէմ մղած պատերազմներում առաջ էր անցել Հենրիկոսին հաւասարիւմ Հոհենշտաուֆենների տունը: Ընտրական ժողովում այս վերջիններիս կուսակցութիւ-

իշխաններին հարստութիւնը

1138

Փրիդրիկոս
Բարբա-
րոսաւ:

նը յաղթանակ տարաւ, և շուաքական հերցոգն ընտըր-
ուեցաւ թագաւոր Կոնրադ Գ. անուամբ (1138): Վել-
ֆեանները չը հպատակուեցան, և սկսաւ ներքին կռիւ:
Կոնրադի եղբորորդուն ու յաջորդին, Փրիդրիկոս
Բարբարոսային (շեկամօրուսին) յաջողուեցաւ սկզբում
իբրեւ թէ խաղաղութիւնը վերականգնել: Վելֆերի
տան գլխաւորի, Հենրիկոս Առիւծասրտի վրայ նա հաս-
տատեց նրա գերմանական գքսութիւնները, սակայն
Բաւարիայից բաժանուեցաւ այդ ժամանակ արեւելեան
սահմանագաւառը, որ կոչուեցաւ Աւստրիական գքսու-
թիւն: Գերմանիայում համաձայնութիւն կայացնելով՝
Փրիդրիկոսն ուղևորուեցաւ Իտալիա կայսերական թագը
ձեռք բերելու համար:

Մեծ քաղաքի (Հռոմի) բնակիչները բազկացած էին
երեք դասակարգից. առաջանուց, որոնք կապեր ունէին չըր-
ջակայ բարոնների հետ, ասպետներից (վաւասոր) եւ մանր ա-
րուեստաւորներից ու առեւտրականներից: Վերջին երկու դա-
սակարգերս միացան բարձր դասակարգի եւ պապի դէմ: Սրանց
յաջողուեցաւ քաղաքն իրենց ձեռքն առնել եւ այնտեղ հա-
սարակապետութիւն հաստատել: Հին Հռոմի աւանդութիւն-
ները կենդանացան, կառավարութիւնը յանձնուեցաւ ամենից
յարդուած քաղաքացիներից ընտրուած ծերակուտին, գլխաւոր
գործերի համար ժողովուրդն էր ժողով կազմում: Այս շարժ-
ման ոգին էր Առնոլդ Բրէշիացին, Փարիզում ուսած աստուա-
ծաբան, որ շատ տանջուել էր իւր հերետիկոսական կարծիք-
ների համար եւ որ Հռոմէր եկել քարոզելու պապի, հոգեւո-
րականների աշխարհական կեանքի եւ աշխարհական տիրապե-
տութեան դէմ: Փրիդրիկոս Հոնէնշտաուֆէնն այս ծանր ժա-
մանակիս նեցուկ եղաւ պապին, չը նայելով որ Առնոլդը եւ
ծերակուտը պատրաստ էին նրան լիազօր կայսր ճանաչելու:
Բայց Փրիդրիկոսին դուր չէր գալիս եկեղեցական եւ հասարա-
կական կարգի զլորումը, որ սկսուել էր Հռոմում: Նա վերա-
կանգնեց Հադրիան Գ-ի իշխանութիւնը, ձերբակալեց Առնոլ-
դին եւ մամնեց պապին, որ գլխատել տայ:

Կռիւ Լոմ-
բարդական
քաղաքների ղափարով,
որ Աւստրիաց իրեն տրուած
կայսերական
հետ:

Փրիդրիկոսն ամբողջովին ներշնչուած էր այն գա-
ւառու ժողովրդի իրեն տրուած կայսերական

իշխանութիւնը միակ աղբիւրն է ամենայն իշխա-
նութեան եւ զօրութեան երկրիս երեսին: Առաջին
անգամ Իտալիայում երեւելուն պէս նա բարոնների և
հոգեւորականների համագումար ժողովին հրաւիրեց Բո-
լոնիոյ համալսարանի իրաւագիտութեան չորս վարդա-
պետներին: Այս իրաւաբանները բացառեցին հռոմէական
կան վարդապետութիւնը կառավարական իշխանու-
թեան մասին, որ ժողովուրդն յանձնել է քաղաք-
ային եւ որ չէ կարող սահմանափակուիլ մասնաւոր
մարդոց կամքով եւ ուժով: Այս հայեացքով կայսրը
բարձր էր օրէնքից, որովհետեւ նրա կամքը — օրէնք էր:
Այս վարդապետութեան և միջնադարեան իրականու-
թեան մէջ մի ամբողջ վիճակար: Գործնականութեան
մէջ ալսպիսի հայեացքներ մտնելու փորձը պիտի
կուռացնէր Փրիդրիկոսին այն ժամանակուան հասարա-
կութեան գլխաւոր ներկայացուցիչների հետ: Ամենից
առաջ ընդհարուեցաւ նա հարուստ քաղաքացի հասա-
րակութեանց հետ, որ կազմուել էին Իտալիոյ հիւսի-
սում: Իտալական քաղաքների բարօրութիւնն աճեց ա-
րագօրէն ժ. և ժԱ. դարերում: Քաղաքացիք այդ տեղ շատ
աւելի կրթուած էին քան թէ Փրանսիայում, Անգլիայում
կամ Գերմանիայում: Վենետիկը, Չենովան և Պիզան
աշխույժ առեւտուր ունէին Բիւզանդիոյ և մահմետական
երկրների հետ: Լոմբարդիայում և Տոսկանայում կազմ-
ուել էին արգիւնագործութեանց խոշոր կենդրոններ:
Քաղաքային պարսպների լետելը կուտուած բնակիչ-
ների հետ չէր կարելի այնպէս վարուիլ, ինչպէս հա-
սարակ վիլլանների (ճորտերի): Եպիսկոպոսները, որոնք
մեծաւ մասամբ ձեռք էին բերել տանուտիրական իրա-
ւունք քաղաքների վրայ, ստիպուած էին նշանաւոր
իրաւունքներ զիջանելու նոյն իսկ քաղաքացի հասա-
րակութեանց: Հիւսիսային ֆալաֆներում կազմուել-
էին ինֆանտրոյն հասարակապետութիւններ: Քաղաքի

երեւթ դասակարգերը — աւագանին (կապիտանները), ասպետներն ու մանր մարդիկ կազմում էին մի հասարակութիւն: Գրանից ամէն մէկն ընտրում էր քանի մի հիւսպասոս, որոնց յանձնուում էին զինուորական հրամանատարութիւնը, դատարանն ու ոստիկանութիւնը: Գործերի ընդհանուր կառավարութեան համար բնակիչներն ընտրում էին խորհուրդ, ամենագլխաւոր գէպքերում բոլոր չափահաս քաղաքացոյ հրաւիրում էին համայնական ժողովի: Կայսրից կախումն արտայայտուում էր պատահական դրամական վճարներով և մանր գնդեր ուղարկելով մի քանի արշաւանքների մասնակցելու համար: Փրիզրիկոս Բարբարոսան ալլ հայեացք ունէր քաղաքների դրութեան մասին իւր պետութեան մէջ և պահանջեց, որ նրանք վերագործեն իրեն թագից խած իրաւունքները (ռեզալիա), այսինքն՝ ամենագլխաւոր գործերը վճռելու և բնակիչների վրայ հարկ դնելու իրաւունքը: Լոմբարդական քաղաքների մեծագոյն մասն հրաժարուեցաւ հնազանդելու, և դիմադրողների գլուխ կանգնեց Միլանը: Փրիզրիկոսն երկու անգամ պաշարեց այդ քաղաքը: Առաջին անգամ քաղաքացիք շուտով հպատակեցան և պատանդներ տուին: Երկրորդ անգամ պաշտպանուեցան մինչև վերջին ծայր և անձնատուր եղան միայն այն ժամանակ, երբ նրանց բոլոր պաշարն հատաւ: Բոլոր բնակիչները դուրս եկան կայսեր առաջ պարանները վզներին. երկար ժամանակ աղաչեցին նրանք իրենց խնայելու: Փրիզրիկոսն յայտարարեց, որ չի հրամայիլ կոտորել նրանց, բայց քաղաքը հրամայեց աւերել հիմքից, իսկ բոլոր միլանացոյ բնակեցրեց զանազան տեղերում: Լոմբարդական և տոսկանեան քաղաքներում կարգուեցան դասաւորուեալ կայսեր կողմից (պոդեստ), եւ դրամական հարկեր նշանակուեցան յօգուտ նրա գանձարանի:

Ըստ երեւութին յաղթութիւնը կատարեալ էր: Բայց ^{Փրիզրիկոսն} շուտով յայտնուեցաւ, որ այս միայն կռուի սկիզբն էր: Նրա դէմ դուրս եկաւ Ալէքսանդր Գ. պապը: Յամառ լոմբարդացիք կրկին գլուխ բարձրացրին. ընդհանուր դաշնակցութիւն կազմեցին, կրկին բնակութեամբ լցրին և շինեցին Միլանը: Փրիզրիկոսը չը դանդաղեց Իտալիայում երեւուլու, այս անհնազանդներին պատժելու համար: Բայց երեւեցաւ, որ նա չէ կարող վստահիլ իւր գերմանացի վասսալների հաւատարմութեան վրայ: Գերմանիոյ աւատական իշխաններից ամենահզօրը, Հենրիկոս Առիւծասիրտը, դժգոհ էր կայսրից, որ արգելում էր նրան նուաճելու Սաքսոնիան, և իտալական պատերազմի վճռական վայրկենին հրաժարուեցաւ Փրիզրիկոսի զօրքին միանալու: Զուր էր աղերսում նրան կայսրը, զուր նրա առաջև ծուռ գոգաց. — գոռոզ Վելֆըն անողոք մնաց: Փրիզրիկոսն այսուամենայնիւ իջաւ Լոմբարդիա, ուր Լինեանոյի մօտ նրա վրայ յարձակուեցան դաշնակից քաղաքների զօրքերը: Զը նայելով գերմանացի ասպետների քաջութեան, քաղաքացիք կատարեալ յաղթանակ տարան: Այն ժամանակ կայսրը յանկարծակի փոխեց իւր ֆադախականութիւնը, ճանաչեց ֆադախների ինֆեոնտունութիւնը, ճանաչեց Ալեքսանդր Գ. պապին և Վենետիկում տեսակցութեան ժամանակ ծուռ գոգաց նրա առաջ: Բայց դրա փոխարէն պատժեց Հենրիկոս Առիւծին — յաղթեց նրան և զրկեց հերցոգութիւններից: Զը նայելով Իտալիայում կրած պարտութեան, կայսրը փառաւոր կերպով վերականգնեց իւր իշխանութիւնը Գերմանիայում, — պետական ժողովին (սէյմ) Մայնցում եկան 70,000 ասպետ: Փրիզրիկոսը ծնուած չէր համբերատար և խնայող կերպով տէրութիւնը կազմակերպելու, ալլ դիւցազնական քաջագործութեանց համար: Հազիւ ազատուած թշնամիներից, նա անձնատուր եղաւ արդէն

1190

Երուսաղէմն ազատելու վեհ մտքին, որ մահմետականները հէնց նոր էին խլել քրիստոնէաներից: Այս խաչակրաց արշաւանքի ժամանակ նա գետակուր եղաւ Կիլիկիայում (1190): Գերմանական ժողովրդի մէջ խորին արմատ է ձգել այս դիւցազնական անձի յիշատակը: Աւանդութեամբ Ֆրիդրիկոս Բարբարոսսան չէ մեռել, այլ նստած է իւր ասպետների հետ միասին կախարդուած մի առանձնացած դղեկում: Պիտի գալ ժամանակ, երբ նա պիտի յառնի իւր զօրականների հետ միասին և նորից թագաւորէ ի փառս Գերմանիոյ:

Հենրիկոս 2:

Մահուանից առաջ Ֆրիդրիկոս Բարբարոսսային յաջողութեամբ մի գործ գլուխ բերել, որ պէտքէ ըստ երևութին ապահովէր Հոհենշտաուֆէնների տիրապետութիւնն Իտալիոյ վրայ: Կայսրների պատերազմների ժամանակ պապերի հետ մեծ նշանակութիւն ունէր հարաւային-իտալական թագաւորութիւնը, որ հիմնել էին նորմանները: Դա տարածուում էր Սիկիլիոյ վրայ և գրաւած ունէր ափրիկան եգեթի մի մասն ևս: Յետուելով նորմանների վրայ, պապերն հնար էին ունենում դիմադրելու կայսրներին: Բայց Ռոբերտ Գիլիսկարի հարստութիւնը վերջացել էր, և Ֆրիդրիկոս Ա. առնուակացրեղ էր իւր Հենրիկոս որդուն առջև քաղաւորութեան ժառանգորդու հետ: Հենրիկոս 2. իւր ձեռքի տակ միացրած ունէր մի այնպիսի պետութիւն, որպիսին Եւրոպան չէր տեսել Մեծն Կարլոսի մահուանից յետոյ: Նրա երկրները ձգուում էին Ելեզվիցի մինչև Սիկիլիա: Առանձնապէս վտանգաւոր էր այս զօրութիւնը պապի համար, որ այժմ ամենայն կողմերից շրջապատուած էր կայսրի երկրներով:

Իննովկեն-տիոս Գ.
1196

Բայց Հենրիկոս 2. շուտով մեռաւ (1196): Սիկիլիայում և Նէպոլսում թագաւոր ճանաչուեցաւ նրա եղբայր որդին Ֆրիդրիկոս Բ. իսկ Գերմանիայում կրկին բռնկեց պատերազմը Վելֆերի և Հոհենշտաուֆէն-

ների միջև: Վէճը վճռեց Իննովկենտիոս Գ. պապը, հռովմէական քահանայապետներից ամենահզօրը: Նա ծագումէր հռովմէական երկրի ականաւոր ընտանիքից, աստուածաբանութիւն էր ուսել Փարիզում, իրաւագիտութիւն Բոլոնիայում և ներշնչուած էր արհամարհանօք դէպի աւատական հասարակութեան անկարգութիւններն ու բռնութիւնները: Նրա շարագրութիւններից մէկի վերնագիրն է. «Արհամարհանքի մասին դէպի աշխարհ», բայց այս արհամարհանքի միջից նա ոյժ էր առնում կոռւելու աշխարհիս դէմ եւ իշխելու նրա վրայ: Պապական գահն ամբառնալով սկսաւ այն բանից, որ պապի աշխարհական իշխանութիւնը զօրացրեց և տարածեց հռովմի շուրջն եղած երկրների վրայ: Դա շատ սաստիկ խախտում էր ֆրանկոնեան հարստութեան և Հոհենշտաուֆէնների ժամանակ: Իննովկենտիոսը վերականգնեց պապի տիրապետութիւնը հռովմի վրայ, բայց չը գոհացաւ միջին իտալական մանր գործերով: Նա խառնուում էր բոլոր այն ժամանակուան պետութիւնների կեանքի մէջ և ամենուրեք այն գաղափարն էր անցկացնում, որ պապը գլուխ է ամբողջ քրիստոնէայ աշխարհի, կոչուած հագալու բարեկեցութեան և արդարութեան մասին և նրան ամենայն տեղ յաջողում էին ամենայնազուգն ձեռնարկութիւնները. Սպանիայում քրիստոնէայք նրա ազդեցութեամբ հարուած տուին մաւրերին, Պրանսիայում հիւսիսային ասպետութիւնը ջնջեց ալբիգոյեան աղանդն և դրա հետ միասին աւերեց հարաւային իշխանութիւնները, Անգլիայում Յովհան Անհոյին թագաւորն ինքն իրեն պապի վաստակ հռչակեց. արևելքում խաչակիր զօրքը գրաւեց Կոստանդնուպոլիսն և մտցրեց լատինական վարդապետութիւնը փոխարէն ատելի լոյն կարգերի: Այս առիթներում խնդիրը չէր վերջանում պապի գերիշխանութիւնը միայն լոկ խօսքերով ընդու-

ներով, դա պատճառ էր լինում շատ գործնական պահանջների: Ամբողջ կաթուղի աշխարհում պապի նուիրակները ժողովում էին սուրբ Պետրոսի լուսնան—հարկ յոգուտ հռովմէական եկեղեցու:

Փրիզրիկոս Բ.

Վելֆերի և Հոհենշտաուֆենների վեճի ժամանակ Իննովկենտիոս Գ. պապը նախ յոգուտ Վելֆերի տուաւ իւր ձայնը: Նա յայտարարեց, որ կայսերական իշխանութիւնն իւր ոյժն առնում է պապականից, սա ապացուցանուում էր այս երկու մականբերութեամբ, պապերը կայսերական պատիւը յոյներէց փոխադրեցին Ֆրանկներին. պապն է պսակում կայսեր: Իւր իսկ բարձրագոյն իշխանութեան շնորհիւ նա գերադասեց նախ Ոթոնին, Վելֆերի աստուածավախ յաջորդին: Իննովկենտիոսի միջամտութիւնը գործը վճռեց յոգուտ Ոթոնի, որ սակայն կատարելապէս հլու և հնազանդ ծառայ չ'եղաւ պապին: Ուստի և պապը համակրութեամբ վերաբերուեցաւ վեշտասանամեայ Փրիզրիկոս Բ-ի յանդուգն փորձին իւր նախնեաց գահը լետս գրաւելու: Փրիզրիկոսը վախճուեալ ասպետներով երևեցաւ Շուաբիայում, և շուտով նրան արեցաւ ամբողջ Գերմանիան: Ոթոն Գ. մեռաւ կռուի ժամանակ, և Հոհենշտաուֆենը կրկին միացրեց իւր ձեռքի տակ Հենրիկոս Զ-ի ամբողջ երկրները:

Փրիզրիկոս Բ. քիչ էր նման նախկին ժամանակների մեծ կայսրներին: Նա մեծացել էր Սիկիլիայում, ուր հանդիպում էին այն ժամանակի ամենից տարբեր քաղաքակրթութեանց հոսանքները,—հօր կողմից նա ասպետ էր, պատերազմասէր, փառքի և բախտի անխոնջ հետամուտ և որոնող, մօր կողմից—խաղաղական նորման, խորամանկ, ազահ, ամուր ու ճկուն, ինչպէս պողպատ: Երիտասարդութեան ժամանակ նա գործ էր ունեցել արաբների և յոյների հետ—զրանցից ուսել էր գնահատել գիտնական զբաղմունքներն և վարչական արուեստը: Այս բոլոր ալլասեռ տարրերի ընդհարումից

Փրիզրիկոսը դարձել էր անսարքեր դէպի արեւն սեւակ հաւաս—նրա մեջ արեւնեւիւն չը կար կրօնական մոլեռանդութիւն: Նա սիկիլեան սարակենոսների ամբողջ գաղութներ տեղափոխեց Հարաւային Իտալիա և դրանցից բնաւորում էր իւր լաւագոյն զինուորներին: Արաբ գիտնականները նրա սիրելի խօսակիցներն էին, որոնց առաջարկում էր խնդիրներ աշխարհիս կազմութեան և հոգու անմահութեան մասին: Գիտութեան մարդոց գնահատում էր ասպետներին ու հոգեւորականներին հաւասար, հովանաւորում էր Նէպոլսի համալսարանին և Սալեռնոյի բժշկական դպրոցին:

Փրիզրիկոսը կատարելապէս գերադասում էր Իտալիան Գերմանիայից: Նա արգէն յոյս չէր դնում, Բալթիկ թաղանթի նման, տիրելու բոլոր արեւմուտքին և Գերմանիայում և մանկույ վերաբերութեամբ գոհանում էր այնու, որ այն տեղից զինուորական օգնութիւն էր սպասում: Փրիզրիկոսը ճնշեց իւր որդի Հենրիկոսի ապստամբութիւնը, որ փորձում էր Գերմանիոյ անկախ թագաւոր դառնալ, բայց հանդիսաւոր կերպով ճանաչեց զերմանական իշխանների իրաւունքն իրենց երկրներում գործելու իրենք քաղաւորներ: Իտալիայում Փրիզրիկոսը բոլորովին դրա հակառակ քաղաքականութեան էր հետևում: Ամենից առաջ նա օրինակելի կարգ մտցրեց սիկիլեան քաղաւորութեան մեջ. արգիլեց մասնաւոր պատերազմները, խլեց բարօսներից քրէական գործերի դատաւորութիւնը, բնակիչների վրայ հարկ դրաւ, ամեն տեղ նշանակեց իւր դատական և ելեւտական պաշտօնեաներին, նեղը ձգեց եկեղեցին, արգիլեց հող ընծայել և ծախել նրան: Մի խօսքով նա հիմնեց իսալիոյ հաւառում ամուր կազմակերպուած մի սերունդի և վերացրեց աւասականութիւնը: Ապա նա ձեռք գորկաւ միջին ու հիւսիսային Իտալիային, բայց այս տեղ անյաղթելի զինադրութեան պատահեց պապի

Բաղաքականութիւնը Գերմանիայում և Իտալիայում

Որոշումներ արեցաւ ինքը Բոն

և քաղաքների կողմից: Քաղաքները նորոգեցին այն դաշնակցութիւնը, որ կորստաբեր էր եղել Ֆրիգրիկոս Բարբարոսային: Պապերն աջակցում էին անհնազանդ Գուելֆներին, ինչպէս դրանց կոչում էին կայսեր կուսակիցները—Գիբելլիններին, հակառակ: Կռիւր շարունակուեց փոքր ընդհատումներով 30 տարի: Ֆրիգրիկոսը, նրա որդիք, նրա գերմանացիք ու սարակինոսները քաջութեան հրաշքներ էին գործում, բայց ընդհանրապէս գործը նրանց ձեռնառու ընթացք չէր ստանում: Պապն առգելջ (իմսերդիկս) դրաւ կայսեր և նրան նպաստող երկրների վրայ: Այս միջոցս աւելի սոսկալի էր, քան թէ բանադրանքը, որովհետեւ դա ծանրանում էր, ոչ թէ անհատների, այլ ամբողջ աշխարհի մէջ (1250), զրկուած էին եկեղեցու բոլոր խորհուրդները, բացի մըկրտութիւնից, չէին կարող տեղի ունենալ ոչ պսակներ, ոչ ապաշխարութիւն, ոչ հաղորդութիւն: Միւս կողմից, քաղաքացի հասարակութեանց մեծագոյն մասը կայսեր գէմ կռուի մէջ կեանքի ու մահու խնդիր էր տեսնում և դիմադրում էր ոլթերի վերջին ծայր լարումով: Ֆրիգրիկոսը ուժասպառ եղաւ այս անվերջ կռուի մէջ (1250), բայց Հոհենշտաուֆէնների գործին վերջնական հարուած տրուեցաւ նրա մահուանից լետոյ: Նրա որդի Կոնրադ Գ. մեռաւ կարճ կառավարութիւնից լետոյ Գերմանիայում: Ֆրանսիական թագաւոր Լուդովիկոս Թ-ի եղբայրը, Կարլոս Անժուացին, պապի հրաւերով ցամաք գոլրս եկաւ Սիկիլիայում ֆրանսիական ասպետները շփոթելու: Կոնրադինը, հերոսական փորձ փորձեց ֆրանսիացոյց վրոնտելու, բայց պարտութիւն կրեց և գերի բռնուելով գլխատուեց Կարլոս Անժուացու հրամանով (1268):

1250

1268

Պապութեան և կայսրութեան երկարատեւ կռիւր վերջացաւ առաջին յաղթանակով, բայց դրա վախճանը տխուր չեղաւ միմիայն Հոհենշտաուֆէնների տան համար, որ կռուում ջնջուեցաւ: Իրրեւ հետեւանք այս կռուի Գերմանիան և Իտա-

լիան, որոնք Ժ. դարում արեւմտեան Եւրոպայի բոլոր երկրներին աւելի կենդրոնացած, միացած էին, մանր մանր մասերի բաժանուեցան:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ԽԱՉԱԿՐԱՅ ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐԸ.

Պապերի ձգտումը դէպի աստուածպետութիւն մի հասարակ մրցումն չէր իշխանութեան համար կայսրների ու թագաւորների հետ: Սրան կից պապերը ձեռնարկեցին. 1) քաղաքներ և խափառքիւններ, որոնց նպատակն էր. եկեղեցին դարձնել աւելի և արժանի գերիշխանութեան: Այս նպատակով Գրիգոր Է., որ խեց կայսրից տուչութեան իրաւունքը (ինվենտիտուրա), հալածում է սիմոնիականութիւնն և քարոզում է ամուրիութիւն: 2) պապերը նոր խնդիրներ եւ առաջադրում աշխարհական հասարակութեան, որպէս զի նրան բռնութիւններից ու անօրէնութիւններից դարձնեն դէպի քրիստոնէական ուղին: Նոյն Գրիգոր Է. խորհում է մի գործ, արժանի քրիստոնեայ զինուորութեան, նա հրատարակում է, որ պէտքէ ամենքը միանան և ազատեն Փրկչի գերեզմանն անհաւառների տիրապետութիւնից: Գրիգոր Է.-ի այս հրաւերն իրականացրեց ԺԱ. դարու վերջին Ուրբանոս Բ.

Օմարի ժամանակ Երուսաղէմն առնելով՝ մահմէ-ուխտագնատական տիրապետներն համբերողութեամբ էին վերաբերուում դէպի քրիստոնեաներն ու դէպի նրանց սըրբութիւնները: Հարուն-ալ-Ռաշիդի ժամանակ Մեծն Կարլոս ճանաչուեցաւ հովանաւոր Փրկչի Գերեզմանի: Քրիստոնեայ աշխարհի բոլոր կողմերից ահագին բազմութեամբ ուխտաւորներ էին գալիս. Մայնցի արքեպիսկոպոսն օրինակ՝ մի անգամ եկաւ 7000 ուխտաւորներով: Բայց քուրթերի տարածուելուց յետոյ ամենայն ինչ փոխուեցաւ. Երուսաղէմն ընկաւ կոպիտ ու ազաճ զինուորների ձեռք, որոնք վերաւորում էին քրիստոնեանե-

եկեղեցական բարեփոխութիւններ և խափառքիւններ, արշաւանքներ:

ցուցութիւն գէպի Սուրբ Երկրը:

րին և ամենայն միջոցներով դրամ էին կորզում նրանցից: Այսպէս օրինակ՝ էմերներից մէկը բանդը դրաւ Երուսաղէմի պատրիարքին և ստիպեց քրիստոնեայ համայնքին, որ նրա համար մեծագումար ոսկի տալ իբրեւ փրկանք:

Թուրքերի աշխարհակալութիւնները սպառնում էին Կոնստանդնուպոլսի հարստութիւնը՝ նոյն իսկ բիւզանդական կայսրութեան գոյութեան, իսկ դրանց բռնութիւնները խափանում էին քրիստոնէից դարաւոր յարաբերութիւնները Պաղեստինի սրբազան վայրերի հետ:

1081 Բիւզանդիոյ բախդիցն էր, որ այդ ծանր ժամանակ, երբ թուրքերն արեւելքիցն էին նեղում, իսկ նորմաններն արեւմուտքից, գահ բարձրացաւ (1081) տաղանդաւոր Ալէքս Կոմնէնոս կայսրը, որ նշանաւոր էր ճկունութեամբ և հաստատամտութեամբ իւր նպատակներին հասնելու մէջ: Նա Ռոբէրտ Գիւլիսկարի դէմ մեծ զօրք հանեց, ուր աչքի ընկնող տեղէր բռնում թուրք զօրագունդն, ձեռք բերաւ վենետիկացի նաւատորմի աջակցութիւնը, պարգևելով վենետիկացի վաճառականներին Կոստանդնուպոլսի առևտրի մէջ արտօնութիւններ, Հերբիկոս Գ. կայսեր մեծ գումար դրամ ուղարկեց, որովհետև նա այդ ժամանակ կռուում էր Գիւլիսկարի դէմ պապի պատճառով: Երբ Ռոբէրտը մեռաւ, նորմաններին ջարդեցին և դուրս վանեցին: Սրանից յետոյ Ալէքս Կոմնէնը գիմեց պաճինէգների, պոլովցիների և ռուսաց դէմ, որոնք կողոպտում էին Թրակիան և Մակեդոնիան — դրանց ևս կարողացաւ սանձել: Բայց թուրքերի դէմ Ալէքսն իրեն անզօր էր զգում: Դրանք խլել էին իրենից Ասիայում նշանաւոր դիրքեր — Անտիոքն ու Եգեսիան: Այս ծայրահեղ վիճակի մէջ նա դիմեց Ուրբանոս Բ. պապին և օգնութիւն խնդրեց:

Պապն ընդունեց յոյն դեսպաններին և խոստացաւ նրանց իւր աջակցութիւնը: Սուրբ Երկիրն ազատելու

համար մահմէտականների դէմ ուղղուած արշաւանքը մի յարմար առիթ էր Արևմտեան Եւրոպայի զինուորական ոյժերը դէպի մի բարի նպատակ ուղղելու, քրիստոնեայ ասպետութեան մէջ կրօնական ոգի զարթեցնելու, հեռացնելու նրան կայսրից և պապի ազդեցութեան տակ դնելու: Ուրբանոս Բ. 1095 թուին ժողով գումարեց Օվերնիայի Կլէրմոն քաղաքում: Բացի հոգևորականութիւնից, ժողովին եկան բազմաթիւ ասպետներ ու ռամիկներ: Քաղաքը տեղ չէր անում ժողովուած ամբօխին, և Ուրբանոսը ճառ խօսեց ժողովրդին դաշտում պատուանդանի վրայից: Նա խօսեց այն անարգ գերութեան մասին, որի մէջ գտնուում էին քրիստոնէից սրբութիւնները, ուխտաւորներին պատճառուող նեղութիւնների մասին, տապալ կեանքում հատուցանելիք այն պարգևի մասին, որ պիտի ստանան նրանք, որոնք իրենց կեանքը կը դնեն մարտնչելով անհաւատների դէմ, և երբ պապն աւարտեց իւր խօսքը կոչ ուղղելով քրիստոնեայ զինուորականութեան, որ նա միաբանի և փրկէ Տիրոջ Գերեզմանը, նրան շրջապատող ֆրանսիացիք ու Իտալացիք բարձրագոյ աղաղակներ արձակեցին «Այդ է կամենում Աստուած» (Dieu le veut): Մի եպիսկոպոս ծունգ չօքեց պապի առաջ և խնդրեց որ օրհնէ իրեն արշաւանքի համար: Պապը նրա վրայ դրաւ մի կարմիր խաչ, իբրեւ նշան այս սրբազան ձեռնարկութեան: Այս օրինակին հետևելով Սուրբ Երկիրն ուղևորուողները կարմիր խաչ էին կրում իրենց զգեստի վրայ: Եկեղեցական ժողովը վճռեց, որ ով խաչակիր արշաւանքի մասնակցէ կրօնական ջերմեռանդութիւնից, կը ստանայ մեղքերի թողութիւն, նա բացակայութեան ժամանակ եկեղեցին իւր վրայ է առնում նրա ընտանիքի ու ստացուածքի պաշտպանութիւնը. ոչ ոք իրաւունք չ'ունի խաչակրի երկրի վրայ յարձակուելու. վաստակները պիտի օգնեն սենիօրին, եթէ նա խաչակիր գառնայ:

Խաչակրաց
առաջին ար-
շաւանքը:

Պապն հրաւեր ուղարկեց թագաւորներին ու ազ-
գիչներ, որոնք հաւատացեալներին առանց դասակար-
գերի ու կարողութեան խտրութեան հրաւիրումէին
մասնակցելու արշաւանքին: Քարոզն ահագին ազդեցու-
թիւն էր գործում. *պատերազմաւոր եւ ջերմեռանդ*
հաւաս ունեցող ասպետի համար չէր կարող աւելի
արժանաւոր քաջագործութիւն լինել, քան թէ այս
արշաւանքն անհաւատների դէմ, որոնք գրաւել էին
քրիստոնէից մեծագոյն սրբավայրերը, շատերին հրապու-
րում էր արկածախնդրութեան անհանգիստ ոգին, որ
նոյնպէս զօրաւոր կերպով արտայայտուեցաւ արդէն
ազգերի գաղթականութեան ժամանակ, վիկինգների ար-
շաւանքների, նորմանների տիրապետութեանց, գերմա-
նացոց իտալական պատերազմների մէջ. ամէնքի համար
էլ ծանր ու նեղուածք էր ապրել աւատական շրջանի
անկարգութիւնների ու երկպառակութիւնների մէջ,
լատկապէս ձգտում էին դէպի նոր վայրեր և դէպի լա-
ւագոյն պայմաններ շինականները (վիլլան), որոնք
դասապարտուած էին յարկեւնական ժառանգութեան
եւ հարկատուութեան գդեակների տէրերին: Ով միայն
կարող էր, շարժուում էր տեղից ու միանում խաչակիր
զինուորութեան: Ամենից աւելի մարդիկ դուրս եկան
Փրանսիայից ու նրան մերձակայ երկրներից: Հիւսիսային
Փրանսիայում և Հոլենդի եզերքների գերմանական եր-
կրներում, Պետրոս Անապատականի և «Չքաւոր» աս-
պետ Գոտիէի (Gautier sans Avoir) առաջնորդու-
թեամբ, ժողովեցաւ շինական ու անտուն անտէր մարդ-
կանց ամբողջ, հազիւ թէ զինուած և կիսամերկ, ա-
ռանց պաշարի և դրամի, այդ խեղճերը շարժուեցան,
մի կերպով անցան Դանուբի երկարութեամբ, չը նայե-
լով անընդհատ ընդհարումներին մաճառների ու բոլ-
ղարների հետ, և երևեցան Կոստանդնուպոլսում: Դրանք

սկսան կողոպտել քաղաքը, և Ալէքս կայսրը շտապեց
դրանց Փոքր Ասիա անցկացնել: Նիկիոյ մօտ նրանց վրայ
յարձակուեցան թուրքերն և մեծ մասը կոտորեցին:
Ասպետները դուրս եկան Եւրոպայից աւելի ուշ և ա-
ւելի զգուշ, բայց նոյնպէս պատահաբար կազմուած
գնդերով, առանց ընդհանուր հրամանատարութեան և
կանոնաւոր կազմակերպութեան: Ոմանք գնում էին Դա-
նուբի ընթացքը բռնելով, ուրիշները գնում էին Իտա-
լիա և նաւերով անցնում Եպիրոս: Առաջին ճանապար-
հով գնում էին հիւսիսային Փրանսիայից ու գերմանա-
ցիք. դրանց գլուխ էր կանգնած Գոտֆրիդ Բուլիօնա-
ցին, Ստորին Լոթրինգիայի դուքսը: Ծովով անցնում
էին պրովանսալները, որոնց առաջնորդում էր Տուլուզի
բարեպաշտ կոմս Ռայմոնդը, ապա իտալական նորման-
ները, որոնք հետևում էին Տարենտացի Բոհէմունդին:
Արշաւանքին մասնակցում էին հաւանօրէն 300-ից մինչև
500 հազար մարդ: Խաչակիր զինուորութեան Կոստան-
դնուպոլսում երևիլն յառաջ էր բերում շփոթութիւն
և վտանգի էր ենթարկում քաղաքը. ասպետները զար-
մանքով և նախանձով էին նայում քաղաքի հարստու-
թեան և գեղարուեստից արտադրութիւնների վրայ,
որոնց առաջ իրենց գդեակների սովորական կահաւորու-
թիւնը խեղճ ու կոպիտ էր երևում, Յոյները մտածում
էին միայն, թէ ինչպէս ազատուին իրենց այս վտան-
գաւոր դաշնակիցներից, որոնց նրանք ատում էին իրենց
արկրթութեան և լատինական դաւանութեան համար:
Փոխադարձ ասեղորթիւն երբեմ հասցնում էր ընդհա-
րումների: Ալէքս կայսրը սակայն կարողացաւ ստիպել,
որ գլխաւոր զօրավարներն երդուին իրեն հաւատարիմ
լինելու և խոստանան մահամեծականներից խլուած եր-
կրները յոյներին յետ դարձնել: Այս պայմաններով
յոյները խաչակիրներին փոխադրեցին Փոքր Ասիա, նրանց
օգնութեամբ առան Նիկիան: Արդէն այս քաղաքի ա-

1099

ուումից յետ ասպետներն վրայ յարձակուեցան փոքրա-
սիական սելջուկ թուրքերի զօրքերը: Թուրքերի թեթև
հեծելազօրը մեծ քաջութեամբ էր կռուում, բայց քրիս-
տոնեայք յաղթութիւնը տարան: Սակայն դաշտի վրայ ե-
ղած յարձակումներից աւելի սոսկալի էին արշաւանքի
դժուարութիւնները սակաւածանօթ, անջրտի վայրերում,
սաստիկ տօթի տակ. մի օրուան մէջ 500 մարդ մեռաւ
ծարաւից: Զօրավարների մէջ համաձայնութիւն չը կար,
և շատերը ցանկութիւն էին յղանում գրաւելու ճանա-
պարհի վրայ որ և է մեծ քաղաք փոխանակ ուղղակի
Երուսաղէմ գնալու: Անտիօքի պատճառաւ քիչ մնաց
պատերազմ ծագէր Բոհէմունդի և Ռայմունդի միջև, վերջ
ի վերջոյ, քաղաքին տիրեցին նորմանները: Պրովանսալ-
ցիք տիրեցին Ասորիքի Տրիպոլիս քաղաքին: Զը նաչե-
լով բոյոյն երկրապաշտպաններին եւ յապաղումնե-
րին, պատերազմի դաշտում քրիստոնէայք այսու ամե-
նայնիւ հօգօր էին մահմետականներից: Անտիօքի ա-
ուումից քիչ յետոյ նրանք ջարդեցին Մոսուլի էմիրին,
որ մեծ զօրքով հանդէս էր եկել վրէժ առնելու փոքրա-
սիական սելջուկների պարտութեան համար: Եւրոպայից
դուրս գալուց երեք տարի յետոյ, 1099 թուին, խաչա-
կիրները, վերջապէս, մերձեցան Երուսաղէմին, նրանցից
մնացել էին մի միայն 25000—միւսները կոտորուել և
կամ ճանապարհին էին մնացել: Երուսաղէմն այդ ժա-
մանակ այլ ևս սելջուկների ձեռքին չէր, այլ գրաւուած
էր Կահիրէի խալիֆի զօրքից: Իրանք առաջարկում էին
ասպետներին ազատ անցք Սրբազան վայրերին այցելե-
լու, բայց ասպետները չը համաձայնուեցան և սկսան
քաղաքը պաշարել: ձենովացիք շինեցին դրանց համար
բաբաններ պարիսպները քանդելու և երկու շարժա-
կան աշտարակ, որոնց սահեցրին մինչև պարիսպների
տակը: Յարձակումից առաջ խաչակիր զնդերը պտտեցին
քաղաղի շուրջն աղօթներ երգելով: Օր ու կէս պաշա-

րուածները յետ էին մղում յարձակումները: վերջապէս
խաչակիրները քաղաք մտան (15 յուլիսի 1099): Սկսաւ 15 յուլիսի
ջարդը, որ դադարեց մի փոքր ժամանակ միայն, երբ
խաչակիրները գնացին Տիրոջ Գերեզմանին երկրպագելու,
ապա կրկին սկսան կոտորել ու կողոպտել:

Այս նոր տիրապետութիւնը ձեռքերին պահելու Երուսաղէմի
համար, անհրաժեշտ էր մի որ և է կազմակերպութիւն թագաւորու-
թեան կազ-
աւլ նոր տիրած երկրներին: Յոյներին հպատակելու մականպու-
թիւնը
մասին խօսք անգամ չը կար: Ասպետները Գոտֆրիդ
Բուլիօնացուն Երուսաղէմի թագաւոր ընտրեցին: Նա չը
կամեցաւ «ոսկէ պսակ կրել այն տեղում, ուր Քրիստոս
փշեալ փսակ էր կրել», և ստանձնեց «Սուրբ Գերեզմանի
պաշտպան» տիտղոսը: Նա ջարդեց եգիպտական զօրքն
որ ուղարկուած էր Երուսաղէմն ազատելու, և ինն ա-
միս յաջողութեամբ պաշտպանուեցաւ մահմետականների
դէմ սակաւաձեռն զնդով, որովհետեւ առաջին խաչա-
կրաց արշաւանքին մատնակցողներից կենդանի մնացած-
ների մեծ մասը տոււն էր դարձել, իսկ քանի մի նոր
զնդեր ջարդուել էին ճանապարհին: Ամբողջ տիրապե-
տած երկիրը բաժանուում էր տանուտէրութիւնների
(սենիօրի) և աւատների (Լէհն). Երուսաղէմի թագա-
ւորին ճանաչում էին գերիշխան տէր բոլոր այդ երկր-
ների, բայց ամէն մի տանուտէր, հաւանաւայն աւաւա-
կան իրաւունքի, գրեթէ անկախ իշխան էր իւր եր-
կրրում: Ասպետների մեծագոյն մասը ծագմամբ ֆրան-
սիացիք էին: Հոգևորականութիւնն աւելի անկախ դիրք
էր բռնում, քան թէ Եւրոպայում. դրան գլուխ էր
կարգուած Երուսաղէմի պատրիարքը: Ճորտաբեան
(վեյրան) վիճակին եկեղեցական Ասորիքի եւ Պա-
ղիսիկների օրոքոքոքս, հեղեկացած բնակիչները,
որոնք մահմետական տիրապետութեան ժամանակ հարկ
ու կոռ էին վճարում էմերներին, իսկ այժմ ստիպուած
էին գործելու ասպետների համար: Քաղաքներում, մա-

նաւանդ ծովեզրեայ քաղաքներում, կազմուեցաւ հա-
րուս առեւտրական դասակարգ իսալացիներից: Վե-
նետիկցիք, ձենովացիք, Պիզացիք, Ասորիքի ավերում
շահաւետ առւտուր սկսան Արեւելքի հետ, իւրաքանչիւր
քաղաքում դրանց դասակարգը կառավարուում էր ին-
քընուրոյն և պարտաւոր էր միայն քաղաքի տիրոջ որոշ
գրամական հարկ վճարել:

Ասպետների ու քաղաքացոց դասն ու իրաւունքը տես-
նում էին դատ վարողների կամ մեղադրուածների պէրերը
(հաւասարները) համաձայն այն սովորութիւնների, որ սկզբում
աւանդութեամբ էին պահուում: Տասն և երեքերորդ դա-
րում այդ աւանդութիւնները գրի առան իրաւաբանները, որոնք
Երուսաղէմի և Անտիոքի դատարաններում գործերը վարում
էին, այս գրուածքները կոչուեցան Երուսաղէմի և Անտիոքեան
ասսիզ (անսիզ):

Ասպետներն ու վաճառականները, որոնք բնակու-
թիւն էին հաստատել Սուրբ Երկրում, սակաւաթիւ էին
և միշտ Եւրոպայի օգնութեան կարօտ: Ժամանակ առ
ժամանակ գալիս էին խաչակիրների նորանոր գնդեր:
Բացի սրանից, կազմուեցան այսպէս կոչուած կարգեր
(օրդէն)—ասպետական եղբայրակցութիւններ, որոնց
մէջ մտնում էին արեւմտեան Եւրոպայի զանազան եր-
կրների բնակիչները: Առաջ կազմուեցաւ հիւրընկալնե-
րի կամ սուրբ Յովհաննէս Երուսաղէմացու կարգը: Գա-
հիմնեցին Փրանսիացիք ու իտալացիք հիւանդ ու աղ-
իւս ուխտաւորների հանաւելոյ համար, որոնք Պա-
ղեստինէում միշտ բազմաթիւ էին: Յետոյ այդ կարգի
կանոնադրութիւնը փոփոխուեցաւ այն մտքով, որ կարգի
նպատակն է նոյնպէս և պատերազմն անհաւասների
դէմ: Կարգիս անդամներն կրօնաւորական հնազանդու-
թեան, ամուրիութեան և աղքատութեան ¹⁾ ուխտ էին
դնում: Այս կարգը շուտով միացաւ և հարստացաւ—

¹⁾ Սրանք ասպետական զգեստի վրայից կրում էին սև վերար-
կու սպիտակ խաչանշանով:

նրան պատկանում էին բազմաթիւ զղեակներ ու հո-
ղեր թէ Ասորիքում և թէ Եւրոպայում: Գլուխ էր
կանգնած կարգիս Գրոսմայստերը—մեծ վարպետը (կար-
գապետ), իսկ առանձին կալուածները կառավարում էին
կոմանդորները—հրամանատարները: Ոչ պակաս ուժեղ
էր Տաճարականների կարգը, որ սկզբում կազմուած
էր ուղեւորներին և նրանց աղիւր պաշտպանելու համար,
որոնք դէպի Երուսաղէմ գալուս յաճախ սարակիւնոսների
յարձակման էին ենթարկուում: Այս կարգն իւր անունը
ստացաւ Սողոմոնի ¹⁾ տաճարից, որի տեղում շինուած
մի գաղեակ Բալդուին թագաւորը տուել էր նրանց:
Վերջապէս գերմանացոց օգնելու համար կազմուեցաւ
հիւրընկալների կարգի պէս մի ուրիշը, աւետոնեան
կարգը: ²⁾

2ր նալելով Եւրոպայից հասնող օգնութեան, քրիս-
տոնեայ իշխանութիւնների գրութիւնն անհաստատ էր: Երկրորդ
արշաւանք
Ասպետների մէջ համաձայնութիւն չը կար, կրօնական
եռանդը շուտով հանգչում էր, և դրա փոխարէն հան-
դէս էին գալիս մանր փառասիրութիւններ և հարստա-
նալու տենչ: Իսկ մինչ դեռ թուրքերը յարձակուել էին
քրիստոնեայ տիրապետութեան արեւելեան ծայրագոյն
կէտի—Եդեսիոյ վրայ և առել էին յարձակմամբ: Այս
կորստեան լուրը սարսափելի ազդեցութիւն արաւ Եւ-
րոպայում: Այս տրամադրութիւնից օգուտ քաղեց պա-
պը, և յանձնեց նշանաւոր պահեցող և քարոզիչ Բեր-
նարդոս Կլերվալացուն հրաւեր կարգաւու քրիստոնէից
դէպի նոր խաչակիր արշաւանք: Նոյն իսկ Փրանսիա-
կան թագաւոր Լուդովիկոս Ե. արշաւանքին մասնակցեց,
որովհետեւ զրանով կարծում էր թէ կը քաւէ իւր հո-
գին ընկճող ծանր մեղքը. իւր մի վասսալի հետ պատե-
րազմելուս, նա այրել էր մի եկեղեցի, ուր ապաստանել

¹⁾ Տաճարականների զգեստն էր սպիտակ վերարկու կարմիր
խաչով:

²⁾ Սրանց զգեստն էր սպիտակ վերարկու սև խաչով:

1147

էին հազարի չափ մարդիկ: Փրանսիացիներէն յետոյ Բեր-
նարդոսը ղեմեց գերմանացոց. Կոնրադ Գ. կայսրը չէր
կամենում խաչակիր դառնալ, բայց երբ Բերնարդոսը
իւր քարոզի մէջ ուղղակի նրան ղեմեց հարցնելով, ի՞նչ
պիտի պատասխանէ նա ահեղ դադաստանում, երբ Քրիս-
տոս նրանից հաշիւ պահանջէ: Կոնրադը խոստացաւ
մասնակցել արշաւանքին (1147):

Երկու բանակ կազմուեցաւ, որոնցից ամէն մէկի մէջ
միայն եօթանասնական հազար ասպետներ կային: Առաջ գեր-
մանացիք գնացին եւ սուլորական ընդհարումներից յետոյ յոյնե-
րի հետ, փորձեցին անցնել ուղղակի Փոքր Ասիոյ միջով, բայց
ընկան վայրենի տեղեր, ուր նրանց հանդատութիւն չէին տա-
լիս սարակինոս հեծեալները, որոնք բանակի շուրջն էին պլու-
տում, ջարդում էին յետամնացներին եւ դժուարացնում էին
պաշարի մատակարարութիւնը: Այս մանր կոխն այն աստի-
ճանի մաշեց ասպետական ծանր հեծեալագործ, որ բանակը
դարձաւ զէպի ծովը միանալու Փրանսիացոց հետ: Սրանք յա-
ռաջ էին դիմում ծովը գրով, բայց յոյնպէս մեծամեծ արգելք-
ների էին հանդիպում Պամփիլիայի եւ Կիլիկիայի կրճերում:
Սարակինոսներին յաջողում էր յաճախ կտրել մի որ եւ է գունդ
բանակից ու ոչնչացնել: Ինքը Լուզովիկոս է. հազիւ էր դի-
մադրում նրանց ժայռերի մէջ: Ստիպուած եղան ղեմել յոյնե-
րի օգնութեան: Սրանք նաեւ ուղարկեցին, բայց զրանք բա-
ւական չեղան բոլոր զօրքի համար: Մի միայն մեծամեծները
տեղաւորուեցան նաւերի վրայ եւ Ասորիքի եզերքը ցամաք
դուրս եկան, իսկ միւսները շարունակեցին արշաւանքը ցամա-
քով եւ զրեթէ ամէնքն էլ կորան:

Կոնրադն ու Լուզովիկոսն իրանց ասպետներով
Ասորիքում միացան պաղեստինեան քրիստոնէից հետ ու
ղեմեցին Պամասկոսը պաշարելու: Բայց սրանք չը կա-
րողացան այդ քաղաքն առնել եւ դարձան Եւրոպայ
քոչորոյիս հիասքաւիտած:

Խաչակրաց նոր արշաւանքի հրաւեր հնչեց ԺԲ.
դարու վերջին: Բաղդադի ու Կահիրէի ամիրապետու-
թիւնները միացել եւ կազմել էին մի պետութիւն, որի
սուլթան էր դարձել քիւրդ Սալահէդդէնը: Տիրերիա-

դալի մօտ Սալահէդդէն Երուսաղէմի թագաւորի զօրքը
քշեց մի անշուր բլրի վրայ եւ պաշարելով ստիպեց ան-
ձնատուր լինելու: Տաճարականներին, հիւրընկալներին եւ
հետեակ զօրքին հրամայեց կստորել, բայց աշխարհա-
կան աւսպետների հետ ողորմած ու սիրալի կերպով
վարուեցաւ:

Այս լաղթութիւնից անմիջապէս յետոյ նա Երու-
սաղէմն առաւ: Քաղաք մտնելուն պէս սուլթանը վե-
րականգնեց ու մաքրեց մզկիթները, իսկ եկեղեցիների
խաչերն ու զանգակները ջարդեց (1197):

1187

Այս տխուր անցքից յետոյ տեղի ունեցաւ երրորդ
խաչակրաց արշաւանքը (1190): Ինքը Փրիզրիկոս Բար-
բարոսն գլուխ կանգնեց գերմանական զինուորութեան.
Փրանսիական թագաւոր Փիլիպպոս Օգոստոսն ու ան-
գլիական թագաւոր Ռիչարդ Առիւծասերան, որոնք մի-
միանց դէմ պատերազմում էին, հաշտուեցան եւ երկուսն
էլ խաչակիր դարձան: Գերմանական զօրքն հասաւ Ասո-
րիք, բայց այդ տեղ նա մի անփութարինելի կորուստ
ունեցաւ—Փրիզրիկոս կայսրը ջրահեղձ եղաւ լողանալու
ժամանակ: Զօրքն անմիջապէս լուծուեցաւ, մեծ մասը
տուն դարձաւ, եւ միայն սակաւաւորները միացան Փրան-
սիացոց ու անգլիացոց: Սրանք ուղղւորուեցան ծովով եւ
ճանապարհին շատ արկածների հանդիպեցան: Առաջին
դադարը նրանք Սիկիլիայում արին: Փրանսիացիք ու
անգլիացիք կռուում էին միմիանց ու տեղացիների հետ:
Ապա Փրանսիացիք գնացին ուղղակի Ասորիք, իսկ ան-
գլիացիք ցամաք ելան Կիպրոսում եւ գրաւեցին այդ
կղզին: Վերջապէս, արշաւանքին մասնակցողները գու-
մարուեցան փիւնեկեան փերում եւ սկսան պաշարել
Ակրան (St. Jean d'Acre): Պաշարումը տեւեց երկու
տարի, եւ շարունակ մաքառում էին Սալահէդդինի թե-
թեւ հեծեալագործի հետ: Ռիչարդ անգլիացին ամենաքաջ
ասպետի հռչակն ստացաւ, բայց շատ վատ զօրավար

Երրորդ
արշաւանք
1190

Հանդիսացաւ: Երբ, վերջապէս, Ակրան անձնատուր եղաւ, նա քաղաք մտնելուս պոկեց ու ոտնակոխ արաւ ցեխի մէջ աւստրիական հերցոգի դռօշը, որ ինքը պարսպի վրայ էր ցցել: Սալահէդդէնը կարող չեղաւ պաշմանեալ ժամանակին ժողովել և տալ մահմետականների համար որոշուած փրկանքը, և Ռիչարդն հրամայեց կոտորել 2000 պատանդներին: Փիլիպպոս Ֆրանսիացին հրաժարուեցաւ արշաւանքից ու դարձաւ Ֆրանսիա: Ռիչարդը դուրս էր եկել դէպի Երուսաղէմ, որ վատ եղանակներ սկսուեցան և լուր հասաւ Անգլիայից, թէ նրա եղբայր Յովհանն Թիրել է իւր երկրներին. այն ժամանակ Ռիչարդն էլ թողեց գործն և Յունաստանի ու Գերմանիոյ վրայով դարձաւ տուն: Ճանապարհին նրան կանգ առնել ստիպեց նրանից վերաւորուած աւստրիական հերցոգը և մատնեց Հենրիկոս Զ. կայսեր ձեռքը, որ երկար ժամանակ նրան գերութեան մէջ պահեց: Երրորդ արշաւանքի միակ հետևանքն եղաւ Ակրայի առումն և քրիստոնէական տիրապետութեան հաստատումը փրկանիկեան ծովեզրում: Բացի սրանից, նոր թագաւորութիւն հիմնուեցաւ Կիպրոսում:

Չորրորդ արշաւանք:

Իննովկենտիոս Գ., որի ժամանակ պապութիւնը հասաւ ամենամեծ գորութեան, արեւմտեան քրիստոնէից ոտքի հանեց նոր, չորրորդ խաչակրաց արշաւանքի: Թագաւորներից ոչ ոք խաչակիր չը դարձաւ, բայց պապի քարոզիչն յաջողութիւն գտաւ Ֆրանսիացի ասպետների մէջ: Մի տուրնիքի ժամանակ Շամպանիայում բոլոր ներկայ եղեղներն ուխտեցին գնալ մահմետականների դէմ: Խաչակերները դաշը կապեցին Վենետիկցիների հետ, որոնք պարտաւորուեցան փոխադրել նրանց իրենց նաւերով որոշ գումարով, բայց այս գումարը վճարելու համար դրամը հերիք չ'արաւ և վենետիկցիք առաջարկեցին դրամի հատուցման փոխարէն ծառայել վենետիկեան հասարակապետութեան: Սրանք համաձայ-

նեցին և ուղևորուեցան Դադմադիոյ Զարա քաղաքը պաշարելու, որ խանգարում էր վենետիկեցոց առևտրին Ադրիական ծովի վրայ: Պաշարման ժամանակ նրանց մօտ եկաւ Կոստանդնուպոլսի կայսեր որդին, որի հօրը, Իսահակ Անգելոսին, հէնց նոր էր գահավէժ արել և կուրացրել իւր եղբայրը: Կայսեր որդին խնդրեց վենետիկեցոց ու խաչակիրներին վերադարձնել իւր հօրը խելուած իշխանութիւնն և խոստացաւ դրա փոխարէն մեծ վարձ, և յունաց եկեղեցին պապին ենթարկելու: Վենետիկցիք ուրախ էին այս հրաւերի վրայ, և համոզեցին Ֆրանսիացոց ընդունել այս առաջարկն — նրանք յոյս ունէին իրենց ձեռքը ձգել Բալկանեան թերակղզու առևտրական գլխաւոր վայրերը:

Կոմսենների հարստութեան կայսրները նշանաւոր արտաքին յաջողութիւններ ունեցան. Յովհաննէս կայսրը վճռական հարուած հասցրեց պաժինէզներին, Մանուէլը խառնուում էր արեւմտեան գործերին, աշխատում էր եկեղեցեաց վերստին միանալու մասին եւ աջակցում Ալէքսանդր Գ. պապին ընդդէմ Ֆրիդրիկոս Բարբարոսայի: Մանուէլն հովանաւորում էր արեւմուտքից գաղթածներին, մանաւանդ իտալական վաճառականներին, իսկ յոյները սաստիկ առում էին դրանց եւ նրա մահուանից յետոյ մի սոսկալի կոտորած տուին Հատի-նացոց: Ի վրէժինդրութիւն վենետիկցիք եւ նորմանները քանի մի տարի շարունակ կողոպտում էին յունական ափունքը: Բացի սրանից, կայսրութեան չէր յաջողուում այլ եւս, ինչպէս առաջ, սանձահարել բիւզանդական աւագանու իշխանաւորութիւնը, եւ գաւառներում կազմուեցաւ ազնուականութիւն, որ նման էր աւատական իշխանութիւններին: Վերջապէս, Մանուէլի մահուանից յետոյ սկսան կոիւներ գահաժառանգութեան համար:

Դաշնակիցները սկզբում շուտով տիրեցին Կոստանդնուպոլսին, բայց յոյները չը կամեցան կտտարել այն պաշմանները, որ դրել էին Իսահակն ու իւր որդին: Նրանք ապստամբեցան, վռնդեցին խաչակիրներին և յամառութեամբ պաշտպանում էին քաղաքը: Վերջ ի

Կատինա-
կան կայ-
սրութիւն:

1204

վերջոյ խաչակիրներն յարձակմամբ առան Կոստանդնուպոլիսը, կողոպտեցին, և դրա հետ միասին կործանեցին բազմաթիւ հոյակապ պատմական ու գեղարուեստական յուշարձաններ (1204): Փլանդրիական կոմս Բալդուինին խաչակիրները կայսր ընտրեցին Ռոմանիի կամ Լատինական կայսրութեան. գլխաւոր ասպետներն իշխանութիւններ, զքսութիւններ և կոմսութիւններ ոտացան Աթէնքում, Կորնթոսում, Թեբէում և այլ քաղաքներում, Կոստանդնուպոլսի պատրիարք կարգեցին մի վենետկեցու: (Սմեռաշառ մասն ստացան վենետկեցի վաճառականները, որոնք գրաւեցին Ագրիական, Եգէչեան և Մարմարա ծովերի նաւահանգիստներն ու մի թաղ Կոստանդնուպոլսում: Բայց այս բոլոր տիրապետութիւններն անհաստատ էին, որովհետեւ յոյն քնակիչներն ասում էին իրենց ստրկացնողներին:) Եպիւրոսում և Փոքր Ասիայում հաստատուն մնացին յոյն թագաւորները. Բոլղարները, որոնց նուաճել էին մակեդոնական տան կայսրները, կրկին մի ինքնուրոյն տէրութիւն կազմեցին: Ասպետներին դժուար էր այս բոլոր թշնամեաց դէմ կանգուն մնալ: Յոյները նախ Փոքր Ասիայում կազմեցին Նիկիական կայսրութիւնը, ապա, Միքայէլ Գ. Պալէոլոգի ժամանակ լեւ առան Կոստանդնուպոլիսը Բալդուին Բ-ից (1261):

1261

Սակայն խաչակիր արշաւանքներն մահմետականաց դէմ այս միջոցին չէին դադարում, չը նայելով անյաջողութիւններին: Իննովկենտիոս Գ. իւր մահուանից առաջ համոզեց Ֆրիդրիկոս Բ. կայսեր և մահառների թագաւորին խաչակիր դառնալու:

Հինգերորդ արշաւանք:

Մահառներն ու նրանց հետ միացած գերմանացիք արշաւանքն սկսան 1217 յին բայց երկար ժամանակ և առանց որ և է օգտի մնացին Ակրայի մերձակայքում: Դրանց օժանդակելու եկաւ մի նաւատորմիչ հիւսիսային Գերմանիայից: Ասորական քրիստոնեայք համոզեցին խաչակիրներին յարձակուիլ Եգիպտոսի վրայ, փոխանակ Երուսաղէմի վրայ գնալու: Իրաւ

է, Եգիպտոսումն էին կենդրոնացած մահմետականների զըլխաւոր ոյժերն. եգիպտական զօրքում լաւագոյն զնդերը կազմուած էին չերքեզ սարուկներից, այսպէս կոչուած մաւրիյիլկերից: Խաչակիրները ցամաք գուրս եկան Նեղոսի դելտայի մօտ և առան Դամիետտան: Սուլթանը պատրաստէր թողնելու նրանց Երուսաղէմը փոխանակ այդ նաւահանգստի, բայց նրանք չը համաձայնեցին և յարձակուեցան եգիպտական գլխաւոր ամբողջի—Մանսուրի վրայ: Ինչպէս բոլոր այս պատերազմների մէջ, ասպետները կռուում էին արիաբար, բայց անշնորհ կերպով: Նրանց հետ մղեցին ու պաշարեցին իրենց բանակում: Ստիպուեցան Դամիետտան յետ տալու, որպէս զի կատարեալ պարտութիւնից ազատուին¹⁾:

Ֆրիդրիկոս Բ. 1229 թուին երկար ձգձգումից լեւեցերորդ տոյ նաւերով Ասորիք ուղևորուեց: Նրան չէր առաջարշաւանք, 1229 նորդում կրօնական ոգևորութիւնը. բայց դրա փոխարէն նա ներքաւիս դիւանագէտ եւ պետական անձն էր: Նա ուղևորուեցաւ ընդ ամէնը միայն տասն հազար զօրքով, բայց այնպէս ճարպիկութեամբ օգտուեցաւ մահմետականների երկպառակութիւններից, որ առանց պաշարման և ճակատամարտի ստիպեց եգիպտական սուլթանին Երուսաղէմն իրեն տալու և մահմետականների հետ բարեմական կապեր հաստատեց: Դրիդոր Թ. պապը սչ միայն չ'ուրախացաւ Երուսաղէմի լեւտս նուաճումով, այլ հրատարակեց նաեւ, որ բոլոր դաշը դաւադրական համաձայնութիւն է անհաւատների հետ և արգելանք դրաւ Սուրբ Երկրի վրայ: Ֆրիդրիկոս Բ-ի գրաւումն անհաստատ էր: Եգիպտոսի սուլթանին ծառայող թուրքերի մի գունդ 1244 թուին, կրկին առաւ սրբազան քաղաքը, և այդ ժամանակից սկսած մինչև մեր օրերը նա գտնուում է մահմետականների ձեռքին:

1244

¹⁾ Հինգերորդ և վեցերորդ արշաւանքների մէջ տեղի ունեցան երեխայից արշաւանքներ: Մի ֆրանսիացի վեշտասանմեայ հովիւ շրջեց միջին Փրանսիայի մի մասն, հրաւերելով պատանիներին դէպի Սուրբ Երկիրը: Ետեւոր հետեւում էին նրան համոզուած, որ անմեղ երեխայց Եստուած կ'օգնէ կատարելու այն մեծ գործը, որ չէին կարողանում վճարել մեղաւոր ասպետները: Ժողովեցան 30 հազարի չափ երեխայք, մարտիական վաճառականներն լանձն առան նրանց Ասորիք հասցնել, բայց դրա փոխարէն վաճառեցին զրանց

Եօթներորդ
արշաւանք:

1248

Պապն ուղարկեց քարոզիչներ նոր արշաւանքի
հրաւիրելու: Նրա կոչին արձագանգ տուին կրկին ֆրան-
սիացիք: Լուդովիկոս Թ. թագաւորը, որին արեւմտեան
եկեղեցին սրբերի կարգն է դասել, և որն չիրաւի սուրբ
էր իւր բարոյական մաքրութեամբ և անկեղծ բարե-
պաշտութեամբ, արշաւանքի գլուխն անցաւ (1248): Խա-
չակիւիները վճռեցին հարուած հասցնել եգիպտական
սուլթանին, որովհետեւ նրան էր ենթարկուած Երուսա-
ղէմը: Նրանք ցամաք ելան Գամիետտայի մօտ և առան
քաղաքը: Բայց քրիստոնեայք չը կարողացան գործել
Նեղոսի հովտում, ջրանցքների մէջ, բացի զրանից նրանք
նեղուում էին տօթից ու հեղեղից: Վերջապէս, քրիս-
տոնէից մէջ յայտնուեցաւ ընդադարութեան հիւանդու-
թիւնը (scorbut). մեծ բազմութիւն մեռաւ, մնացած-
ներն ուժասպառ լինելով անձնատուր եղան եգիպտոս-
ցոյ, որոնք հասարակ զինուորներին կոտորեցին, իսկ
թագաւորին ու տապեաներին խոստացան ազատ թող-
նել մեծ փրկանքով: Այս համաձայնութիւնը քիչ մնաց
խանգարուում էր շնորհիւ այն հանգամանքի, որ մա-
մելիկներն ապստամբեցան սուլթանի դէմ և սպանեցին
նրան իւր պալատականների հետ միասին: Լուդովիկո-
սին և նրա հետ եղած ասպետներին սակայն արձակե-
ցին: Սրանք ուղևորուեցան Ասորիք և երեք տարի անց-
կացրին այնտեղ ուխտաւորութեամբ և հոգեշահ գոր-
ծերով:

Ութներորդ
արշաւանք:

1270

Փրանսիա դառնալուց յետոյ Սուրբն Լուդովիկոս
խաչակրաց պատերազմի միտքը չը թողեց: Արդէն իսկ
ծերութեան հասակում նա կազմակերպեց մի նոր ար-
շաւանք, որին միացան սակաւաքիւ աւսպետներ, եւ
նրանք էլ ռոմիկ սաւանաշու պայնաւնով (1270): Կար-
լոս Ա. ժողացին, թագաւորի եղբայրը, որ նոր էր տի-

մահմտականներին իբրեւ ստրուկ, Գերմանիայից մի այլ երեխայից
արշաւանք դուրս եկաւ, բայց ծառայելու չեա պահեցին զրանց և
չը թողին առաջ գնալու:

րել Հոհենշտաուֆենների սիկիւեան թագաւորութեան,
համոզեց թագաւորին ցամաք ելնել Թունիս, որպէս զի
նուաճէ էմիրին, որ ընդունել էր փախստական գիբել-
լիններին: Խաչակիւիների բանակում ժանդարտ երեւե-
ցաւ, և ինքը Լուդովիկոս թագաւորը զոհ դարձաւ այդ
հիւանդութեան: Մնացածները շտապեցին հաշտուիլ
սարակինոսների հետ և դարձան Փրանսիա:

Երբ ընդհատուեցաւ այն օժանդակութիւնը, որ
խաչակիր արշաւանքներն հասցնում էին ասորական
զաղութներին, որանք ոյժ չ'ունեցան պաշտպանուելու
սեփական զօրութեամբ: Եգիպտական սուլթանները տի-
րեցին զրանց միմիանց լետելից և, վերջապէս, 1291
թուին առան Ակրան, ասորական ծովափի գլխաւոր նա-
ւահանգիստն: Կենդանի մնացած ասպետները փախան
և ապաստանարան գտան Կիպրոսում, և այնտեղ մինչև
ժէ. դարու վերջը կանգուն մնաց մի ծաղկած թագա-
ւորութիւն, որ ծառայում էր իբրեւ միջնորդ առևտրի
արեւմտեան Եւրոպայի և մահմետական Արևելքի մէջ:

1291

Տևտոնեան կարգն իւր գործունէութիւնը փոխա-
գրեց Բալթեան ծովի ափունքն և զբաղուեցաւ պրուս-
ներին նուաճելով ու քրիստոնեայ դարձնելով. Հիւրըն-
կալները զբաւեցին Հռոգոս կղզին և այնտեղից շատ
դարերի ընթացքում ծովային պատերազմ մղեցին ասիա-
կան և ափրիկեան մահմետականների հետ:

Խաչակրաց արշաւանքներն ընդհանրապէս անյա-
ջող ելք ունեցան: Կրօնական ոգևորութիւնն ու անձնա-
կան քաջութիւնը բաւական չեղան մահմետականների
զօրութիւնը կոտրելու արեւելքում: Գլխաւոր խոչըն-
դոտն ամբողջ ժամանակ անմիաբանութիւնն էր, որ
յասուկ էր աւասական դարաշրջանին, շնորհիւ դրան
անհնարին էր ասպետական զինուորապետից կար-
գապահ զօր կամ ամուր կազմակերպութեամբ տեղա-
րիւն ստեղծել: Այսու ամենայնիւ խաչակրաց արշա-

Խաչակրաց
արշաւանք-
ների հետե-
անքները:

ւանքներըն, ահագին նշանակութիւն ունեցան միջնագործան կեանքի համար.

1) Սրանք նպաստեցին բիւզանդական կայսրութեան տկարանալուն, որ հէնց սկզբից թշնամական յարաբերութեան մէջ ընկաւ դէպի լատին գինուորութիւնն եւ քիչ մնաց բոլորին ջնջուէր չորորդ արշաւանքով:

2) Այս ձեռնարկութիւններից ամենամեծ շահն ունեցան իտալական ծովագնացները: Վենետիկն ու Ճենովան զարգացրին իրենց առեւտուրն արեւելքի հետ, հիմնեցին մի շարք գաղթավայրեր ու գործակալութիւններ, մշակեցին յատուկ առեւտրական եւ իրաւական սովորութիւններ:

3) Խաչակրաց արշաւանքների մէջ ելք էին գտնում միջնագործան հասարակութեան անհանդիստ ու գծոհ տարրերը: Այս արշաւանքները վերջին արտայայտութիւն էին ազգերի մեծ գաղթականութեան, որն սկսաւ գերմանացոց յարձակմամբ հռովմէական դաւաճների վրայ եւ շարունակուում էր իբրեւ վիկինգների արշաւանքներ, իբրեւ գերմանացոց արշաւանքներ դէպի Իտալիա, իբրեւ ձեռնարկութիւններ ֆրանսիական եւ իտալական նորմանների:

4) Արեւմտեան ասպետութիւնը իրանուեցաւ եւ միացաւ արշաւանքների ժամանակ: Անընդհատ յարաբերութիւն ունենալով միմիանց հետ, ասպետներն սկսան մի քանի որոշ կարգերի ու հայեացքների հետեւի:

5) Զանազան երկրների հետ ծանօթանալով ընդլայնուեցաւ խաչակիրների մտքի հորիզոնը: Նրանք Եւրոպայից դուրս էին գալիս աշխարհիս եւ մարդկանց մասին սահմանափակ եւ տգէտ գաղափարներով եւ ժողովում էին բազմաթիւ նոր ծանօթութիւններ ու սովորութիւններ:

6) Մահմետականների հետ հանդիպումն միշտ ամենեւին թշնամական չէր: Յակամայից ծանօթանում էին նրանց կենցաղավարութեան, մտնում էին յարաբերութեանց մէջ նրանց հետ եւ փոխ էին առնում նրանցից շատ բան: Հերիք չէ, որ այսպիսով մահմետական քաղաքակրթութիւնը մուտք գործեց արեւմուտք—թուրքացաւ եւ մոլեռանդ անհամբերողութիւնը դէպի բոլոր ոչ քրիստոնէականը:

7) Այն ձեռնարկութիւնը, որին նուիրուեցաւ այնքան շատ կրօնական զգացմունք եւ այնքան զոհ բերուեցաւ, նպաստեց դէպի եկեղեցին ու հասարակութիւնն եղած հայեացքի

յեղաշրջման: Արշաւանքներիս անյաջողութիւնը միեւնոյն ժամանակ պարտութիւն էր աստուածպետութեան: Հասարակութիւնն հիասթափուեցաւ այն քաղաքական իդէալների մասին, որ եկեղեցին էր առաջադրում նրան. կենսական եւ աշխարհական շահերն առաջին տեղը գրաւեցին: *g. c. m.*

ԳԼՈՒԽ Դ.

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ:

Հռովմէական կայսրութեան թշուառութիւններն ^{Բիւզանդական քաղաքակրթութիւն} Գ. և Ե. դարերում, բարբարոսների յարձակումներն ու գրանց հետեող շփոթութիւնները պատճառ եղան կըրթութեան անկման: Ժամանակ չը կար գիտութիւններով և գրականութիւնով զբաղուելու. ստիպուած էին ամենից աւելի մտածելու կեանքի պաշտպանութեան և օրական հացի մասին: Այն ժամանակուան սակաւթիւ իմաստասէրները, գիտնականներն ու արուեստագէտները շարունակում էին մշակել այն մտքերը, որ ծնել էին յուն-հռովմէական հեթանոս քաղաքակրթութիւնն և քրիստոնէութիւնը, այս մշակութիւնը սակայն ազաւորուած ու խղճուկ էր: Հիւն աշխարհի ժառանգորդեան մեծագոյն մասն հարկաւ, Արեւելեան Կայսրութեան մեջ էր, որ չէր ենթարկուել բարբարոսների աշխարհակալութեան, թէպէտ և նրանց ընդունել էր իւր մէջ: Յուստինիանոսի, պատկերամարտների, մակեդոնական հարստութեան գործունէութիւնը ցոյց է տալիս, որ Բիւզանդիայում չէր ընդհատուել պետական և իրաւաբանական կոիւր, որ կազմումէր հռովմէական կայսրութեան փառքը (Corpus juris, պատկերամարտների օրէնսդրութիւնը—Բասիլիկները), և այս օրէնսդրական գործունէորդիւնն ունեցաւ շատ մեծ գործնական նշանակութիւն, թէպէտ և ինքն ըստ ինքեան մի վերաքննութիւն և մասնական փոփոխութիւն էր առաջին

գարերու հռովմէական իրաւունքի: Հետաքրքրութիւնը դէպի վերացական մտածողութիւնն, որով աչքի էին ընկնում միշտ յոյները, փիլիսոփայական վէճերից աւսուածաբանական ուղղորդիւնների մրցման փոխարկունցաւ: Նեստորականները, միաբնակները, մոնոթէլէտները, Պօղիկեանները, պատկերամարտները, մանիքեցիք ամենայն կողմից յարձակուում էին օրթոդոքս վարդապետութեան վրայ, և վիճաբանութիւնների մէջ, որ ծագում էին այս առթիւ, մասնակցում էր բոլոր ժողովուրդը, ոչ թէ միայն հոգեւորականները կամ գիտնականները:

Օրթոդոքս եկեղեցու աստուածաբանութեան հիմնական վարդապետութիւնները ժողովից նուրբ Յովհան Դամասկացին է. դարու առաջին կիսին Նա ծագում էր ասորական յոյն աւանաւոր ընտանիքից եւ մի ժամանակ մեծ պաշտօն ունէր Բաղդադի ամիրապետի ծառայութեան մէջ ելեւմտեան վարչութեան բաժնում, ապա կրօնաւոր դարձաւ եւ մտաւ Երուսաղէմին մօտիկ մի վանք: Բացի պատկերամարտների եւ ուրիշ հերետիկոսների դէմ ուղղած հերքման շարադրութիւններից, նա կազմեց այսպէս կոչուած «Աղբիւր գիտութեան» գիրքը, որի մէջ բացադրեց «գիւրիկտիկան» (տրամախօսութիւնը), այսինքն փիլիսոփայական դատողութեան գիտութիւնը, եւ քրիստոնէական աստուածաբանութեան կարգը: Յոյների բանաստեղծական երեւակայութիւնն ու ճարտասանութիւնը դարձաւ դէպի կրօնական առարկաները: Աշխարհական բանաստեղծութիւնը զբաղուում է մանր բաներով եւ բառախաղ է դառնում. դրա փոխարէն հոգեւոր բանաստեղծութիւնն աչքի է ընկնում անկեղծ զգացմամբ եւ արտայայտութեան ուժով: Առանձնապէս նշանաւոր է Ռոմանոս Քաղցրերգակը (Չ. դար.) որ յօրինել է հոգեւոր երգեր, որոնք ցարդ օրթոդոքս ժամերգութեան զարդն են: Այսպէս ուրիշն, հասարակութեան լաւագոյն ոյժերը նուիրուում էին կրօնական շահերին եւ եկեղեցական կեանքին:

Աշխարհիս անհանգիստ կեանքն իւր փառասիրութեամբ, շահասիրութեամբ եւ բռնութեամբ, համեմատելով աւետարանական վարդապետութեան եւ եկեղեցական իգէալների հետ, թուում էր ունայն ու մեզսա-

լից, հաւատացեալի համար բարձրագոյն առաքինութիւն էր համարուում աշխարհից հրաժարումն եւ կռիւր մարմնի դէմ, այսինքն՝ մարդկային բնութեան սովորական ձգտումների, օրինակ՝ նրա ընչաժարաւորութեան եւ զուարճութեանց սիրու դէմ: Կրօնաւորութիւնը սկսաւ Դ. դարում, երբ քրիստոնէութեան եգիպտացի նախանձախնդիրները սկսեան վայրենի անապատներն առանձնանալ Թեբէի շրջակայքում եւ ապրում էին այնտեղ իբրեւ միայնակեացներ եւ պահեցողներ, գոհանալով քիչ սննդով, իրենց մարմինը տանջանքների ենթարկելով. որպէս զի սանձեն մարդկային կրքերն եւ կենդրոնացնեն բոլոր իրենց մտքներն Աստուծային վեհութիւնը դիտելու վրայ: Մարդուս կեանքն անց էր կենում աշխատելով իւր անձի վրայ, մշտական վարժութեան, կամ ճգնութեան մէջ (աւկէզէ): Երբեմն ճրգնաւորները միասին էին բնակուում, որպէս զի միմիանց նեցուկ լինին հրապոյրների եւ փորձութիւնների կռուի մէջ (կեղոքիս-միաբանակից): Այս միաբանութիւններն սկսան կազմուիլ որոշ կանոններով. ընտրում էին գլխաւոր կամ առաջնորդ. նոր մտնող կրօնաւորները խուզում էին իրենց մագերն եւ դրանով հրաժարուում աշխարհից, սրա հետ միասին ուխտում էին չ'ամուսնանալ, իրենց անձի համար ստացուածք ձեռք չը բերել, հպատակուիլ ու հնազանդիլ առաջնորդի հրամաններն: Մի քանի կանոնադրութիւններ տարածուեցան եւ գործ էին դրուում շատ վանքերում—այդպէս էին, օրինակ, ս. Բարսեղ Մեծի յօրինած կանոնները: Վանականութիւնը մեծ ազդեցութիւն ունէր հասարակութեան մէջ եւ գրաւում էր շատ հաւատացեալներ. աշխարհականները վանքերին առատ պարգէներ էին անում, ընծայում էին հողեր, դրամ եւ եկեղեցու մէջ գործածական թանկագին իրեր: Պատկերամարտ կայսրները փորձեցին մաքառել վանքերի դէմ, որոնք, դրանց կարծիքով, լա-

ւագոյն կալուածները գրաւում էին և իրենց արտօնութիւններով արգելք էին լինում զինուորական պարտականութեան կատարման, դատական իշխանութեան և հարկերի ժողովման: Բայց վաճառականութիւնը յաղթող զորքի եկաւ այս կոռից, որովհետեւ նա յագորդէր տալիս հասարակութեան խորամանկ պահանջին— մեղքերից եւ կենսական գործերից հեռանալու եւ կրօնին նուիրուելու ձգտման:

Աշխարհական լուսաւորութիւն:

Մինչ կրօնական շրջանում աշխույժ գործունէութիւնը չէր դադարում, աշխարհական գիտութիւնն ու գրականութիւնը զուրկ էին մնում նորագիւտ ինքնուրուշութիւնից: Բիւզանդական գիտականութիւնը գրչաւորաբար ուղղուած էր դէպի ժողովրդին, մեկնութիւն, կրօնական, քաղաքացիական հիմնականներէն երկերից: Այսպէս օրինակ՝ Փոտ պատրիարքն յօդոյնց ամենատեսակ հին հեղինակների երկերից քաղուածքների ու մեկնութիւնների մի ահագին «մատենադարան»:

Պետրոս ԺԱ. դարում փայլում էր գիտութեանց բոլոր ճիւղերում, փորձեց գրական ամենայն տեսակ երկեր յօդոյնց, բայց նրա գրութիւնները մի տեսակ ձեռնածութիւններ էին, դրանց գլխաւոր նպատակն էր հռչակել հեղինակին: Բիւզանդացոյ աշխարհական գրականութեան մէջ ամենից մեծ գին ունին պատմական եւ ժողովրդագրական վաստակներն եւ պատերազմական արուեստին ու պետական կառավարութեան նստիւթեան շարադրութիւնները: Վեցերորդ դարում օրինակ՝ Մօրիկ կայսրն յօդոյնց պատերազմական արուեստին վերաբերեալ մի ձեռնարկ, որի մէջ, նկարագրել է նա ի միջի այլոց եւ իւր ժամանակակից սլաւների բարքերը: Տասներորդ դարում նշանաւոր են Կոնստանդին Ծիրանեծնի շարադրութիւնները՝ սա մանրամասն կերպով նկարագրել է պալատական արարողութիւնն եւ հազորդել տեղեկութիւններ կայսրութեան թեմերի կամ նահանգների մասին:

Բագմատիկ պատմագիրներից աչքի են ընկնում. Պրոկոպիոսը, որին մենք պարտական ենք մի ամբողջ շարք պատմութիւններ պատերազմների, կառավարութեան ու պալատական

կեանքի մասին Յուստինիանոսի ժամանակի Աննա Կոմնենան, Ալէքս Կոմնեն կայսրը զուարթ, որ գրել է իւր հօր կենսագրութիւնը, Նիկիտա Ակոմինատոս, որ պատմում է Մանուէլ եւ Անդրոնիկոս կայսրների եւ Կոստանդնուպոլսի խաչակիրներից նուաճուելու մասին: Բիւզանդական գրականութիւնն այն մեծ նշանակութիւնն ունեցաւ, որ դա կրթական միջոց դարձաւ բարբարոսաց համար, որոնք յարաբերութեան մէջ էին մտնում Արեւելեան կայսրութեան հետ: Յունարէնից սլաւեան լեզուները—յատկապէս հին-բուլղարական լեզու—թարգմանեցին ո'չ միայն Սուրբ Դրքերը, այլ նաեւ սրբերի վարքերը, բժշկութեան եւ բնական պատմութեան վերաբերեալ տեղեկութիւնների ժողովածուներ, պատմութիւններ ու ամենատեսակ աւանդութիւններ: Դանուրի շրջակայ երկրներից այս գրական երկերը տարածուում էին դէպի արեւմտեան Եւրոպա եւ Ռուսիա:

Գեղարուեստի մէջ բիւզանդացիք նոյն յատկութեամբ են աչքի ընկնում, ինչ յատկութեամբ եւ գրականութեան մէջ. նրանք յաջողութեամբ շարունակումն են արուեստագէտների գործը, բայց դրա հետ միասին գլխաւորապէս աշխատումն են եկեղեցեաց զարդարանքի վրայ:

Ամենից աւելի ծագեց նախապատկերներ: Եկեղեցեաց շինութիւնների մէջ մշակուեցաւ բիւզանդական ոճը: Տաճարը կառուցուում էր սովորաբար յունական խաչի ձեւով, որ ներկայացնում էր երկու հաւասարաչափ երկարաձեւ քառանկիւնների խաչումը: Մէջ տեղում, խաչման կէտի գլխին, ամրառնում էր գմբէթը: Դուրս ցցուած ծայրերի գլխին երբեմն դնում էին եւ փոքր գմբէթներ: Պատահանները լայն էին բանում, այնպէս որ տաճարը լցուում էր լուսով եւ ներքին չքեղ զարդարանքը—զանազան գոյնի մարմարեայ շրջանակներն եւ մողայիկէ պատկերների փայլուն գոյները ոսկէ յատակի վրայ— աչքի էին ընկնում: Ընդհանուր սպաւորութիւնը հանդիսական, ուրախ եւ պայծառ էր: Սկսած ԺԱ. դարուց, ամենից առաջ Աթոնի վանքերում, չէնքը նեղանում է, խաւար է դառնում, սրբերի պատկերների համար կանոն է սահմանուում, այսինքն՝ դրանց սկսումն անսխալութեամբ օրինակների համաձայն նկարել, այդ եւս ճշմարտական գծերով—նիհար, նուազած: Բիւզանդական նկարչութեան արժանքին ա'յն է, որ նա ստեղծեց ու սահմանեց ճիւղեր, օրինակներ, որոնց համաձայն եւրոպա-

կան արուեստագէտներն սկսան երեւակայել Յիսուս Քրիստոսին, Աստուածածնին ու սրբերին:

Գերմանա-ռոմանական երկրների կեանքի ու կրթութեան մէջ ևս նկատելի է հին աշխարհի և քրիստոնէութեան զօրաւոր ազդեցութիւնը, և նոյնպէս ամենամեծ գործունէութիւն և ոյժ ցոյց է տալիս եկեղեցին: Արեւմուտքում գիտութեան և գրականութեան անկումն աւելի խիստ է արտայայտուում, քան թէ արեւելքում, բայց ժԲ. դարուց սկսուում է նոր ու զօրաւոր կեանք:

Հռովմէական կաթոլիկ եկեղեցին, որ իշխում էր արեւմտեան Եւրոպայում, առաւել եւս մեծ դեր էր խաղում այն պատճառով, որ մուտք էր գործել բարբարոսների մէջ, որոնք երկրպագում էին նրա լուսաւորութեան, և հաստատուել էր աւատական իշխանների մէջ, որոնք խոնարհում էին նրա միութեան առջեւ: Երես առ երես հանդիպելով մի հասարակութեան հետ, որ ստոր էր իրենից, կաթոլիկ հոգեւորականութիւնը սովորեց իւր վրայ նայել իբրեւ մի բարձր զօրութեան, որ Աստուծոյ հետ անմիջական հաղորդակցութեան մէջ է գտնուում և տարածում է Աստուծոյ շնորհն իւր շուրջը: Հաւատացեալների համայնքն համարուում էր հպասակ, և եկեղեցական գործերում ինֆլուորուորքիւնից ու ձայնից զուրկ:¹⁾

Հոգեւորականութիւնը մատակարարում էր մարդկանց խորհուրդներն ու ազատում էր պատժից մեղքերի համար: Կաթոլիկ աստուածաբանների վարդապետութեամբ, Քրիստոս իւր ազատակամ չարչարանքներով և սրբերն իրենց նահատակութիւններով հնար էին տուել մարդկանց փրկուելու, չը նայելով իրենց մեղքերին. կազմուել էր մի մեծ զանձ, որ բաւական էր ասպախարող մեղաւորներին սատանայի ձեռքից ազատելու: Այդ զանձն սնորհնողն երկրիս վրայ եկեղեցին է հանդիսանում, և հաւատացեալները պէտքէ խնդրեն ներումն

¹⁾ Այս պատճառաւ աշխարհականներին զրկեցին հացով ու գինով հաղորդուելու իրաւունքից: Միայն հոգեւորականներն էին արժանի աղօթիս հաղորդութեան, իսկ աշխարհականներն ստանումն միայն նշխարներ, այսինքն՝ օրհնած հացի կտորներ: Աշխարհականների հպատակ զրութիւնն արտայայտուում էր ևս այնու, որ կաթոլիկ եկեղեցին թոյլ չէր տալիս Սուրբ Գրքերը կարդալու և ժամերգութիւնը մի այլ լեզուով, բացի լատիներէնից, կատարելու:

և կաթոլիկ հոգեւորականներից, որին իշխանութիւն է տուած կապելու և արձակելու: Շնորհիւ նրա բարեխօսութեան, համառօտուում է մեղաւորի մնալու ժամանակը քաւարանի տանջանքների մէջ, իսկ որոշ դիպուածներում հանդուցելոց հոգու առաջ բացուումն գրախտի դռները: Թողութիւնը (յիւղորդեցիկ) ձեռք էր բերուում զանազան կերպով—աղօթքով, ուխտագնացութեամբ, խաչակրաց արշաւանքներին մասնակցելով և եկեղեցու օգտին ընծայարեւութիւններ անելով, որ երբեմն կատարեալ առեւտրի կերպարանք էին առնում:

Կաթոլիկ-հռովմէական եկեղեցում, ինչպէս նաև Արեւմտեան արեւելեանում, իշխող էր ճգնաւորական իդէալը: Դեռ ևս սուրբ Սգոստինոսն աշխարհական կեանքն համարում էր սատանայի շէնք, և փրկութիւն էր տեսնում մի միայն եկեղեցական պետութեան, թէկուրատայի կամ Աստուծոյ արքայութեան ստեղծման մէջ: Արեւմտեան վանականութիւնն յունականից սչ նուազ պատուիրում էր անընդհատ կռիւ մարմնու ցանկութիւնների և ճաշակների դէմ, աշխարհս նկարագրում էր իբրեւ մի որոգայթ հրապոյրների, որ ձգուած է մարդու շուրջը: Արեւմտեան վանականութիւնը սակայն այնչափ չէր ձգտում դէպի վերացական կեանք, ինչքան իրեն գործնական նպատակներ էր ստացադրում, կամենում էր ազգել աշխարհական կեանքի վրայ, խառնուիլ նրա մէջ և առաջնորդել նրան: Այս ձգտումը նկատելի է արդէն արեւմուտքում հիմնուած առաջին հզօր վանական միաբանութեան կանոնների ու գործողութեան եղանակի մէջ: Վեցերորդ դարում սուրբ Բենեդիկտոսը հիմք դրաւ իտալական վանքերի, որոնցից ծագեցան այլ բենեդիկտեան անապատները: Կրօնաւորները տարածում էին տնտեսութեան կատարելագործուած եղանակներ — մաքրում էին անտառները, ցամաքեցնում էին ճահիճներն, նոր մշակութեան եղանակներ էին մտցնում, նոյն ժամանակ և վանականները հոգս էին քաշում հոգեւոր մշակութեան մասին—արտագրում էին

եկեղեցու հարց և դասական հեղինակների գրքերը, հիմնում էին դպրոցներ:

Այն ահագին հարստութիւնը, որ ժողովուրդ էր նրանց ձեռքում, վաս ազդեց միաբանութեանց բարոյականութեան վրայ. ազահութիւնն ու որկրափոխութիւնը դարձան վանքերում սովորական մեղք: Միւս կողմից, մեծ չարիք էր աշխարհական մարդկանց եկեղեցական գործերին խառնուիլը, թեմերի ու արքայութիւնների յափշտակութիւնը շահասէր աշխարհականներին: Բայց այս չարիքների դէմ բողոքում էին եկեղեցու լաւագոյն ներկայացուցիչները, եւ ժամանակ առ ժամանակ կատարուում էին դժուար բարեփոխութիւններ: Տառներորդ դարու սկզբում Բուրգունդիայում հիմնուեցաւ Կլիւնի արքայութիւնը: Բենեդիկտեան կանոններն այնտեղ առանձին խտուութեամբ էին գործդրուում. գլխաւոր վանքի օրինակով հիմնուած միւս վանքերն հնազանդում էին Կլիւնեան արքայութեան անսահման իշխանութեան: Այս տեղ սկսուեցաւ կոիւն ընդդէմ սիմոնիականութեան եւ առաքելութեան (ինվեստիտուրա) եւ յօգուտ քահանայից ամուրիութեան: Երբ Կլիւնեան շարժումը տկարացաւ, ֆրանսիական Սիսո վանքից նոր դարկ տրուեցաւ եկեղեցական բարեփոխութեան. այս փորձի գլխաւոր ներկայացուցիչն էր Կլեմէնտի արքա սուրբ Բենարդուսը, երկրորդ խաչակրաց արշաւանքի յայտնի քարոզիչը: Բայց այս բարեփոխութիւնները ծագում էին մի քանի առաջնորդող մարդկանց անձնական ազդեցութիւնից եւ էապէս չէին փոխում վանական կարգը. թէ Կլիւնին եւ թէ Սիսոն գործ էին դնում սուրբ Բենեդիկտոսի նախկին կանոնները:

Պրանկիս-
կեանք:

Տառներեքերորդ դարում երկու փորձ եղաւ վանականութիւնը նոր հիմքի վրայ դնելու: Մի երիտասարդ, հարուստ վաճառական, Աստիզեցի (Ումբրիայում) Պրանկիսկոսը, որ յայտնի էր իւր ուրախ բնավորութեամբ եւ զուարճասիրութեամբ, յանկարծ հրաժարուեցաւ աշխարհիցս եւ մենացաւ Աստիզի շրջակայքում գտնուող մի աւերակ մատրանը: Նա նուիրել էր իրեն ոչ միայն պահեցողութեան եւ աղօթքի, այլ առանձին եռանդով օգնում էր աղքատներին, տկարներին, հիւանդներին: Բոլորները սկզբում նրան զգուանք էին պատճառում ի-

րենց սոսկալի վերքերով. սակայն նա հարկադրեց իրեն նրանց խնամելու եւ սկսաւ այդ ծանր պարտականութեան մէջ մեծ գոհացումն զգալ: Նրա սէրը ծաւալում էր բոլոր կենդանի արարածների վրայ. ոչ միայն մարդիկ, այլ եւ կենդանիք սիրելի եւ մերձ էին նրա սրտին: Այս բարութեան եւ ողորմութեան զինուորի շուրջը ժողովուրդեցաւ բազմաթիւ աշակերտներ ու հետեւողներ: Պապի թույլտուութեամբ (1209) նա կազմեց նրանցից մի նոր վանական միաբանութիւն *միկորիս-նետի*, կամ *Քրակիսկեանների* (*fratres minores*): *Կրակիսկեանները պիտի ապրէին ողորմութեամբ, որպէս զի խեղճերին ազգակից դառնան:* Այս մուրացիկ միաբանները չէին առանձնանում վանական միայնութեան մէջ, այլ, ընդհակառակն, միշտ գործում էին քաղաքներում եւ գիւղերում, բարոյական օժանդակութիւն հասցնելով եւ տառապելներին ու մոլորուածներին դէպի կրօն հրաւիրելով:

1209

Այր մարդկանց միաբանութիւններին համապատասխան գործում էին եւ կանանց միաբանութիւնները—Կլարիսսեանք, որ այսպէս էին կոչուում իրենց հիմնադիր Աստիզեցի սրբուհի Կլարայի անուամբ, որ հետեւող էր սուրբ Պրանկիսկոսին: Վերջապէս, կազմուեցաւ «երրորդ միաբանութիւնը» այն անձինքներից, որոնք աշխարհումն էին մնում եւ վանական ուխտեր չէին յանձն առնում, բայց աջակցում էին Պրանկիսկեանց բարեգործական ձեռնարկութիւնների մէջ:

Մերձաւորապէս այդ ժամանակներում ծագումն առաւ *դոմինիկեանների* միաբանութիւնը: Սրա հիմնադիրն էր մի սպանիացի Կաստիլիացի, Դոմինիկ Գուցման: Նա երիտասարդ հասակում կրօնավարութեւ էր, ուսել էր երկու համալսարաններում եւ իւրացրել էր ժամանակի դպրոցական իմաստութիւնը: Նա երկար ժամանակ գործեց Պրանսիայի հարաւում, Տուլուզում, ուր տարածուած էր ալլբիգոյեան աղանդը: Դոմենեկն յամուութեամբ մաքառեց դրա դէմ: Նա այն միաբն յղա-

Դոմինիկ-
եաններ:

ցաւ, թէ անհրաժեշտ է մի յատուկ վանական միաբանութիւն ստեղծել *հերետիկոսական մոլորութիւնների դէմ կռուելու* և ճշմարիտ հաւատոյ դաւանութիւնը տարածելու համար: Այսպէս ծագեցաւ քարոզիչ եղբայրների (fratres praedicatores) (1220) կարգը, որ ընդունեց մինօրիտների կանոնագրութիւնը, բայց իրեն գլխաւոր նպատակ որոշեց ոչ թէ բարեգործութիւնը, այլ ուսուցումը: Այս երկու մուրացիկ վանականների կարգերն ահագին յաջողութիւն ունեցան: Փրանկիսկեանների թիւը ժ.Պ. դարու վախճանին հասաւ 800,000. դոմենիկեանները վանքեր ունէին նոյն իսկ Գրէնլանդիայում: Այդ կրօնաւորները հպատակուած էին իրենց հրամանատարներին (գեներալ), այսինքն՝ գլխաւոր արքայօր, կապիտուլներին կամ իրենց կարգի ժողովներին, և, վերջապէս, պապին: Նրանք հանուած էին եպիսկոպոսների իշխանութեան տակից և հաշտ չէին աշխարհիկ հոգեւորականութեան հետ, որ դժգոհ էր դրանց իւր գործերի մէջ խառնուելուց: Բայց ժողովուրդը հաւատարմութեամբ մնաւ նրանց կարգին, որոնց կեանքը աշխատանքով ու զբոսանքով լիքն էր, և շրջապատող հասարակութեան հոգեւորականներն ու շահերը իրենց սրտին մօտիկ: Պապերը պաշտպանուած էին նրանց, նրանք ստացան հոգեւոր դպրոցներում և համալսարաններում դասաւանդութեան ղեկավարութիւնը, իսկ դոմենիկեաններն իրենց ձեռքն առան ինկվիզիցիան (հաւատաքննութիւնը) այսինքն՝ հերետիկոսական գործերի քննութիւնը, հերետիկոսներին որոնելն և հալածելը:

Գալոցները: Միջին դարերում հոգեւորական դասակարգը միեւնոյն ժամանակ եւ գիտականների դասակարգ էր: Կարլոս Մեծից սկսած ուսուցումն յարգանաց աւարկայ դարձաւ. դպրոցների թիւը բազմացաւ, դասատուութեան ծրագիրները հաստատուեցան: Ամէն ոք, որ կամենում էր

կրթութիւն ստանալ, մտնում էր վանքի կամ մայր եկեղեցու դպրոցը: Այս հոգեւոր դպրոցներում աւանդուում էին ազատ արուեստները (artes liberales), որ բաժանուում էին երրեակի (trivium) և քառեակի (quadrivium): Ընդհանուր դասընթացն աւարտածները կարող էին սկսել մասնագիտութիւններն ուսանել — աստուածաբանութիւն, իրաւագիտութիւն կամ բժշկութիւն: Ամենանշանաւոր և ամենից շատ լաւախողներ ունեցող դպրոցներն սկսան դուրս գալ եկեղեցիների և վանքերի իշխանութիւնից, ստացան ինքնուրոյն կազմակերպութիւն և կոչուեցան *ունիվերսիտէս* — համալսարան:

Փարիզու համալսարանն, օրինակի համար, առաջ եկաւ Փարիզու Աստուածանի (Nodre Dame de Paris) եկեղեցու զբոսայրոցից: 1210 թ. Փարիզու քաղաքացոց եւ ուսանողների մէջ տեղի ունեցած կռուի առթիւ, ուր սպանուեցան քանի մի ուսանող-գերմանացիք, Փիլիպպոս Աւգուստ թագաւորը դաստուռներին և ուսանողներին ազատեց իւր գործակալի (prévôt) եղբունազատ ատենից եւ համալսարանական միաբանութեան (corporation) իրաւունք տուաւ իւր անդամներին հասնելու: Այդ իսկ ժամանակներում իննովկենտիոս Գ. ազադատելու: Այդ իսկ ժամանակներում իննովկենտիոս Գ. ազատեց զպրոցը մայր եկեղեցու հպատակութիւնից: Ազատ արուեստեց զպրոցը կամ եկեղեցու հպատակութիւնից: Ազատ արուեստներով, կամ գրականութեամբ պարագող ուսանողները բաժանուում էին չորս ազգի, կամ հայրենակցութեան (ֆրանսիական, այսինքն՝ իւղը-Ֆրանսի, նորմանդական, պիկարդիական եւ անգլիական), իւրաքանչիւր ազգ ընդհանուր ժողովով ընտելում էր իր համար վերատեսուչ (ռէկտոր) միամիս ժամանակով: Գրականականների չորս ազգերին յարում էին ղեկըրիստների, որոնք պարապում էին եկեղեցական իրաւագիտութեամբ կամ կանոնագիտութեամբ, բժիշկների եւ աստուածաբանների դասակցութիւնները: Միաբանութիւնների գլուխ էին կանգնած ղեկանները:

Ուսանողները մտնում էին համալսարան տանեւէնից տանեւէն հասակում եւ նախ պարապում էին գրականական մասնաճիւղում, ուր ստանում էին բակաւարի եւ մագիստրոսի աստիճան: Ոմանք անցնում էին աստուածաբանական բաժինը, ուր դասընթացը դժուարին եւ երկարատեւ էր: Ուսանողները

Փարիզ էին ժողովուրդ Թրանսիայի բոլոր կողմերից եւ արեւմտեան Եւրոպայի բոլոր երկրներից: Աղքատագոյն ուսանողների համար կային օթարաններ բարեգործներից հիմնուած: Ուսանողները դրանց մէջ ստանում էին բնակարան եւ փոքրիկ թոշակ սննդի համար:

Փարիզի համալսարանը մի հզօր մարմին էր, որ ունէր յատուկ վարչութիւն եւ դատարան, նրա ունկընդիւնների թիւն հասնում էր տասնեակ հազարների եւ գտնուում էր թագաւորի հովանաւորութեան տակ: Առանձնապէս ծաղկում էին Փարիզում փիլիսոփայութիւնն ու տոտուածաբանութիւնը: Անգլիայում մեծ հռչակ ունէին Օքսֆորդի եւ Կէմբրիջի համալսարանները. Իտալիայում Սալեռնոն ԺԱ. դարուց սկսած ստացաւ ամենալաւ բժշկական դպրոցի անուն, իսկ Բոլոնիայում վերսկսուեցաւ հռովմէական իրաւագիտութեան ուսումնասիրութիւնը—մի ամբողջ շարք երեւելի ուսուցչապետների, սկսած Իրնարիոսից, բացադրում էին Յուստինիանոսի օրէնսգիրքը (Corpus juris): Աստուածաբանութեան ուսումն հիմնուած էր Սուրբ Գրոց եւ եկեղեցու հարց ուսումնասիրութեան վրայ: Միջնադարեան գիտութիւնը ճանաչում էր սակայն իմաստութեան մի այլ աղբիւր եւս—հիմն մատենագիրներ ի երկերը, մանաւանդ հին փիլիսոփայից: Արեւմուտքում գրեթէ ոչ ոք չը գիտէր յունարէն: Արիստոտելի ու Պլատոնի բնագիրները չէին կարողանում կարդալ, այլ կարդում էին նրանց թարգմանութիւնների հատուածներն ու Բոէտիոսի մեկնութիւնները: Այսու ամենայնիւ յունական փիլիսոփայութեան այդ խղճուկ մնացորդները, մանաւանդ Արիստոտելի հարուածները, մեծարանքով ու եռանդով էին ուսումնասիրւում: Միայն ԺԲ. դարում Կորդովայոն կազմուեց մի դպրոց, որ ուսումնասիրում էր Արիստոտելի բոլոր շարադրութիւնները: Տուրգոյի արքեպիսկոպոսը հրամայեց արաբերէնից լատիներէն թարգմանել Արիստոտելի շարադրութիւնները եւ նրա մեկնիչները

ամբողջ ժողովածուն եւ դրանով նոր լոյս ծագեցրեց արեւմտեան գիտնականներին: Դպրոցներում նիւթի պակասութեան պատճառով գլխաւոր ուշադրութիւնը դարձնում էին տրամախօսութեան (դիալեկտիկա) վրայ, այսինքն՝ որոշ առաջադրութիւններից եզրակացութիւններ հանելու, դրանց միջի հակասութիւններն բառնալու, այդ հակասութիւններն հաշտեցնելու միջոցներ գտնելու վրայ: Տրամախօսութեան շնորհիւ, միջնադարեան գիտնականներն առանց սեփական գիտողութիւնների եւ հետազօտութիւնների ստեղծեցին այսպէս կոչուած «սքոլաստիքական» գիտութիւնը: Դա ձգտում էր ամենից առաջ մտքի ձեւական կանոնաւորութեան եւ նրբբութեան, իսկ բովանդակութիւնը՝ դրա մէջ երկրորդական դեր էր խաղում:

Մանաւանդ շատ քննում էին այն խնդիրը, որի վերաբերութեամբ Պլատոնի ու Արիստոտելի կարծիքները տարբերուում էին—իդէաների կամ ընդհանուր գաղափարների նշանակութեան մասին: Ուսմանք—անուանականները (նոմինալիստ) պնդում էին, որ ընդհանուր, վերացական գաղափարները մի միայն անուններ են, բառեր, հնարուած նրա համար, որպէս զի յարմար լինի իրերը նշանակել, նրանք իրական գոյութիւն չունին: Այսպէս, իրականութեան մէջ չը կայ ոչինչ վերեցական «մարդ» գաղափարին համապատասխանող, այլ միայն կան առանձին մարդիկ բազմաթիւ առանձնայատկութիւններով, որ չեն բովանդակուում այդ գաղափարի մէջ: Միւսները—իրականները (ռէալիստ)—կարծում էին, որ իրապէս գոյութիւն ունին միայն ընդհանուր գաղափարները կամ իդէալները, որոնք արտայայտուում են առանձին իրերի մէջ, սրանց առանձնայատկութիւնները պատահական յաւելուածներ են, որ կարողենք հեռացնել, առանց էութիւնը ոչնչացնելու:

Փիլիսոփայութեամբ զբաղուելը, միջնադարեան գիտնականների կարծիքով, չունէր ինքնուրոյն նշանակութիւն: Դա պիտի ծառայէր իբրեւ նախապատրաստութիւն գլխաւոր գիտութեան—աստուածաբանութեան համար: Աքուլաստիկներն աւելում էին, որ փիլիսոփայութիւնն աւսուածարանութեան աղախինն է (philosophia est ancilla theologiae): Գլխաւոր իմաս-

Արեւիստ:

տասերներն ու զաստիսոսները միշտ դառնում էին այս հիմնական խնդրի քննութեան, բայց միշտ չէր յաջողում նրանց յարմարար համաձայնեցնել Սուրբ Գրոց ու եկեղեցու սուրբ հարց ցուցումները, ժողովների սահմաններն ու պապերի հրամաններն այն եղբակացութեանց հետ, որ նրանք հանում էին Արխատոսիցի եւ իւրեանց փիլիսոփայական դատողութիւններէն: Հաւատով փիլիսոփայական հաստատութեան օրինակը տուաւ Կենտրոնի արքեպիսկոպոս Անսելմոս Բայց սքոլաստիկներից ամենանշանաւորը, որ պարագում էր աստուածաբանութեամբ, բրէտոնցի Աբելիարն էր: Սա մի ասպետի աւագ որդին էր, բայց գիտնական ընթացքը գերադասեց զինուորութիւնից: Սա ունկնդիր եղաւ Փարիզում յայտնի աստուածաբանին, բայց զո՞ն չը մնաց նրա դասերից եւ այնպէս յաջող կերպով հերքեց իւր վարդապետին, որ նա ինքն իրեն պարտուած խոստովանուեցաւ: Այն ժամանակ Աբելիարն ինքը դասընթաց բաց արաւ եւ իւր գիտնականութեամբ, մտքի համարձակութեամբ եւ գեղեցիկ արտայայտութեամբ հաղարաւոր ունկնդիրներ գրաւեց: Նրան սիրահարուեցաւ ազնուական եւ խիստ կրթուած գեղեցիկուհի Էլօիզան, բայց նրա հօրեղբայրն ու խնամատարը խանգարեց սիրահարուածների երջանկութեան, եւ նրանք երկուսն եւս կրօնաւոր դարձան: Աբելիարը շարունակեց գիտնական զբաղմունքն ու դասախօսութիւնը: Նա չէր կամենում պարզապէս հետեւիլ եկեղեցու հեղինակութեան եւ իւր ուսուցման մէջ յենում էր բանականութեան ցուցումներին: Ապացուցանելու համար, որ պէտքէ նոյն իսկ այդ ճանապարհով ընթանալ, նա մի գիրք յօրինեց «Այո՛ եւ Ոչ» (Sic et non) վերնագրով, որի մէջ ժողովեց բազմաթիւ դէպքեր, երբ, նրա կարծիքով, Սուրբ Գիրքը, եկեղեցու հայրերն, ժողովներն ու պապերն անհրաժեշտ չէին տալիս: Այս անհամաձայնութիւններն աչքի առաջ ունենալով՝ Աբելիարը պահանջում էր վիճելի կէտերի ազատ քննութիւն: Այս պահանջի ընդդէմ բողոքեց Փրանսիական եկեղեցու ամենից յարգուած ներկայացուցիչը, սուրբ Բեռնարդ Կլերվալցիցին: Նա դատապարտում էր այն փորձը, որ պէտքէ եկեղեցին բազմաթիւ աղանդների լուծէր, համաձայն իւրաքանչիւր անձի սեփական հայեացքին: Ազատ քննութեան դէմ էր գնում նա եկեղեցու հեղինակութիւնը, իբրեւ մի ամբողջութիւն, որ հիմնուած է եւ զեկաւարտուած է Աստուածային չորհրդով: Եկեղեցին, իբրեւ ամբողջութիւն, չէ կարող ոչ մոլորուիլ, ոչ էլ հակասել իրեն,

խնդիրը միայն ա՛յն կարող է լինել, որ սահմանենք՝ թէ նրա իսկական կարծիքն ի՞նչպէս է: Սանսի (Sans) եկեղեցական ժողովում 1141 թ. Աբելիարը դատապարտուեցաւ, բայց յայտարարեց, որ զժգո՞հ է վճռից եւ պահանջում է պապի դատաստանը: Հոգովի ճանապարհին նա մեռաւ:

1141

Թէպէտ եւ Աբելիարն անձնապէս յաջողութիւն չ'ունեցաւ, սքոլաստիկայի նրա սկսած գործը զուր չ'անցաւ: Նա ցոյց տուաւ հաւանական ուղիքների խնդիրների վերաբերութեամբ զանազանասեռ կարծիքներ: Հայտնեցնելու անհրաժեշտութիւնն, եւ նրանից յետոյ սքոլաստիկական աստուածաբանութիւնը զբաղուեցաւ յատկապէս այդ խնդիրներով: Թովմա Ա. քուինեցու (1227—1274) ահազին 1227—1274 շախատանքը «Summa theologiae» զարմանալի հմտութեամբ, կատարելութեամբ եւ պարզութեամբ բացադրեց կաթոլիկ վարդապետութիւնն իւր բոլոր մանրամասնութիւններով եւ վերաբերութեամբ ո՛չ միայն աստուածաբանութեան, այլ նաեւ բարոյկանութեան, իրաւունքի եւ քաղաքականութեան: Այս աշխատութիւնն մինչեւ այժմ հիմունք է կաթոլիկ աստուածաբանութեան, եւ Լեոն Ժ. Գ. պապը զեռ նորերս պատուիրեց ուսումնասիրել այդ բարձրագոյն հոգեւոր դպրոցներում:

Միջին դարերում ծագած աղանդները սովորաբար այն աղանդներ: Նկարագրելու չափազանց արտայայտութիւններ են, որ ինքն եկեղեցին էր խոստովանում: Այսպէս, Օգոստինոսից սկսած հաստատուել էր թէ՛նամական հայեացք աշխարհական տէրութեան եւ կեանքի վերաբերութեամբ. այդ տեղից ծագում էր մի յատկական երկուութիւն—համոզմունք, որ կեանքն ու պատմութիւնը ներկայացնում են մշտական մաքառումն երկու սկզբանց—բարւոյ, որ քարոզում է եկեղեցին, եւ չարի, որ մարմնացած է աշխարհական հասարակութեան մէջ: Փրանսիայի հարաւում երկուսն էլ եւս կոչուած ձգնառարական իդէալըն աղանդի կերպարանք առաւ, որ շեղուում էր քրիստոնէութիւնից: Այնտեղ թափանցեց Բողոքարայից Բողոքմիւնիքի¹⁾ վարդապետութիւնը: Մարդկային մարմինը, նրա կարիքներն ու ձգտումները, աշխարհական շահերն ու զբաղմունքները, տէրութիւնն ու նրա հաստատութիւնները համարուեցան սատանայի արարածներ, իսկ Հին Կտակարանն—նրա յայտնութիւնը: Քրիստոս երեւում է իբրեւ հիմնադիր եկեղեցու երկ-

¹⁾ Այս պատճառաւ աղանդատներին Փրանսիայում կոչում էին bourges (bulgares):

րիս վրայ: Ճշմարիտ բարեպաշտութիւնը պահանջում է կատարելապէս հրաժարումն աշխարհից, որին ընդունակ են միայն սա-կաւաւորները—կաթարները կամ մաքուրները: Այն հաւա-տացեալները, որոնք իրենց ընդունակ չեն զգում զրկանքների եւ ազօթից նուիրուած խիստ կեանք վարելու, կաշկանդու-ումը չեն բարոյականութեան կանոններով, ամենայն ինչ, որ նրանք գործում են, միայն ապօրինի է: Բայց նրանք պարտաւոր են, գոնեա, մահուանից առաջ հրաժարուիլ չարիքից եւ դառնալ մաքուր: Սրան կարելի է համեմատաբարութեան խորհրդով եւ մեղքերի թողութեամբ, որ տալիս են կաթար-ները—զա կոչուում է մխիթարութիւն (Consolamentum): Իւ-րաքանչիւր մխիթարութիւնից յետոյ կատարուած յանցանք մահացու մեղք է: Այս աղանդը ծաւալուեցաւ Ֆրանսիայի հա-րաւում եւ ստացաւ այլբիզոնութիւն (Այլբի քաղաքից) անունը: Այդ տեղերումն իսկ տարածուեցաւ վալլեհնցոց աղանդը (զրա հիմնադիրն էր Լիօնցի վաճառական Վալլեհը): զրանք բողոքում էին կաթարի հոգեւորականութեան դէմ եւ պահանջում էին առաջին ֆրիսոնեայ հասկանքի կեանքի նման կենցաղավարու-թիւն, կատարել եղբայրութիւն եւ ստացուածքի հասարակաց լինելը: Իննովկենտիս Գ. պապը ձեռնարկեց այս աղանդների ջնջման: Մեծ արգելադրութիւն էր ան, որ Տուլուզի կոմսը նրանց կողմն էր պահում: Պապի նուիրակը նրան անիծեց եւ ի վրէժ դրան սպանուեցաւ կոմսի մերձաւորներից մէկի ձեռքով: Այն ժամանակ պապը խաչակրաց արշաւանք հրատարակեց աղանդաւորների դէմ, խոստանալով խաչակիրներին նոյնպիսի մեղաց թողութիւն, ինչպիսին ստանում էին Սուրբ Երկիր ուղեւոր-ուողները: Հիւսիսային Ֆրանսիայից չատ ապականեր մասնակ-ցեցին այս արշաւանքին: Սրանք անխնայ կերպով աւերեցին հարաւուր Բիդլէ քաղաքի առման ժամանակ պապի նուիրակը դռնում էր, որ սպանեն բոլոր բնակիչներին առանց խորու-թեան, հերետիկոսներին ու կաթարիկներին: «Աստուած իւրայ-իններին կ'ընտրէ»: Սպանուեցաւ 200,000 չափ մարդ: Հիւսիսային ասպետութեան գլուխ կանգնեց Իւդը-Ֆրանսից մի բարոն, Սիմոն-դը Մոնֆոր: Սա Խորեց Տուլուզի կոմսի հոգեւորն եւ բաժանեց 400 աւատական կալուածներ արշաւանքի միւս մասնակցողներին: Սա կարողացաւ ջարդել Արրադոնիոյ թա-ղաւորին, որ օգնութեան էր եկել իւր փեսային, Տուլուզի կոմսին: Բայց հիւսիսային Ֆրանսիայից համար զօւար էր դի-

մանալ հարաւայինների ապստամբութեան, եւ Սիմոնի յաջորդն իւր երկրներն յանձնեց Ֆրանսիական քագաւորին, որի իշխա-նութեան տակ վերջնական կերպով հաստատուեցաւ կաթարի-կութիւնը:

Միջնադարեան միւս աղանդներից արժէ յիշատակել այս-պէս կոչուած Սուրբ Հոգու եղբայրութեան շարժումը: Առաջին զարկը տուաւ Ֆիօրէի (Կալարիայում) վանքի վանահայր Յո-վակիմը: Սրա վարդապետութեամբ, աշխարհիս կեանքն անց-նում է երեք շրջան, համաձայն Սուրբ Երրորդութեան երեք անձանց: Սկզբում հայր Աստուած օրէնք տուաւ աշխարհիս Հին Կտակարանում—այդ ժամանակ կազմուեցաւ աշխարհա-կան հասարակութիւնը, ապա տեղի ունեցաւ Որդի Աստուծոյ զալուստը, եւ մարդիկ սկսան բառացի կերպով հետեւիլ Աւե-տարանի պատուէրներին, վերջապէս, պիտի գայ երրորդ շըր-ջանը—Սուրբ Հոգու, երբ պիտի ապրին մարդիկ ոչ թէ Սուրբ Գրքի տառին համաձայն, այլ հոգուն, եւ վանականութիւնը պիտի Խորէ աշխարհիս: Այս վարդապետութիւնը տարածուեցաւ Ֆրանկիսկեանների մէջ: Սրանք սուրբ Ֆրանկիսկոսին համա-րում էին Սուրբ Հոգու Կարապետ, եւ նրանցից մէկը զրեց «Յաւիտենական Աւետարանը», որի մէջ իւր տեսակ էր մէկ-նում Սուրբ Գիրքը:

Եկեղեցին անխնայ հալածում էր աղանդաւորներ-ը: Այդ բանի համար նրա գլխաւոր գործիքն էր ԺԳ. կանոնութիւնը: Տալուած հաստատուած հաւատաբանութիւնը, (ինկվիզի-ցիա), որի ղեկավարութիւնը գոմինեկեանների ձեռքին էր: Աղանդաւոր դարձածներին չարչարանքների էին ենթարկում եւ զբանով կորզում էին նրանցից խոստո-վանութիւն: Ամենից յամուներին եւ վտանգաւորնե-րին կենդանուին ալրում կամ նկուղների օրմերի մէջ կենդանի թաղում էին. մինչեւ իսկ թողութիւն ստա-ցածները շրջում էին կարմիր խաչ կրելով զգեստի վրայ եւ համարուում էին իրենց ամբողջ կեանքում անուա-նարկուած: Պատիժներն ի կատար ածելու համար եկե-ղեցին գիմում էր աշխարհական իշխանութիւններին ու յանցաւորներին «աշխարհական ձեռքի» էր յանձնում, որովհետեւ, հների հալեցքով ինքն եկեղեցին պէտք չէ

Աշխարհա-կան գրա-կանութիւն:

արիւն թափէր: Ի վարձատրութիւն աշխարհական իշխանութիւնը ստանում էր դատապարտութեան ստացուածքը: Այսպիսի արիւնահեղ միջոցներով յաջողութեամբ ընկճել միջնադարեան բազմաթիւ ազնուները:

Միջնադարեան քաղաքակրթութեան մէջ եկեղեցին զրախաւոր նշանակութիւն ունէր: Ծնորդն նրա օգնութեան, պահպանութեան հին կրթութեան մի քանի մնացորդները: Գերմանական ցեղերի հանդիս գաղով կեանքի մեջ քանի մի լոռ սկզբունքներ մտան, որ աշխարհական եւ նոյն իսկ հեթանոսական էին ծագումով: Իրաւ է, նոյն իսկ Գերմանիայում կոապաշտութիւնը չուտով տեղի տուաւ քրիստոնէութեան եւ հետք թողեց միայն զանազան տեղերի ժողովրդի հաւատալիքների մէջ: Սկանդինաւցիների մէջ նա աւելի յամառ կեանք ունեցաւ եւ առիթ տուաւ բանաստեղծական ստեղծագործութեան: Աստուածների մասին վիպասանութիւններ, նրանց արկածների ու հրականների հետ մարտնչելու մասին կազմութեան էգզայի (այսինքն՝ տատի) երգի մէջ: Էգզայում ձուլուեցան վէպերը (Saga — գերմաներէն sagen — վիպել ասել բառից) զիւցայների մասին, վիկինգների արի արշաւանքների մասին: Եւրոպայի ամբողջ արեւմուտքում հասարակութիւնը, միշտ պատերազմներով զրազուած լինելով, բարձր էր դասում ոչմն ու արիութիւնը, հետաքրքրութեամբ էր անսովոր արկածներով: Դեռակներում հանգէս էին գալիս գուսաններ, որոնք յորինում եւ պատմում էին քաջագործութեան, մահաւորի անհատական եւ պատմական եւ դիւցազների յաջողութեան մասին: Տրուբերների կամ մենեստրելների (գուսան) այս երգերն ու վէպերը երբեմն զօղուում ու կազմում էին մեծ վիպասանութիւններ: Գերմանիայում առանձնապէս նշանաւոր էր Նիբելունգների մասին վիպասանութիւնը: Դրա մէջ պատմութեամբ էր, թէ ինչպէս Զիգֆրիդ ասպետը յաղթում է դիւցազնունի Բրունհիլդին եւ ամուսնանում է բուրգունդական թագաւորի քրոջ Կրիմհիլդի հետ, ինչպէս նրան սպանում է դաւաճանութեամբ չար Հագենը, իսկ Կրիմհիլդը ամուսնանում է Էտցել, այսինքն՝ Ատտիլա թագաւորի հետ, եւ նրա հոնների օգնութեամբ վրէժ է առնում Հագենից ու բրգունգներից: Զիգֆրիդի մահուան համար սոսկալի պատերազմի մէջ ընկնում են բոլոր ասպետները: Հիւսիսային Ֆրանսիայում վէպերի ¹⁾ զրախաւոր նիւթն էր Կարլոս gestā — արիւթիւններ բառից),

Մեծի եւ նրա զինակիցների (պալադին) քաջագործութիւնները: Կար, օրինակի համար, Ռոլանդի Ռոնսեվալի հովտում սպանուելու մասին երգ: Կելտական աւանդութիւններից կազմութեան երգեր «Կոլոր սեղանի» ասպետների, որոնք բրիտանական Արթուր թագաւորի զինակիցներն էին: Բոլորովին ա՛յլ բնաւորութիւն ունէր բանաստեղծութիւնը Ֆրանսիայի հարաւում: Այն տեղի բանաստեղծները, տրուբադուրները, յորինում էին ո՛չ թէ զինուորական վէպեր, այլ ֆևրալիս ոսանաւորներ, որոնց մէջ նրանք աշխատում էին արտայայտել սէր, ծաղր, գովք: Ֆրանսիացոց բանաստեղծական երկերը տարածութեան Ֆրանսիոյ սահմաններից միւս կողմը — դրանց թարգմանում էին եւ նմանութիւններ էին յորինում գերմանացիք: Յատկապէս զօրաւոր էր տրուբադուրների ազդեցութիւնը Գերմանիայում, այնտեղ Հոնէնշտաուֆէնների շրջանում երեւան եկաւ նման բանաստեղծութիւն միակեղեցիկների (սիրոյ երգիչների), որոնցից գլխաւորներն էին Վոլֆրամ Ֆոն Էշենբախ եւ Վալթէր Ֆոն-դեր-Վոլֆելայէ: Սրանք պրոֆանսայիներից յետ էին մնում սրամտութեամբ եւ ոճի գեղեցկութեամբ, բայց գերեզանցում էին զգացմունքների անկեղծութեամբ եւ իմաստների խորութեամբ:

Աշխարհական գրականութեան բովանդակութիւնն ^{Ասպետութիւն} էին կազմում քաջագործութիւններն ու զգացումները ասպետների — ասպետական հասարակութեան մեջ կազմակերպուած զինուորական դասակարգի: Ասպետ կարող էին դառնալ ո՛չ միայն սենիորները կամ բարոնները, այլ նաեւ նրանց վասսալները: Մինչեւ եօթներորդ տարին տղան գտնուում էր կանանց հսկողութեան տակ. ապա նա մտնում էր տղամարդկանց մօտ վարժուելու եւ սովորում էր ձի հեծնել, սուր ու նիզակ բանացնել, շներով ու բաղէներով որս անել: Ոմանք, բացի դրանից, ուսանում էին եւ գրել կարգալ ու երաժշտութիւն: Վերջնական կրթութիւն ստանալու համար տղայք մտնում էին որ եւ է հարուստ ու առատաձեռն սենիորի ծառայութեան մէջ, որի գրեկում տօնախմբութիւններ ու օրսորդութիւններ էին կատարուում, մեծ հասարակութիւն էր ժողովուում եւ կարելի էր սո-

վորել ըստիր քաղաքավարական ձևեր ու ասպետական քաջասրտութիւն: Մերձաւորապէս քսանամեջ սրտանի զինակրին ասպետ էին ձեռնադրում, նախընթաց օրուան ամբողջ գիշերը նա աղօթքի մէջ էր անցկացնում. ձեռնադրութեան ժամանակ նրան հազցնում էին ասպետական զգեստ—զրահ և սաղաւարտ, սուր էին կապում մէջքին, որ նախապէս օրհնում էր քահանան: Ի վերջոյ մի նշանաւոր ասպետ հարուած էր տալիս նորընծայի ուսին և դրա հետ միասին խօսք էր ուղղում նրան:

Ասպետական ձեռնադրութիւնն այսպիսի հանգիստւորութեամբ էր տեղի ունենում այն պատճառով, որ ասպետ դարձողները պարտաւորուում էին անշեղ հետեւիլ աւսպետական պատնի կանոններին: Ասպետական պատիւը պահանջում էր ամենից առաջ մարդուց սեփական արժանեաց զգացումն: Աւատական կարգը թող պաշտպանութիւն էր ցոյց տալիս մարդկանց բռնութիւնների դէմ—առաւել ևս պարտք էր իւրաքանչիւրի համար իւր անձը պաշտպանել, ասպետը պիտի չի դիմանար ստորացման, ոչ երկիւղի և ոչ շահու պատճառաւ, պարտական էր իւր երաւունքները պաշտպանել, վրէժ խնդրել վիրաւորածինքի համար, թէպէտեւ նոյն իսկ եթէ ստիպուած լինէր գերեզանց ոյժերի դէմ կռուիլ: Իսկական ասպետը բարձր էր գնահատում իւր խօսքն ու խոստումը, նրան ատելի էր ստութիւնը, նենգութիւնը, դաւաճանութիւնը, դարանից չարձակումը. խօսքի և երգման հաւատարմութիւնն առանձնապէս մեծ նշանակութիւն ունէր այս վիճակի մէջ, որ հիմնուած էր վաստակական երգման վրայ: Դէպի իւր անձը տածած չարքանքին համապատասխանում էր յարգանքն և ուշադրութիւնը դէպի ուրիշները, ասպետական պալատներում մշակուեցան քաղաքավարութեան (courtoisie, Höflichkeit) կանոնները, որոնց նպատակն էր

մարդկանց չարաբերութիւնները դիւրացնել ու հաճելի դարձնել: Հզօրների ու զինուորականների այս աշխարհում տկարները փնտռումէն հովանաւորութիւն և ներողամտութիւն, պատուոյ զգացումը պահանջում է, որ լաւ ասպետը պաշտպան կանգնէ տկարներին ու թըշուառներին և օգնէ նրանց: Կանայք, որ այնքան ստոր դիրք ունեին հիւն աշխարհում, այժմ առաջ եկանցնում. ասպետները խոնահումէն նրանց գեղեցկութեան և շնորհների առաջ, գրեթէ իսկապէս պաշտումէն կանանց, նրանց համար են գործում իրենց քաջութիւնները: Մի տրուբագուր, օրինակ, սիրահարուում է առանց տեսնելու տրիպոլսեան կոմսուհուն, ի սէր նրա խաչակրաց արշաւանքին է մասնակցում և, վերջապէս, ամենատեսակ վտանգներից և արկածներից լետոյ, վիրաւոր և ուժասպառ, գալիս է իւր սիրելու մօտ և մեռնում է նրա ոտքերի առաջ: Բոլոր ասպետական կանոններին այս աստուածապաշտութեան ժամանակներում աւելանում էր և քաւեպաշտութիւնը: Եկեղեցին օրհնում էր ասպետին իւր պատերազմական գործերի համար և դրա փոխարէն պահանջում էր պաշտպանութիւն և ծառայութիւն: Քրիստոնէական ասպետութեան օրինակ է Փրանսիական թագաւոր Լուդովիկոս Թ. որին եկեղեցին սրբերի կարգը դասեց: Հարկաւ, բոլոր թուած լատկութիւնները միշտ չէին հանգիպում իրական կեանքում, կենդանի մարդիկ լաճախ աչքի էին ընկնում կոպտութեամբ, անգթութեամբ, խաբեբայութեամբ. բայց ասպետական իդէալներն անկասկած ազդեցութիւն էին գործում իրական կեանքի վրայ, նպատակներ էին առջադրում, դէպի որը ձգտում էր հասարակութիւնը:

Կաթոլիկ ժամերգութիւնը մեծ հանդիսաւորութեամբ է կատարուում և ամենայն միջոցներով աշխատում է ազդել զգացմունքների վրայ, հոգեւորականութիւնն ի միջի այլոց, իւր թափօրներում, եկեղեցիների մէջ և կամ նրանց մօտ կառուցած բնակրի վրայ—ներմուծեց այսպէս կոչուած Միստերիալներ,

թատերական ներկայացումներ:

Թատերական ներկայացումներ, որոնք պէտքէ անձինքներով, խօսակցութիւններով եւ գործողութիւններով պատկերացնէին սրբազան պատմութեան իրողութիւնները, օրինակ, վերջին ընթրիքը, Փրկչին դատելը, Նորա Հարչարանքն ու մահը: Միասնաբերաներին աւելացան Միրակներն (հրաշքները), ներկայացումներ Աստուածածնի ու սրբոց կեանքից: Թէ դրանց եւ թէ միւսների մէջ ներմուծած էին առ հասարակ կատակերգական տեսարաններ, եւ ապա դրանց օրինակով սկսան իսկական ծաղրածութիւններ ներկայացնել: Երիտասարդութիւնն երբեմն ծաղրում էր նոյն իսկ աստուածապաշտական արարողութիւնները, ծաղրական կերպով ձեւացնում էր եպիսկոպոսներին ու քահանաներին:

Ենդիծարարութիւն:

Ամենից աւելի զարգացաւ այս ծաղրական յարաբերութիւնը ոսանաւոր պատմութեան եւ վեպիկների մեջ, որ ֆալսաբացիքն էին գրում—այսպէս կոչուած *fabliaux*—ներում: Քաղաքների բնակիչները շատ էին տանջուում բարձր դասակարգերի—ասպետութեան եւ հոգեւորականութեան, գոռողութիւնից, չէին համակրում նրանց կեանքի եղանակին եւ դրա մէջ հարուստ նիւթ էին գտնում ծաղրի. սահմանափակ խելքի տէր եւ ինքնահաճ ասպետները, կեղծաւոր ու որկրամոլ քահանայք եւ վանականները յաճախ գործող անձինք են հանդիսանում այս պատմութիւնների: Երբեմն բարքերի նկարագիրը կենդանանում էր այնու, որ պատմութիւնների մէջ հանդէս էին հանուում կենդանիք, ինչպէս Եղովպոսի առակներում: Այսպէս ծագկեցաւ սրամիտ եւ զիտողութիւններով հարուստ Աղուխու վէպը: Դրա հերոսն է խորամանկ Ռայնէկէն կամ Ռենարը (աղուէսը), որ ամենայն կերպով խաբում է իւր հարեւաններին եւ թշնամիներին—գայլին, իշղարին, աքաղաղին, նապաստակին, կատուին, իշուռն, եւ վերջապէս, մատնուում է կենդանիների թագաւորի—առիւծի դատաստանին:

Ռոմանական եւ գոթական ոճեր:

Գեղարուեստական գործունէութիւնը, ինչպէս Բիւզանդիայում, նուիրուած էր զլխաւորաբար տաճարներ զարդարելուն: Արեւմտեան ճարտարապետութիւնը սկզբում տաճարների շինութեան համար մշակեց ռոմանական ոճը: Հռոմէական Բազիլիկան կոլորացրած ծայրով, ուր տեղաւորուած էր պաշտօնէից (մագիստրատի) սեղանը (արսիդա), փոխարկուեցաւ տաճարի, արսիդայում տեղաւորում էին սեղանն եւ եպիսկոպոսի աթոռը. սեղանի առջեւ երկար դահլիճը բաժանուում էր մի քանի կոնքերի (սովորաբար երեքի), միմիանցից դատուած

սիւններով. սեղանից ոչ հեռու դահլիճը խաչածեւ կտրում էր մի այլ կոնք, այնպէս որ ամբողջ եկեղեցին լատինական խաչի ձեւ էր ստանում: ¹⁾ Սկզբում ամբողջ շէնքը ծածկում էին հորիզոնական առաստաղով կամ վրանածեւ կտուրով փայտէ զերաններից, բայց որովհետեւ այդպիսի եկեղեցիք դիւրութեամբ էին ենթարկուում հրդեհի, ուստի սկսան դրանց վրայ բարձրացնել քարէ կիսաշրջանածեւ դմբէթներ, կոնքերի խաչուելու տեղի վրան ամբառնում էր մի բարձր աշտարակ. կամարների եւ աշտարակների ահագին ծանրութիւնը ստիպում էր պատերը, սիւներն ու յենման կեսաշրջանածեւ կամարները շինել ինչքան կարելի է հաստ. մանր պատուհաններն հազիւ թողնում էին, էին, որ լոյս թափանձէ ներս. տաճար մտնողի ստացած ընդունաւոր *sympotique* մի *skens* զօրաւոր, մուսյլ ու խորհրդաւոր էր: Ռոմանական տաճարում նկարներ քիչ կային. դրանց կենդանութիւն էին տալիս քանդակագործական զարդերը: Սիւնագլխերը կազմում էին տարօրինակ բոյսերի եւ ժապաւէնների հիւստեածք. արեւմտեան կողմում, տաճարի մուտքի դռների (պորտալ) վրայ ծանրանում էին սրբերի արձանների եւ զանազան այլարանակ քանդակների բազմութիւնը: ²⁾ Խաչակրաց արշաւանքների շրջանում խոշոր յեղաշրջումն տեղի ունեցաւ միջնադարեան գեղարուեստի մէջ. Հոգեւորականների ձեռքից այդ սկսաւ անցնել արուեստորների հսակարներին, կամ ֆաւսաշների ու ճարտարապետների ընկերակցութիւններին, որ յատկապէս դրանով էին պարագում քաղաքներում: Կրօնական ուղղութիւնը մնաց, բայց արուեստական գիտութիւնն ու եղանակները կատարելագործուեցան. աւելի շատ էր բազմազանութիւնն եւ գործի նուրբ պատրաստութիւնը: Նախ հիւսիսային Յրանսիայում, եւ ապա միւս կաթոլիկ երկրներում երեւեցաւ ձգտումը թեթեւ, բարձր տաճարներ կառուցանելու, նրանց մէջ առատ օդ ու լոյս կար: Դրա համար արտաքին պատերի մէջ ընկնում էին ահագին պատուհաններ, իսկ որպէս զի այսպէս ծակուած պատերը կարողանան կամարների ծանրութիւնը կրել, նրանք ամրացուում էին դուրս ցցուող յենասիւններով (կոնտր-ֆօրս): Քանի որ ծանրութիւնը

¹⁾ Յունական խաչի ձեւով կոնքերը կտրուումն հաւասար, իրենց երկարութեան միջից, լատինականում—խաչածեւ կոնքերից մէկը մօտեցուած է երկարութեամբ ձգուածի մի ծայրին:
²⁾ Յաճախ ներկայացուում էին առաքինութիւնները, քրիստոնէի պարտականութիւնները, բայց պատահում էր, որ արուեստագէտները ձեւացնումէին փորձութիւններն ու մեղքերը սատանաների եւ հրէաների կերպարանքով:

մեծաւ մասամբ այս յենաորմերի վրայ էր ընկնում, ուստի փոխանակ հաստատուն կենսաշրջանաձեւ դմբէթների սկսան շինել նետաձեւ, սրածայր գմբէթներ, այսինքն՝ երկու կամարներից բաղկացած, որոնք սուր անկիւնով խաչաձեւ կտրում էին միմիանց: Երկար պատուհաններն եւս նետաձեւ գլխով էին վերջանում: Սրաները կորցրին իրենց հաստութիւնը, դարձան բարակ կիսասիւնների փնջեր, որոնք վերեւում բացուում էին, ինչպէս արմաւենու ճիւղեր, եւ խաչուում դրացի սիւնների հանդիպող ճիւղերի հետ Աւրոդ ճանաւր ձգուում եւր դէպի վեր, աչքը հորիզոնական կամ բոլորշի մակարդակի չէր հանդիպում, որպէս զի դրանց աւարտում ձեւերի վրայ հայեացքը հանդիստ առնէր, կամարների սուր կտրուածքները կարծես թէ շարունակ դէպի վեր էին քաշում հայեացքը, մինչ որ բոլոր գծերն անյայտանում էին վեր ամբարձած գմբէթի կիսախաւարի մէջ: Դրանց էլ նոյն դէպի վեր ձգուումն արտայայտուում էր սրածայր աշտարակով, որ նետաձեւ դէպի երկինք էր ամբառնում: Որովհետեւ սիւներն ու կամարները կորցրել էին իրենց ճարտարապետական յենարանների նշանակութիւնը եւ դարձել էին գլխաւորապէս զարդարանքի միջոցներ, ուստի տաճարի ահագին քարէ զանգուածը բաժանուում էր մանր մասերի եւ ծածկուում էր բազմազան դրուագազարդերով: Պատուհաններում երեւեցան զունաւոր ապակիք սրբազան պատմութիւնից, հարանց վարքից եւ նոյն իսկ հասարակական կեանքից առնուած պատկերներով: Դրանց ու ներսից շարուած էին սրբերի, նշանաւոր եւ հասարակ մարդոց, նոյն իսկ կենդանեաց արձաններ: Տաճաներեքերող դարում այս գոթական ոճն դեռ համեմատաբար պարզ է, բայց սկսած Ժ.Դ. դարուց, դա բարդուում է, ճոխանում եւ զարդերի կուտակումն սկսում է նրա թեւրութիւնը դառնալ:

Մահմետական քաղաքային թիւն

Արեւելեան ազգերը, որոնք Իսլամն էին ընդունել, մի քաղաքակրթութիւն մշակեցին, որ խորին կերպով տարբերուում էր եւրոպական երկրների քաղաքակրթութիւնից: Դասական հնուքեան ժառանգորդներ մահմետականների համար եւ նշանակութիւն ունեցաւ: Եգիպտոսում, Ասորիքում եւ Փոքր Ասիայում արաբները ծանօթացան հելլենական գիտութեան եւ փիլիսոփայութեան հետ, Բաղդադում եւ Կորդոփայում Արիստոտելին

աւելի լաւ էին ճանաչում, աւելի լաւ էին օգտուում ալէքսանդրեան գիտնականների հետազոտութիւններից, քան թէ Փարիզում, Հռոմում կամ նոյն իսկ Կոստանդնուպոլսում: Բայց դրանից զատ առւերական յարաբերութիւններն ու աշխարհակալութիւնները մահմետական քաղաքակրթութեան այլ տիպար տոնի, որ յըկար աւելանում. դրա մշակութեան մասնակցեցին արաբները, պարսիկները, հրեայք, հնդիկները:

Արաբները բերին վառ ու անհանգիստ երեւակայութեան պաշար, զգացմանց կրքոտութիւն եւ նոյն ժամանակ գործնական հմտութիւն եւ կենսական տնտեսութիւն: Պատկասանում կուտակում էին ասիական հազարամեայ կրթութեան արգասիքները, արտայայտուում էր իրանական երկուութիւն, քաղդէական մոգութիւն, Աքիմենիանց ու Սասանիանց փառաւոր քաշաքական աւանդութիւնների ազդեցութիւնը. յարաբերութիւններն Հնդկաստանի հետ ծանօթացրել էին նրանց բուզդայականութեան եւ բրահմինականութեան խորիմաստ եւ զարմանահրաշ տեսութիւնների հետ. վերջապէս, ո՛չ միտեղ այնքան զօրաւոր կերպով չերեւցաւ հրեից ազդեցութիւն, որչափ մահմետական երկրներում, նրանց ռաբիների (ուսուցիչ) դպրոցները ծաղկում էին ամիրապետների հովանաւորութեան տակ:

Մահմետական աշխարհում առանձնապէս զարգացաւ, ի միջի ալլոց, ճանապարհորդութիւնների եւ աշխարհագրական նկարագրութիւնների գրականութիւնը.¹⁾ Դրանք կազմուում էին մասամբ վաճառականների համար, որոնք ճանապարհորդում էին հեռաւոր աշխարհներ, եւ գործ էին ունենում զանազան բնաւորութեան տէր ցեղերի հետ. բայց, գործնական նպատակներից դուրս, արաբներին ու պարսիկներին ղեկավարում էր գիտնական ուսումնունքի սէրը: Համարողութեան, բնական գիտութիւնների եւ փիլիսոփայութեան²⁾ մէջ մահմետական

¹⁾ Սլոյսիսի եւ, օրինակ «Ոսկէ մարգագետինները» Մասսուդիի:

²⁾ Փիլիսոփայութեան մասին վերեւում խօսուեցաւ, տես հրեւ:

տականները շարունակեցին հեղինակական շրջանի գիտնականների աշխատանքը: Յատկապէս շատ բան արին նրանք ալգեբրայի, ¹⁾ աստեղագիտութեան, բժշկութեան և բնաբանութեան կամ քիմիայի համար:

Այս վերջին երկու գիտութիւններով զբաղուելու նրանք չէին գոհանում պարզ դիտողութիւններով երեւոյթների վրայ, այլ փորձեր էին անում, այսինքն՝ որոշ պարագայից մէջ առաջ էին բերում այդ երեւոյթները, պարզելու համար, թէ ի՞նչ հանգամանքներ են ազդում նրա վրայ: Արար գիտնականները միշտ բանաւոր նպատակներ չէին դնում իրենց: Նրանք շատ ժամանակ ու ջանք գործ գրին այն բանի վրայ, օրինակ, որ գտնեն ոսկու պատրաստութեան եղանակը կամ բոլոր հիւսնագութիւններից բժշկող միջոցը: Այս պարագայինքներս կոչուեցան ալքիմիա: Լուսաւորների վրայ արուած գիտողութիւններն ևս առիթ տուին սնտրիպալատութեան և մոլորութեան Միջին դարերում այդ գիտողութիւններն անուում էին յաճախ աստեղանշնաւորութեան (աստրոլոգիքաւգութիւն) համար: Ենթադրում էին, որ մարդկանց ճակատագիրը կախուած էր աստղերի դիրքից երկնքում: աստեղագիտներն աշխատում էին գուշակել այդ ճակատագիրն, զիտելով, թէ ի՞նչպէս են երեւում որոշ վայրկեանն աստղերը որ և է տեղում: Մանկան ծննդի ժամանակ, օրինակ, որոշում էին նրա «հորոսկոպը» (ժամագէտը), այսինքն՝ որոշում էին, թէ ի՞նչ գրութեան մէջ է ներկայանում արեւն համաստեղութեանց մէջ, և այս տեղից եղբակացութիւններ էին անում նորածնի ապագայ բնաւորութեան և նրան սպասող ճակատագրի մասին: Ալքիմիան և աստրոլոգիան մարդկանց մտքերն ուղղեցին դէպի թիւր ճանապարհներ, բայց նպաստեցին բազմաթիւ յայտնագործութեանց և գիտողութեանց: Չը նայելով սրան, մահմետական գիտնականները յաջողութեամբ զբաղուեցան աստեղարաշխութեան և քիմիային վերաբերեալ շատ լուրջ խնդիրներով:

Գրականութիւնն ևս փառաւոր զարգացման հասաւ արաբների մէջ: Արաբներն աչքի էին ընկնում քնարական տաղանդով—նրանց մէջ երեւեցան բանաստեղծներ, որոնք ճարտար կերպով արտայայտում էին զգացումներն, որ մարդու հոգին ալէկոծումնէր Պարսիկները քնարական բանաստեղծութեան մեծ քնքշութիւն, գեղեցկութիւն և խորամտութիւն

¹⁾ Նոյն իսկ ալգեբրա—գրահաշիւ բառն էլ արաբերէն է:

տուին¹⁾ Բացի դրանից Մահմուտ (սկիզբն ժ.Ա. դարու) Ղազնայու պալատում Ֆիրդուզին²⁾ օգուտ քաղեց պարսկական աւանդութիւններից ու դիցազներգութիւններից, մի վեհ վիպաւանութիւն—Թաղաւորաց դիրքը (Շահ-Նամէ) յօրինելու համար: Դա սկսուում է Ռուստէմի քաջագործութեանց պատմութեամբ, և ապա տալիս է բանաստեղծական պատմութիւնն Ալքիմիանց, Արշակունեաց և Սասանեանց: Աչքի ընկնող դեր է խաղում այս երկրորդ բաժնում և Մեծն Ալէքսանդր, որ կոչուում է Իսկէնդէր:

Մահմետական արեւելքի բոլոր ազգերը մասնակցել են այն հէքիաթների ու վէպերի ժողովածուի յօրինման մէջ, որ յայտնի են ամբողջ աշխարհում «Հազար և մի գիշերներ» վերնագրով: Սկիզբը դրաւ մի պարսիկ, գլխաւոր բաժինը կազմեց մի արաբ, աւարտուեցաւ ժողովածուն Կահիրէում, դրա մէջ հիւսուած են հնդկական ծագումից (Ժ.—Ժ.Ա. դարերում) պատմութիւններ: Այս հէքիաթների նշանաւորութեան վկայումէ այն հանգամանքը, որ դրանք մինչեւ այժմ հետաքրքրութեամբ կարդացուումնէր Բացի սրանից, այդ ժողովածուն արեւելեան կեանք մի շարք վառ պատկերներ է տալիս և հարուստ պաշար առածների ու խրատների արեւելեան իմաստութեամբ ներշնչուած:

Գեղարուեստների մէջ մահմետականները հռչակուեցան ճարտարապետական ոճով: Արձանագործութիւնն ու նկարչութիւնը չ'առաջացաւ նրանց մէջ, որովհետեւ Ղորանն արգելում էր Աստուծոյ կամ մարգարէից պատկերները նկարել: Մզկիթների ու պալատների կառուցումն առիթ տուաւ ճարտարապետութեան զարգացման: Բիւզանդացիներից արաբները փոխ առան զմէքէթը, պարսիկների պէս, նրանք զարգարում էին իրենց շինութեանց զահլիճները բազմաթիւ թեթեւ սիւներով, վերջապէս, մզկիթների ու պալատների համար բնաւորիչ էին բակերի շէնքը միջապայրում շարունակներով: Շինութեան առանձին մասերն այնպէս սերտ շաղկապուած չէին և մի ամբողջութիւն չէին կազմում, ինչպէս այդ էր եւրոպական ոճերում—գլխաւոր ուշադրութիւնը դրաւում էին գեղեցիկ մանրամասնութիւնները: Պատերը ծածկուած էին գոյն զգոյն, հրաշագան ծաղկանկարներով—արաբեսկներով, գծերի և բուսական ձեւերի հիւսուածքով:

¹⁾ Առանձնապէս նշանաւոր է Հաֆիզն ժ.Գ. դարում:

²⁾ Նրա անունն էր իսկապէս Սրույ Բեհաւը: Մանսուր, բայց նրան կոչեցին Ֆիրդուսի, այսինքն՝ Գրախտալին:

Գմբէթներն ու կամարներն իրենք ծառայում էին աւելի իբրեւ զարդ, քան թէ շինութեան համար իբրեւ նեցուկ: Կիսաշրջանը, որով աւարտուում էր կամարն ու գմբէթը բիւզանդական եւ ումանական ճարտարապետութեան մէջ, արաքներին շատ հասարակ էր թուում եւ միակերպ—նրանց կամարը բոլորում էր շրջանի կիսուցն աւելի եւ ունէր պայտի ձեւ: Մահմետական շէնքերը հիացնում էին իրենց ցնորական ձեւերով, թեթեւութեամբ, շքեղութեամբ, բայց դրանք զուրկ էին միութիւնից եւ հաստատութիւնից: Մաւրիտանական ոճն ամենամեծ զարգացման հասաւ Սպանիայում. առանձնապէս երեւելի էր Ալհամբրա պալատը Գրէնադայում:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

Նոր Եզրուպայի պետութեանց կազմ- ոշիր:

ԳԼՈՒԽ Ա.

Ա Ն Գ Լ Ի Ա:

Անգլո-սաքսոնական թագաւորութիւնը ժԱ. դարմանդա-
րում քաջքայման վիճակի մէջ էր. թագաւորական իշխանութեան կից երեւան եկան հզօր կոմսեր. գլխաւոր զասակարգ դարձաւ *սէնների ազնուականութիւնը* կամ արքունի վասսալների ազնուականութիւնն, որոնք ի վարձատրութիւն իրենց ծառայութեան կալուածներ էին ստանում. մանր ազատ մարդիկ մեծ մասով սնանկացան եւ աւագանու իշխանութեան տակ ընկան: Կառնուտի կառավարութիւնից յետոյ, որ միացրեց դանիացոց եւ անգլո-սաքսոններին, կրկին երկպառակութիւններ սկսուեցան նրանց մէջ, եւ Անգլիոյ թագաւոր դարձաւ Ալֆրեդի սերնդից Էդուարդ խոստովանողը, որ կրթուած էր նորմանդիայում, հետեւող էր ֆրանսիական բարքերի եւ հովանաւորող ֆրանսիացի գաղթածներին: Սա որդիք չ'ուներ, եւ խնդիր էր ծագում, թէ սրա մահուանից յետո՞ւ պիտի անցնէր գահը: Էդուարդը թագը խոստացել էր նորմանդական հերցոգ Վիլհելմին, իւր մօր ազգակցին. անգլիացիք չը կամեցան հնազանդիլ օտարերկրացուն, եւ Էդուարդի մահուանից յետոյ ուղի-

սեկնագեմնոսն ընտրեց սաքսոն Հարոլդին: Բայց Վիլհելմը չը հրաժարուեցաւ իւր իրաւունքից: Սա իսկական նորմանդացի էր, ձեռնարկու, եռանդոտ, խորամանկ եւ անգութ: Սա ժողովեց իւր դրոշի շուրջը *լոռնանդա-կան ղխուրիւնից եւ ժրանսիական աշխատանքներ*ից զաղթածների զօրքը—նրա հետ սիրով միացան անհանգիստ ասպետները, որոնք տանը նստել չէին կարողանում: Այս զօրաբանակը ցամաք ելաւ հարաւ-արեւելեան Անգլիայում (1066): Հարոլդը հէնց նոր էր լետ մղել նորվեգացւոց յարձակումն հիւսիսային Անգլիայում, և այժմ շտապեց դէպի հարաւ Փրանսիացոց դէմ, բայց անգլիացի բնակիչները նրան լաւ չ'օժանդակեցին: Հաստիքսի մօտ զօրքերն իրար հանգիւպեցին, և Փրանսիացիք յաղթանակ տարան:

Սաքսերը բլրի վրայ լաւ դիրք գրաւեցին, խրամների յետեւ միացրին իրենց երկար վահաններն եւ պատրաստուեցան տապաւնելու կռուելու: Ֆրանսիացոց գլխաւոր ոյժը կազմում էր աւսպետական հեծեղազօրքը, զրահ հագած եւ զինուած երկար նիզակներով: զրանց միացաւ աղեղնաւոր նետածիփների մի գունդ: Երկու անգամ ասպետները զուր յարձակումն դրածեցին սաքսոնական խրամների վրայ—սաքսոններն անյողողդ էին եւ կոտորում էին վրահաս հեծեղանքին իրենց տապաւնելով: Վերջապէս յաջողուեցաւ խորամանկութեամբ զուրս քաշել սաքսոնական զօրքի մի մասն իրենց ամուր դիրքից: Նորմանդացիք խարուսիկ փախուստ ձեւացրին, իսկ երբ զրանց հալածել սկսան, այն ժամանակ փախստականներն յետ դարձան եւ թշնամեաց հետ միասին բարձրացան բլրի գլուխը: Հարոլդի լաւագոյն գունդը, թիկնապահները շարունակեցին զիմադրութիւնը—զրանց հետուից ջարդեցին նետերով: Ինքն Հարոլդը մահացու վէրք ստացաւ նետով աչքի մէջ: Երբ նա ընկաւ, զօրքը ցրուեցաւ:

Վիլհելմ Ա. Այս ճակատամարտն Անգլիան Վիլհելմի ձեռքը մատնեց, որ այդ ժամանակ ստացաւ Աշխարհակալ մականունը: Յաղթականները տիրացան սաքսոնական ազնուականների հողերին և բաժանեցին իրենց մէջ իբրեւ ա-

ւատ: Թագաւորութեան մէջ եղած բոլոր կալուածները, զրանց տիրող մարդոց, և հողերի վրայ դրուած հարկերի աշխարհագիր արին 1086 թուին: Այս աշխարհագիրը կոչուեցաւ *Անկեղ Դասաստանի Գիրք*: Ամբողջ երկրի տէր էր համարուում թագաւորը, իսկ նրա վասսալները տիրում էին աւատական իրաւունքով հողաբաժիններին. զրանցից կախումն ունէին միւս վասսալներն և այլն: Սաքսոն երկրագործների դրութիւնը շատ չը փոխուեցաւ—նրանք իրենց ազգակից կալուածատէրերից անցան Փրանսիացոց: միայն փոքր մասը տէր մնաց հողի ու ազատութեան: Մի հանգամանք սահմանափակում էր նորմանդացի աւագանուն և խանգարում նրանց նոյնպիսի բարոն լինելու, ինչպէս էին Փրանսիականները: Նրանց քաժանուած հողաբաժինները ցրուած էին Անգլիոյ զանազան մասերում, այնպէս որ ոչ միւնը չ'ուներ իւր ձեռնում մի ամբողջ մասնակ: Անգլիային տիրելու ժամանակ Վիլհելմը գործում էր սառնասիրտ և զիտակցական անգթութեամբ—Խօրքի շրջակայքի պտղաբեր երկիրն, օրինակ, այնպէս աւերեց, որ շատ տարիք անցնելուց լետոյ դա մնաց անապատ: Սակայն, երկրում հաստատուելուց լետոյ, նա կարգ մտցրեց և զսպում էր ոչ միայն սաքսոն ազգաբնակչութիւնն, այլ նաեւ իւր Փրանսիացի զինակիցներին:

Թէ սաքսոններն եւ թէ նորմանդացիք կարիք էին զգում նրա զօրեղ իշխանութեան—առաջիններն այն պատճառաւ, որ նա պաշտպանում էր իրենց բռնութիւնից, երկրորդները նրա համար, որ վախճում էին նուաճուածների ապստամբութիւնից: Այս պատճառաւ նրա իշխանութիւնն աւելի մեծ էր եւ նման չէր Փրանսիական թագաւորի իշխանութեան, որ այդ ժամանակ հազիւ էր պաշտպանուում Փարիզում: Խիստ օգնում էին Վիլհելմին նորմանդական եկեղեցական իշխանները,¹⁾ որոնց նա անգլիական եկեղեցու գլուխ կարգեց: Անգլո-սաքսոնական հոգեւորականութիւնը նրանց սիրով չէր հպատակում: մի վան-

¹⁾ Բարձրաստիճան հոգեւորականները—եպիսկոպոսներն ու արքաները, որոնք կոչուում են *պրելատ*:

քում, օրինակ, նորմանդիացի արքայորդ չը կարողացաւ ստիպել, որ ֆրանսիական ձեռով պաշտօն կատարեն, այլ ոչ թէ հին ձեռով, այն ժամանակ նա եկեղեցի բերաւ աղեղնաւորներին, որոնք սկսան նետեր արձակել վանականների վրայ, եւ մի քանիսն սպանեցին: Նորմանդացի եկեղեցիները ջնջեցին անգլիական եկեղեցու շատ առանձնութիւններն եւ մերձեցրին նրան հռոմէական կաթոլիկութեան ընդհանուր կարգին: Ի միջի այլոց, եկեղեցական գործերը խլուեցան կոմսութիւնների ժողովներից, որոնք զբաղուում էին զբանցով աշխարհական խնդիրներին հաւասար կերպով, եւ յանձնուեցաւ հոգեւորականների համագումարներին ու դատարաններին:

Վիլհելմ Աշխարհակալի որդու, Հենրիկոս Ա-ի, մահուանից լետու ներքին կռիւ սկսաւ գահաժառանգութեան համար: Հենրիկոսի որդին ծովակուր էր եղել դեռ հօրը կենդանութեան ժամանակ նաւակոծութեան մէջ. մնացել էր մի դուստր, որ ամուսնացած էր անժուական կոմսի հետ: Բացի նրանից, գահին թեկնածու հանդիսացաւ եւ Բուլօնի կոմսը, Վիլհելմ Աշխարհակալի դստեր որդին:

Սկզբում Բուլօնացի Ստեֆանի կողմը գերակշռեց, բայց նա չը կարողացաւ ընկճած պահել ազնուականութիւնը. բարոնները, որոնցից շատերը աւատական հողաբաժիններ ունէին երկու ասիերումն եւս (թէ Անգլիայում եւ թէ Նորմանդիայում), կառուցանում էին բազմութիւ ամուր բերդեր, նեղն էին ձգում խեղճ շինականներին, պատերազմներ էին մղում միմիանց հետ, ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում թագաւորների հրամաններին եւ առհասարակ Անգլիա եին ներմուծում այն կառայականութիւնն եւ երկպառակութիւնը, որ կար ֆրանսիական աւաստականութեան մէջ: Շփոթութիւնն աւելի եւս զօրացաւ, երբ Մաթիլդան (Հենրիկոս Ա-ի դուստրը) ցամաք դուրս եկաւ Անգլիա եւ ազգամիջեան կռիւ սկսաւ Ստեֆանի հետ:

Հենրիկոս Բ. Յաղթող հանդիսացան անժուացիք: Անժուի կոմսի որդի Հենրիկոսը Փրանսիայում ստեղծեց իւր համար հզօր դիրք, ամուսնանալով աքուիտանացի Էլիօնարայի հետ, որից հէնց նոր էր բաժանուել ֆրանսիական

թագաւոր Լուդովիկոս Է.: Նորմանդիային եւ Անժուին միացան աքուիտանական երկրները, այսինքն՝ Փրանսիայի ամբողջ հարաւ-արեւմուտքը, Լուարից սկսած մինչեւ Պիրենեան լեռնաշղթան: Երիտառարդ Հենրիկոսը¹⁾ 1154 թ. թագաւոր դարձաւ Հենրիկոս Բ. անուամբ: Սա մի իշխանասէր եւ գործունեալ անձն էր. եռանդով սկսաւ այն չարիքների առաջն առնել, որ պատճառել էին ներքին պատերազմներն եւ այդ գործի մէջ ջերմ համակրութիւն ու օժանդակութիւն գտաւ ժողովրդի կողմից, որ տանջուած էր խառնակութիւններից ու բարոնների բռնաբարութիւններից: Խառնակութիւնների շրջանում կառուցուած դղեակներից մերձաւորապէս 350 հիմնայտակ աւերուեցան թագաւորի մարդկանց ձեռքով: Հենրիկոսը նրանով չը գոհացաւ սակայն, որ ընդհատեց մասնաւոր պատերազմներն ու սանձեց աւատական իշխանների կամայականութիւնները, նա խլեց դրանց դատական արտօնութիւնների մեծ մասը:

1154

Անգլիայում իշխող աւատական իրաւունքով, գործերը շատ դէպքերում վճռուում էին բարոնների դատարանում (երեսնից դատարան, կուրիա): Մինչեւ իսկ երբ հասնում էր հարկւրապետութեան կամ կոմսութեան, այն ժամանակ վճռուում էին զրանք երդումով, օրդալիայով (աստուածային վճիռ) կամ դատական մենամարտութեամբ: Հենրիկոս Բ. սկսաւ իրաւական դատերն²⁾ եւ քրէական մեղադրութիւններն³⁾ իւր դատաստանին ենթարկել: Դրա հետ միասին արքունի դատաւորները հարց եւ փորձի էին ենթարկում վկաններին, քննում էին գրաւոր վաւերաթղթերը, իսկ վճռուում էր գործն այն տեղի բնակիչներից մի քանիսի ձեռքով, ուր վէճը տեղի էր ունենում կամ ուր կատարուել էր յանցանքը: Վճիռ հատանողներն եր-

¹⁾ Նա 21 տարեկան էր:

²⁾ Այսինքն այն վէճերը, որոնց խնդիրն էր թէ ո՞ւմ է պատկանում որոշ իրաւունքը, օրինակ ո՞ւմ է պատկանում ժառանգութիւնը մեռնողից լետու:

³⁾ Այսինքն՝ այն մեղադրութիւնները, որով մի որոշ յանցանք էր զրուում մի անձի վրայ—կամ դա մեղադրուում էր, որ ուրիշի անվիճելի իրաւունքն չափշտակել է: Օրինակ՝ զոգութիւնը, այսինքն՝ ուրիշի սեփականութեան գաղտ չափշտակութիւնը, յանցանք է:

դուռն էին, որ ճշմարտութիւնը պիտի ասին (այս տեղից է բառս «վերդիկս» — vere-dictum — վճիռ)։ Այսպէս ծագումն առաւ երգութեան զատարանը, որ ապա Անգլիայից տարածուեցաւ նաեւ Եւրոպայի այլ երկրներու մէջ։

Եկեղեցիին յեր ճանաչումը քաղաւորի իրաւունքն եկեղեցականների վրայ հարկ դնելու եւ պահանջում եր, որ հոգեւոր անձինք դաստիարակ եկեղեցական դաստիարակներում — մինչեւ իսկ եթէ հոգեւորականը գործէր սովորական յանցանք — օրինակ՝ սպանութիւն կամ գողութիւն, բայց թագաւորը չէր կամենում այդ բանի հետ հաշտուիլ։ Վէճը տաքացաւ, երբ Կենտրոնական եկեղեցական, Անգլիոյ պրիմաս կամ առաջին եպիսկոպոս դարձաւ Թոմաս Բէկէտը, Հենրիկոսի պալատականներից մէկը։ Նա թագաւորի հաւատարիմ ծառան էր բարոնների հետ կռուելու ժամանակ, և Հենրիկոսը պնդեց, որ նա արքեպիսկոպոսական աստիճանն ընդունի, յոյս ունենալով օգուտ քաղելու Բէկէտից եկեղեցին հպատակեցնելու համար. բայց խիստ սխալուեցաւ։ Բէկէտը ջերմեռանդութեամբ նուիրուցաւ եկեղեցու շահերին և դարձաւ պարագլուխ թագաւորին դիմադրող կուսակցութեան։ Եպիսկոպոսների և բարոնների համաժողովում Կլարէնդոնում թագաւորը կարողացաւ յաջողեցնել հոգեւորականներին արքունի դատաստանի ենթարկելու քրէական գործերում։ Բէկէտը փախաւ Ֆրանսիա այն լուսով, որ պապը կը պաշտպանէ իրեն։ Բայց այդ ժամանակ Ալէքսանդր Գ. պապն զբաղուած էր Փրիզրիկոս Բարբարոսայի հետ կռուելով, ուստի և ջանաց հաշտեցնել թագաւորին արքեպիսկոպոսի հետ։ Մի կերպ յաջողուեցաւ այս հաշտութիւնը, սակայն դա միայն ըստ երևութիւն էր — երկու կողմերը քէն էին պահում միմիանց դէմ։ Թոմաս Բէկէտը դարձաւ Անգլիա. ժողովուրդը նրան հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուաւ, որովհետեւ նրան հաւատում էին որ ժողովրդական ազատութիւնների ախոյեան ընդդէմ քաղաւորի հա-

շածանքների։ Արքեպիսկոպոսն հրաժարուեցաւ կատարել թագաւորի մի քանի պահանջները։ Հենրիկոսը կատարեց և գոչեց. «Մթթէ ես պահում եմ և կերակրում մի միայն երկչոտներ։ Մթթէ մէկը չի ազատիլ ինձ այս նորեւելից»։ Նրա ասպետներից չորս հոգի ուղևորուեցան անմիջապէս Կենտրոնական Նրանք մայր եկեղեցի խուժեցին աղաղակելով. «Ո՛ւր է դաւաճանը, ո՛ւր է արքեպիսկոպոսը»։ Բէկէտը նրանց առաջ դուրս եկաւ և ասաց. «Ես դաւաճան չեմ, ես Աստուծոյ քահանայ եմ»։ Նրանք վայր գործեցին արքեպիսկոպոսին և սպանեցին (1170)։ Այս եղեւնագործութիւնը միայն վնաս բերաւ թագաւորին։ Անհաճոյ տպաւորութիւնը, որ գործել էր այս եղեւնը, ջնջելու համար Հենրիկոսը Կլարէնդոնեան կանոնների մի քանիսից հրաժարուեցաւ և արքեպիսկոպոսի դերեզմանի վրայ հրապարակական զրդջումն արտայայտեց։ Նրա թագաւորութեան վախճանն առ հասարակ տխուր եղաւ. յանդուգն անգլիացի գաղթականներն, իրաւէ, հաստատուեցան Իռլանդիայի արևելեան ափերում, եւ Հենրիկոսն հրատարակեց իրեն այդ կղզու թագաւոր, բայց այս տիրապետութիւնն առ ժամ քիչ նշանակութիւն ունէր, իսկ անգլիական և ֆրանսիական երկրներում ժողովուրդը գրգռուած էր խստապահանջ թագաւորի դէմ և շարունակ խռովութեան մէջ էր։ Հենրիկոս Բ-ի սեփական որդիքը կռուում էին իրենց հօր դէմ, որ մեռաւ նրանց դէմ վարած պատերազմում։ Նա իւր գործը կորած էր համարում, և նրա վերջին խօսքերն էին. «վա՛յ յաղթուած թագաւորիս»։

1170

Հենրիկոս Բ-ի որդիք չը կարողացան թագաւորական իշխանութեան հեղինակութիւնը վերականգնել։ Աւագը, Ռիչարդ Առիւծասիրտը, մի փայլուն ասպետ էր, բայց վատ կառավարիչ։ Իւր թագաւորութեան մեծագոյն մասն անցկացրեց խաչակիր արշաւանքում և Հենրիկոս Զ-ի մօտ գերութեան մէջ։ Աւելի վատ էր Ռի-

Ռիչարդ Ա.
և Յովհանն
Անհոգին

չարդի յաջորդի, նրա եղբայր Յովհան Անհողինի, կառավարութիւնը: Դա մի դատարկ և թեթևամիտ մարդ էր: Սրա դրութիւնը դժուարին էր, ստիպուած էր ֆրանսիական կալուածները պաշտպանելու յամառ թըշնամու—ֆրանսիական թագաւոր Ֆիլիպ Օգոստոսի դէմ: Բացի սրանից, նա կռուեցաւ Իննովկենտիոս Գ. պապի հետ Կենտրեբերիի արքեպիսկոպոս նշանակելու առթիւ, արքեպիսկոպոս ընտրող հոգեւորականների ձայները բաժանուեցան, պապը թեկնածուներից մէկին հաստատեց, իսկ Յովհանը պաշտպանում էր միւսին: Հոգեւորականութեան ստիպելու համար, որ հնազանդին, նա գրաւեց Կենտրեբերիի արքեպիսկոպոսութեան կալուածները: Պապը դրան պատասխանեց արգելք (ինտիրդիկտ) դնելով Անգլիոյ վրայ: Թագաւորի պատճառով անգլիացիք կռապաշտների վիճակին ենթարկուեցան. դադարեցաւ խորհրդների և եկեղեցական օրինակատարութիւնների մատակարարումն. եկեղեցիք փակուած մնացին, մեռնողները վերջին յուղարկաւորութեան չէին արժանանում: Մի առ ժամանակ Յովհանը ձեռնադրուած էր, որ իրեն չի վերաբերում արգելքը,— խլում էր եկեղեցեաց հոգերը, առանց այլևայլութեան օգտուում էր հոգեւորականների արդիւնքից: Բայց քրիստոնեայ հասարակութիւնն անկարող էր երկար ժամանակ դիմանալ սրբութիւններից և ժամերգութիւնից զուրկ մնալուն. նոյն իսկ թագաւորի մերձաւորները տրտնջում էին և պահանջում հաշտուիլ պապի հետ: Այն ժամանակ Յովհանն յանկարծ միւս ծայրայեղութեան մէջ ընկաւ. նա անչափ ստորացաւ Իննովկենտիոս Գ. պապի առաջ—յանձնեց նրան իւր քաղն ու քաղաւորութիւնն եւ Անգլիան յէս սսացաւ, իբրեւ խոնարհ աւաստոռ սրբազան գահի:— Ժողովրդի զայրոյթն աճեց այս ստորացման վրայ: Նոյն ժամանակ գործերը Ֆրանսիայում շատ վատ ընթացք էին ստացել: Ֆիլիպպ Օգոստոսը

խլում էր անգլիացիներից քաղաք քաղաքի, նահանգ նահանգի յետեւից: Յովհանը կրկին ու կրկին գումարում էր բարոններին և նրանցից օժանդակութիւն էր խնդրում, այսինքն՝ դրամանական տուրք պատերազմի համար, բայց դրամները վատնուում էին դատարակ բաների վրայ, պատերազմները վարուում էին անշնորհ կերպով, և ֆրանսիական թագաւորը շարունակում էր յաղթութիւններ տանել, նա գրաւեց ամբողջ Նորմանդիան և Աքուիտանիայի մի մասը:

Զը նայելով այս անյաջողութիւններին ու խալտաւակութիւններին, Յովհանն անգլիացոց հետ աւելի մեծ քմահաճութեամբ էր վարուում, քան թէ Վիլհելմ Աշխարհակալը կամ Հենրիկոս Բ.: Երբ մեռնում էր որ և է բարոն, մեռնողի ժառանգներից մեծ փրկանք էր առնում. եթէ ժառանգը մանկահասակ էր լինում, խնամակալութեան անունով աւերում էր նրա կալուածները. եթէ մնում էր ժառանգ զուստր, ստիպում էր նրան ամուսնանալ այն ասպետի հետ, որ իրեն ամենամեծ գումարն էր առաջարկում. ամենափոքր զանցառութիւնների համար կամայական տուգանքներ էին դրուում, որոնց վճարմամբ միայն մեղաւորը կարող պիտի լինէր «կրկին արժանանալ արքայական ողորմածութեան»: Բարոնների համբերութիւնը սպառուեցաւ, երբ 1214 թ. անգլիական զօրքը Բուվինէի մօտ, Ֆլանդրիայում, վրձնական պարտութիւն կրեց, և թագաւորն Անգլիա դարձաւ, իբրեւ թէ ոչինչ չէ պատահել և նորանոր օժանդակութիւններ սկսաւ պահանջել: Հիւսիսային Անգլիոյ բարոնները ժողովուեցան և միաբանեցին զէնք առնելու թագաւորի դէմ: Սրանց կազմած զօրքը կոչում էր իրեն «Աստուծոյ և սուրբ եկեղեցու» բանակ: Յովհանը դէմ դուրս եկաւ ապստամբներին, բայց նա ոչ ոքի վրայ չէր կարող յենուիլ, Ամբողջ Անգլիայից բանոնների օգնութեան դիմեցին նրանց համախոհները. Լոնգոնը

Ազատութեանց մեծ քարտէսը

1215

նրանց կողմն անցաւ: Յովհաննէս խոնարհուեց և ստորագրեց «ազատութիւնների մեծ քարտէսը» (1215): Այս հրովարտակով բարոնները որոշում ու ապահովում էին իրենց իրաւունքներն իբրեւ թագաւորի վասսալներ, միանգամայն և գործում էին ոչ միայն իրենց անձնական շահն այլի առաջ ունենալով, այլ եւ յօգուտ ամբողջ ժողովրդի—մանր ասպետութեան, եկեղեցու, քաղաքացոյց, նոյն իսկ ճորտերի: Որոշուեցաւ ժառանգութեան տիրանալու ժամանակ վճարելիք հարկերի չափը, արգելուեցան տիրապետների զեղծումները խնամակալութեան և ժառանգ դուստրների մարդու տալու ժամանակ: Այսուհետեւ տուգանք պիտի որոշէին մեղաւարտի հաւասարները (պէրեր) և ոչ մի դէպքում չը պիտի սնանկացնէին տուգանքի ենթարկուողներին: Թագաւորը խոստանում էր ազատ մարդոց չը բանդարկել ու չը զրկել ստացուածքից ալլ կերպ, քան թէ օրէնքի զօրութեամբ և պէրերի վճռով: Հաստատուումեն եկեղեցու և քաղաքական ընկերութիւնների իրաւունքները: Հարկերն ու օժանդակութիւններն կարող էին պահանջուիլ մի միայն վասսալների ժողովի համաձայնութեամբ: Վերջապէս, քսան ու հինգ բարոններից կազմուած մի լանձնախումբ պիտի հսկէր այս պայմանի կատարման վրայ և ի դէպս, եթէ թագաւորը զրժէր զրան, անմիջապէս սկսէր զիմադրել զէնքով:

Հենրիկոս Գ.

Այս վերջին յօդուածն առանձնապէս նշանաւոր էր, որովհետեւ Յովհաննէս նոյնքան ուխտադրութ էր, որքան և քմահաճ: Մեծ Քարտիսի ստորագրութիւնից անմիջապէս յետոյ նա խնդրեց ու ստացաւ պապից արձակումն իւր խոստումից, զօրք ժողովեց ու պատերազմ սկսաւ բարոնների դէմ: Անգլիայի բախտն էր, որ նա շուտով մեռաւ, իսկ նրա մատաղատի Հենրիկոս որդու խնամակալը Մեծ Քարտէսն հաստատեց, և այդ ժամանակից դադարձաւ Անգլիոյ պետական կազմակերպութեան հիմունք:

Հենրիկոս Գ. միշտ շրջապատուած էր սիրելիների խմբերով, որոնց նա շուրջապար պաշտօններ ու աւատներ էր պարգեւում: Յատկապէս հաւանում էր նա Ֆրանսիայից եկածներն իրենց կեղծաւորութեան ու շողոքորթ ձևերի համար. եկեղեցու վարչութիւնը նա կատարելապէս իտալացիներին թողեց, որոնց պապն էր ուղարկում: Թէ առաջիններն ու թէ վերջինները շուտով հարստանալ էին աշխատում, նախատեսելով, որ իրենք երկար ժամանակ չը պիտի կերակրուին Անգլիայում: Եւրոպայի ցամաքից եկած այս քախսախնդիրների հոսանքը զայրացնում էր Անգլիայի բնիկներին, որոնք այդ ժամանակ արդէն ճուշտեղ եւ վի ազգ էին կազմել, առանց խտրութեան սախոնների եւ նորմանացոց սերունդների: Պատերազմը Ֆրանսիայի հետ վերսկսուեցաւ—և կրկին ի վնաս անգլիացոյց: Բարոնները զիմախօսում էին այս սխալների և զեղծումների դէմ բոլոր ժողովներում, որ թագաւորը հրաւիրում էր: Յատկապէս աչքի էր ընկնում իւր թշնամութեամբ պալատականների դէմ Սիմօն դը-Մոնֆօրը, կոմս Լէստէրը, ալլբիգոյեաններին յաղթողի կրտսեր որդին: Սկզբում նա էլ քիչ էր զանազանուում միւս Ֆրանսիացի եկուորներից, որոնք խռնուել էին Հենրիկոսի արքունիքում: Բայց նա տաղանդաւոր ու անկախ բնաւորութեան տէր մարդ էր, չէր կարող հաշտուիլ թագաւորի դատարակ ձեռնարկութիւնների հետ, կռուեցաւ նրա հետ և յարեց դժգոհ բնիկ անգլիացոյց: Վերջապէս բարոններն հասան այն բանին, որ Հենրիկոսը, որը շատ մեծ դրամի կարիք ունէր և շարունակ օժանդակութիւններ էր խնդրում, թող տուաւ նրանց ըստ իւրեանց ցանկութեան կառավարութիւնը կարգադրել: Իրանց նորամուծութիւնները սակայն ժողովրդի դժգոհութիւնը յարուցին, որն այժմ աւագանու շահախնդրութիւնից աւելի էր նեղուում, քան թէ առաջ պալատականների

յափշտակութիւններէն: Հենրիկոս Գ. փորձ արաւ այդ լուծը թօթափելու, բայց ջարդուեցաւ և գերի բռնուեցաւ Մոնֆորից: Սա դարձաւ Անգլիայի ղեկավարն և արտայայտեց մեծ պետական անձի լայն հայեացք և հնարագիտութիւն: Նրա ժամանակ կառավարողքիւնը գտնուում էր ինն անձից բաղկացած մի խորհրդի ձեռքը, իսկ գլխաւորագոյն գործերի վճիռն յանձնուում էր Անգլիոյ բոլոր ազաւ բնակիչներէ լեւկայացուցչաց ժողովին: Նա չբաւականացաւ այդ «պառլամէնտին» մասնակից անելով բոլոր բարոններին ու բարձրաստիճան հոգեւորականներին միայն, այլ 1265 թուին հրաւէր ուղարկեց կոմսութիւնների ազատներին և բոլոր գլխաւոր քաղաքներին, իւրաքանչիւր կոմսութեան երկրագործներն, իւրաքանչիւր մեծ քաղաքի բնակիչներն ընտրում էին երկերկու պատգամաւոր պառլամէնտին մասնակցելու համար: Բայց Մոնֆորն երկար չը մնաց Անգլիոյ կառավարիչ. նրա դէմ միացան նրա ընկեր բարոնները, վերաւորուած այն բանից, որ իրենցից խլել էր տիրապետող իշխանութիւնն, և թագաւորական կուսակցութիւնը, որին պարագլուխ կանգնեց զահի ժառանգ Էդուարդը: Իվէմի մօտ Մոնֆորի սակաւթիւ գօրքը ջնջեցին դաշնակիցները, և նա ինքն սպանուեցաւ: Նրա մօտին ժողովուրդը լաւ լիշողութիւն է պահել, իսկ նրա հակառակորդ Էդուարդը, թագաւոր դառնալով, սկսաւ գործ դնել նրա գլխաւոր կառավարական միջոցը. պետութեան գործերի համար խորհրդածութեան էր հրաւիրում մեծամեծ աւատառու իշխանների հետ և կոմսութիւնների ու քաղաքների ներկայացուցիչներին. այս պատճառով Սիմոն դը Մոնֆորին, Լեստէրի կոմսին, համարում են հիմնադիր անգլիական պառլամէնտի:

Էդուարդ Ա. Էդուարդ Ա. զահն ամբառնալով Հենրիկոս Գ-ի մահուանից յետոյ (1272), յաճախ խորհրդակցութեան էր

հրաւիրում պառլամէնտը, սա հանգիստաւոր կերպով հաստատեց Մեծ Քարտէսն և նոյն իսկ հրաժարուեցաւ առանց պառլամէնտի համաձայնութեան հարկ ժողովելուց: Էդուարդը միշտ դիմում էր պառլամէնտի աջակցութեան, որովհետեւ զբաղուած էր դժուարին պատերազմական ձեռնարկողքիւններով եւ դրամի կարօտքիւն ունէր: Նա միացրեց Ուէլսը, ապա խառնուեցաւ Շոտլանդիայի գահաժառանգութեան վէճերին և տիրեց այդ երկրին: Շոտլանդացիք չէին կամենում հրապտակուիլ անգլիացիք և մի քանի անգամ ապստամբեցան: Բացի այս պատերազմներից կղզու վրայ, ստիպուած էր նա պաշտպանելու անգլիական կալուածների մնացորդները Փրանսիայի հարաւարեւմուտքում: Էդուարդն ամենայն բանի համար ժամանակ էր գտնում, և զեռ բացի դրանից, ընդարձակ միջոցների ձեռնարկեց անգլիական իրաւունքը բարելաւելու համար:

Սրա որդի Էդուարդ Բ. բոլորովին այլ յատկութեամբ Էդուարդ Բ. էր աչքի ընկնում—նա թույլ էր և միշտ գտնուում էր մէկ կամ միւս սիրականի աղագցութեան տակ: Վերջի վերջոյ. նրա սեփական կինն ասպտամբութիւն յարուց նրա դէմ և ստիպեց պառլամէնտի առաջն իւր սխալներն ու մեղքերը խոստովանիլ և հրաժարուիլ զահից. նրան փակեցին մի առանձնացած դղեակում և շուտով սպանեցին:

Թագաւոր դարձաւ Էդուարդ Գ., որ վերսկսաւ իւր Էդուարդ Գ. պապի աշխարհակալութիւններն ու արշաւանքները: Սա սկսաւ սոսկալի հարկւրամեայ պատերազմը Փրանսիայի հետ: Այդ պատերազմը ծագում էր գլխաւորաբար այս չորս պատճառներից. 1) Փրանսիացիք օժանդակում էին շոտլանդացոց նրանց անկախութեան կրուիլ մէջ. 2) Անգլիան մեծ քանակութեամբ բուրդ էր արտահանում զէպի ժրանդիս, ուր այդ բուրդը մըշակուում էր, գրանից մահուդ էր գործուում, և այս

պատճառաւ անդգլիացիք պահում էին Ֆլանդրիական քաղաքների կողմը հակառակ ֆրանսիական թագաւորների, որոնք ձգտում էին դրանց նուաճել. 3) Եգուարդ Գ-ին դեռ ևս պատկանում էին Հենրիկոս Բ-ի ժրանսիական թագաւորներն ամեն ուժով աշխատում էին վռնդել վտանգաւոր ախոյեանին Ֆրանսիայից. 4) այս ամէնի վրայ աւելանում էր և այն, որ Եգուարդ Գ. իրաւունք էր յայտնում նոյն իսկ ժրանսիական քաղաքի վրայ: Նրա մայրը Ֆրանսուհի էր, Ֆիլիպպ Գ-ի դուստրը, և երբ սրա բոլոր եղբայրները մեռան, որդիք չը թողնելով, Եգուարդը գահի թեկնածու հրատարակեց իրեն: Բայց Ֆրանսիայում այն հայեացքն էր տիրում, որ սալեան ֆրանկների օրէնքը կանոն և նրանց սերնդին արգելում է հողի և թագի ժառանգ լինելը. այս պատճառով գահ ամբարձաւ վերջին թագաւորի ամենամերձաւոր ազգականն արական գծի, Ֆիլիպպ 2. Վալուան:

Սկզբում պատերազմն յաջողակ էր անգլիացոց համար: Եգուարդ Գ. և նրա աւագ որդին, այսպէս կոչուած «Սև թագաւորացնը», ֆրանսիացոց վճռական ջարդ տուի Կրէսիի և Պուատիէի մօտ: Այս յաղթանակները ձեռք բերուեցան շնորհիւ այն ղեմացկունութեան և ճարտարութեան, որ ունէին անգլիացի զինուորացի ժողովրդից կազմուած աղետնաւորները: Եւրոպայի ցամաքային երկրներին հակառակ, այն ժամանակուան Անգլիայում շնորհիւ հաստատուն պետական կարգին, ժողովրդի բարեկեցութիւնն աճում էր: Վաղուց հետէ այնտեղ պահպանուում էր ազատ շինականների դասակարգը, որ չէր ընկճուել աւատական իշխանների ձեռքի տակ. այս դասակարգը հետզհետէ բազմանում էր այն պատճառով, որ դրան էին յարում կալուածատէրերից իրենց ազատութիւնը գնած ճորտերը: Բայց ինչ-

քան ստուարանում էր ազատ շինականների թիւը, ինչքան բարւոքուում էր նրանց վիճակն, այնքան աւելի անհամբերութեամբ էին վերաբերուում այն նեղութիւններին, որ դեռ ևս ստիպուած էին կրել բարոններից, և, միւս կողմից, աւելի ծանր էր թուում ճորտերի վիճակը, որոնք դեռ չէին ազատուել ճորտութիւնից:

Շինականների մէջ խորին դժգոհութիւն տարածուեց դէպի բարձր դասակարգին—ազնուականներն ու հոգեւորականները: Ոմանք դանդաղում էին, որ նրանց վրայ են բռնում կոռն ու տասանորդը պահպանելու համար այն անգործներին, որոնք խրախճանութիւններ են անում և զարգարուում, պատերազմում և որսի դուրս գալիս. ոմանք դժգոհ էին այն բանից, որ ուսմանը ստիպուած էին ամէն բանի մէջ տեղի տալ երեւելիներին, որոնք յաճախ աւելի վատթար, յիմար ու տկար էին քան շինականները: Ժողովրդի մէջ առած էր դարձել «երբ Ագամն հերկում էր, իսկ Եւան մանում, ո՞ր էր այն ժամանակ ազնուականը»: Ուրեմն Լանգլանդ անունով մէկը մի ռառնաւոր գրեց այս վերնագրով. «Պետրոս հերկողի տեսիլը», ուր նկարագրուում էր, թէ ի՞նչպէս ամէնքը «չահախնդրութեան» էին նուիրուել և չար են գործում, և ապացուցանում էր, որ ճշմարտութեան և ուղղութեան ճանապարհը կարող է ցոյց տալ միայն հասարակ և ամենից անարգուած մըշակը—Պետրոս հերկողը:

Բարձրագոյն դասակարգերի ընդդէմ այս գրգիռն երկար ժամանակ ետում էր ժողովրդի մէջ, բայց այդ բանի տեղ չէին դնում Պաուլամէնտի մէջ չէր կարող դա արտայայտուիլ, որովհետեւ այնտեղ մասնակցում էին միայն բարձր դասակարգերի ներկայացուցիչներն, որոնք խստութեամբ հետեւում էին թագաւորին, սահմանափակում էին նրա ծախքերն, հալածում էին նրա սիրելիներին, իսկ գիւղականներին խիստ էին պահում: Երբ 1348 թուին մի սոսկալի վարակիչ հիւանդութիւն տարածուեցաւ և ժողովրդի կէսը կոտորեց, պաուլամէնտները միջոցներ ձեռք առան, որ կենդանի մնացած մշակները չ'օգտուին այն հանգամանքից, որ քիչ են մնացել և ամենին հարկաւոր են, և առաջուանից աւելի վարձ չը պահանջեն իրենց աշխատանքի համար: Հաստատուեցան սակագներ ծառայութեանց և խիստ պատիժներ նրանց համար, ոյք աւելի

կը պահանջեն կամ կը հրաժարուին հաստատուած գնով ծառայելու:

Ռիչարդ Բ.

Ձանազան դասակարգերի մէջ եղած թշնամութիւններն արտայայտուեցան Էդուարդ Գ-ի թուան, Ռիչարդ Բ-ի ժամանակ, որ գահ ամբարձաւ տասը տարեկան հասակում: Ժողովրդական խմբերն 1381 թուին հարաւային Անգլիայում հաւաքուեցան և սկսան կողոպտել դղեակները, այլեւ հարկերի ցուցակները, սպանել կալուածատէրերին և իրաւագէտներին: Սինլիքորների մի խմբակ կարողացաւ Լոնդոն մտնել և այնտեղ աջակցութիւն գտաւ արուեստաւորների մէջ. խռովարարներն սպանեցին Կէնտրբերիի արքեպիսկոպոսին և մի քանի դատաւորների ու իրաւաբանների: Մատաղատի թագաւորն իւր խորհրդականներով դուրս եկաւ խռովարարների դիմացն ու ստորագրեց մի հրովարտակ, որի զօրութեամբ *հորստրիւնը ջնջուումէր Անգլիայում* և բոլոր ճորտերն ազատ էին հրատարակուում: Այս զիջումների պատճառով զինուած շինականներից մեծագոյն մասը ցրուեցաւ գիւղերը: Մնացածների առաջ դուրս եկաւ կրկին թագաւորը. բանագնացութիւնների ժամանակ Լոնդոնի քաղաքապետը սպանեց նրանց առաջնորդներից մէկին — Ուատ Տալլերին: Խռովարարներին տրուած բոլոր խոստումներն ու արտօնութեան գրերն անգոր հրատարակուեցան. թագաւորն ու ասպետները ժողովեցին վարձկան զօրք և դրանց օգնութեամբ ցրուեցին ապստամբ խմբերը. բոլոր կոմսութիւնների մէջ սկսան ապստամբութեան մէջ խառն եղածներին կոտորել:

Այս ապստամբութիւնն ընկճելուց յետոյ Ռիչարդի կառավարութիւնը նոյնպիսի երկպառակութեանց առիթ տուաւ, որպիսիք տեղի ունէին Հենրիկոս Գ-ի և Էդուարդ Բ-ի ժամանակ: Երիտասարդ թագաւորն լառաջ էր մըղում իւր հաւատարիմներին, բայց դրանց դէմ ելան

գլխաւոր բարոններն ու թագաւորի մերձաւոր ազգականները: Ռիչարդին ստիպեցին գահից հրաժարուիլ¹⁾, իսկ ղեկավարների առաջնորդը, դուքս Լանկաստերը, լայտարեց պառլամենտում, որ ինքն ամենից աւելի իրաւունք ունի թագի վրայ: Դա ճշմարիտ չէր. լանկաստերեան տունը ծագում էր Էդուարդ Գ-ի երրորդ որդուց, իսկ կենդանի էր դեռ ևս երկրորդ որդու սերունդը: Բայց պառլամենտը թագաւոր հրատարակեց Լանկաստերին Հենրիկոս Գ. անուամբ:

Հենրիկոս Գ-ի ամբողջ թագաւորութիւնն անցաւ Հենրիկոս Ե. ապստամբութիւնների դէմ կռուելով: Նրա որդի Հենրիկոս Ե-ը, *վերջապէս, արժանացաւ ընդհանուր հաւանութեան եւ ժողովրդական դարձաւ*: Սա մի փառաւոր զօրավար էր, և վերականգնեց անգլիացոց գերակշռութիւնը Ֆրանսիայում: Տասն հազարի չափ հետեակ զօրքով Ագէնկուրի մօտ գլխովին ջարդեց 50,000 Ֆրանսիացոց, նուաճեց Նորմանդիան, գրաւեց Փարիզն և կարողացաւ իրեն Ֆրանսիական թագի ժառանգ ճանաչեցնել (1420): Կարլոս Զ-ի որդին, որ կրում էր Դոֆէն — թագաժառանգ տիտղոսը, չը ճանաչեց այդ դաշնագրութիւնն և շարունակեց կռիւը, բայց գլխաւոր քաղաքներից նրա կողմն էր միայն Սրլէանը, իսկ բոլոր նշանաւոր նահանգները Ֆրանսիայի գտնուում էին անգլիացոց թագաւորի և նրա դաշնակցի — Բուրգունդիոյ դքսի ձեռքին:

Հենրիկոս Ե-ը, սակայն, շուտով մեռաւ, և իսկոյն նրա մահուանից յետոյ Ֆրանսիայում տեղի ունեցաւ հայրենասիրական զգացմունքների մի անսովոր բորբոքում: Ոչ Հենրիկոս Ե-ի որդի Հենրիկոս Զ-ը, ոչ էլ նրա խորհրդականները կարող եղան դէմ գնել այս ազգային շարժման: Անգլիացիք կորցնում էին նահանգ նահանգի, քաղաք քաղաքի յետեւից, նրանցից լետ կանգ-

¹⁾ Նա շուտով սպանուեցաւ:

1453

նեց իրենց գլխաւոր դաշնակիցը Փրանսիայում, բուրգունդական դուքսն և 1453 թուին բոլոր նրանց Տիրապետորիւններից ձեռքերին մնաց միայն Կալէ քաղաքը:

Նոյն իսկ Անգլիոյ մէջ 15-րդ դարը նշանաւոր դարձաւ սոսկալի խռովութիւններով պալատականների և աւագանու, որոնք ճգնում էին տկարամիտ Հենրիկոս 2-ի վրայ ազդեցութիւն ձեռք բերել, վեճերին աւելացաւ ազնուականութեան կառնադրականութիւնը. իւրաքանչիւր բարոն և զօրեղ սասպետ պահում էր սպառնալիցութեամբ սպասաւորների դեմքեր, և երբ պատերազմը Փրանսիայում դադարեց այդ կոշտ ու կոպիտ մարդոց զբաղեցնել, դրանք սկսան կռուիլ միմիանց դէմ: Ի լրումն այս շփոթութեանց, Լանկաստերների իրաւունքը գահի վերաբերութեամբ՝ կասկածելի էր: Այդ իրաւունքը չէր ճանաչում Էդուարդ Գ-ի երկրորդ որդու սերունդը, կանացի կողմից, Իօրքի դուքսը: Կազմուեցաւ «ձեռնակ վարդի»¹⁾ կուսակցութիւնը, որի կողմը պահում էր հարաւային Անգլիոյ արդիւնագործ ժողովուրդը: «Կարմիր վարդի» Լանկաստերեան կուսակցութեան կողմակիցները պատկանում էին գլխաւորաբար հիւսիսային Անգլիոյ պատերազմատէր և կիսավալդենի ժողովրդին: Բռնկեց մի արիւնահեղ պատերազմ, որի մէջ երբեմն մի, երբեմն միւս կուսակցութիւնն էր լաղթող, մինչ, վերջապէս, գահն անցաւ լանկաստերեան տան ողջ մնացած վերջին ներկայացուցչին — Հենրիկոս Թիւզորին:

Իօրքը հաղիւ կարողացել էր իրեն ժառանգ ճանաչեցնել Հենրիկոս 2-ի, երբ Մարգարիտան (Հենրիկոս 2-ի կինը) և հիւսիսայինները ջարդեցին նրան Վէկֆիլի մօտ, նա ինքը սպանուեցաւ, նրա գլուխը թղթէ թագով պսակուած ցից հանած ի ցոյց դրին. նրա աւագ որդուն գլխատեցին ճակատամարտից յետոյ Վրիթաու դուրս եկաւ նրա երկրորդ որդին, որ

¹⁾ ձեռնակ վարդն այդ կուսակցութեան որոշիչ նշանն էր: Կուսակցութիւնս կոչուում էր նոյնպէս Իօրքեան, որովհետեւ դրա առաջնորդն էր Իօրք դուքսը:

կոմս Ուօրիկի հետ միասին ցրուեց հիւսիսայիններին և թագաւորեց Էդուարդ Գ-ը անունով: Սա իւր ժամանակի ամենալաւ զօրավարն էր և թշնամիների բոլոր փորձերը նրան դաժալէժ անելու՝ վերջանում էին պարտութիւններով: Մինչև անգամ երբ նրանից վիրաւորուած Ուօրիկը միացաւ Մարգարիտայի հետ նրա դէմ, Էդուարդ Գ-ը ջարդեց նրանց: Այս յաղթութիւնները լուծեցին լանկաստերեան կուսակցութիւնը, բայց ձերմակ վարդի իշխանութիւնն եւս անհաստատ երեւեցաւ: Էդուարդ Գ-ը վաղահաս մահուամբ մեռաւ, և նրանից յետոյ մնացին երկու մանկահասակ տղայք. Էդուարդի եղբայր Ռիչարդը, Գլոստերի դուքսը, նշանակուեցաւ խնամակալ և թագաւորութեան վերակացու: Բայց նա քիչ համարեց այդ ժամանակաւոր իշխանութիւնը. մի ամբողջ շարք սպանութիւններով տիրեց գահին. սա գահակալեց Ռիչարդ Գ-ը անունով: Էդուարդի որդոց փակեց Լոնդոնի Տօուէր ամրոցում և քիչ յետոյ հրամայեց խեղդել: Նրա սեփական գործակիցները վստահ էին, որ թագաւորը իրենց դէմ չի դառնալ, ամենից զօրաւորը, Բէքինհեմը, ապստամբեց, բայց պարտութիւն կրեց և սպանուեցաւ: Ռիչարդի եղբունագործութիւններն ամենքին ոտքի հանեցին նրա դէմ, և Լանկաստերեան տան միակ կենդանի մնացած ներկայացուցիչը, Հենրիկոս Թիւզորը յարմար համարեց վայրկեանն Անգլիայի ամեն իջնելու. նրա հետ միացան լանկաստերեան կուսակցութեան հետեւողներն և Ռիչարդից դժգոհ Իօրքեանները: Բոստօրտի մօտ ճակատամարտում Ռիչարդ Գ-ը զօրքի մի մասը գաւաճանեց նրան, և ինքը սպանուեցաւ: Նրա թափն այգտեղ իսկ դրին Թիւզորի գլխին:

Թիւզորը գահ բարձրացաւ Հենրիկոս Է-րդ անունով: Սա նպատակ դրաւ իրեն կուսակցութիւններն հաշտեցնելը և կոտորածին վախճան գնելն. այս պատճառաւ ամուսնացաւ Էդուարդ Գ-ի դստեր հետ և իւր գրօշանիչը կազմեց ձերմակ և կարմիր վարդերից (1485):

1485

Տասնհինգերորդ դարու սոսկալի պատերազմը գլխաւորապէս այն հետեանքն ունեցաւ, որ սկսւեցաւ խոշոր ազնուականութիւնը, որի անդամները ջնջուէին միմեանց, առաջացաւ միջին և մանր ազնուականութիւնը, որ կոմսութիւններն էր կառավարում և պատգամաւորներ էր ուղարկում համայնքի խորհրդ-

Անգլիան միջին դարերու վերջին

դարան: Սրա հետ միասին «ստորին» խորհրդարանը, որ բաղկացած էր կոմսուլթիւնների ¹⁾ և քաղաքների ներկայացուցիչներից, աւելի մեծ նշանակութիւն ստացաւ պարլամենտի մէջ, իսկ «վերինը», կամ լորդերի ²⁾ խորհրդարանը, որ մինչև այդ ժամանակ ղեկավարում էր գործերը, սկսաւ երկրորդ տեղը բռնել: Անգլիական ժողովուրդը մեծամեծ բարեփոխութիւններ էր սպասում վերջապէս հաստատուած թագաւորական իշխանութիւնից, ակնկալում էր, որ թագաւորը կուսակցութիւններիցը բարձր կրկանգնի, կարգ կըմտցնի, օրէնքը կըպաշտպանէ մեծամեծների կամայականութեանց դէմ: Սակայն բարձր դասակարգերի երկարատեւ կռիւը թագաւորի դէմ զուր չէր անցել. ազնուականութիւնը, հոգեւորականութիւնն և քաղաքացիք սովորել էին միաբան գործել նահանգների կառավարութեան և պառլամենտի մէջ: Պարլամենտը ստիպուած եղաւ մի քանի անգամ փոփոխել զահաժառանգութեան կարգն և հաստատել մի քանի թագաւորների զահակալութիւն (Էդուարդ Գ-րդ, Հենրիկոս Գ-րդ, Էդուարդ Գ-րդ, Ռիչարդ Գ-րդ, Հենրիկոս Է-րդ): Ամենագործող և իշխանասէր թագաւորները ճանաչում էին պառլամենտի բացառիկ իրաւունքը ժողովրդի վրայ հարկ դնելու, և հետեւում էին նրա ցուցմունքին՝ իրենց օրէնսդրութեան մէջ, եթէ պատահում էր իսկ շեղումն այս ընդհանուր կանոնից, այն ժամանակ թագաւորները խորամանկութիւններ էին գործ դնում, որպէս զի արգարացնէն իրենց վարմունքը ³⁾: Այսպիսով ուրեմն, Անգլիական դուքս եկաւ միջին դարերից իբրեւ մի միաձուլ ազ-

¹⁾ Այսպէս կոչուած «կոմսուլթիւնների ասպետներ»:

²⁾ Այդպէս քաղմում էին դքսերը, կոմսերը, բարոնները, եպիսկոպոսները, և դիսաւոր վանքերի արքաները կամ վանահայրերը:

³⁾ Էդուարդ Գ-րդ, օրինակ, դիմում էր հարուստ մարդոց խնդրելով դրամական բնծայով ցուց տալու իրենց բարեհաճութիւնը (benevolence) դէպի ինքը, Ռիչարդ Գ-րդ զրամ էր կորցում փոխառութեան պատրուակով:

գային միապետութիւն, սահմանափակուած պառլամենտով:

ԳԼՈՒԽ Բ.

Ֆ Ր Ա Ն Ս Ի Ա:

Տասներորդ դարու վախճանին Ֆրանսիայում նոր ^{Կապետինգների հարստութիւն} աւատական կարգ հաստատուեցաւ: Երկիրը բաժանուեցաւ բազմաթիւ անկախ տիրապետութիւնների, որոնք հազիւ միմիանց հետ վասսալական լարաբերութիւններով ¹⁾ կապուած էին:

Կարօլինգեան հարստութեան թագաւորները կորցրին իրենց ազդեցութիւնն երկրի մէջ, և նրանց ամբողջ կալումաձքը կազմում էին երկու քաղաքների շրջակայք. 987 թուին աւատական իշխաններն ընտրեցին Իլդը-Ֆրանսի դքսին, Հուգօ Կապետին, թագաւոր, որ հիմնադիր նդաւ Կապետինգեան հարստութեան: Կապետինգեան առաջին թագաւորները, որ կրում էին Ֆրանսիական թագաւորի մեծահնչիւն տիտղոսը, մնացին մասն իշխաններ և ոչինչ չէին կարողանում անել իրենց դրքսութեան սահմաններից դուրս, սրանք աշխատեցին միայն հաստատել թագի ժառանգական լաջորդութեան կառգն իրենց հարստութեան մէջ, այս նպատակի համար իւրաքանչիւր թագաւոր իւր կենդանութեան ժամանակն իսկ թագով պսակում էր իւր ժառանգին՝ ժԱ-րդ ¹⁾ դարում աչքի ընկնող շատ դէպքեր տեղի ունեցան Ֆրանսիայում. նորմանդացիք խմբերով դիմեցին դէպի հարաւային Բտալիա և հիմնեցին այնտեղ մի նոր պետու-

¹⁾ Ամենից զօրաւոր աւատական իշխաններն էին. արեմուտքում—նորմանդական, րրետանական և աքուիտանական դքսերը, հիւսիսում—ֆլանդրական կոմսը, արեւելքում—բուրգունդական դուքսը, հարաւում—Տուլուզի կոմսը, միջավայրում—Շամպայնի և Անժուի կոմսերը և Ֆրանսիական դուքսը, որ տիրում էր Իլդը-Ֆրանսի նահանգին, Սենա գետի միջին հոսանքի երկու կողմում:

Թիւն. Վիլհելմ Աշխարհակալը նուաճեց Անգլիան. Ուրբանոս Բ-ը պապն ասպետներին հրապուրեց դէպի խաչակրաց արշաւանք: Սակայն Կապետինգները ոչ մի կերպ չըմասնակցեցին այս մեծամեծ գործերին. նրանք նստում էին տանը, Փարիզում, բաւականանում էին մօտակայ շրջակայքում այս կամ այն դղեկին տիրանալով, և մեծ դժուարութեամբ պաշտպանուում էին իրենց հարեանների դէմ, յատկապէս նորմանդական դքսերի: Առաջին Կապետինգը, որ այս աննշան դերի սահմանից դուրս եկաւ, էր Լուզովիկոս Զ-ը Թանձրամարմինը (Հաստը): Սա ամենից առաջ հոգ տարաւ այն մասին, որ յիմի կասարեւալ քաղաւոր իւր իսկ իշխանութեան մէջ. անխոնջ կերպով հալածում էր նա Իլ-դը-Ֆրանսի բարոններին. սրանցից իւրաքանչիւրն ինքն իրեն մի թագաւոր էր համարում. պատերազմում էր դրացիների հետ և կողոպտում ամենին, ով իրենից տկար էր, — այժմ դրանք իմացան, որ իրենց վրայ ևս դատաւոր ու դատաստան կայ: 20-րեղ աջակցութիւն էր գտնում քաղաւորն եկեղեցուն կողմից. հոգեւորականութիւնը տիրում էր ընդարձակ հողերի և ունէր իւր իշխանութեան տակ բազմաթիւ աւատաւորներ. բայց սա դժուարութեամբ էր կարողանում պաշտպանուիլ պատերազմասէր աշխարհական իշխանների դէմ. և այս պատճառով բոլոր ուժով օգնում էր թագաւորին, որոշ կարգ հաստատելու հիւսիսային և միջին Ֆրանսիայում: Լուզովիկոս Զ-ի գլխաւոր աջակիցը դարձաւ Փարիզին մերձակայ Սենդընի վանքի աբբազայր Սուգերիոսը, մի շինականի որդի, որ բարձր աստիճանի էր հասել շնորհիւ իւր գործնական խելքի:

Քաղաքներ:

Մի աչքի ընկնող հանգամանք ևս նպատեց թագաւորի յաջողութիւններին: Ֆրանսիական քաղաքները, որոնց մէջ աշխույժ առեւտուր էր կատարուում, և ուր ապրում էին բազմաթիւ արհեստաւորներ ու վաճառականներ, սիրով չէին հպատակում իրենց տանուտէր-

ների (սէնիօր) կամայականութիւններին: Հարուստ քաղաքացոյց հետ դժուար էր այնպէս վարուիլ, ինչպէս հասարակ ճօրտերի. սրանք իրենց արժէքը գիտէին և կարող էին օգտուիլ տանուտէրների ընդդէմ քաղաքը շրջափակող պարիսպներից: Տանուտէրները երբեմն իրենից էին տալիս ֆալաֆալոյ զանազան արտօնութիւններ. որոշում էին հարկերի և ամեն տեսակ տուրքերի քանակութիւնը, ազատում էին քաղաքացոյց ճօրտութիւնից, և քոյր էին տալիս նրանց ընտրելու իրենց քաղաքապետներին ¹⁾ և խորհրդականներին ²⁾, որոնք քաղաքի գաւառներն էին ու կառավարիչները: Այս արտօնութիւններն աչքի առաջ ունենալով շրջակայքից շատ բնակիչներ գաղթում էին քաղաք. արդիւնաբեր-ծութիւնն ու հարստութիւնն աճում էր, և այսու տանուտիրոջ շահն աւելանում, որովհետեւ նրա եկամուտն ևս աճում էր իր հպատակ համայնքների բարեկեցութեան աւելանալով: Պատահում էր ընդհակառակն, որ տանուտէրը յետ չէին կանգնում իրենց իշխանական իրաւունքներից, և այն ժամանակ տեղի էին ունենում ապստամբութիւններ ու արիւնահեղ ընդհարումներ քաղաքացոյց և տանուտէրների մէջ: Եթէ լողթող էր հանդիսանում քաղաքը, այն ժամանակ բնակիչները կազմում էին մի անկախ վարչութիւն, եւ ֆալաֆր դառնում էր մի փոքրիկ հասարակապետութիւն, ընտրուած մագիստրատներով (մէրեր և էշեֆներ), ամենահարուստ քաղաքացիների խորհրդարանով և համայնական ժողովով, ուր մասնակցում էին չափահաս տղամարդիկ, որոնք պատկանում էին քաղաքի համայնքին: Այսպիսի քաղաքային հասարակապետութիւնները կոչւում էին կոմունալներ: Այսպիսով ասպետութեան և հոգեւորականութեան կից հանդէս եկաւ երրորդ դա-

¹⁾ Պրանց սովորաբար անուանում էին մեր:

²⁾ Յաճախ դրանք կոչւում էին եշեֆներ — քաղաքապետութեան ատենակալ (Սկարին):

առկարգն — արտօնաւորեալ քաղաքների և կոմմունաների քաղաքացիք (tiers état): Դրանց ազատութիւնն աւատաւոր իշխանների լուծից տկարացրեց տանուտէրներին, բացի սրանից, քաղաքները, հոգեւորականութեան նման, սիրով օժանդակում էին թագաւորին, աւատատէր իշխանների գէժ, որովհետեւ թագաւորն աշխատում էր հաստատել կարգ և մի իշխանութիւն, փոխանակ աւատական բազմիշխանութեան և անկարգութեան:

Աւատականութեան գէժ կոխն եւ պետական կարգի հաստատութիւնը սակայն դժուարին գործ էր, որի վրայ պէտք է աշխատէին շատ սերունդներ: Գլխաւոր գործիչները, բնականաբար, թագաւորներն էին, որոնց համար այս խնդիրն անբաժան էր իրենց սեպհական շահերից: Ամենից առաջ անհրաժեշտ էր Թրանսիան միացնել եւ կազմել մի աւերոյջ ջոկը: Կապետիոնների դրութիւնն այնպէս յաջողակ չէր, ինչպէս անգլիական թագաւորներին, որոնք նոյն իսկ նորմանդական նուաճումից յետոյ գործ ունեցան ամբողջ Անգլիայի հետ եւ այս աշխարհակալութիւնից քիչ յետոյ կանգնեցին գէժ առ գէժ միացած անգլիական ազգի, որ կազմուած էր սաքսոններից եւ նորմանդացիներից: Թրանսիական թագաւորներն ըստիպուած էին դժուարաբար ընդլայնել իրենց տիրապետութիւնների սահմանները, որպէս զի իրենց իշխանութեան տակ ժողովէն ամբողջ երկիրն ու ժողովուրդը, նրանք ամենքն եւս նոյն ճարտարութիւնը չունէին այս գործում:

Լուդովիկոս Զ-ի որդի Լուդովիկոս Է-ը գեղեցիկ առիթ ունեցաւ Իլ-դը-Ֆրանսի հետ միացնելու հարաւարեւմտեան նահանգները, նա ամուսնացաւ աքուիտանեան դքսութեան ժառանգուհու — Էլէօնորայի հետ: Բայց նա վատ քաղաքագէտ էր եւ չափազանց շատ ազատութիւն էր տալիս իւր անձնական հակումներին, 1147 թուին նա յափշտակուեցաւ ս. Բեռնարդոսի քարոզներով եւ, հակառակ Սուգերիոսի խորհրդներին, խաչակիր արշաւանքին մասնակցեց, իսկ Ասորիքից վերադառնալուց յետոյ բաժանուեց իւր ամուսնուց: Սա անմիջապէս ամուսնացաւ երիտասարդ Հենրիկոս Պլանտագենետոսի հետ, որ, չնորհիւ այս ամուսնութեան, դարձաւ ամենագորաւոր իշխանն Եւրոպայում:

Լուդովիկոս Զ-ի թոռը, Ֆրիսլակ Բ-ը Աւգուստն իւր ամբողջ կեանքի ընթացքում պատերազմ վարեց անգլիական թագաւորների գէժ, որովհետեւ նրանց իշխանութիւնը, որ տարածուել էր Թրանսիայի ամբողջ արեւմուտքում, բովանդակում էր Նորմանդիան, Անժուեն, Պուատուեն, Գիեն և Գասքոն նահանգները, սպառնում էր Ֆրանսիական թագի գոյութեան: Ֆրիսլակ Աւգուստը վարում էր այդ պատերազմն անխոնջ յամուածութեամբ և ճարպիկութեամբ: Երրորդ խաչակրաց արշաւանքի մէջ վառվռուն Ռիչարդ Առեւծասիրտը ստուերի մէջ թողեց Ֆրիսլակին. վերջինը սակայն, շտապեց դառնալ Թրանսիա և օգուտ քաղեց իւր ախոյեանի բացակայութիւնից, որպէս զի իսկ նրա քաղաքները և գղեակները: Յովհան Անհոյինը Ռիչարդից տւելի քիչ չափով կարողացաւ մրցել զգոյշ և հաստատամիտ ֆրանսիացու հետ: Նորմանդիան միացուեցաւ ֆրանսիական թագի կալուածներին. Յովհանին դաշնակից դարձաւ Ոթոն Դ. կայսրը, բայց անգլիացիք սրանից բան չը հեցան. վճռական ճակատամարտում Բուվենի մօտ Ֆրիսլակը կորիզուել ջարդեց դաշնակիցներին (1214): Ֆրանսիացոց թագաւորը չբաւականացաւ տիրապետութիւններով: Նրա ժամանակ կազմակերպուեցաւ քաղաւորական վարչոյթը, որ միացրեց նուաճուած երկրներն և եկամուտներ հանեց դրանցից, պալատի ու գործի պահպանութեան համար:

Նահանգներում նշանակուեցան պալլեր (գորազուխներ) եւ գործակալներ (պրիւս), որոնք իրենց գործողութիւնների համար հաշիւ էին տալիս քաղաւորական խորհրդին եւ հաշուարարական պալատին (chambre des comptes): Թագաւորի պալատականներից ոմանք, որ նրա տան, սեղանի, հողերի կառավարիչներն էին, ստացան նշանաւոր պետական պաշտօններ: Այսպէս, ախոռապետները, կոնսետաբլ (գունդատապ) եւ մարշալները (մարաշալտ), դարձան գործի հրամանատար, անձնական քարտուղար — շանսլիէ — վարում էր դատական գոր-

ծերը, մատուռակն եւ ննջարանապետը (buticularius, camera-
rius) հոգում էին ելեւմուտքի մասին, եւ այլն

Դեռ եւս Ֆիլիպպ Աւգուստի կենդանութեան ժա-
մանակ մի դէպք պատահեց, որի մէջ թագաւորն ուղ-
ղակի մասնակցութիւն չունեցաւ, բայց որ նրա օգտին
վերջացաւ. հիւսիսային ասպետների խաչակիր արշաւան-
քը բնաջինջ արաւ ալբիգոյեան աղանդն եւ դրա հետ
միասին կոսրեց հարաւի անկախութիւնը, ուր մշա-
կուել էր յատուկ լեզու եւ յատուկ քաղաքակրթութիւն:
Հարաւայիններին յաղթող ասպետները սակայն, կարող
չեղան հաստատուիլ նուաճուած երկրներում, եւ Սիմոն-
դը-Մոնֆորի աւագ եղբայրը Տուլուզի կոմսութիւնից
իրեն բաժին ընկած մասը յանձնեց Ֆիլիպպ Աւգուստի
որդուն, — Լուգովիկոս Ը-րդին:

Լուգովիկոս
Թ.

Թագաւորական իշխանութիւնը մեծ քաջ արաւ
դէպի յառաջ այս թագաւորի որդու եւ յաջորդի, Լուգո-
վիկոս Թ. Սրբի ժամանակ: Լուգովիկոս Թ.-ի գլխաւոր
նշանակութիւնն այն էր, որ իւր արդարասիրութեամբ,
բարեպաշտութեամբ եւ հպատակների բարօրութեան
համար հոգալովը ներշնչեց Ֆրանսիացոյ անսահման
յարգանք դէպի իւր անձը: Փրանսիացիի դրա մէջ
սեւնում էին տկարների պաշտպանին, անկեղծ դատա-
ւորին, բռնութեան եւ անօրինութեան թշնամուն: Նա
սիրում էր պատարագից լեռոյ նստել իւր դղեակի բա-
կում, կաղնու տակ, եւ անձամբ ընդունել տմենատե-
սակ գանգատներ եւ բողոքներ: Իբրեւ արդար դատաւոր,
նա տարբերութիւն չէր դնում հարստի եւ աղքատի,
ազնուականի եւ ռամկի մէջ. մի զօրեղ բարոնի բանդ
նստացրեց այն պատճառով, որ նա ինքնակամ պատժել
էր իւր անտառով անցնող սրտորդներին. թագաւորի
սեպհական եղբայրն ստիպուած եղաւ տուգանք վճարել
այն բանի համար, որ նրա մարդիկ կողոպտել էին վա-
ճառականներին ճանապարհի վրայ: Լուգովիկոս Թ.

գործում էր այնպիսի ժամանակ, երբ աւատական իրա-
ւունքն եւ գերմանական սովորութիւնները, որոնցով
ղեկավարում էին դատարաններում, այլ եւս վստահու-
թիւն չէին ներշնչում: Իտալիայից տարածուեցաւ ամ-
բողջ Եւրոպայում հռոմէական իրաւունքը: Դասական
իրաւագէտների ուսմունքը ծագեց այն շրջանում, երբ
գոյութիւն ունէր ամենքից ընդունելութիւն գտած պե-
տական իշխանութիւնը, երբ մարդիկ աւելի կրթուած
էին, քան միջին դարերում, կարողանում էին միմեանց մէջ
աւելի բարդ եւ կատարելագոյն յարաբերութիւններ ստեղ-
ծել: Փրանսիայի իրաւագէտները, որ կրթութիւն էին
ստացել Բոլանիայում, Փարիզում կամ Օրլէանում, յա-
փըշտակում էին այն յոյսով, որ կարող կըլինին յար-
մարացնել Փրանսիայի այն քանաւոր սկզբունքնե-
րը պետութեան եւ իրաւունքի, որոնց հետ նրանք
ծանօթացել էին Յուսիսիսաւոսի օրէնսգրքի մէջ:
Աւատական օրէնքների խառնաշփոթութեան եւ կոպ-
տութեան վրայ նրանք արհամարհանքով էին նայում:
Լուգովիկոս Թ. օգուտ քաղեց այս հալեացքներից աւա-
տական իրաւունքի առանձնապէս աչքի ընկնող անտե-
ղութիւնները վերացնելու համար:

Իւր դատարաններում, օրինակի համար, վերացրեց դա-
սական մեկաւարտութիւնը, նրա դատաւորները պարտաւոր էին
քննելու դործը վկաներին հարցափորձի ենթարկելով եւ վաւե-
րաթղթերը գննելով. երբեմն քննութիւնը կատարուում էր տեղն
ու տեղը յատուկ քննիչների միջոցով. դրա հետ միասին ամ-
բողջ դործը վարում էին թագաւորական դատաւորները, որոնք
նշանակուում էին գիտական իրաւաբաններից կամ թէ չէ փաս-
տաբաններից եւ նրանց քարտուղարներից, որոնք ծառայում
էին դատարաններում. տեղական հասարակութիւնից ընտրուած
մարդոց կարծիքը չէին հարցնում — այդ էր զանազանութիւնը
Փրանսիայի եւ Անգլիայի մէջ, ուր գործերի վճռին մասնակցում
էին երգուեալները: Լուգովիկոս Թ. օգտուում էր բոլոր առիթ-
ներից, որպէսզի Հենրիկոս Բ.-ի նման բոլոր գործերն իւր դա-

տարանները փոխադրէ աւատաւոր իշխանների դատարաններից. նա այն հայեացքն ընդունել տուաւ, որ աւատական իշխանների դատարանների վճռից դժգոհ անձը կարող է բողոքել թագաւորին, և այն ժամանակ գործը պիտի փոխադրուի թագաւորական դատարան: 7

Թագաւորական դատարանների քննութեան յանձնուող բազմաթիւ գործերը վարելու համար, կարեւոր եղաւ յատուկ ուշադրութիւն դարձնել այսպէս կոչուած պառնշաւեցիների կազմակերպութեան վրայ. դրանք դասակարգելի ներկայացուցիչների ժողովներ չէին պետական գործերը քննելու համար, ինչպէս Անգլիայում, այլ դասաստանական դահլիճներ, որ վճռում էին վեճերն և քրէական գործերը, ընդունում բողոքներ և ղեկավարում դատական քննութիւնները. գլխաւոր պառնշաւեցիները Փարիզումն էր, բայց զանազան նահանգների հետզհետէ միանալուց լետուի հիմնուում էին դրանց մէջ առանձին պառնշաւեցիներ¹⁾: Թէպէտ և Լուդովիկոս Թ-ի խաչակիր արշաւանքներն աւարտուեցան անյաջողութեամբ և թագաւորի ուշադրութիւնը հեռացրին իւր մերձաւոր Ֆրանսիան կազմակերպելու խնդրից, բայց յարգանքը նրա անձնաւորութեան առաջ աւելի ևս աճեց, նա ապրեց իբրեւ հաւատույ վկայ և նահատակ ու մինչև իսկ վալդենի մամելիւքներին կարողացաւ յարգանք ազգել դէպի իւր անձը: Ժողովրդի իշխողութեան մէջ մնաց նա իբրեւ սուրբ թագաւոր (1270):

1270

Ֆիլիպպ Դ.
1314

Նրա թուր Ֆիլիպպ Դ. Գեղեցիկը (1314) շարունակեց ֆրանսիական իշխանութիւնների ձուլումը, առանց վախենալու խաբեբայութիւն կամ բռնաբարութիւն գործ դնելուց, եթէ դրանց միջոցով կարելի էր օգտակար հետեւանքների հասնել: Սա ստիպուած էր կռիւ մղել անգլիական թագաւոր Էդուարդ Ա.-ի դէմ, և կա-

¹⁾ Այսպէս, պառնշաւեցիներ կային Ռուանում (Նորմանիա), Տուրուզում, (Լանգեդոք), Գրենոբլում (Գոֆինէ), Բորգոնում (Գիեն), Ռեննում (Բրետանի):

րողացաւ, եթէ ոչ ուժով, գոնէ խորամանկութեամբ նեղը ձգել իւր հակառակորդին թէ Գիենում և թէ Ֆլանդրիայում, և գրաւել այդ նահանգներում ամենանշաւոր քաղաքները: Այս տեսակ քաղաքականութիւնը պահանջում էր դրամական մեծամեծ միջոցներ, ուսի եւ Ֆիլիպպ Գեղեցիկը գլխաւորաբար ուշի դարձեց ելեւմտական մի կարգի ստեղծման, ֆրանսիական տէրութեան մէջ հարկատուութեան կազմակերպութեան վրայ:

Սովորական ժամանակներում թագաւորը պարտաւոր էր վարչութիւնը, դատաւորներին և զօրքը պահպանել իւր կառուածների եկամտով, դատական մաքսերով և պատահական վճարներով, որ թող էր տալիս աւատական իրաւունք¹⁾: Այս եկամուտը սակայն սկսաւ սակաւ երեւիլ, երբ ֆրանսիական թագաւորը սկսեց մեծամեծ պատերազմներ վարել և բարդ վարչութիւն հաստատել իւր երկրում: Ֆիլիպպ Գեղեցիկը դրամ էր կորզում ամենայն միջոցներով: Յաճախ նա դրամ էր կոխում ստոր արժէքով և գործ էր դնում փոխանակ զուտ դրամի նա օգուտ քաղեց այն հանգամանքից, որ ֆրանսիացի տաճարականների մէջ ոմանք Արեւելքում ազանդներով և սնոտիապաշտութիւններով էին վարակուել, ուստի դատ յարոյց ընդդէմ ամբողջ կարգի: Այս դատը վճռեց պապն և վերջացաւ կարգապետի և այլ շատ ասպետների խարոյկ հանուելով: Այս դատի շնորհիւ Ֆիլիպպն արքունիք գրաւեց տաճարականների կալուածները, որ ցրուած էին ամբողջ Ֆրանսիայում: Հարուստ մարդոց թագաւորը ղրմում էր փախառութիւններ և նուիրաբերութիւններ խնդրելով. բարոններից և իշխաններից թողտուութիւն խնդրեց հարկ դնելու նրանց հպատակների վրայ այն պայմանով, որ ժողոված գումարը բաժանէ թագաւորական դանձարանի և աւատական կառավարութեան մէջ:

Ֆիլիպպը չէր կարող ելեւմուտքը կարգի դնել միայն իւր սեպհական կամքով, որովհետեւ նա լուր աւագն էր Ֆրանսիայի բազմաթիւ տիրապետների մէջ,

¹⁾ Այսպիսի վճարումներ էին ժառանգութեանց վրայ դրուած հարկերը, երբ աւատական կալուածքը մէկից անցնում էր միւսին, հարկը հողի վաճառման ժամանակ, խնամակալութեան ժամանակ, թափուր մնացած հոգեւորական պաշտօնների եկամուտներն, և այլն:

ուստի և այն ձեռնարկութիւնների համար, որոնք վերաբերում էին ամբողջ երկրին, պէտք է ձեռք բերէր մնացեալների համաձայնութիւնը: Այս պատճառաւ նա սկսեց ամենանշանաւոր դէպքերում ժողովներ գումարել, ուր հրաւիրում էր բարոններին, հոգեւորականութեան և անկախ քաղաքների ներկայացուցիչներին: Այս ժողովները կոչուում էին աշխարհախումբ ժողովներ (états généraux) և նմանում էին անգլիական պառլամենտներին, բայց սրանց մէջ դասակարգերն աւելի խիստ էին քաժանուում, քան Անգլիայում. նահանգների պատգամաւորներ, որոնք ներկայացուցիչ չէին միանգամայն քե ասպետների, եւ քե այլ ազատ մարդոց¹⁾, չլիար անկեղծին, ասպետները քաղում էին քարոնների հետ միասին: Իւրաքանչիւր գոտակարգ առանձին էր խորհրդածում գործերի մասին:

Աշխարհախումբ ժողովների միջոցով Ֆիլիպպ Գեղեցիկը կարողացաւ երկրի վրայ ընդհանուր հարկ դնել: Ամենամեծ գոտարկութիւնների հանդիպեց նա հոգեւորականութեան կողմից: Անգլիացի, ֆրանսիացի, սպանացի, իտալացի, գերմանացի հոգեւորականները հպատակում էին ամենից առաջ ոչ թէ ազգային իշխանաւորներին, այլ պապին: Ազգային իշխանաւորներն, եկեղեցական հայեացքով, ոչ իրաւունք ունէին դատելու հոգեւորականներին, ոչ էլ նրանցից պարտաւորական տուրքեր պահանջելու: Այս հայեացքն Անգլիայում գործ էր դնում Բէկետը, Ֆրանսիայում, Ֆիլիպպ Գ-ի ընդդէմ, Բոնիֆատիոս Ը. պապը: Բայց, սկսած ԺԲ. դարու վախճանից մինչեւ ԺԳ. դարու սկիզբը հասարակութեան հայեացքները շատ էին փոփոխուել. մարգիկ սկսել էին աւելի լաւ հասկանալ պետութեան կարիքներն ու նշանակութիւնը: Անգլիացոց մեծամասնութիւնը ԺԲ. դարու վախճանին համակրում էր Բէ-

¹⁾ Նման Անգլիական կոմսութիւնների ասպետներին:

կէսին, ժրանսիացոց մեծամասնութիւնը ԺԳ. դարու սկզբում համակրում էր Ֆիլիպպ Գ-ին: Սա ուշք չէր գործնում պապի կոնդակների վրայ, և բանդ նստացրեց նրա նուիրակին, իսկ երբ Բոնիֆատիոսը նրան բանադրեց, քանի մի հաւատարմատարներ ուղարկեց Իտալիա, որոնք կարողացան այն գղեակը սպրդել, ուր գտնուում էր պապը, և սաստիկ վիրաւորանք հասցրին նրան: Այս անցքից քիչ յետոյ Բոնիֆատիոս Ը.-ը մեռաւ, իսկ նրա յաջորդ Կլեմէս Ե.-ը ստիպուեցաւ փոխադրուել Ֆրանսիա, և պաշտպանութիւն որոնել ֆրանսիացոց թագաւորի մօտ, ընդդէմ իւր իտալացի թշնամիների: Այսպիսով առանձնացած ազգային պետութեան գաղափարը, որին ենթարկուած են հաւասար յայտով բոլոր հպատակները, յաղթանակեց տեղեւորական եկեղեցու գաղափարի վրայ, որ տեղեւորական եկեղեցու անդամներին ազատ էր համարում ազգային պետութեան հպատակութիւնից:

Ճիլիպպ Աւգուստի, Լուդովիկոս Թ-ի եւ Ֆիլիպպ Գեղեցիկի Ֆիլիպպ Գ-ի գործունէութեան շնորհիւ ընդհանուր պետական իշխանութիւնը Ֆրանսիայում մեծ յառաջդիմութիւն առաւ. թագաւորները, ոչ միայն ամենազօրեղ իշխանը դարձան ֆրանսիական իշխանների մէջ, այլ հետզհետէ կազմակերպեցին իրենց վարչութիւնը, դատարանն ու երեւմտաքր. Աւատատէր իշխանները միշտ պարտութիւն էին կրում թագաւորների դէմ կռուելով, որովհետեւ մարտնչում էին առանձին-առանձին: Ֆիլիպպ Գեղեցիկի թագաւորութեան վախճանին, երբ նրա որդոց ժամանակ այս իշխանները, վերջապէս, գլխի ընկան և դաշնակցութիւն կազմեցին թագաւորների յափշտակութեանց դէմ դնելու համար, աւատատէրների այս ընդդիմութիւնն օժանդակութիւն գտաւ եւ ժողովրդի մէջ, որի վրայ ծանրանում էին Ֆիլիպպ Գ-ի անսովոր հարկերն և նեղում էր թագաւորական պաշտօնեաների բոնի գործողութիւններից: Ֆրանսիացի բարոնների կոթը Ֆիլիպպ Գ-ի եւ նրա որդի Լուդովիկոս Ժ-ի դէմ յիշեցնում էին անգլիացի բարոնների շարժումն Յովհան Անհուղինի ընդդէմ, բայց հետեւանքները տարբեր եղան: Անգլիացի բարոնները կարողացան սահմանափակել թագաւորի եւ նրա

մարդոց կամայականութիւնը, բայց օժանդակեցին պետական բարեփոխութիւններին, նրանք գործում էին ամբողջ երկրի կողմից եւ պաշտպանում էին բոլոր դասակարգերի շահերն, հաւասար իրենց սեպհականներին: Իսկ փրանսիացի աւագանին հրովարտական եւ քերական իւր անձնական շահերի պաշտպանութեան համար, որովհետեւ սրանք իրենց համարում էին անչափ բարձր մնացեալ դասակարգերից: Սրանք իրաւունք ստացան, ի միջի այլոց, մասնաւոր պատերազմներ վարելու, որոնց կամենում էին թագաւորները վախճան տալ: Այսպիսի քաղաքականութիւնն ոչ միայն յօգուտ ժողովրդի շահերի չէր, այլ ուղղակի դրանց ընդդէմ, ուստի եւ ժողովրդի մեծամասնութիւնը երես դարձեց աւաւստեւ իշխաններից եւ սկսաւ որոնել քաղաւորի խնամակալութիւնը: Ֆիլիպպ Դ-ի որդին, Լուդովիկոս Ժ-ը իւր կողմը դրաւ շինականներին, այնու, որ իւր կալուածներում եղած ճորտերին ազատութիւն պարգեւեց. սրա եղբայրն ու յաջորդը, Ֆիլիպպ Ե., դաշնակցութիւն հաստատեց քաղաքացոց, մանր ասպետների եւ հոյեւորականների հետ, ընդդէմ մեծ աւարատներին եւ նահանգներում զինուորական խմբեր կազմեց, մասնաւոր պատերազմներն եւ բարոնների կամայականութիւնը խափանելու համար: Ազատութիւնների Մեծ Քարտէսը դարձաւ հիմնական օրէնք Անգլիայում, իսկ մասնաւոր հրովարտականները, որ տրուեցան Ֆրանսիայի աւատատէրներին, տասն տարի անգամ զոյութիւն չունեցան:

Վալուա
հարստութիւնը
1328

Ի դժբաղդութիւն Ֆրանսիայի, 1328 թուին, մեռաւ Ֆիլիպպ Կեղեցիկ վերջին որդին, արու ժառանգ չըլծող ներով: Թագն անցաւ Կապիտինգների կրտսեր ճիւղին, Վալուա կոմսերին, որոնք ներշնչուած էին աւատական ազնուականութեան ոգով եւ չէին իւրացրել ժ. Գ. դարու թագաւորների պետական քաղաքականութիւնը, Ֆիլիպպ Զ-րդ եւ իւր որդի Յովհան Բարեսիրտը շուայի աւաւստեւներ էին, որոնք հասկացողութիւն չունեին մի մեծ աշխարհի պետի պարսկականութիւնների մասին: Սրանք ստիպուած եղան պաշտպանել Ֆրանսիայի պատիւն ու շահերը, ընդդէմ անգլիացոց, որոնք իրենց պետական կազմակերպութեան եւ հասարակական կեանքի մէջ ֆրան-

սիացիներից շատ առաջ էին անցել: Կրէսի մօտ տեղի ունեցաւ առաջին մեծ ճակատամարտը, Ֆիլիպպ Զ-ի եւ Էդուարդ Գ-ի զօրքերի մէջ, որ վերջացաւ ֆրանսիացոց կատարեալ պարտութեամբ (1340):

1340

Կրէսի մօտ անգլիացիք շարունեցան խիտ կարգերով, ասպետներն իշան իրենց ձիաններից, եւ երկար նիզակները ձեռներին, կանգնեցին մէջէմէջ ազնուաւորների գնդերի հետ, որոնք զիւղացիներից էին ժողովուած: Ֆրանսիացիք ունէին նոյնպէս ազնուաւորներ, որոնց վարձել էին ձեռովայում, բայց ֆրանսիական ասպետները ժամանակ չտուէին դրանց նետաձգութեամբ պատրաստելու յարձակումը, այլ յառաջ արշաւեցին խառն ամբոխով, ոտի տակ տուէին ձեռովացիներին, եւ ջրիւ ընկած յարձակուեցան անգլիացոց վրայ: Անգլիացի ազնուաւորը դեռ եւս հեռուից նետահար արին շատերին, իսկ մնացածներին յետ մղեցին նիզակաւորները: Վճռական վայրկեանին անգլիական զօրքի պատերազմական գծից շահատակեց կազմ հեծեալների գունդը, որ լրացրեց ֆրանսիացոց պարտութիւնը:

Պուատիէի մօտ 1356 թուին նոյնը կրկնուեցաւ:

1356

Պուատիէի մօտ անգլիական զօրքը Սեւ թագաւորազնի հրամանատարութեան ներքոյ երեք անգամ աւելի քիչ էր, քան ֆրանսիականը, որի հրամանատարն էր Յովհան Բարեսիրտը: Ֆրանսիացիք իրենց պարտութիւնը Կրէսի մօտ վերագրում էին այն բանին, որ իրենք ձիաւոր էին, այժմ ասպետները հետեւակ կուեցին, բայց անյաջողութեան գլխաւոր պատճառը միասին գործելու անկարողութիւնն էր. անգլիացիք հաստատուն էին իրենց շարքերում եւ հնազանդում էին հրամանին, իսկ ֆրանսիացի ասպետները շտապեցին միմիանց առաջը կտրել եւ կարգը խանգարելով դարձան մի խառն ամբոխ, որ խանգարում էր ինքն իրեն: Անգլիացի ազնուաւորներն անլրէպ հաւուածեցին այդ խառնիճաղանձը:

ճակատամարտը վերջացաւ ֆրանսիացոց կատարեալ պարտութեամբ եւ Յովհան թագաւորի ու բազմաթիւ ասպետների գերի բռնուելով: Թագաւորութեան խնամակալ մնաց թագաւորի փոխանակ նրա որդի Կարլոսը, Նորմանդիոյ դուքսը: Սա ստիպուած էր դրամ ձարել,

Ս. խառն
խումբ
ժողով, 1356 թ.

որպէս զի գերիներէ համար փրկանք վճարէ և նոր զօրք կազմէ: Փարիզում գումարուեցաւ աշխարհախումբ ժողով, տէրութեան խնամակալի առաջարկութիւնները լսելու համար. երեք դասակարգերի ներկայացուցիչները բարձրաձայն դժգոհութիւն յայտնեցին գործերի ընթացքի մասին. նրանք այս խայտառակ պարտութիւնը վերագրում էին թագաւորի խորհրդականների և պալատականների շահասիրութեան ու անշնորհքութեան: Վրճուեցաւ դրամ տալ զօրքի համար, բայց ժողովը պահանջեց, որ հարկեր ժողովելն յանձնուի ոչ երեք քաղաքական պաշտօնեաներին, այլ դասակարգերից ընտրուած անձանց, եւ որ, աշխարհախումբ ժողովը կանոնաւոր կերպով տարին երկու անգամ գումարուի: Յատուկ ջերմեռանդութեամբ գործում էին պաշտօնեաների գէտ, և վարչութիւնը դասակարգերին լանձնել պահանջում էին երրորդ դասակարգի, քաղաքացոյց պատգամաւորները. դրանց պարագլուխ էր Փարիզու առեւտրականների աւագը, Էտիէն Մարսէլ: Աշխարհախումբ ժողովի նոր հաստատած վարչութիւնը սակայն, անյաջող երևեցաւ. ասպետներն ու հոգեւորականները լեւ թաշուեցան, որովհետեւ չէին կամենում հետեւիլ քաղաքացոյց: Պառնական քաղաքները նույնպէս լեւ կանգնեցին, որովհետեւ սիրով չէին հպատակում փարիզցի ղեկավարներին: Աշխարհախումբ ժողովը դարձաւ Փարիզի պաշտօնաւորների մի խմբակ, որ աշխատում էր քրոնի միջոցներով իշխանութիւնն իւր ձեռքին պահել: Մարսէլը զօրք կազմեց արհեստաւորներից և գործակատարներից: Այս ամբողջ խուժեց տէրութեան խնամակալի տուն, և սրա աչքի առաջ սպանեց նրա խորհրդականներից երկուսին: Նոյն իսկ խնամակալի գլխին Մարսէլը հագրեց մի գդակ, Փարիզ քաղաքի գոյներով (կարմիր և կապոյտ), որպէսզի պաշտպանէ նրան բռնաբարութիւնների գէտ. ապա Մարսէլը յարաբերութիւն

հաստատեց ժախերի, հարստահարութիւններից ստիպուած ոտքի ելած գուղացիների, հետ, որոնք կոտորում էին ագնուականներին և ալրում գղեակները¹⁾: Խնամակալը կարողացաւ փախել Փարիզից. նա աշխարհախումբ ժողով գումարեց Կոմպլենում, որ դատաւարեց Փարիզի կառավարութիւնը. ժաքերին կոտորեցին ասպետները, Էտիէն Մարսէլն սպանեց իւր մարդկանցից մէկն և 1356 թուի աշխարհախումբ ժողովի ստեղծած ամբողջ կազմակերպութիւնը կործանուեցաւ, խնամակալն և թագաւորական վարչութիւնը կրկին գլուխ կանգնեցին Ֆրանսիայի:

1356

Նոր անյաջողութիւններ սկսուեցան, երբ գահն Կարլոս Զ-անցաւ ակարամիտ Կարլոս Զ-ին: Արքունիքում կատարի կերպով մրցում էին երկու կուսակցութիւններ. մէկի պարագլուխն էր Օրլէանի դուքսը, միւսին առաջնորդում էր Բուրգունդիայի դուքսը: Չկար եղեւնագործութիւն, որից լեւ կասէին այս երկու թշնամի կուսակցութիւնները:

Բուրգունդական դուքսը մարդասպան դաւաճանների ձեռքով սպանեց Օրլէանի դքսին, իսկ նրա մահուանից յետոյ ձեռք առաւ թագաւորին եւ սկսեց կառավարել Ֆրանսիան: Նրան օժանդակում էին ի միջի այլոց Փարիզի բնակիչները, կրկին, ինչպէս Մարսէլի ժամանակն էր, զօրք կազմուեցաւ երիտասարդ արուեստաւորներից. փարիզցոյց գլուխ էին կանգնած այս անգամ մագործների արհեստակցութիւնն եւ Փարիզի համալսարանի դասախօսները: Բայց քիչ ժամանակից յետոյ բուրգունդական դքսին լեւ մղեց հակառակորդ կուսակցութիւնն եւ Փարիզու առաջնորդները բանդի ու կապանքի մատնուեցան:

Այս շփոթութիւնների մէջ Ֆրանսիոյ ափը դուրս եկաւ Հենրիկոս Ե. և Ագենկուրի մօտ լաղթեց Ֆրանսիացոյց: Սակայն Ֆրանսիացոյց երկպառակութիւնները

¹⁾ Երեսկանին Ֆրանսիայում անուանում էին Jacques Bonhomme — Յակոբ-Պարզամիտ. ուստի և ապստամբած գիւղացիներին կոչում էին Փաք (Յակոբ):

չէին դադարում. այն տեսակցութեան ժամանակ, որ կազմել էին գահաժառանգ Կարլոսին և բուրգունդական դքսին հաշտեցնելու համար, վերջինս սպանուեցաւ: Սրա որդին յարեց անգղիացիներին և դաշն կրեց Հենրիկոս Ե-ի հետ, որի համաձայն Կարլոս Զ-ի մահուանից յետոյ Ֆրանսիական գահը պիտի անցնէր անգլիացոց թագաւորին: Հենրիկոս Ե-ը կենդանի չըմնաց մինչև այս պայմանի իրագործումը. բայց նրա յաջորդ Հենրիկոս Զ-ը հռչակուեցաւ Անգլիայի և Ֆրանսիայի թագաւոր, իսկ Կարլ գոֆէնը ¹⁾ հազիւ պաշտպանուած էր Լուառ գետի հարաւակողմում. նրա գլխաւոր նեցուկը Լուառի վրայ, Օրլէանը, խիստ պաշարման էր ենթարկուած անգլիացիների կողմից, և ծալբայեղ վիճակի մէջ էր:

Յովհաննա
գ' Արկ'

Այս լուսահատական դրութեան մէջ անակնունելի և մի հրաշանման փրկութիւն տեղի ունեցաւ: Մի հասարակ գեղջկուհի զարթեցրեց Ֆրանսիացոց թմրած հայրենասիրութիւնը. վերակենդանացրեց նրանց ոգին, սովորեցրեց յաղթել անգլիացոց: Լոթրինգիայի Դոմրէմի գիւղում, Վոկուլէո քաղաքի մօտ, ապրում էր մի տասնեօթնամեայ աղջիկ, Յովհաննա Դ'Արկ անունով. սրա հայրենի գիւղը պատերամի դաշտից շատ հեռու էր. բայց ի մանկութենէ սովոր էր նա լսել արիւնահեղ պատերազմների, անգլիացոց գործած սպանութիւնների, հրդեհների և յափշտակութիւնների մասին. և նրա սիրտը ճմլւում էր կարեկցութիւնից: Երբ նա արածեցընում էր իւր հօտը, յաճախ թոռում էր նրան, որ Միքայէլ հրեշտակապետն և ուրբ Կատարինէն ուղարկում են իրեն Դոֆէնի մօտ, նրան թագաւոր պսակելու և թշնամիներից ազատելու համար: Նա վճռեց գիմել Վոկուլէո և խնդրեց տեղական մի ասպետի, առաջ-

¹⁾ Ֆրանսիական գահի ժառանգը կրում էր դոֆէն տիտղոսը սկսած այն ժամանակից, երբ թագաւորները ձեռք էին բերել Դոֆինէ նահանգը, Ֆրանսիայի արեւելքում:

նորգելու իրեն Կարլ Դոֆէնի մօտ: Սա երկար ժամանակ չէր համաձայնում և ծաղրում էր աղջկան. բայց, վերջապէս, տեղի տուաւ նրա թախանձանքներին և տարաւ պալատը: Պալատականներն ու զօրավարները հաւատ չէին ընծայում Յովհաննային, բայց այսուամենայնիւ տուին նրան սպառազինութիւն և ձի: Այս տարօրինակ աղջկան Դոֆէնի զօրքի մէջ հանգէս դուրս գալու լուրն արագութեամբ տարածուեցաւ երկրի մէջ: Ռաւիկ մարդիկ—գիւնուորներն ու ժողովուրդը—հաւնդուած էին, որ դրան Աստուած է ուղարկել՝ Ֆրանսիան փրկելու համար: Յովհաննան պնդեց, որ անգլիացոց ճակատամարտ տրուի Օրլէանի առաջ: Դրօշը ձեռին նա ինքն ամենքից առաջ յարձակումն գործեց և գրաւեց անգլիական աշտարակներից մինը: Անգլիացոց տեղի տուող զօրքի վրան յարձակուեցին Ֆրանսիացիք և ջարդեցին: Յովհաննան, համաձայն իւր խոստման, գահաժառանգին առաջնորդեց Ռէյմս, ուր նա թագաւոր պսակուեցաւ: Զննալելով այս անսովոր յաջողութիւններին, Յովհաննայի պսակած թագաւորն և նրա աջակիցները ստոր կերպով վարուեցան նրա հետ. ոմանք նախանձում էին նրան, միւսները չէին հաւանում, որ նա շարունակ իրենց պատերազմի էր հրաւիրում, մինչգեռ իրենք կամենում էին հանգստանալ և զուարճանալ: Նա փորձ արաւ Փարիզին տիրելու, բայց նրան չ'օժանդակեցին, և զօրքին հրամայուեցաւ լետ դանաւալ: Մի ընդհարման ժամանակ Յովհաննան գերի ընկաւ բուրգունդացոց ձեռքը: Թագաւորը ոչինչ չըձեռնարկեց նրան լետ խլելու կամ փրկանքով գնելու համար. և բուրգունդացիք ծախեցին նրան անգլիացոց: Սրանք քննութիւն կազմեցին Ռուանում, մեղադրելով նրան իբրև կախարհ, Յովհաննային դատում էին Ֆրանսիացի հոգեւորականները: Շատ օրեր տանջեցին նրան հարցուփորձով, որպէս զի նրա պատասխաններից հեր-

1431 ձուածողական մտքեր կորցեն: Նա պատասխանում էր պարզ և հաստատուն կերպով, ու իւր անկեղծ խօսքերով ջախջախում թշնամիների խորամանկութիւնները: Այսուամենայնիւ նրան հրատարակեցին հերձուածող ու կախարհ, և դատապարտեցին աշման: Նա մինչև վերջը հերոսի պէս պահեց իրեն, և մեռաւ Յիսուս անունը շրթունքներին: Մի անգլիացի ասպետ, որ ներկայ էր այս տեսարանին, ասաց. «Մենք կորանք — մի սուրբ ալրեցինք» (1431):

Յովհաննա դ'Արկի սխրագործութիւնը Փրանսիայի փրկութիւնն էր: Նա կործանեց անգլիացոց մասին հաստատուած անպարսկիութեան փառքը, եւ ցոյց տուաւ, թէ ի՞նչ կրկնականի հայրենեաց սէրը: Անգլիացի քաջերը դեռ մի քանի տարի դիմագրում էին Փրանսիացոց գնդերին. բայց իւրաքանչիւր տարի անգլիացիք տեղի էին տալիս: Հաշտութիւն տեղի ունեցաւ Կարլոս Ե-ի և բուրգունդական դքսի մէջ. և սա վախճանապէս խախտեց անգլիացոց դիրքը Փրանսիայում: Միայն Կալէն էր մնացել նրանց ձեռքին 1453 թուին:

1439 Կարլոս Ե. Հարիւրամեայ պատերազմից յետոյ իսկ զգալի էր նրա կործանիչ ազդեցութիւնը: Պատերազմով էին ապրում վարձկան զօրքերի խմբակները, որոնք այժմ զըրկուել էին իրենց վաստակից: Պրանք չէին ցրուում, այլ շարունակում էին թափառել երկրում, կողոպտում էին խաղաղ ժողովրդին, հարկ էին հաւաքում քաղաքներից և աւաններից: Այս աւազակներն երբեմն կանոնաւոր ճակատամարտներ էին տալիս իրենց ընդդէմ ուղարկուած զօրքերին, պաշարում և գրաւում էին ամրոցներ: Կարլոս Ե. սրեց Ֆրանսիան այս աւազակներից: Սրանց դէմ կուռելու համար անհրաժեշտ էր մշտական զօրք: Պասակարգերը, որ աշխարհախումբ ժողով էին կազմել Օրլէանում 1439 թուին, սահմանեցին Մշակական հարկ, այսպիսի զօրքի պահպանութեան համար:

Կարլոս Ե-ի որդու, Լուդովիկոս ԺԱ-ի ժամանակ Լուդովիկոս ԺԱ.
1431
127
175
իշխաններն ու ասպետները մի դաշնակցութիւն կազմեցին «Հասարակաց օգտի դաշնաւորութիւն» (Ligue du bien public) անուամբ, որի նպատակն էր ազնուականութեան վերադարձնել քանի մի աւատական արտօնութիւններ ¹⁾: Այս դաշնակցութիւնը վտանգաւոր էր այն պատճառով, որ դրան օժանդակում էին թագաւորի ազգականները, որոնք իբրեւ աւատ ամբողջ նահանգներ էին ստացել, և իշխանական իրաւունքի վերջին զօրեղ ներկայացուցիչը Փրանսիայում — բուրգունդական դուքս, Կարլոս Համարձակը, որին պատկանում էր մի մեծ երկիր Հաենոսի և Ռոնայի եզերքներին: Լուդովիկոս ԺԱ. գործ դրաւ իւր բոլոր ոյժը դժգոհներին յաղթելու: Նա փորձեց բացարձակ զօրութեամբ կուռելու իւր միացած հակառակորդների դէմ և պարտութիւն կրեց: Այս նրա համար դաս եղաւ, և այդ ժամանակից սկսած բաժան բաժան էր անում իւր հակառակորդներին մեծ ճարպիկութեամբ, սպասում յաջող վայրկենի, մէկի կամ միւսի վրայ յարձակուելու առանձնապէս, և անխնայ էր վարուում պարտուածների հետ: Սնափառ և թեթեւամիտ աւատատէր իշխանների բանը չէր կուռել խորամանկ, հետեւողական թագաւորի հետ: Ամենից վտանգաւոր հակառակորդի, Կարլոս Համարձակի դէմ, Լուդովիկոսը պատերազմ էր մղում նոյն իսկ նրա հպատակների միջոցով. նա օժանդակում էր Փլանդրական քաղաքների ապստամբութեան, զուիցերացոց, լոթրինգացոց: Վերջիններիս հետ կուռելու ժամանակ (Նանսիի մօտ) Կարլոսն սպանուեցաւ: Նրա կալուածներից մի մասն ընկաւ իւր դստեր ամուսնուն, Մաքսիմիլիան կայսեր, բայց Լուդովիկոս ԺԱ. կարողացաւ յափշտակել իսկական Բուրգունդիան Ռոնա

¹⁾ Օրինակ՝ որսորդութեան բացառիկ իրաւունքը:

և Սոնա գետերի վրայ և այսու ֆրանսիական կալուածներն արեւելքում բոլորացրեց:

Լուդովիկոս ԺԱ. իւր ամբողջ կեանքը ծանր կռիւ մղեց թշնամեաց դէմ, որոնք միասին իրենց զօրեղ էին եւ որոնց ստիպուած էր յաղթիլ խորամանկութեամբ, սպասողական զինք բռնելով եւ համբերութեամբ: Այս հանգամանքներում մշակուեցաւ Լուդովիկոսի բնաւորութիւնը. նա ատում էր մարդոց եւ սիրում էր չարազգացութեամբ ծիծաղել նոցա վերայ. նա երկար ժամանակ ստիպուած եղաւ գիմանալու թշնամեաց յանդըգնութեան, ուստի եւ յարմար առթին նրբացած անզթուութեամբ լուծում էր իւր սրտում կուտակուած դառնութեան վրէժը. նա ոչոքին չէր հաւատում, ոչ ոքին չէր սիրում եւ ամենքի մէջ դաւաճանութիւն էր ենթադրում. ուխտադրուած խաբերայութիւնից կամ արինահեղ հատուցումից յետոյ նա թեթեւացնում էր իւր խիղճն ազօթքով եւ կրկին ոկսում էր որոգայթներ լարել մի այլ թշնամու դէմ: Ասպետներին նա չէր սիրում եւ սիրով հաղորդակցում էր քաղաքացոց հետ, բայց երբ խնդիրը վերաբերում էր իշխանութեան, նա ոչ ոքին տեղի չէր տալիս եւ զգացնում էր, որ իրեն հաւատար մարդիկ չը կան Ֆրանսիայում:

Ֆրանսիան ԺՅ. դարու վախճանին: ԺՅ. դարու վերջը, Ֆրանսիան շատ մեծ փոփոխութեան ենթարկուեցաւ: Աւաստական քաժամականութիւնն անհնաւցաւ: Ֆրանսիական ազգը ծանր կռուի մէջ անգլիացոց դէմ խմբուեցաւ եւ ճանաչեց իւր միութիւնը. երկրի վրայ ամբարձաւ զօրեղ թագաւորական իշխանութիւնը, որ դանդաղ, բայց հետեւողաբար միացնում էր բաժան բաժան եղած նահանգներն ու հաստատում էր նրանց մէջ պետական վարչութիւն, դատարան, երկամուտք, զօրք: Իշխաններ չը մնացին Ֆրանսիայում, բարոններն ու ասպետները կորցրին իրենց տիրապետական իրաւունքները, որ նրանք երկար ժամանակ իւրացրել էին իրենց կալուածներում: Դրա փոխարէն, հակառակ Անգլիոյ, պէսական ներկայացուցչութիւն չը կազմուեցաւ: Ոչ նահանգներում, ոչ կենդրոնում, ոչ

տեղական կարիքների, ոչ էլ պետական շահերի համար պատերազմիկ, հոգեւոր, արգիւնագործ դասակարգերը կարողացան միանալ, իրբւ անկեղծ դաշնակիցներ ու եղբայրներ: Ազնուականն իրեն այնքան բարձր էր համարում վաճառականից, հոգեւորականն իրեն այնքան բարձր ու առանձին տեսակի մարդ էր համարում իւր կրթութեամբ ու շահերով, սր մինչեւ իսկ աշխարհախումբ ժողովներում առանձին էին խորհրդակցում եւ առանձին գործում: Գիւղական դասակարգը Ֆրանսիայում աւելի քիչ նշանակութիւն ունէր, քան թէ Անգլիայում: Կալուածատէրերն զեղականների վրայ ունեցած պետական իրաւունքները (դատաստան, հարկ դնելու իրաւունք եւ այլն) կորցրել էին, բայց ունէին դեռ եւ բազմաթիւ տէրունի իրաւունքներ—կռուի, տասանորդի, տուգանքի, որ հաստատուել էին աւատական կազմակերպութեան շրջանում: Դասակարգերի բաժան բաժան լինելու պատճառով ազգային միութեան, պէսական իշխանութեան ու շահերի ներկայացուցչին եր քաղաւոր:

ԳԼՈՒԽ Գ.

ՊԻՐԵՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

Արաքացիք ամբողջ Պիրենեան քերակղզին չէին գրաւել: Հիւսիս արեւմուտքում, Աստուրեան լեռներում, պահպանել էին իրենց անկախութիւնը վեստգոթների բռնութիւնները, Պիրենեան լեռնաշղթայի հարաւային գաւռի վայրում ընկած էր Ֆրանկեան սահմանագաւառը, որ հիմնել էր Կարլոս Մեծը մուրերի դէմ. Ֆրանկների եւ գոթերի երկրներից հետ գհեաէ կազմուեցան Արագոնի, Կատալոնիայի եւ Պորտուգալիայի թագաւորութիւնները: Այս քրիստոնէայ տէրութիւններս մաւրերի դէմ վարում էին մշտական եւ կատաղի կռիւ, որի մէջ առանձ-

1212

նապէս հռչակ հանեց ժԲ. դարում սպանիական ազգային զիւցաղն Սիդ-Կամպէադորը: Կորդովայի ամիրապետարիւնը քաժանուեցաւ եօրն առանձին սոռանձին իշխանութիւններ, և մահմետականների հետ մանր կռիւներում քրիստոնեայք քալլ առ քալլ խլում էին նրանցից սպանիական հողը: Տասներեքերորդ դարում արաբների միացած զօրքը, որ ստուարացել էր Ափրիկէից եկած գաղթականներով, կատարեալ պարտութիւն կրեց¹⁾ (1212): Մաւրերը լետ մղուեցան թերակղզու հարաւային ծայրը, ուր նրանք դեռ ևս երկու դարուց աւելի դիմացան Գրենադայում, Անդալուզիայի մէջ:

Արդէն իսկ հին իբերական ժողովուրդն Սպանիայի աչքի էր ընկնում իւր յամառ, կրքոտ և մի փոքր մոռլլ բնաւորութեամբ, որ սպանիացիք պահել էին, չնայելով հռովմէական և գերմանական տիրապետութիւններին. արդէն իսկ հռովմայեցոց ժամանակ բնութիւնն երկրի, որ լիոներով բաժանուում է բազմաթիւ միմիանց հետ քիչ յարաբերութիւն ունեցող նահանգների, նպաստում էր այն բանին, որ Սպանիայի իւրաքանչիւր անկիւնում կազմուում էին անկախ քաղաքային հասարակութիւններ, որոնք թշնամաբար էին նայում իրենց հարեւաններին, և նախանձախնդիր եռանդով պահպանում էին իրենց առանձնայատկութիւնները: Անհաւատների հետ պատերազմի մէջ ժողովրդի բնաւորութիւնը վերջնականապէս լուրից դուրս եկաւ. կրօնական մոլեռանդութիւնը, կենդրոնացած կրքոտութիւնը, ազգային և տոհմային գոռոզութիւնը, սէրը դէպի թեղական առանձնայատկութիւնները դարձան նրա ընտրող յատկանիւնները: Նոյն ինքն պետական կազմակերպութիւնն և կեանքի եղանակը սրան համապատասխան տիպար ստացան:

Պետական կազմակերպութիւն:

Ոչ մի տեղ Եւրոպայում հոգեւորականութիւնը չէր վաչելում այն արտօնութիւնները, ինչ որ Սպանիայում: Այդպէս էր արդէն վեստգոթերի ժամանակ—արիօսական թագաւորների դէմ կռուելու միջոցին, և այն շրջանում, երբ սպանիական եկեղեցին լազթեց արիօսականութեան և իւր խնամակալութեան տակն առաւ

¹⁾ Կառ նաւաս դէ Տոլոզայի մօտ:

վեստ-գոթ թագաւորներին: Մաւրերի դէմ մղուած անընդհատ խաչակիր արշաւանքների մէջ եկեղեցին ղեկավարող դեր էր կատարում. աւալեսորքեան զարգացման համար էլ արգաւանդ հող կար պատրաստի. լեռնային անցքերի և կրճերի մօտ կանգնեցին դղեակներ, որոնք ծառայում էին իրրւ ամուր պարիսպներ՝ մաւրերի դէմ, և իբրեւ նեցուկ շրջակայ ժողովուրդի վրայ տիրելու համար: Սրբազան երկրում կազմուած ասպետական կարգերի նման. սպանիական աւալեսների կարգեր կազմուեցան, որոնք նոյնպէս նպատակ էին դնում իրենց, անհաւատների դէմ կռուելը¹⁾: Քաղաքներն այնպէս հարուստ չէին, ինչպէս անգլիականները, ֆլանդրականները կամ ֆրանսիականները, որովհետեւ առետուրը նուազ էր. սակայն դրանք թուով շատ էին, և քաղաքացիք հնազոյն ժամանակներից սովորել էին միաբան գործել և պաշտպանել իրենց համայնքի շահերն ու առանձնատկութիւնները:

Այս հանգամանքներում առանձին տեղերի առասակաւ ինֆլուորցիւնները խոր արմատքուեց Սպանիայում: Եւրաքանչիւր թագաւորութիւն մանր տէրութիւնների մի դաշնակցութիւն էր. դասակարգերը, քաղաքներն և նահանգները թանգ էին գնահատում իրենց սկզբնական սովորութիւնները (fueros) և ամեն միջոցներով աշխատում էին ամրապնդել դրանց և պահպանել ամենատեսակ խանգարումներից: Պատերազմներ վարելը, պահանջում էր համաձայնութիւն, դաշինք, ուստի և զանազան իշխանութիւնների և ներկայացուցիչները հաւաքումաւ ժողովներ (cortes) էին կազմում:

Արագոնիայում, օրինակ, կորտէսները բաղկանում էին չորս դասակարգերից, որոնցից իւրաքանչիւրն առանձին էր

¹⁾ Ամենից նշանաւոր կարգերն էին.—կալատրաւեան և Ալկանտարեան կարգերը, երկուսն էլ հիմնած ժԲ. դարում:

խորհրդակցում։ Այդ դասակարգերն էին. աւագանին (ricos hombres), ասպեանները (infanzones) ¹⁾, հոգեւորականութիւնն եւ քաղաքների պատգամաւորները թագաւորին համարում էին լոկ իրրեւ հաւասարների մէջ առաջինը. նա երդուում էր պահպանելու հին ազատութիւնները, իսկ աւագանին հետեւեալ բովանդակութեամբ էր երդուում. «Եթէ դու կըյարգես եւ կը պահպանես մեր օրէնքներն եւ սովորութիւնները, այն ժամանակ մենք երդուում ենք, որ կըհնազանդինք քեզ, ապա թէ չէ— ոչ»։ Դասակարգերի, կամ թագաւորի եւ իւր հպատակի մէջ տեղի ունեցած վէճերը վճռելու համար ընտրուում էր մի յատուկ մեծ դատաւոր (justicia), որ իրաւունք ունէր հրաւիրելու ասպեաններին, ղէնքով ղէմ դնելու թագաւորին, իսկ ինքը պատասխանատու էր միայն կորսէանների առաջ։ Նոյնպիսի կազմակերպութիւն ունէին եւ միւս թագաւորութիւնները։

Ֆերդինանդ
Ե
Իզաբելլա

Այսպիսի կարգերը կարող էին կանգուն մնալ մինչեւ այն ժամանակ, ինչքան որ քաղաքական կեանքը կայանում էր միայն բաժան-բաժան եղած մահմետական տէրութիւնների ղէմ կռուելու մէջ։ ԺԵ. դարում Սպանիան սկսաւ դուրս գալ այս վիճակից։ Մաւրերը յաղթուեցան, եւ սկսուեցաւ աւելի յաճախ եւ ընդարձակ յարաբերութիւններ, քրիստոնեայ երկրների հետ— Ֆրանսիայի, Իտալիայի։ Սպանիական երկու զոյ-խառնոք քաղաւորութիւններն, Արագոնն եւ Կաստիլիան, միացան շնորհիւ Ֆերդինանդ Արագոնացու ամուսնութեան Իզաբելլա Կաստիլացու հետ։ Մաւրերի վերջին ապստամբարանը, Գրենադան առնուեցաւ 1492 թուականին։

1492

Խիստ, հաշուարար, իշխանատէր Ֆերդինանդն արդէն չըկամեցաւ բաւականաճախ այն չնչին իշխանութիւնով, որ տալիս էր իրեն աւատական կարգը. նա մի քանի միջոցների ձեռնարկեց, որոնցով անուշադրութեան տուաւ եւ սահմանափակեց ազնուականների ազատութիւնը. նախ, ինքը գրոյխ դարձաւ աւսպետական կարգերի—սրանով իւր տրամադրութեան տակ ունեցաւ մի մեծ զինուորական ոյժ, եւ ասպարիզից հե-

¹⁾ Ազնուականները սովորաբար Սպանիայում կոչուում են—hidalgos.

ռացրեց կարգապետներին, որոնք կարող էին վտանգաւոր լինել թագաւորի համար։ Ապա Ֆերդինանդը կազմեց այսպէս կոչուած Սրբազան Հերմանդատը, քաղաքացիներից եւ շինականներից բաղկացած զինուորութիւնը, որ պարտաւոր էր հըսկելու կարգապահութեան վրայ եւ արգիլելու ասպեանների պատերազմները, յափշտակութիւններն ու բռնաբարութիւնները ¹⁾։ Իւր հաւատարմութեամբ եկեղեցուն ձեռք բերաւ նորա օժանդակութիւնը, հաւատաքննութիւնը, որ հիմնուած էր աղանդաւորներին հալածելու համար, յաճախ ծառայութիւններ էր անում թագաւորին, իւր թշնամիների ղէմ։ Սպանիական գոռոզ եւ պատերազմատէր աղնուականութիւնը հաշտուեցաւ նոր վիճակի հետ, որովհետեւ նրա համար նորանոր ուղիներ բացուեցան ղէպի փառքը, դրացի պետութիւնների ղէմ մղուած արշաւանքների, նոր աշխարհի յայտնագործութիւնների եւ նուաճումների մէջ։

ԳԼՈՒԽ Գ.

Ի Տ Ա Լ Ի Ա

Չանազան հանգամանքներ նպաստեցին այն բանին, որ Իտալիան չը միացաւ եւ չը կազմեց մի ամբողջ տէրութիւն, Ֆրանսիայի եւ Անգլիայի պէս, այլ բաժանուեցաւ ինքնուրոյն մանր տէրութիւնների. նախ, ոչ մի արեւմտեան եւրոպական երկրում չընդհարուեցան այդքան բազմաթիւ եւ բազմազան ազգեր. բացի սկզբնական իտալական, կելտական եւ յունական ժողովրդից, այստեղ զիմեցին բոլոր գերմանական ցեղերը—այստեղ եկան եւ իրենց հետքը թողին գոթերը, վանդալները, լանգոթարդներն եւ ֆրանկները. հարաւում երկար ժամանակ եւ յամառ կերպով պահպանում էր իւր գոյութիւնը բիւզանդական կայսրութիւնն, ապա հանդէս եկան սարակինոսներն եւ նորմանները. Երկրորդ, հնուց ի վեր, դեռ եւս հռոմայեցոց ժամանակը, քաղաքային համայնքներն աշխատում էին ջոկ-ջոկ ապրել միմիանցից եւ սովորել էին միմիանց ղէմ թշնամութիւն անել. Երրորդ, կայսրների կոիւր պապերի հետ խանդարեց Իտալիայում ազգային կառավարութեան հաստատուելուն, որն ոյժ ունենար ջնջելու աւատականութիւնն եւ միաց-

¹⁾ Համեմատի՛ր Ֆիլիպպ Ե-ի կազմած զինուորութիւնը Ֆրանսիայում։

նել ժողովուրդն ու պետութիւնը: Թէ պապն եւ թէ կայսրը գլխաւորաբար անձնատուր էին եղած համաշխարհային խնդիրների, ուստի եւ ամբողջապէս չէին նուիրուում յատկապէս մի որ եւ է երկրի. դրա հետ միասին մէկը չէր կարողանում խանգարել միւսին, իւր նպատակին հասնելու:

Պապերն Աւինիօնում պապան քաղաքականութեան համար մի մեծ յաղթանակ էր, իրապէս սակայն, Հոնենշտաուֆենների անկման հետեւեց շուտով նոյն իսկ պապական իշխանութեան անկումը: Պապերը չ'ունէին նւթական ոյժ, որ անհրաժեշտ է աշխարհական պետութիւն կազմելու համար: Հէնց որ գերմանական թագաւորի, որ կրում էր հռովմէական կայսեր տիտղոսը, երկիւղն անյայտացաւ, անմիջապէս ամենքը կոխ սկսեցին միմիանց դէմ: Իւրաքանչիւր հզօր ազնուական, իւրաքանչիւր լուս դօրավար, իւրաքանչիւր նշանաւոր քաղաք ձգտում էր զօրանալու եւ ուրիշներին տկարացնելու: Ամենից առաջ պապերին նեղութիւն պատճառեցին իրենց մերձաւոր հպատակները—Հռովմի սանձարձակ ամբոխն, եւ հռովմէական նահանգի բարոնները: Յարձակումներից եւ բռնութիւններից մի փոքր իրենց պաշտպանելու համար պապերը տարօրինակ միջոցի դիմեցին. Բոնիֆատիոս Ը-ի յաջորդ Վրեմէս Ե.-ը տեղափոխուեց Աւինիօն Բուրգունդիայում (1309), այնտեղ աւելի անվտանգ էր, բայց դրա փոխարէն հռովմէական նահանգի վարչութիւնը զուրս եկաւ պապերի ձեռքից ու մինչեւ իսկ նրանց նշանակութիւնն եկեղեցու մէջ նուազեց, արեւմտեան քրիստոնեաները սովոր էին պապի մէջ տեսնելու Հռովմի քահանայապետին եւ նրա կենսարոնական վարչութեան զաղափարն եկեղեցու մէջ կցուած էր ա'յն հայեացքին, որ կար Հռովմի վրայ, իբրեւ աշխարհիս մայրաքաղաքի:

Հռովմի բնակիչներն իսկ շատ դժգոհ էին այն երկրորդական զրութիւնից, որի մէջ գտնուեցաւ «Յաւիտենական քաղաքը» պապերի Աւինիօն տեղափոխուելուց յետոյ: Մի փառասէր հռովմայեցի Վոլա-դի-Ռիենցի անունով, որ երազում էր հին հռովմէական զօրութեան վերականգնումն, Իտալիոյ միացումը, օգուտ քաղեց այն տրամադրութիւնից հռովմէական հասարակապետութիւն հրատարակելու համար: Ժողովուրդը վառվառ դեց պապերի տեղակալներին եւ Ռիենցին գլուխ կանգնեց կառավարութեան, «տրիրուն» տիտղոսով (1347): Բայց երեւեցաւ, որ այդ մարդն ընդունակ լինելով յափշտակուելու հրա-

պուրելու ուրիշներին մեծ յիշողութիւններով եւ ծրագիրներով, անկարող կառավարել տէրութիւնը: Հռովմայեցիք վախճանական կերպով հիասթափուեցան նրա վերաբերութեամբ, երբ նա թագ դրաւ գլխին, ուստի եւ ստիպուեցաւ փախչիլ: Յետոյ նա կրկին վերադարձաւ Հռովմ, բայց այս անգամ արդէն պապական զօրքի հետ: Մի քանի ամիս կրկին գլուխ կանգնեց քաղաքին «ատենակալ» (սենատոր) տիտղոսով, բայց պապի ծառայութեան մէջ էլ ցոյց տուաւ իւր սանձարձակութիւնն եւ անկարողութիւնը Բանը վերջացաւ նրանով, որ ժողովրդական ապստամբութեան ժամանակ նրան սպանեցին:

Պապերի վերադարձն Հռովմ նախապատրաստելու համար, ժ.Գ. զարու կիսին, պապական նուիրակներն ստիպուեցան կրկին նուաճել հռովմէական նահանգը, աշնուականներն եւ քաղաքների բնակիչները ճանաչեցին պապի բարձրագոյն իշխանութիւնը, եւ երկրի գլխաւոր կէտերում կառուցուեցան ամրոցներ եւ զետեղուեցան բերդապահներ, վարձկան զօրքերից: Գրիգոր ԺԱ. աւելի հեռու դնաց.—նա վերադարձաւ Հռովմ (1377), Բայց այս քայլը, որ պետք է վախճան տար այսպէս կոչուած «պապերի եօթանասնամիայ բարեկական դերութեան» Աւինիօնում, նորանոր դժուարութիւններ ծագեցրեց: Պապական արքունիքի Աւինիօնում եղած միջոցին կազմուելէր զօրաւոր ֆրանսիական կուսակցութիւն պապի շուրջը, որին գուր չ'եկաւ Հռովմ վերադարձը, որովհետեւ այդ պատճառ պետք է լինէր կրկին իտալացոց գերաշնչութիւն ստանալուն: Գրիգոր ԺԱ.-ի մահուանից յետոյ ֆրանսիացի ծիրանաւորներն ընտրեցին մի պապ, իսկ իտալացիք՝ մի ուրիշը.—սկսուեցաւ «Մեծ հերձուածը»:

Ո'չ հռովմէական, ո'չ էլ Աւինիօնի պապը կարող էր մտածել, հարկաւ, աշխարհական իշխանութեան ընդարձակելու մասին. զրանք ամենայն ոյժ գործ էին դնում, որ մի կերպով պահպանեն իրենց զրութիւնը, եւ հետեւողներ ձեռք բերեն զանազան կաթոլիկ երկրներում: Դրա փոխարէն, երբ Մեծ հերձուածը վերջացաւ, Մարտին Ե-ի ընտրութեամբ Կոստանցի ժողովում (1417), պապերի գլխաւոր ոյժն ուղղուած էր այն բանին, որ ընդարձակեն իրենց աշխարհական իշխանութիւնը կենտրոնական Իտալիայում: Ժ.Ե. զարու պապերից ոմանք աչքի էին ընկնում կրթութեամբ, գիտնականութեամբ, գէպի զրականութիւնն եւ գեղարուեստն ունեցած սիրով, զիւանազիտական նրբամտութեամբ եւ մարդկանց ճանաչողութեամբ:

1377

1417

1309

1347

միւսները զարմացնում էին իրենց անառակութեամբ, ազանութեամբ, ուխտադրութեամբ անմտութեամբ, լիբր արհամարհանքով դէպի կրօնը, բարոյականութիւնն եւ պատշաճաւորութիւնը ¹⁾։ բայց ինչպէս եկեղեցու ղեկավարներ՝ դրանք ամենքն էլ անպէտք էին, որովհետեւ բոլորեքեան եւս անձնատուր էին եղած նախ եւ առաջ աշխարհական նպատակների եւ կրօնական սրբութիւնը դործ էին դնում իբրեւ միջոց աշխարհական նըպատակների համեմուտի ժե. դարու այս պապերի կառավարութեան յատկանիշը դարձաւ այսպէս կոչուած նեպոսիզմը ²⁾, դրանք շրջապատում էին իրենց ազգականներով, բաշխում էին դրանց պաշտօններ, երկրներ եւ բնակիչներ։

Նէպոլիս
և Սիկիլիա

Հոհննշտաուֆեններն ընկան շնորհիւ Ֆրանսիացոց միջամտութեան խտրացոց գործերի մէջ. այս միջամտութեան հետեւանքն եղաւ Կարլոս Անժուացու եւ նրա սերնդի թագաւորին «Երկուց Սիկիլիայից թագաւորութեան» մէջ, այսինքն, հարաւային իտալիայում եւ Սիկիլիայում։ Տեղացի ժողովուրդն ատում էր եկեղեցիներին, եւ այս ատելութիւնն արտայայտուեցաւ Ֆրանսիացոց սոսկալի կոտորածով, այսպէս կոչուած «Սիկիլական իրիկնաժամով» (1282)։

1282

Անժուի հարստութեան թագաւորներն իրենց գիրքը պահպանելու համար ստիպուած էին բարոններին ամեն տեսակ զիջումներ անելու, ուստի պետութեան մէջ իշխում էր անծայր անկարգութիւն։ Դարու երկրորդ քառորդին անգաւակ թագուհի Յովհաննան իրեն ժառանգ հրատարակեց Ալֆոնս Արագոնացուն. սա կարող եղաւ հաստատուիլ Նէպոլիսում եւ Սիկիլիայում, եւ իրենից յետոյ իշխանութիւնն աւանդել իւր որդկանցից մէկին։ Արագոնացի թագաւորները ծանր հարկեր էին դնում ժողովրդի վրայ, բայց դարձեալ չըկարողացան հաստատուն կարգ եւ օրէնք մտցնել. նրանց ամբողջ գործունէութիւնն անց կացաւ ապստամբութիւնների դէմ անպտուղ կռուի մէջ։

Հիւսիսային
Իտալիոյ քա-
ղաքները

Հռոմէական նահանգից դէպի հիւսիս եւս զգալի էր պահպանելու եւ կայսրների կռուի կործանիչ ազդեցութիւնը. Լոմբարդիայի եւ Տոսկանայի քաղաքային հասարակապետութիւնների մէջ գուելֆներն ու գիբելլինները չարունակում էին թշնամու-

¹⁾ Առանձնապէս նշանաւոր դարձաւ սրանցից սպանիական Բորջա տնից Սյէքսանդր Զ. պապը։

²⁾ Լատինական nepos բառից, որ կը նշանակէ եղբոր որդի կամ քեռորդի։ Երբ իշխանաւորը զլիսաւոր պաշտօնները յանձնում է իր ազգականներին, ասում են, որ նա նեպոսիզմով է զբաղուած։

թիւնը միմեանց դէմ Հոհննշտաուֆենների անկումից յետոյ եւս Գուելֆներն երբեմն յենում էին պապական գահին, գիբելլինները թոյլ յարաբերութիւն ունէին Գերմանիայի հետ, բայց իրապէս այս հին մականուններով օգտուում էին կուսակցութիւնները, որոնք ամենեւին գործ չունէին ո՛չ կայսրների եւ ո՛չ պապերի հետ.—գլխաւոր նպատակը, թէ մի եւ թէ միւս կուսակցութեան, մէկ կամ միւս քաղաքի, իշխանութիւնը ձեռք ձգելն էր. սրա հետ միասին հետզհետէ աւելի եւս զօրանում էր թշնամութիւնն հարուստ վաճառականների ¹⁾ եւ մանր արհեստաւորների ²⁾ մէջ։ Կուսակցութիւնների այս կատաղի կռուին իտալական քաղաքներում նոյն հետեւանքներն յառաջ բերաւ, ինչ որ մի ժամանակ յունական հասարակապետութիւնների մէջ, բանը վերջանում էր նրանով, որ մի որ եւ է ճարպիկ եւ փառասէր մարդ ձեռք էր ձգում կառավարչական իշխանութիւնն եւ դառնում էր մանր մարդկանց խնամակար։ Այսպիսի բռնակալները շրջապատում էին իրենց վարձկան զօրքերով եւ կառուցանում էին ամրոցներ, որպէսզի հաստատեն իրենց տիրապետութիւնը, բայց միեւնոյն ժամանակ դրանք սովորաբար հոգս էին քաշում ժողովրդի նիւթական վիճակը բարւոքելու, քաղաքը հոյակապ շէնքերով, արձաններով, նըկարներով զարդարելու, դէպի իրենց պալատը գիտնական մարդիկ, գրագէտներ եւ արուեստագէտներ գրաւելու մասին։

Միլանում բռնակալ դարձաւ նշանաւոր Վիսկոնտի ցեղը, Լոմբարդիայի որ, շնորհիւ խորամանկութեան, անգթութեան եւ մարդիկ ճանաչելու անսովոր յատկութեան, կարողացաւ տիրել ամբողջ Լոմբարդիային ժե. դարու կիսին մեռաւ այս բնատանքի վերջին արու ժառանգը, եւ իշխանութիւնը ձեռք ձգեց նրա փեսայ Ֆրանչեսկո Մֆօրցան։ Սա առաջացել էր իրրեւ վարձկան զօրքերի գլխաւոր, կամ ինչպէս կոչուում էին դրանք կոնդոտիեր. նրա կեանքն անց էր կացել արկածների մէջ—նա ծառայել էր եւ՝ Նէպոլիսի թագաւորին, եւ՝ պապին, եւ՝ վենետիկեցոյ, եւ՝ Միլանի դքսին. այն ժամանակուայ վարձկան զօրավարների մէջ նա ձեռք էր բերել ամենից ճարտարի եւ աներկիւղի անունը. երբ առիթ ներկայացաւ Միլանի դուքս դառնալու, նա այդ բանն աչքաթող չարաւ եւ ցոյց տուաւ,

¹⁾ Ֆլորենցիայում դրանց կոչում էին popolo grasso (յետոյ arti maggiori)։

²⁾ Ֆլորենցիայում—popolo minuto (arti minori)։

որ, բացի ղինուորական առաջնորդից, ունի եւ մեծ պետական մարդու յատկութիւններ: Սակայն, Նէապոլիտարազոնացի թագաւորները պէս, Ֆրանչեսկո Սֆօրցան կարող չեղաւ նրելուել խաղաղ շինարարական գործունէութեան—նա ապառնեց իւր աչքի ընկնող քաղաքական տաղանդը ներքին եւ արտաքին թշնամիների դէմ կռուելու վրայ: Իսկ նրա որդիքը վերսկսեցին վիսկոնտիների ուխտագրութեւն եւ անգութ քաղաքականութիւնը:

Ֆլորենցիա:

Տոսկանայի մայրաքաղաք դարձաւ հետզհետէ Ֆլորենցիան: Այս քաղաքի հասարակապետական հաստատութիւններն յաճախ փոփոխութեան էին ենթարկուում շնորհիւ կուսակցութիւնների կողմի եւ ժողովրդական ապստամբութիւնների: Բանն հասաւ այն տեղը, որ պաշտօնակալ անձինք ընտրուում էին երկու ամիս ժամանակով: Ժողովուրդը, վերջապէս, յոգնեց անպաշտ քաղաքական կուսից եւ Մեդիչիների ընտանիքը ձեռք ձգեց բռնակալութիւնը: Սրանք սեղանաւորներ էին, որոնք սկզբիցը չէին էլ մտածում իշխել ուժով: Այս բռնակալութեան հիմնադիրները, Ջովաննին եւ Կոլլոմնո, արտաքուստ մնացին մասնաւոր մարդիկ, թիկնապահներ չէին պահում, եւ շարունակում էին վարել իրենց առեւտրական գործերը: Նրանք հոգում էին միայն այն բանի մասին, որ բոլոր պաշտօններն ստանան իրենց կուսակիցները: Այս նպատակի համար ընտրութեան իրաւունքն յանձնուեցաւ մի սակաւանդամ խորհրդի (balia), որ քաղկացած էր իրենց կուսակիցներից: Մեդիչիներէից երրորդը, Լօրենցոն, սկսաւ քաղաքում տնօրինել ամենայն ինչ առանց պատասխանատւութեան. ինքնակամ ծախսում էր քաղաքի զրամները, խառնուում էր քաղաքացոյց մասնաւոր կեանքի մէջ, ամուսնութիւններ էր կազմում եւ քանդում: Ֆլորենցիայի երկամտական վիճակը շատ վատթարացաւ նրա ժամանակ, իսկ իւր անձնական ահապին կարողութիւնը վատնեց նա. բայց այսուամենայնիւ նրա կառավարութեան ժամանակն համարուում է ամենափայլունը Ֆլորենցիայի պատմութեան մէջ, որովհետեւ նրա ժամանակ քաղաքը դարձաւ զբոլխաւոր կենտրոն գեղարուեստների եւ գրականութեան իտալիայում:

Վենետիկ:

Բոլորովին այլ ընաւորութիւն ստացաւ Վենետիկի հասարակապետութեան զարգացումը. գերակշռութիւնը Միջերկրական ծովի վրայ, որ վենետիկեցիք ձեռք էին բերել խաչակրաց արշաւանքների ժամանակ, հնարաւորութիւն էր տալիս նրանց

զբաղեցնելու ատորին դառակարգը շահաւէտ առեւտրական եւ արդիւնաբերական ձեռնարկութիւններով, իսկ անհանգիստ տարրերը հեռացնելու դաղթալայրերը—Արչիպելագոսի կղզիները կամ Բալիանեան թերակղզու ավերը, ամենայն ինչ ղեկավարում էր սակաւաթիւ դրամատէր ազնուականութիւնը, որ կարողացել էր ազատուել Ժ.Դ. դարու ակզբում ժողովրդի միջամտութիւնից քաղաքական գործերում: Հասարակապետութեան մէջ առաջին անձն էր դոժը (դուքս), որ ընտրուում էր ցմահ, բայց նրա իշխանութիւնը սահմանափակուում էր այսպէս կոչուած մեծ խորհրդով, այս խորհրդի մէջ տեղերն աւանդուում էին ժառանգաբար Բացի սրանից, հաստատուեցաւ քսանից խորհուրդը, որի պարտականութիւնն էր քննութիւն անել եւ դատաստան կտրել քաղաքական յանցանքների մասին. դա գործում էր գաղտնաբար, արագ եւ անխնայ: Վենետիկը վարեց մի փառաւոր եւ յամառ կռիւ տաճիկներէ դէմ. բայց սկսած Ժ.Յ. դարու վախճանից նրա զօրութիւնը խախտուեցաւ.—այդ խախտման պատճառն էին երկպառակութիւնները միւս իտալական տէրութիւնների հետ եւ առեւտրական նոր ճանապարհների գիւտը դէպի Հնդկաստան եւ Ամերիկա:

ԳԼՈՒՆ. Ե.

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Գերմանական թագաւորների փորձերը ստեղծելու «Գերմանական ազգի սրբազան հռովմէական կայսրութիւնը» փառք բերին առանձին-առանձին կայսրներին, բայց ընդհանրապէս կործանիչ ազդեցութիւն ունեցան Գերմանիայի պատմութեան վրայ: Փոխանակ համբերութեամբ հոգ տանելու ժողովրդի բարեկեցութեան, իշխանութեան հաստատման եւ աւատական կարգի պետականի փոխելու մասին, կայսրները հետամուտ էին անիրագործելի նպատակների, ձգտում էին տիեզերական իշխանութիւն ձեռք բերելու. կաթոլիկ եկեղեցու վրայ խնամակալութիւն հաստատելու եւ Գերմանիոյ ուժերով իտալական թագաւորութիւն հիմնելու: Իսկ

այդ ժամանակ Գերմանիայում արմատ էր բռնում աւատական բաժանականութիւնն և ամրապնդուում էին մանր իշխանութիւնները: Հոհենշտաուֆենների անկումից յետոյ սկսաւ մի կասարեայ անիշխանութիւն. գերմանական կայսրներ էին ընտրուում իշխանները, բայց դիտմամբ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք կարող չէին գործերի վրայ ազդեցութիւն ունենալ, այսպէս, նրանք ընտրեցին հոլլանդական կոմսին, անգլիացոց Հենրիկոս Գ. թագաւորի եղբորը, Կաստիլիոյ թագաւորին:

Կայսրութեան նման չհաստատուեցին նաեւ ցեղական դիտարկումները: Արդէն գիտենք, որ Ֆրանկ ցեղը կազմեց երկու դքսութիւններ. — Ֆրանկեան և լոթրինգեան. սաքսոնացիք, շուաբները, բաւարացիք ունէին նոյնպէս իրենց յատուկ դքսերը: Բոլոր այս ստորաբաժանումները վերացուեցան: Վերջին ցեղական դուքս Հենրիկոս Առիւծասիրտը Ֆրիդրիկոս Բարբարոսային դաւաճանելու համար զրկուեցաւ իշխանութիւնից. ցեղական դիտարկումների աւերակների վրայ առաջ եկան բազմաթիւ այսպէս կոչուած «ստերիսոտեաներ» (գաւառակներ) — իշխանութիւններ, կոմսութիւններ, բարոնութիւններ եւ ասպետական կոչուածներ:

Գերմանական աշխարհներ

Հորարիցիան բաժանուեցաւ Ֆրանկոնեան կայսրների ժամանակ վերջին եւ ստորին մասերի: Դա ընկաւ Ֆրանսիական ազդեցութեան տակ. դրա մի մասն ուղղակի անցաւ Ֆրանսիացոց թագաւորներին, իսկ միւս մասը միացաւ բուրգունդական դքսութեան հետ Շելդա, Մասս եւ Հոենոս գետերի բերաններում կազմուեցան Ֆրանկիա եւ Հոլանդիա կոմսութիւնները: Ֆրանկիան, Վերդէնի դաշնադրութեամբ, համարուեցաւ Ֆրանսիոյ մասը, բայց Ոթոն Մեծը կայսրութեան հպատակեցրեց զրա հիւսիսային կէսը: Հարաւում ընակիչները ուսմանցրած վաղուներ էին. հիւսիսում դա խառնուրդ էր զանազան գերմանական ցեղերի, եւ կրում էր

Ֆրեմինգ կամ ֆրամանդացի, այսինքն՝ փախստական մականուներ, երկիրը մի ճահճային հարթութիւն էր, յարմար ոչխարաբուծութեան համար. բնակիչները խմբուած էին վանքերի մօտ գտնուած պարսպապատ քաղաքներում, որպէսզի կարողանան պաշտպանուիլ ծովահէնների դէմ: Ֆրամանդական ուստայանկները, ասուեգործներն եւ ներկարարները հոչակաւոր դարձան Ժ.Բ. դարում, եւ շուտով Գենթն ու Բրիւգէն դարձան հարուստ արդիւնագործական եւ վաճառականական կենդրոններ: Այստեղ միանում էին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի առեւտրական ճանապարհները: Այստեղ էին բերում անգլիական երկաթն ու բուրդը, ֆրանսիական գինիները, հունգարական մազեղէնը, արեւելեան վաճառքները (մետաքս, համեմունք), ֆլանդրական հարուստ նահանգը կոռւարնձոր դարձաւ Անգլիայի եւ Ֆրանսիայի մէջ: Ֆրիլպպ Գեդեցիկը գրաւել էր արդէն այդ երկիրը, բայց ֆրանսիական ասպետները պարտութիւն կրեցին ապստամբած քաղաքացիներից, Կուրտէի¹⁾ մօտ. (1302): Քաղաքներում իշխանութիւնն հետզհետէ հարուստ վաճառականներից անցաւ արհեստաւորներին, որոնք կազմում էին զօրաւոր ու պատերազմասէր արուեստակցական ընկերութիւններ: Բայց այս նոր կառավարութեան ժամանակ էլ քաղաքները քաջութեամբ պաշտպանում էին իրենց անկախութիւնը: Յակոբ եւ Ֆրիլպպ Արտֆելցներն երկար ժամանակ դէմ դրին ֆրանսիական նուաճումներին, եւ, նոյն իսկ երբ դաւաճներն անցան բուրգունդական դքսերին, Բրիւգէն եւ Գենտը չարուակեցին պինդ կանգնել եւ պաշտպանել իրենց ազատութիւնները: Ֆրանկիան իւր աշխարհագրական դիրքի պատճառով սերտ յարաբերութեան մէջ մտաւ Անգլիայի եւ Ֆրանսիայի հետ, այսուամենայնիւ կապը Գերմանիայի հետ միշտ պահպանում էր. նա ոչ միայն առեւտուր էր անում հոենոսեան եւ հիւսիսային քաղաքների հետ, այլ եւ շարունակ երկրագործ գաղթականներ էր ուղարկում դէպի արեւելք: Հոլանդիոյ բարձրութիւնն աւելի ուշ սկսաւ: Առեւտրական կենտրոնների մեծագոյն մասը բարձրացան Ժ.Գ. եւ Ժ.Բ. դարերում (Ամստերդամ, Ռոտտերդամ), ինչպէս ֆրամանդացիք հող խլեցին ճահիճներից, այսպէս էլ հոլանդացիք կռոււում էին ծովի հետ եւ կամաց կամաց հող էին ձեռք բերում երկրա-

1302

¹⁾ Ս. յս. ճակատամարտը կոչուում է «խթանների ճակատամարտ», որովհետեւ պատերազմի գաշտը ծածկուած էր ասպետների զիակներով:

գործական աշխատանքի համար՝ Սրանց արդիւնագործութիւնը չէր կարող մրցել Ֆլանդրականի հետ, բայց Հոլլանդիան մասնակցութիւն ունեցաւ Անգլիայի եւ հիւսիսային Գերմանիայի հետ, աշխոյժ առեւտրի եւ դէպի արեւելք դիմող գաղթականական շարժման մէջ։

Այլ տիպար ունէին ի հնուց անտի մարդարնակ նահանգներս.—Փրսնկոնիս, Շուարիս, Բաւարիս։ Ամբողջ երկիրը Հռենոսի, Մայնի, Վերլին Դանուբի ափերին զարդարուած էր դղեակներով, քաղաքներով, վանքերով։ Գեռ եւս հռովմայեցոց ժամանակ որոշուած էին այստեղ գլխաւոր առեւտրական կէտերը, այստեղ էր սկսուել Գերմանիայի տիրապետութիւնը Ֆրանկների ձեռքով. այստեղ սկսուեցաւ հնագոյն եկեղեցական կազմակերպութիւնը. այստեղ էին կարօլինգների թագաւորական կայսրածններն եւ հնագոյն ասպետական տներն աւատադաւանները։ Բարբեր Հռենոսը գրաւել էին գլխաւորաբար հոգեւոր տիրապետներ ¹⁾—Մայնցի, Քէյօլնի, Տրիրի արքեպիսկոպոսներն իշխում էին զրա ափերին, իսկ խոշոր աշխարհական իշխաններից պէտք է յիշենք միայն հռենոսեան պֆալցգրաֆին, կայսրների նախկին փոխանորդին, Ֆրանկոնեան գքսութեան մէջ։ Շուարիայում աչքի էին ընկնում վիրտենբերգեան կոմսերը, Բաւարիայում՝ վերին եւ ստորին բաւարական գքսերը։ Մանր իշխաններ, կոմսեր, բարոններ եւ ասպետներ, որոնք սեպհականել էին իրենց տէրունական իրաւունքներ, համարուում էին կայսրների ուղղակի վասալներ, եւ ամեն յարմար առիթին յարձակուում էին իրենց գղեակներից առեւտրական կարաւանների, կամ անպաշտպան դրացիների վրայ—կար մի ահագին բազմութիւն այսպիսի աւատական իշխանների արեւմտեան եւ հարաւային Գերմանիայում։ Թէ ասպետների բռնութեանց, եւ թէ հոգեւորական տիրապետների կամայականութեանց դէմ մեծ փաղափներ թնակիչները միացան եւ անկախ համայնքներ կազմեցին։ Կառավարութիւնը սկզբում գտնուում էր սակաւաթիւ տանտէրերի եւ վաճառականների ձեռքին, որոնցից ընտրուում էր քաղաքային խորհուրդն, եւ որի ձեռքին էր դատարանը, ոստիկանութիւնը, հրապարակների վաճառականութիւնն, յօգուտ քաղաքի եւ նորա տիրոջ (սենիօր) հարկերի ժողովումը։ Հետզհետէ սկսեցին կառավարութեան մէջ մասնակցութեան ձգտել եւ քաղաքի ստորին կարգի բնակիչները—արհեստաւորները, որոնք արուես-

¹⁾ Դա կոչւում էր «տէրտէրների փողոց» (Pfaffengasse)։

տակցական ընկերութիւններ էին կազմում։ Հռենոսեան քաղաքներն անկախութիւն սկսան ձեռք բերել ԺԱ. դարում, Հենրիկոս Դ-ի եւ Եկեղեցու մէջ եղած կռուի ժամանակ։ Թագաւորը հովանաւորում էր նրանց, որպէսզի եպիսկոպոսներին վնասէ։ Սկսած այդ ժամանակուանից դրանց անկախութիւնը հետզհետէ զարգացաւ։

Շուարիայի հարաւային մասում, զուիցերական Ալպերի վրայ, գեռ եւս պահպանում էր իւր գոյութիւնն ազաւ գիւղական դասակարգը։ Լեռնային արօթատեղիք եւ դրանց կից հերկելի հողերը գտնուում էին ժողովրդի ձեռքին, որ, իրաւէ, հպատակում էր վանքերի եւ բազմաթիւ ասպետների հովանաւորութեան, բայց օգտուում էր ինքնավարութեան իրաւունքով իր համայնական գործերում եւ յամառութեամբ պահպանում էր հին սովորութիւնները։

Սախոնիան եւ Թիւրինգիան թէ՛ իրենց դիրքով եւ թէ՛ կեանքի եղանակով Հռենոսի եւ Վերլին Դանուբի ափերի եւ արեւելեան նահանգների մէջ տեղն էին բռնում։ Վեղերի եւ Լյուպի աւազանուր, ապրում էին այն պատերազմատէր ցեղերը, որոնց այնքան զօռարութեամբ կարողացան սանձել Կարլոս Մեծն եւ Հենրիկոս Դ-ը։ Շնորհիւ կայսրների բազմադարեայ փորձերին, շնորհիւ սաքսոնական վելֆերի եւ թիւրինգեան լանդգրաֆների, Գերմանիոյ այս կեդրոնական մասումն էլ հաստատուեցան բազմաթիւ մանր իշխաններ եւ ասպետներ։ Բայց ժողովուրդն այստեղ այնքան ընկճուած չէր, ինչքան արեւմուտքում եւ հարաւ արեւմուտքում։

Գերմանիայի արեւելքում տարերքների կռուի պէս ^{կռու սլաւոնների հետ} մի կոյիւ էր տեղի ունենում սլաւեան ցեղերի հետ։ այս կռուի մէջ գերմանացիք լաղթանակը տարան, շնորհիւ երեք հանգամանքի. նախ, նրանց ասպետքիւնն աւելի լաւ էր կազմակերպուած պատերազմի համար, քան թէ բաժան-բաժան եղած եւ վատ զինուած սլաւեան ցեղերը. երկրորդ՝ գերմանացոց կողմն էր ֆրիսոնեական ֆաղափախորքորքիւնը, մինչդեռ սլաւեանները կռապաշտութեան էին հետևում. երրորդ՝ սլաւոնները հողը՝ վատ էին մշակում, իսկ գերմանացի գաղթականները տարածում էին կաւարեղագործութիւնը երկրագործորքիւնը։

Կարլոս Մեծը կանգ առնել տուաւ սլաւոնների յառաջադիմութիւնը դէպի արեւմուտք, եւ կանգնեց նրանց ընդդէմ մի ամբացրած սահմանագիծ: Գերմանացիների յարձակումներն սկսան մեծմորաւական պետութեան կործանումից յետոյ եւ Հենրիկոս Թոնչորսի եւ Ոթոն Մեծի ժամանակ: Սերբերը, սլաւոնների յառաջընթաց գունդը, որ անցել էին Էլբա գետի միւս կողմն եւ բնակուում էին նրա ձախակողմեան վտակների ափերին, նուաճուեցան. Թիւրինգներն ու սաքսերը կազմեցին Մայսենեան եւ հիւսիսային սահմանագաւառները, սկսան տալածել գերմանական ազդեցութիւնն Էլբայի աջ ափի վրայ, մինչեւ Օդեր գետը: Սակայն այս նուաճումը բոլորովին հաստատուն չէր, որովհետեւ կայսրութեան միւս սահմաններում գործ դրուած գործունեութիւնը հեռացնում եւ կայսրների ուշադրութիւնը այս կողմերից: Ոթոն Բ.-ի եւ Գ.-ի իտալական ձեռնարկութիւնների ժամանակ սլաւոնները կազդուրուեցան: Օրոգրիտներն ու լիւտիչները յետ մղեցին գերմանացոց Էլբայի միւս կողմն եւ դաշնակցութիւն կազմեցին ապագայ ընդդիմադրութեան համար: Բոլեսլաւ Արիստիտը միացրեց մի առ ժամանակ արեւմտեան սլաւոն ցեղերին, մայսենեան սահմանագաւառն ու սերբերի երկրներն եւ պաշտպանեց իւր աշխարհակալութիւնները Հենրիկոս Բ.-ի դէմ: Փրանկոնեան կայսրները բաւականացան յետ գրաւելով Էլբայի ձախ ափն եւ հարկ ստանալով լիւտիչներից: Գերմանական ազդեցութեան համար որոշ չափով նեցուկ եղաւ օրոգրիտների իշխան Գոթշալկի քրիստոնէութիւն ընդունելը: Բայց նրա վրայ յարձակուեցան կռապաշտ լիւտիչներն, իշխանին սպանեցին, Ռադիկոստին զոհ բերին Մեկլենբուրգի եպիսկոպոսին, աւերեցին Համբուրգն եւ Շլէզվիգը: Օրոգրիտների իշխան դարձաւ կռապաշտ Կրուտոն, Ժ.Ա. զարու վերջը: Բայց զրացիութիւնը քրիստոնէութեան եւ գերմանական քաղաքակրթութեան հետ իր գործը կատարեց, նոյն իսկ սլաւոնների մէջ երեւեցան իշխաններ, որոնք յնդունում էին քրիստոնէութիւնը, ամուսնանում էին գերմանացի իշխանուհիների հետ եւ ընդունում գերմանական սովորութիւնները: Այսպէս, օրինակ, կռապաշտում էր Հենրիկոսը, Գոթշալկի որդին, որ կարողացել էր զահալէժ անել Կրուտոյին: Բոլեսլաւ Գ.-ի ժամանակ լեհացիք փորձեցին նուաճել սլաւեաններին, որոնք ապրում էին Օդերի եւ Էլբայի մէջ տեղը, եւ դրանով տկարացրին սլաւոնական իշխանութիւնները: Այս բանից չահուեցան գերմանացիք. Լոթար սաքսոնացու

ժամանակ սրանք խիստ կռիւ մղեցին լիւտիչների դէմ եւ կործանեցին նրանց կռապաշտական սրբավայրը Ռետրուս:

Գերմանացւոյն գլխաւոր դարաշրջանն սկսուեցաւ Հոհենշտաուֆենների ժամանակ: Ընդարձակ ձեռնարկութիւններն եւ ընդհանուր յարձակումներն աննշան հետեանքներ ունեցան. քայց դրա փոխարէն յաջողութեամբ էին գործում նահանգների իշխանները: Ալբրեխտ Արջն Էլբայի եզերքների սահմանագաւառն ստացաւ եւ պահեց 40 տարի: Լիւտիչների գլխաւոր իշխանութեան տիրեց նա խաղաղ ճանապարհով—բարեկամութիւն հաստատեց Բրանդենբուրգի իշխանի հետ, եւ սա իւր երկիրը կտակեց նորան: Լեհացիներից Ալբրեխտը խլեց մի փոքրիկ իշխանութիւն Շպլէ գետի վրայ, այն տեղում, ուր ապա հիմնուեցու Բեռլին քաղաքը: Ալբրեխտի յաջորդները շարունակեցին նրա ճարտար քաղաքականութիւնը—նրանք խառնուում էին սլաւոն իշխանների երկպառակութիւնների մէջ եւ երբեմն դրանց հետ դաշն էին կուում, երբեմն էլ նուաճում եւ վճռաւորում ուժով: Նրանք շուտով կարողացան ձեռք բերել ամբողջ երկիրը մինչեւ Օդեր գետը, եւ նոյն իսկ անցան դրա աջ ափը: Այսպէս, լիւտիչների երկրում հիմնուեցաւ քրանդենբուրգեան սահմանագաւառը, որ ապա զարգացաւ եւ դարձաւ պրուսական քաղաքացիութիւն:

Ոչ աւելի սակաւ յաջողութեամբ գործեց Հենրիկոս Առիւծասիրտն օրոգրիտների եւ պոլեռանացիների դէմ: Իրանից կարգուած կոմսերը Հոլշտայնում բռնաւորովին ջնջեցին այս երկրի արեւելեան մասում բնակուած բոլոր սլաւոններին:

Նիկլոտի, այժմեան Մեքլենբուրգի տեղում ապրող օրոգրիտների իշխանի հետ, Հենրիկոսն սկզբում հաշտ էր ապրում եւ նրա օժանդակութիւնն էր վայելում նոյն իսկ նրա ազգակիցների դէմ վարած պատերազմի մէջ, իսկ երբ Նիկլոտն այլեւս իրան հարկաւոր չէր, պատերազմ հրատարակեց նրա դէմ: Չընայելով

Բրանդենբուրգեան սահմանագաւառ

Հենրիկոս Առիւծասիրտի աշխարհակալութիւնները

հերոսական դիմադրութեան, օրողրիտներն ընկճուեցան բազմութիւնից. նրանց իշխանն ընկաւ պատերազմում, ժողովրդին ցրուեցին: Եւ այսուամենայնիւ Նիկիոտի որդին կրկին դարձաւ իւր հայրենի երկիրն եւ ջարդեց գերմանական բերդապահներին: Հենրիկոս Առիւծասիրտը ստիպուած եղաւ նրան իշխան թողնել եւ թող տալ վանտուած ժողովրդին յետ դառնալու, բայց օրողրիտները քրիստոնէութիւն ընդունեցին, հպատակեցան գերմանացի հոգեւորականութեան եւ դարձան Գերմանիայի հաւատարիմ վասսալները: Նիկիոտի սերնդից են ծագում այժմեան Մեքլենբուրգի դքսերը:

Մերձաւորապէս այդ ժամանակները դանիացիք գրաւեցին Ռիւգենն եւ աւերեցին Արքոնան. սլաւոն ծովահէնների կռապաշտական սրբավայրը: Մի ժամանակ նրանց նաւերը սարսափ էին ազդում դանիացոց եւ գերմանացոց: Հենրիկոս Առիւծասրտի վերջի գործն իւր անկումից առաջ եղաւ պոմերանացոց նուճումը—դրանց իշխաններն ընդունեցին քրիստոնէութիւն եւ դարձան վասսալ սաքսոնական դքսի:

Գերմանացուն:

Այսպէս տեղի ունեցաւ զինուորական գրաւումն Էլբայ եւ Օդեր գետերի միջի երկրի: Բայց տիրապետութիւնները զանազան են լինում. մի քանիսը նուաճուած ժողովրդի վրայ աւելացնում են մի վերին շերտ նուաճողների, միւսներն առաջ են բերում երկրի եւ ժողովրդի կատարեալ կերպարանափոխութիւն: Գերմանական *սիրապետութիւնն* հեկց այսպիսի կերպարանափոխութիւն առաջ բերաւ. դա մի կասարեալ գերմանացումն էր: Մի քանի *սեղերում* գերմանացի կոտորեցին բոլոր բնակիչներին մինչեւ վերջին մարդը: Շվեդներն սլաւոններին սրտում էին անտառներում, ինչպէս վայրի գաղաններին, որին պատահում էին, կախ էին տալիս մերձակալ ծառից: Բայց եւ այն տեղերում, ուր բոլորեքեան կորստի չըմատնուեցան, նախկին տիրապետող ժողովրդի ողորմելի մնացորդները պատասպարուում էին գետերի եզերքներին խղճուկ հիւղերի մէջ եւ

զբաղւում էին ձկնորսութեամբ: Նույն իսկ այն նահանգներում, իւր իշխանները սլաւեան ցեղից էին ծագում, գերմանացումն առաջ էր գնում անխափան—զինուորականները սկսում էին կրել գերմանական սպառազինութիւն, ընդունել գերմանական սովորութիւններն ու լեզուն. այդ իշխաններն իրենք էին հրաւիրում գերմանացի գաղթական հողագործներին: Սլաւոններին միմիայն ուժով լետ հէին մղում, գերմանացիք յաջողութիւն ունէին, որովհետեւ գործում էին աւելի տոկոսն կերպով, կասարեալագործուած միջոցներով, մշակում էին ճահճային եւ անտառոտ վայրերը, որոնք մինչև նրանց գալը ամալի էին: Գերմանացի գաղթականներին, որոնք գալիս էին Գերմանիոյ բոլոր կողմերից, տրւում էին հողեր, արտօնաւորեալ պայմաններով: Այս նոր վայրերում դրանց կեանքն աւելի բարեբաւաստիկ էր, քան թէ իրենց հայրենիքում ամենատեսակ հալածանքների մէջ: Մի քանի ժամանակից յետոյ Բրանդենբուրգի բզեշխը կամ մարկգրաֆն եւ Հոլշտայնի կոմսը սկսում էին նուաճել դրանց իրենց իշխանութեան ներքոյ. շինականների մէջ երեւան էին գալիս ասպետներ, որոնք հարկ էին ժողովում շրջակալ գիւղերից եւ դառնում էին երկրի աւատական տանուտէրեր, բայց այսուամենայնիւ արեւելքում շինականներն աւելի ազատ էին, քան թէ բնիկ գերմանական գաւառներում: Բացի այս շինական գաղութների հաստատութիւններից, որին օգնում էին իշխաններն ու ասպետները, մեծ նշանակութիւն ունեցաւ վանքերի տարածուիլը: Յատկապէս շատ մեծ գործ կատարեցին երկրի մշակութեան վերաբերութեամբ կիստերսականները, այն կարգի կրօնաւորները, որոնց պատկանում էր սուրբ Բեռնարդոսը:

Վերջապէս, գերմանացման ազդեցութեան ներքոյ տեղի ունեցաւ լեղաշրջումն հիւսիսի առեւտրական լարաբերութեանց: Բալթեան ծովի վրայ առեւտրական

Հանգա:

նաւագնացութեան սկզբնաւորութեան մէջ եռանդուն մասնակցութիւն ունեցան սլաւոնները: Հիւսիսային առեւտրական ճանապարհը կազմուեցաւ Թ. Գարուս, այս ճանապարհով ապրանքներն Անգլիայից, Գերմանիայից, Դանիայից և Շվեդիայից տեղափոխուում էին դէպի արևելք. Նովգորոդում սա խաչաձև կտրում էր մի այլ ճանապարհ, վարեգների երկրից դէպի յոյները (Բիւզանդիա) տանող ճանապարհը: Գլխաւոր միջին կայարաններն էին Բրեմէն և Համբուրգ: Հիւսիսային ծովի ափին, իսկ սլաւոնական քաղաքներից Արկոնան Ռիւգենում. Բուկու և Գդանսկ Բալթեան հարաւային ծովափում: Գերմանական աշխարհակալութիւնը զօրացրեց առևտուրն այս երկրում: Գլխաւոր կենտրոն դարձաւ Լիւբեկը, որ Հենրիկոս Առիւծասիրտը կառուցել էր Բուկուի տեղում: Լիւբեկ քաղաքը 1256 թուին Համբուրգի, Բրեմենի և Վեստֆալեան քաղաքների հետ փոխադարձ պաշտպանութեան դաշն կուեց. ապա կազմուեցաւ մի դաշնակցութիւն Բալթեան ծովափի քաղաքների հետ, ծովահենների դէմ կռուելու համար: Այսպէս կազմուեցաւ հիւսիսային ֆաղափների Հանգան, որ իւր ձեռքին էր պահում Հիւսիսային եւ Բալթեան ծովերի առեւտուրը: Նրա գլխաւոր օտարերկրեայ գրասենեակները գտնուում էին Լոնդոնում, Բերգէնում (Նորվեգիայում) և Նովգորոդում: Առևտրական գործերի գլխաւոր դատարանն և դաշնակից քաղաքների պատգամաւորների համաժողովը գտնուում էր Լիւբեկում:

Սուտերակիրներ:

Գերմանացիների տարածումը ֆինն և լիթուանացի ցեղերի մէջ, Բալթեան ծովից դէպի հարաւ, այլ կերպարանք ունեցաւ, քան թէ սլաւեան երկրներում գաղթականութիւններ հաստատուելը: ԺԱ. դարում երևեցան առաջին վաճառականներն և քարոզիչները Դուինայ գետի բերանում: Ռիգա քաղաքը հիմնուեցաւ 1201 թուին և հէնց այդ ժամանակները Ալբրեխտ եպիս-

կոպոսը հիմնեց առաւելակիրների միաբանական կարգը: Դրանք էին ասպետ-կրօնաւորներ, որ երգամբ ուխտել էին պատերազմելու կռապաշտների դէմ: Այս միաբանական կարգը տարածեց իւր տիրապետութիւնները Լիթւանդիայում և Եստլանդիայում, ապա Կուրլանդիայում: Բայց դա չափազանց տկար էր երկիրը գերմանացնելու համար, քաղաքիւր աւսպէս ու ֆաղափացի ժողովուրդների յետեւն աւանդունակների մնացել էր լատիշ եւ էստոն ժողովրդի քաղաքիւր: Դրանց ուժով քրիստոնեայ դարձրին, ասպետները կերակրուում էին սրանց երկրագործական աշխատանքով, բայց այս շինական ժողովուրդը պահպանեց իւր լեզուն և ազգութիւնը, իսկ գերմանական հողագործների գաղթականութիւնը չըթափանձեց այդքան հեռու դէպի արևելք: Յամաքային կողմից ասպետներին խիստ նեղում էին ռուսներն և լիթուանացիք, իսկ ծովակողմից, դանիացիք: Սրանք ստիպուեցան իրենց գերմանացի ազգակիցների աջակցութիւնը որոնել, որոնք գրաւեցին դրանցից դէպի արևմուտք ընկնող լիթուանացի պրուս ցեղի երկիրը:

Քրիստոնեական քարոզութիւնն սկսուեցան պրուս-
սացոց մէջ դեռ ևս Ժ. դարու վախճանին, այնտեղ սպանուեցաւ այդ ժամանակ բոհեմացի սուրբ Ադալբերտը, (Վոյցեխ): Բայց մի քաղաքական զօրութիւն չըկար, որ պաշտպանէր քարոզիչներին: Իրաւ է, Բոլեսլաւ Արիասիրտը հասաւ և այստեղ, Կուլմեան երկրում հաստատուեցաւ լեհական բնակութիւն, բայց լեհացիք կարող չեղան պահպանել իրենց իշխանութիւնը պրուսների չեղան պահպանել իրենց ընկաւ կռապաշտութեան մէջ: Քարոզութիւնը վերսկսուեցաւ միայն ԺԳ. դարու սկզբում. այս անգամ լեհերն ու գերմանացիք գործում էին միացած ուժերով, և սկզբն առաւ առաջին պրուսական եպիսկոպոսութիւնը: Սկսուած գործը պաշտպանելու և շարունակելու համար պապերը խաչակիր արշաւանք քա-

1226

ըրգեցին պրուսացի կռապաշտների դէմ, և 1226 թուին տևտոնական կարգի մեծ վարպետ Հերման ֆոն-Չալցան Ֆրիդրիկոս Բ.-ից ստացաւ իրրեւ պարգեւ Կուրլի երկիրը, Վիսլայ գետի եզերքին: Այդ երկիրը պէտք էր գեռ ևս նուճել, և տևտոնական կարգն աւելի ևս մեծ եռանդով նուիրուեցաւ այս գործին, որովհետեւ իրերի վիճակը սրբազան երկրում հետ զհետէ դժուար տանելի էր լինում: Պրուսսները յամառ ընդդիմադրութիւն ցոյց տուին. բայց ստիպուած եղան քալլ առ քալլ տեղի տալու զինուորական գերազանցութեան և գերմամանական զաղթականութեան առաջ: Շատ անգամ յաջողում էր նրանց այրելու իրենց ատելի զղեակները, աւերելու նորակառոյց քաղաքներն ու գիւղերը, բայց վերջ ի վերջոյ քրիստոնէութիւնն և գերմանական կարգ ու կանոնը տիրապետեց: Ասպետներն անխնայ կոտորում էին ամենից աւելի յամառներին և պատերազմասէրներին. ու սիրով իրենց խնամակալութեան տակն էին առնում նրանց, որոնք կամենում էին հպատակուիլ և գերմանացի դառնալ: Տևտոնական ասպետները ժ.Գ. դարու ընթացքում հասան մինչև ծովն և հիմնեցին ծովափնեայ Քէօնիգսբերգ քաղաքը: Վախճանական կերպով այս կարգն հաստատուեցաւ Պրուսիայում ժ.Գ. դարու սկզբում, երբ ստիպուած թողին սրբազան երկիրը, Ակրա քաղաքի մահմետականների ձեռքն անցնելուց յետոյ: Ասպետները խլեցին լեհացիներից արևելեան Պոմերանիան, Գդանսկ (Գանցիգ) քաղաքով, կարգապետներն անցան Մարիենբուրգ, Պրուսիայում, և այդ տեղ սկսաւ գումարուիլ կարգի կապիտուլը, այսինքն, զրա զլիաւորների և անդամների ժողովն ընդհանուր գործերի մասին խորհրդակցելու համար: Գերմանացի ժողովուրդ աւելի շատ կար քաղաքներում, բայց դրանք սկսան և գիւղերը թափանձել, պրուսսների գերմանացումն աւելի յայտն էր ընթանում, քան թէ լատիներինն եւ էստոններինը:

Հարաւ արևելքում ևս յառաջողմում էր գերմանական զաղթականութիւնը, թէպէտև աւելի սակաւ եռանդով, քան թէ հիւսիս արևելքում:

Աւստրիական երկրներ:

Տասներկուերորդ դարու վերջում այստեղ կազմուեցաւ հզօր աւստրիական դքսութիւնը: Դքսի իշխանութիւնը տարածուում էր, բացի բուն Աւստրիայից, նաև Շտիրիայի, Կարինտիայի և Կրայնի վրայ. ժողովուրդը մասամբ գերմանացի էր, զաղթած Բաւարիայից և Շուաբիայից. շատ տեղերում մնացել էին և սլաւոններ. հարաւում դրանք բնակուած էին խիտ բազմութեամբ:

Մեծ մորաւական պետութեան անկումից յետոյ սլաւոնների լենարանը դարձաւ Միշին Եւրոպայում Բոհեմիայն: Սրա անկախութեան շատ նպաստեց իր լեռնաշղթաներով պատած դիրքը: Բոհեմացոյ կամ չեխերի դժբախտութիւնից կառավարական իշխանութիւնը բաժան բաժան էր եղած, ինչպէս լեհացոյց և ուսուց մէջ, բազմաթիւ մասնաւոր իշխանների մէջ, որոնք շարունակ միմեանց հետ ներքին կռիւներ էին մղում: Այս երկպառակութիւնները տկարացնում էին երկիրն և միջոց էին տալիս գերմանացոյ՝ խառնուելու չեխական գործերին: Փրանկոնեան և շուաբական կայսրների ժամանակ Բոհեմիան վասալական կախման մէջ էր կայսրութիւնից: Հենրիկոս Զ-ի մահն և ժ.Գ. դարու շրջութիւնները Գերմանիայում միջոց տուին բոհեմացոյ լաւացնելու իրենց դրութիւնը: Ստտուար Ա. քաղաւոր ճանաչուեցաւ 1203 թուին: Սրա թողած, Օտտուար Բ-ի ժամանակ Բոհեմիան հասաւ նշանաւոր բարեկեցութեան և զօրութեան: Սա լաւ զօրախումբ կազմեց, շատ խնամք էր տանում երկրագործութեան զարգացման և քաղաքների կառուցման վրայ: Սրա արքունիքի շքեղութիւնն ու փալն առիթ տուաւ գերմանացոյ մականուանելու սրան «Ասկէ թագաւոր»: Սա աշխատում էր ընկճելու չեխ ազնուականութեան անհնազան-

Բոհեմիա:

1203

դուրսիւնը, որ գերմանական ասպետներէն փոխ էր առել աւատական սովորութիւնները: Բայց նոյն իսկ ԺԳ. դարու շրջանը, որ չեխական թագաւորութիւնն այսպիսի քաղաքական զօրութեան հասցրեց, սկիզբը դրաւ նրա պատմութեան ամենից տխուր պայմաններէն մէկի: Բանն այն էր, որ թագաւորները գաղթեցրին Բոհեմիա բազմաթիւ գերմանացիներ, այս եկուորներն հողեր էին ստանում արտօնեալ պայմաններով և արագ հարստանում էին, յատկապէս գաղթեցին բազմաթիւ արհեստավորներ. մի ամբողջ շարք նոր հիմնուած քաղաքներ լցուեցան գերմանացի բնակիչներով: Գերմանացիների այս հոսանքի հետևանքն արտայայտուում է մինչև իսկ այսօր, որովհետև Բոհեմիայի բնակիչները կազմում են կարծես թէ երկու թշնամի բանակներ — չեխերի և գերմանացիոց:

Ռուզուֆ Հաբսբուրգ, Անիշխանութեան ժամանակ Գերմանիայի արևմուտքում և հարաւ արևմուտքում բանն հասաւ «բռնցի իրաւունքին»։ Իւրաքանչիւր ոք պաշտպանում էր իւր իրաւունքներն ոյժը ներածին չափ, իսկ թույլերի բանը վատ էր: Իշխաններն զգացին, որ անհրաժեշտ էր մի որ և է կարգ մտցնել գերմանական գործերի մէջ, և հոգալ, որ գոնէ մի թույլ դաշնակցութիւն էլ հաստատուի գերմանական երկրների մէջ: Պապի ազդեցութեան ներքոյ նրանք 1273 թուին քաղաւոր ընտրեցին մի գերեզ իշխան, որպէսզի միևնույնի համար վտանգաւոր չը դառնայ: Նրանց ընտրութիւնը կանգ առաւ Ռուզուֆ Հաբսբուրգ կոմսի վրայ, որ տէր էր մի քանի դղեակների Ելզասում և Զուիցերիայում: Նորընտիր թագաւորն երեւեցաւ գործնական մարդ. նա չէր լափըշտակում ընդարձակ ծրագիրներով, բայց լաւ էր ճանաչում իւր շահերն, և յամառութեամբ հետամուտ լինում դրանց: Նա չէր մտածում կայսրութեան մէջ

բարդուած պայմանների արմատական բարեփոխութեան մասին, այլ աւելի համեստ և հասանելի նպատակ դրաւ իրեն — տիրապետելու մի մեծ իշխանութեան, որ պէս զի առաջինը լինի իշխանների մէջ: Նա չը վախեցաւ իւր գործողութիւններն ուղղելու իշխաններից ամենահզօրի, չեխ Օտտոկարի դէմ: Այս փառահեղ թագաւորն ինքն էր ձգտում կայսերական թագին և արհամարհանքով վերաբերուեցաւ մի երկրորդական կոմսի ընտրութեան. նա չ'եկաւ Ռուզուֆին վասալական երդումն ուխտելու համար: Բայց Հաբսբուրգն օգուտ քաղեց այն դժգոհութիւնից, որ կար աւստրիական դքսութեան մէջ, որին տիրապետել էր Օտտոկարն, առանց որևէ դժուարութեան ոտքի հանեց չեխերի նախնի թշնամիների — հունգարացիներին, դրանց օգնութեամբ լաղթեց Օտտոկարին և իւրեց չեխերից իրենց ձեռք բերած աւստրիական երկրները:

(Ռուզուֆն անարգել մտաւ Աւստրիա եւ պաշարեց Վեննան Գաղաքն հաւատարիմ մնաց Օտտոկարին եւ արիւթեամբ յետ էր մղում յարձակումները: Դրա փոխարէն սակայն, չեխ ասպետները վրեժխնդիր եղաւ իւր քաղաւորից նրա խրատքների համար: Նրա թիկունքում ապստամբութիւն բռնկեց, ուստի եւ ստիպուեցաւ ինչ էլ որ լինի՝ հաշտուիլ Ռուզուֆի հետ. խաղաղութեան զինը գերմանական երկրներն էին — Աւստրիան, Շտիրիան եւ Կարինտեան: Մի անգամ էլ իւր ոյժերն հաւաքեց Օտտոկարն եւ փորձեց կորցրածը վերադարձնել: Գերմանացիք ու մահառներն յարձակուեցան նրա վրայ գերազանց ոյժերով Դիւրն Կրուտի մօտ: Երկար տեւեց յուսահատական կռիւը, ինքն Օտտոկարը քաջութեան հրաշքներ էր գործում, բայց դաւաճանութիւնը կրկին կորստի մատնեց նրան, պահեստի գնդի զօրավարը, փոխանակ թագաւորին օգնութեան հաւանելու, հեռացաւ ճակատամարտի դաշտից: Ինքն Օտտոկարն սպանուեցաւ եւ բոհեմական թագն անցաւ նրա որդի Վենցեսլաւ Բ. — ին):

Աւստրիական երկրների տիրապետութեամբ հաբսբուրգեան տունն այնքան զօրացաւ, որ գերմանացի իշխանների հետ լիբերալ բուրգերի»

խանները ոչ մի անգամից և շատ ակամայ թագաւոր ընտրեցին Ռուզուֆի որդուն, Ալբրեխտին: Սա ձգտում էր ընդլայնելու իւր կալուածները, միացնելով նրանց հետ Բոհեմիան և Մորաւիան ¹⁾, բայց զօրաւոր ընդդիմութեան պատահեց բոհեմացիների կողմից և բռնկած պատերազմի սկզբում սպանուեցաւ իւր ազգականներից մէկի ձեռքով: Թագաւոր ընտրուեցաւ կրկին մի հասարակ կոմս, Հենրիկոս Լիւքսեմբուրգցին, կրթութեամբ մի ֆրանսիացի: Սա հետեւեց Ռուզուֆ Հաբսբուրգի օրինակին և աշխատեց նախ և առաջ մի իշխանութիւն ձեռք ձգել: Այս բանը լաջողեցաւ նրան առանց դժուարութեան, շնորհիւ իւր որդու, Յովհաննի ամուսնութեան Վենցեսլաւ Գ-ի Եղիսաբէթ դստեր հետ: Բացի սրանից, Հենրիկոս Է-ը երազում էր Իսպանացի իշխելու վասիլէն. նա անցաւ Ալպեան լեռները, թագաւոր օծուեցաւ Հռովմում և մեծամեծ լոյսեր ծնեցրեց գիբելինեան կուսակցութեան սրտերում, բայց անակնունքի կերպով մեռաւ: Հաբսբուրգեան կուսակցութիւնը նրան լաջորդ ընտրեց Ֆրիդրիկոս Աւստրիացուն: Հաբսբուրգցիների հակառակ կուսակցութիւնն ընտրեց Բաւարիոյ գուքս Լուդովիկոսին: Սկսաւ ներքին պատերազմ, որի մէջ Լուդովիկոսը գերակշռութիւն ունեցաւ շնորհիւ լիւքսեմբուրգցիների աջակցութեան:

Ջուլիցերացոյց ապստամբութիւնը:

Սրան բախտը ձեռնտու եղաւ նոյն իսկ հաբսբուրգցիների բնիկ երկրներում: Ջուլիցերացի շինականները սիրով չէին հնազանդում իրենց կոմսերին. արդէն իսկ հոհեմաւորութենների ժամանակ և Ռուզուֆի մահուանից լետոյ փորձելէին աւատական լուծը թօթափելու և անմիջապէս կայսրութեան հպատակ դառնալու: Առանձնապէս լարուեցան յարաբերութիւնները, երբ կոմսերը դարձան հզօր աւստրիական դքսեր: Լուդովիկոս Բաւարացու պատերազմից ընդդէմ հաբսբուրգցիների, օ-

¹⁾ Այնտեղ վերջացել էր Պրժէմիսլովիչների հարստութիւնը:

գուտ քաղեցին երեք լեռնային կանտոնները—Ուրին, Շվիցն ու Ունտերվալդէնը, որպէս զի դաշնակցութիւն կազմեւ եւ հրաժարուին աւստրիական դիմելուն հնազանդելուց: Լուդովիկոսը չը դանդաղեց նրանց իւր հովանաւորութեան տակն առնելու: Ֆրիդրիկոս Աւստրիացու եղբայրը, Լէօպոլդը, բազմաթիւ զօրք գումարեց ապրստամբներին պատժելու համար, բայց Ջուլիցերացիք ջարդեցին նրա ասպետներին, Մորգարտէնի մօտ (1315):

1315

Այս ապստամբութեան պատմութիւնը զարդարուել է աւանդութիւններով: Պատմումն, որ աւստրիական դքսի ֆոխս (փոխարքան) Գեյսլերնեղում էր Ջուլիցերացոյց, սա զրկեց նրանց իրենց հին ազատութիւններից, դժգոհներին բանդ էր դնում ու պատժում: Մի անգամ հրամայեց նա ձողի գլխին մի գլխարկ ցցել, որ պիտի նշան համարուէր աւստրիական դքսի իշխանութեան, եւ ստիպում էր բոլոր անցորդներին գլուխ խոնարհել այդ գլխարկի առաջ: Մի գիւղացի, Վիլհելմ Տէլլ անունով, անցաւ այդ գլխարկի մօտով եւ հրաժարուեց գլուխ տալու: Գեյսլերն հրամայեց դրան կալանաւորել, բայց ապա առաջարկեց ազատութիւն, եթէ նա իւր նետաձգութեան մէջ ունեցած ճարտարութիւնը ցոյց կը տար—նետահար անելով իւր որդու գլխին դրուած խնձորը: Տէլլն յաղթական դուրս եկաւ այս սոսկալի փորձութիւնից—գնդակը նետահար արաւ խնձորը առանց որդուն գիպելու: Այսուամենայնիւ Գեյսլերն հրամայեց նրան չղթայել եւ տարաւ իւր հետ լճի վրայով, որ փակէ իւր գլխակի բանդում: Լիճն անցնելու ժամանակ սարսափելի փոթորիկ բարձրացաւ, եւ Տէլլի ձեռների կապանքն արձակեցին, որ նա ղէկը կառավարէ եւ փրկէ նաւակը: Տէլլը նաւակն ուղղեց դէպի ափը, դուրս թռաւ նաւակեց, լարեց իւր աղեղն ու նետահար սպանեց Գեյսլերին: Այս եղաւ ապստամբութեան նշան: Երեք կանտոնների գիւղացիք, Ռիւտլի հովտում ժողովուրդով, ուխտեցին չը լքանել միմեանց եւ պաշտպանել իրենց ազատութիւնը:

Աւանդութիւններ Ջուլիցերացոյց ապստամբութեան մասին:

Լուդովիկոս Բաւարացին հետեւում էր թէ լաֆն կայսեր Լուդովիկոս Բաւարացիին, Հենրիկոս Է-ի պէս, եւ թէ երբեք Բաւարացիին կըրների ձեռք բերելու քաղաքականութեան ինչպէս Ռուզուֆ Հաբսբուրգցին: Յովհաննէս ԻԲ. պապը վիրաւորուեցաւ նրա փորձերից գիբելինների կուսակցութիւնը ոտքի հանելու Լու-

բարգիւյրում եւ Տոսկանայում եւ յայտարարեց, որ գերմանական թագի թեկնածուները մէջ եղած վիճի վճռահատութիւնը պատկանում է պապական իշխանութեան։ Այն ժամանակ Լուդովիկոսն սկսաւ աջակցել պապից դժգոհ ֆրանկիսկեան կրօնաւորներին, եւ նրա արքունիքում հանդէս եկան քաղաքական հեղինակներ (օրինակ՝ Փարիզու համալսարանի դասախօս Մարսիլիոս Պալուաքին), որոնք ապացուցանում էին, որ թագաւորներն իրենց իշխանութիւնն ստանումն ժողովրդից, եւ ոչ թէ եկեղեցուց։ Լուդովիկոսը չը կարողացաւ ոչինչ ձեռնարկել Յովհաննէս ԻԲ-ի անձի դէմ, որ ապրում էր Աւինիօնում, բայց վճռեց պապական տիրապետութիւններին հարուած տալ Իտալիայում եւ մի քանի հարիւր գերմանացի ասպետներով անցաւ Ալպեան լեռնաշղթան։ Նա կարողացաւ հասնել մինչեւ Հռոմ, այնտեղ կայսերական թագն ստանալ քաղաքապետներից (սինդիկ), հրատարակել Յովհաննէս ԻԲ-ին դահաւէժ եւ մի ֆրանկիսկեան կրօնաւորի պապ հռչակել։ Յովհաննէս պապի պատկերն հանդիսով այրուեցաւ կայսեր ու ժողովրդի առաջ։ Բայց ոչինչ հաստատուն բանի չը հասաւ կայսրը։ Լուդովիկոսը միջոցներ չ'ունէր Իտալիայում հաստատուելու համար, եւ ստիպուեցաւ յետ դառնալ խայտառակ փոթկոտութեամբ։ Գերմանիայում նա շարունակ իր երկրներին էր միացնում զանազան իշխանութիւններ զրանց տէրերի մահուանից յետոյ. այսպէս միացրեց նա Ստորին Բաւարիան, Բրանդենբուրգը, Տիրոլն եւ Կարինտիան, վերջապէս նաեւ Հոլլանդիան։ Բախտը նրան երկար ժամանակ հովանաւորում էր Բոհեմական թագաւոր Յովհանը, լիւքսեմբուրգեան տան գլուխը, անտեղի կերպով խռոնուեցաւ հարիւրամեայ պատերազմին եւ սղանուեցաւ Կրէսիի ճակատամարտում։ Բայց Լուդովիկոսի ազահութիւնն այնպէս գրգռեց նրա դէմ իշխաններին, որ նրանք ապստամբեցան եւ թագաւոր ընտրեցին Կարլոս Դ-ին բոհեմական Յովհան թագաւորի որդուն։ Լուդովիկոսի կողմը շարունակեցին պահել քաղաքները, բայց նա մեռաւ նոյն իսկ պատերազմի սկզբում։

Վարլոս Դ. Լուդովիկոսի յաջորդ Վարլոս Դ. լիւքսեմբուրգեան տանից, մի խաղաղասէր ու լուսամիտ թագաւոր էր։ Գլխաւորապէս խնամք էր տանում նա Բոհեմեայի վրայ, որ նրա իմաստուն կառավարութեան ժամանակ դարձաւ միջին Եւրոպայի ամենից ծաղկեալ ու կրթուած

երկիրը։ Վարլոսը մեծ հոգս էր տանում երկրագործութեան բարւոքման ու երկրագործների բարօրութեան, արգելնագործութեան յառաջագիմութեան մասին. նրա ժամանակ գեղեցկացաւ Պրագա քաղաքը, իսկ նրա ամենագեղեցիկ զարդը դարձաւ հաւնաշատաւնը, որ հիմնուեցաւ 1348 թուին եւ գրաւեց բազմաթիւ ուսանողներ ոչ միայն Բոհեմիայից, այլ նաեւ Գերմանիայից ու Լեհաստանից։ Գերմանական թագաւորութեան ու կայսրութեան մասին եւ աշխատում էր նա, ինչքան որ հնարաւոր էր, թէպէտ եւ ընդարձակ բարեփոխութիւնների մասին չէր երազում։ Նրա միտքն էր—*«անալեզ ու անուսկեղեղ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները»*։ Այս նպատակով 1356 թուին, գլխաւոր իշխանների հետ բանակցելուց յետոյ, հրատարակուեցաւ «Ոսկե հրովարտակը»։ Սա որոշում էր ճշգրութեամբ կայսեր ընտրութեան կարգը։ Ընտրողներ (կուրֆիւրստ) էին եօթն իշխաններ. Մայնցի, Կէօլնի, Տրիրի արքեպիսկոպոսները, բոհեմական թագաւորը, սաքսոնական դուքսը (Վիտտենբերգի ճիւղի), հոենսոսեան պֆալցգրաֆն եւ Բրանդենբուրգի մարկգրաֆը։ Վճիռը կայանում էր ձայների մեծամասնութեամբ։ Վայսրենտիր իշխանները համարուում էին բարձրագոյն պալատական պաշտօնեաներ եւ կայսեր խորհրդականներ. զրանց թողնուած էին իրենց երկրներում բոլոր բարձրագոյն տիրապետական իրաւունքներն։¹⁾ Այս հրովարտակն աշխատում էր մասնաւոր պատերազմները սահմանափակել. վասսալները պէտք չէ գէնք բարձրացնէին իրենց տիրապետների դէմ, եւ պատերազմն օրինական էր համարուում միայն այն ժամանակ, եթէ հանդիսաւոր կերպով հրատարակուած էր սկսուելուց երեք օր առաջ։ Հրովարտակը քաղաք-

1348

1356

¹⁾ Մայնցի արքեպիսկոպոսը գերմանիոյ Դիւանապետն—կանցլերն էր, Կէօլնին Դատարար կանցլերը, Տրիրինը—արքեպիսկոպոսն, Բոհեմական թագաւորը մեծ մատուակն էր, պֆալցգրաֆը—սեղանապետը, սաքսոնական դուքսը—մարաջախտը, Բրանդենբուրգինը—անկողնապետը։

ների վերաբերութեամբ բարեհաճ չէր—արգելում էր
դրանց դաշնակցութիւն կապել միմիանց հետ:

Քաղաքների
դաշնակցու-
թիւնները իրենց այս հրովարտակով կաշկանդուած: Կայսրութիւնն
այնքան քիչ հովանաւորութիւն էր ցոյց տալիս դրանց
իշխանների ու ասպետների դէմ, որ դրանք վիճակներ
սեփական միջոցներով պաշտպանուել: Շուաքական
ֆաղափները դաշն կապեցին միմիանց հետ, որին մաս-
նակից եղան 89 քաղաք: Շուաքականների օրինակով
ծագեց հոնեկոստան ֆաղափների դաշնակցութիւնը, իսկ
յետոյ այս երկուսը պայման կապեցին միմիանց պաշտ-
պանելու: Այս ձևով կազմուեցաւ մի ազգեցիկ ոյժ, որ
ցոյց տուաւ իրեն ոչ միայն աննշան ասպետների դէմ
մանր կռիւներում, այլ նաեւ զօրեղ իշխանների դէմ
պատերազմներում:

Կարլոս Դ. կայսերական դործերին, որ ուղղակի իւր շա-
հերին չէին զիջում, անտարբերութեամբ էր վերաբերուում:
Այսպէս վերաբերուեցաւ նա, օրինակ, հրէաների ջարդին, որ
տեղի ունեցաւ նրա թագաւորութեան սկզբում: Հրէաներն
ապրում էին քաղաքների առանձին թաղերում, կրում էին յա-
տուկ զգեստ, իրաւունք չ'ունէին արուեստակցութիւնների մէջ
մտնելու եւ արուեստներով պարապելու: Նրանք բացառապէս
մանր առեւտրով էին ապրում եւ դրամ չահու տալով: Նրանց
ատում էին իրենց ազգային ու կրօնական առանձնայատկու-
թիւնների, վաշխառութեան պատճառով, մեղադրում էին դա-
նազան յանցանքներ բարդելով վրաները Քառասնական թուա-
կաններում կոտորածն սկսուեցաւ այն բանից, որ լուր տարա-
ծուեցաւ, թէ հրեայք թունաւորում են ջրհորների ջուրը: Արե-
ւելքից տարածուում է իտալիոյ եւ հարաւային Ֆրանսիոյ
վրայով ժանտախտը—«Սեւ մահն», որ ոչնչացրեց Եւրոպայի
բնակիչների կէսը: Խեղացնորում ժողովուրդն ամենից առաջ
յարձակուեցաւ հրէաների վրայ: Ե

Կարլոս Դ-ի մահուանից յետոյ, որ գոնէ մի որոշ
չափով կարգ էր կարողանում պահպանել, թագաւոր
դարձաւ նրա որդի Վենցեսլաւը: Կայսրութեան մեջ

բոլոր նշանակութիւն ունեցող մարդիկ աշխատում
էին ապահովել իրենց դաշնակցութիւններով: Քա-
ղաքների դաշնակցութեան իբրեւ հակակշիռ ասպետները
կոեցին իրենց դաշնակցութիւնը: Իշխանները նոյնպէս
զինուեցան քաղաքների դէմ, եւ սրանց բանը վատացաւ:
Վերամբերգի կոմսը ջարդեց շուաքական դաշնակցու-
թեան զօրքը, պիպլցգրաֆն յաղթանակեց հոնեկոստան
քաղաքների վրայ: Միմիայն գուլիցերական կանտոններն
էին, որ յաջողութեամբ էին գործում: Զէմպախի մօտ
նրանք ջնջեցին աւստրիական Լէօպոլդի զօրքը: Դուքսն
ինքը սպանուեցաւ: Գ. Ը. Ո.

Այս անկարգութեան մէջ Վենցեսլաւը կարող չե-
ղաւ ոչինչ անել, մինչդեռ նրան մեղադրում էին, որ
անգործ է նստած, եւ կայսրը նորից զրկեցին նրան
գերմանական գահից: Նա դեռ մի քանի տարի մնաց
Բոհեմիոյ թագաւոր, իսկ գերմանական գահն անցաւ
նրա եղբայր Սիգիզմունդին, որ արդէն հունգարացոյ
թագաւոր էր, շնորհիւ հունգարիոյ գահաժառանգու-
հու հետ ամուսնութեան: Բոլոր այս քաղաքական շփո-
թութիւններին միացաւ եւ կրօնական վրդովմունքը.
պապական գահի վրայ իրաւունք յայտնեցին երեք պապ—
մէկը Հռովմում, միւսն Ալեքսանդրում, երրորդն Սպա-
նիայում: «Մեծ հերձուածի» ազգեցութեան տակ մի
կուսակցութիւն կազմուեցաւ, որ եկեղեցու բարեփոխու-
թիւնն սկսաւ պահանջել, վերջապէս, Բոհեմիայում Յով-
հան Հուս քահանան սկսաւ մի քարոզութիւն, որ դէմ
էր նոյն իսկ կաթոլիկութեան, եւ ջերմ համակրութիւն
գտաւ չէխների մէջ: Սիգիզմունդը մեծ եկեղեցական ժո-
ղով գումարեց Կոնստանցում: Այս ժողովում գահվէժ
արին բոլոր երեք պապերին եւ ու դրանց փոխարէն
ընտրեցին մի չորրորդին. սահմանեցին մի քանի եկե-
ղեցական բարենորոգութիւններ ու ալրեցին Հուսին,
իբրեւ աղանդաւոր: Բայց դժուարութիւնները սրանով

չը բարձուեցան. Հուսի այրումն յառաջ բերաւ նրա հետեւողների ապստամբութիւնը Բոհեմիայում: Այս ապստամբութիւնը բացաւ իրեն իր նշանակալի պատճառներով, այլ նշանակալի էր յետեւի աշխարհաքաղաքական պայմաններով, որ գերմանական էր: Սիգիզմունդը, որ սկզբնապէս հուսեանների վրայ զիջողութեամբ էր նայում, այժմ պատերազմ սկսաւ նրանց դէմ և օգնութեան կանչեց Գերմանիային. բայց հենց այս ժամանակ երևան եկաւ կայսրութեան ողորմելի վիճակը: Հուսեանների զօրագլուխ Եան փիշկան Վիշգրադի մօտ ջարդեց նրա դէմ դուրս եկած խաչակիր զինուորութիւնը: Դալմաթիոյ մօտ նոյն ճակատագիրն ունեցաւ նոյն իսկ Սիգիզմունդի զօրքը: Իշխաններն ու քաղաքները վճռեցին օժանդակել կայսրը, բայց ոչ մի կերպ չը կարողացան համաձայնութեան գալ զօրքի պահպանութեան համար անելիք վճարքների մասին: Մեծ դժուարութեամբ, վերջապէս, զօրք կազմեցին, բայց այդ զօրքը ցրուեց իսկոյն հուսեանների մերձեցնալը տեսնելուն պէս: Այս բանը մի քանի անգամ կրկնուեցաւ: Բոլոր մեծ ճակատամարտներում չէին յաղթում էին գերմանացոյց, թէպէտ և փիշկան մեռել էր և նրա փոխարէն զօրագլուխ էին դարձել Պրոկոպները—Մեծն ու Փոքրը: Հուսեանները սակայն իրենք կորստի մատնեցին իրենց զօրքը: Նրանք կուսակցութեանց բաժանուեցան, սկսան վէճեր ծալրայեղների, մոլեռանդ Թաքոնիսների և չափաւոր կաշիկաւորների միջև: Սրանից օգուտ քաղեցին գերմանացիք և հոգեւորականութիւնը: Հաշտուեցան կաթոլիկոսների հետ, դրանից հետ կապեցին, այսպէս կոչուած Պրագայի կոնսակրացիոն (համաձայնութիւն), որոնց մէջ նրանց զիջումներ արին: Եւ այդ ժամանակ նոյն իսկ հուսեանների մէջ սկսաւ արեւնահեղ պատերազմ: Չեխական Բրոդի մօտ (1434) Թաքոնիսները բոլորովին ջարդուեցան, և ճակատամարտի մէջ

ընկաւ նրանց գլխաւոր զօրավար Մեծ Պրոկոպը: Սիգիզմունդի իշխանութիւնը վերահաստատուեցաւ մի ժամանակ ծաղկած, իսկ այժմ աւերակ դարձած Բոհեմիայում: Նա մեռաւ 1437 թուին որդիք չը թողնելով, նրա դուստրն ամուսնացած էր աւստրիական Ալբրէխտ դքսի հետ, որ այսպիսով դարձաւ թագաւոր Բոհեմիոյ և Հունգարիայի: Նրա անձի մէջ միացան հաքսբուրգեան եւ շիսբուրգեան հաքսբուրգեան զօրքերը: Սա շուտով մեռնելով՝ գերմանական թագն անցաւ նրա եղբայր Ֆրիդրիխ Գ-ին:

Ֆրիդրիխ Գ-ի կիսադարեան թագաւորութիւնը ֆրիդրիխ Գ-ի ցոյց տուաւ գերմանական պետական կազմութեան անբուժելի տկարութիւնը: Ֆրիդրիխոսն արշաւանք գործեց դեպի Իտալիա, կայսր օժուեցաւ Հռովմում, լանգոբարդեան թագաւոր պսակուեցաւ Միլանում: Բայց բոլոր այս տիտղոսները չ'աւելացրին նրա ոյժը:

Բուրգունդական դքսերը գրաւեցին Լիւքսեմբուրգն եւ Նիդերլանդական երկրներն. դանիական թագաւորը միացրեց իւր երկրին Շլէզվիգն ու Հոլշտայնը եւ հասաւ մինչ Համբուրգի ու Լիւբեկի դռների առաջ: Լեհերը, որ դեռ եւս Սիգիզմունդի ժամանակ կատարելապէս յաղթել էին տեւտոնական կարգին, տիրեցին արեւմտեան Պրուսիային եւ ստիպեցին դրանց ճանաչելու իրենց լեհական թագի վասսալ: Նոյն իսկ Հաբսբուրգների ու Լիւքսեմբուրգների բնիկ երկրներում Ֆրիդրիխոսի իշխանութիւնը տկարացել էր:

Չեխերն ու մաճառները չը կամեցան այլ ևս հրապտակել Հաբսբուրգներին: Բոհեմիայում թագաւոր ընտրուեցաւ Պոդեբրադի Գեորգի զօրավարը, Հունգարիայում—Մատվէյ Կորվինը, սրանք երկուսն էլ նշանաւոր զօրավարներ ու եռանդուն գործիչներ էին. Գեորգին, հուսեանների համոզմամբ թագն ստացաւ կաթոլիկ եպիսկոպոսների ձեռքից, որպէս զի ցոյց տայ, թէ ինքն ամենից առաջ ցանկանում է հաշտեցնել թշնամի կուսակցութիւնները: Այս բանս դիւրին չէր, որովհետեւ

պապերն սկսան այդ ժամանակ պահանջել Բոհեմիայի կա-
տարեալ դարձը դէպի կաթողիկոսութիւնն և կոմպակտա-
ների ջնջումը: Հռովմի պապական արքունիքը Պողի-
բորադին հերետիկոս հռչակեց և Բոհեմիայի վրայ յարձա-
կուեցան բոլոր նրա դրացիք: Կորվինը կարողացել էր
տիրել Պրագային, բայց Պողիբորադը չը շուտեցաւ, կա-
րողացաւ կազմակերպել չեխ ժողովրդի ուժերն և նա-
խապատրաստեց մաճառների վաճառումը Բոհեմիայից: Այս
գործն աւարտեց նրա յաջորդ Վլադիսլաւ Լեհացին: Կոր-
վինի ծրագրերը Բոհեմիայի վերաբերութեամբ չը յաջո-
ղուեցան, բայց նա իւր ձեռքին պահեց Մորաւիան և
Շլէզիան, իսկ Ֆրիդրիկոս Գ-ից խլեց Աւստրիան, Շտի-
րիան և Կարինտիան ու իւր մայրաքաղաքը փոխադրեց
Պեշտից Վեննա: Ֆրիդրիկոս Գ. հասաւ կատարեալ ա-
նարգութեան: Նրան փրկեցին իւր թշնամիների սխալ-
ներն և իւր որդի Մաքսիմիլեանի քաջութիւնը:

Բուրգունդական դուքս Կարլոս Համարձակը, որ
միաժամանակ սպառնում էր Ֆրանսիացոյ թագաւորին
ու գերմանացոյ կայսեր, սպանուեցաւ իւր ապստամբ
հպատակների դէմ վարած կռուում: Զուլիցերական հե-
տեակազօրը մի քանի անգամ յաղթեց նրա զօրքին, իսկ
երբ Կարլոսն երևեցաւ Լոթրինգիայում, որպէս զի այն-
տեղ ընկճէ ապստամբութիւնը, այն ժամանակ Նանսիի
մօտ ջարդուեցաւ և սպանուեցաւ զուլիցերական վարձ-
կան զօրքի դէմ տրուած ճակատամարտում: Նրանից
յետոյ մնաց նրա դուստր Մարիան, որ ամուսնացաւ
Մաքսիմիլեան Հաբսբուրգի հետ: Լուդովիկոս ԺԱ. տի-
րեց բուրգունդական երկրի մի մասին, բայց Մաքսի-
միլեանն յաղթեց Ֆրանսիացոյ ու պահպանեց Նիդեր-
լանդիան: Արևելքում Մատվէյ Կորվինի մահն ազատեց
կայսեր ամենավտանգաւոր թշնամուց: Հունգարիայում
սկսուեցան ներքին կռիւներ թագի համար, և Մաքսի-
միլեանն օգուտ քաղեց դրանցից, աւստրիական երկրը-
ներն յետ խլելու համար:

Շնորհիւ Մաքսիմիլիանի արիագործութիւննե-
րին, Հաբսբուրգների իշխանական գորութիւնը վե-
րականգնեցաւ: Երբ նա կայսր դարձաւ (1493—1519),
ժողովուրդը մեծ յոյսեր դրաւ նրա վրայ—կարծում էին,
թէ նա կարող կը լինի կայսրութիւնը վերակազմել,
կարգ հաստատել նրա մէջ, դարձնել Ֆրանսիայի կամ
Անգլիայի նման մի պետութիւն: Այս յոյսերը զուր
անցան, թէպէտ և մի քանի անգամ քաղեկոսութիւն-
ների փոխման եղան Մաքսիմիլեանի ժամանակ: Իշխան-
ներն ու քաղաքները համաձայնեցին կայսր հարկ վը-
ճարել կայսրութեան կարիքների համար, բայց այդ
հարկն հաւաքելն անհնարին եղաւ: Հիմնուեցաւ դա-
սարան զանազան երկրների կառավարութեանց մէջ ծա-
գած վեճերը վճռելու համար, բայց դրա վճիռներին
չէին լսում. վերջապէս, կայսրութիւնը բաժանուեցաւ
սաւն շրջանների, և ամէն մէկի մէջ նշանակուեցան
առանձին խաղաղութեան վերահսկիչներ իշխաններից.
բայց այդ իշխանները քիչ էին հոգում կայսրութեան
շահերի մասին և գերադասում էին իրենց անձնական
գործերը սարքելն: Այսպէս, Գերմանիան դուրս եկաւ
միջին դարերից բաժան բաժան եղած և տկար, թէ-
պէտ և ընդարձակ տարածութիւն էր գրաւում, ունէր
բազմաթիւ, աշխատասէր ու պատերազմիկ ժողովուրդ:
Ժողովուրդն և կառավարութիւնները չափազանց լայ-
նածաւալ նպատակներ էին դնում իրենց: Սլաւոնները
յետ մղուեցան ու գերմանացի դարձուեցան հիւսիս-
արևելքում, յաղթուեցան ու կայսրութեան հետ միա-
ցուեցան հարաւ-արևելքում. մի ժամանակ կարելի էր
մտածել որ Փրանսիայի արևելեկան մասը—բուր-
գունդեան երկրները—նոյնպէս կը միանան Գերմանիայի
հետ. Իսպանիայում դարերով կռիւ էր մղուում, ու փոր-
ձեր էին լինում հաստատելու գերմանացի կայսրների
իշխանութիւնը: Եւ այս չափազանց մեծ ճիգերի մէջ

Մաքսիմի-
լիան
1493—1519.

աչքաթող արուեցաւ ամենից էականն ու մերձաւորը—
չը կազմուեցաւ մի ազգային միութիւն ու պետութիւն։
Երկիրը բաժանուեցաւ բազմաթիւ նահանգների, ո-
րոնք թշնամաբար էին վարուում միմեանց հետ, ի-
րենց երկպառակութիւններով առիթ էին տալիս օ-
տարազգիների միջամտութեան, եւ ամէն մէկն իւր
կառնեցածին պէս էր կարգադրում ներքին գործերը։

ԳԼՈՒԽ Զ.

ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՆ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Դանիան, Նորվեգիան եւ Շուեդիան ունին դերմանական
ցեղի բնակիչներ, որ ազգակից են գոթերին։ Սլաւոնների (Վէն-
գերի) շարժումը գէպի Բալթեան ծովը բաժանեց այս ազգերը
գերմանացիներից եւ առաջ բերաւ մի յատուկ սկանդինաւեան
խումբ ցեղերի, որ նուաճեց Սկանդինաւեան թերակղզու ֆին-
ներին եւ լապլանդացոց, իսկ ապա տարածուեցաւ Իսլանդիա-
յում եւ Գրէնլանդիայում եւ արշաւանքներ էր գործում եւրո-
պական երկրների վրայ։

Վիկինգների արշաւանքների ժամանակ սկանդինաւեան
երկրները չէին կարող որեւէ հաստատուն վիճակ ստեղծել։
Մարդոց խմբերը նաւում էին հեռաւոր ծովեր, իսկ հայրենի-
քում երբեմն մի, երբեմն միւս երկիրն էր բարձրանում ու դո-
րանում։ Յարաբերութիւնը ֆրիստնեայ արեւմտեայ հետ, մա-
նաւանդ Անգլիոյ հետ, այսուամենայնիւ իր ազգացութիւնը
գործեց. բախտաբանդիրները վերադառնում էին արշաւանքնե-
րից հայրենիք ոչ միայն թանկագին իրերով, զրամով, կարա-
սիքով, որ ձեռք էին բերել հարաւարեւմտեան երկրներում,—
նրանք ընդհարուում էին քրիստոնէութեան հետ եւ թէպէտ
դանդաղ, բայց դարձեալ ներշնչուում էին դրանից։

Դանիա:

Քրիստոնէութեան տարածման եւ Անգլիայում հաստա-
տուն բնակչութիւնների ձգելու հետ միասին փորձեր եղան մի
քանի ցեղապետների կողմից թագաւորական իշխանութիւն
հաստատելու եւ հիւսիսային երկրները միացնելով մի թագաւո-
րութիւն կազմելու։ Կանուտ Մեծը մի կարճ ժամանակով հա-
սաւ այս նպատակներին (1017—1035)։ Նա իւր իշխանութեան

տակ միացրեց Անգլիան, Դանիան եւ Նորվեգիան։ Նպաստեց
քրիստոնէութեան տարածման սկանդինաւեան կոպալաշտների
մէջ։ Նրա մահուանից յետոյ տէրութիւնը բաժան բաժան եղաւ։
Դանիայում, Նորվեգիայում եւ Շուեդիայում կազմուեցան ինք-
նուրոյն պետութիւններ, որոնցից դանիականն ամենից փառա-
ւորն ու հզօրն երեւեցաւ։ Տասնեւերեքերորդ դարու սզբից դա-
նիական թագաւոր Վալդէմար Բ. օգուտ քաղեց գերմանական
երկպառակութիւններից, իւր իշխանութիւնը Հիւսիսային եւ
Բալթեան ծովերի հարաւային ափերի վրայ տարածելու համար։
Նա տիրեց Բալթեան ծովափի հարաւային ու արեւելեան եր-
կրներին եւ Էստլանդիայում հիմնեց Ռեւել քաղաքը։ Բայց
նրա գործութիւնը հաստատ չէր. նա գերի ընկաւ մեկլենբուր-
գեան կոմսերից մէկի ձեռքը, եւ այդ ժամանակից սկսուեցան
անյաջողութիւններն։ Վալդէմար Բ.-ի մահուանից յետոյ որդիքը
նրա տէրութիւնը բաժնեցին իրենց մէջ։ Դանիան մի անգամ
եւս հզօր պետութիւն դարձաւ Վալդէմար Գ.-ի ժամանակ,
Ժ.Դ. դարու կիսին։ Այս թագաւորի պատմութիւնը բաւական
նման է Վալդէմար Բ.-ի պատմութեան։ Սկզբում նա յաջողակ
էր գործում, եւ նրա յաջողութիւնների գլխաւոր պատճառը
Գերմանիոյ քայքայումն էր։ Կայսերական կառավարութիւնը
Կարլոս Գ.-ի ժամանակ չէ համարձակուում ընդարձակ ձեռ-
նարկութիւնների դիմելու, իսկ զանազան երկրների ներքին
գործերին թոյլ էին տալիս իրենց ընթացքով գնալու։ Օգուտ
քաղելով սրանից, Վալդէմար Գ. նեղը ձգեց Հանզան, մի քանի
անգամ յաղթեց նրա նաւատորմին, կործանեց նրա գլխաւոր
զրահանակներից մէկը—Գոտլանդ կղզում։ Բայց այս անյա-
ջողութիւններն ստիպեցին Հանզեան դաշնակցութեան աւելի
սերտ միանալու եւ կենտրոնացնելու իր ուժերը թշնամու-
ղէմ։ Հանզայի հետ միացան Շուեդիան ու Նորվեգիան, որոնք
նոյնպէս վնաս էին կրել Վալդէմարի աշխարհակալութիւններից։
Դաշնակիցներն երկու անգամ առան Կոպէնհագէնը, Վալդէմարը
փախաւ Դանիայից, իսկ պետական խորհուրդը, որ նրա բա-
ցակալութեան ժամանակ ստանձնել էր կառավարութիւնը,
ստիպուած եղաւ խայտառակ հաշտութիւն ստորագրելու, որով
Հանզան միջոց ստացաւ խառնուելու Դանիոյ ներքին գործե-
րին եւ օգտուելու նրա նահանգների եկամուտներից։

Շուտով Վալդէմար Գ.-ի անկումից յետոյ երեք երկրների ղեկավարող մարդիկ փորձ արին միացնելու այս երեք պետու-
թիւններն եւ կազմելու մի դաշնակից պետութիւն։ Այսպէս կո-

Միութիւն

1397

չուած Կալմարեան միութիւնը կամ Ունիան տեղի ունեցաւ 1397 թուին, սրա համաձայն Վալդէմար Դ-ի դուստր Մարգարիտան եւ նրա եղբորորդի Էրիկը ճանաչուեցան Դանիայի, Շուեդիայի եւ Նորվեգիայի միացեալ քաղաքապետութիւններ պէտք: Թագաւորութիւններից իւրաքանչիւրը պահպանում էր իւր ինքնուրուիւնն եւ յատկական հաստատութիւնները, բայց ունիան ապահովում էր նրանց համաձայն գործունէութիւնը միւս պետութիւնների վերաբերութեամբ: Ունիան չը բերաւ սպասուած օգուտը, որովհետեւ միացած ազգերը սովոր էին միասին գործելու, եւ առանձնապէս չուեղները զժգոհ էին թագաւորներից ու նրանց դանիացի պաշտօնեաներից: Այսուհետեւ մենայնիւ սկանդինաւեան թագաւորութեանց միացումն ունեցաւ մի շատ էական հետեւանք. Ժե. դարու վերջին Քրիստիան Ա. միացրեց Դանիային Շվեդիային ու Հոլշտայնը եւ վախճան տուաւ Հանդայի գերակշռութեան Բալթիան ծովի վրայ:

Սկանդինաւեան տէրութիւնների ներքին կազմութիւնը նրանով էր որոշուում, որ դրանք քիչ էին ենթարկուած աւատականութեան ազդեցութեան, քան թէ հարաւարեւմտեան Եւրոպայի երկրները: Այնուհանդերձ շատ ազգայնաբարձրութեան հասաւ մի միայն Դանիայում, եւ ամեն տեղ մնաց բազմաթիւ ազգաց գիւղացի դասակարգ: Շուեդիայում եւ Նորվեգիայում այս դասակարգը մասնակցութեան իրաւունք ստացաւ նոյն իսկ պետական դասակարգերի ժողովներում:

ԳԼՈՒԽ Է.

ԼԵՀԱՍՏԱՆ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԻԱ.

Լեհական տէրութեան կազմութիւնը:

Արեւմտեան սլաւ ցեղերը, շփուելով գերմանացոց հետ, աստիճանաբար ընկան նրանց ազդեցութեան տակ կամ թէ չէ նուաճուեցան նրանցից: Երկու տեղում սակայն կազմուեցան հզօր տէրութիւններ, որոնք յաջողութեամբ դէմ դրին գերմանական արշաւանքին: Բոհեմիայի լեռնային քառանկիւնու մէջ ամրացաւ չեխական ազգը, որ, իրաւ է, գերմանական կայսրութեան մասը կազմեց, բայց պահպանեց իւր առանձնութիւնները լեզուի, իրաւունքի եւ հաստատութիւնների մէջ: Մի

գերմանացիներից քիչ հեռու ծագեց լեհական տէրութիւնը: Լեհերը բնական կերպով պաշտպանուած էին լեռնային շղթաներով, որոնցից օգտուում էին չեխերը: Նրանք ապրում էին Օդեր ու Վիսլա գետերի վտակների եզերքներին, անտառապատ եւ ջրաբեր հարթութեան վրայ: Աշխարհագրական դիրքի յատկութիւնն արգելում էր նրանց ցեղերին կենտրոնանալ եւ առանձնանալ, բայց քառեայնոց էր քնակիչների տեղադրութիւնների եւ դրացոց վրայ յարձակուելու համար:

Լեհական գլխաւոր ցեղն ապրում էր Ժ. դարում Վարտայի ընթացքի վրայ, որ Օդերի մի վտակն է. այս երկիրն ապա սկսաւ կոչուիլ Մեծ Լեհաստան (Պոզնանիա). արեւելքից բաժանում էր դրան Լիթուանիայից Մազովիան, Վեսլա գետի միջին հոսանքի վրայ, դէպի հարաւ մինչեւ Կարպատները ձգուում էր Վիսլայի ընթացքով Փոքր Լեհաստանը, դէպի հարաւ-արեւմուտք, Օդերի վերին ընթացքով—Շվեդիան: Սկզբում լեհերը բաժանուում էին ցեղերի ու տոհմերի, որոնց կառավարում էր համայնքի ժողովը: Առաջին անգամ զինուորական առաջնորդներ, մեծ իրաւունքներով իշխաններ, երեւցան Մեծ Լեհաստանում, այնտեղ հաստատուեցաւ մերձաւորապէս Ժ. դարում Պետտերի իշխանական տունը: Մեծ իրողութիւն էր քրիստոնէութեան ընդունելութիւնը, որ տեղի ունեցաւ 966 թուին: Իշխան Մէշկօ (Մեչեսլաւ) ամուսնացաւ չեխական իշխանի դստեր հետ եւ դրա ազդեցութեան տակ մկրտուեցաւ եւ հիմնեց մի եպիսկոպոսութիւն Պոզնանում: Շնորհիւ այս հանգամանքի, լեհերն իրենց պատմութեան հետքը սկզբում բոլորի կոապաշտութիւնը, որին հաւատարիմ էին մնում բալթեան սլաւոնները:

Արդէն իսկ Մէշկօյի ժամանակ Պետտերի իշխան Բուխլաւ Ա. նուիրելով սկսաւ զօրանալ ի հաշիւ դրացիների, իսկ նրա որդի Բուխլաւ Ա. Արիաօրտի ժամանակ դա դար-

ձաւ գլխաւոր սլաւ տէրութիւնը: Բոլեսլաւը միացրեց իւր իշխանութեան տակ ոչ միայն բոլոր լեհ ցեղերին, այլ գրաւեց և Մորաւիան, հպատակեցրեց լիտւիներին և պոմմերանցոց, լեհերի համար ճանապարհ բաց արաւ դէպի Բալթեան ծովը. Վիսլա գետի ընթացքով, ընկճեց կռապաշտ պրուսներին; խլեց գերմանացիներից մայսենեան սահմանադաւառը, խլեց ռուսներից Կարմիր Ռուսիան և, օգուտ քաղելով Եարոսլաւի ու Սվեստոպոլի երկպառակութիւնից, մտաւ Կիւեւ:

Բոլեսլաւի ամենավտանգաւոր թշնամիք գերմանացիքն էին, որոնք Հենրիկոս Ա-ի և Ոթոն Մեծի ժամանակ քիչ մնաց, որ տիրեն Օդերի երկու ափերին: Բոլեսլաւը նրանց յետ մղեց և չը նայելով դրան, կարողացաւ Ոթոն Գ. կայսեր համակրութիւնը գրաւել: Ոթոնը մինչև իսկ ալցելեց Բոլեսլաւին Գնէզնում և երկրպագութիւն արաւ այնտեղ սուրբ Աղալբերտի նըշխարներին, որ լեհական իշխանը ձեռք էր բերել պրուսներից: Կայսեր ազդեցութեամբ Սիլվեստր Բ. պապը համաձայնեց Գնէզնում արքեպիսկոպոսութիւն հիմնելու, որ դարձել էր լեհական երկրների մայրաքաղաքը: Այս բանն ազատում էր շեհ հոգեւորականութիւնը Մագդեբուրգի գեղմանական աբեպիսկոպոսի ազդեցութիւնից: Ոթոն Գ-ի յաջորդ Հենրիկոս Բ. աւելի լաւ էր հասկանում Բոլեսլաւի զօրանալու վտանգը Գերմանիոյ համար և մի խիստ պատերազմ սկսաւ Լեհաստանի դէմ: Չընայելով որ գերմանացիք բազմաթիւ էին, Բոլեսլաւը քաջութեամբ էր պաշտպանում իւր երկրները: Նրա զօրքը մի առ ժամանակ մնաց ամրոցներում, բայց երբ գերմանացիք սակաւաբնակ ու վայրենի երկրում անօգուտ կերպով երկար թափառելուց յետոյ վերադառնում էին, լեհական զինքերը նրանց մի վայրկեան անգամ հանգիստ չէին տալիս, և երբեմն գերմանացոց նահանջը պարտութեան էր փոխուում: Այս արշաւանք-

ներից յոգնած՝ Հենրիկոս Բ. խաղաղութիւն հաստատեց, վերջապէս, Բուզիշինում (Բուուցէն) 1018 թուին: Բոլեսլաւն հրաժարուեցաւ Բոհեմիայից ու Մայսենից, բայց պահեց Մորաւիան, լուծիչեան երկիրն և բալթեան սլաւների գլխաւորութիւնը: Մահուանից առաջ, 1024 թուին, Բոլեսլաւը թագաւոր տիտղոսն ընդունեց:

Բոլեսլաւը չէր համարի այդպիսի յաջողութեանց, եթէ հուգացած չըլինէր ներքին կարգի մասին իւր տէրութեան մէջ. Դա բաղկացած էր առանձին երկրներից, որոնք կապուած էին միմիանց հետ լոկ նրա իշխանութեամբ: Նա ամենից առաջ զինուորական առաջնորդ էր, և իւր արշաւանքների համար հեծելազունք էր ժողովում, որ սպառազինուած էր և կրթուած գերմանացի ասպետների պէս, բայց աւելի ևս աչքի էր ընկնում իւր թեթեւաշարժութեամբ: Այս հեծելազունքը բնականում էր թագաւորի զղեակների մէջ, ստանում էր նրանից իւր սպառազինութիւնը, սնունդ և ռոճիկ: Դղեակի մէջ իշխում և հրամայում էր զինուորական զնդին «կաշտեկանը»: Ժողովուրդը պարտական էր տալու ամեն տեսակ բերք թագաւորի, նրա արքունեաց և զօրքի պահպանութեան համար. այսպէս, մատակարարում էին հաց, մեղր, և կենդանիք: Դատական գործերը վճռուում էին առաջուան պէս ցեղայական ձեռքով և համայնական ժողովներում, բայց գլխաւորագոյն գործերը թագաւորն ենթարկեց իւր անձնական դատաստանին: Իշխանական ընտանիքները, որոնք առաջ կառավարում էին առանձին գաւառները, կորցրին իրենց իշխանական իրաւունքը, բայց պահեցին ընդարձակ կալուածներ, համարուում էին ազնուականներ և պահում էին իրենց մօտ զօրագնդեր:

Բոլեսլաւի մահուանից յետոյ տեղի ունեցաւ յետա-լեհաստանի շրջումն, այսինքն յետագէմ շարժողութիւն: Ժողովուրդը չը ներշնչուեցաւ բոլորովին քրիստոնէական կրօնով, և սկսաւ վերադառնալ կռապաշտութեան, այլում էր եկեղեցիները, կոտորում քահանաներին. բացի դրանից, այն տարբեր երկիրները, որ միացրել էր Բոլեսլաւը, սկսան բաժանուիլ. դրանց իշխանական ցեղե-

ըր փորձեցին նախկին իրաւունքները ձեռք բերել: Բոլետաւ Արիասրտի պետութեան իսկական վերականգնողն եղաւ Բոլետաւ Գ. Ծռաբերանը († 1139): Սա ոչ միայն ընկճեց երկպառակութիւնները լեհական երկրներում, այլ նաեւ յաջողութեամբ գործեց գերմանացիների դէմ և լետ մղեց Հենրիկոս Ե-ի յարձակումը:

Լեհաստանն այդ ժամանակ մեծ յառաջադիմութիւն աւրաւ անտեսական կողմով. երկրագործութիւնը տարածուեցաւ եւ կատարելագործուեցաւ, յատկապէս չնորհիւ կիստերսական վանքերի հիմնարկութեան, որոնք կտրատում էին անտառները եւ ցամաքացնում ճահիճները: Առեւտուրը աշխուժացաւ չնորհիւ այն հանգամանքի, որ ծովեզերքի տիրապետութիւնն ապրանքների համար ճանապարհ բաց արաւ Օդեր գետի վրայով դէպի Բալթիան ծովը: Այս ճանապարհը խաչաձեւ կտրում էր մի ուրիշը, Կրակով եւ Վրոցլաւ (Բրեսլաւ) քաղաքների վրայով, որով կատարուում էր ապրանքների փոխանակութիւնը Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ:

Իւր մահուանից առաջ Բոլետաւ Ծռաբերանը բաժանեց պետութիւնը որդոց մէջ: Սրանցից իւրաքանչիւրը մասն ստացաւ գլխաւոր նահանգներից մէկն և ալսու կրկին տեղի ունեցաւ երկրի քաժանուռնը, որ այնքան մեծ վնաս բերաւ Բոլետաւ Արիասրտի մահուանից յետոյ: Իրաւէ, այս աշխարհաբաժինների գլուխ էին կանգնած ոչ եթէ հին ցեղերի իշխանները, այլ թագաւորական տան անդամները— Պեաստերը: Այս հանգամանքը չէր արգելում նրանց սակայն կատաղի ներքին կռիւներ մղելու միմիանց դէմ, որոնք տկարացնում էին Լեհաստանը համեմատութեամբ իւր դրացիների, իսկ երկրի ներսը նպաստում էին պաների կամ ալսպէս կոչուած մոժմոյշադսովանների դասակարգի բարձրանալուն: Այս ագնուականութիւնը բաղկանում էր մասամբ իշխանական ցեղերի սերնդից, որոնք մի ժամանակ կառավարում էին լեհական ցեղերն ու երկրները, մասամբ և քարձր հոգեւորականներից եւ քաղաւ-

րական կառաւարութեան պաշտօնակերից, դրանց յարում էին, վերջապէս, եկեղեցական նուիրապետութեան քարձր ներկայացուցիչները— եպիսկոպոսներն ու աբբաները:

Արտաքին գործերը չէին կարող լաւ ընթանալ այս ներքին երկպառակութիւնների ժամանակ: ԺԲ. դարու երկրորդ կէսն և ամբողջ ԺԳ. դարը նշանաւոր եղան գերմանացոց յառաջադիմութեամբ արեւմտեան սլաւների մէջ: Այդ ժամանակ Հենրիկոս Առեւտարտը նուաճեց օբոգրիտներին, պոմերանացոց, բրանդենբուրգեան սահմանազաւաւը կազմուեցաւ լիտւինների երկրում, տւտոնական կարգը նուաճեց Վիսլայ գետի ստորին հոսանքն և յառաջացաւ մինչև Օդեր: Լեհացիք կարող չեղան շարունակել Բոլետաւ Արիասրտի և Բոլետաւ Ծռաբերանի գործը, իսկ արեւելիկոզից երևան եկաւ մի սոսկալի վտանգ: Մոնգոլների արշաւանքը, որ աւերեց ռուսական Կիևի իշխանութիւնը, հասաւ և Լեհաստանին: Մոնգոլները 1241 թուականին երկու անգամ յաղթեցին լեհացի ասպետներին և հասան մինչև Շլէզիա, իսկ ապա լետ դարձան, տանելով իրանց հետ անհամար գերի և աւար: Այլ ևս շատ անգամ յարձակուեցան նոքա լեհական երկրների վրայ, բայց Ռուսիային տիրելուց յետոյ տկարացել էր նրանց յարձակման թափն և լեհացիք ազատուեցան նրանցից միայն կոդպսուելով:

Այս թշուառութեան շրջանում դէպի Լեհաստան գիմեցին գերմանացի գաղթականները: Իշխանները դրանց ընդունում էին սիրով, որովհետեւ դրանք լաւ մշակներ էին, ներմուծում էին երկրագործութեան կատարելագործութեամբ եղանակներ, տարածում արուեստ և առեւտուր: Գերմանացիք բնակութիւն էին հաստատում ամբողջ խմբերով և կազմում գիւղական ու քաղաքային համայնքներ, որոնց ներքին կազմը նման էր գերմա-

գերմանական գաղթի ներքին հաստատումը

նական քաղաքների կազմութեան: Լեհաստանում տա-
րածուեցաւ մանաւանդ «Մագդեբուրգեան» իրաւունքը,
այսինքն Սաքսոնիայի Մագդեբուրգ քաղաքի օրէնքնե-
րն ու հաստատութիւնները: Քաղաքի բոլոր գործերը
կառավարում էին «խորհրդարանները», իսկ դատում-
էին ընտրեալ դատաւորները (շառնիկները): Թէ խոր-
հրդարանի անդամներին և թէ դատաւորներին ընտ-
րում էին քաղաքացիք: Շինական կազմակերպութիւնն
աւելի պարզ էր, նոյն դատաւորները կամ լաւնիկները,
որոնց ձեռքին էր դատաստանը, տնօրինում էին և վար-
չական գործերը, լաւնիկներին ընտրում էր շինական
համայնքը («գմիկնալ», գերմաներէն Gemeinde--բառից):
Այս կազմակերպութիւնն այնպիսի առաւելութիւններ
ունէր Լեհական պաների ու դրանց գործակատարների
կալարութիւնից, որ բնիկ լեհացիք սկսեցին բազմու-
թեամբ տեղափոխուիլ գերմանական քաղաքներն ու հա-
մայնքները: Գաղթականութիւնն յատկապէս զօրացաւ
թաթարական արշաւանքից յետոյ: Բացի գերմանացիներ-
ից Լեհաստան սկսան գաղթել և հրէաները (և հայք),
որոնք առաւելապէս բնակուում էին քաղաքներում ու
աւաններում: Նոր բնակիչների այս հոսանքը միջոց
տուաւ յրացնելու աշխարհին, որ առաջ էր բերել մոն-
ղոլական արշաւանքը, և օժանդակեց արգիւնաբերու-
թեան յառաջագիծութեան, բայց ներմուծեց երկիրն
օտար տարր, որ հաւատարիմ էր մնում իւր առանձնա-
յատկութիւններին, չէր ձուլուում բնիկների հետ, և
բարձրից էր նայում դրանց վրայ: Միւս կողմից գերմա-
նական քաղաքակրթութիւնը զօրաւոր ազդեցութիւն էր
ունենում լեհական հասարակութեան բարձր գասակար-
գերի և նոյն իսկ իշխանների վրայ. յատկապէս գերմա-
նացաւ Շլէզիան: Ասպիտով կուտակուեցան շատ անբա-
րեւալատեհ հանգամանքներ, որոնք բաժան-բաժան արին
և տկարացրին լեհական ժողովուրդը: Պրանց հակակը-

ռելու համար անհրաժեշտ էր մի և զօրեղ պետական իշ-
խանութիւն: Տէրութեան մասերը միացնելու յաջողուեցաւ
վերջապէս մանր իշխաններից մէկը, Վլադիսլաւ Բ. Լո-
կոտոկը (1306): Սա անմիջապէս զգալ տուաւ պաներին
և գերմանացոյց, որ թույլ չի տալ կամայական վարմունք:
Զօրեղ ազդեցութիւն գործեց նրա վարմունքը Կրակով
քաղաքի հետ, որի գերմանացի բնակիչները գաշնակցու-
թեամբ իրենց եպիսկոպոսի և մասնական իշխաններից
մէկի ապստամբեցան: Լոկոտոկի զօրքը քաղաքն առնե-
լով կոտորեց բնակիչներին և ապա գլխատուեցան կեն-
դանի մնացած ապստամբութեան հեղինակները: Ընկճե-
լով գերմանացիներին պետութեան ներսը, Լոկոտոկը
դրանց զսպում էր և դուրսը— նա անխոնջ պատերազմ
էր վարում տետոնական կարգի դէմ:

1306

Լոկոտոկի որդի Կազիմիր Գ. Մեծը (1333—1370)<sup>Կազիմիր Գ.
Մեծը,
1333—1370</sup> կարողացաւ օգուտ քաղել իւր հօր աշխատանքից ու
յաղթութիւններից և զբաղուիլ աւելի բարդ խնդիրնե-
րով: Սրա թագաւորութեան գլխաւոր նպատակն եղաւ
մերձեցնել Լեհաստանն արեւմտեան պետութիւններին:
Քինուորական յաջողութիւնները նրա համար երկրոր-
դական նշանակութիւն ունէին: Արեւմտեան զրացիների
հետ նա աշխատում էր խաղաղութեան և համաձայնու-
թեան մէջ ապրել, և հրաժարուեցաւ Լոկոտոկի դէպի
գերմանացիքն և չեխերն թշնամական քաղաքականու-
թիւնից: Լեհաստանի գիւնուորական ոյժն ուղղեց նա
դէպի արեւելք— Գալիցեան և Վալիւեան իշխանութիւն-
ների նուաճումն: Լեհերի և ռուսների մէջ այդ սահմա-
նագաւառում վաղուց հետէ կռիւ էր մղուում, և բա-
ցի յայտնի պատերազմից, լեհերն աննկատելի կռիւ էին
մղում գաղթականութիւններ հաստատելով այդ նահանգ-
ներում: Թաթարական արշաւանքը վերջապէս Կարմիր
Ռուսիան մատնեց բոլորովին լեհերի ձեռքը: Արդէն
ռուս իշխաններն օժանդակութիւն էին որոնում թա-

1340

Թարնների դէմ իրենց հիւսիս-արեւմտեան զրացիներէ— լեհերի և լիթուանացիների մօտ. իսկ 1340 թուին մեռաւ գալիցիական Ռոմանի վերջին շառաւիղ Իւրիյ Երկրորդը և նրա կալուածների մեծ մասը գրաւեց Կազիմիր Մեծը։ Լիւբլինի մօտ նա ջարդեց թաթարներին և զրանով ամրապնդեց գալիցեան իշխանութեան տիրապետութիւնը։ Նոյն իսկ այդ ժամանակ Վոլինիան ընկաւ լիթուանացիների ձեռքը։

Կազիմիրն ոչ միայն խուսափում էր գերմանացիների հետ արտաքին յարաբերութիւնների մէջ ընդհարուելուց—այլ հովանաւորում էր իսկ նրանց և հրէաներին տէրութեան ներսը։ Միանգամայն նա թոյլ չէր տալիս արաբներին, որոնք իւր պետական գերիշխանութիւնը խախտում էին. և, օրինակ, ընդհատեց լեհական թագաւորութեան գերմանական դատարաններից բողոքները փոխադրելը դէպի օտարազգի դատարանները, ինչպէս օրինակ, Մագդեբուրգի դատարանը։ Վճուրք դրժողները պէտք է դիմէին բացառապէս թագաւորի բարձրագոյն դատարանին Կրակովում։

Կազիմիր Մեծի ներքին գործունէութիւնը։

Կազիմիրը խստութեամբ զսպում էր անհանգիստ լեհախտային կամ ասպետութեան, նա հալածում էր երկպառակութիւններն ու կամայականութիւններն և պաշտպան էր կանգնում մանր մշակ մարդոց, պատըսպարելով նրանց կամայական վարմունքի և հալածանքների դէմ։ Սա իւր դործունէութեան այս կողմով արժանացաւ «ճորտերի թագաւոր» մականունին։ Կարգ և օրէնք հաստատելու համար պէտք էր զօրացնել և զարգացնել թագաւորական կառավարութիւնը։ Կազիմիրի գլխաւոր օգնականներն էին նահանգներում նրանից նշանակուած վերակացուք, զրանց հպատակ երկրորդական պաշտօնեաներով։ Բայց, զօրացնելով իւր վարչութիւնը, թագաւորը չէր կամենում ոչնչացնել տեղական ազատութիւնները։ Նլեախտան առաջուայ պէս ժողովներ էր գումարում, նահանգներում և գաւառներում առաջուայ նման գործում էին շլեախտիչներից և քա-

ղաքացիներից ընտրուած պաշտօնեայք և դատաւորները։ Կազիմիրն յաճախ դիմում էր նահանգական ժողովներին և մինչև անգամ ինքը գալիս էր այդ ժողովները նշանաւոր դատական գործերը վճռելու և գլխաւոր կառավարական ձեռնարկութիւնները քննելու համար։ Թագաւորական պալատի և ժողովրդի բարձրագոյն դատաւարների այս համաձայն յարաբերութիւններն այն հետեւանքն ունեցան, որ Կազիմիրը ԺԿ. դարու կիսին ընդունել տուաւ օրէնսդրական հետեւեալ բարեփոխութիւնն. հաւնայնական ժողովներում խառնագրուեցան, հաստատուեցան եւ մեկնուեցան այն սովորութիւնները, որոնցով դասաւարտութիւն էր շինում (Վիսլիցեան կանոնադրութիւն)։

Կազիմիր Մեծը բոլոր միջոցներով նպաստում էր զարոյցների հաստատութեան, իսկ Կրակովում հիմնեց հաւնաշատան, որ գլխաւորաբար նուիրուած էր իրաւաբանական գիտութիւններին և կազմակերպուած Բոլոնիոյ համալսարանի ձևով։

Կազիմիր Մեծի թագաւորութիւնն աւարտուեցաւ մի ձեռնարկութեամբ, որ անկասկածելի վնաս պատճառեց Լեհաստանին։ Կազիմիրն երիտասարդութեան ժամանակ կրթութիւն էր ստացել հունգարական թագաւորների փալլուն արքունիքում, և իւր թագաւորութեան ընթացքում պահպանում էր հունգարիոյ հետ լաւ յարաբերութիւններ, որոնք զիւրացնում էին նրաներքին ու արտաքին գործառնութիւնները։ Մահուանից առաջ նա վճռեց ամրապնդել այդ դաշնակցութիւնը։ Նա որդիք չունէր, և փոխանակ թագը Պիտտների հալածութեան որեւէ իշխանին տալու, աւագանու համաձայնութեամբ լեհական գահի ժառանգ հրատարակեց հունգարական Լուդովիկոս թագաւորին։ Կազիմիրի մահուանից յետոյ, 1370 թուին Լուդովիկոսը գահ բարձրացաւ, բայց ապա սկսան շփոթութիւններ և Լեհաս-

1370

տանի թագուհի հրատարակուեցաւ Լուդովիկոսի դուստր Եադվիգան:

1386 Լիթուանիոյ միացումը Լեհաստանի հետ Սյդ ժամանակներում մեծ ոյժ ունէր Լիթուանիան, որ սպառնում էր լեհացոց և գերմանացոց, ռուսներին և թաթարներին: Իւր ժողովրդով և քաղաքակրթութեամբ դա բոլորովին օտար էր Լեհաստանից. բայց պաներն իրանց յոյսը չէին կորցնում դրան կերպարանափոխելու և իրենց կողմը ձգելու: Նրանք պընդեցին, որ Եադվիգան ամուսնանալ Լիթուանիոյ մեծ իշխանի—Եադելլոյի հետ. (1386): Նոյն միջոցին լիթուանացիք առաջին քալըն արին լեհական քաղաքակրթութիւնն ընդունելու—Եադելլոն մկրտուեցաւ և սկսաւ կոչուել Վլադիսլաւ. դրանից յետոյ տեղի ունեցաւ լիթուանացոց բազմութեամբ դարձը գէպի քրիստոնէութիւն: Այսպիսով հիւսիսային տէրութիւնների Կալմարեան միութիւնից տասը տարի առաջ տեղի ունեցաւ Լեհաստանի և Լիթուանիոյ միութիւնը:

1410 Այսպէս կազմուած զինուորական զօրութիւնը, բնականաբար, դարձաւ ընդդէմ լեհերի նախնի թշնամիների արեւմուտքում և արեւելքում—գերմանացոց և թաթարների: Եադելլոն և նրա եղբորորդի Վիտովտը կռիւ էին մղում գէպի երկու կողմն ևս, սակայն շատ տարբեր յաջողութիւններով: Վորսկլայի մօտ թաթարները կորիզուի ջարդեցին լեհերին և լեթուանացոց: Գրափոխարէն սակայն, Գրիւնվալդի ճակատամարտում 1410 թուին խորհակուեցաւ տեսնակաւ կարգի զօրութիւնը. ճակատամարտի դաշտում ընկան 40,000 գերմանացիք:

Այս մեծ յաղթութիւնը կարծես ամրապնդեց երկու երկրների միութիւնը. Գրոզլոյի աւագաժողովում վճռուեցաւ ընդհանուր աւագաժողովներ կազմել երկու երկրների գործերը վարելու համար, եւ այլ ևս լեհական թագաւոր չ'ընտրել առանց լիթուանացոց համաձայնութեան եւ ոչ էլ լիթուանական իշխան, առանց լեհացիների համաձայնութեան:

Եադելլո-Վլադիսլաւն և նրա յաջորդները, չընայ-
թեով իրենց զինուորական զօրութեան, սակաւ ազդե-
ցութիւն ունէին լեհաստանի ներքին գործերի վրայ: Եթե
Լեհերը նրանց վրայ նայում էին իբրեւ օտարազգիների,
որոնց անհրաժեշտ էր պահել որոշ սահմանների մէջ,
որպէսզի մտքներից չ'անց կացնէին լեհ տէրութեան մէջ
մտցնելու իրենց սովորութիւնները: Այս պատճառով
մոժնովլադստովոն ստացաւ աւելի մեծ նշանակութիւն,
քան առաջ, պետական գործերը վճռուում էին պանե-
րի համագումարներում, որոնք տեղի էին ունենում
գարնանն և աշնանը, թագաւորական պալատում,

Ազնուականութեան զօրանալը ձեռնառու չէր մանր ապետութեան կամ չլեախտային, որովհետեւ աւագ իշխան պաները յաճախ ի չարն էին գործ դնում իրենց իշխանութիւնը շահախնդրութեամբ եւ նեղում էին մանր ազնուականներին: Անձնական պաշտպանութեան համար չլեախտան նոյնպէս սկըսաւ դաշնակցութիւններով միանալ: Դրա համար առիթ էին տալիս պատերազմական արշաւանքները, որոնց մասնակցելու հրաւիրում էին բոլոր թագաւորութեան չլեախտիչները: Այսպէս, 1422 թուին տեւտոնական կարգի դէմ ուղղուած արշաւանքի ժամանակ չլեախտան ժողով է դումարում բանակում, քողոք է ներկայացում թագաւորին, եւ պահանջում Կադիմիրեան օրէնքների վերականգնումը:

Բոլոր քաղաքական գործերում աչքի ընկնող դեր էր խաղում հոգեւորականութիւնը, ինչպէս ամենից հարուստ և կրթուած դասակարգը թագաւորութեան մէջ ¹⁾: Հզօր հոգեւորականութեան գլխաւոր ներկայացուցիչն էր Կրակովի եպիսկոպոս Սբիգնեով Օլեսնիցկին: Եադելլոյի երկարատեւ թագաւորութեան երկրորդ կիսում նա բըռնում էր առաջին նախարարի տեղը Լեհաստանում. նա

¹⁾ Դրա ազդեցութեան ներքոյ Կրակովի համալսարանն ստացաւ նոր կազմակերպութիւն: «Կադիմիրեան» իրաւաբանական համալսարանի տեղը բռնեց «Եադելլոնեանը», որ կազմակերպուած էր Փարիզու համալսարանի ձեռով: Այդտեղ առաջ տարուեցան աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, մաթեմատիկայի, բնական, եւ եղութաբանական գիտութիւնների ուսումը:

գործում էր հուսեանների պատերազմի բորբոքուած շրջանում, երբ յեխ հայրենասերները դիմեցին Լեհաստանին, օգնութիւն խնդրելով գերմանացոց դէմ: Վայրկեանը վճռական էր—լեհերի խառնուելը կարող էր վախճանական կերպով գերակշռութիւն տալ սլաւեաններին, Գերմանիոյ վրայ, և կատարելապէս փոխել եւրոպական պատմութեան ապագայ ընթացքը: Բայց այս միջամտութիւնը պահանջում էր բաժանումն կաթոլիկ եկեղեցուց. Օլեսնիցկին բոլոր ուժով դէմ կացաւ այս միջամտութեան, որովհետեւ հոգով նուիրուած էր մի կաթոլիկ նուիրապետութեան, և զբա մէջ տեսնում էր մեծ կրթական ոյժ Լեհաստանի համար: Նա կարողացաւ իւր հայրենիքը պահել կաթոլիկութեան կողմը, և այս նպատեց հուսեանների անկմանը:

Կաղիմիր Մեծի նման, Օլեսնիցկին ուղղում էր լեհերի յարձակումն ոչ դէպի արեւմուտք, այլ դէպի արեւելք: Այդտեղից յառաջագիծում էր մի նոր վտանգ. տաճիկների տիրապետութեան տարածումն սպառնում էր ոչ միայն բիւզանդական կայսրութեան և հարաւային սլաւոն-պետութիւնների գոյութեան, այլ նաեւ արեւմտեան Եւրոպայի առաջաւոր պետութիւններին—Հունգարիային և Լեհաստանին: Այդ պետութիւնները մի գայիսոնի տակ միացնելու միտքը կրկին ծագեց. Եագելլոյի որդին ու յաջորդը, Վլադիսլաւ Գ-ը, ընտրուեցաւ յիւրաւի հունգարական թագաւոր: Նա գլուխ կանգնեց հունգարական և լեհական փալլուն զօրքերին, և հասաւ մինչև Վառնայ քաղաքը: Բայց այստեղ տաճիկները նրան յաղթեցին, նա ինքն ընկաւ պատերազմի դաշտում (1444): Հունգարիոյ հետ միութիւնն անմիջապէս քայքայուեցաւ. Լիթուանիոյ հետ միութիւնն աւելի դիմացկուն երևեցաւ—լեհական թագաւոր և լիթուանական մեծ իշխան դարձաւ Եագելլոյի կրտսեր որդին, Կաղիմիր Գ-ը:

Սա մի խելօք և եռանդուն թագաւոր էր. սրա Կաղիմիր Գ. գլխաւոր զինուորական գործն եղաւ տւտոնական կարգի խորտակելը: Կաղիմիրը ձեռք բերաւ Լեհաստանի հաւաք ժողովքին եւ արեւմտեան Պրուսիան. իսկ տւտոնական կարգին մնաց միայն այդ նահանգի արեւելեան մասը, այն ևս Լեհաստանից վասայական կախման մէջ: Պետական կարգն և զօրութիւնը պահպանելու համար պահանջում էին մեծամեծ միջոցներ, ուստի Կաղիմիրը պէտք է հոգար հարկերի մասին: Դրամական տուրքերի հաւաքելը դժուարութիւնների էր հանդիպում ազնուականութեան և եկեղեցու արտօնութիւնների պատճառաւ, բայց Կաղիմիրն ուշադրութիւն չէր դարձնում արտօնութիւններին, և ամենքին ենթարկում էր պետական հարկատուութեան: Առհասարակ նա մաքառում էր դասակարգերի իրաւունքների դէմ, որոնք սահմանափակում էին թագաւորի գերիշխանութիւնը—իւրացրեց օրինակի համար եպիսկոպոսներ նշանակելու իրաւունքը, որոնց առաջ ըտրում էին կապիտուլները: Շլեսիտան, որ Եագելլոյի ժամանակ միացաւ և իւր քաղաքական պահանջներն յայտարարեց, համալրում էր Կաղիմիր Գ-ի խստութեան, աւագանու դէմ, սակայն միւս դասակարգերի նման սա ևս դժգոհ էր դրամական տուրքերի ժողովելուց և թագաւորական պաշտօնեաների հալածանքներից: Ինչպէս և առաջ, շլեսիտիչներն օգուտ քաղեցին պատերազմից, 1494 թուին Նեշաւեան դաշտերի բանակում բազմաթիւ բողոքներ ներկայացրին, և ստիպմամբ առան Կաղիմիրից հրովարտակ, որի մէջ նա խոստանում էր զեղծումները վերացնել. բացի դրանից նա ստիպուեցաւ խոստանալ, որ ինքն օրէնքներ չի փոփոխի, եւ պատերազմներ չի հրահարակիչ առանց շլեսիտացի հաւաքաշնորքեան, որ պիտի տրուէր մանր «գաւառաժողովներում»: Իւրաքանչիւր նահանգի շլեսիտան սկսեց գաւառաժողովներն ուղարկել

իւր պատուիրակներին, որոնք գումարուում էին գաւառի գլխաւոր քաղաքում և համաձայնութիւն էին կայացնում թագաւորի կամ նրա ներկայացուցիչներէ հետ, պետական գործերի վերաբերութեամբ: Այս գաւառաժողովներում թագաւորն ու աւագանին մրցում էին շլեւխտայի համակրութիւնը ձեռք բերելու և իրենց կողմը գրաւելու: Փոխանակ գաւառաժողովների հետ բանակցելու, թագաւորն յաճախ դրանց պատուիրակներին հրաւիրում էր իւր արքունիքը, որոնք այդտեղ կազմում էին այսպէս կոչուած «գեսպանական խրճիթ» (պատգամաւորական ժողովի դահլիճ): Սրա հետ միասին գոյութիւն ունէր գործերի քննութեան համար աւագանու նախկին ժողովն և այս երկու հաստատութիւնները թագաւորի հետ միասին կազմում էին ընդհանուր «պետական աւագաժողովը»: Անհամաձայնութեան դիպուածում խնդիրները կրկին դառնում էին գաւառաժողովներին:

Լեհաստանը
ժ.Ն. դարում:

Տասնևհինգերորդ դարու վախճանը, որ Եւրոպայի շատ տէրութեանց մէջ արդէն որոշեց ապագայ պատմութեան ընթացքը, Լեհաստանում յանգ ելաւ աւելի անորոշ հետեւանքներով: Տէրութիւնը ոչ միայն երկու գլխաւոր մասերի — Լիթուանիոյ և Լեհաստանի էր բաժանուած, այլ նաև լեհական երկրներն բաժան բաժան էին մնացել: Մեծ Լեհաստանը, Փոքր Լեհաստանը, ռուսական իշխանութիւնները, Մագովիան, արեւմտեան Պրուսիան և Ծովափն ապրում էին իրենց առանձնական կեանքով, և այս բաժանումն երեւումէր, ի միջի այլոց, առանձին օրէնսդրական ժողովների կամ գաւառաժողովների գոյութեամբ: Թագաւորն ունէր շատ մեծ իշխանութիւն, բայց նրա դէմ մաքառումէր պաների ազնուականութիւնն կամ մոժնովյադսփոն: Հանդէս էր եկել և մի երրորդ քաղաքական ոյժ — շլեւխտայն, մանր ասպետութիւնը, բայց դրա գերն ունըշանակութիւնը դեռ ևս շատ անորոշ էր:

Հունգարիոյ պատմութիւնը շատ կողմերով յիշեցնում է Հունգարիա-Լեհաստանի պատմութիւնը. այս երկու երկրներն ևս գտնուումն արեւմտեան և արեւելեան Եւրոպայի սահմանագծի վրայ, իրենց քաղաքակրթութիւնը փոխ են առնում արեւմուտքից և ձգնումն իրենց տիրապետութիւնը տարածել դէպի արեւելք: Ոթոն Մեծի յաղթութիւններն ստիպեցին հունգարացոց նստակեաց դառնալ և քրիստոնէութիւն ընդունել: Հունգարիոյ լուսաւորիչ եղաւ սուրբ Ստեֆանը, Արպադների հաւրապետութեան անից, որ 1000 թ. պապից ստացաւ թագաւոր տիտղոսը: Նա լաւ յարաբերութիւններ էր պահպանում Գերմանիոյ հետ, և Ոթոն Գ. կայսրը վերաբերում էր նրան նոյնպէս բարեկամաբար, ինչպէս և Բոլեսլաւ Արիասրտին: Ստեֆանի յաջորդներն ընդարձակեցին իրենց երկիրը մինչև այժմեան սահմանները — Լադիսլաւը (ԺԱ. դարու վերջին) նուաճեց վալախներով (ռումինացի) բնակուած Տրանսիլվանիան, Կոլոմանը (ԺԲ. դարու սկզբին) տիրեց Խոուաթիային, խռուաւարները Կարպիկոյրին ընդունեցին և դրանով օտարացան իրենց հաւանքեղ սերերից, որոնք հետեւող են օրթոդոքսութեան: Ապա սկսուեցան կատաղի յարձակումներ ռուս իշխանութեանց վրայ, որոնց սակայն չը կարողացան նուաճել, իսկ այդ արշաւանքների ժամանակ Հունգարիոյ ներքին գործերը խանգարուեցան «Մագնատ»-ների խոշոր ազնուականութիւնը փորձեց ձեռք ձգել պետական իշխանութիւնը: Դրա դէմ դիմուեց մանր ազնուականութիւնը, որ համապատասխան էր լեհական շլեւխտային: Անդրէաս Բ. թագաւորը 1222 թուին հրատարակեց այսպէս կոչուած «Ոսկե հրովարտակը», որ սահմանափակում էր թագաւորների իրաւունքները, անդլիական Մեծ Քարտիսի պէս. պատերազմ հրատարակելն ու զօրք ժողովելն հարկ դնելն և օրէնքներ հրատարակելը պիտի կատարուէր միայն աւագաժողովների ձեռքով, ուր պիտի մասնակցէր և շլեւխտան: Ոսկե հրովարտակն, այսպիսով, ուղղուած էր ոչ միայն թագաւորների կամայականութեան դէմ, այլ նաև խոշոր ազնուականութեան կամ մագնատների դէմ ևս:

1000

1222

Մեծ փորձանք էր Հունգարիոյ համար, ինչպէս նաև Լեհաստանի, մոլոյների արշաւանքը: Հունգարացիք աւելի լաւ դէմ չը դրին թաթարներին քան թէ լեհերն ու ռուսները: Ասիական հրոսակները 1241 թուին աւերեցին երկիրը մինչև Ադրիական ծովը. բայց այս առաջին յարձակումից յետոյ մոլոյներն արեւմտեան երկրներն անհանգիստ էին անում լոկ աս-

1241

սլատակութեամբ: Հունգարիան համեմատաբար շուտով ոտքի կանգնեց չորհրդի գերմանացի գաղթականների օգնութեան, որոնց թագաւորները բնակեցնում էին քաղաքներում եւ աւաւայացած նահանգներում: Այսպէս, զորօրինակ Տրանսիլանիայում բնակեցրած էր սաքսերի մի ամբողջ ցեղ ¹⁾:

Անժուլեան հարստութեան իւր սկզբնական հարստութեան էր սլատական Հունգարիան իւր սկզբնական կազմակերպութիւնը: Հունգարական դահը բարձրացաւ Արպադների կանացի շառաւղի սերունդ Կարլ-Ռոբերտ Անժուլեցին, նէպոլիտական արքայազնը: Անժուլեան հարստութեան հանդէս դալն Հունգարիայում նպաստեց արեւմտեան Եւրոպայի հետ յարաբերութեան զօրանալուն: Դանուբի եզերքներում եւ բեւեցան շատ ֆրանսիացիք եւ իտալացիք, դիտութիւնն ու գրականութիւնը մեծամեծ յառաջագիժութիւններ արին:

Բայց քաղաքական կողմով Հունգարիան կորուստ ունեցաւ: Կարլ Ռոբերտի որդին, Լուդովիկոս Մեծը, միանուագ ամեւնաւորներ ձեռնարկութիւններ արաւ, անտեղի ծովային արշաւանքներ գործեց նէպոլիսը ձեռք բերելու համար, մասնակցեց ձննովայի սլատակազմին Վենետիկի հետ եւ խեղ վեհակեցինքից Դալմատիան: Պատերազմ մղեց Վալախիայում եւ, վերջապէս, ընդունեց լեհական թաղը:

Տաճիկների զօրանալը Բալկանեան թերակղզում Հունգարիայի համար որոշ խնդիր ստեղծեց: Հունգարիան դարձաւ մահմետականների դէմ զլխաւոր սլարիսպներից մէկը, քանի որ Սիգիզմունդ լիւքսեմբուրգցու եւ Վլադիսլաւ Դ. լեհացոց թագաւորի արշաւանքներն անյաջող ելք ունեցան: Պաշտպանողական դիրք պահելն հունգարացոց աւելի էր յաջողում, քան թէ յարձակումը, եւն Դուքիազը, որ երկիրը կառավարում էր Վլադիսլաւի մահից յետոյ, Վառնայի տակ (1444), յաջողութեամբ սլաշտպանեց տաճիկների դէմ հիւսիսային Սերբիան, ու մինչեւ իսկ յաղթանակեց Մահմեդ Բ. Սուլթանի վրայ, Բէլգրադի մօտ: Աւելի եւս զօրացաւ Հունգարիան եւն Դուքիազի որդու, մեծ զօրավար Մատթէյ Կորվինի ընտրութիւնից յետոյ (1458): Սա ոչ միայն յաղթական կերպով յետ մղեց տաճիկներին, այլ նուաճեց նաեւ աւստրիական երկրներն ու Բոհեմիայի զլխաւոր մասը, թէպէտեւ, այս վերջին աշխարհակալութեան

¹⁾ Ինչպէս Լեհաստանում, այնպէս եւ այստեղ հայ գաղութներ հաստատուեցան այս շրջանում, որոնց մնացորդները կան ցայսօր եւս:

թիւններն անհաստատ էին, եւ հունգարացիք կորցրին այդ երկրները Կորվինի մահուանից յետոյ: Պատերազմասէր հունգարացի ժողովրդի զլխաւոր վաստակը սլատակեան մէջ այն է, որ նա կազմեց մի զօրաւոր պատկշ տաճիկների դէպի Եւրոպա տարածուելու դէմ:

ԳԼՈՒԽ. Ը.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ.

Լատինական կայսրութիւնն անհաստատ երեւցաւ, Լատինացիք եւ Սիբալէ Ը. Պալէօլոգը լեւ առաւ Կ. Պոլիսը դեռ Բալկանեան թերակղզում: Լս վաթսուս տարի չանցած խաչակիրների գրաւումից յետոյ: Բայց լատինական նուաճումը շատ հետքեր թողեց. դա առաջ բերաւ բիւզանդական կայսրութեան երկարատեւ թուլութիւնն, ու մինչեւ իսկ նրա կալուածների բաժան-բաժան լինելը: Բալկանեան թերակղզու բոլոր ծովեզրներում եւ Սրբիսլաւաքոսում կանգուն մնացին վենետիկեցոց գաղութները, եւ դրանց ազդեցութիւնը փոքր ի շատէ հակակշռելու համար բիւզանդական կայսրներն սկսան հովանաւորել Վենետիկի ախոյեաններին—Վենետիկացոց: Պելոպոնէսում եւ Ատտիկեում իրենց անկախութիւնը պահեցին քանի մի ֆրանսիական իշխանութիւններ, եւ վտանգը Փրանսիացիների առաջ աւելի եւս զօրացաւ, երբ յունական զորքերին սկսաւ միջամտել Իտալիան եւ Սիկիլիան նուաճող Կարլ Անժուլեցին: Սա գրաւեց քանի մի կէտեր Եպիրոսի ափերին եւ այդ տեղից շարունակ անհանգիստ էր անում կայսրութիւնը: Պալէօլոգները ֆրանսիացոց եւ մահմետականների դէմ մաքառելու համար վարձեցին ռպանիական զնդեր, բայց վարձկաններն իրենք վտանգաւոր թշնամի դարձան, քանիցս ջարդեցին կայսրների զօրքերը, եւ, վերջապէս, գրաւեցին Ատտիկան:

Թերակղզու հիւսիսում կազմուեցան երկու հզօր Բուլղարա-սլաւեան պետութիւններ: Բոլղարները դեռ եւս ԺԲ. դարից:

դարում թօթափել էին Բիւզանդիոյ լուծը. սլաւներն հետ միաբան գործում էին և վալախները կամ ռուսները, այն հռովմէացի գաղթականների սերունդը, որոնց Տրալիանոս կայսրը բնակեցրել էր Դանուբի եզերքներին: Բոլղարական նոր թագաւորութեան մայրաքաղաքն էր Տոնովը, Բալկանեան լեռնաշղթայից դէպի հիւսիս, բայց բոլղարների յարձակումներն և գաղթականութիւնները տարածուում էին շատ հեռու, մինչև Թրակիա և Մակեդոնիա: Սրանց թագաւոր Կալուէանը ջարդեց գլխովին ֆրանկների զօրքն Ադրիանապոլսի մօտ: Առաջին լատին կայսրը—Բալդուինը գերի բռնուեցաւ: Բոլղարների յարձակումը լատինական կայսրութեան վրայ օգնեց յոյներին Կ.-Պոլիսը յետ խլելու, բայց Պալէօլոգների թագաւորելոյց յետոյ ևս չ'ընդհատուեցան բոլղարների ասպատակութիւնները դէպի Թրակիա. կայսրութեան օգտուում էին այս հիւսիսային զբաղների դէմ արդէն փորձուած գէնքով, նրանք ներքին կռիւներ էին յարուցանում բոլղարների մէջ:

Սերբիական
թագաւորութիւն:

1331—1335

Անկախ սերբիական թագաւորութիւնը ծագեց նոյնպէս, ինչպէս և բոլղարականը, ԺԲ. դարու վերջին: Դրա հիմնադիրն էր Ստեֆան Նէման, որ իւր իշխանութեան ներքոյ միացրեց ներկայ Սերբիան, Չերնոգորիան և Դալմատիան: Ամենամեծ զօրութեան հասաւ Սերբիան ԺԳ. դարում, Ստեֆան Դուշանի ժամանակ (1331—1355): Սատիրեց Եպիրոսին (այժմեան Ալբանիային), գրաւեց Մակեդոնիայի և Թեսսալիայի նշանաւոր մասը, այսպիսով, ճանապարհ բաց արաւ սերբերի համար դէպի Եգէյեան ծովը, և բաժանեց բիւզանդական երկրներն երկու մասի: Հիւսիս-արեւմուտքում Դուշանը տիրեց Բոսնիային և դրա պատճառով կռուի բռնուեցաւ հունգարացոց հետ,— այստեղ ևս դրան յաջողուեցաւ իւր նուաճած երկրները ձեռքին պահել: Պէտք է աւելացնել, որ Դուշանը միայն քաջ զինուոր և զիւրապետ չէր, նա հոգում էր նոյն-

8

պէս իւր տէրութեան ներքին կազմակերպութեան և բարեկեցութեան մասին: Հաստատուն իրաւունքի և կարգի հիմք դնելու համար իւր երկրներում, նա ժողովեց, գրի առնել տուաւ և ուղղեց այն սովորութիւնները, որոնցով ղեկավարուում էին սերբերը դատարաններում: Այս ժողովածուն կոչուում է «*Սեկման Դուշանի օրէնագիրք*»: Իւր լաւ կառավարութեան շնորհիւ նա կարողացաւ սէր ներշնչել նոյն իսկ նուաճուած ժողովուրդներին—յոյներին, ալբանացոց և բոլղարներին: Երբ Դուշանն յանկարձակի մեռաւ 1355 թուին, 43 տարեկան հասակում, արժանաւոր ժառանգ չը գտնուեցաւ նրան, և այն երկրները, որ նա միացրել էր և մի պետութիւն կազմել իւր եռանդով և ճարտարութեամբ, կրկին բաժան բաժան եղան: Մինչդեռ նոյն իսկ այդ ժամանակ մի մեծ վտանգ ծնեց Բալկանեան թերակղզու բոլոր ագգերի համար—տաճիկները հանդէս եկան Եւրոպայում:

1355

Թուրք-սելջուկները, որոնց տարածումն Ասիայում խաչակիր արշաւանքների հետեւանքներից մէկն էր, կորցրին իրենց զինուորական գերակշռութիւնը: Դրանք բաժանուեցան բազմաթիւ սուլթանութիւնների և էմիրութիւնների, որոնք կռուում էին միմիաց դէմ. դրանց փոխարէն հանդէս եկան տաճիկ-օսմանները:

Տաճիկ-օսմաններ:

Այս ցեղը կարողացաւ ամուր կազմակերպութիւն ստանալ և ճարտար կերպով օգուտ քաղեց իւր թշնամիների սխալներից: Տաճիկ-օսմանները բաժանուեցան թուրքմէնեան ցեղերի ընդհանուր խմբից մողուական արշաւանքի ժամանակ, ԺԳ. դարու առաջին քառորդին: Սրանք նախ Պարսկաստանի հիւսիսային սահմանից (Խորասանից) անցան Հայաստան, իսկ ապա Փոքր Ասիոյ հիւսիսային կողմը: Դրանց առաջնորդ Օսմանը ԺԳ. դարու կիսին հիմնեց Անկիւրիոյ մօտ մի իշխանութիւն, փոքր-ասիական սելջուկների տիրապետութեան տակ, շուտով օսմանցիք զօրացան և բոլորովին ստուերի մէջ թողին սելջուկներին:

Սրանց արշաւանքները բիւզանդական կայսրութեան ասիական երկրներում զուգընթաց էին աւերումները

և անգթութիւնների մինչև այնքան ժամանակ, որ հնարաւոր էր լինում հաստատուն կերպով գրաւելու որ և է քաղաք կամ նահանգ: Իսկ երբ հաստատունում էին մի որոշ տեղում, փոխում էր նրանց վարման եղանակը, նրանք խնայում էին բնակիչներին և գոհանում թեթեւ հարկերով: Այս քաղաքականութիւնը շատ նպաստեց նրանց յաջողութիւններին, որովհետև սահմանակից երկրների բնակիչները թուրքերին հպատակելու վրայ նայում էին իբրև միակ միջոցի վրայ, որով կարող էին ազատուիլ դրանց աւերիչ ասպատակութիւններից: Ուրխան սուլթանը ԺԳ. դարու առաջին կեսում տիրեց բիւզանդական բոլոր գլխաւոր զինքերին Փոքր Ասիայում—Բրուսային, Նիկոմիդիային, Նիկիային: Սա ինքը կազմեց նոր զօրք, որին տաճիկները գլխաւորապէս պարտական են իրենց լեռնաշխարհի յաղթանակները. Ուրխանի ժամանակ կազմուեցան այսպէս կոչուած *եմիլներ* ¹⁾ հաւաքական զինքերը. դրանց ժողովում էին քրիստոնէայ երեխաներից, որոնց անջատում ծնողներից և կրթում էին մահմետականութեան մէջ:

Տաճիկների
պատերազմ-
ները Բալ-
կանեան թե-
րակողում.
1353

Տաճիկները 1353 թուին տիրեցին Հելլեսպոնտոսի եւրոպական ափի վրայ մի ամրոցի. հոգը նրանց համար պատրաստած էր Բալկանեան թերակղզին գրաւող զաւազան ազգերի՝ *երկայառակորքեաւք*, յոյները, վենետիկցիք, սերբերը, ալբանացիք, բուլղարներ, վալախները իրենց բոլոր ուժերով վնասում էին միմիանց, չը նախելով որ տաճիկը հանգէս էր եկել իբրև ամենքի համար վտանգաւոր թշնամի: Օսմանցիք միջոց ստացան հերթով ջարդելու բոլոր իրենց հակառակորդներին: Ամենից առաջ նրանք պէտք է հաստատ հիմք ձգէին եւրոպական ձեռնարկութիւնների համար: Այս բանն յաջողուեցաւ նրանց առանց դժուարութեան. Հելլեսպոնտոսն անցնելուց լեռնային սուլթան Մուրադ Ա-ը յոյներից

¹⁾ Ենիչերի բառը նշանակում է «նոր զօրք»:

առաւ Սգրիանապոլիս և Փիլիպպոպոլիս քաղաքները, և այսպիսով Կ. Պօլսի անմիջապէս դրացի դարձաւ: Տաճիկների գլխաւոր նպատակն էր հարկաւ կայսրութեան նուաճումը. բայց նրանք ստիպուած էին գործ ունենալու այն հզօր տէրութիւնների հետ, որոնք վերջին ժամանակներս կազմուել էին Բալկանեան թերակղզում: Կոսովայի դաշտում (1389) Սուլթան Մուրադի խառնիճաղանձ բանակը հանդիպեցաւ *սերբիական* բանակին, որին գլուխ էր կարգնել երիտասարդ թագաւոր *Լազարը*. սերբերի հետ միասին կռուում էին հունգարացոց Է բուլղարացոց զինքերը: Քրիստոնէայք ջարդեցին տաճիկների աջ թևը, բայց Մուրադի որդի *Բալազիդը* ասիական զինքերով դէմ կանգնեց սերբերին և սոսկալի կոտորածից յետոյ ի վախուստ դարձրեց նրանց: Թէ սուլթան Մուրադը և թէ Լազար թագաւորն սպանուեցան. աւանդութեան ասելով սուլթան Մուրադին սպանեց մի սերբ, որ գաղտնաբար մտել էր տաճկաց բանակը, և Բալազիդն ի վրէժ, ճակատամարտից յետոյ հրամայեց Լազարին և միւս գերիներին կոտորել սուլթանի զիակի վրայ: *Բալազիդը* Լազարի որդուն թողեց իշխան. բայց պարտաւորացրեց նրան տաճիկների արշաւանքներին մասնակցելու իւր զօրքերով: Այսուամենայնիւ Չեռնոգորիայի և Ալբանիայի լեռնային ամրութիւնների մէջ շարունակեցին իրենց անկախութիւնները պահպանել այն ցեղերը, որոնք չէին կամենում հպատակել տաճկական իշխանութեան: Սերբերից յետոյ ընկաւ *քոչկարա-կան քաղաքաւորքիւնը*—դարու վերջին առնուեցաւ բուլղարների մայրաքաղաք Տոնովոն:

1389

Բալկանեան թերակղզու հիւսիսային սլաւոն պետութիւնների նուաճումից յետոյ տաճիկները գտնուեցան դէմ լանդիման հունգարացոց: Սրանք աշխույժ յարաբերութեան մէջ էին արեւմտեան Եւրոպայի հետ. և դրանց ընդհարումն տաճիկների հետ առաջ բերաւ ա-

ընտան ասպետութեան մնջամտութիւնը: Սիգիզմունդ թագաւորի հունգարական բանակին միացան Ֆրանսիացի և գերմանացի ասպետներ, 1396 թուին, բայց օտարագրիների այս օգնութիւնը չ'ուղղեց գործը. Նիկոպոլի մօտ Բալադիդը ջարդեց քրիստոնեաներին:

Բալկանեան թերակղզու առժամանակեայ թեթևութիւնը տեղի ունեցաւ շնորհիւ մի անսպասելի իրողութեան. Ասիայում կազմուեցաւ մի նոր մեծ մոնղոլական թագաւորութիւն: Դրա հիմնադիրը, Լանկիթեմուր կամ Թիմուրը, նուաճել էր ոչ միայն միջինասիական երկրները, այլ նաև Հնդկաստանը, Պարսկաստանը և հարաւային Ռուսիան: Մողոլները շուտով հեղեղեցին Փոքր Ասիան, և այստեղ ընդհարուեցան տաճիկների հետ. Անկիւրիայի մօտ Լանկիթեմուրն ու Բալադիդը չափեցին իրենց ոյժերը: Ենիջներինների հետևակազօրը պահպանեց իւր հռչակը, որին արժանացել էր այնքան յաղթութիւնների շնորհիւ: Բայց դրա յամառ քաջութիւնն այսուամենայնիւ չը կարողացաւ դիմանալ անհամար մողոլական խառնիճաղանձի թափին. ինքը Բալադիդը գերի ընկաւ և շուտով մեռաւ սրտի ցաւից: Մողոլները սակայն, չ'օգտուեցան իրենց յաղթութիւնից. Լանկիթեմուրը միայն երկու տարի աւելի ապրեց Բալադիդից, իսկ նրա մահուանից յետոյ տէրութիւնը քայքայուեցաւ: Տաճիկները կազդուրուեցան այս հարուածից յետոյ և կրկին ձեռնարկեցին Բալկանեան երկրների նուաճման:

Ունիա կամ
միաբանութիւն:

Այժմ գրանց ճիգերը դառնում են գլխաւորաբար բիւզանդական կայսրութեան մնացորդների դէմ. տարեցտարի տաճիկներն աւելի ու աւելի մերձենում էին Կ. Պոլսին, աւելի խիստ նեղում էին դրա սլաշտպաններին: Ժե. դարու սկզբում Տրապանոսի, Կոստանդիանոսի, եւ Յուստինեանոսի յաջորդները սիրում էին գրեթէ միայն Կ. Պոլսին կից գաւառներին: Բայց նոյն

իսկ մայրաքաղաքի մէջ գտնուում էին իսաղական գաղութներ, որոնք ինքնավարութիւն ունէին, զօրք էին պահում, և շարունակ կռուում էին յոյների հետ կրօնական, քաղաքական և առևտրական խնդիրների մասին: Այս հանգամանքներում խօսք անգամ չէր կարող լինել սեփական ուժերով տաճիկներին դէմ դնելու մասին: Յոյները յուսոյ միակ նշոյլ ունէին. նրանք օգնութիւն էին սպասում արևմտեան քրիստոնեաներից: Խընդիրն այլևս Տիրոջ Գերեզմանն ազատելու մասին չէր, այլ քրիստոնէութեան գլխաւոր պարիսպն արևելեան աշխարհում պաշտպանելու: Բայց քրիստոնէից միութիւնը մահմետականութեան դէմ իրականացնելու համար անհրաժեշտ էր վաճխան դնել այն երկպառակութիւններին, որ չորս դարու ընթացքում եկեղեցին բաժանում էին երկու թշնամական դաւանութիւնների: Յոյներն ստիպուեցան որոնելու միութիւն, վերսին միացումն իսկիւնների հետ. և սրանք օգուտ քաղեցին իրենց վիճակի առաւելութիւններից: Վերստին միացման խընդիրն եռանդով քննուում էր պապական պալատում կայսրների դեսպանների և կաթողիկ հոգևորականների մէջ, բայց հալեացքներն և կողմերի ապացոյցները կշռուում էին ոչ թէ իրենց ներքին նշանակութեան նալելով, այլ կողմնակի մակաբերութեան ազդեցութեան տակ—որ յոյներն հանգէս էին եկել իբրև խընդարկուք, իսկ լատինացիք հովանաւորողներ: Եւգենիոս Գ. պապը 1439 թուին մի բազմամարդ ժողով գումառեց Միդրենսիայում, ուր ներկայացան Յովհաննէս Գ. կայսրը և յոյն հոգևորականութեան ներկայացուցիչք. Եփեսոսի Մարկոս մետրոպոլիտը, Նիկիոյ արքեպիսկոպոս Բեսսարիոնը, ռուսական մետրոպոլիտ Իսիդորն և այլք: Մարկոս Եփեսացին ջերմութեամբ պաշտպանեց արևելեան եկեղեցու հին վարդապետութիւնը, իսկ միւս յոյները հնազանդուեցան պապին քաղաքական մակաբե-

րուծիւնից ստիպուած։ Այսպէս կազմուեցաւ «Ֆլորենտեան միութիւնը», որի զօրութեամբ արեւելեան եկեղեցին պէտք է ճանաչէր պապի գլխաւորութիւնը, թոյլ տար Հաւատամքի ընթերցումն և յՈրդւոյ (Filioque) լաւելուածով և լատինացոց անէր և այլ աննշան զիջումներ։

Կոստանդնուպոլսի կառավարութիւնը ճանաչեց այս միութիւնը, բայց հոգեւորականութեան և ժողովրդի մէջ դա հասնողիպէց յաւատ ընդդիմութեան։ Ոչ մի քաղաքական հաշիւ կարող չէր ստիպել օրթոդոքս ժողովրդին ուրանալու այն, որ սովորել էր համարել կրօնական ճշմարտութիւն։ Միւս կողմից, պապը կարող չեղաւ կատարել այն, ինչոր խոստացել էր—չը կարողացաւ մեծ զօրութիւն ժողովել տաճիկների դէմ։ Փրանսիացիք, գերմանացիք, իտալացիք չափազանց զբաղուած էին իրենց գործերով, որ կարող լինէին մասնակցել այգալիսի խաչակիր արշաւանքի։ Եւանգելիզմը զինուեցան տաճիկների դէմ միայն այն կաթոլիկ ազգերն, որոնք իրենց անմիջապէս վտանգի մէջ էին գտնում տաճիկների զօրանալով, այսինքն՝ հունգարացիք և լեհերը։ Վլադիսլաւ լեհացին և Եան Գունիադը ձեռնարկեցին 1444 թուին. մի մեծ արշաւանք Մուրադ Բ-ի դէմ, որ վերջացաւ Վառնայի մօտ պարտութեամբ։

1444

Կոստանդ-
նուպոլսի
առումն։

Ազատուելով հիւսիսային հարեաններից, տաճիկները կենտրոնացրին իրենց զօրութիւնը Կոստանդնուպոլսին տիրելու համար։ Դէմ առ դէմ գտնուում էին երկու երիտասարդ թագաւորներ, Մուրադ Բ-ի յաջորդ—Մահմէտ Բ. և Յովհաննէս Ը-ի յաջորդը—Կոստանդին ԺԱ. Պալէօլօգը։

Մահմէտ Բ. սուլթանը շատ կրթուած մարդ էր. նա հինգ լեզու գիտէր, բացի տաճիկերէնից—խօսում էր լատիներէն, յունարէն, արաբերէն, պարսկերէն և բոլորերէն։ Գիտութիւններից յատկապէս հետաքրքրում էր նրան աստղագրաչիտութիւնը. նա հասկանում էր գեղարուեստ և իւր արքունիք էր

հրաւիրում իտալացի նկարիչներ ու արձանագործներ։ Իբրեւ պետական մարդ և զօրավար, նրա յատկանիշներն էին անյադ փառասիրութիւն, զգուշաւորութիւն և ձեռնարկութեանց նախապատրաստութիւն ու դրանց իրագործման համար և ունի։ Միւսնոյն ժամանակ նա մի գազան էր, որ գութ ասած բանը չը գիտէր, թէ ի՞նչ է, և իւր կրքերի յաղեցման համար ոչ մի սահմանափակութիւն չէր ճանաչում։ Կոնստանդին ԺԱ. մի մեծ բայց կորստի մասնուած տէրութեան արժանաւորներ—կայացուցիչն էր. նրա նախորդները յաճախ մանր խորամանկութիւններով և շահասիրութեամբ ստորացնում էին իրենց—իսկ սա խորապէս ճանաչում էր այն կրօնական և քաղաքական սկզբունքները, որոնց վրայ հաստատուած էր բիւզանդական կայսրութիւնը, և ընդունակ էր զիւցազնօրէն վարել դրանց պաշտպանութեան համար յուսահատ կոիւր։

Սուլթանը սկսաւ իւր գործողութիւնները Կոստանդնուպոլսի դէմ 1451 թ. նա գրաւեց մի ամրոց քաղաքի մերձակայքում, Բոսֆորի ամենից նեղ տեղում, որպէս զի դժուարացնէ պաշարեղինի քաղաք հասցնելն և մշտապէս նեղացնէ քաղաքի բնակիչներին։ Կայսրը մարդ ուղարկեց Հռովմ օգնութիւն խնդրելու, բայց փոխանակ դաշնակից զօրքի, եկաւ մի ծիրանաւոր, որ պատարագ մատուց ուրրը Սոփիայի տաճարում այն ծիսով, որ հաստատել էր Ֆլորենտեան ժողովը, և դրանով օրթոդոքս ժողովրդի զայրույթը շարժեց։ Բիւզանդական աւագանուց մէկն յայտնեց, որ աւելի սիրով կը հպատակէ փակեղին (չալմային), քան թէ խոյրին¹⁾։ Պէտք էր պաշտպանուիլ սեփական ուժերով, որ շատ նուազէին։ Կոնստանդին ԺԱ. ժողովեց 9000 յոյն, 3000 լատինացի (վենետեկցի ու ճինավոյցի) և 26 նաւ։ Սուլթանը մերձեցաւ Կոստանդնուպոլսին 1453 թուի գարնանը։ Նա ունէր 165,000 զինուոր, մի մեծ նաւատորմիւր և հզօր թնդանօթներ։ Չը նայելով իրենց սակաւութեան և յոգնածութեան, պաշարուածները պաշտպանուում էին մեծագոյն քաջութեամբ։ Բացի կայսրից,

1451

1453

¹⁾ Պապական թաղը կոչուում թիարա (խոյր)։

առանձնապէս աչքի էր ընկնում և ճենովացի Զուստի-
նիանին: Վերջապէս, տաճիկներն յաջողեցան մտնել
«Ոսկեղջիւր», այն ծովախորշը, որ Բոսֆորից մտնում է
քաղաքի մէջ. դա փակուած էր մի ահագին շղթայով,
բայց տաճիկները նաւերն այն տեղ հասցրին ցամաքով,
տախտակամածների վրայով: Կոստանդնուպոլսի բոլոր
ամրութեանց վրայ յարձակումն գործեցին տաճիկները
մայիսի 29-ին 1453 թ. երկար տեւեց արիւնահեղ կռիւը,
մինչև, վերջապէս, եանիչները կարողացան տիրել այն
պարսպին, որի վրայ հրամայում էր Զուստինեանին: Եւ
Շուտով դրանից յետոյ ընկաւ Կոստանդին կայսրը: Սուրբ
Սոփիայի տաճարում ժողովուել էին բնակիչներից շա-
տերը—տաճիկները ջարդեցին դռներն և սոսկալի կոտո-
րած արին. Մահմէտ Բ. սուլթանը տաճար մտաւ ձի
հեծած ու դիակների բլուրների վրայով: Վենետկեցոց
յոյներին օգնութեան ուղարկած նաւատորմիղը քաղա-
քի առումից մի քան օր յետոյ տեղ հասաւ, և յետ դար-
ձաւ առանց որ և է գործ անելու:

Կոստանդնուպոլսի անկումն Արևմուտքում յառաջ
բերաւ սարսափ ու շփոթութիւն: Բայց ոչ ոք կարող
չէր կորածը վերագարձնել, և տաճիկներն աւարտեցին
իրենց նուաճումները Բալկանեան թերակղզու վրայ.
Ընդ զիմադրութեան պատահեցան նրանք միայն հիւ-
սիս-արևմուտքում, Եան Գունիաղը յետ մղեց Մահմէտ
Բ-ի յարձակումը Բելգրադի վրայ, իսկ Չեռնոգորիայում
ու Ալբանիայում հերոսաբար կռուեցին լեռնային ցեղե-
րը: Բոլոր մնացած երկրները նուաճուեցան մի շարք
արիւնահեղ արշաւանքներից յետոյ, և սուլթանն արդէն
պատրաստուում էր գործողութիւններ սկսել Իտալիա-
յում. նրա նաւատորմիղը գրաւեց Օտրանտոն նէպոլի-
սեան թագաւորութեան մէջ: Իտալացոց բախտից Մահ-
մէտ Բ. մեռաւ այս պատրաստութիւնների ժամանակ:

Մահմէտ Բ. հիմք դրաւ այն ներքին կարգին, ո-
րին տաճիկները հետևում են մեծ մասամբ և մինչև այս-
օր: Յոյների ու միւս նուաճուած ազգերի հետ Մահմէ-
տը բաւական ողորմածաբար վարուեցաւ: Նա թույլ էր
տալիս քրիստոնէից դաւանել իրենց կրօնը, պարապել
երկրագործութեամբ, արգիւնագործութեամբ և առե-
տուրով: Յոյն համայնքների մէջ տաճիկները գոյաւոր
իշխանութիւնը տուին հոգևորականութեան, դրաց հետ
էին յարաբերութիւն պահպանում և գործում էին
դրանց միջոցով: Կոստանդնուպոլսի պատրիարքը դար-
ձաւ գլխաւոր ներկայացուցիչը քրիստոնիոյ յոյն բնակիչ-
ների ոչ միայն հոգևոր, այլ նաև կառավարական խն-
դիրների վերաբերութեամբ ¹⁾: Տաճիկները կազմեցին
գլխաւորապէս ազնուականութիւնը, որ իւր շարքերի
մէջ օտարազգիներից միայն հաւատուրացներին էր ըն-
դունում: Սուլթանի հովանաւորութեան տակ նուաճ-
ուած ժողովրդի նիւթական բարեկեցութիւնն սկաւ ա-
ճել. մանաւանդ շահուեցաւ Կոստանդնուպոլսի. դրա
բնակիչների թիւն շուտով մեծացաւ շնորհիւ այն հո-
սանքին, որով սկսան քաղաքը լցնել թէ յունական նա-
հանգներից եկողներն ու թէ Ասիոյ ամենայն կողմե-
րից: Բայց բիրդ ու գոռոզ գինուորական ազնուականու-
թեան հաստատութիւնն առհաւատչեայ էր այն բանի, որ
այդ երկրում, ուր զարգացել էր եւրոպական քաղաք-
կրթութիւնից ամենից փայլունը, երկար ժամանակ
պիտի թագաւորէ տգէտ ոյժը, որ թշնամի է ամեն տե-
սակ հոգևոր յառաջադիմութեան:

¹⁾ Հայոց ներկայացուցիչ ճանաչուեցաւ Կ. Պոլսի հայ պատ-
րիարքը, որի աթոռը հաստատեց սուլթան Մահմէտ Բ. 1461 թուին,
տալով նրան յունական պատրիարքին հաւասար իրաւունքներ: Ծ. Թ.

Տաճիկա-
տանը ժե-
ղարում:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

Վ ե ռ ա ծ ն ո շ ք ի շ ն:

ԳԼՈՒԽ Ա.

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի.

Կաթոլիկ
եկեղեցու
անկումը:

Այն անկման շրջանում, որ սկսուեցաւ հռոմէական կայսրութեան վերջին դարերում եւ շարունակուեց բարբա-
րոսների տիրապետութեան ընթացքում, քրիստոնեայ եկեղե-
ցին փրկեց հասարակութիւնն ու կրթութիւնը. նրա հոգեւոր
ուժի առաջնութիւնը խոնարհում էին ամենից վայրենի ու կատաղի
բարբարոսները: Արեւմտեան եկեղեցին ճգնում էր իւրացնել
անմիջական ղեկավարութիւնը ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ
աշխարհական գործերի. նրա հայեցողութեամբ, ինքը կոչուած-
էր ուղղութիւն տալու մարդկանց վարքին եւ կառավարելու
տէրութիւններ. աշխարհական կառավարութիւններ էր կարգում
նա եւ հպատակեցնում իրեն. ամբողջ կաթոլիկ աշխարհը պէտք
է դառնար աստուածապետութիւն, «Աստուծոյ թագաւորութիւն»:
Իշխանութիւնը մարդկանց վրայ, նրանց խորհուրդների ու
վարքի վրայ, ամենից աւելի էր զբաղեցնում կաթոլիկ եկեղե-
ցուն: Իշխանութեան համակարգը ինքն եկեղեցին կազմա-
կերպուեցաւ խիստ հնազանդութեան սկզբունքով: Անհամա-
ձայնութիւններից խուսափելու, կարգն ապահովելու, միաբան
եւ եռանդուն գործելու համար, կաթոլիկութիւնը պապին կար-
գեց եկեղեցու եւ աստուածապետութեան գլուխ: Գրիգոր Է.
ինքնիշխան կերպով բարենորոգեց հոգեւորականութիւնն եւ
կայսեր աշխարհական գերիշխանութիւնը չ'ընդունեց. Իննով-
կենտիոս Գ. այն միտքն սկսաւ տարածել, որ բոլոր քրիստո-
նեայ թագաւորները—պապական գահի վաստակներն են:

Աստուածապետութիւն ստեղծելու հսկայական փորձը դա-
ռն հիասթափման հասցրեց: Ամենից առաջ, խորտակուեցաւ
այն ձեռնարկութիւնը, դէպի որն հոգեւորականութիւնը կամե-
նում էր ուղղել աշխարհական հասարակութիւնը, խաչակիր
արշաւաններն անյաջող եղ ռնկեցան: Ապա երեւեցաւ, որ

Եւրոպայի ազգերն իրենց քաղաքացիական գործերի կարգա-
դրութեան մէջ, վերաբերութեամբ դատարանին, վարչութեան,
եկեւմտից, զինուորական կարգի, իւրաքանչիւրն աշխատում է
ստեղծել իւր յատուկ ազգային պետութիւնն եւ դրա շահերը
չեն կամենում զոհել աստուածապետութեան: Այս արտայայ-
տուեցաւ այն միաբանութեան մէջ, որով բոլոր Ֆրանսիացիք
աջակցեցին Ֆիլիպպ Գեղեցկին Բոնիֆատիոս Ը. պապի դէմ:
Վերջապէս, ինքը պապութիւնը կորցրեց եւ քաղաքական ոյժը,
պարզ քաղաքականութիւնն եւ անձնավստահութիւնը, որոնցով
յայտնի էր ԺԱ. ԺԲ. եւ ԺԳ. դարերու ընթացքում:

Բոնիֆատիոս Ը. պապի խալտառակութիւնից լեռն ^{Մեծ}
սկսաւ ^{հերձուած}
պապերի քարեշունեան գերութիւնը Աւինիո- 1309—1377:
նում (1309—1377), որի հետեանքն եղաւ պապական
գահի եւ «յաւիտենական» քաղաքի—Հռոմի միջե-
կեղծ դարաւոր կապի լուծումն: Գրիգոր ԺԱ-ի դար-
ձը Հռոմն նոր անկարգութեանց դուռը բաց արաւ.
Ֆրանսիացի եւ իտալացի ծիրանաւորներն երկաւառակուե-
ցան նրան լաջորդ ընտրելու ժամանակ. փոխանակ մի
պապի, ընտրուեցան երկուսը: Մէկին հպատակեցան Գեր-
մանիան, Անգլիան, Իտալիան, միւսին—Ֆրանսիան,
Սպանիան, Շոտլանդիան: Այս խռովութիւնը պապի իշ-
խանութեան հեղինակութիւնը խախտում էր, ախուհան-
ներից իւրաքանչիւրը գործ էր դնում ամեն միջոց, միւ-
սի վրայ բիծ գնելու համար. հաւատացեալներն հնար
չունէին այս խնդրում արդարն ու մեղաւորը որոշելու
եւ կատարելապէս համոզուած մէկ կամ միւս պապի
իրաւացիութեան վրայ գործելու: Բայց «մեծ հերձուա-
ծի» ազդեցութիւնը տարածուում էր աւելի ևս հեռու:
Խնդիր էր ծագում, թէ կարո՞ղ է արդեօք առհասարակ
պապը ճանաչուել գլուխ եկեղեցու: Փոխանակ հաւա-
տացեալների կասկածանքները փարատելու եւ պաշտպա-
նելու նրանց գալթակողութիւններից, «մեծ հերձուածի»
պապերն իրենք էին կասկածանքներ ու գալթակող-
ութիւններ յարուցանում: Եկեղեցին վերստին միացնելու

Համար կարիք եղաւ մի այլ հեղինակութիւն որոնելու։ Փարիզու համալսարանը, որ համարուում էր աստուածաբանական գիտնականութեան կենտրոնը, այն վարդապետութիւնը յայտարարեց, որ ծագած վէճերը պիտի վճռուին *s'ileqներակալն ժողովով*, որ, իբրեւ համագումար բոլոր քրիստոնէութեան ներկայացուցիչների, *քարոզիչ և պապից*։ Այս վարդապետութիւնը հակասում էր արեւմուտքում պապական գերիշխանութեան մասին հաստատուած գաղափարին և վերադարձ էր դէպի հին եկեղեցու կարգը։ Հանգամանքներն այնպէս խճճուած էին, որ ոչ մի այլ ելք չէր մնացել, բացի մեծ եկեղեցական ժողով գումարելուց։ Պապերից մէկը, Յովհաննէս ԻԴ. 1414 թուին համաձայնութիւն կայացրեց Սիգիզմունդ կայսեր հետ, որ ժողովը գումարուի Կոնստանցում. այս ժողովն, ուր ներկայ էին մի քանի հազար հոգեւորականներ և բազմաթիւ աշխարհականներ, յայտարարեց ինքն իրեն տիեզերական ժողով, թէպէտեւ այստեղ չըկային արեւելեան եկեղեցիների ներկայացուցիչներ։ Գլխաւոր գործիչները Կոնստանցում էին Փարիզու համալսարանի դասախօսները, յատկապէս Ժէրսոնը։ Պապական գահի բոլոր թիկնածուք յայտարարուեցան գահավէժ, դրանց փոխարէն պապ ընտրուեցաւ Կոլոննա ծիրանաւորը, Մարտին Ե. անուամբ։ Ժողովը սահմանեց, որ «բոլոր քրիստոնեայք, դրանց մէջ և պապը, պարտական են հետեւելու ժողովի պատուէրներին ամեն բանի մէջ, ինչ որ վերաբերում է հաւատին, հերձուածի արմատախիւ անելուն և եկեղեցու ընդհանուր կերպարանափոխութեան թէ նրա գլխի ու թէ անգամների վերաբերմամբ»։

Ուիկլիֆ

Աստուածաբանների ձեռնարկած եկեղեցական ժողովների նշանակութիւնը վերականգնելու փորձին զուգընթաց մի այլ շարժում էր տեղի ունենում, որ սպառնում էր ոչ թէ միայն պապի, այլ նաեւ կաթոլիկ եկեղեցու ամբողջ կազմին։ Այն հակասութիւնը, որ կար

հոգեւորականութեան պահանջների ու բարքի մէջ, ագահութիւնը, կեղծաւորութիւնը, վանականների ու քահանաների անառակութիւնը, նրանց առեւտրականին վայել վերաբերութիւնը դէպի իրենց պարտքերը, յաճախ դատապարտուում էին հասարակութեան մէջ։ Տասնեւչորսերորդ դարում եկեղեցական կարգապահութիւնը վերջնականապէս ընկաւ շնորհիւ պապութեան տկարանալուն, որ եկեղեցու գլուխ էր կանգնած։ Աստուածաբանների և աշխարհականների մէջ մի կուսակցութիւն է երևան գալիս, որ պահանջում է ամբողջ հոգեւորականութեան բարեփոխութիւնը։ Յատկապէս զօրաւոր էր այս շարժումն Անգլիայում։

Դեռ եւս էզուարդ Ա-ի ժամանակ պետական իշխանութիւնը սահմանափակեց մասնաւոր մարդոց իրաւունքը հոգեր նուիրելու վանքերին։ Էզուարդ Գ-ի թագաւորութեան վախճանին կառավարութիւնը կտրական կերպով հրաժարուեցաւ պապին վճարելու այն հարկը, որ Յովհան Անհոլինը դրել էր Անգլիոյ վրայ իրբեւ պապական աւատական երկրի վրայ։ Միեւնոյն ժամանակ սահմանափակուեցան այն դրամական պահանջները, որ պապերն անում էին նոր նշանակուած հոգեւոր պաշտօնեաներից, և ղեկարարութեանց սկսան հանդիպել դործերի փոխադրութիւնն Անգլիայից դէպի պապական կուրիան ¹⁾։ Աւելի եւ աւելի տարածում էր այն հայեացքը, որ անդիւսցիք եկեղեցական տեսակէտով կազմում են մի յատուկ ամբողջութիւն, իրբեւ մի առանձնական ազգային եկեղեցի։

Նոր ուղղութեան գլխաւոր ջատագովն էր Օքսֆորտի համալսարանի դասախօս և ծխական քահանայ ԶոնՈւիկլիֆ։ Դրան աջակցում էին հզօր աշխարհական անձինք, ի միջի այլոց և Էզուարդ Գ. թագաւորի եղբայրներից մէկը։ Ուիկլիֆը ձգտում էր ոչ միայն պապական պահանջները մերժելու, այլ և խիստ դատապարտում էր նոյն իսկ անգլիական հոգեւորականութիւնն և դրա ուղղութեան համար լաւագոյն միջոց էր համարում

¹⁾ Լատիներէն curia (արքունիք) պապի մօտ եղած խորհուրդը և դատարանն։

1381

արքունիք գրաւելն այն հարստութեան, որ կուտակուել էր եկեղեցական հաստատութիւնների վարիչների ձեռքում: Լոնդոնի եպիսկոպոսն Ուիլիլիֆին հոգևոր գատարանի ենթարկեց: Բայց աւագանու պաշտպանութիւնն ազատեց համարձակ աստուածաբանին: Նա շարունակեց գրել և քարոզել բարեփոխութեան անհրաժեշտութեան մասին, և քարոզում էր ոչ միայն ինքը միայնակ, այլ և ուղարկում էր բաղմամբ աշակերտներ իւր հայեացքները տարածելու համար: Այս «աղքատ քահանայք» շրջում էին ամբողջ Անգլիայում, դիմում էին հասարակ ժողովրդին, խօսում էին նրա հետ իւր իսկ լեզուով: Դրանց քարոզութիւնն աւելի ևս զօրաւոր ազդեցութիւն էր գործում այն պատճառով, որ ժողովուրդըն առանց դրան էլ խռոված էր, ձգտելով ճորտական իրաւունքը ջնջելու և իւր նիւթական գրութիւնը բարեւոքելու: Ապստամբութիւնն 1381 թուին ընկճուեցաւ, և այդ ժամանակ վնասուեցան և Ռիկլիֆի հետևողները, այսպէս կոչուած լոլլարդները: Նա ինքը հեռացաւ դէպի իւր ծովսը, բայց մինչև կեանքի վախճանը շարունակեց զբաղուիլ աստուածաբանական խնդիրներով: Նորա կարծիքներն հետզհետէ աւելի վճռական էին դառնում, և վերջիվերջոյ միայն անուամբ մնաց կաթոլիկ: Սուրբ Գրքը թարգմանեց նա անգլիերէն լեզուով, որպէսզի մատչելի դարձնէ աշխարհականներին: Կրօնի մէջ սկսեց ճանաչել միայն այն, ինչ որ կարելի էր հանել պարզ դասողութեամբ Սուրբ Գրքի շուրջ: Ոչ մի եկեղեցական աւանդութիւն, պապերի ոչ մի սահմանադրութիւն նորա համար պարտաւորեցուցիչ զօրութիւն չունէր: Սուրբ Գրքերի հիման վրայ դատելով Ռիկլիֆը գինուեցաւ մի ամբողջ շարք նշանաւոր վարդապետութիւնների գէմ. խորհրդների վարդապետութիւնը թուում էր նրան կամայական և սխալ, նա մերժում էր Ս. Հաղորդութեան մէջ գոյա-

փոխութեան վարդապետութիւնը, վերջին օծումն և ապաշխարութիւնը: Յայտարարեց, որ հոգևորականութեան մէջ պիտի լինին միայն երկու աստիճան— քահանայութեան և սարկաւագութեան, իսկ եպիսկոպոսական աստիճանը չը պէտք է լինէր:

Եկեղեցին, Ուիլիլիֆի վարդապետութեամբ, Գրիստոսի մարմինն է, և եկեղեցուն պատկանողները փրկուում են. բայց պատկանում են նրան ոչ թէ նոքա, որոնք արտաքուստ խոստովանում են եկեղեցու վարդապետութիւնը, ոչ էլ հոգևորականները, որոնք իւրացրել են կրօնական գործերի արտաքին ղեկավարութիւնը, այլ նրանք, որոնց Աստուած նախապահմանել է արժանապաշի քրիստոնէական կեանքի եւ փրկութեան համար:

Պապութեան դէմ նա ներշնչուած էր խորին ատելութեամբ. նրա համոզմունքով, պապը Գերաքրիստոսի (Նեո) պաշտօնեան է երկրիս վրայ: Մեծ հերձուածի շնորհիւ պապերի ազդեցութիւնն այնքան տկարացել էր, որ Ուիլիլիֆը կարողացաւ խաղաղութեամբ մեռնել իւր ծխի մէջ: Բայց նրա հետևողների գէմ ելաւ ոչ միայն հոգևորականութիւնը, այլ նաև աշխարհական իշխանութիւնը, որ դրանց համարում էր թշնամի գոյութիւն ունեցող կարգերի: Հալածանքները մի առ ժամանակ կանգ առնել տուին լոլլարդների աղանդի տարածումն Անգլիայում:

Ուիլիլիֆի ազդեցութիւնը զգացուեցաւ Բոհեմիայում: Այս երկիրը լիւքսեմբուրգեան թագաւորների ժամանակ առաջնակարգ դիրք էր բռնում միջին Եւրոպայում, որ արտայայտուեցաւ ի միջի այլոց Պրագայի համալսարանի հիմնարկութեամբ, որ կայսերական երկրներում ամենից հնագոյնն էր: Այս համալսարանի ուսանողներն ու դասախօսութիւնները բաժանուում էին չորս ազգերի— չեխական, սաքսոնական, բաւարական և լեհական: Բոհեմիայում ծաղկեցին ոչ միայն գիտութիւնները, այլ ժողովրդի մէջ նկատուեցաւ շնորհաւոր հո-

Հուս

գեկան կեանքի զարգացումը. արտայայտուեցաւ ցանկութիւն ուղղուելու ներքնապէս և ուղղելու հասարակական զեղծումները: Առանձին յաջողութիւն ունեցան համարձակ քարոզիչների վարդապետութիւնները, որոնք մերկացնում էին հոգեւորականների և աշխարհականների յանցանքները, և պահանջում վերակազմութիւն: Շատ անգամ այսպիսի քարոզիչներն յառաջ էին բերում ժողովրդի մէջ ոգեւորուած փորձեր, փոխելու իւր ընթացքը: Կանայք դէն էին ձգում իրենց թանկագին զարդարանքները,* վաշխառուներն հրաժարւում էին իրենց անարգ վաստակից, ղուարճութեան համար բացուած հաստատութիւնները փոխարկուում էին ապաստարաններ: Միւս կողմից, տեղի էր ունենում աշխույժ ֆաղափական շարժումը—չեխերի մէջ զարթոնաց ազգային գիտակցութիւն, ատելութիւն դէպի գերմանացիք, սէր մայրենի լեզուի և բնիկ սովորութեանց. յատկապէս բորբոքուեցաւ կռիւր գերմանացիների հետ համալսարանում. ուր չեխ ազգը ճգնում էր գերիշխանութիւն ձեռք բերելու, չը նայելով, որ Կարլոս Գ-ի կանոնադրութիւնով չորս ձայնից միայն մէկն էր նրան պատկանում:

Տասնևհինգերորդ դարու սկզբում կրօնական և քաղաքական շարժման գլխաւոր ներկայացուցիչը Բոհեմիայում էր համալսարանի դասախօս և Պրագայի Բեթզեմի մատրան քարոզիչ Եան Հուսը: Նա ծագմամբ գիւղացի էր և ծնուել էր հարաւ արևմտեան Բոհեմիայի ալն մասում, ուր սլաւներն ու գերմանացիք կողքէկողք էին ապրում և խիստ թշնամաբար էին վերաբերում միմիանց: Համալսարանում Հուսը զրաւեց աչքի ընկնող գիրք, մի ժամանակ վերատեսուչ դարձաւ և կանգնեց չեխական կուսակցութեան գլուխ: Վենցեսլաւ թագաւորը բարեհաճ էր դէպի չեխերը, և փոխեց համալսարանի կանոնադրութիւնը յօգուտ նրանց: Չեխ ազ-

գին տրուեցաւ երեք ձայն, իսկ բոլոր մնացածներին՝ մէկ: Այս կերպարանափոխութիւնը վերաւորեց գերմանացի դասախօսներին և ուսանողներին. դրանք հեռացան Պրագայից և հիմնեցին մի գերմանական համալսարան Լայպցիգում:

Հուսը միայն այս գործնական խնդիրներում չէր, որ մասնակցում էր. նա իբրեւ դասախօս, եռանդով պարտւում էր աստուածաբանութեամբ: Նա չէր մտածում անջատուիլ կաթոլիկութիւնից, բայց չէր կամենում կուրօրէն հնազանդիլ եկեղեցական իշխանութեան պատուէրներին, այլ աշխատում էր ինքնուրոյն կերպով մըշակել իւր համոզումները, որոնց նա պաշտպանում էր իբրեւ խղճմտանքի գործ: Հուսի գլխաւոր ղեկավարն եղաւ Ուիկլիֆը: Մասնաւոր խնդիրներում նա միշտ հետևող չէր Ուիկլիֆին. համաձայն չէր նրա հետ օրինակ, խորհրդների վերաբերութեամբ և յատկապէս հաղորդութեան, բայց անգլիական բարենորոգչի հայեցակէտը բոլորովին իւրացրել էր: Ուիկլիֆի հայեացքը Սուրբ Գրքերի մասին—Հուսը բոլորովին սեփականել էր իրեն, Սուրբ Գիրքը համարում էր նա միակ աղբիւր կրօնական հաւատալիքների: Նա պահանջում էր կրօնի իւրացումն *անձնական հասկացումով*, այսպիսի իւրացման ճանապարհը համարում էր Սուրբ Գրքերի *անձնական հասկացողութիւնը*: Փրկութեան միջոց էր համարում *անձնական վերձեցումը* Աստուծուն, աղօթքով և քրիստոնեաւոյն կեանքով:

Ջերմ համոզմունքն և անկեղծութիւնն Հուսին Հուսի մահօր ազդեցութիւն պարզեցին հասարակութեան վրա: Իբրեւ քարոզիչ Բեթզեմի մատրան, հոգեւորականների ժողովներում, թագաւորական պալատում, նա դիմում էր հասարակութեան զանազան շրջաններին, սկսած աւագանուց և զիտնականներից մինչև հասարակ ժողովուրդը: Ամենքի վրայ նա ազդեցութիւն էր գոր-

բառում
եկեղեցու
դէմ:

1412

ծում, բայց լատկապէս օգտակար և սիրելի դարձաւ հասարակ ժողովրդին: Զանազան առիթներով ստիպուեցաւ նա ընդհարուելու հասարակապէս ընդունուած կաթոլիկական հայեացքների հետ: Համալսարանում Ուիլիլիֆի վարդապետութեան առթիւ վիճաբանութիւն տեղի ունեցաւ, ուր Հոսն աշխատում էր ապացուցանել, որ այդ վարդապետութիւնն ուղիղ չեն սահմանում անգլիացի աստուածաբանի թշնամիք: Յովհաննէս ԻԳ. պապը 1412 թուին, դրամի կարօտութիւն ունենալով նէպոլսի թագաւորի հետ կռուելու համար, քարոզիչներ ուղարկեց Եւրոպայի զանազան կողմերը, թողնալով ծախելու համար—իւրաքանչիւր ոք որոշեալ գումարով կարող էր սրբօւիլ իւր մեղքերից: Հոսը բողոքեց այս այս խալտառակ առևտուրի դէմ, Բէթզհէմի մատրան մէջ քարոզեց հակառակ թողութեան թղթերի, և համալսարանում վիճաբանութեան մէջ ապացուցեց, որ մեղքերի թողութիւնը հնարաւոր է միայն մեղաւորի զղջմամբ և ուղղութեան գալով, այլ ոչ եթէ շնորհաց վաճառումով: Նա աւելի ևս հեռուն գնաց և յայտարարեց, որ պապի կոնդակը հակասում է Քրիստոսի օրէնքին, և պարտաւորիչ չէ քրիստոնեաների համար: Գործին խառնուեցաւ կառավարութիւնը, զլխատել տուաւ երեք արհեստաւոր, որոնք արգելք էին եղել հոգևորականներին քարոզելու թողութեան թղթերի մասին: Հոսն ինքը ստիպուեցաւ թողնել Պրագան, բայց նրա շարադրութիւններն ու քարոզութիւնները կատարել էին իրենց գործը: Եկեղեցական կարգերից դժգոհութիւնը, բարենորոգութեան պահանջներն սկսած աւելի և աւելի տարածուիլ, երբ գումարուեցաւ Կոնստանցի ժողովը, Հոսն ուրախութեամբ ընդունեց Սիգիզմունդ կայսեր հրաւերը Կոստանց գնալու: Նա պատրաստ էր խոստովանելու իւր համոզումներն և յայտնէր հերքելու իւր հակառակորդներին: Նրան բան-

դարկեցին Յովհաննէս ԻԳ. պապի հրամանով, բայց ժողովի մեծամասնութիւնը զիջողաբար էր վարուում դէպի Հոսը: Այս մեծամասնութիւնը, որի պարագլուխներն էին Փարիզի աստուածաբաններն, ինքն էլ ցանկանում էր բարենորոգութիւններ, թէպէտև աւելի նեղ սահմանով, քան թէ չեխական բարենորոգիչն էր պահանջում: Եկեղեցական ժողովի հայրերը դատապարտեցին Ուիլիլիֆի աղանդը, իսկ Հոսից պահանջում էին միայն անորոշ հրաժարումն իւր կարծիքներից: Բայց ամեն տեսակ կեղծաւորութիւն խորապէս աւելի էր Հոսին: Նա յամառութեամբ հաստատուն մնաց իւր ասածի վրայ, և պնդում էր, որ իրեն չեն հասկանում, խնդրում էր, որ իրեն ուսուցանեն և համոզեն, և ոչ եթէ հրամայեն «ստել և հակառակ խղճմտանքի վարուիլ»: Վերջապէս նրան մահուան դատապարտեցին, թէպէտև մինչ պատժի վայրկեանն աշխատում էին կորզել նրանից հրաժարումն: Բայց Հոսը խարոյկ բարձրացաւ կատարեալ հանգստութեամբ: Վերջին համոզման փորձերին պատասխանեց. «Ես ձգտում էի մարդկանց հեռացնել մեղքերից: Այս ճշմարտութեան մէջ, որ ես քարոզում էի համաձայն Յիսուս Քրիստոսի աւետարանի և սուրբ վարդապետների մեկնութեանց, կամենում եմ այսօր ուրախութեամբ մեռնիլ» (1415):

1415

Հոսի մահը Բոհեմիայում զայրույթի պայթիւն լա-
հաջ բերաւ: Զեխ աւագանին բողոք ուղարկեց ժողովին
Հոսին այրելու դէմ: և պարտաւորուեցաւ թոյլ տալ իր
երկրներում Աստուծոյ խօսքի ազատ քարոզութիւնը:
Բարենորոգութեան պաշտպաններն սկսան պահանջել,
որ աշխարհականներին հաղորդութեան երկու տեսակիցն
ևս տան, այսինքն՝ հաց և գինի, ըստ պատուէրի Փրկչի:
Կաթոլիկ եկեղեցականութիւնը յատկացրել էր իրեն սկի-
հից հաղորդուելու բացառիկ իրաւունքն և դրանով իւր
ու աշխարհականների մէջ ապօրինի անհաւասարութիւն

1420

էր դրել, զրկում էր ժողովրդին Քրիստոսի Արիւնից: Հուսեաններն 1420 թուին յայտնեցին հետեւեալ պահանջներն ամփոփուած չորս «պրագեան յօդուածներում».¹⁾ 1) ազատ քարոզութիւն. 2) հաղորդութիւն երկու տեսակով ևս. 3) եկեղեցական հողերի զրաւումն յարքունիս. 4) հալածանք յանցանքների դէմ (օր. արբեցողութեան, ստախօսութեան և այլն): Այս կրօնական շարժումն միեւնոյն ժամանակ և ազգային էր. հուսեանք զինուեցան ամենայն բանի դէմ, որ գերմանական և ռումանական էր:

Վենցեսլաւ թագաւորի մահուանից լետոյ սկսաւ հուսեանների բացարձակ ու յաղթական պատերազմը Սիգիզմունդի և գերմանացոց դէմ: Կրօնական և հայրենասիրական ոգևորութիւնն հուսեաններին անյաղթելի էր դարձնում: Բայց հուսեանք միաբան չէին: Ոմանք, այսպէս կոչուած *կալիկսիսները*¹⁾ (բաժակականները), պատրաստ էին չափաւոր զիջումներով հոգևորականութեան կողմից գոհանալու: Այս կուսակցութեան էին պատկանում հասարակութեան ունևոր դասակարգերը, իսկ զրանց առաջնորդ էին Պրագայի քաղաքացիք ու համալսարանն: Կալիկստիսների հակառակ, *քալիորալանները*²⁾ գլխաւորապէս գիւղական շրջաններից էին և հետևող էին ծալրահեղ հալեացքների: Դրանք մերժում էին կրօնից ամենայն ինչ, որ կարելի չէր ուղղակի եզրակացնել Սուրբ Գրքերից, մերժում էին պատկերներին ու նշխարներին երկպառակութիւնը, գոյափոխութեան, քաւարանի վարդապետութիւնները, եկեղեցական արարողութիւնները:

Դրանք խստակեաց էին, չատ ժամանակ էին նուիրում աղօթքի, սուրբ Գրքի ընթերցանութեան, քարոզի Դրանք

¹⁾ Calix—բաժակ, բառից: Դրանց կոչում էին և ուստախոսներ, որովհետեւ զրանք պահանջում էին հաղորդութիւն երկու տեսակով (sub utraque specie).

²⁾ Հարաւարեմտեան Բոհեմիայում գտնուած յեռան անունով, որ նրանք ամուր բանակ էին կազմել և կոչում էին թափօր:

հետևում էին հին կաթոլիկների հրէաներին և իրենց կրօնականութեամբ, որ թափանցում էր նրանց ամեն գործերի և յարաբերութիւնների մէջ, դարձան, իրապէս, նրանց նման: Նրանց համայնքների խիստ կարգապահութիւնը սակայն չէր արգելում ընդունելու և քարոզելու խղճմտանքի ազատութիւնը, այսինքն՝ ազատութիւն իւրաքանչիւր մարդու մշակելու սեփական կրօնական համոզումներ:

Այսպիսով, զանազան կողմերից վտանգներ էին Բագելի եկեղեցական սպառնում կաթոլիկ եկեղեցուն: Կոնստանցի եկեղեցական ժողովը կան ժողովն ընդունեց տիեզերական ժողովների գլխաւորութիւնը պապի վրայ. միջին Եւրոպայում կազմուեցաւ հուսեանների սպառնացող զօրութիւնը, որ չէին կարողանում ընկճել գերմանացիք. ամենուրեք զգացուում էր եկեղեցական բարենորոգութեան անհրաժեշտութիւնը: Եւգենիոս Գ. պապը 1431 թուին ժողով գումարեց Բագելում եկեղեցական գործերի քննութեան համար, և այդ ժողովը նպատակ դրաւ իրեն եկեղեցին թագեւորողը ամեն մասերով (in capite et membris): Պապը վախեցաւ գործի այսպիսի ընթացքից և փորձեց ժողովը ցրուել, բայց դա չէր ցըրուում և դրանով աւելի ևս վճռական կերպով հըռչակեց ժողովների գերիշխանութիւնն եկեղեցու վրայ: Եւգենիոս Գ. ստիպուեցաւ հնազանդուիլ և լեռ վերցնել ժողովի լուծման կոնգակը: Այն ժամանակ Բագելի ժողովը ձեռնարկեց եկեղեցական գլխաւոր խնդիրների քննութեան և ամենից առաջ զբաղուեցաւ հուսեաններով: Դրանց հետ կապուեցան «կոմպակտատներ», որոնցով իրաւունք էր տրուում նրանց հաղորդուելու երկու տեսակով և, բացի սրանից, նրանց մի քանի այլ զիջումներ ևս եղան: Կոմպակտատներն, հարկաւ, չը գոհացրին թափօրականներին, բայց կալիկստիսներն սկըսում էին երկիւղ կրել իրենց մուշեւանդ ընկերներից և հակառակ չէին կաթոլիկների հետ հաշտուելուն, որպէս զի խուսափեան եկեղեցան եւ քաղաքացիական յարա-

1431

1439

քերտրիւններէ կասարեայ յեղաշրջումից: Հուսեան-
ների հերձուածը կորուստ պատճառեց նրանց գործին: Կալիկստիները ջարդեցին թափորականներին, իսկ կաթո-
լիկ եկեղեցին, որի հետ նրանք հաշտուել էին, քիչ քիչ
հրաժարուեցաւ նրանց արած զիջումներից: Հուսեան
գործից յետոյ Բագելի ժողովը զբաղուեցաւ եկեղեցական
կազմակերպութեան ուղղութեամբ և ձեռք մեկնեց այն
տուրքերի վրայ, որ ժողովում էր հռովմէական կու-
րիան (պապի պալատը). ի միջի այլոց նա ապօրինի
հրատարակեց *սարեկանները* կամ *աննասները*, այս-
ինքն՝ հրատարակեց, որ ինքն հակառակ է այն բանին,
որ պապերը մի տարի օգտուին նոր նշանակուած պաշ-
տօնեաների ռոճկից: Եւգենիոս Դ. չէր կամենում հա-
մաձայնիլ իւր արդիւնքների ալսպիսի նուազեցման: Նա
ճարպիկութեամբ օգուտ քաղեց այնու, որ յոյները, ո-
րոնք այդ ժամանակ միութեան խնդրի համար բանակ-
ցութիւններ էին վարում, ցանկութիւն յայտնեցին Խա-
լիա գալու ժողովի. առաջ վարելով այս նշանաւոր գոր-
ծը, պապը ժողով գումարեց Ֆլորենտիայում, որ, լիրա-
ւի, հաստատեց եկեղեցեաց միութիւնը (1439): Բագե-
լում ժողոված «հարց» մեծամասնութիւնը հնազան-
դուեցաւ, որովհետեւ *նոր հերձուածից երկիւղ էր կը-
րում*. փոքրամասնութիւնը հալուում էր տարեցտարի,
բայց մնում էր Բագելում մինչև 1449 թիւը, մերկա-
ցնում էր Եւգենիոս Դ-ին, նոր պապ ընտրեց, որոշում-
ներ հրատարակեց, որոնց վրայ ոչ ոք ուշք չէր դարձ-
նում: Վերջ ի վերջոյ դրանք ևս ստիպուեցան Եւգենիոս
Դ-ի յաջորդին ճանաչել:

Սառնարո-
ւա

Պապութիւնն յաղթող դուրս եկաւ հուսեանների
և բագելեան ժողովի հարց դէմ վարած կռուից, որով-
հետեւ թէ մէկի և թէ միւսի մեծամասնութիւնը չէր
վստահանում եկեղեցական յեղափոփոխութիւն առաջ
բերել: Պապերը մի շարք համաձայնութիւններ (կոն-

կորդատներ) կապեցին եւրոպական տէրութիւնների հետ,
որոնցով որոշուում էին այն առիթներն ու եղանակնե-
րն, որով ժողովուում էին տուրքեր յօգուտ պապական
արքունիքի: Եւ Եփ. դարու վախճանի պապերը հան-
գրտութեամբ վայելում էին այս յաղթանակի պտուղ-
ները: Քահանայապետներն իրենք ուսումնասիրում էին
հին հեղինակներին, հովանաւորում էին արուեստագե-
տներին, նուրբ գիւտագիտական խաղ էին խաղում Նէա-
պօլիսի և Վենետիկի, կայսրների և Ֆրանսիական թագա-
ւորների հետ, իրենց մերձաւոր ազգականներին պա-
տիւնների ու հարստութեան հասցնում, բոլորացնում
էին իրենց երկրները. հռովմէական կուրիան օգուտ էր
քաղում բոլոր առիթներից, որպէս զի շահ ստանայ բո-
լոր քրիստոնեայ աշխարհից. բարձր հոգեւորականու-
թեան շարքերը լցուում էին աշխարհական ազնուական-
ներով և այդ դասակարգն համարում իրեն մի դասակարգ
Աստուծոց կոչուած մարդկանց հոգեւոր առաջնորդու-
թեան համար. ստորին հոգեւորականութիւնն աչքի էր
ընկնում տգիտութեամբ և անտարբերութեամբ դէպի
իւր պարտականութիւններն. վանականների մասին ա-
ռած էր կազմուել, որ կեղծաւորներ են ու իրենց քա-
րողածների ուղղակի հակառակն են գործում: Տասնե-
հինգերորդ դարու վերջին տարիներին այս անկարգու-
թիւնը կրկին յառաջ բերաւ զայրոյթի մի փայլուն բոր-
բքումն: Ֆլորենտիայում Լորենցո Մեդիչիի մահուա-
նից քիչ յետոյ վերահաստատուեցաւ հասարակապետա-
կան կառավարութիւն: Այս տեղի ունեցաւ Ֆրանսիա-
ցոց թագաւոր Կարլոս Ը-ի դէպի Խալիա արշաւանքի
ժամանակ. քաղաքում վերահաստատուեցաւ ժողովրդա-
կան ժողովարանը, 80-ից ծերակոյտն և ընտրովի քաղա-
քապետներն: Ֆլորենտիայի հոգեւոր ղեկավարն եղաւ
այդ ժամանակ Դոմենիկեան վանական Ջերոլամօ Սառ-
նարոլան: Սա չ'ունէր գիտնականութիւն և գեղարուես-

տական կրթութիւն, բայց անսովոր ազդեցութիւն էր գործում ժողովրդի վրայ իւր ոգեւորուած ճառով, կրօնական զգացմամբ և հոգու աներկիւղութեամբ: Սաւանձին յարգանք ներշնչեց նա ֆլորենտինացոյց Կարլոս Ը-ի արշաւանքի ժամանակ. պաշտպանեց քաղաքի շահերը թագաւորի առաջ, իսկ երբ թագաւորն ուշացրեց դաշինքի կատարումը, այն ժամանակ Սաւոնարոլայն ստիպեց նրան կատարելու իւր խոստումը: Վերահաստատուած հասարակապետութեան մէջ Սաւոնարոլայն ձեռնարկեց քարփերի ուղղորդեալն հասարակութեանն եւ եկեղեցուն մէջ և սկզբում նրա քարոզն անսպասելի յաջողութիւն ունեցաւ: Զուարճասէր ֆլորենտացիք հրաժարուեցան իրանց սովորական ուրախութիւններից, անձնատուր եղան ապաշխարութեան, ճիգը թափեցին լինել ժուժկալ, համեստ, վարքով, արտաքին ձևերով զգեստով. բարիկենդանին 1497 թուի երիտասարդութիւնը փոխանակ տօնելու ուրախ Բարիկենդանի տօնը, խարոյկ կազմեց թեթևամիտ գրքերից, նկարներից, արձաններից, դիմակներից, զգեստներից, և բոլոր այս «դատարկութեան արգասիքները» հանգիստաւ կերպով կրակի մատնուեցան: Բայց Սաւոնարոլայն պահանջում էր ֆլորենտինացի հասարակութիւնից աւելի, քան թէ կարող էին նոքա կատարել: Լարուած կրօնականութիւնն եւ քարոյական կարգապահութիւնը շուտով ձանձրացրեց աշխոյժ եւ շուտ սպառնորդեալն սակ ընկնող ժողովրդին:

«Լալկանների» գէմ ոտքի կանգնեցին այն մարդիկ, որոնք սովոր էին ազատ և հաճելի կեանք վարել: Դոմինիկեան քարոզչի գէմ ժողովուրդը խռովում էին նոյնպէս մեղիչների բռնակալութեան գաղտնի օժանդակողները, որոնք Սաւոնարոլային համարում էին հասարակապետութեան նեցուկներից մէկը. իսկ որ գլխաւորն է, նա զրգուեց իւր գէմ հոգեւորական-

նութիւնն և հռովմէական կուրիան, որովհետեւ պահանջում էր եկեղեցու բարենորոգութիւն: Սաւոնարոլայն երբէք չէր զբաղուում դաւանաբանական խնդիրներով և մնաց համոզուած կաթոլիկ, բայց նրա ջերմեւռանգութեամբ լի հոգին չէր կարող հաշտուիլ եկեղեցու անկման հետ. և նա քարոզչական բեմից մերկացրնում է հոգեւորականութեան և նայն իսկ Սլէքսանդր Զ. Բորջա պապին: Բազմաթիւ թշնամիք ամենայն կերպով աշխատում էին խախտել Սաւոնարոլայի հեղինակութիւնը: Ի միջի այլոց նրանք սովորեցրին մի ֆրանցիսկեան կրօնաւորի, Սաւոնարոլային հրաւիրելու Աստուծոյ դատաստանի, հին մենամարտութեան ձևով. ախոյեանները պէտք է անց կենային բորբոքուած խարոյկների միջով և ենթադրուում էր, որ նա, որի խիղճը մաքուր էր և գործն արդար, պիտի մնար անվնաս, իսկ մեղաւորը պիտի կորչէր: Սաւոնարոլայի հետևողներից մէկը նրա փոխարէն հանդէս դուրս եկաւ փորձութեան ենթարկուելու, և ֆլորենցիայի գլխաւոր հրապարակում վառուեցան խարոյկները, հաւաքուեցաւ ժողովուրդը: Վերջին վայրկեանին գործը խանգարուեցաւ, որովհետեւ ֆրանցիսկեան կրօնաւորը վախեցաւ. իսկ ժողովուրդը գժգոհ մնաց Սաւոնարոլայից, որն անձնապէս կարծես թէ փախուստ տուաւ Աստուծոյ դատաստանից: Թշնամիք օգուտ քաղեցին այս անհաճոյ տրամադրութիւնից և Սաւոնարոլային բանտը դրին: Նրան տանջանքների ենթարկեցին, որպէսզի խոստովանութիւն կորզեն, որով կարելի լինի նրան մեղադրել իբրեւ աղանդաւոր: Թշուառն սկզբում «խոստովանութիւն արաւ», բայց լեռն ոգի առաւ և չընայելով դժոխային տանջանքներին, մերժեց բոլորովին իւր լանցաւորութիւնը: Պապը ֆլորենցիա ուղարկեց լանձնակատարներ, որպէս զի դատաւարտեն լանդուզն կրօնաւորին, «եթէ մինչև անգամ երևի, որ նա Յովհաննէս

1498

Մկրտիչն է: Նրան 1498 թուին կախաղան հանեցին իւր երկու կողմնակիցների հետ միասին:

ԳԼՈՒԽ Բ.

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ:

եկեղեցին
և գրական-
ութիւնը

Կաթողիկ եկեղեցին ձգնում էր իրեն հպատակեցնել աշխարհական հասարակութիւնը: Նրա քաղաքականութեան դէմ կանգնեցին միջին դարերու երկրորդ կիսումը կազմուած ազգային տէրութիւնները. նոյն իսկ եկեղեցու մէջ երեւան եկան մտածող մարդիկ ու քարոզիչներ, որոնք այդ հոգեւորի եւ աշխարհականի խառնուրդի մէջ տեսնում էին չարիքի արմատը, հոգեւորականութեան վատթարանալու պատճառը: Բայց աշխարհական իշխանութեան ձգտելը սերտ կապուած էր մի այլ միջնադարեան գաղափարի հետ—համոզման, որ աշխարհական կեանքն ու մարդկային բնութիւնը դատապարտուած են յանցանքի ու մեղքի, որ մարդս պէտք է կուռի իւր բնութեան դէմ, իսկ աշխարհական հասարակութիւնը պէտք է ամեն բանի մէջ հետեւի հոգեւորականութեան ցուցմունքին: Բարոյականութեան իդէալ դարձաւ ճգնաշրջապահը, իսկ մտքերի առաջնորդութիւնը ստանձնեց սփոխարկիւն (գլորցական ուղղութիւնը): Սակայն, ինչպէս որ անհնարին եղաւ ազգային պետութիւնների դարգացումն կանգ առնել տալիս եւ պապին տիեզերքի կառավարիչ դարձնելն, այդպէս եւս անհնարին եղաւ խեղդել մարդկանց մէջ բնական պահանջներն, աշխարհական շահերն, կանգ առնել տալ մարդկային մտքի գործունէութիւնը գիտութեան եւ գրականութեան մէջ: Սակաւ առ սակաւ աճում էր բարեկեցութիւնը, աշխուժանում էին մարդկանց յարաբերութիւնները միմեանց հետ, կատարելագործուում էր քաղաքական կազմակերպութիւնը, գիտութիւններն աւելանում էին եւ ամբապնդուում էր գիտնական հետազոտութիւնը: Եւ եթէ եկեղեցու բարենորոգիչները պահանջում էին սուրբ Գրոց ազատ հետազոտութիւնը, գրագէտներն, արուեստագէտները, գիտնականները պահանջում էին ազատութիւն խելքի ու բարոյականութեան վրայ եղած խնամակալութիւնից: Թէ մէկ եւ թէ միւս կողմը հանդէս էին դուրս գալիս անձնական ազատութիւն պահանջելով եկեղեցուց, որ կլանել էր անձնականութիւնը: Մտաւոր ասպարիզում կռիւն աւելի վաղ էր

սկսուել, քան եկեղեցու արտաքին զօրութեան խախտուիլը: Արդէն Ժ.Պ. դարու սկզբում երեւան են գալիս նոր դարաշրջանի առաջին նշանները:

Հոհնչատառփենների անկումից քիչ յետոյ, գուկլիկների գիւրեղիկների կոիւնների ժամանակ, ծնաւ Ֆլորենտայում միջին դարերի ամենամեծ բանաստեղծը—Դանտէ Սլիդիէրին (1265): Նա ծագում էր մի ունեւոր, թէպէտեւ ոչ շատ հարուստ ընտանիքից եւ մասնակցում էր հայրենի քաղաքի քաղաքական կեանքին, անդամ էր բարձրագոյն խորհրդարանի, նոյն իսկ առաջաւորներից կամ պրիորներից, այսինքն՝ Ֆլորենտիայի գլխաւոր քաղաքապետութեան պաշտօնեաներից մէկն էր: Նա կուսակից էր նրանց, որոնք յարաբերութիւն էին պահանջում գիւրեղիկների հետ եւ 1302 թուին արտորուցեալ քաղաքից իւր կուսակիցների հետ միասին: Այդ ժամանակից սկսած Դանտէն յայտնի կերպով անցաւ գիւրեղիկների կողմը. Իտալիոյ եւ քրիստոնէութեան փրկութիւնը նա սպասում էր կայսեր իշխանութիւնից, եւ ոգեւորութեամբ ողջունեց Հենրիկոս Է-րդ լիւքսեմբուրգցուն, երբ նա վերսկսեց Հոհնչատառփենների քաղաքականութիւնը: Բայց Դանտէի ցնորքներին չէր վիճակուած իրականանալ, եւ նա մեռաւ երկար թափառելուց յետոյ Հռաւեննայում 1321 թուին:

Դանտէ

1265

1302

1321

Դանտէն գրել է մի քանի նշանաւոր երկեր, ի միջի այստեղ մի գիրք միապետութեան մասին, որի մէջ ապացուցական կերպով նույն է, որ հռովմէական կայսրը պիտի տիրէ աշխարհիս: Բայց իւր մեծ փառքը ստացաւ նա Հաստուածային կատակերգութիւնը՝ կոչուած հեղինակութեամբ Այս վիպասանութեան մէջ, որ գրուած է իտալիէն ոտանաւորով, Դանտէն պատմում է, թէ ինչպէս 1300 թուի գարնանը ինքը մի անսովոր ուղեւորութիւն կատարեց: Սկզբում նա հռչակաւոր Վերգիլիոսի հետ չրջեց ամբողջ դժոխքը. ապա Վերգիլիոսն անցկացրեց նրան քաւարանով, եւ վերջապէս, Բէատրիչէն, Դանտէի մեռած սիրեկանը, ցոյց տուաւ նրան արքայութիւնը: Այս հրաշալի ճանապարհորդութիւնը հնար է տալիս բանաստեղծին անսովոր ուժով եւ պայծառութեամբ նկարագրելու տիեզերական եւ իտալական պատմութեան գործիչներին, որոնց հոգիքը տեսել էր նա դժոխքում, քաւարանում, եւ արքայութեան մէջ, դրա հետ միասին նա արտայայտում է իւր դատողութիւններն այն ինդիւիդների վերաբերութեամբ, որ խռովում էին մտքերը նրա ժամանակի: Բայց նա զրեց իւր երկը ո'չ թէ նրա համար, որ

Աստուածային կատակերգութիւն

1300

այդ առանձին առիթների մասին իւր կարծիքներն յայտնէ. նրա վիպասանութիւնը մի տեսակ հաւայեցական քառա-
րան է բոլոր գաղափարների եւ տեղեկութիւնների ժ.Դ. դարու,
նման Թովմա Ա. քուրմացու աստուածաբանական շարադրու-
թեանը: Դանտէի նպատակը բարոյական եւ կրօնական էր—նա
կամենում էր իւր ժամանակակիցներին յետ դարձնել ունայն
գրադնութեան, սեղանից ու երկաթալուծքի, ուղ-
ղել նրանց մտքերը դեպի կրօնի եւ բարոյականութեան յարի-
սեցական սկզբունքները: Նա փոխանակ այդ խնդիրների մա-
սին վերացական կերպով դատելու, ստեղծեց մի ձեւ, որ մի-
ջոյ տուաւ նրան մարմնացնելու իւր խրատները պատկերնե-
րով, իսկ Դանտէի բանաստեղծական ստեղծագործութեան ոյժն
այնքան մեծ էր, որ նրա ստեղծած պատկերները կարծես թէ
ապրում են մեր աչքի առաջ, նրա նկարագրած զգացմունքնե-
րն մինչեւ այժմ իսկ աչքի տեսնում են մարդկանց սրտերը:

Վերացական մտքերի եւ խրատների միաւորութիւնը
մարդկանց նկարագրութեան, նրանց ձգտումների ու տանջանք-
ների հետ մի առանձին բնավորութիւն են տալիս Աստուծա-
յին կատակերգութեան, զոր մէջ շարունակ գործ են դրուում
փոխաբերութիւններ, սայլափոխական դարձուածներ, այսինքն՝
պատկերներ ու պատմութիւններ, որոնք, բացի իրենց ուղղա-
կի մտքից, ունին եւ փոխաբերական նշանակութիւն, ընթեր-
ցողին դրոշմ են դէպի աւելի ընդհանուր եւ խորին մտքերը,
քան թէ այն, որ ցոյց է տալիս ուղղակի իմաստը: Օրինակ՝
Դանտէն նկարագրում է իւր վիճակն ուղեւորութիւնից առաջ.
հասնելով կենսական ուղու միջնակայքը, նա մոլորուել է մութն
անտառում, եւ, ի սարսափ իւր, նրան չըջապատել են վայրի
զազաններ—առիւծը, գայլն ու ինձը: Փրկելու է հասնում Վիր-
գիլիոս բանաստեղծի ստուերն, որի հետ եւ Դանտէն սկսում
է իւր ուղեւորութիւնը դէպի գոթիք ու քաւարան: Այս ամէնս
պատմւած է իբրեւ իրական արկած, բայց դիւրին է նկատել,
որ այս պատմութիւնն ունի եւ ծածուկ միտք: Խնդիրը չէ վե-
րաբերում անտառային ճանապարհի վրայ պարզապէս մոլորուե-
լուն, այլ կեանքի ուղուց շեղուած մարդու ճակատագրի մէջ
տեղի ունեցող թշուառութիւններին. նոյն իսկ զազանները նը-
շանակ են մեղքերի ու գայթակղութեանց, որոնք չըջապա-
տում են մարդկանց: Նրան օգնութեան է հասնում հոռիմէա-
կան հնութեան մեծագոյն բանաստեղծն, որ մարմնացումն է
խելիի ու եռանդի: Բայց զրա ուժերն եւս բաւական չեն,

Դանտէին երկինք տանելու համար. երանեայների երջանկու-
թիւնը տեսնում է ուղեւորը չորհիւ Բէտտորիչէի, որ նշանակ
է թէ մաքուր, վերաբարձրացնող սիրու, եւ թէ երկնային եկե-
ղեցու մարդոց պաշտպանութեան:

Այն տեսութեան մէջ, որ տալիս է Աստուծային կատա-
կերգութիւնը, չեն արտայայտուում միայն Դանտէի ունե-
ցած տեղեկութիւնները, որ նա քաղել էր եկեղեցու հայրերից
եւ սքոլաստիկոսներից, հին հեղինակներից եւ արաբական ի-
մաստուններից: Նա ամեն ինչ վեր է ածում բանաստեղծական
աստուածաբանութեան, որ համաձայն է կաթոլիկ եկեղեցու
վարդապետութեան: Առանձին անձնաւորութիւնը նրա համար
անբաժան մասն է մեծ եկեղեցական ամբողջութեան. անձնա-
ւորութիւնը չէ գիտում անմիջապէս Աստուծուն, նրա կեանքն
ու ձգտումները հիւսուած են միապաղաղ ու դաշնակաւոր հա-
մակարգութեան մէջ, ուստի եւ նրա նշանակութիւնը հասցրած
է համաստ չափի եւ նրան տրուած է պաշտօնային դեր: Այս
կողմից Դանտէի վիպասանութիւնը միջնադարեան հողի վրայ
է, բայց նրա մէջ կան քանի մի գծեր, որոնք նախադուշակում
են այն շարժումն, որ հակառակ է միջնադարեան կաթոլիկու-
թեան:

Արդէն նոյն իսկ անտառի մէջ թափառումը մի այլափո-
խութիւն է ոչ միայն Դանտէի, մի առանձնական մարդու
կեանքի համար, այլ եւ՝ բանաստեղծին ժամանակակից հասա-
րակութեան վիճակի: Դա շեղուել է ուղուց, ընկել է անկար-
գութեան ու մեղքի մէջ: Հասարակութեան համար չարիքի
արմատն այն է, որ երկու զօրութիւններ, որոնք, միջնադա-
րեան հասկացողութեամբ, կոչուած էին առաջնորդելու աշ-
խարհիս, հետագեղ էին իրենց կոչումից. կայսրները կորցրել-
էին իրենց իշխանութիւնը կամ չէին կարողանում օգուտ քա-
ղել նրանից, պապերը ձգտում էին իրենց չըպատկանող աշ-
խարհական իշխանութեան: Աշխարհս փոխանակ, որ բարօրու-
թեան մէջ լինէր մի միակ կայսեր արդար խնամակալութեան
տակ, լի է երկպառակութիւններով. եկեղեցին փոխանակ, որ
հոգեպէս կրթէր մարդկանց, նրանց ազահութեան, իշխանասի-
րութեան, ամենատեսակ յանցանքների օրինակ է տալիս. նոյն
ինքը Պետրոս առաքեալը մերկայնող ճառ է խօսում նրա դէմ:
Այս հայեացքների մէջ շատ բան բացատրուում էր նրանով, որ
Դանտէն—գիրքին է եւ համոզուած կողմնակից հոռիմէական
կայսրութեան, ինչպէս որ այդ հասկացուած էր միջին դարե-

րում: Սակայն եկեղեցական կարգերի եւ, մանաւանդ, պապե-
րի գործողութեանց դատապարտութեան մէջ նա այնքան հե-
ռու է գնում, որ խախտում է նոյն իսկ կաթողիկ կազմակեր-
պութեան հիմունքը: Բնորոշ է որ նա ոչ մի պապ չէ գետե-
ղել արքայութեան մէջ. եկեղեցական շահասիրութեան դատա-
պարտութիւնը՝ նրա մէջ այն միտքն է ծագեցնում, որ եկեղե-
ցին պիտի հրաժարուի առհասարակ ամենտեսակ ստացուած-
քից. վերջապէս, թէպէտ եւ Դանտէի աստուածաբանական
չէնքն ամբողջապէս եւ համապատասխանում է կաթողիկ վար-
դապետութիւն, բայց արդէն ա՛յն անսովոր է երեւում, որ այդ
սխալներն ինքնուրոյն կերպով է կազմուած, ազատաբար, այն
եւս բոլորովին մի աշխարհական մարդուց, որ ո՛չ մի պաշտո-
նական իրաւունք չ'ունէր խօսելու եկեղեցու անուամբ:

Այսպիսով Դանտէն ոտք դրաւ ազատ ունեւորական սեղծա-
գործութեան նոր հողի վրայ: Զուր մի կողմը չը ձգեց նա իւր
ժամանակակիցների դպրոցական լատիներէնն եւ իւր վիպասա-
նութեան մէջ դրաւ իսպերեկ գրական շեղուի հիմաքարը. զրպ-
պրոցում ուսած օտար լեզուն կը սահմանափակէր նրա հանձարն,
նա պէտքէ դիմէր կենդանի ժողովրդական լեզուին, որպէս զի
արտայայտութիւններ գտնէր մտքերի բոլոր ոլոր մոլոր պտոյտնե-
րի եւ զգացումների բոլոր նրբութեանց համար: Դանտէն դարձաւ
արեւմտեան Եւրոպայի մեծամեծ քանասեղծներից առաջինը:

Հումանիստ-
ներ:

Եւրոպական կեանքի պայմանները սակաւ առ սա-
կաւ սկսան դէպի լաւը փոխուել, մարդկանց ընդունա-
կութիւններն ու գիտութիւնը զարգացան, իսկ, միւս
կողմից, աւելի ու աւելի զգացումում էր պառակտումն
միջին դարերում իշխող դարձած գաղափարներից: Իշխող
եկեղեցին, ճգնաւորական բարոյականութիւնը, սքոլաս-
տիք գիտութիւնը, որոնք երկար ժամանակ կառավա-
րում էին մարդկանց, այժմ սկսան դժուարակիր դառ-
նալ, զարթոցնում էին դժգոհութիւն եւ բողոք: Պեղե-
ցիկ Իտալիայում թէ նիւթական բարօրութիւնը, թէ
մտաւոր յառաջադիմութիւններն աւելի արագ էին յա-
ռաջանում, քան թէ Եւրոպայի այլ երկրներում, եւ այն-
տեղ կազմուեցաւ մի նոր ուղղութիւն, որ սկսաւ մա-
քառել միջնադարեան գաղափարների դէմ: Այս ուղղու-

թեան կողմնակիցներն իրենց մտքերը չ'էին կենտրոնա-
ցնում միւս աշխարհի կեանքի վրայ, այլ հետաքրքր-
ուում էին երկրային կեանքով, փոխանակ մաքա-
ռելու իրենց քնական հակումների դէմ, նրանք ամե-
նայն միջոցներով աշխատում էին դրանց զարգացնել ու
գոհացումն տալ. եւ ոչ միայն չ'էին վախենում երկրա-
յին փառքից, սիրուց, հարստութիւնից, իշխանութիւ-
նից, այլ համարում էին այդ ամէնը կեանքի մեծագոյն
բարիք:

Նոր ուղղութեանս պատկանող մարդիկ չ'էին մերժում եւ
կեղեցին, այլ դիմախօսում էին դրա ամենին զեկաւարելու փոր-
ձերին: Դրանց մտածողութիւններն աշխարհային էին, դրանց
հարկաւոր էր նոյնպէս աշխարհային գիտութիւն եւ գրական
նութիւն: Սքոլաստիկայի վրայ նրանք նայում էին իրրեւ մը-
տաւոր լուծի վրայ, որը սպանում է կենդանի միտքը նոյն իսկ
սաղմի մէջ եւ դատապարտում է մարդու անշարժութեան:
Փոխանակ սերտութեամբ խմբուելու եկեղեցու շուրջը, խոնար-
հութեամբ ընդունելու նրա խրատներն, նոր մարդիկ անձնա-
տուր եղան անձնական քանականութեան ու մաշակի առաջ-
նորդութեան: Նրանք տեսնում էին, որ չրջապատի աշխարհ
այնպէս էլ մտալ եւ սոսկալի չէ, ինչպէս այդ թուում էր միջ-
նադարեան ճգնաւորներին, եւ հաւատում էին, որ նոյն իսկ
ընութիւնը չէ փչացած արմատից, այլ, ընդհակառակն, ազնիւ է,
ընդունակ կատարելագործութեան եւ երջանկութեան: Մա-
քառելով միջնադարեան յափշտակութեանց դէմ, նոր մարդիկ
հակադարձ յափշտակութեան մէջ ընկան: Եթէ միջին դարե-
րում մարդս դրուած էր եկեղեցու ծանր խնամակալութեան
տակ, դրա հակառակ նոր ուղղութեան մարդիկ բոլոր իրենց
յոյսը դրին մարդու ինքնուրոյնութեան վրայ: Նոր ուղղու-
թեանս հետեւողն համարում էր իրեն երկարատեւ քնից զարթ-
նած. երկար ժամանակ չրջապատել ու տանջում էին նրան
երազի մէջ զանազան սարսափներ, ցնորումէր նա անտեսա-
նելի, ամպերի միւս կողմն ընկած աշխարհների մասին. եւ
յանկարծ զարթնում է եւ տեսնում իւր շուրջը հրապուրիչ իրա-
կանութիւնը, հասկանում է, որ կարող է ազատ շարժուիլ եւ
մտածել: Այս արթնութեան ցնծալի գիտակցութիւնն ումանց
հասցնում էր անմիտ ազատութեան եւ մինչեւ իսկ կռապաշ-
տութեան:

Պաշտպանելով մարդու արժանիքն ու իրաւունքները, դրանք արժանացան հռչակահրատան: Հոլմանիստների կռիւը միջնադարեան աշխարհահայեցողութեան, սքոլաստիկայի և ճգնաւորութեան դէմ մի յատուկ ձև ստացաւ, որովհետեւ նրանք եկեղեցու դէմ գործ դրին նրա գէնքերից մէկը: Եկեղեցին միջին դարերում իւր լաջողութիւնը մեծ մասամբ պարտական էր հին դասական կրթութեան ժառանգութեան, որ հասել էր իրեն, թէպէտ իբրև խղճուկ մնացորդներ: Հոլմանիստները դիմեցին նոյնպէս դասական հնութեան, բայց որոնեցին նրա մէջ այլ կողմեր, քան այն, որոնք ծառայում էին եկեղեցուն: Դասական հնութիւնը զարթեցնում էր հոլմանիստների ոգևորեալ համակրութիւնը. որովհետեւ հին աշխարհում նրանք գտան փայլուն աշխարհական քաղաքացիական, անկախ եկեղեցու ազդեցութիւնից, ներշնչուած անձնական առաքիկութեան, մարդկային գեղեցկութեան, երկրային երջանկութեան գաղափարներով:

Պետրարկա, Իտալական առաջին մեծ հոլմանիստն էր Ֆրանչեսկո 1304—1374, Պետրարկան (1304—1374): Դանտէի պէս նա էլ Ֆլորենտացի էր ծագումով և նոյնպէս շատ էր թափառել զանազան կողմերում: Բայց Պետրարկան նեղութիւն չէր կրել ճակատագրի հալածանքներից. նա ունէր եկեղեցական արդիւնաւէտ պաշտօն, թէպէտ և հոգւով ու զբաղմունքներով բոլորովին աշխարհական անձն էր: Հռչակուեցաւ նա տիրուհի Լաուրայի պատուին երգուած իտալական ոտանաւորների ժողովածուով, դասական հեղինակների շարադրութիւններն որոնելու աշխատանքներով, վերջապէս, անձնական յարաբերութիւններով ժամանակակից գործիչների հետ, որոնք արտայայտուում էին, ի միջի այլոց, ընդարձակ թղթակցութեամբ:

Պետրարկայի սիրուհին, նրա Լաուրան, Դանտէի Բէատրիչէի պէս, մոռելէր բանաստեղծից առաջ, Բանաստեղծի սէրն ևս, ինչպէս Դանտէինը, գաղափարական ու վերացական էր: Սա նրան ներշնչում էր գեղեցիկ ոտանաւորներ, որոնց մէջ նա ամենափոքրիկ առիթներից օգուտ է քաղում, որ զանազան և

զանալներով արտայայտէ իւր զգացմունքներն ու փառաւորէ Լաուրային: Բայց վերջինս այսու ամենայնիւ այլաբանական պատկեր չէ զառնում Բէատրիչէի նման. բանաստեղծը միշտ աչքի առաջ ունի մի իրական անձնաւորութիւն և նրան է նուիրում իւր տաղանդը:

Պետրարկայի թղթակցութիւնը ցոյց է տալիս մեզ նրա զբաղումների ու հետաքրքրութեան անսովոր քաղաքականութիւնը: Հեղինակն արհամարհանօք է վերաբերուում զբարոյական գիտութեանց, իւր ժամանակի աստուածաբանութեան, իրաւագիտութեան, բժշկութեան: Դրա փոխանակ նա իրական կեանքի մէջ ամեն տեղ մի հետաքրքրական բան է գտնում. նրան խռովումն քաղաքական խնդիրները, նա երազում է Իտալիոյ միացման, պապի Հռովմ գարձի, հռովմէական հասարակապետութեան ¹⁾ վերականգնման մասին. մեծ քաղաքը, բնութեան անսովոր մի երեւոյթ, իւր գեղեցկութեամբ յայտնի մի վայր, միատեսակ գրաւում էին նրա ուշադրութիւնը: Բայց ամենից աւելի հետաքրքրում է նրան մարդ, մարդկային հոգին: Նա ճարտարաւեստ լեզուով պատմել է, օրինակ, ինչպէս մի բարձր լերան գագաթ բարձրանալուց յետոյ, վայելելով ձիւնապատ լեռնաշղթայի և չրջակայ հովիտների գեղեցկութիւնը, նա բաց է արել երանելի Օգոստինոսի գիրքն ու պատահել այս բառերին, որոնք զարմացրել են նրան իրենց մտքերի խորութեամբ, և ևս մարդիկ գնումն զարմանալու լեռանց գագաթների վրայ, ծովային և լայն գետերի ընթացքի ջրերի ահագին քանակութեան, ովկիանոսի անսահման տարածութեան և աստղերի շարժման վրայ, — իսկ իրենց վրայ ուշք չեն դարձնում. դէպի իրենց անձը զարմանքով չեն վերաբերուում: Պետրարկան մանրամասնօրէն հաղորդում է իւր թղթակիրներին, հասարակութեան և յաջորդ սերնդներին իւր ամենափոքր գործի կամ հոգեկան շարժման մասին: Դրա մէջ արտայայտուում է այն նշանակութիւնը, որ նա տալիս է մարդուն անձնական կեանքին, արտայայտուում է նոյնպէս իւր նշանակութեամբ ու փառքով զմայլուիլը. նա ոչ միայն չէ ամաչում այդ զգացմունքից, այլ, ընդհակառակն, ի ցոյց է հանում այդ և ճանաչում է այն իբրև գլխաւոր խթան լաւ դրժերի:

Թէ այս և թէ այլ մասամբ Պետրարկան ազգակցական

¹⁾ Պետրարկան, ի միջի այլոց, սրտանց ողջունեց Նոլա դի-Ռիւնցոյին:

գծեր է գտնուած հնէրի մեջ: Նրանց մեծ գրականութիւնը նրա մէջ յարուցանում է մի կատարեալ ակնածութիւն: Նա որոնում է ձեռագրեր, գնում եւ տարածում է դրանց: Պետրարկայի սիրելին էր յատկապէս Կիկերոնը: Յունարէն նա չը գիտէր գրեթէ եւ ստիպուած էր կենտրոնանալ լատինական հեղինակների ուսումնասիրութեան վրայ: Նա ոչ միայն ուսումնասիրում էր դրանց, այլ եւ՝ մրցման մէջ էր մտնում նրանց հետ, նրան է պատկանում մի բաւական ճանձրալի լատիններէն վիպասանութիւն, որ նուիրուած է Սկիպիոն Ափրիկեցու քաջագործութեանց նկարագրին:

Պետրարկան կատարելապէս գուշակել եւ արտայայտել է իւր դարու հոգեւոր ձգտումները: Այս պատճառաւ եւս ներան վիճակուել է մի այնպիսի փառք, որպիսին յաճախ չէ վիճակուում պատմական գործիչներին: Թագաւորները, իշխանները, եպիսկոպոսները, քաղաքների հասարակապետութիւնները մըրցակցութեամբ աշխատում էին գոհացնել նրան ու փառաւորել: Նա դաժնէ պսակով պսակուեցաւ Կապիտոլիումում: Հեռուից մարդիկ էին գալիս, որ միայն տեսնեն նրան: Նոյն իսկ այդ ազմակալից փառքը նշանակ էր հումանիզմի, անձնաւորութեան զարթոնելուն, նրա նշանակութեան եւ արժանիքի ճանաչման:

Բոկկաչիո:

Պետրարկայի կրտսեր ժամանակակիցը, Փլորենտացի Բոկկաչիոն, իւր անձով հումանիստութեան պատմութեան մէջ մի այլ կողմն է արտայայտում: Ոչ այն, որ նա աւելի քիչ թշնամութեամբ էր լցուած սքոլաստիկայի դէմ, աւելի քիչ հետաքրքրուած մարդու անձնականութեամբ, սիրով դէպի հին կրթութիւնը, այս ամենի մէջ նա Պետրարկայից յետ չէր մնար: Բայց նրա գլխաւոր վաստակն է հեղինակութիւնը «Դեկամերոնի», խոսակցական կեանքից վերցրած պատմութիւնների մի ժողովածուի, ուր ճարտարութեամբ նկարագրուած են այն ժամանակի հասարակութեան բաղմազան տիպերը: Մեր առջեւից անցնում են կեղծաւոր արքաները, մուրցիկ կարգերի կոպիտ կրօնաւորները, փքուած գիտնականներն եւ հանգոյցակարկաւորաւազէտները, հնարագէտ արուեստաւորները, ուրախ ասպետներն ու տիկնայք այն ժամանակի Բացի դուարձարանութիւններից եւ պայծառ բնորոշումներից գիրքս աչքի է ընկնում իւր կենսադուարճ, նոյն իսկ շուայտ ոճով: Ընդհանրապէս դա մի բողոք է խիստ ձգնաւորական բարոյականութեան դէմ, իրական կեանքի դուարճութիւնների ու մարդկային բնութեան ուժերի գովարանութիւն: Յատկապէս նշանաւոր է այն, որ

Բոկկաչիոն այս զիպուածում միայն մեծ կատարելագործութեան հասցրեց գրական այն ուղղութիւնը, որ ծագել էր նրանից շատ առաջ, դեռ եւս միջնադարեան շրջանի ամենավառ ժամանակ: Բոկկաչիոյի վէպիկները սերտ կապ ունին Փրանսիական եւ իտալական առասպելների (Ֆարլիո) հետ, որոնց մէջ Ժ. Գ. դարու քաղաքացիք ծաղրում էին աղնուականների եւ հոգեւորականների յանցանքներն եւ արտայայտում այնպիսի կենսական հայեացքներ, որոնք նման չէին ճգնաւորական քարոզներին:

Այս բոլոր շարժման ընդարձակ նշանակութիւնն երեւում է նրանից, որ Ժ. Գ. դարու վերջին մի արժանաւոր արտոյան է հանդիսանում Բոկկաչիոյին բոլորովին մի նոր շրջապատում — Անգլիայում: Չոսերը մանր աղնուականներիցն էր, որ երկար ժամանակ Լոնդոնի մաքսատանը վերակացուի պաշտօն ունէր: Սրա «Կենարբերի պատմութիւնները», Դեկամերոնի պէս, մեծ մասամբ կազմուած են Փարլինսերի նիւթից: Անգլիացին խտալացուց աւելի կարգաւորութեան հետեւող երեւեցաւ, նա ժողովեց անգլիական հասարակութեան բոլոր դասակարգերը, բնաւորոյց նրանց իւր յառաջարանում եւ ապա իւրաքանչիւրի բերանը դրաւ նրա վիճակին ու բնաւորութեան յարմար մի պատմութիւն: Եկեղեցականների ու աշխարհականների մեղքերը Չոսերը Բոկկաչիոյից ոչ պակաս անխնայութեամբ է ծաղրում: Սրա պատմութիւններն եւս ճիշդ այնպէս, ինչպէս Բոկկաչիոյինը, ներշնչուած են թարմ եւ ուժեղ կենսականութեամբ, դուրս են բերուած քանի մի դրական իրաւունք, այսինքն այնպիսի անձինք, որոնց հայեացքներն ու վարքը հեղինակն հաւանում եւ յանձնարարում է իրել օրինակ արժանի հետեւելու: Հասարակութեան այսպիսի գաղափարական ներկայացուցիչ երեւում է խեղճ գիւղական քահանան, որ ոչ ճգնաւոր է եւ ոչ գիտնական, այլ հովիւ է, իւր հօտի սիրով ներշնչուած, գործունեայ օգնական եւ առաջնորդ բարի գործերի մէջ: Չոսերն ապրում էր եւ գրում հէնց այն ժամանակ, երբ Ուիկլիֆը ողբերում էր իւր «խեղճ քահանաներին»:

Իտալիայում հումանիստների թիւն աճում էր: Հումանիզմի դրանք վայելում էին թագաւորների եւ մեծամեծների տարածումը: Հովանաւորութիւնն ու մուտք էին գործում ամենուրեք, ուր պէտք էին գրական հմտութիւն եւ ճարտարութիւն — դառնում էին դասախօսներ, գիւտնագիտա-

կան գործակալներ, պապերի քարտուղարներ, հռովմէական կուրիայի պաշտօնեայք, պալատական բանաստեղծներ: Մի քանիսն հասնում էին փառքի և բարձր գիւրքի—Նիկողայոս Ե. և Պիոս Բ. պապերը նշանաւոր հումանիստներ էին և իրենց բարձրացումը պարտական էին գրական գործունէութեան: Միւս կողմից, այն ժամանակի իտալական իշխաններից շատերը չ'էին գոհանում հովանաւոր լինելով հումանիզմի, այլ իրենք հանդէս էին գալիս իբրեւ գրագէտներ--ամենից նշանաւորն էր Լօրենցո Մեդիչին: Իտալիայից սկսաւ հումանիզմը ժե. դարում տարածուիլ և դէպի միւս երկրները, յատկապէս դէպի Գերմանիա և Ֆրանսիա:

Լորենցո
Վալլա:

Այսպիսով, հումանիզմը տիրեց Իտալիայում հասարակութեան բարձր դասակարգերին, եւ կարելի էր կարծել, որ դա յեղաշրջումն յառաջ կը բերէ հաստատութիւնների եւ կարգերի մէջ, եկեղեցու բարեփոխութիւն կը ծնի եւ կը փոփոխէ պետական կազմն եւ այլն: Իրապէս սակայն այդ չը պատահեցաւ: Հումանիստներն յայտնի ու համարձակ քննադատում էին եկեղեցին, կրօնը, բոլոր գոյութիւն ունեցող հաստատութիւնները, բայց մեծ մասամբ չ'էին ձգտում զործնական քարեկոորդումներ յառաջ բերելու նրանց մէջ: Նրանց ուշքը գրաւել էին գրեթէ րացառապէս գրականութիւնը, գիտութիւնը, կրթութիւնը: Նըրանք դիւրաւ էին հաշտուում այն զեղծումների հետ, որ տեղի էին ունենում քաղաքագիրտութեան եւ եկեղեցու մէջ, որից չ'էին քաշուում, որովհետեւ ոչ մէկն եւ ոչ միւսը ոչ միայն չ'էին խանդարում նրանց մտածելու, խօսելու եւ ազատ ապրելու, այլ նաեւ օժանդակում էին օգտակար կերպիւ իրենց կեանքը կարգադրելու եւ նիւթապէս ապուհոյութեան: Լաւ օրինակ է ժե. դարու հումանիստների գործունէութեան եւ հայեացքներին այդ ժամանակի տաղանդաւոր գիտնականներից մէկը, Լորենցո Վալլան: Նա սկսեց իւր բնթացքն իբրեւ դասախօս Պաւլայում, բայց ստիպուեցաւ փախչելու այնտեղից, որովհետեւ յանդգնել էր ապացուցանել, որ հռովմէական իրաւունքի հեղինակաւոր մեկնիչներից մէկը լատիններէն լաւ չը գիտէր եւ չ'էր հասկանում այն բնագիտները, որ մեկնում էր Իւր քաղաքից քաղաք թափառումների ժամանակ Վալլան գրեց մի շա-

քաղաքութիւն «Վալելքի մասին», որի մէջ բաց ու յանդուգն կերպով դէմ էր դուրս գալիս քրիստոնէական բարոյականութեան եւ պաշտպանում էր եպիկուրեան ուղղութիւնը: Այս չարադրութիւնը մեծ հալածանքների ենթարկեց նրան, բայց աւելի եւս գրգռեց իւր դէմ հոգեւորականութիւնը մի այլ շարադրութիւնով, որի մէջ զարմանալի ճարտարութեամբ եւ հրժրութեամբ ապացուցեց, որ այն աւանդութիւնը, որի համաձայն իբր թէ Կոստանդին Մեծը պապին է նուիրել հռովմէական երկիրը, մի աղակ է: Վալլայի դրութիւնը վտանգաւոր էր դառնում, բայց նրան ապաստանարան տուաւ Ալֆոնս Նէապոլսեցին, եւ այդ թագաւորի կենդանութեան ժամանակ նա կարող եղաւ համարձակօրէն շարունակել իւր գրադմունքները, այդ ժամանակ, ի միջի այլոց, յօրինեց մի գիրք լատիներէն լեզուի նրբութեանց մասին: Երբ Ալֆոնսը մեռաւ, Վալլան ցանկութիւն յայտնեց Հռովմում ապրելու: Նրա համոզումներն ամենեւին չ'էին փոխուել, բայց նա առանց վարանելու հրաժարուեցաւ իւր գրքերից եւ ձեռք բերաւ պապի քարտուղարի պաշտօնը: Հռովմումն էլ նա աւարակեց իւր կեանքը:

Գասական հնութեան առաջ երկրպագութեան մէջ ^{փրկսոփայութիւն} վերածննդեան գործիչներից ոմանք այնքան հեռու էին գնում, որ յափշտակուում էին կռապաշտութեամբ եւ արհամարանք էին արտայայտում դէպի քրիստոնէութիւնն: Աւելի լուրջ նշանակութիւն ունեցան յունական հին փիլիսոփայութիւնը վերակենդանացնելու փորձերն եւ դրանից օգտուելը կրօնական հայեացքները վերանորոգելու համար: Այս շարժումը կապ ունի յունարէն լեզուն եւ գրականութիւնն ուսումնասիրելու հետ, որ սկսաւ ԺԳ. դարու վերջին: Փորբենտեան Ժողովի ժամանակ եւ յատկապէս Կոստանդնուպոլսի առումից յետոյ տաճիկների ձեռքով, Իտալիայում երեւեցան բազմաթիւ գիտնական յոյներ: Սրանք բերին թանկագին ձեռագրեր, ուսուցանում էին լեզուն եւ նպաստեցին այն բանին, որ իտալացիք սկսան բողոքել Արիստոտելին սքոլաստիքական կերպով ուսումնասիրելու դէմ: Իտալիայում դարձեց հիմնուեցաւ, որ ուսումնասիրում էր Պլատոնին

և այդ փիլիսոփային մի աեսակ պաշտօն էր մատուցանում: Ֆլորենտինայում ստեղծուեցաւ «պլատոնեան ճեմարանը», որի անդամները ժողովուրդում էին խօսակցութեան և ընթերցանութեան համար փիլիսոփայական և և գրական խնդիրների վրայ: Պլատոնի ծննդեան ենթադրական օրը—նոյեմբերի 7.—տօնում էին հանդեսաւոր նիստ կազմելով. ոգևորուած երկրպագուք մինչև իսկ լամպարներ էին վառում փիլիսոփայի պատկերի առաջ:

Մաքիավելլի

1494—1512:

Դասական հնութեան վերածնութիւնն անհետեւանք չ'անցաւ և քաղաքական գիտութեանց համար: Հրնգետասաներորդ դարու վերջին մի մարդ գտնուեցաւ, որ այնպէս խորն ուսումնասիրեց ու բացատրեց իւր դաւաճանի քաղաքական հայեացքներն ու կանոնները, որ դրանք դարձան քաղաքական տեսութիւններից մէկը: Այդ մարդը Ֆլորենտացի Մաքիավելլին էր: Դա այն շրջանի մարդկանցից մէկն էր, որոնք գործում էին հասարակապետութեան վերականգնման և Մեդիչիների Ֆլորենտիա վերագառնալու միջավայրիկենում (1495—1512): Իբրև քարտուղար և զիւանազիտական գործակալ՝ Մաքեավելլին շատ ծառայութիւններ արաւ քաղաքին: Մեդիչիների գարձն ստիպեց նրան հեռանալու գիւղն և նուիրուելու գրական զբաղմանց: Մաքիավելլու գլխաւոր շարադրութիւններն էին. «Դատողութիւններ Տիտոս Լիւիոսի առաջին տասնամատենի մասին» և «Իշխանն» (Il Principe) հետազօտութիւնը: Հեղինակը ներշնչուած է հին պետական գաղափարով: Պետութիւնը նրա համար երկրի վրայ եղած բաներից բարձրագոյնն է, մասնաւոր մարդը պիտի ծառայէ պետութեան, զոհէ նրան իւր շահերը, գոհացուումն որոնէ այն փառքի և ընդհանուր օգտի մէջ, որ բերումէ այդպիսի ծառայութիւնը: Ամեն բան, որ քայքայում կամ սահմանափակում է պետութիւնը, չարիք է. այս պատ-

ճառով Մաքիավելլին թշնամաբար է նայում եկեղեցու վրայ, որ մաքառում էր պետութեան դէմ և այդքան վնասել էր նրան Իտալիայում: Իբրև իսկական հայրենասէր, Մաքիավելլին երազումէ Իտալիոյ միացման մասին, օտարներին վռնտելու, իտալական հողի վրայ հաստատուն կարգի և զօրեղ իշխանութեան հաստատման մասին: Բայց այդ բանին հասնելու համար, պէտքէ մի շարք յեղափոխութիւններ յառաջ բերել, և Մաքիավելլին ուշադրութեամբ ուսումնասիրում է այնպիսի յեղափոխութեան համար կարևոր գործողութեանց միջոցներն ու եղանակները: Հասարակապետական կազմութիւնը այդ դէպքում պիտանայու չէ—պէտք է բռնակալի եռանդուն եսականութիւն: Մաքիավելլու գլխաւոր պատուէրն է. *«նա, որ դիմում է քարճրագոյն նպատակի, բոլոր բոլոր միջոցները քարոյժ համարէ: Մասնաւոր բարոյականութեան մականբերութիւնները քաղաքականութեան մէջ գործադրելի չեն. «Իշխանը» պէտք է լինի, նայելով պահանջման, անգութ, նենգաւոր, որովհետև նա շրջապատուած է վտանգներով, շիտակութիւնը, համեստութիւնը, պարկեշտութիւնը նրա համար վատ նեցուկներ կը լինեն: Քաղաքական գործերում Մաքիավելլին մեծ վարպետ է համարում Ալեքսանդր Զ. պապի որդուն, Չեզար Բորջային, որ սկսաւ ոչնչից և կարող եղաւ եռանդով, ճարպիկութեամբ, դաւաճանութեամբ և անգթութեամբ ստեղծել իւր համար մի զօրեղ իշխանութիւն:*

Գեղարուեստի մէջ տեղի ունեցաւ ոչ աւելի պակաս խորին փոփոխութիւն, քան թէ գրականութեան մէջ: Աշխարհային *«սրտադրութիւնն»* եւ *«հին օրինակների ուսումնասիրութիւնը»* յեղաշրջումն առաջ բերին *«մարտապետութեան»* մէջ, փոխանակ եկեղեցիք չինելու, առաւելագէս պապսներ են չինում, եթէ մինչև իսկ եկեղեցի են կանգնում, դա իւր արտաքին զարդերով պալատի կերպարանք է առնում: Գոթական ճաշակն սկսում է ընկնել, իտալացի ճարտարապետները կրկին

Գեղարուեստ

նորաձեւութեան մէջ են մտցնում ուղղանկիւրն չէնքերն, որ յիշեցնում են հոռիմէական շինութիւնները Մեծ ուշադրութիւն են դարձնում զարդարանքների վրայ, որ յաճախ աչքի է ընկնում իւր շքեղութեամբ, բայց երբեմն սեթեւեթեալ է դառնում Վերածնութեան (Ռեկոնստրուկցիոն) ամենից տաղանդաւոր ճարտարապետն էր Բրոնզեյլեակոն, ամենից տիպարականը—Ալբերտին։ Վերջինս հետաքրքրական է իւր թաղանթաւ ընդունակութիւններէ եւ գիտութեանց միացումով։ զօրեղ եւ գեղեցիկ անձն, նա Ֆլորենտիայի փիլիսոփայական ձեռնարանի գործունեայ անդամներից մէկն էր, հռչակուել էր ընտանիքի հօր եւ տնտեսի պարտքերի մասին գրած մի շարադրութեամբ, յաջողութեամբ պարապում էր երկրաչափութեամբ, մեքենագիտութեամբ եւ ուղեշինութեամբ, գրել է թանկագին հեղինակութիւններ նկարչութեան, արձանագործութեան եւ ճարտարապետութեան մասին, եւ ինքն էր նկարիչ, արձանագործ, առաջնակարգ ճարտարապետ։

Արձանագործութեան մէջ բնութեան եւ հին օրինակների ուսումնասիրութիւնը մեծ յառաջադիմութեանց պատճառ եղաւ։ Դոնատելլոյ արձանները կարող են յոյն արձանագործների ձեռագործների հետ մրցել, դրանցից յետ են նրանք գեղեցկութեամբ ու ներդաշնակութեամբ, բայց աչքի են ընկնում անսովոր արտայայտութեամբ։ Միւս արձանագործը, Գիբերտին, երկար տարիներ աշխատելով ստեղծել է Ֆլորենտիայի եկեղեցիներից մէկի բրոնզէ դրանց գլխի խորաքանդակները (քարեղիւփ), ոչ մի արձագործի չէ յաջողուել այդպէս մօտենալու այն տպաւորութեան, որ գործում է նկարչութիւնը, ինչպէս Գիբերտին։

Բոլոր գեղարուեստներից նկարչութիւնը դառնում է այդ ժամանակ ամենից ժողովրդականն եւ համեմատելի զարգացման։ Յեղաշրջումն սկսաւ նրա մէջ Զոտտոյից, որ ապրում եւ գործում էր Ֆլորենտիայում ԺԳ. դարու վախճանին եւ ԺԴ. դարու սկզբում։ Սա առաջինն էր, որ թողեց բիւզանդական ազդեցութեան տակ կազմուած օրինակներին նմանուելն ու սկսաւ դիտել եւ վերաբարեկրնութիւնը։ Նրա ձեւերը պարզ են ու կոպիտ, նա դեռ եւս չէ կարողանում արտաքին գոյացութեանց յաղթել, բայց նրա նկարների մէջ զգացումով է կենսական ճշմարտութիւն եւ բնութեան հասկացողութիւն։ Նրա հետեւողներն ուսանաւելի լաւ նկարել եւ միեւնոյն ժամանակը շարունակեցին բնութեան նմանեցնել։

Այլ ուղղութիւն է արտայայտում նկարչութեան մէջ Ֆրանսիական (ԺԵ. դ.) վանականի նկարներում։ Նա չէր կամենում նկարներ ստեղծել, այլ ցանկանում էր սրբերի պատկերներ նկարել։ Նրա համար զիսաւորը կրօնական նպատակն էր։ Այս պատճառով նրա սրբերն ու հրեշտակները հին ձեւով հանդիսաւոր դիրք ունին եւ նկարուած են սովորաբար ոսկեգոյն յատակի վրայ։ Բայց նրան յաջողում էր արտայայտել կրօնական զգացումը, երկնային երանութիւն եւ գեղեցկութիւն, որ պիտի միջնէ նրա ժամանակը—ոչ ոք չէր կարողացել արտայայտել։

Պէտք է աւելացնել, որ եթէ գեղարուեստն առանձնապէս զարգանում էր ու ծաղկում Իտալիայում, միւս երկրներումն եւս տեղի էր ունենում աչքի ընկնող եւ ինքնուրոյն շարժումն ունեցող մտքով։ Առանձնապէս նշանաւոր են արձանագործութեան եւ նկարչութեան սկզբնաւորութիւնները Գերմանիայում եւ Նիդերլանդում։ Անյատելի նկարիչները չ'ունին իտալացոց ճաշակն, չեն հասկանում գեղեցկութիւնն եւ վատ են ճանաչում մարդու մարմինը, բայց վարպետ կերպով են ներկայացնում մարդկանց բնաւորութիւնն ու տրամադրութիւնը եւ զարմացնում եւ խորաւսնորքաւ եւ բանաստեղծական զգացումով։ Դրանցից ամենից աչքի ընկնողներն էին Ֆան-Էյկ եղբայրք։

Ստույգ եւ բնական գիտութիւնների մէջ շարժումն աւելի Գիտութիւնների է նկատելի, քան թէ գրականութեան կամ գեղարուեստի։ Բայց յամենայն դէպս սքոլաստիկան իւր դարն անց էր կացրել—վերացական դատողութեանց տեղը բռնում են գիտողութիւնն ու փորձը։ Այս կողմից առաջին ուղի բացանողներն եղան արաբացիք։ Անգլիացի Ռոթէր Բէկոնը ԺԳ. դարու վերջին հանդէս եկաւ պաշտպանելու փորձնական գիտութիւնը ընդդէմ սքոլաստիկայի։ Նրա մակացութիւններից եւ ծրագրերից շատերն երեւակայութեան պոռոգ երեւեցան, բայց նրա աշխատութիւնների ընդհանուր ուղղութիւնն արգասաւոր նութիւնն եղաւ արեւմտեան քրիստոնեայ Եւրոպայի համար։ Նա մի քանի մասնաւոր գիւտեր եւս արաւ—նա էր, օրինակ՝ առաջինը, որ ուշք դարձրեց տեսողական ապակիների, լուսոյ ճառագայթների կոտրուելուն եւ պրիզմայի վրայ։ Նա ծանօթ էր վառօդի ազդեցութեան եւ առաջարկում էր գործ դնել այդ ուղիներ արձակելու համար։

ԳԻՏԵՐ ԵՒ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մտաւոր ինքնուրուշութիւնն և ձեռնարկող ոգին, որ արտայայտուում են վերածնութեան դարաշրջանում, կարող չէին սահմանափակուիլ գրականութեան, զուտ գեղարուեստի և տեսական գիտութեան շրջանով: Դրանք երևան եկան, ի միջի այլոց, բնութիւնը ստորադրելու, նրա ուժերը մարդկանց շահի համար ղեկավարելու զարմանալի փորձերի մէջ: Այս ժամանակի դանազան գիւտերից երկուսն ունին համաշխարհային նըշանակութիւն:

Ռոմեր Բէկոնը ժ.Գ. դարու վերջին գտաւ վառօդը, բայց նրա գիւտը չը տարածուեցաւ, և ժ.Գ. դարու կիսին գերմանացի Փրանկիսկեան կրօնաւոր Բերթոլդ Շուարցն երկրորդ անգամ արաւ այդ գիւտը: Դրանից յետոյ վառօդը գործադրութեան մէջ մտաւ. գլխի բնական, թէ քնչ սոսկալի գէնք կարող է լինել մետադէխողովակը, որի միջից վառօդային գազերի բռնկումը ռումբեր կարող է արձակել: Հետզհետէ գործադրութեան մէջ են մտնում թնդանօթները, իսկ ապա և հրացանները: Արդէն ժ.Ե. դարում այդ դեռ ևս շատ անճոռնի անօթները մեծ յեղափոխութիւն են ձգում զինուորական գործի մէջ: Հարկւումեայ պատերազմի ժամանակ պարզուեցաւ հետեակագործի և աղեղնաւորների նշանակութիւնը—հրացայտ գէնքերի գործածութիւն աւելի ևս մեծացրեց հետեակ գործի նշանակութիւնը: Ասպետական հեծելազուններ չէր կարողանում մաքառել նրա դէմ: Ինչ վերաբերում է քնդանօթազրնդին (արտիլլերիա), դա կարող էին ունենալ միմիայն բաւական հզօր տիրապետները, իսկ այդ հանգամանքը նոյնպէս խախտում էր աւատականութեան նըշանակութիւնը. դրանք առաջ յաջողութեամբ դէմ էին

գնում իրենց ղեկակների մէջ նոյն իսկ զօրաւոր դրացիներին, իսկ այժմ չէին կարողանում պաշտպանուիլ պարիսպները կործանող գործիքների դէմ: Այսպիսով, վառօդի գիւտը կողմնակի կերպով մեծ ծառայութիւն արաւ իրապետներին և հարուստ հասցրեց առաստիկան ազնուականութեան: Հետեակագործ կազմելու ժամանակ վարձկանների պահանջն աւելացաւ: Ամեն տեղ կազմուում են գնդեր, ուր մտնում էին փախած շինականներ, արհեստաւորներ, մանր քաղաքացիք: Այս շանդակներին, ինչպէս դրանք կոչուում էին Գերմանիայում, լատկապէս սովորում էին նշան առնել, սուսերամարտ և կարգով շարժուիլ, անցնում էին մի պատերազմի դաշտից դէպի միւսը, մի երկրից միւսը, դառնում էին գործաւոր բնակիչների համար խարազան և գլխաւոր գործիք այն ժամանակուան իշխանասէր թագաւորների համար: Առանձնապէս գնահատուած էին գերմանացի և զուիցերացի վարձկանները:

Վերածնութեան դարու մի այլ մեծ գիւտ աւելի քարերար ազդեցութիւն ունեցաւ: Առաջին տպագրութեան գիրքը հրատարակուեց Մայնցում 1450 թուին: Տպագրութեան գիւտը միանգամայն տեղի չ'ունեցաւ: Դեռ ևս ժ. դարում չինացիք արտադրելու աշխատանքը փոխարինեցին փայտի վրայ շինարարութեամբ: Միևնոյն բնագիրը մի քանի անգամ արտադրելու փոխարէն, փորագրում էին այդ փայտէ տախտակի վրայ հակադարձ ղերքով, ներկ էին քսում տախտակի երեսին և վրան փռում թղթի կամ կտաւի թերթերը: Եւրոպայում այս եղանակը սկսուեցաւ առաջին անգամ գործ դրուիլ Հոլլանդիայում ժ.Ե. դարու սկզբում: Այս ձևով տպագրում էին աղօթքներն և բացատրութիւնները, որոնք կցուում էին սրբոց պատկերներին, որոնք մեծ քանակութեամբ էին ծախուում աժան գնով: Մի հոլլանդացի ժ.Ե. դարու սկզբում մտածեց տպագրութեան տախտակը կազ-

Տպագրութիւն

1450

մել բաժանի բաժանի տառերից: Նա կամենում էր տեղափոխել տառերն ըստ պահանջման, և, այդպիսով, օգտուում էր նույն տառերով շատ բնագիրներ տպագրելու համար: Բայց փայտը բաւական ամուր նիւթ չէր, այդպիսի նպատակի ծառայելու համար: Մայնցի բնակիչ Յոհան Գուտտենբերգը 1436 թուին արաւ, վերջապէս, վերջին քալը տպագրութեան գիւտի: Նա ձուլեց մետաղէ տառեր եւ հետեւեց մետաղե տառերին: Նա հրատարակեց 1450 թուին լատիներէն Սուրբ Գիրքը: Տպագրութեան գիւտըն առանձնապէս պատշաճ պատահեց այն դարաշրջանին, երբ գրական երկերով հետաքրքրուելը զօրեղ կերպով աճում էր: Գրքերի գինն արագութեամբ ընկաւ. դրանք մասշտնի դարձան ոչ հարուստ մարդոց եւ սկսան տարածուիլ բազմաթիւ օրինակներով:

Տասնհինգերորդ դարու մարդոց փորձիչ ձեռնարկները նարկութեան ոգին երևում էր ոչ միայն գիւտերի մէջ — նրանք փնդում էին և նորանոր ճանապարհներ, բառիս բուն իմաստով, աշխատում էին յայտնի երկրների շրջանակն ընդլայնել: Դասական գրականութիւնը պահել էր փիւնեկեցոց համարձակ ծովագնացութիւնների մասին լիզողութիւն. միջին դարերում նորմանները յայտնագործեցին Իսլանդիան, ապա Գրէոնլանդիան, վերջապէս, Ժ. դարում հասան մինչև Կանադայի ափունքը, որ նրանք կոչեցին Վին-լանդ, գինու երկիր: Դէպի հեռաւոր ծովագնացութեան դիմումէն Ժ. դարում պորտուգալացիք ու սպանիացիք նորանոր երկրներ յայտնագործելու համար: Պորտուգալական արքայազն Հենրիկոսը կազմեց մի շարք արշաւախմբեր Ափրիկէն հետազօտելու համար: Դրանց մերձաւորագոյն նպատակն առեւտրական էր. փղոսկրի, համեմունքի, թանկագին մետաղների ձեռք բերել, Հնդկաստանի ուղիւ գտնել, որովհետեւ այդ երկրի արգիւնքներն ստիպուած էին

ստանալ մահմետական վաճառականների միջոցաւ: Այսպէս յայտնագործութեան Ափրիկէի արեւմտեան ափունքն և դրանց մերձակայ կղզիք. վերջապէս, Դիագը հասաւ Բարեյուսոյ հրուանգանին: Վասիլո-դե-Գաման 1498 թ. պտտեց այդ հրուանգանի շուրջն, թէպէտ նրա նաւատիրք ապստամբեցան և չէին կամենում հետեւիլ նրան դէպի անծանօթ արեւելեան ծովը: Վասիլոն զսպեց ապստամբներին, նաւեց Ափրիկէի արեւելեան եզերքի երկարութեամբ և անցաւ հնդկական օվկիանոսի միջով: Նա այսպիսով բացաւ ծովային հաղորդակցութիւնը Հնդկաստանի հետ, որից օգուտ էր քաղում եւրոպական առևտուրը մինչև Սուեզի ջրանցքի փորումը:

Քիչ առաջ Քրիստափոր Կոլումբոսին յաջողուելէր Կոլումբոս մի աւելի նշանաւոր գործ: Կոլումբոսը, ծնուել էր ձերովայում, նա ուստանակի որդի էր և ուսել էր Պաւլիի համալսարանում: Տասնեւեց տարեկանից սկսեալ նաւել առևտրական նաւերի վրայ. Ժ. դարու եօթանասնական թուականներին Պորտուգալիա ընկաւ և պորտուգալացոց հետ միասին եղաւ նրանց ափրիկեան կալուածներում: Եղել էր նա և Իսլանդիայում, ուր, կարելի է, որ լսած լինէր արեւմտեան ցամաքի մասին, որ յայտնագործել էին նորմանները:

Պորտուգալիա դառնալուց յետոյ երկու իրողութիւն նրան դէպի գործ զրգեցին և ներշնչեցին այն ծրագիրը, որի կատարումը տիեզերական փառքի արժանացրեց նրան: Փլորենտացի աստեղաբաշխ Տոսկանելլին ուղարկեց պորտուգալական թագաւորին երկրիս քարտէսը և դրա բացարտութիւնը, որ հիմնուած էր այն ենթադրութեան վրայ, որ երկիրս գնդաձեւ է եւ որ Աշխարհիւն ովկիանոսի եւրոպային հակադիր ափում գտնուում է Զինաստանը: Կոլումբոսը յարաբերութիւն սկսաւ Տոսկանելլու հետ և ստացաւ նրանից նույնտեսակ ցուցումներ: Նույն ժամանակները նրա եղ-

բայրը դարձաւ Գիւղի արշաւանքի ուղեւորութիւնից և պատմեց, որ ծրագիր կայ Հնդկաստան հասնելու, պստելով քարեյուսոյ հրուանդանի շուրջը։ Կոլումբոսը վճռեց, որ պէտք է որոնել Զինաստանի և Հնդկաստանի ուղիք արեւմտեային։ Նա կարծում էր, որ Եւրոպայի և Ասիայի հեռաւորութիւնն այդ ուղղութեամբ մեծ չէ և պէտք է միայն կտրել ովկիանոսը, ասիական ցամաքին հասնելու համար։ Այս միտքը բոլորովին տիրեց նրան։ Նա երազում էր այդ մեծ գործը գլուխ հանելու, իսկ ապա նաւիրուելու մի աւելի մեծ գործի—Տիբրոջ Գերեզմանն անհաւատների ձեռքից ազատելուն։ Բայց առաջին քաջերը դժուարակիր երեւեցան։ Կոլումբոսը ջանաց Պորտուգալիայում, Անգլիայում և Ֆրանսիայում, բայց ոչ մի տեղ կարող չ'եղաւ միջոցներ գտնել նաւախումբ կազմելու համար։ Ապա նա դիմեց սպանիական Իզաբելլային և Ֆերդինանդին։ Սկզբում այստեղ ևս անվստահութեան ու ծաղրի պատահեց, նա ստիպուեցաւ իւր ծրագիրը բացատրել Սալամանկայի համալսարանի գիտնականներին, և զրանք ապացուցեցին նրան Սուրբ Գրոց վկայութիւններով, որ խիստ սխալուում է։ Յուսահատուած, կամենում էր արդէն Ֆրանսիա ուղեւորուիլ, բայց պատահաբար հանդիպեց մի վանքի վանահօր, որ համակրութեամբ վերաբերուեցաւ նրա ծրագրին, համոզեց մի հարուստ վաճառականի նաւեր պատրաստել և յանձնարարական տուաւ Իզաբելլա թագուհու վրայ։ Կոլումբոսը 1492 թուին աշնանը ծովը դուրս եկաւ Անգալուզիոյ Պալոս նաւահանգստից. նրա հրամանատարութեան տակ կային երեք նաւ, որոնցից միայն մէկն էր տախտակամածով, նաւաստիք թուով 90 հոգի էին, որոնք մասամբ բանդից արձակուած յանցաւորներ էին, որոնց այն սլայմանով էին արձակել, որ մասնակցեն այս վտանգաւոր ուղեւորութեան։ Եղանակը նպաստաւոր էր ծովագնացներին, բայց Կոլումբոսն ստիպուե-

ցաւ անօրինակ ճիգեր թափել, որ իւր ձեռնարկութիւնը գլուխ հանէ: Նաւաստիք մի քանի անգամ յուսահատութեան մէջ ընկան, երբ նաւերը մտան այն ահագին քանակութեամբ ծովաբոյսերի մէջ, որոնք ծածկում են արեւմտեան Հնդկաստանի արքիպելագոսի առաջը, նաւաստիք վախեցան, նրանք համոզուած էին, որ չի լաջողուիլ նաւել ալդ կանաչ մարգագետնի միջով, որ ընկած էր ջրի մակերևութի վրայ: Խօսք եղաւ Կոլումբոսին ծովը նետելու մասին: Այս դիտաւորութիւնը չ'իրագործուեցաւ, որովհետեւ յոյս չ'ունէին առանց նրան տուն վերադառնալու: Վերջապէս երեսուն և երեք օր անցած Կանարեան կղզիներից դուրս գալուց յետոյ, 1492 թուին 12-ին հոկտեմբերի, նրանք ցամաք տեսան: Կոլումբոսը ցամաք ելաւ նաւաստների հետ միասին մի փոքրիկ կղզի, որ կոչեց Սան-Սալվադոր (սուրբ Փրկիչ— Լուկասեան կղզիների մէջ): Քիչ յետոյ լայնագործուեցան Կուբան և Հայիտին: Վերադարձը Սպանիա մի կատարեալ լաղթանակ էր, բայց Կոլումբոսի երջանկութիւնն երկար չը տևեց—նա կատարելապէս փորձն առաւ ժամանակակիցների սպերախտութեան դէպի մեծ մարդիկը: Նա երեք անգամ ևս նաւեց դէպի արեւմուտք, այլ ևս մի քանի կղզիք գտաւ և նոյն իսկ ցամաքին հասաւ: Բայց սպանիական կառավարութիւնը դժգոհ էր, որ փոխանակ քաղաքակրթութեամբ ու հարուստ տէրութիւնների, Չինաստանի և Հնդկաստանի, արշաւանքն հանդիպել էր մի վայրենի երկրի, ուր բնակում էին կարմրամորթ մարդիկ: Կոլումբոսի թշնամիք յաջողութեամբ դաւեր կազմեցին նրա դէմ: Երրորդ ուղևորութիւնից յետոյ նրան Սպանիա բերին շղթայակապ, և նա հազիւ կարողացաւ արդարանալ իր վրայ բարդուած մեղադրանքներից: Զորրորդ արշաւանքից յետոյ նա վերջնական կերպով ընկաւ կառավարութեան երեսից և մեռաւ վրշտերի ու աղբատութեան մէջ:

Կոլումբոսը մինչև իւր մահը կարծում էր, թէ գտել է արեւմտեան ուղին դէպի Ասիա: Իրապէս նա յայտնագործել էր «Նոր աշխարհը», որին վիճակուած էր մեծ դեր խաղալու նոր պատմութեան մէջ:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ:

ՀԱՅՔ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ:

Քրիստոնէութիւնը թէպէտ և առաջին դարումն^{Քրիստոնէական շրջան} իսկ մուտք էր գործել Հայաստան, բայց ամուր արմատ չէր բռնել և առաջին երեք դարերի ընթացքում հալածուում էր: Այս շրջանում հայք աւելի մերձ էին արեւելքին, քան արեւմուտքին, երեք դար շարունակուում էին հռովմէա-պարթևական կռիւներն Հայաստանում և չը նայելով հռովմէական զենքի ժառանգաւոր յաջողութիւններին, պարթևների հարստութեան մի ճիւղը շարունակում էր տիրել Հայաստանում: Հայ ժողովուրդն իւր կրօնով, բարքով ու քաղաքական կեանքով բոլորովին նման էր պարսկականին, չը նայելով Տիգրան Մեծի ժամանակ եղած հեղինակաւորական փորձերին: Չորրորդ դարու սկզբին տեղի ունեցաւ հայ ժողովրդի ամբողջովին դարձը դէպի քրիստոնէութիւն (303): Այս մեծ պատմական իրողութիւնից յետոյ փոխուեցաւ հայկական քաղաքական և քաղաքակրթական պատմութեան ընթացքը: Հայաստանում քրիստոնէութեան հետ միասին տարածուեցաւ նախ ասորոց միջոցով փոքր ասիական—հելլենական քաղաքակրթութիւնը, ապա տիրապետեց բիւզանդականը սկսած հինգերորդ դարու երկրորդ քառորդից:

Հռովմէա-պարթևական կռիւները Հայաստանի տի-

րապետութեան համար շարունակուեցան և քիչ զանա-
սասանեան շրջանում, հայկական թագաւորները խա-
ղալիկ էին չորրորդ դարու ամբողջ ընթացքում պարսից
ու բիւզանդացոց ձեռքին. սրանք շարունակ մէկի բըռ-
նութիւնից խուսափելու համար միւսի գերիշխանու-
թիւնն էին ճանաչում, բայց ոչ մէկին ևս հաւատարիմ
չէին: Դարուս վերջին կիսին աւելի զօրացաւ բիւզան-
դական գերիշխանութիւնը շնորհիւ հայ հոգեւորակա-
նութեան, մանաւանդ ս. Գրիգոր Լուսաւորչի տան
հայրապետների, որոնք լուսնական կրթութեան տէր մար-
դիկ լինելով և ջերմեռանդ քրիստոնեայ, խորշում էին
պարսիկներից և թեքում յոյների կողմը:

Ներկրի քա-
ղաքական
կազմակեր-
պութիւնը:

Հայաստանն իւր լեռնային կազմութեան շնորհիւ
բաժան բաժան էր եղած բազմաթիւ ցեղերի և իշխա-
նութիւնների, որոնք միմեանց հետ դժուար հաղոր-
դակցութիւն ունէին: Հայկական այս իշխանութիւն-
ների մեծամեծ խմբերը տասնեւհինգ էին, որ կազմում են
և հայկական տասն և հինգ նահանգները, որոնց
բարբառներն ևս տարբերուում էին միմիանցից: Աւե-
րողջ երկիրը քաժանուած էր մեծամեծ նախա-
րարական *սկերի* մէջ, որոնց կարելի է համեմատել
արեւմտեան Եւրոպայի սենեօրների կամ մեծ Փէօդալա-
կան իշխանների հետ: Այս նախարարական տները ծագում
էին հին ցեղապետներից կամ թագաւորական տան երկրոր-
դական ճիւղերից: Նախարարութիւնների թիւն ու նրանց
իշխանութեան սահմանները փոփոխուում էին շարու-
նակ, չորրորդ և հինգերորդ դարերում պարսից գերիշ-
խան թագաւորները քանիցս առիթ ունեցան հաստա-
տելու այս նախարարութիւնների իրաւունքներն ու
կարգը, որովհետեւ դրանք միւսնայն ժամանակ պալատա-
կան պաշտօնեայք էին համարուում և ունէին որոշ
տեղ քաղաքական իշխանութեան աստիճանաւորութեան
մէջ: Թագաւորների հաստատած այս աստիճանաւորու-

թեանց ցուցակը գտնուում է գահաւանակներում: Աչքի
ընկնող նախարարական տներն էին Պահլաւունիք, Պար-
թեւները կամ Սրշակունիք, որոնք թագաւորական տնիցն
էին ծագում, Սիւնիք, Բագրատունիք, Ռշտունիք, Ար-
ծրունիք, Կամսարականք և Մամիկոնեանք, սրանք էին
հայկական հին ցեղապետութիւններից, որ թագաւո-
րութեան վերջին շրջաններում և անիշխանութեան ժա-
մանակ մեծ դեր խաղացին:

Նախարարական տան մէջ աւագը կոչուում էր
սանուսեր կամ *նահապետ*, սա էր երկրի գրեթէ ան-
կախ տէրը, որ կեանքի և մահուան իրաւունք ունէր
հպատակների վրայ, հարկեր էր ժողովում և զօրք ու-
նէր, որով պէտք է պատերազմի գէպքում օգնութեան
հասնէր թագաւորին: Նախարարներն ապրում էին ա-
րեւմտեան ասպետների պէս իրենց գղեակներում, իսկ
ժողովուրդը զիւղերում կամ աւաններում ու պարա-
պում էր երկրագործութեամբ: Քաղաքներ վաղուց էին
հիմնուած Հայաստանում, դրանց մէջ բացի հայերից
կային գերի բերուած հրեայք, յոյներ ու ասորիք: Արե-
ւելեան քաղաքները չը կարողացան այն դիրքն ստա-
նալ, որ ունէին եւրոպականները: Մի պատմական փորձ
լիշեցնում է մեզ քաղաքների նշանակութիւնը բարձ-
րացնելու ձգտումը: Հայոց Արշակ Բ. թագաւորը (364)
հիմնում է մի քաղաք *Արշակաւան* անունով, ուր ա-
մեն կողմերից դժգոհներն ու հալածուածները ժողովուե-
լով ազատուում էին տանուտէրերի հալածանքից, սա-
կայն այս փորձն անյաջող ելք ունեցաւ և տանուտէր-
ները հիմնալատակ կործանեցին այս քաղաքը:

Նորութիւնն եւրոպական մտքով գոյութիւն չ'ու-
նէր արեւելքում, ուստի և Հայաստանում. շինականն
իւր վաստակի կէսը պէտք է տար տանուտիրոջ և բա-
ցի դրանից գործէր նրա համար. երկիրը սեփականու-
թիւն էր ազատների: Քրիստոնէութեան հետ երեւան

եկաւ մի նոր դասակարգ կամ աւելի ճիշդն ասելով՝ բռնեց հնի, քրմականի տեղը, բայց աւելի ազդեցիկ եղաւ քան իւր նախորդը: Հայաստանի դարձի ժամանակ իսկ քրմական դասակարգի որդիք պատրաստուեցան քահանայութեան, դրանց արդիւնքներն ապահովուած էին այն մեծամեծ կալուածներով, որ ունէին եկեղեցիք ու վանքերը: Այս կողմից հայկական եկեղեցականութիւնը շատ չէր զանազանուում տրամաբանից, հայ եպիսկոպոսներն ու հայրապետներն ևս մեծամեծ կալուածատէր իշխաններ էին, որոնք քաղաքական գործերի ընթացքին խառնուում էին: Հայոց թագաւորների դիրքը նախարարների մէջ նման էր ֆրանսիական թագաւորների դիրքին, նա հաւասարների մէջ առաջինն էր, իսկ երբ անգոր ու թույլ էր, այն ժամանակ նախարարները զլանում էին նրան և այն աննշան հպատակութիւնը, որ պարտաւոր էին, այսինքն՝ թագաւորին թողնում էին միայնակ կռուելու թշնամեաց դէմ և զօրք չէին տալիս, շատ անգամ իսկ միանում էին նրա թշնամեաց հետ, իրենց բնիկ տէրերի դէմ: Այս վիճակի դէմ Արշակ Բ. փորձեց մաքառելու, նա սկսաւ նախարարական տների սերունդները ջնջել, բայց հայոց հայրապետը միաբանեց նախարարների հետ և խափանեց այդ գործը: Այս վերջին փորձը խափանուելուց լեւտոյ, հայկական թագաւորութիւնը դատապարտեցաւ կործանման:

Հռովմէա-պարսկական պատերազմները Հայաստանի համար վախճան առան 390 թուին, երբ սասանեանք ու բիւզանդացիք բաժանեցին իրենց մէջ երկիրն, պարսիկները մի առ ժամանակ դեռ թողին երկրում անուանական թագաւորներ, իսկ յայնքը հայկական թեմ կազմեցին յայն ստրատէգի իշխանութեան տակ: Պարսկահայքի ստուերական թագաւորութիւնն ևս շուտով բարձուեցաւ շնորհիւ նախարարների և պարսկական զբան

նենգութիւններին: Վերջին արշակունի Արշաշիր քաղաւորը զահագորկ եղաւ 429 թ.:

429

Պարզմանիչ

Պարսկահայքի թագաւորներից մէկի, Վուամշապուհի ժամանակ աջակցութեամբ հայոց Սահակ Մեծ հայրապետի և շնորհիւ Մեսրոպ վարդապետի ստեղծուեցաւ հայկական գրութիւնն ու գրականութիւնը 404 թ.: Սկսուեցան ս. Գրքերի թարգմանութիւններն և պատրաստուեցան թարգմանիչների խմբեր, որոնք հայ գրականութեան պարծանքն են կազմում: Հինգերորդ դարը կոչուում է հայոց գրականութեան ոսկե դարը:

404

Պարսիկներն իրենց բաժին Հայաստանը կառավարում էին մարզպաններով կամ կուսակալներով, որոնք պարսիկ նշանաւոր ցեղերիցն էին լինում կամ հայ նախարարներից: Մարզպանը փոխարինում էր հայ թագաւորին, նա էր գլուխ՝ նախարարութեան և հայ բանակի, իսկ երկրի քաղաքացիական վարչութիւնն յանձնուած էր հազարապետին, որ հարկերն էր ժողովում և դատաստան կտրում, այս պաշտօնը վերջն յանձնուեցաւ մոգապետին: Հայոց եկեղեցու ուժից վախենալով՝ սասանեանք հեռացրին Ս. Սահակին կաթողիկոսութիւնից, որ երկրի հպատակութեան խնդրում մեծ նշանակութիւն ունէր, սկզբում այդ պաշտօնը տուին նրանք ծագմամբ ասորի վարձկանների:

Մարզպանութիւն և կրօնական պատե-րազմներ:

Սասանեանների հռչակուած մոլեռանդութիւնը գործ դրուեցաւ և Հայաստանում. Յազկերտ Բ. թագաւորը կամեցաւ բռնի կերպով հայերին կրկապաշտ դարձնել, այս գործում նրան օժանդակեց հայ մարգպան Վասակ Սիւնին, իսկ զիմադիր դուրս եկաւ հայ հոգեւորականութիւնն, որ ոտքի հանեց ամբողջ ժողովրդին: Հոգեւորականութեան կուսակից դարձաւ Մավրդին: Հոգեւորականութեան կուսակից դարձաւ Մամիկոնեան Վարդան նախարարն իւր խմբով, որ օգնութիւն չը գտնելով բիւզանդական կայսր Թէոդոս Բ-ից, միայնակ կռուեց պարսից դէմ: Աւարայրի ճակատա-

451

մարտում 451 թ. հայերը պարտուեցան, Վարդանը սպանուեցաւ, երկիրը նուաճուեցաւ և ապստամբութեան պարագլուխները տարուեցան Պարսկաստան, ուր դատվարեցին Վասակի դէմ, որը դատապարտուեցաւ և չը հասաւ իւր բաղձանքին: «Այն մարդը, որ կամենում էր հայոց երկրին թագաւորել, գերեզմանի տեղ անգամ չը գտաւ այնտեղ»: Հոգեւորական մեղադրեալները նահատակուեցան Նիւշապահ քաղաքում, սրանք յայտնի են հայ սրբերի մէջ Ղևոնդեանց անունով, իսկ աշխարհական նահատակները, որոնց հայ եկեղեցին նոյնպէս սըրբացրեց, Վարդանանց անուամբ:

482

Պարսիկները մի առ ժամանակ թող տուին բռնի կրօնափոխութեան քաղաքականութիւնը, սակայն միշտ ստիպուած էին մաքառել բիւզանդական ազդեցութեան դէմ, որի եւանդուն գործակիցն էր հայ հոգեւորականութիւնը: Այսպէս կոչուած երկրորդ կրօնական պատերազմը տեղի ունեցաւ նոյն Մամիկոնեան տան ներկայացուցչի, Վահանի առաջնորդութեամբ (482), որ վերջացաւ հաշտութեամբ և Վահանի մարգպան դառնալով:

Պարսկական շրջանի այս շփոթութիւնների մէջ երեք նախարարական ցեղերս. Սիւնեաց, Բագրատունեաց և Մամիկոնեանց, մրցում էին միմեանց հետ և ձգտում գերիշխան լինելու, սիւնիք յենուեցան պարսից վրայ, Բագրատունիք և Մամիկոնեանք հայ հոգեւորականութեան և յունաց, սակայն դրանց յաջողութիւններն առ ժամանակեայ եղան և ոչ մէկն էլ գերիշխանութեան չը հասաւ. Բագրատունիք միայն երեք դար յետոյ այնքան գորացան ու հարստացան, որ սկիզբը դրին իրենց տան հարստութեան:

Սրաբական իշխանութեան Վեցերորդ և եօթներորդ դարերն անցան բիւզանդա-սասանեան կռիւներով, որոնց մէջ միշտ մասնակից էին հայերը, իսկ Հայաստանն ասպարէզ ու ճանապարհ

էր պատերազմների և պատերազմնողների համար: Երկրի վիճակը նոյնն էր, ինչ որ նախկին դարերում, երբեմն պարսիկ կամ յոյն իշխան էր վարչութեան գլուխը, իսկ աւելի յաճախ որ և է հայ նախարար Բագրատունի կամ Մամիկոնեան: Այս շրջանի մէջ տեղի ունեցաւ հայկական եկեղեցական տուժարի կարգաւորութիւնն և հայկական թուականի սկզբնաւորութիւնն (551): Նոյն այս դարու վախճանին (595) բաժանուեցանվրացիք հայ եկեղեցուց:

Կրօնական վէճերը դառնացնում էին հայոց կեանքը, հազիւ ազատուած պատական հալածանքներից, հայերը մեծ նեղութիւն էին կրում բիւզանդացիներից, որոնք ստիպում էին հայերին ընդունել Քաղկեդոնի ժողովի կանոնները, իսկ հայք չէին կամենում այլ ևս ոչ մի ժողով ճանաչել բացի նախկին երեք ընդհանուր կամ տիեզերական ժողովներից և խորշում էին հին աւանդութիւնները փոխելուց: Այս վէճերն ու յունական հալածանքներն այն տեղն հասցրին, որ հայք աղաղակում էին. «պատրաստ ենք ս. Գրիգոր Լուսաւորչի հետ դրժոխք իջնելու, բայց ոչ յունական կայսեր հետ արքայութիւն»:

Եօթներորդ դարու առաջին կիսուն արաբները կործանեցին պարսից տէրութիւնը. խլեցին բիւզանդացիներից Պաղեստինը, Միջագետքն ու արշաւեցին Հայաստան մի քանի անգամ, վերջապէս տիրեցին երկրին 693 թուին:

Ամբողջ անիշխանութեան շրջանում մեծ դեր էր խաղում հայ հայրապետութիւնը, որի աթոռն սկզբում գտնուում էր Վարշապատում, սկսած հինգերորդ դարու կիսից Դուինում, ապա փոխադրուում էր գաւառից գաւառ ու նահանգից նահանգ, երբեմն իսկ հայրապետները աստանդական էին կամ շղթայակապ բանդերումն էին հեծում:

551

595

693

Արաբական
շրջան:

704

856

860

Բագրատունեաց
շրջան:

Արաբացիք երկիրը կառավարում էին *nusihyanin*-
runj կամ վերակացուներով, որոնք միանգամայն և զօ-
րագլուխներ էին: Արեացոց քաղաքականութիւնը
նուաճուած երկրներում միատեսակ էր և որոշ, նրանք
ձգտում էին ինչքան կարելի է շատ արդիւնք հանել
երկրից, ընկճել անկախ տարրերն և տարածել իրենց
հաւատը: Արաբական տիրապետութեան առաջին շրջա-
նում Հայաստանը կողոպտուեցաւ և աւերակ դարձաւ,
մեծ բազմութեամբ գերի հանուեցաւ երկրից, որոնց
կամ հաւատաւորիս էին անում կամ կոտորում և կամ վաճա-
ռում իբրեւ ստրուկ: Արաբ ոստիկանները մաքառում էին
գլխաւորապէս հայ ազնուականութեան դէմ և ծրագիր
ուէնէին ջնջելու դրանց: Կաշմ ոստիկանը ժողովեց հայ
նախարարներին և Նախիջևանի եկեղեցում ալրեց (704):
Բուղան ալրեց նախարարների գղեկները, գերեց նը-
րանց ըտնանիքներն և ուղարկեց շղթաւակապ դէպի
Բաղդադ, ուր ամէնքն էլ կորստի մատնուեցան: Նոյն
իսկ Բուղայի գազանութիւններին աջակցող Բագրատու-
նի Սմբատ Խոստովանողին չը խնայեցին և սպանեցին
856 թ.: Սրա որդին Աշոտը կարողացաւ իւր ճարտա-
րութեամբ ամիրապետից ստանալ երկրի հազարապե-
տութիւնն ու իշխանաց իշխան ճանաչուիլ: Քիչ ժամա-
նակից լետոյ ամերապետութիւնը թուլանալով սկսաւ
հպատակ երկրների իշխաններին զիջումներ անել, այս
շրջանումն էր, որ Աշոտն էլ թագաւորութեան տիտ-
ղոսըն ստացաւ խալիֆից, 860 թուին, որով սկսուեցաւ
Բագրատունեաց հարստութեան քաղաքացիութիւնը, որ
սիրեց հայոց, վրաց եւ եգերացոց կամ ափսաղաց
երկրներում:

Տասներորդ դարում հայերը մեծ դեր էին կատա-
տարում առաջաւոր Ասիայում, նրանք էին պատուարը
մահմետական արշաւանքների դէմ: Յունական Հայաս-
տանում, Կասպկատովիայում, և Փոքր Ասիայի բոլոր

գաւառներում նշանաւոր էին հայ իշխաններն ու զօ-
րավարները, հայ գաղթականները կռուում էին Բիւ-
զանդիոյ արմտեան սահմաններում, Կիպրոսում, Կրէ-
տէում և Սիկիլիայում: Նոյն իսկ Կ.-Պոլսի մէջ, կայսրը-
ների պալատում պակաս չէին և հայ մեծամեծ պաշ-
տօնեաներ, հայ իշխաններից ու զօրավարներից մի քա-
նիսն արդէն Կոստանդիանոս Մեծի գահի վրայ էին
բարձրացել:

Բուն Հայաստանում անուանական Բագրատունի
թագաւորը շարունակ կռուում էր ներքին երկպառա-
կութիւնների, ամիրապետների և նրա ոստիկանների
դէմ. այսպէս Աշոտի յաջորդ Սմբատ թագաւորն իր ամ-
բողջ կեանքը կռուեց Ատրպատականի բռնակալների դէմ
և վերջ ի վերջոյ նահատակուեցաւ— 914 թուին: Սրա
յաջորդը, Աշոտ Բ. Երկաթ մականուանուածը, նոյնպէս
իւր բոլոր ժամանակը գործ դրաւ մաքառելու ներքին
և արտաքին թշնամիների դէմ. սրա յաջորդն ու որդին,
Աշոտ Գ. Ողորմածը միայն խաղաղ կառավարեց երկիրը,
մինչև իսկ լաղթանակեց արաբացոց վրայ և բարեկամ
էր Յովհան Չմշկիկ հայ կայսեր: Սրա ժամանակ հրոչա-
կաւոր Անին մայրաքաղաք դարձաւ, զարդարուեցաւ
փառաւոր շէնքերով, որոնց աւերակներն այսօր
իսկ հիացումն են յառաջ բերում: Իբրեւ թէ բաւական
չէր Հայաստանի բաժանումը զանազան տէրութիւնների
մէջ, այս շրջանում Արծրունիք սկսան թագաւորել ի-
րենց երկրում (908). իսկ Բագրատունեաց միւս ճիւղը
թագաւորեց Կարսում (961):

Աշոտ Ողորմածից լետոյ այլևս երեք թագաւոր
նստեց Անիում մինչև Յովհաննէս Սմբատը, որ իւր
թագաւորութիւնը կտակեց Վասիլ կայսեր, սակայն հայք
ազատակամ չը կատարեցին այդ կտակը, նրանից լետոյ
գահ բարձրացրին Գագիկ Բ-ին, որին խաբէութեամբ
Կ. Պոլիս տարին յոյներն և թագաւորութիւնը խլելով,

914

908

961

1045 Պիղու քաղաքը տուին իրեն Փոքր Ասիայում 1045:
Դրանից քիչ առաջ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորը
չը կարողանալով դէմ դնել մողոլների արշաւանքին, իւր
թագաւորութիւնը փոխանակել էր Սեբաստիա քաղաքի
1021 հետ (1021): Նոյնը կրկնեց Կարսի Գագիկ թագաւորը
1079 1079 թուին: Բիւզանդացիք նպաստելով հայ իշխանու-
թեանց անկման, իրենց ձեռքով քանդում էին այն բը-
նական պատուարը, որոնց յետէն իրենք հանգիստ
ապրում էին: Հազիւ թէ դադարեցին հայ իշխանութիւն-
ներն և յոյներն երկիրը դադարկեցին, հայերին Կիլիկիա,
Թեսալիա և Բուլղարիա գաղթեցնելով՝ որ իրենք էլ տկա-
րացան և սկսան քալլ առ քալլ յետ քաշուիլ:

Բուն Հայքը
ԺԱ.—ԺԵ.
դարերում

Բագրատունեաց հարստութիւնը վերջանալու յետոյ
Հայաստանի արեւմտեան մասը մնաց յունաց, հիւսիսը
վրաց, իսկ արեւելքն ու հարաւը մահմէտական զանա-
զան իշխանների ձեռքը: Մի առ ժամանակ Հայաստանը
խաղաղ կեանք վարեց Արփ-ասլանի յաջորդ Մելիք Շահի
ժամանակ, որ ամբողջ երկրին տիրել էր: Սրա իշխա-
նութիւնը կործանեցին թաթարները, որոնք աւերակ
դարձրին Հայաստանն ու աղքատացրին: Թաթար իշխան-
ների դէմ յաջողակ կռուեցին վրացիք, որոնք իրենց
երկիրը մինչև Շիրակ ընդարձակել էին և շնորհիւ հայ
Ձաքարէ և Իւանէ իշխանների երկիւղ էին ազգել շրջա-
կայ իշխանների վրայ: Ամբողջ տասնեւերեքերորդ դարու
ընթացքում Հայաստանը նուաճուած լինելով Չինգիզ-
խանի զօրավարներից, մնաց նրանց իշխանութեան տակ
ծանր լուծ կրելով, սակայն յաջորդ ԺԳ. դարն աւելի
1387 դառն եղաւ շնորհիւ Լանգթէմուրի արշաւանքին (1387),
որ իսպառ աւերեց երկիրը, բնակիչներին ջարդեց և
հարստութիւնը կողոտպեց: Աւելի ևս վատթար վիճակի
ենթարկուեցաւ երկիրն յաջորդ ԺԵ. դարում, երբ
թուրքմէնն ու քիւրդ իշխանների ձեռքին ծուէն ծէն
եղաւ և սովի շնորհիւ ամայացաւ: Գաղթականութիւնը

սկսաւ զօրանալ ԺԳ. դարուց սկսած, երբ Անի քաղաքը
կործանուեցաւ երկրաշարժից 1320 թ. և ժողովուրդը
ցրուեց գէպի հիւսիս, Արիմ, Մուղաւիա և Լեհաստան,
ուր սիրով ընդունուեցաւ և մի առ ժամանակ յառաջա-
դիմեց:

1320

Հինգերորդ դարու կրօնական հալածանքների ժա-
մանակից սկսած հայերն զիմում էին դէպի արեւմուտք,
դէպի բիւզանդական երկրներն, ուր ազատ կրօնական
հալածանքից ապրում և փառքի և իշխանութեան էին
հասնում: Այս գաղթականութիւնը դէպի արեւմուտք
յաջորդ դարերում աւելի ևս զօրացաւ շնորհիւ բիւզան-
դական կայսրների քաղաքականութեան: Հայերը բիւ-
զանդացոց բանակում զերակշռող դեր սկսան խաղալ
Ը—Ժ. դարը, ուստի և հայ զինուորների գաղութներ
հիմնուեցան կայսրութեան բոլոր սահմաններում: Նի-
կեփոր Փսկասի և Յովհան Չմշկիկ կայսրների ժամանակ
(Ժ. դար.) Կիլիկիան յետս նուաճեցաւ և մաքրուեցաւ
իւր մահմէտական բնակիչներից, որոնց փոխարէն հաս-
տատուեցան հայեր: ԺԱ. դարում սովորական դարձաւ
հայ իշխանների համար փոխել իրենց երկրները որեւէ
կալուածքի հետ Փոքր Ասիայում, ուստի և այդ դարու
վախճանին մի մեծ հայ գաղութ կազմուեցաւ Կիլիկիա-
յում և նրա սահմաններում: Գագիկ Վերջին զինակից-
ներից մէկը, Ռուբէն իշխանը, սկսաւ զբաւել լեռնային
Կիլիկիան, միացնել հայ իշխաններին, այնպէս որ 1080
թուին այնտեղ կազմուեցաւ մի հայ բարոնութիւն: Ռու-
բենին յաջորդեց իւր Կոստանդին որդին, սա ընդարձա-
կեց երկիրը, երբ առաջին խաչակիրները հասան
Ասորիք, օգնեց նրանց զօրքով և պաշարով, ի հա-
տուցումն այս ծառայութեան խաչակիրները նրան կոմս
ճանաչեցին Ռուբենի երկրին:

1080

Կոստանդնի յաջորդը, Թորոս իշխանը, տիրում է
գրեթէ բոլոր Կիլիկիան: Սա վրէժ է լուծում այն յոյն իշ-

խաններէից, որոնք նենգով սպանել էին Գագիկ Վերջինն, իսկ ինքն այնքան հռչակուում է, որ Կիլիկիան սկսուում կոչուիլ Թորոսի երկիր:

Բիւզանդական կայսրը վերջապէս միջոց գտաւ իւր երկիրը յետ խելու և նոր ծագող հայ իշխանութիւնը ջնջելու, Յովհան Կոմնենոս Ծիրանեծին կայսրն արշաւեց Կիլիկիա և նուաճեց *Լեռն Ա-իւն*, գերի բռնեց նրան իւր որդոց հետ և տարաւ Կ. Պոլիս: Լեոնի որդի Թորոս Բ. փախաւ գերութիւնից և մեծ քաջութեամբ և իմաստութեամբ յետ նուաճեց Կիլիկիան, տասնհինգ տարի անդադար կռուելով կայսեր և հագարացի սուլթանների դէմ, վերջապէս Կիլիկիոյ իշխան ճանաչուեցաւ 1159 թ.: Թորոսից յետոյ երկիրն անդադար կռուների մէջ էր, այս կռիւներին սկսել էին այժմ լատին իշխաններն ևս մասնակցել, մանաւանդ Անտիոքի իշխանները, որոնք խնամութիւն ևս հաստատել էին Ռուբինեանց հետ:

Կիլիկիոյ հայոց թագաւորութիւնն իւր ծաղկման և ընդարձակութեան գագաթնակէտին հասաւ Լեոն Բ. Մեծագործ իշխանի ժամանակ, որ երրորդ խաչակրաց ևս օթանդակ եղաւ և թագ ստացաւ պապից, գերմանական և բիւզանդական կայսրներից (1198):

Ռուբինեան հարստութիւնը մի փառաւոր շրջան ևս ունեցաւ Հեթումեան թագաւորների ժամանակ, որոնք նեցուկ ունենալով իրենց դեռ ևս հեթանոս թաթար խաներին, պատկառելի էին իրենց հարեանների առաջ: Հեթում Առաջինը թագաւորեց 1226-ին, նա անձամբ ներկայացաւ Մանգու խանին և բարեկամութիւն հաստատեց հետը: Այս շրջանում երկիրը մուտք էին գործել արդէն լատինական բարբերը, հայոց արքունիքը զօրքն ու երկրի վարչութիւնը նմանել էին աշխատում արեւմտեան սովորութիւններին ու բարբերին. դարու ոգին տիրել էր և հայ իշխաններին, ուստի Հեթում

հրաժարուեցաւ գահից և կրօնաւոր դարձաւ Մակար անուամբ: Նոյնը կրկնեց և Լեոն Գ. թագաւորի յաջորդ Հեթում Բ.: Խաչակրաց արշաւանքները հետզհետէ սկսուում են դադարել, եկած աննշան գնդերն սպառուում են յարատեւ պատերազմներում, լատին իշխանութիւնները մէկը միւսից յետոյ ընկնում են թաթարների ձեռքը, արեւելքում քրիստոնէութեան պաշտպան մնում են միայն Կիպրոսի և հայոց թագաւորութիւնները, որոնց պապն օգնել չի կարողանում, որովհետեւ նրա հրամանին այլ ևս չէին լսում արեւմտեան ազգերը: Չնչին դրամական օգնութիւնները, որ պապն ընձեռում էր Կիլիկեցոց, շատ թանգ էին նստում հայոց, որովհետեւ պապը դրա փոխարէն հպատակութիւն և եկեղեցու միութիւն էր պահանջում: Այսպէս անդադար լուսերով խաբուելով և անօգնական մնալով՝ Կիլիկիոյ թագաւորութիւնը մաքառեց մինչև ԺԳ. դարու առաջին քառորդը, վերջապէս ընկճուեցաւ Եգիպտոսի սուլթանից, որ գերի վարեց Ռուբինեան-Լուսիան *Լեռն Ա*. թագաւորին 1375, որով և վերջացաւ Ռուբինեան թագաւորութիւնը, դրա հետ միասին և հայ ազգի անկախ իշխանութիւնը:

Ոչ մի տեղ հայ անկախ իշխան չը մնալով՝ հայեր-հայոց հայրը նուաճուած մնացին բազմաթիւ մահմետական իշխանութիւնների տակ, այսպէս՝ թաթարների, թուրքմէն-եկեղեցին:

Ոչ մի տեղ հայ անկախ իշխան չը մնալով՝ հայեր-հայրը նուաճուած մնացին բազմաթիւ մահմետական իշխանութիւնների տակ, այսպէս՝ թաթարների, թուրքմէն-եկեղեցին:

Ոչ մի տեղ հայ անկախ իշխան չը մնալով՝ հայեր-հայրը նուաճուած մնացին բազմաթիւ մահմետական իշխանութիւնների տակ, այսպէս՝ թաթարների, թուրքմէն-եկեղեցին:

1441

խաղըրուեցաւ աթոռը 1441 թ., սակայն Սիս քաղաքում դարձեալ շարունակուում է կաթոլիկոսութիւնը մինչև ցարդ։ Օսմանների տէրութեան մէջ հայ ազգի ներկայացուցիչ ճանաչուեցաւ Կ. Պոլսի հայ եպիսկոպոսը, որին Մահմէտ Բ. պատշաճօրէն տրուեց։

Միջին դարերում հայ եկեղեցին նահատակութիւնից դէպի նահատակութիւն է անցել, հազիւ հաստատուած մաքառել է կրակապաշտութեան դէմ ամբողջ երկու դար, ապա կրել է մահմետականութեան ծանր լուծը, այս մաքառումներից յաղթական դուրս գալով՝ բիւզանդական շրջանում քանիցս նահատակուել է քաղքեղանականութիւնից, իսկ կիլիկեան շրջանում լատինականութիւնից, բայց բոլոր փորձութիւններից անվտանգ դուրս է եկել և սլահայանել իւր հին աւանդութիւնները ու ազգային ինքնութիւնները։

Գրականութիւն և գեղարուեստ

Հայ գրականութիւնը ծնել ու ծաղկել է միջին դարերում, սկսած հայ գրերի գիւտից (404) մինչև վեցերորդ դարը ճոխացել է նա թարգմանութիւններով և ինքնուրոյն հեղինակութիւններով։ Նշանաւոր է Ս. Գրգերի հայերէն թարգմանութիւնն իւր ճշգրտութեամբ և գեղեցկութեամբ։ Յոյն եկեղեցական հարց շատ երկերի միայն հայերէն թարգմանութիւններն են մնացել։ Թարգմանուել է նաև Արիստոտէլն, որ վանական դըպրոցներում ուսումնասիրուում էր։ Հայ գրականութիւնն ունի նշանաւոր եկեղեցական երգերի բանաստեղծ հեղինակներ, ինչպէս Ս. Սահակ, Մեսրոպ, Մովսէս, Յովհան, Կոմիտաս, Ներսէս Շնորհալի և այլն, նոյնպէս և պատմադիրներ, Մովսէս Խորենացի, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Սեբէոս, Յովհաննէս կաթողիկոս, Ղևոնդ պատմագիր, Ասողիկ, Արիստակէս, Մատթէոս Ուռհայեցի, Սմբատ և այլն։ Առանձնապէս ծաղկում էին Հայաստանում եկեղեցական և աստուածաբանական գրականութիւնը, աշխարհական գիտութիւններից ուսա-

նում էին համարողութիւն, աշխարհագրութիւն, տրամաբանութիւն և փիլիսոփայութիւն։ Արաբական շրջանում գործնական գիտութիւններով և սկսած դրադուել, ուստի և ունենք հարուստ բժշկական գրականութիւն։ Այնքան շփոթի և աւերումների մէջ դեռ ևս զարմանալի է, որ հնարք էին գտնում հայ վանքերում դպրոցներ պահելու և գրականութիւն մշակելու։ Ամեն շրջանն իւր յատուկ գրական ուղղութիւնն ունի, որ ենթակա է ասորական, բիւզանդական, արաբական լատինական ազդեցութիւններին։

Գեղարուեստներից զարգացաւ հայոց մէջ միայն գրութեան և ծաղկելու արուեստը, ձեռագիրների նրկարներն այսօր իսկ մեզ գաղափար են տալիս իւրաքանչիւր դարու արուեստի մասին։ Յատկապէս զարգացաւ Հայաստանում ճարտարապետութիւնը, որ բիւզանդականի նմանողութեամբ է թէև, բայց ունի իւր յատուկ նշաններն, ուստի և կոչուում է հայկական ճարտարապետութիւն։ Այս ճարտարապետութեան մնացորդները կան սկիւծ եօթներորդ դարուց։ Ճարտարապետութիւնը զարգացաւ նամանաւանդ Բագրատունեանց շրջանում, երբ թագաւորները, նախարարներն ու եկեղեցականները մրցում էին միմեանց հետ վանքեր և եկեղեցիք շինելով, որոնց աւերակներն այժմ ըստ էլ հիացումն են պատճառում տեսնողներին։



ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿ ԱՆՅԻՆԻ ՏԱԽԱԿ.

Դա- րեր.	Սպանիա.	Բրիտանիա.	Դադդիա (Ֆրանսիա).	Գ Ե ր մ ա ն ի ա	Ի ս ա լ ի ա.	Բիւզանդիա.	Սլաւներ.	Հայեր.
Ա.				Գերման ցեղերի նկա- րադիրն Բառ Տակիտոսի (շուրջ 100 թ.)			Սլաւներին առաջին անգամ չիշատակում է Տակիտոսը (շուրջ 100 թ.)	Պարթևա-Հռոմէական պատերազմներ Հայա- ստանի համար:
Դ.				Դաշնակցութեանց կազ- մութիւնը գերմանացոց մէջ: Սրիոսականութեան տարածումը գերմանա- ցոց մէջ: Գոթերի եպիս- կոպոս Ուլֆիլաս 341: Ս. Գրքի թարգմանու- թիւնը զօթերէն լեզուով		Սկիզբն օրթոդոքս վանականութեան:		Հայոց զարձր դէպի քրիստոնէութիւն ա. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով 303 թ.: Սա- սանեանք եւ բիւզան- դացիք բաժանումն Հայաստանն իրենց մէջ 390:
Հ ո ճ ե ր ի ա ր Ե ա լ ա ն Բ Ե Ա կ ի զ Բ Ե ա զ Գ					Ի զ ա ղ Բ ա կ ա ն ու Բ ա ն 375.			
Ե.	Վ. Եսգորա- կան թագաւո- րութիւն: Bre- viarium Alari- cianum: Վ. անդալսն- եր թագաւո- րութիւնն Սի- րիկէում (շուրջ 430 թ.)	Հռոմէական լեզւոնների լե- տըս կոչութիւնը	Վ. Եսգորական թա- գաւորութիւն: Բուրգունդական թա- գաւորութիւն:	Ասիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Հայկական դպրու- թեան սկիզբը 404: Ս. Թարգմանիչ: Հայոց թագաւո- րութեան բարձումը պարսից բաժնում 429 թ.: Մարգ- պաններ:
	Սաքսերի եւ անգլների աւ- պատակութիւն- ները (449 թ.): Անգլոսաքսա- կան եօթը թա- գաւորութիւն- ներն:	Ասիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ասիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Սաքսի կրօնական պատերազմ (Վար- դանանք) 451:
	Ֆրանկների թագաւո- րութիւնը: Քլոդվիգ. Սուսսոնի առումը 486 թ.: Կոնստան- տինոսի հետ Քրիստո- նէութիւն ընդունելը:	Ասիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ասիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Ստոիլիքոնի մահը 408: Հռոմի առումն Սլա- ւիքի ձեռքով 410 ն. վեստգոթներին վը- ռընտելը:	Վահան Մամիկո- նեան: Երկրորդ կրօ- նական պատերազմ 482 թ.

Դա- րեք.	Սպանիա.	Բրիտանիա.	Դաղդիա (Ֆրանսիա).	Պ ե բ մ ա ն ի ա
2.	Վեստգոթների կոնիլ Քիւզան- դիայի դէմ:	Քրիստոնէու- թեան տարա- ծումը (Օգոս- տինոս).	Քլոդվիգի Ակուխա- նիային տիրելը՝ Քլոդ- վիգի մահը 511. Վոնի Քլոդվիգի որդոց մէջ. Կլոսար Ա. հուրդուն- դիայի տիրապետու- թիւնը:	Աստորասիական ֆը- րանկների տիրապետու- թիւնները Հռենոսի աջ ափի վրայ:

Ե.				
----	--	--	--	--

Ի ս ա լ ի ա.	Բիւզանդիա.	Սլաւներ եւ հունգարացիք.	Ի ս լ ա մ	Հ ա յ ե բ
Տոսիլայի պատերազմը Բելիսարի դէմ: Օստգոթական թագաւորութեան ջնջումը: Հռավեննայի Էփգարֆո- սուրիւնը 555:	Յուսիսհիսկոնու կայսր (527-565): Նիկայի» ապը- ստամբութիւնը 532: Վանդալներ- ի թագաւորու- թեան նուաճու- մը: Ա. փրիկէի Էփգարֆոսու- րիւնը Corpus juris. Ս. Սոֆիայի օ- ծումը 537.	Վաւրիստանի գլխավոր Սաւաննիստի Բաշի	Պաւլի-ձը- ռովմէական պատերազմ- ներ Հայաս- տանում:	Պարսկ.-ձը- ռովմէական պատերազմ- ներ Հայաս- տանում:
Հանգօբարդների ար- շաւանքը 568. Ալբոնի Հանգօբարդների թա- ղաւորութիւնը: Գրիգոր Մեծ պապը. († 604):	Պատերազմ վեո- տգոթների դէմ: Պատեր. պարսից դէմ. (Խոսրով.): Շերամապահու- թեան սկիզբը նե- րուպայում: Վոնի սլաւների դէմ: Սմրոցների կառուցումը Դանուբի ափերին: Յուսիսհիսկոնուս. Պրոկոպիոս. Ռոմանոս - Բաղ- ցրաձայն: Մաւ- րիկիոս կայսեր ձեռնարկը զի- նուորական ար- հեստի:	Վաւրիստանի գլխավոր Սաւաննիստի Բաշի	Պաւլի-ձը- ռովմէական պատերազմ- ներ Հայաս- տանում:	Պարսկ.-ձը- ռովմէական պատերազմ- ներ Հայաս- տանում:
Հերակլ 610-641: Վոնի Խոսրով Բ-ի հետ:	Սերբերի Իլլիրիան զրաւելը: Բուլղարական թա- ղաւորութեան կազ- մույլը ստորին Դա- նուբի վրայ:	Վաւրիստանի գլխավոր Սաւաննիստի Բաշի	Պաւլի-ձը- ռովմէական պատերազմ- ներ Հայաս- տանում:	Պարսկ.-ձը- ռովմէական պատերազմ- ներ Հայաս- տանում:

Դա- րեւ.	Սպանիա.	Բրիտանիա.	Գաղղիա (Ֆրանսիա).	Գ. Ե. Բ. մ. և ի. ա.
Ը.	Սպանիայի նուաճումն ա- րաբների ձեռ- քով 711:		Կարլոս Մարսելլ: Ֆրանկների միացումն: Պուատիեի ճակատա- մարտը 732:	Ֆրիզների նուաճումը: Քրիստոնեությունն տա- րածումը Բոնիֆացիոսի ձեռքով: Պիպին Կարճախակ: Քաղի Կաթոլիկացնելն անցնելը 752:
	Կորդովայի խալիֆայու- թիւնը:			Մ. Ե. Թ. և Կ. Մ. շ. ն. ս.
	Կարլոս Մեծի արշաւանքնե- րը Սպանիա:			Կարլոսի արշաւանքը սաքսերի դէմ (Վիդու- կինդ): Սաքսերի նուաճումը: Բաւարիայի նուաճումը: Առիւ աւարների հետ:
	Սպանիական ստեմանագա- ւառ:			

Յ. Անդրիայի միա- ցումն էկրեքսի ձեռքով:	Լ ի շ դ ո Վ ի կ ո ս ր ա ռ Երկառակութիւններ Աւդովիկ. որդոց մէջ: Սարաս- Վերդէօնի դաշինք 843: Կարլոս Մեծի Կայսրու- կարչոս ճաղաս: Սուա-խիդորեան հրո- վարողակներ (շուրջ 850): Թորեքս Ումեդը:	Լ ի շ դ ո Վ ի կ ո ս ր ա ռ Երկառակութիւններ Աւդովիկ. որդոց մէջ: Սարաս- Վերդէօնի դաշինք 843: Կարլոս Մեծի Կայսրու- կարչոս ճաղաս: Սուա-խիդորեան հրո- վարողակներ (շուրջ 850): Թորեքս Ումեդը:
Վ ի կ Այֆրեդ Մեծը: Կռիւ Պանե- մարեացոց հետ:	Լ ի շ դ ո Վ ի կ ո ս ր ա ռ Երկառակութիւններ Աւդովիկ. որդոց մէջ: Սարաս- Վերդէօնի դաշինք 843: Կարլոս Մեծի Կայսրու- կարչոս ճաղաս: Սուա-խիդորեան հրո- վարողակներ (շուրջ 850): Թորեքս Ումեդը:	Լ ի շ դ ո Վ ի կ ո ս ր ա ռ Երկառակութիւններ Աւդովիկ. որդոց մէջ: Սարաս- Վերդէօնի դաշինք 843: Կարլոս Մեծի Կայսրու- կարչոս ճաղաս: Սուա-խիդորեան հրո- վարողակներ (շուրջ 850): Թորեքս Ումեդը:
Անդրիայի բա- ժանումը Փոլս- րումի և Ալֆրէ- դի մէջ 878:	Փարիզի պաշարումը նորմաններից 887 (եղ): Սարակիւնուները Պրո- վանսում:	Փարիզի պաշարումը նորմաններից 887 (եղ): Սարակիւնուները Պրո- վանսում:

Ի ա ա լ ի ա:	Քրեզանդիոն:	Սլաւոն եւ հունգարացիք:	Ի ս լ ա մ:	Հ ա յ Ե ր:
Յրանկների արշա- ւանքներն Խոալիա (Պիսիյն Կարճահա- սակ), Սեւիան Բ. պա- պը, 754: Պապական Գա- հանգ: 7 6 8—8 1 4 Լանգորացիների Թագաւորութեան նուաճումը Կարլոս Մեծի ձեռքով 774. (Դեզիդերիոս): Լեռն Գ. պապ Կար- լոս Մեծի կայսերական Թագով պսակուիլը 800:	Պատկերա- մատեն: Լեռն Խաւարացի 717: Վոլիւ արարենե- րի հետ: Իրենէ Պատ- կերապաշտու- թեան վերա- կանգնումը: Նիկիիֆոր: Վոլիւ Կարլոս Մեծի հետ: — Յովհան Դա- մասկացի «Աղ- բիւր զիտու- թեան»:	Սլաւոնիայի նուա- ճումը 711: Սքրա- սեանք: Արուլ-Ար- քաւ 750: Մարա- քադարի տեղափո- խութիւնը Բաղդադ: Կորդովայի ամի- րապետութիւն: Խոալիայի եւ Դալ- մատիայի նուաճու- մը Կարլոս Մեծի ձեռքով: Կարլոս Մեծի կոթիւր շէտե- րի եւ Ելքական սլաւոնների զէմ Սլո- վենների նուաճու- մը Կ. Մ-ի ձեռքով (Limes Sorabicus):	Արաւ ուսի- կաններ: Կալմ ոստի- կանիձեռքով հայ նախա- րարների այրումը Նա- խիջկանում 704: Հալուն-Ալ-Ռաշիդ:	Արաւ Բաղ- րատունի իշ- խանաց իշ- խան եւ պա- տրիկ 743: Արաւացիք կողոպտում- են Հայաս- տանը. սկըս- ումէ զաղ- թականու- թիւնը զէպի- արեմոսքի: Սկիզբ նրա- գրասունգ. հարստութ. 860: Սմբատ Թագաւո- րումէ 890:
Ե պ ա շ Տ Բուրգիաներդումն 842: Բեան բաժանումը: Լորաւ: Վեդիսիցորեան հրո- վարականեր. (մօտ 850 թ.). Նիկիոյ Ա. պապ. (858 թ.) Լուդովիկոս Բ.	Ե Բ Ե Միխայիլ Գ. կայս. Իգնատիոս պա- տրիարք. Փոտ. Կ. Պօլսի մող. 867: Մակեդոնա- կան հարստու- թիւն: Վասիլ Ա.	Մեծ մորաւական պետութիւն: Ռոսիսլաւ: Ե Բ Ե Բուրգիաների բիւսանեւ- թիւնը 864: Բ ո ռ ի ս. ս. Կիւրեղ եւ Մեթոդիոս Մարաիա- լում 865. Սլաւոնական այլութեան կազմելը (Կիւ- րեղեան). ս. գրքի բարգ- մանութիւնը սլաւոնեւ- ցի: Մեթոդիոս արեւպիս- կոպոս Պաննոնիայի եւ Մարաիայի. , Ս վ ե ա- ս ո պ ո լ կ . Կոլիւ Կար- լոս Հասի եւ հունգա- րացոց զէմ. Մեթոդիոսի մահը 885: Հունգարա- ցիք եւ Մեծ Մարաիայի անկումը:	Արաւ Բաղ- րատունի իշ- խանաց իշ- խան եւ պա- տրիկ 743: Արաւացիք կողոպտում- են Հայաս- տանը. սկըս- ումէ զաղ- թականու- թիւնը զէպի- արեմոսքի: Սկիզբ նրա- գրասունգ. հարստութ. 860: Սմբատ Թագաւո- րումէ 890:	Արաւ Բաղ- րատունի իշ- խանաց իշ- խան եւ պա- տրիկ 743: Արաւացիք կողոպտում- են Հայաս- տանը. սկըս- ումէ զաղ- թականու- թիւնը զէպի- արեմոսքի: Սկիզբ նրա- գրասունգ. հարստութ. 860: Սմբատ Թագաւո- րումէ 890:
Աղբիւնու Բ. պապ. Սարակիմոսներ Սի- կիւիայում.	— Փոտ պատրի- արքի մատե- նադարանը:	—	—	—

Դա րեք.	Սպանիա.	Ա. Գ. Լ. Ի. Կ.	Ֆ. Բ. Գ. Ե. Ի. Կ.	Գ. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ.
Ժ.	Արագոնի, Կատալոնի և Պորտուգալիայի թագաւորութիւնները: Կախ մալերի հետ:	Կիրիւնի արքայութեան հաստատութիւնը: Նորմանդիոյ զբաւ- րիւնը 911:	Լուդովիկոս Մանուկ կայսր: Կարօլինգների զերմանական ճիւղի դա- դարում 911: Կոնրադ Ա. Ֆրանկոնա- ցու ընտրութիւնը:	Սաֆոնական հարս- տութիւն: Հենրիկոս Ա. Թուլուզոս 919: Կախ հուն- դարացոց ղէմ: Ձեխերի հպատակութիւնը: Մէյ- սենեան և հիւսիսային սահմանադաւառների հաստատութիւնը: Որոն Ա. Կախ անհնա- դանդ զքսերի և պաւ- ների ղէմ: Հունդարացոց պարտութիւնը Լեխ գետի մոտ: Աուգսբուրգի մօտ 955: Կախ իշխանների մէջ կալ- Որոն Ա. Յովհաննէս ԺԲ. պապ. նրա թոնի կոիւր Հռովմի հետ: Կայսերական բազ ըն Որոն Բ. 972: Նէպոլիսի մը, կոխ սարակինոսնե Կապեսինգներ: Հուգօ Կապես 987: Որոն Գ. Աղեյ'հէյդի և Քէո թիւնը: Ոթոն Գ-ի արշա- մի զրաւումը:

Ա. Լ. Կ. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ.

Ի. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ.	Սկաներ և հունգարացիք.	Բիւզանդիա.	Ի. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ.	Հ. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ.
Լեւոն 2. Խմաստուն: Բասիլիկներ:	Ձեխերի հպատա- կութիւնը զերմանա- կան թագաւորին:	Ռոմանոս Լակա- պկն:	Ս. Ի. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ. Բողարական տիրապետութեան տա- րածումը: Բալկանեան թերակղ. միայ: Թագաւորական տիրոջ ընդունելը: Պրէսլաւեան պատրիարքութիւնը: Բո- գոմիւնների հերձուածը:	Արծու- եաց թագա- ւորութ. 968: Օշնի և Յուս- ուսի արշա- ւանքները: Սմբատը Նո- հատակութ. մ. է 914: Մէծ սով 918: Աշոտ Երկայ:
Աերակ. դահի համար:	Պեսսներ:	Կոստանդինէ. Երա- նածին. (նրա պատ- մական և աշխար- հավարական զը- րուածները):	Իշխան Մեշկօ: Բրիտտոնէութիւն ընդունելը, 966. Պոզնանի Եպիսկո- պոսութիւնը: Բրիտտոնէութեան բարոյութիւնը պը- րուացոց մէջ. (ս. Աղալբերտ).	Սանիկները. Սուլթան Մահ- մուդ Ղազնա- ցին: Աֆղանիս- տանի, Բէլու- ջիստանի և Հնդ- կաստանի նուա- հումը: Սմբատ Ա. Գագիկ Ա. Շահնշահ:
Փանոյի խնամակալու- ւանքն Բոտիա և Հոս-	Լեհացիք Կուլմի երկրում:			

Դ. Ե. Բ. Գ. Ե. Ի. Կ.

Գա- րեւ.	Սպանիա.	Ա. Գ Գ Ի Կ.	Ֆ ր ա Գ Ե Ի Կ.	Ի Ե Կ Ի Ի Կ.
ԺԱ.		Կանուս Մեծն. 1017—1035.	Նորմանդական տիրա- պետութեան սկիզբն հա- րաւային ծառայութեամբ:	Նորմանդական տիրա- պետութեան սկիզբն հա- րաւային ծառայութեամբ:
			Գրիգոր Զ. պապ: Կիւսեան շարժումը, Լե- ւոն Թ. պապ:	Գրիգոր Զ. պապ: Կիւսեան շարժումը, Լե- ւոն Թ. պապ:
			Հենրիկոս Դ.	Հենրիկոս Դ.
		Էդուարդ Խոս- տովանդ, վեր- ջին անգլոսաք- սոնական թա- ղաւոր:	Նորմանների լաճողու- թիւններն հարաւային Ի- տալիայում: Վիլհելմ Եր- կարե յաղուկ, Ապուլիոյ ղուքսը: Նրա կռիւն պա- պի հետ և Բենեւենտի ա- ռումը:	Նորմանների լաճողու- թիւններն հարաւային Ի- տալիայում: Վիլհելմ Եր- կարե յաղուկ, Ապուլիոյ ղուքսը: Նրա կռիւն պա- պի հետ և Բենեւենտի ա- ռումը:
		Ե Կ Ե Գ Ի Ե Գ Ի Ե Կ		

Գերմանիա.	Սլաւներ եւ հունգա- րացիք.	Բիւզան- դիա.	Ի ս Լ Կ Դ.	Հ ա յ Ե ր.
	Ս. Սկիսան, հունգարացոց թաղաւոր 1000: Բոլեսլաւ Ա. Արիասիւր: Լեհական ցեղերի միու- թիւնը: Չեխիայի, Մորա- ւիայի, լիտվանների և ծովա- փնեայ բնակիչների հալա- տակիրը: Ասիւ պրոուսացոց, գերմանացոց և ռուսաց հետ: Գնեզնի արքեպիսկոպոսու- թիւնը:			Յովհաննէս Սըւ- րաս 1020: Սենեկերիւս Արծրու- նին զաղթում է բիւզանդական եր- կիրը 1021:
Հենրիկոս Բ.	Հենրիկոս Բ-ի կռիւն Բոլեսլաւ Արիասիւրի հետ. Բուլիշիին հաշտութիւնը 1018. Սաքսոնական Վասիլ Բ. թողարկեցին կո- հարտութեան տուր: Բոլեսլաւ Արիասիւրի 1018: Բոլեսլաւ Արիասիւրի 1024: Ֆրանկո-թաղաւորական տիրաւորս ըն- կեան տուն: ղունելը 1024. Կոնրադ Բ.			
Բուրգունդիայի նուաճումը: Հենրիկոս Դ. Աւատական հը- պատակութեան տարածումը Բո- հեմիայի վրայ:	Կաղիսիւր Ա. Բոլեսլաւ Բ. Համարձակ:			Գաղիկ Բ. Գաղիկ Բ. զրկում է է թաղաւորութիւ- նից 1045:
				Հարսի Գաղիկ թա- ղաւորը քաղում է բիւզանդական եր- կիրը 1079:
	Ժ ա Գ Ե Կ Դ Ե Կ Դ Ե Կ			

Դա- րեր.	Սպանիա.	Ա. Գ. Լ. Ի. Կ.	Ֆրանսիա.	Ի. Ե. Կ. Լ. Ի. Կ.
ժԱ.	Հարոյդ: Նորմանդական թիւագրութիւն: Պատերազմ Սենլակի մօտ 1066: Վիլհելմ Ա. Աշ- խարհակալ: Կըղ- զու նուաճումը: Ահաւոր դադա- տանի զիրքը 1086:	Նիկողայոս Բ. պապ: Հրովար- տակ պապերի ընտրութեանց կարգի մասին: Ալեքսանդր Բ. պապ: Գրիգոր Է. պապ, 1073: Գրիգոր Է-ի բաւե- ւորման ժողովը: Հենրիկոս Ապստամբութիւն հարաւային ստեղծում: Կանոսա 1077: պապի հետ: Շուարիայի դքսի թագաւոր ըն- երկրորդ բանադրութիւնը: Հոնոսեան քաղաքների ինք Հենրիկոսի արշաւանքն Իտա- եպիսկոպոսի պապ ընտրութիւնը: Գիլիսկարի արշաւանքը պապին րիկոսի վերադարձը Գերմանիա: տումը նորմանների ձեռքով: Ուրբանոս Բ. պապ:	Խաւանդաւոր Բ. պապ: Գրիգոր Է. պապ, 1073: Վորմսի ժողովը: Հենրիկոս Ապստամբութիւն հարաւային ստեղծում: Կանոսա 1077: պապի հետ: Շուարիայի դքսի թագաւոր ըն- երկրորդ բանադրութիւնը: Հոնոսեան քաղաքների ինք Հենրիկոսի արշաւանքն Իտա- եպիսկոպոսի պապ ընտրութիւնը: Գիլիսկարի արշաւանքը պապին րիկոսի վերադարձը Գերմանիա: տումը նորմանների ձեռքով: Ուրբանոս Բ. պապ:	Նիկողայոս Բ. պապ: Հրովար- տակ պապերի ընտրութեանց կարգի մասին: Ալեքսանդր Բ. պապ: Գրիգոր Է. պապ, 1073: Վորմսի ժողովը: Հենրիկոս Ապստամբութիւն հարաւային ստեղծում: Կանոսա 1077: պապի հետ: Շուարիայի դքսի թագաւոր ըն- երկրորդ բանադրութիւնը: Հոնոսեան քաղաքների ինք Հենրիկոսի արշաւանքն Իտա- եպիսկոպոսի պապ ընտրութիւնը: Գիլիսկարի արշաւանքը պապին րիկոսի վերադարձը Գերմանիա: տումը նորմանների ձեռքով: Ուրբանոս Բ. պապ:
Խ ա չ ա կ ր ա ց ա ռ ա				
		Կերմոնի ժողովը 1095:		
			Իրենրիտը Բոլոնիայում.	

Գ. Ե. Կ. Լ. Ի. Կ.	Սլաւներ եւ հունգարացիք.	Բիւզանդիա.	Ի. Ե. Կ. Լ. Ի. Կ.	Հալի Ե. Կ.
Գերմանիայի, օրօգ- րիտների իշխա- նը: Գրիստոնէ- ութիւն ընդու- նելը: Կաթիլի- տիչների հետ: Համարողի եւ Շլէզվիգի աւե- րումը: Կրոնո: Փոխութիւններ: Դ-ի բանադրութիւնը: Գերմանիայում եւ Սաք- սոններ հաշտութիւնը տրուիլը: Հենրիկոս Դ-ի նաւարութեան սկիզբը: Լիւթուրգիան արք- Հոնոմի առումը: Ռոբերտ աղաւտելու համար: Հեն- Հոնոմի առումն եւ կողոպ- Գրիգոր Է. մահը. 1085. Լադիսլաւ հուն- գարացի նախն- սիլվանիոյ նու- աճումը:	Գերմանիայի, օրօգ- րիտների իշխա- նը: Գրիստոնէ- ութիւն ընդու- նելը: Կաթիլի- տիչների հետ: Համարողի եւ Շլէզվիգի աւե- րումը: Կրոնո: Փոխութիւններ: Դ-ի բանադրութիւնը: Գերմանիայում եւ Սաք- սոններ հաշտութիւնը տրուիլը: Հենրիկոս Դ-ի նաւարութեան սկիզբը: Լիւթուրգիան արք- Հոնոմի առումը: Ռոբերտ աղաւտելու համար: Հեն- Հոնոմի առումն եւ կողոպ- Գրիգոր Է. մահը. 1085. Լադիսլաւ հուն- գարացի նախն- սիլվանիոյ նու- աճումը:	Սելջուկ Տուրքի- քի գիւհադդադի իսա- լիֆալութեան տի- րելը: Ալպ-Արսլանի մահոս Դիոգէն կայսեր գերի բռ- նութիւն 1071: Հաստատութիւն առումական... սուլ- թանութեան (Փոքր Ասիայում): Սելջուկ- ների Ասորիքին եւ Պաղեստինին տի- րելը: Կոմենեններ: Ալեքսիոս Կոմ- ենենոս 1081: Կաթիլ- նորմանների (Ռոբ. Գիլիսկա- կար), պաժինէ- դների, պոլովե- ցների եւ ուսա- ների հետ: Թիւրքերի Անտիոքին եւ Եդիսիա- լին տիրելը:	Սելջուկ Տուրքի- քի գիւհադդադի իսա- լիֆալութեան տի- րելը: Ալպ-Արսլանի մահոս Դիոգէն կայսեր գերի բռ- նութիւն 1071: Հաստատութիւն առումական... սուլ- թանութեան (Փոքր Ասիայում): Սելջուկ- ների Ասորիքին եւ Պաղեստինին տի- րելը: Կոմենեններ: Ալեքսիոս Կոմ- ենենոս 1081: Կաթիլ- նորմանների (Ռոբ. Գիլիսկա- կար), պաժինէ- դների, պոլովե- ցների եւ ուսա- ների հետ: Թիւրքերի Անտիոքին եւ Եդիսիա- լին տիրելը:	Ռուրիկ Ա. 1080: Սկզբնաւո- րութիւն Ռու- սիանց: Կոստանդ. Ա. Մելիք Շահ. 1086. Փաթարաց արշաւանքը 1093: Դոսթրիդ Բուլխո- նացի:

Դա- րեւ.	Սպանիա.	Ա. Գ. Լ. Ի. Կ.	Ֆ. Բ. Գ. Լ. Ի. Կ.	Ի. Բ. Գ. Լ. Ի. Կ.
ժ. Բ.	Խ. Կ. Զ. Կ. Լ. Ի. Կ. Բ. Գ. Լ. Ի. Կ.		Նորմանդական թագա- մը (Հիւսիսային Նոթա) Հենրիկոս 2. Որոն Դ.	Ինկոլ
ժ. Գ.	Յովհան Անկո- դին:	Յովհանի Կոնիւր Փիլիպպ Օդոստոսի հետ:	Ալբիգոյեանց և վալդեն- եանների աղանդները: Խաչակրաց արշաւանք ընդդէմալբիգոյեանց (Սի- մոն դը Մոնֆոր): Հաւատաքնութիւն:	Ֆրանցիսկոս աստիգացի. Ֆրանցիսկեանների կար- գը 1209. Կլարիսեանք: "Երրորդ կարգ": Փարիզի համալսարա- նը 1210:
	Լաս Նաւաս դէ Տուրալի ճակա- տամարտը 1212.	Նորմանդիոյ տիրապետութիւնը Փիլիպպ Օդոստոսի ձեռքով: Ճակատ Բուլիւնի մօտ 1214:	Բարոնների ա- պստամբութիւ- նը: Ա. Գառու- բեանց Մեծիը- րովարձակը 1215: Վախ Բա- րոնների հետ: Հենրիկոս Դ.	Ֆրիդրիկոս Բ. Գերմա- նականութեան ճանա- Գլեյֆներ և զիրելիւն
	Դրեկադա:			Լուդովիկոս Բ. Սուրբ. Կոնստանտինոպոլեան դէմ: Պարլամենտներ:

Գերմանիա.	Սլաւներ.	Բիւզանդիա.	Իսլամ.	Հայեր.
ա. ր. Ե. Կ. Լ. Ի. Կ. Բ. Գ. Լ. Ի. Կ.	1190.			
Իութեան միացու- թիւն:	Սերբոյ բոլղարական բազա- ուրիւն: Կալոյեան բազաւորը:	Ֆրիդրիկոս Բար- բարոսայի մահը: Ֆրանսիացիք և ան- գլիացիք Սիկիլիա- յում: Մեսսենայի ա- ւերումը: Ակրայի առումը:	Սկիզբն Ռու- բինեան թա- գաւորու- թեան 1198:	
Տիոս Դ. սլաւ:	Սերբական բազաւորութիւն: Սե- փան Նեման:	Կոլուման: Խաւաթիայի նուաճումը: Պսելլոս: Աննա Կոմնենա:	Կիպրոսի թագա- ւորութիւն:	
Ռիգայի հիմնադ- րութիւնը 1201. Ալ- բերա Նախկոպոս: Սուսերակիւնների կարգ:	Օսսոկար Ա. 1203.	Իսահակ: Չորրորդ խաչա- կրաց արշաւանք: Ջարայի սլաւարու- մը: Դաշնագրութիւն Իսահակ կալսեր հետ: Կ. Պոլսի առումը 1204: Բալդուին Գլան- դրացի.—Կալսր Ռո- մանիայի. (Լատի- նական կալսու- թեան): Ազրիանապոլսի ճակատամարտը:	Հինգիզիսա- նի տիրա- պետունը արեւելքին:	Հերուս Ա. 1226:
Կան իշխանների մը:	Առաջին սրբա- կան և պիսկոպոսու- թիւն: Տեւոնեան կար- գը Պրուսիայում 1226. (Հերման ֆոն Ջալցա):		Հինգերորդ խա- չակրաց արշա- ւանք (Նոնգարա- ցիք) 1217: Կամիկո- տայի առումը. Ման- սուրի սլաւարումը:	

Գա- րեւ.	Սպանիա.	Ս. Գ Գ Լ Ի ա.	Ֆ ր ա ն ս Ի ա.	Ի ս ա Լ Ի ա.
ԺԳ.			Երեխաների խաչակիր արշաւանքը:	
			Ֆրիդրիկոս Բ-ի մահը 1250:	
			Կոնրադ Դ.:	
	Հենրիկոս Գ-ի կոթիւր լարոններ ի հետ Մոնֆոր—Անգ- լիոյ կառավա- րէջ: Պառլամ- ենտի ծագումը 1265. Իվրեմի ճա- կատամարտը:	Լուդովիկոս Թ-ի մահը 1270:	Հարաւային Իտալիոյ և Սիկիլիոյ գրաւումը Կար- լոս Անժուագոս ձեռքով: Կոնրադինի մահը 1268:	
	Էդուարդ Ա. 1272: Ուէլսի միացու- մը Եոտլանդիոյ նուաճումը:			
			Սիկիլիան իրիկնաժամ 1282:	
		Ֆիլիպպ Դ. Գեղեցիկ † 1314:		
	Էդուարդ Ա. Ի կոթիւր Ֆիլիպպ Գ-ի հետ:			
	Աղատութեանց մեծ հրդարտա- կի հաստատու- թիւնը:			
	Ռոժեր Բէկոն.			
			Ջոտտո.	
			Թոմաս Աբուինադին 1227—1274.	

Գերմանիա.	Սլաւներ և հունգարացիք.	Բիւզան- դիա.	Ի ս ա Լ ա մ.	Սկանդինա- ւեան պե- տերիւններ.	Հ ա յ ե ր.
Ֆրիդրիկոս Բ-ի խաչակիր արշա- ւանքը 1229:	Անգրէյս Բ. լուս- կի հրովարտակ: Կաթիւթաթարնե- րի հետ: 1241: Գերմանական դադթականու- թիւններ:	Նիկիական կաթիւթաթար- նը:	Վեցերոյ խա- չակրաց արշա- ւանք 1229: Երու- սաղէմի գրաւումը: Ս. Երկրի վրայ ար- գելանք դրոժը. (Գրիգոր Թ. պապ) Քուրթերի տիրելը Երուսաղէմին 1244:	Վեցերոյ խա- չակրաց արշա- ւանք, Լուդովիկոս Թ. 1248: Գամբել տ- տայի առումը: Ֆր- անսիացիների գե- րի ընկնիլը: Լուդո- վիկոս Ասորիքում:	Քաթարնե- րը աւերում- են Հայաս- տանը 1237: Հէթումը գր- եում է Ման- գու խանի մօտ 1254:
Անիշխանու- թեան ժամանա- կամիջոց:	Վեցեկալա: Սսոկալ Բ.:		Թուրք-օսմանցիք: Օսման:		Թորոսի մա- հըն և Լեոնի գերութիւնը:
Քէօնիգսբերգի հիմնարկութիւ- նը Պամերանիոյ գրաւումը:			Ռաբերոյ խա- չակրաց արշա- ւանք 1270: Լուդո- վիկոս Թ-ի թունիս իջնէն և Կարմա- դիէնի վերաշինու- թիւնը: Լուդովի- կոսի մահը 1270.		Լեոն Գ. 1269:
Հաբսբուրգ- ներ. Ռուդոլֆ Հաբսբուրգը 1273:	Ռուդոլֆի կոթն Օտտոկարի հետ: Վեննայի պաշարումը: Աս- պետների դատաւանութիւնը: Աս- տորիական երկրների զիջումը: Ճակատամարտ Գիրնկոտի մօտ: Ալբրեխտ: Կոթն չեխերի հետ:	Միխայիլ Պալեոլոգ: Կ. Պալի առու- մը 1261:	Կաթիւ Կար- լոս Անժուա- ցու հետ Ասորիքի նուա- ճումն եգիպտական սուլթաններից: Ակ- րալի առումը 1291:		Հերուս Բ.:
		Վեցեկալա Բ.			Թորոս Բ.:
Տկտոնեան կար- գի վարչութեան տեղափոխու- թիւնը Մարիէն- բուրգ:			Երուսաղէմեան և անտիոքեան գա- տարանները (աս- տիգք).		Սմրաս:
		Նիկիտա Ա- կոմինատ:			Կոստան- դին Բ.:

Դա- րեր.	Սպանիա.	Ս. Գ Գ Լ ի ա.	Ֆ ր ա ն ս ի ա.	Ի ս ա լ ի ա.	Գ Ե ր ա ն ի ա.	Սլավոն եւ հունգարացիք.	Բիւզան- դիա.	Ի ս լ ա մ.	Սկանդինա- ւեան պե- տերիւնքեր.	Հ ա յ Ե ր.
ժ.Գ.	Էդուարդ Բ. Էդուարդ Բ-ի կնոջ աստուած- բանութիւնը և Է- դուարդի զահրից հրաժարութիւնը:	Ֆիլիպպ Գ-ի կոնիւք Բո- նիֆացիոս Ը. պապի հետ ճաշարական կարգի ջնջու- մը: Կղեմէս Ե-ի տեղափոխու- թիւնը Արինիօն 1309:	Պապերի Բաբելոնեան զերուքիւնը 1309:	Արշաւանք ղէպի	Կուրտէի ճակա- տամարտը 1302: Անժուական հա- րստութիւն. Կարլ- Ռոքերս Նէպոլս- եցին Վլադիսլաւ Բ. Լո- կոսնկ 1306: Լեհաս- տանի միացումը: Կրակովի ասպրա- տամբութիւնը: Կը- ռու տեսնեան կարգի հետ: Հենրիկոս Է. լիւս- սեմբուրգցի. սրա որդի Յովհանի ա- մուսնութիւնը Վե- ցեսլաւ Գ-ի դուստր Եղիսարէթի հետ: Իտալիա: Երկպառակու- թիւն զահի հա- մար. (Յրիգրիկոս Աւստրիացի և Լու- դովիկոս Բաւարա- ցի). Զուգեցեացոց ա- սպրատամբութիւնը (Գեպէր, Վիլհելմ Տէլլ): Մորգարտէնի ճակատը. (Լէօպոլդ Աւստրիացի) 1315: Կոնիւք Յովհան Ի. Բ. Պաղուացի). Արշա-	Ուրխան. սո- րա լաջողու- թիւնները քըլը - Ասիա- յում. (Բրուս- այ, Նիկո- միդիա, Նի- կիա): Ներիւս- իք: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Ներիւսիք: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Ներիւսիք: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Հեթում Բ. Կրկին: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	
	Էդուարդ Գ.	Ֆիլիպպ Ե. Սրա զաշ- նակցութիւնը քաղաքա- ցոյց, մանր ասպետու- թեան և հոգեւորականու- թեան հետ ընդդէմ խո- շոր աստատէրերի: Ֆիլիպպ Զ. Վալուա 1328:	Ֆիլիպպ Զ. Վալուա 1328:	Լուդովիկոս Բաւարացու պապի հետ: (Մարտիրոս Լանք Իտալիա:	Զուգեցեացոց ա- սպրատամբութիւնը (Գեպէր, Վիլհելմ Տէլլ): Մորգարտէնի ճակատը. (Լէօպոլդ Աւստրիացի) 1315: Լուդովիկոս Մեծն: Սրա գործունէու- թիւնն Իտալիայում և Վալախիայում: Գալլապիլի և լե- հական զահի ձեռք բերելը: Կազիմիր Գ. Մ. 1333—170. Իւրիյ Բ. Գալիցիոս մահը 1340: ճակա- տամարտ Լիւբլինի մօտ և Գալիցիանիյ- լանութեան ձեռք բերելը: Վոլինիա- յի հպատակութիւ- նը լիթուանացիներ- ին: Վոլինիայի հրատարակութիւ- նը. (Վիլիցեան օ- րէնսդրութիւն) Կը- ռուական համալսա- րանը:	Ուրխան. սո- րա լաջողու- թիւնները քըլը - Ասիա- յում. (Բրուս- այ, Նիկո- միդիա, Նի- կիա): Ներիւս- իք: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Ներիւսիք: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Ներիւսիք: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Հեթում Բ. Կրկին: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	
	Հաբսբուրգի պաշտօնագր:	Արտեմիդներ:			Կոնիւք Յովհան Ի. Բ. Պաղուացի). Արշա-	Լուդովիկոս Մեծն: Սրա գործունէու- թիւնն Իտալիայում և Վալախիայում: Գալլապիլի և լե- հական զահի ձեռք բերելը: Կազիմիր Գ. Մ. 1333—170. Իւրիյ Բ. Գալիցիոս մահը 1340: ճակա- տամարտ Լիւբլինի մօտ և Գալիցիանիյ- լանութեան ձեռք բերելը: Վոլինիա- յի հպատակութիւ- նը լիթուանացիներ- ին: Վոլինիայի հրատարակութիւ- նը. (Վիլիցեան օ- րէնսդրութիւն) Կը- ռուական համալսա- րանը:	Ուրխան. սո- րա լաջողու- թիւնները քըլը - Ասիա- յում. (Բրուս- այ, Նիկո- միդիա, Նի- կիա): Ներիւս- իք: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Ներիւսիք: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	Հեթում Բ. Կրկին: Լեւոն Գ. Լ Օշին: Անի քաղա- քի կործա- նումն 1320: Լեւոն Ե.:	


Դա- րեւ.	Ս պ ա ն ի ա.	Ա ն գ լ ի ա.	Ֆ Ր ա ն ս ի ա.	Ի ս ա լ ի ա.
ժԴ.			Կոլա-դի-Ռիկենցո: Հոտվմի հասարակականությունը 1347:	
			ժ ա ն	
		Յովհանն Բարին: Պուտուխի հակառակորդը 1356: (Սե- արքայազնը): Կարյուսի- նամակալությունը: Վար- հախումը ժողովներ 1356 թ.: Էտիեն Մարսել: Յա- կոբների ապստամբու- թյունը: Կամպիենի աշխարհա- հախումը: Քաղաքա- կան վարչությունների վերա- կանգնումը:	Գրիգոր Թ. պապը Հո- մով 1377:	
		Մ Ե ծ հ ե Ր		
	Ռիկլիֆ:	Ռիչարդ Բ.: Գիւ- ղացոց ապրա- տամբությունը (Ուոտ Քալլէր) 1381 թ. Լանկա- ստերի ապրա- րությունը և Ռի- չարդ Բ-ի հրա- ժարությունը:	Կարյուս Զ.: Պալատական կուսակցությունների կը- ռի: Բուրգունդիոյ դքսի կառավարությունը:	
			Վիսկոնտին Միլանում.	
			Դանտե 1265—1321. Պետրարկա 1304—1374. Բոկակաչիո:	
	Հենրիկոս Դ. Լանկաստեր:			

Դ ե Ր մ ա ն ի ա.	Ս լ ա ն ե Ր Եւ հունգարացիք.	Բ ի լ զ ա ն- դիա.	Ի ս լ ա մ.	Ս կ ա ն դ ի ն ա- ւեան պե- տություններ.	Հ ա յ ե Ր.
Յովհանն Զեյս: Մասնակցու- թյուն հարկաբանական բաղմին:	Սեֆյան Դուշան 1331 — 1355: Էպիբոսի, Մակե- դոնիայի, Քեսալիայի և Բոսնիայի գրաւումը: Ստեֆան Դուշանի Թ- րէնսդիրքը:				
Կարյուս Դ. Հրէից կոտորա- ծը: Պրազայի համալսարանը 1348.	Ս ա խ ս 1 3 4 8:				
	Ռսկի երովարձակ 1356: Շուարական և Հոնոստեան քա- ղաքների դաշնակ- ցությունը:			Տաճիկները Հելլենսպոն- տոսի վրայ, 1353: Մուրադ Ա. Ադրիանա- պոլսի և Ֆի- լիպպոսի առումը:	Լեոն Զ. վեր- ջին 1365:
	Լուդովիկոս Բ. հունգարացին 1370:				
	Վենցեսլաւ: Աս- պետների դաշնա- դրությունները: Քա- ղաքների կոբը ա- ւատատէրների հետ: ճակատ Զէմ- պախի մօտ:				1375. Լեոն Զ-ի գերու- թյունը և Կի- լիկիոյ քա- ղաքու- րեան վերջը:
	Նաղելլոններ: Նաղ- վիդայի ամուսնու- թյունը լիթուանակ. մեծ իշխ. Նաղելլոյի հետ: Նաղելլոյի մը- կրտությունը (Վլա- դիսլաւ): Լիթուա- նիոյ միանալը Լե- հաստանին. Վորս- կի պատերազմը:				
	Նոստովայի հակառակորդը 1389. Լազար Թազաուր:				
Բերսոլոյ Շվարց:	Սերբական և բուլղարական Թագաւորութեանց անկումը:	Բայազէտ: Տիրնովի ա- ռումը: Նիկո- պոլսի պատե- րազմը 1396: Լանգ-Քա- մուր:	Կալմար. եան ունիա: 1397: Մարգարի- տա և Էրիկ: Հայաստա- նի անկումը Լանգթամու- րի ձեռքով:		
	Պրազայի քարոզիչները:				

Դա- րեք.	Ս պ ա ն ի ա.	Ա. Ե գ լ ի ա.	Ֆ ր ա ն ս ի ա.	Ի ս ա լ ի ա.	Պ ե ր մ ա ն ի ա.	Սկաներ և հունգարացիք.	Բիւզան- դիա.	Ի ս լ ա մ.	Սկանդինա- ւեան պե- սուքիւններ.	Հ ա յ ե ր.
ԺԵ.		Հենրիկոս Ե.		Պիզայի եկեղեցական ժո- ղովը 1409: Յովհան ԻԳ. Թողութեան թղթեր 1412: Մաթթի Ե. պապ. 1412.		Յովհան Հուս: Սիգիզմունդ. Գրինվալդի պատերազմը 1410: Գորոդի Սէյմը 1413:		Անկիրիոյ ճակատա- մարտը:		
Ե ո ս ա ն ց ա յ ի ե կ ե դ ե ց ա կ ա ն					Ժ ո դ ո Վ ր 1414:					
	Հենրիկոս ար- քայազն պոր- տուգալցի: Պոր- տուգալացոց լաւոնադործու- թիւնք Աֆրիկա- յում:	Ազնկուրի ճակատամարտը: Նորման- դիոյ զորաւումն և Փարիզի առումը: Հենրիկոս Ե.—գահաժառանգ Յրան- սիայի (1420): Հենրիկոս Զ. Կարլոս Դոֆէն: Օրլէանի պաշարումը: Յովհաննա Դ'Արկ: Կարլոս Ե-ի թագով պը- սակուելը: Յովհաննա Դ'Արկի մահը 1431:	Ջովաննի Մեդիչին Ֆլո- րենտիայում:	Կոզիմո Մեդիչի:		Հուսեան պատերազմներ: Վիշեգրա- դի և Դէյչ-Բրոդի պատերազմները: Սրիգնեւ Օլեսնից- կի:		Մուրադ Բ.		
Բ ա գ ե լ ի ե կ ե դ ե ց ա կ ա ն					Ժ ո դ ո Վ ր 1431—1449:					
		Երկրի խաղաղացումն: Աշխարհաստումը ժողով Օրլէանում 1439 (մշտական դօրք):				Պրագեան համա- ձայնութիւնը: Ճա- կատ չեխական բրո- դի մօտ 1434:				
Ֆ լ ո ս ր ե ն ս ի ն ե ա ն					ն լ Ե ի ա ն 1439:					
Ալֆոնս Արա- գոնացի:		Անդրիայոց Վանտուիլը Յրանսիայից (շուրջ 1453):	Ալֆոնս Արագոնացին Նէապոլսում:	Յրանկեսի Սփորցան Միլանում: Նիկողայոս Ե. Պիոս Բ.	Յրիդրիկոս Դ.: Նրա անպաշտօնութիւնները: Վլադիսլաւ Գ. լե- հացոց և հունդա- րացոց թագաւոր: Վառնայի պատե- րազմը 1444: Կազիմիր Դ. Վոյ- տեհոնեան կարգի հետ, ծովեղբեայ երկրի և արեմ. պը- րուսիոյ ձեռք բե- րելը: Նեշաւեան սահմանադրու- թիւնք 1454:	Պրագեան համա- ձայնութիւնը: Ճա- կատ չեխական բրո- դի մօտ 1434: Ալքրեխս Աւստրիացին 1437, Հարրա- բուրգեան և լիւքսեմբուրգեան տների միանալը: Յովհան Ը.	Վառնայի պատերազմը 1444. (Վլա- դիսլաւ Գ. և Եան-Գուսի- այ): Կոստանդին ԺԱ: Տաճիկները Բոսֆորի վը- րայ 1451. Կոստանդնուպոլսի ա- ռումը 29 մայիսի 1453.	1441. Կա- թոլիկոսու- թեան աթո- ռը փոխադը- րուում է Ե- ջմիածին: Ջեանշահ: Կ- թոլիկ հայոց պատերազմ- ները:		

Դա- րեք:	Սպանիա:	Ս. Գ Լ Ի ա:	Ֆ Բ ա Գ Ի ա:	Ի Ե ա Լ Ի ա:
ժե.	Վարմիր Եւ Սպիտակ Վարդի պա- սերագմը: Իօրքի գգսի Թագաւոր ճա- նաչութիւնը: Ուեկ Քիլզի ճակատա- մարտը: Էդուարդ Գ. Ֆերդինանդ Ա- րագոնացիին: Ա- րագոնիայի մի- ութիւնը Վաս- տիլիայի հետ: Գրենագալի ա- ռումը 1492: Սուրբ Հերման- դատ: Դիագ: Կոլումբոս: Ամերիկայի գիւտը, 12 հոկտե- մբեր 1492. Վասկո դէ-Գա- մա 1498:	Վարմիր Եւ Սպիտակ Վարդի պա- սերագմը: Իօրքի գգսի Թագաւոր ճա- նաչութիւնը: Ուեկ Քիլզի ճակատա- մարտը: Էդուարդ Գ. Ռիչարդ Գ. Տո- ւուսթրի ճակա- տամարտը: Հենրիկոս Է. Թիւդօր: Միտ- թին Կարմիր և սպիտակ վար- դի 1485:	Լուդովիկոս ԺԱ. Հա- սարակական բարօրու- թեան դաշնակցութիւնը: Լուդովիկոսի կախ- աւատատէրերի և Կար- լոս Համարձակի դէմ: Նանսիի պատերազմը: Բուրգունդիոյ զրաւումը:	Լորենցո Մեդիչի: Տաճիկների Օտրանտո- վին տիրելը: Ալեխանդր Զ. Բորչա պապ: Ջիւրյալմօ Սաւոնարոլա † 1498: Լորենցո Վալլա: Մաքիա- վելլի: Ֆրա Անջելիկօ: Բրու- նելեսկօ: Ալբերտի: Գի- բերտի: Դոնատելլօ:

Գ Ե Ր Մ ա Ն Ի ա :	Ս լ ա ճ ե ռ և և հ ու ճ գ ա ռ ա ց ի Ի :	Բ ի լ զ ա ճ - ղ Ի ա :	Ի ս լ ա մ :	Ս լ յ ա ճ ր Ի ճ ա - ւ ճ ա Ն պ Ե - ս ու ր Ի ճ ճ ե ռ :	Հ ա յ ե ռ :
Դ Ե ռ ո ղ Պ ա թ ր ա ղ և Մ ա ս ք ո ս Կ ու - ղ Ի ճ :		Տ ա ճ Ի լ ճ ե ռ Ի Բ ա լ լ ա Ն Ե ա Ն Թ ե ռ ա կ ղ ղ ու Ն տ Ի ռ Ե լ լ ը : Բ է լ - ղ ը ա ղ Ի պ ա շ ա ռ ու մ ը (Ե ա Ն Ք ու Ն Ի ա ղ Ի) :		Փ ր Ի ա թ Ի ա Ն Ա . Տ Ե լ ղ ղ լ լ Ի Ի և Հ ու ղ ա ղ Ի թ Ի ա - ց ու մ ը : Կ ո լ և Հ ա ճ ղ ա ղ Ի Հ Ե ա :	Ղ ա ռ ա - Ղ ո - լ ու Ն յ ու Ն ե ռ Ի և Ս ղ - ղ ո ղ ու Ն լ ու Ն ե ռ Ի ա ս - պ ա տ ա կ ու - թ Ի Ն ե ը :
Ն Ի ղ Ե լ լ ա Ն ղ Ի ո ղ ղ ը ա ու մ ը :			Օ տ ը ա Ն տ ո ղ Ի ա ու ու մ ը , Մ ա Հ - մ է ղ Բ - Ի մ ա - Հ ը .		
Մ ա Բ ա լ լ լ Ի լ Ե ա Ն 1493 — 1519 : Ա . ս տ ը Ի ա - կ ա Ն Ե ը կ ը Ն ե ռ Ի չ Ե - տ ը ս ն ու ա ճ ու մ ը : Կ ա ղ մ ու թ Ի Ն Հ ա ը - կ ա Հ ա Ն ու թ Ե ա Ն , ղ ա տ ա ը ա Ն Ն ե ռ Ի և վ ա ը չ ու թ Ե ա Ն :					
Տ ա ղ ա գ ը ու թ Ի ա Ն ղ Ի լ Ե ը 1436 : Կ ու ա - տ Ե Ն ը ե ռ ղ 1450 : Ե ղ ը ա ը ք Փ ա Ն - Ե լ Կ :					



121

2013

